5105

ՓՈՔՐ-ՀԱՅՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

1917

9(47.925
Ա-20

Յիշատակին Տիար
Գարեգին Գալուստեանին
Եղբօրս Գալուստեանից

Հրտ. Ս. Դ. Հնչ. Կուս. Ամեր. Շրջ. Գործ. Յանձ.-ի, Թիւ 18

9(47.925)
Ս-20

ՓՈՔՐ-ՀԱՅՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՅԻՍ 10-1 ՕԳՈՍՏՈՍ 1911

ԳՐԵՑ

Ս. ՍԱՊԱՀ—ԳԻՒԼԵԱՆ



ՏՊԱՐԱՆ
«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի
25 ՅՈՒՆԻՍ, 1917
ՉԻԿԱԳՕ

17992

70873 -

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
им. А.

282-83

12004

ՆԱԽԱԲԱՆ

Սօցիալ Դէմօկրատական մտքով հասկացուած՝ Հայ յեղափոխական գործիչը, իր կեանքի ամբողջ տեւողութեան ընթացքում, մասնաւոր պարտականութիւն ունի դէպի իր Կուսակցութիւնը եւ Հայ ժողովուրդը:

Նա իր Կուսակցութեան հանդէպ բացի Պարտականութիւնից՝ որ եւ է Իրաւունք չունի եւ ամենայնիւ տրամադրելի է Նրան:

Գործիչի էութիւնը, գոյութիւնը ամփոփուած է Կուսակցութեան շրջանակի մէջ եւ Հասարակութեան առաջ պարտականութիւն ու պատասխանատուութիւն ունի՝ իր Կուսակցութեան բերանով եւ Նրա միջոցով:

Հասարակութիւնը, իր կողմից, կատարեալ իրաւունք ունի այդպիսի գործիչի արարքների, Նրա գործունէութեան, կեանքի ելեւէջների մասին որոշ տեղեկութիւններ ունենալու: Բայց միայն Նրա պատկանած Կուսակցութեան ձեռքով: Եւ այդ էլ այնքան եւ այն չափով, որքան որ Կուսակցական, ուրեմն եւ Հասարակական, ընդհանուր շահերը թոյլ կը տան՝ տուեալ րոպէների համար:

Յեղափոխական գործիչը իր կեանքի մէջ ծածուկ խորշ չը պիտի ունենայ՝ ո՛չ իր Կուսակցութիւնից եւ ո՛չ էլ, որոշ աստիճանով, այն դասակարգից ու Հա-

տարակութիւնից, որի մէջ եւ որի համար ինքը գործում է:

Նա ամպերի մէջ՝ իրական կեանքից հեռու չէ, որ պիտի ապրի. այլ իր Կուսակցութեան, դասակարգի եւ հասարակութեան ծոցում: Կղզիացողի, մենակեացի դրութիւնը նրանը չէ՛. նա միշտ էլ պիտի գտնուի՝ կեանքի եռ ու զեռի, իրարու բաղխող հոսանքների մէջ:

Հակառակ դէպքում՝ փոխանակ պարտականութեան իրական ազդակ լինելու. նա կը դառնայ բնազանցական գաղափարներով տոգորուած մի անհատ՝ աւելի ենթակայ սխալների, նոյն իսկ յակամայից, եւ վնասակար գործերին:

Շատ յաճախ է պատահել, որ առաջնակարգ ուղեղներն անգամ սայթաքել են, երբ այդ ընդհանուր կանոնից բացառութիւն են կազմել:

Մի ժողովուրդ, մի դասակարգ՝ որքան որ աւելի լաւ եւ ի մօտոյ ճանաչի իր հասարակական, Կուսակցական գործիչներին՝ այնքան էլ աւելի լաւ:

Քանի որ հասարակական, Կուսակցական գործիչը իր գործունէութեան նպատակն է արել որոշեալ գաղափարների մարմնացումը կեանքի մէջ. ուստի՝ բացի իր սեպհական Կուսակցութիւնից՝ ինչքան որ ժողովրդային զանգուածները աւելի մեծ չափով հիմնական ծանօթութիւն ունենան՝ նրա անձնական յատկութիւնների, գործերի, հասարակական մտքերի հետ, այնքան էլ աւելի օգտակար՝ թէ Կուսակցական եւ թէ հասարակական տեսակէտից:

Գործիչը, մանաւանդ յեղափոխականը, իր կեանքի եւ գործունէութեան զանազան պարագաներում՝ հարկադրուած է, յաճախ, իր մտածմունքները քողածածկել, իր արարքների մէջ գաղտնութիւններ դնել.

մինչեւ որ Կուսակցական, հասարակական գործը՝ որոշեալ պայմանների մէջ՝ յառաջ գայ: Իսկ մինչ այդ՝ հարկաւոր է վարկ եւ վստահութիւն: Եւ դա կը լինի այն ժամանակ՝ երբ գործիչն ու նրա Կուսակցութիւնը խօսապէս եւ իրապէս լաւ կը ճանչցուին:

Ոչինչ դիւրին՝ քան խաբուսիկ երեւոյթների վրայ կանգնած՝ կասկածներ յղանալ. իրականին անհամապատասխան՝ կանխահաս քննադատութիւններ, դատավճռանքներ արձակել դէպի յեղափոխական գործիչը եւ նրա Կուսակցութիւնը: Շատ դէպքերում՝ նրանք սխալուած են լինել, ձայն չը հանել՝ լոկ Գործի շահը աչքի առաջ ունենալով: Եւ դրա համար էլ վարկը, վստահութիւնը անհրաժեշտօրէն պիտի ընկերանայ թէ՛ գործիչին եւ թէ նրա Կուսակցութեան:

Հասարակութեան, դասակարգի պարտականութիւնն է՝ իր արտայայտիչ Կուսակցութեանը եւ նրա գործիչներին միջոց տալ. որպէսզի նրանք կարողանան իրենց ընդգրկած հասարակական, դասակարգային խնդիրները լուծել եւ գծագրուած նպատակներին հասնել:

Կուսակցութիւնից, նրա գործիչներից միայն գանգատ անել՝ հարցը չի վերջանալ. հարկաւոր է նրանց պայմաններ հայթայթել, միջոցներ ընձեռել՝ նրանց հանդէպ պարտականութիւն կատարել: Փոխադարձ ներդաշնակութիւնը ա՛յդ կերպ կարող է հաստատուել:

Միւս կողմից՝ գործիչը, որ արդէն իր Կուսակցութեան բերան-խօսն է, նրա պարզ դրօշակակիրը, իրաւունք չունի քրթմնջելու, յուսահատելու՝ իր դասակարգից, հասարակութիւնից՝ առաջին անյաջողութեան պայմաններին ընդհարուելով: Մի դասակարգի, ազգի, ժողովրդի մէջ՝ որոշ եւ արմատական

փոփոխութիւններ, յեղաշրջումներ յառաջ բերելու համար՝ անհրաժեշտ է հսկայական աշխատանք, դիմադրուում հազար ու մի չը նախատեսնուած՝ ծանօթ եւ անծանօթ արգելքների, դրկանքների, որովհետեւ այդպէս է պահանջում իրերի դրութիւնը: Եւ անհատները, այդտեղ, դիւրութեամբ չքանում, ընկնում, անյայտանում են, նրանց ոյժերն էլ՝ սպառւում, հանգչում: Բայց դա սխալ չէ, թէ Գործը չը պիտի շարունակուի և անկարելի՝ արգելքների ժայռը գլորել: Մէկ սերնդի, պատմական մի րոպէի չը յաջողածը՝ միւս սերունդներին, կեանքի պայմանների տարբեր դասաւորումներին կարող է յաջողիլ:

Կուսակցական, հասարակական կեանքի մէջ՝ գործիչը յուսահատութեան բերան դառնալու իրաւունքը չունի, ո՛չ մի ժամանակ. նա մի հիւլէ է:

Ի՛նչ է գործիչը, եթէ ո՛չ հասարակական, կուսակցական մի ծառ, որի տուած պտուղները նոյն այդ հասարակութեան համար են. այն միջավայրին՝ որտեղից ինքը բղխել է եւ որի շրջանակի մէջն էլ ապրել, ճնշել է: Գործիչի խանդը, աւիւնը, ընդունակութիւնները, կորովը հասարակութեանն են. բայց իր կուսակցութեան միջոցով:

Մենք մի ազգ ենք, որ Պատմութեան բերումով՝ մեր քաղաքական, ազգային՝ ամբողջական կազմակերպութիւնը կորցրել ենք: Եւ դրա հետեւանքն էլ այն է եղել, որ եկել են ուրիշ ազգերի տիրապետող դասակարգեր եւ մեզ կազմակերպել, այս ու այն պետական՝ քաղաքական կազմակերպութիւնների մէջ մտացրնելով:

Մեր օրերում՝ որքան էլ մի կառավարութիւն լայն, համբերատար վարդապետութիւնների հետեւի դէպի այլատարրը, տիրապետող ժողովուրդները.

դարձեալ որոշ սեղմումներ յառաջ կը քաշէ: Այդ երեւոյթը ընդհանուր է. դժբախտաբար այդ նկատմամբ միայն երանգաւորումների տարբերութիւններ կան: Աւտորականութիւնը կը վերանայ, երբ ճշմարիտ Դէմոկրատիան, Ռամկավարութիւնը եւ Սօցիալիզմը կը տիրապետեն: Իսկ մինչ այդ՝ իւրաքանչիւր ազգ լիակատար իրաւունք եւ պարտականութիւն ունի՝ իր պատմա-անհատական գոյութիւնը պահելու պայմանների մասին խորհելու եւ որոշեալ միջոցներ ձեռք առնելու՝ իր Քաղաքական Ինքնավարութիւնը, Անկախութիւնը ձեռք բերելու:

Մեր մէջ՝ Կուսակցութիւններն են, որ գալիս են ազգային քաղաքական կազմակերպութեան այդ գործը կատարելու, նրա պակասը լրացնելու: Եւ որքան որ Հայ Ազգը կազմակերպուի կուսակցականապէս. այնքան էլ աւելի լաւ եւ օգտակար՝ իր գոյութեան եւ պատմա-անհատական պայմանների ազդուութեան տեսակէտից: Դրանից Հայը, որպէս Ազգ, շահելիք ունի, եւ ո՛չ թէ կորցնելիք:

Մեր կեանքը արդէն բազմաթիւ օրինակներ ունի ցոյց տալու՝ թէ ի՛նչպիսի ահռելի րոպէների, դէպքերի կարող էինք ենթարկուել. եթէ Հայ Կուսակցութիւնները չը լինէին:

Եւ հէնց դրա համար էլ տեսում ենք, որ Հայ Ազգը վստահութիւն պիտի ունենայ, վարկ պիտի տայ՝ իր լաւ ճանաչած Կուսակցութիւններին եւ նրանց գործիչներին, որպէս յաջողութեան մի անհրաժեշտ պայման, մի գրաւական:

Եւ մեր եռանդագին բաղձանքն է, որ Հայ Ազգը, մանաւորապէս նրա պրօլետարիատը՝ ուր էլ որ գտնուելու լինի՝ աւելի խորապէս ուսումնասիրի, ճանաչի ա՛յն Կուսակցութիւնը, որ Հայ Յեղափոխա-

կան՝ նորագոյն կեանքի ռահվիրան է եղել եւ Գիտական Սոցիալիզմի առաջին Դրօշակակիրը՝ մեր իրականութեան մէջ:

Այդ տեսակէտից՝ թէեւ ուշ. բայց պարտականութիւն համարեցինք, Թոյլատրելի եւ շատ սեղմ սահմանների մէջ, հրապարակութեան տալ մեր կուսակցական, հասարակական գործունէութեան այն ժամանակաշրջանը, որ անց ենք կացրել Փոքր-Հայքի մէջ, տարբեր ժամանակներում, մեր երեք անգամուայ այցելութիւնների ընթացքում:

Մեր առաջին ճանապարհորդութիւնը կատարուել է՝ 1911-ի Մայիս 10-ից մինչեւ նոյն տարուայ Օգոստոս ամսի վերջը:

Երկրորդը՝ 1911-ի Հոկտեմբերի 12-ից՝ մինչեւ 1912-ի Յունուարի վերջերը:

Իսկ երրորդը եւ վերջինը՝ 1912-ի Սեպտեմբերի 12-ից մինչեւ նոյն տարուայ Նոյեմբերի 13-ը:

Դրա համար էլ գիրքը բաժանեցինք երեք մասերի. իւրաքանչիւր մասը վերաբերում է իր ժամանակի ճանապարհորդութեան:

Իրականութիւնը, այստեղ, ներկայացուած է այնպէս, ինչպէս որ գլորուել է մեր առաջ:

Այստեղ Հայ ժողովրդի համար, մանաւանդ այս օրերիս մէջ, տեսնելիք, լսելիք, սովորելիք, տեղեկանալիք շատ բան կայ:

Այսօրուայ անցքերի սաղմերը նա կը գտնի, որոշ կերպով կը տեսնի անցեալի այդ պատկերների մէջ:

Այդ օրերում, անհրաժեշտ էր զգոյշ լինել, պատրաստուել եւ Իտտիհատի արարքը, կատարածը՝ որպէս անպատճառ լինելիք նկատել:

Մեր դիտողութիւնները, անձնական տպաւորութիւնները, հաւաքած տեղեկութիւնները գալիս էին

մինչ էլ ուժեղ կերպով համոզում գոյացնել տալու, որ վտանգը հետզհետէ աւելի ու աւելի էր մեծանում, ծաւալ առնում, ու մեր յարաբերութիւնները Թուրք Ազգայնականութեան հետ ե՛ւս աւելի էին լարւում՝ մի օր վերջնականապէս եւ բացայայտօրէն խզուելու ստուգութեամբ:

Ուրեմն՝ մեր ներքին քաղաքականութիւնը, մեր տակտիկան պիտի լինէր պատրաստել, կազմակերպել՝ խոհեմութեամբ, օգտուելով տուած պայմաններից, եւ ճակատագրականօրէն գալիքին դիմագրաւել, կուրծք տալ:

Դա մի տարրական խոհեմութիւն էր, եւ անհրաժեշտ գործունէութիւն:

Մի ազգ երբ Դատ ունի· դա պատերազմ ասել է· թէկուզ լինի լռելեայն:

Եւ մենք չօշափում, տեսնում էինք՝ թէ ինչպէս այդ Պատերազմը շարունակւում էր, որոշ եւ բացայայտ գծերով, Միտհատեան «Սահմանադրութեան» օրօք:

Ուստի, որպէս պատերազմող կողմ, մենք էլ մեր անելիքը պիտի ունենայինք:

Եւ մենք արեցինք այն՝ ինչոր մեր միջոցները ներում էին· դրանց լրիւ հաշիւը, մի օր, կը տրուի մեր՝ Կուսակցական Պատմութեան էջերից:

Ինչ էլ որ լինի, այս էջերից ընթերցողը, հայ ժողովուրդը իրազեկ կը լինի, կը համոզուի, յուսով ենք, թէ ինչպէս ճակատագրականօրէն փլչելու էր կանխապատրաստւում Թուրք Պետութիւնը· թէ ինչպէս Թուրք Ազգը քաղաքական մահուան որոշ ախտանշաններ էր ցոյց տալիս:

Նա կը տեսնի, իր անդրդուելի համոզումի մէջ նորից կամրապնդուի, այս էջերից եզրակացութիւն-

ներ հանելով՝ թէ ինչպէս Թիւրքիայի փլատակների վրայ՝ իրերի բնական եւ անհրաժեշտ բերմունքով՝ բարձրանում է Հայ Ազգը եւ թեւատարած գալիս է ինքնավար, Անկախ Հայաստանը:

Ս. ՍԱՊԱՀ—ԳԻՒԼԵԱՆ

25 Սեպտեմբեր, 1916
ՀԷԼԻՈՊՈԼԻՍ

ԳԼՈՒԽ Ա․

ՀԱԼԿԻ ԿՂԶՈՒՑ ՄԻՆՉԵՒ ՔԱՐԱՓԸ

ՈՐՈՇՈՒՄԸ․— Փոքր-Հայքի Մասնաճիւղերը Շրջանային Պատգամաւորական ժողով ունէին։

Փոքր-Հայքի Գործադիր Յանձնախումբը եւ բոլոր Մասնաճիւղերը յատուկ պահանջ *էին դրել իմ ներկայութեանս։ Նոյնպիսի* պահանջ *էր ներկայացրել ե՛ւ Պալըքէսէրի Մասնաճիւղը։*

Տաճկաստանի Կեդրոնական Վարիչ Մարմինը, որի անդամներն էին՝ բացի ինձանից՝ նաեւ ընկերներ՝ Ռուբէն Կարապետեան (Վահան Պօյաճեան), Սեբաստացի Մուրատ (Մուրատ Տէր-ռէրեան), Գարեգին Կօզիկեան եւ Արծրունի, որոշեց նախ յարգել Փոքր-Հայքի պահանջը․ խսկ Պալըքէսէրինը յետաձգել՝ վերադարձիս յետոյ։

Ինձ պիտի ընկերանար ե՛ւ ընկեր Ս․ Մուրատը։

ՄԵԿՆՈՒՄՍ․— Չորեքշաբթի, Մայիս 10-ն է, 1911։ Առաւօտեան վաղ արթնցել՝ պատրաստութեան մէջ եմ։

Հալկիի նաւահանգստում խարսխել է օսմանեան հռչակաւոր նաւատորմիղը՝ բաղկացած փայտի ու երկաթի հնացած կտորտանքներից։ Աչքով աչք չունիմ տեսնելու։ Մարդ, ակամայ, արհամարհանք, տխրութիւն է զգում դէպի այն արտաքին ուժերը, որոնք պատճառ եւ իրաւունք են տալիս, որ այսպիսի խարխլած տախտակի կտորներով՝ աշխարհի է՛ն հրաշալի, է՛ն գեղաքանչ վայրերը գտնւում են Թուրքի տիրապետութեան ներքոյ։

Պայուսակս կապել՝ դուրս գալու վրայ էի, երբ փոքրիկ Տիգրանս գլուխը վերմակի տակից հանեց։

— Հա՛յրիկ, ո՞ւր ես գնում։

— Հայաստան։

— Ինձ էլ տար։

— Դու դեռ փոքր ես․ այնտեղ գնացողը կռուել պիտի գիտնայ։

— Ես արդէն գիտեմ։

— Տարիքդ չի ներում։

— Դու միշտ չե՞ս ասել, որ Հայաստանի մէջ քո տարիքդ ունեցող երեխաները կռւում են․ իմ ի՞նչս է պակաս․ ե՛ս էլ կը կռուեմ։ Հա՛յրիկ, տա՛ր։

— Մի քիչ էլ մեծացիր՝ յետոյ։

— Հա՛յրիկ, ընկեր Փարամազին պիտի տեսնե՞ս։

— Գուցէ։

— Ասա՛, հարցրո՛ւ թէ իմ հրացանս եւ ատրճանակս ինչո՞ւ չուղարկեց․ մինակ «բարեւագիր» գրելով՝ ի՞նչ կը լինի․ թող ուղարկի…

— Շատ լաւ, երբ տեսնեմ՝ կասեմ։

— Հա՛յրիկ, մեր զինուորներին ասա՛, որ շուտ անեն․ թող շուտ Հայաստանը ազատեն։ Ասա՛, որ երբ Թուրքը գալու լինի, թող իրենք գետնի վրայ պառկեն եւ հրացանը արձակեն․ քարի տակ մտնեն, փոսի մէջ պահուեն, կամաց կամաց մօտենան եւ յանկարծ յարձակում գործեն…

— Բարի, կասեմ։

— Հա՛յրիկ, հա՛յրիկ, խնդրում եմ, տա՛ր։ Եթէ լաւ կռուել չը կարողանամ՝ ընկերները այնտեղ կը սովորեցնեն… Ե՛ս էլ, ե՛ս էլ պիտի գամ, պիտի գամ…

Տիգրանս լացը սկսեց․ վազեց փէշերիցս բռնեց, դուռը փակեց…

— Թողեցի իր հեկեկանքի, ճիչի մէջ։

Դանիէլին հետս առած՝ տանից դուրս եկայ աճապարանքով։

Ու մտածում եմ․ արեան մէջ ծնած, արեան մէջ մեծացած սերունդներ ունինք․ բոլորն էլ պտուղ մեր փոթորկալից կեանքի։ Եւ այդ սերունդները ամէն տեղ են․ սերունդներ՝ որոնք իրենց մէջ ունին որոշ իդէալներ՝ մօր կաթի հետ ջամբուած, հացի բառեր թոթովելու օրից՝ իրենց ականջին հասած։ Եւ ասոմհետեւ նրանց հոգին, էութիւնը կազմում է եղածի մտապատկերներով․ ուստի դա է՛, աւելի կորով, ոգի, ուժ է տալիս ներկայ սերնդին՝ իր սկսած Գործը շարունակելու․ կանխապէս համոզուած լինելով՝ որ իր դիակների վրայից յետնորդները

ՏԻԳՐԱՆ Ս. ՍԱՊԱՀ—ԳԻՒԼԵԱՆ

պիտի գա՛ն, պիտի գա՛ն, երթա՛ն. մինչեւ որ Իդէալը յաղթանակէ:

ՅՈՅՆԻ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Հագիւ մեր տան առջեւ գտնուող պարիվայրից իջած՝ Յոյն ծանօթներս մօտեցան:

Մեր նպարավաճառ Գէորգին՝ մի առանձին համակրանքով յառաջացաւ, դէպի ինձ, երկու ձեռքերս պինդ բռնեց եւ ասաց. «Աստուած քեզ բարի ճանապարհ տայ. գործիդ՝ յաջողութիւն: Տանդ մասին մի՛ հոգար. մենք կը նայենք՝ մեր տան նման: Աշխատիր, որ խեղճ Հայ Ազգը ազատուի այս անօրէնների ձեռքից: Ես իմ աչքովս տեսայ, թէ ինչպէս իմ հարեւան հայերին մորթոտեցին: Մի՛ հաւատաք այս Թուրքին: Երբ Յոյն գիւղ տեսնես. մտի՛ր, սիրտ տուր. ասա՛, որ Աստուած մեզ մի օր պիտի ազատի այս վատ օսմանլիների ձեռքից... Բարո՛վ երթաս. բարո՛վ գաս»:

Ու բարի Յոյնը սկսեց արտաբուղխ անէծք թափել «անօրէնների» գլխին:

Յոյնը, գրեթէ ամբողջութեամբ, բացի իր ապականուած մի խաւից, անհաշտ մնաց. նա երբէք չը հաւատաց «Սահմանադրութեանը» եւ Իտտիհադին:

Իրողութիւն է նաեւ, որ Յոյները, ընդհանրապէս, մի առանձին պաշտամունք ունին դէպի Յեղափոխականները: Յեղափոխական անունը իրենց համար՝ յանձնարարելի մի պատուանուն է: Յեղափոխականի վրայ նրանք նայում են կրօնական երկիւղածութեամբ, որպէս մի սուրբի:

Պատմութիւնը նրանց այդ հաւատքին դրժում չէր տուել:

ԵՐԿԱԹԻ ՈՒ ՊՈՂՊԱՏԻ ՍԵՐՈՒՆԴԸ.— Շարունակեցի ճանապարհս: Տեսան. դէպի ինձ դիմեցին սրճագործ Մահտեսի Յովհաննէսը եւ Ջրկիր Դաւիթ-Պապիկը: Երկուսն էլ խոր ծերութեան հասած՝ ալեհեր հայաստանցիներ:

Մահտեսի Յովհաննէսը՝ արտասուք թափելով՝ ասաց. «Աստուածդ սիրես. երբ երկրէն վերադառնաս, գրպանդ քիչ մը հող լեցո՛ւր՝ բե՛ր, որ ամէն օր աղի տեղ՝ կերակուրիս վրայ ցանեմ, ուտեմ, կարօտս առնեմ...»: Մահտեսին 20 տարի էր, որ երկրից հեռացել էր: Ապա՝ ձեռքերը դէպի վե՛ր, երկի՛նք բարձրացնելով՝ գոչեց. «Ա՛ստուած, փրկիր մեր խեղճ ազգը. ազատիր մեր երկիրը...»:

Դեռ աչքիս առաջն է՝ թէ ինչպէս տքտքալով, հազիւ ոտ-քերը ցցելով, տարիքի տակ ծանրաբեռնուած՝ կորաքամակ, ծերունազարդ Սեբաստացի Դաւիթ-Պապիկը՝ աչքի արցունքնե-րը սրբելով, քսակի բերանը բացեց, հանեց 2 ղուրուշնոցը եւ լալով ասաց. «Ա՛ռ, ա՛ռ ասկա. մո՛մ առ եւ իմ կողմէ Ս. Նը-շանի պատկերի առաջը վառի՛ր. ա՛լ չը պիտի կրնամ տես-նալ...»:

Ու որդեկորոյս նահապետը սկսեց հեղեղի նման արտասուք-ներ թափել:

Դաւիթ-պապիկի երկու երիտասարդ որդիները Կ. Պոլսոյ մէջ սպանել էին, 1895-ին, Պապ-Ալիի Ցոյցի ժամանակ: Ծե-րացել էր. ուրիշ տեղ գործ չէին տուել. ապաստանել էր իր հայ-րենակցի մօտ եւ ջրկրութիւն էր անում: Նա չէր կարողանում իր սիրասուն զաւակների գերեզմանները անտէր թողնել՝ հեռա-նալ: Ամէն շաբաթ երեկոյ՝ կղզուց Պոլիս էր իջնում, իր հոգե-հատորների տապանաքարերը գրկելով՝ լաց լինում, խունկ ծը-խում եւ մի զոյգ մոմ Ղալաթիոյ եկեղեցում վառելով՝ տուն վե-րադառնում, իր աշխատանքը շարունակելու...

Ամէն անգամ, երբ կնճիռներով ակօսուած՝ պայծառատե-սիլ այդ Պապիկին տեսնում էի, նորից ու նորից փոթորկւում, բորբոքւում էի եւ միշտ էլ վերակրկնում իմ յաւիտենական ա-տելութեան երդումս դէպի Թուրք Բռնապետութիւնը, որի դա-ժանութեան մտքի հետ ես երբէ՛ք, երբէ՛ք չը կարողացայ հաշ-տուել:

Այդ ծերունիները մեր երկաթի սերունդի նմուշներն էին. անհուն տառապանքի կռանին դիմացող սալերը: Կեանքի ամէն դառնութիւններ նրանք տեսել, ճաշակել էին. բայց Հայրենիքի ազատութեան, Ազգի փրկութեան յոյսը իրենց հոգու մէջ միշտ էլ վառ էին պահել: Ամենադժխեմ հանգամանքներն անգամ՝ նրանց չէին կարողացել թուլացնել իրենց հաւատքի մէջ. նը-րանք է՛լ աւելի ամրապնդուել, զօրացել էին:

Հայաստա՛ն, Ազգի փրկութի՛ւն. այդ գաղափարները նը-րանց հետ գերեզման կարող էին իջնել. բայց կենդանւոյն նրանց միջից հանե՞լ, — երբէ՛ք:

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ. — Նաւահանգիստ էի մօտենում, երբ Թուրք Ծովային Դպրոցի դռան մօտ՝ առաջս կտրեցին ե-

րեք հայ զինուորներ, որոնցից մէկը Սօցիալ Դէմօկրատ Հընչակեան էր։

Նիկասրցի ընկեր Արշակի եւ իր ընկերակիցների գանգատը. «Մեզ այստեղ բերել են ո՛չ թէ վարժեցնելու, զինուորական կրթութիւն տալու. այլ առաւօտից մինչեւ երեկոյ ածխարանների մէջ աշխատեցնելու. ահագին բեռներ են դնում մեր մէջքին եւ ստիպում տանել։ Մենք աւելի սորուկներ ենք, քան զինուորներ։ Այս բոլորից յետոյ՝ մեզ չարունակ ամենալկտի բառերով հայհոյում են՝ մեզ եւ մեր ազգին ու կրօնքին։ Եւ որովհետեւ ես դերձակութիւն գիտեմ, ինձ բնաւ հանգստութիւն չեն տալիս. շունչ քաշելու ժամանակ չունիմ։ Այն ժամանակ, երբ թուրքերը հանգստանում կամ պառկում են՝ տասնապետները, յիսնապետները, հասարակ զինուորներն անգամ իրենց զգեստները թափում են գլխիս եւ ստիպում կարկատել։ Արդ, կա՛մ մեզ ճար, կա՛մ միջոց՝ այստեղից հեռանալու...»։

Մտնում եմ դպրոցի բակը. ուղարկում եմ այցետոմս, ցանկութիւն յայտնելով՝ տնօրէնի հետ տեսնուելու։

Գալիս է հերթապահ սպան, յայտնում է տնօրէնի բացակայութիւնը եւ հարցնում թէ ի՞նչ «հրամաններ» ունիմ։ Կողքիս տեսնում է հայ երեք զինուորներին. բացատրում եմ խնդրի էութիւնը։

Էմին էֆէնդին, որպէս թէ զարմացած, յանկարծակի եկածի նման՝ սկսեց հազար երդում-պատառում անել, ուզելով հաւատացնել, որ այդ բոլորը պատահականութեան, թիւրիմացութեան արդիւնք է եղել եւ պէտք է վերագրել միայն «բաշ չաւուշի» անփորձութեան եւ մի քանի «անբարեկիրթներ»ի անպատկառութեանը, որ սակայն շուտով վերջ կը դնի...։

Աւելացրի. «Բայց եթէ կրկնուի, մեր Կուսակցութիւնը հարկադրուած պիտի լինի ցուցումները անել եւ ուղղակի Պատերազմական Նախարարութեան հանել ու դիրք բռնել...»։

Էմին էֆէնդին սկսեց երկինք-գետին իրար խառնել, հաւատացնելով՝ որ է՛լ այդպիսի բան չի կարող պատահիլ։

Դուրս եկայ։

Բայց այդպիսի հարիւրաւոր գանգատներ արդէն թափուած կային Կեդրոնական Վարիչ Մարմնի սեղանի վրայ։ Պատշաճաւոր դիմումներ էլ եղած էին եւ միշտ էլ Թրքիվար մէկ պաշտօ-

282-83

նէութիւն միւսի վրան էր ձգած պատասխանատուութիւնը ։

Այդ րոպէներին էր, երբ դէպի Պոլիս գնացող շոգենաւը իր վերջին սուլոցը տուեց ։

Դանիէլիս հետ նաւ մտանք ։

ԲԻՒԶԱՆԴԱՑԻՆԵՐԸ․— Նաւի մէջ ամէն ազգերից կղզե–բնակներ կային․ բացի հայերից՝ մնացած բոլորը խօսում էին իրենց մայրենի լեզուով․ հայերն էին միայն, որ արտայայտ–ւում էին Թուրքերէնով ։ Հայերի մէջ ամենից աւելի աչքի էին ընկնում վաճառականները եւ պետական ամէն կարգի պաշ–տօնեաները ։

Երջանիկ, ուրախ են սրանք․ մանկական զուարթութեամբ ։ Իրենց խօսակցութեան նիւթն է անձնական վայելքներ, զուար–ճութիւններ, շահագիտական ձեռնարկներ ։ Երբեմն ա՛յնքան բիրտ, թրքեվար արտայայտութեամբ՝ նկարագրութիւններ են անում իրենց ցոփակեցութիւններից, որ մարդու պժգանքն է գալիս ։

Սրանք Բիւզանդացիներ են․ «Կե՛ր, Արբ եւ Ուրախ լեր»ի սկզբունքը իր ծայրագոյն աստիճանին հասցնողները ։ Նրանց միակ նպատակն է կեանքից ծծել մարմնային ամէն կարգի հա–ճոյքներ, ուրիշ ո՛չինչ ։

Իմ ներկայութիւնս նշմարելով՝ դրանցից մէկը, որ մեր քաջ յայտնի մի հին մատենագրի ազգականներից էր․ Հ․–եանը, ենթադրելով՝ որ իրենց խօսակցութիւնը կարող էի լսած լինել, մօտս եկաւ եւ մի տեսակ մեղմութիւն սկսեց փաստել ։ Վերջը եզրակացրեց․ «Տարօրինակ թող չերեւայ մեր գաղափարները․ ինչպէս որ հրապարակային ժողովի մէջ խօսելը, յօդուած գրե–լը՝ ձեզ համար զուարճութիւն է․ մեզ համար էլ՝ հացկերոյթը, պարահանդէսը․․․» ։

— Բայց ձեզանից արդէն բան չի սպասւում․ ձեր դաս–կարգին մենք վաղո՛ւց մեռելների կարգն ենք անցրել ։

— Ինչո՞ւ․ կարծում էք թէ մենք ազգասէրներ չե՞նք ։

— Հասարակական ի՞նչ պարտականութիւն էք կատարել․ կարո՞ղ էք մի բան, մի գործ ցոյց տալ ։

— Հասարակական գործը ազգային մարմիններին է պատ–կանում․ ի՞նձ ինչ ։ Ես միայն իմ տունս, ընտանիքս գիտեմ ։

— Բայց դուք էլ այդ Ազգի մէկ անդամն էք ։

— Արեցինք, ինչոր կարողացանք։

— Օրինակ՝ ի՞նչ, ե՞րբ, ո՞ւր, որի՞ն…

Մեր խօսակցութիւնից դրդուած՝ մօտեցաւ մի ուրիշը, մի շատ ծանօթ կղզերնակ։ Խիկար իմաստունի ձեւեր առած՝ իր հայրենասիրական ճառը այսպէս սկսեց. «Զարմանում եմ. իրաւ զարմանում՝ թէ ինչո՞ւ մեր յեղափոխականները տակաւին համբերում են։ Աստանայի կոտորածը բաւական չեղաւ. Հասան Պէյլիի եկեղեցին էլ քանդեցին. հիմա էլ մեր գերեզմանատունն են ուզում յափշտակել։ Ինչո՞ւ էք լռում. ինչո՞ւ էք կանգնել. ինչո՞ւ յարձակում չէք գործում, ցոյց սարքում։ Մենք այս թուրքերին անխտիր պիտի ատենք. ո՛չ բարեւ տանք, ո՛չ էլ բարեւ առնենք. նրանց հետ միատեղ չենք կարող ապրել. նրանք բոլորն էլ ատելի, զզուելի են մեզ համար. երեսները տեսնելու ազգ չեն։ Երանի՜ Ռուսիան շուտ գար եւ սրանց զզուելի գոյութեանը վերջ տար ու մենք էլ ազատուէինք։ Նըրանք մեր արիւնը ծծեցին… Թուրքը մեր յաւիտենական թըշնամին պիտի մնայ… Մի քանի ռումբով սրանց մեծերին ինչո՞ւ օդը չէք հանում, որ գոնէ մարդու սիրտ հովանայ…»։

— Այդ բոլոր հայրենասիրական թռիչքներդ յայտնի են, Արտաշէս էֆէնդի. բայց յարձակուելու համար զէնք է պէտք. քանի՞ հատ ես առել. մէկ ղուրուշ էլ տուած ունի՞ս ռումբի համար՝ դու, որ հազարների տէր ես։

— Ինչո՞ւ, դրամ չունի՞ք. Կուսակցութիւնները իրենք պիտի հոգան։

Այդ ժամանակ մի թուրք էֆէնդի նաւը ներս մտաւ՝ Պռոտի կղզուց. եւ թուրքից յաւիտենապէս զզուող մեր հայ էֆէնդին՝ իր բարեկամներով միասին՝ ստրկական երկրպագութիւններ արեցին. սկսեցին քծնաբանել, շողոքորթել եւ իրենց Էպիկուրեան հաճոյքների խօսակցութեանը է՛լ աւելի ոգեւորուած շեշտալ։

Արտաշէս էֆէնդին զէնքն էլ մոռացաւ, ռումբն էլ… մէջերնին օտարը ես մնացի։

Երեսս շուռ տուի։

Որոշ է. թուրք տիրապետութիւնը, որոշ վայրերում, սաստիկ կերպով խաթարել է մեր ազգային նկարագիրը. մանաւանդ ինչոր վերաբերում է բուն Հայաստանից դուրս՝ ծովեզերեայ մասերի ու մանաւորապէս Պոլսոյ մէջ սերնդէ սերունդ

ապրող Հայերին:

Առաջինի, ընտանեկէր, երկաթի ընաւորութեան տէր, մաքրակենցաղ Հայը տեղի է տուել թեթեւօլիկ, ինքնուրոյնութիւնից զուրկ, նիւթական ամենակեղտոտ կեանքի անձնատուր եղող մի սերնդի, որ ամէն բան է, բացի Հայ լինելուց: Նրա մէջ հայկական՝ ո՛չինչ. բացարձակապէս՝ ո՛չինչ: Նա կրում է մի անուն, որին անարժան է, եւ իր ամենօրեայ կեանքով այդ պատուական անունը արատաւորում, անպատւում, տղմի մէջն է թաթախում:

Ու սրանք, դժբախտաբար, աչքի են ընկնում. յաճախ մեր ազգային չափանիշը հանդիսանում տգէտ օտարների առաջ: Դեռ աւելին կայ. սրանցից էլ, երբեմն, Հայ Ազգի ներկայացուցիչներ են դուրս գալիս՝ բախտի մի հեգնութեամբ:

Դա մեր հասարակական, ազգային վէրքի չարաւոտ մի մասն է:

Հասանք կամուրջ:

ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐԸ.— Հաղիւ մի քանի քայլ առած՝ մեզ ուղեկից հանդիսացաւ ծանօթ բարեկամս՝ Ա. Ա.-եանը: Նա գրեթէ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան է. բայց Սօցիալիզմի պատճառով՝ խղճահարութիւն է զգում պաշտօնապէս արձանագրուել եւ մեր մէջ մտնել. թէեւ մեզանից պակաս չի աշխատում՝ մեր Կուսակցութեան բարգաւաճման համար: Նա սարսափելի թրքատեաց է. «Չի կարողանում հաշտուել Սօցիալիզմի հետ՝ այն տեսակէտով, որ նրանից կարող էր օգտուել և՛ւ թուրքը...: Չէ՛, ինչքան որ Սօցիալիզմը լաւ բան է. բայց հէնց այն րոպէին նա սեւանում է իր աչքին, երբ օգտակար պիտի լինէր իր ատած թուրքին էլ, որ աշխարհիս երեսին ապրելու իրաւունքը չը պիտի ունենար»:

Հրապարակախօսս ուրախ է. ներքին խռովութիւններ կան. իր դէմքին մի առանձին, նշանակալից արտայայտութիւն տալով՝ կամաց ձայնով հարցնում է. «Իրաւ, ի՞նչ էք կարծում, այս երկրի վիճակը օրէցօր անտանելի է դառնում. իրարու միս են ուտում՝ մի բան դուրս պիտի գա՞յ...»:

— Գնա՛, բարեկամս, գնա՛, մեր Արշակունեաց Հարստութեան անկման վերջին էջերը լաւ կարդա՛ եւ այնտեղից քեզ համար լուսաբանութիւններ կը գտնես՝ այսօրուանի համար...

Ընկնող, մեռնող պետութեան նշանները այսպէս են լինում։

Խօսակիցս սիրտ առած՝ բացագանչեց. «Թող օր առաջ կործանուի, որ ազատուենք...»։ Եւ մի առանձին եղանակով աւելացրեց. «Ես կուզէի, որ ձեր Կուսակցութիւնը չը հակառակէր, մանաւանդ ուժ տար Խալիֆային, որ նա միշտ կառավարութեան գլուխը մնար։ Չը բարկանաս եթէ ասեմ՝ թէ մեր ազատութիւնը Խալիֆայից պիտի գայ։ Բացատրեմ թէ ինչպէս։ Խալիֆայից աւելի լաւ քանդող այս երկիրը չը կայ. Ուրիշները վա՛յ թէ գան եւ շատ ու քիչ շինարար գործով պաբապեն. դրանով մեր տունը կը քանդուի. դա մեզ վնաս է. Սրանից պահենք, որ քանդելու գործը փութացնեն. այս տեսակէտով ես թունդ խալիֆայական եմ»։

Ու հրապարակագիրը բարեկամս սկսեց քա՛հ քա՛հ խնդալով՝ ինձ էլ յորդորել, որ գաւառների մէջ՝ Խալիֆայի տիրապետութեանը աշխատեմ։

Բարեկամիցս հեռանալով՝ դիմեցի դէպի Զաղմաղչըլար՝ Ենի խան, վերջին անգամ ընկերներին տեսնելու եւ իմ բացակայութեանս ժամանակի՝ մի կարգ խնդիրների մասին մասնաւոր կարգադրութիւններ անելու։

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ.— Հազիւ խանի դռնից ներս մտած՝ սանդուխներից բարձրացել եւ դէպի մեր պատմական «Խորհրդարանն» էի դիմում. երբ դիմացս տեսայ երկու ոստիկան՝ աստիճանների գլխին. երկու ուրիշն էլ «Խորհրդարան»ի դռան երկու կողմի երկարութեամբ յետ ու առաջ էին քայլում։ Ներսից ձայն չը կար։ Մտայ։ Այնտեղ են Կեդրոնական Վարիչ Մարմնի երկու անդամները եւ դրսից եկող մի քանի ընկերներ։ Ընկեր Ռուբէն Կարապետեանը նստած տեղից՝ Թուրքերէն լեզուով խօսում է եւրոպական հանդերձներ կրող մի պարոնի հետ, որ շրջապատուել էր երկու ոստիկաններով։ Երբ դռնից երեւացի՝ ընկեր Ռուբէնը ասաց. «Ահա՛ ինքը»։ Պարոնը տեղից վեր կացաւ եւ ակնածական մի թէմէլ-լահ անելով, սովորական բարեւանքներից յետոյ՝ ասաց, որ եկել է մեզ մի փոքր անհանգստացնելու։ Թղթերը բացեց ու խօսեց.

«Կառավարութիւնը ուզում է գիտնալ՝ թէ ովքե՞ր են հիմայ ձեր Կեդրոնական Վարիչ Մարմնի անդամները. այդ հար-

ցրնելու եւ տեղեկանալու համար եմ եկել»:

— Բայց կառավարութեան արդէն երեք ամիս առաջ իմաց է տրուել՝ առանձին յայտարարագրով, մեր Պատգամաւորական Ժողովից անմիջապէս յետոյ. մի՞թէ դուք տեղեկութիւն չունիք, եւ զարմանալի չէ՞ այդ:

— Չը գիտեմ. բայց ինձ տուեցաւ, որ գամ անձամբ տեղեկութիւններ հաւաքեմ: Ձեր Կեդրոնական Վարիչ Մարմնի անդամների ընտրութիւնը ի՞նչպէս է կատարւում:

Բացատրուեցաւ մեր Կազմական Կանոնագրի տրամադրութիւնները:

— Հիմա որո՞նք են ձեր Կեդրոնական Վարիչ Մարմնի անդամները:

Ընկեր Ռուբէնը թուեց բոլոր անդամների անունները եւ իմ փոխարէն տուեց փոխանդամիս անունը:

Մահիր էֆէնդին մի քիչ շփոթուած կերպարանք առաւ, աջ ու ձախ նայեց, եւ ուղղակի ինձ դարձաւ.

«Սապահ—Գիւլեան էֆէնդի, դուք այստեղ ի՞նչ պաշտօն ունիք. դուք էլ Կեդրոնական Վարիչ Մարմնի մէջը չէ՞ք»:

— Մեր Պատգամաւորական Ժողովը ձեզ օրինական բոլոր տեղեկութիւնները արդէն տուել է. ինչոր ձեզ պաշտօնապէս գրուել է՝ այս բոպէիս էլ կրկնուեց: Իմ գիրքս է, երբ ընկերներս կարիք ունենան՝ իրենց խնդրանքին համեմատ այս ու այն կողմ կը գնամ եւ իրենց սարքած ժողովներին կը խօսեմ:

— «Բայց ասուած է, որ դուք, թէեւ օտարական, Կեդրոնական Վարիչ Մարմնի նախագահն էք եւ ամէն բան կարգադրող, տնօրինողը դուք էք» :

— Այդ մասին, էֆէնդի, դուք ձեր հաշիւը տեսէք ձեր տեղեկատուներին հետ. ինչոր պէտք էր՝ Կեդրոնական Վարիչ Մարմնի անդամը՝ պաշտօնապէս ձեզ տուաւ:

Մարդը արձանագրութիւնը կազմեց. ստորագրուեց, եւ իր բարակներով միասին թողեց, հեռացաւ:

Գնաց. բայց ընկերների վրայ պաղ ջուր լցուեց. տիրեց ընդհանուր լռութիւն. պժգանք...

Այո՛, տեղի էր ունեցել մի զզուելի տեղեկատուութիւն իմ մասին...

Հետզհետէ եկան ընկերները. կարգադրեցինք մեր առկախ խնդիրները. ընդհանուր անելիքի մասին որոշ տրամադրու-

թիւններ գծեցինք եւ պէտք եղած աշխատանքի բաժանումը կատարեցինք։

Երեկոյեան պահուն՝ մեկնեցանք դէպի ծովեզր, նաւ առնելու։

ԲԱՐԱՓԸ.— Քարափն ենք. ընկերները լցուած են. շատերը պարգեւներ ունեն ձեռքերնին՝ գաւառի ընկերների համար։ Ուրախութիւնը ընդհանուր է. խօսակցութիւնը՝ զուարթ, ոգեւորիչ։

Շրջանի մէջտեղը՝ մօտս անցաւ ընկեր Նարգիզեանը, սեբաստացի, Ռուսաստանից նոր վերադարձած։ Երկար ժամանակ Ռուսաստան մնալով՝ ընկերը կոտրատում է ռուսահայերէնով։ Մի անուշ լեզուով՝ ասաց.

«Ընկերնե՛ր, երբ այս անգամ Օտեսսա դուրս եկայ՝ ինձ անմիջապէս ձերբակալեցին. բանից դուրս է գալիս, որ ինձ ձերբակալում են. որովհետեւ «Սահմանադրական» Թիւրքիայից եմ գալիս եւ կարող եմ «մեր սահմանադրական» տապալիչ գաղափարները այնտեղ էլ մտցնել, այնտեղ էլ քարոզել ... (ծիծաղ)։ Ընկերնե՛ր, ասացի թէ ա՛յ ձեր տունը չը քանդուի, ես ձեզանից եմ իմանում, որ Թիւրքիայի մէջ սահմանադրութիւն կայ. եղածը մի բան չէ՛. մի՛ վախեցէք։ Ընկերնե՛ր, բանից դուրս է գալիս, որ այս երկրի «Սահմանադրութեան» անունը շատ մեծ է։ Ասացի, ախպէր, թող գլուխներն ուտի իրենց տուած «Սահմանադրութիւնը». ի՞նչ սահմանադրութիւն, ի՞նչ տապալիչ մտքեր...։ Ձերը հազար անգամ «մերինից» լաւ է, ասացի։ Վերջապէս մի կերպ օձիքս ազատեցի, ու ինձ թողեցին...։ Այս «Սահմանադրութիւն»ը իմ գլխիս փորձանք բերեց. վախենում եմ, որ բոլորիս էլ գլխին մի օր փորձանք դառնայ... (ծիծաղ)»։

Յետոյ՝ ընկեր Նարգիզեանը մի առանձին ախորժակով աւելացրեց. «Ընկեր Սապահ-Գիւլեան, երկիր ես գնում. մեր Սեբաստիան էլ պիտի այցելես. ասա՛, որ էս դատարկ «Սահմանադրութեան»ը չը հաւատան. զգուշութիւնը ձեռքից բաց չը թողնեն... Եւ քեզ էլ ասե՞մ չիփ-չիտակ. ուզո՞ւմ ես վերադառնալ ողջ առողջ, մէջքդ, կողքերդ չը կոտրտուած.— եկեղեցու, կրօնի դէմ բան չը խօսես. չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը պահքդ չուտես. կամ՝ եթէ ուտես, ծածուկ կե՛ր, ոչ ոք

չիմանալ: Եթէ սրանք չանեն, մեր Սեբաստացիները ոսկորներդ կը ջարդեն՝ գլխացած եղիր (ծիծաղ): Սրանից յետոյ ինչ-որ քարոզեն՝ «մեր» ժողովուրդը կընդունի: Ախպէր, բանից դուրս է գալիս, որ մեր յեղափոխականները հէնց որ երկիր են գնում, էլ ուրիշ բան չունին. եթէ ո՛չ եկեղեցուն հայհոյել, կրօնքի դէմ խօսել եւ կնիկներին ասել՝ թէ ձեր հին էրիկները թողէք, նորերը առէ՛ք (քրքիջ): Ա՛յ ախպէր, ես Ռուսաստանից եմ գալիս. այնտեղ այլեւս էրիկը կնկան խօսք ասել չի կարողանում. գլխարկ շատա՞ւ՝ կը թողնի. շրջազգեստ շատա՞ւ՝ կը թողնի. թատրոն, պարահանդէս չը տարա՞ւ.— կը թողնի ու կը թողնի (ծիծաղ): Ախպէր, ի՞նչ կը լինի մեր վիճակը, երբ մեր կիներն էլ այդպէս սովորեն...: Էդ բաների առաջը ա՛ռ, ընկեր»:

Խօսքը ընկեր Զանգիւլեանին է. գոռալով ասաց. «Ընկեր Սապահ-Գիւլեան, լա՛ւ գիտցիր, եթէ «Նոր Աշխարհ»ը հրատարակելու չափ դրամ չը բերես, քեզ չը պիտի թողնեմ, որ նաւէն դուրս գաս՝ Պօլիս մտնես. քեզ այս ծովը պիտի նետեմ. (ծիծաղ)»:

Եւ ընկեր Զանգիւլեանը ձեռքերի, դէմքի այնպիսի շարժումներ արաց, որ կարծէք թէ ինձ ծովը նետելու գործողութեան մէջն է արդէն:

Բերան բացաւ Վանիկը, գաւառակի մայրենով մրմնջաց. «Ուժ տուր «Կայծ»ին, Ռուսանդական Մխիթիններին»:

Ուզում էր ուրիշ բան էլ ասել, երբ ընդհատեցի.

— Վա՛նիկ, եթէ՞ չանեմ, դո՞ւ էլ ինձ ծովը պիտի ձգես. (ծիծաղ):

Վանիկը է՛լ ձայն չը հանեց:

Ընկեր Ժիրայրը. «Իտտիհատի արմատը պիտի չորցնես, դէթ Հայերի միջից. անցած տեղերդ բոլորն էլ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեաններ դարձնես. Կազմակերպութիւնը զօրեղացրո՛ւ, ճիւղաւորիր ամէն կողմ»:

Դոքտոր Բէննէն էլ իր պահանջը դրեց. «Խարբերդ սքանչելի երիտասարդութիւն կայ. ապագայ հրաշալի ուժեր կարող են ստեղծուել. անպատճառ այնտեղ իջի՛ր եւ երկար մնա՛»:

Ընկեր Ռուբէնը նաւի պատրաստութիւնը տեսնելով՝ աճապարեցրեց վեր բարձրանալ:

Հասաւ Ասօն. ընկերների բազմութիւնը ճեղքելով պոռաց.

«Անպէ՛ր, առաջ Հայաստա՛ն, Հայաստա՛ն անցիր. էս կող-մերը, էս քանդուած երկիրը մենք ի՞նչ գործ ունինք. գնա՛ էն-տեղ, ես էլ տունդ-տեղդ կը հաւաքեմ՝ կը գամ. գնա՛, է՛ն տեղ հաստատուիր, է՛ն տեղ մնա՛, էլ մի՛ վերադարձիր... Երզնկայի վրայով ուղղակի Վան բարձրացիր»:

Եւ յուզուած՝ Ասօն սկսեց սիրածս կտորը մեղմօրօր երգել եւ իր ձեռնափայտով չափը զարկել.

«Փախէ՛ք, ամպեր, Տաւարչանէն,
«Ա՛լ մի ցօղէք ձեր ցօղեր.
«Տաւարչանը ոռոգուած է
«Հայոց քաջաց արիւնով»:

Բոլորիս վրայէն սխրութեան մի ալիք անցաւ. բայց Ա-սօն լացաւ...

Մեկնումի րոպէն մօտենում էր. նաւ վեր ելայ. ընկերնե-րը սկսեցին «Հնչակ»ը:

Նաւը խարիսխը բարձրացրեց:

Ընկեր Ջանգիւլեանը աղաղակեց. «Ընկեր Մուրատ, ընկեր Սասուն-Գիւլեանը քեզնէ ողջ առողջ կուզենք. ինչպէս տուե-ցինք, այնպէս էլ կը պահանջենք. պատասխանատու ես...»:

Մուրատը իրեն միայն յատուկ անուշ ծիծաղով ասաց. «Ան-պէր, մի քիչ առաջ ձայն էիր նետում...»:

— «Ձէ՛, ողջ առողջ կուզեմ. մազին դիպչող չը լինի»:

Նաւը երերաց. ընկերները սկսեցին երգել, աղաղակել, ծափեր եւ թաշկինակներ ծածանեցնել:

Բուռ Դանիէլս նոր միայն սկսեց արտասուք թափել:

Մենք հեռացանք:

ԳԼՈՒԽ Բ·

ԾՈՎԻ ՎՐԱՅ

———o«»(0)«»o———

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆԸ·— Անցնում ենք Վոսփորի նեղուցով:

Կեանքի հակադիր պատկերները շատ քիչ վայրերում այնքա՛ն կարկառուն գծերով են երեւան գալիս, որքան Կ. Պօլսում:

Մի կողմ հոյակապ պալատներ, ճոխութեան, պերճանքի, վայելքի գայթակղալից տեսարաններ· միւս կողմում մարդկային աղքատութիւնը, ժողովրդական թշուառութիւնը անձնաւորող խրճիթներ, ժանգոտած թիթեղներից շինուած խղիկներ:

Եզերքի մի շարանում՝ հրաշագեղ անտառներ, թաւուտ, անուշահոտութիւն բուրող պուրակներ· կարկաջուն, վճիտ, քաղցրահամ աղբիւրներ· իսկ մի քիչ հեռուն՝ ամայի տարածութիւններ, գարշահոտութիւն արտաթորող բացատաններ:

Նաւակների վրայ անհոգ լողում, օրօրւում, աղմկալից ձայներով զուարճանում են պալատականները, փաշաները, էֆէնդիները, նրանց հարէմները՝ ծխախոտը բերաններին, մարդը ուտող, չահագործող, ստրկացնող այդ տզրուկները, Կ. Պօլիսը Սոդոմ-Գոմորի վերածող այդ սպառիչ ուժերը: Իսկ դրանցից մի քիչ հեռու այն կողմը՝ հեւալով գնում են քրտնաթոր բեռնակիրների շարանները, տոտորիկ, գլխաբաց աշխատաւորները, փողոցների անօթիները, մուրացկանները:

Մեռնող, կործանուող Թիւրքիայի բոլոր տարրերը այդտեղ՝ իրարու վրայ դիզուած, կողք կողքի են կեցած:

Եւ էլ ինչո՞ւ չանիծել Պատմութեան այն բախտորոշ րոպէն, որ երկրի այդ հիասքանչ տարածութիւնը յանձնեց այն Թուրքին, որ բնութեան գեղեցկութիւնները միայն այլանդակել, անապատացնել գիտէ:

ՕՐՈՒԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ·— Ֆրանսիական «Պա–

քէ» Ընկերութեան «Սիրկասսիեն» շոգենաւի մէջն ենք․ երեկոյեան ժամի 4-ը։

Օրուան ճնշիչ տպաւորութիւնների, մէկը միւսից աւելի զօրեղ յուզումների տեղատարափի ներքոյ՝ մի անկիւն քաշուեցայ։

Ա՜խ, ինչքա՜ն եռանդագին կըցանկանայի, էլի՞նչ չէի տալ՝ վերստին ունենալու համար իմ պողպատեայ երիտասարդութեան առաջին տարիների կորովը, թափը, իմ անցեալի անսպառ եռանդը․ որպէսզի կարողանայի ընկերներիս ինձ վրայ դրած յոյսերը արդարացնել։

Եթէ հարիւր կեանք էլ ունենայի եւ Հայ Ազգին տայի, դարձեալ քիչ էր․ որովհետեւ պարտականութեան դաշտը անհուն, անծայրածիր էր։

Եւ, դժբախտաբար, մաշուած մի կեանք այլեւս շատ բան չունէր անելիք․․․։

Կամաց կամաց խորասուզուեցայ անցեալի քաղցր յիշատակների մէջ։ Վերյիշեցի մանկութեանս անհոգ, երջանիկ օրերը․ ապա պատանեկութեանս այն րոպէները, երբ դեռ նոր, չա՛տ վաղահաս, սրտիս վրայ զգալ սկսեցի՝ հասարակական ցաւի ծանրութիւնը։ Դրանք անթառամ յուշեր են։

Դեռ հազիւ 12 տարեկան, իմ առաքելանման ուսուցիչս՝ Վանեցի Մահտեսի Աւետիս Տէր-Մկրտիչեանը մեր գիւղից ինձ իր հետն առած՝ Սինեաց Աշխարհի Վայոց Ձորի (Դարալագեազ) Խաչիկ գիւղն էր տարել՝ ուսումս շարունակելու։

Այն ժամանակ չը գիտէի, թէ ի՛նչ ասել է հաւաքական կենցաղավարութեան պայմաններ․ բայց մի պատկեր ուժեղ կերպով դրոշմուել էր մտքիս մէջ։

Խաչիկ գիւղում, ամէն շաբաթ՝ ականատես էի լինում գիւղական, համայնական կեանքի հետեւեալ շատ հետաքրքիր տեսարանին։

Շատ վաղ ժամանակներից ընդունուած սովորութեան համեմատ՝ գիւղացիներից մէկը երբ քաղաք՝ Նախիջեւան կամ Շարուրայ Դաշտն իջնէր, գիւղի ծայրին կը կանգնէր եւ կըսպասէր։

Ամէն գիւղացի մի բան ունէր տալիք, մի բան՝ ապսպրելիք։

Գնացողը նրանց բոլորի տուածները մէկ-մէկիկ պիտի նը-

չանակէր, ուզածները գրի առնէր, որ վերադարձին բերէր։

Գիւղացիները՝ այր, կին երթացողին էին մօտենում. նրան տալիս էին դրամ, բուրդ, գուլպայ, տնային զանազան գործուածքներ, իւղ, պանիր, մեղր... որ ծախէր եւ նրանց փոխարէն առնէր՝ ինչոր ցանկանում էին։

Վերադարձողը կենդանի մի խանութ էր. երբ գիւղ էր վերադառնում՝ ուրախութիւնը, ցնծութիւնը ընդհանուր էր։

Ծիծաղի տարափ էր տեղի ունենում, երբ հերթը գալիս էր գրել-կարդալ չը գիտցողին։ Նա ապսպրանքները մի քանի անգամ կրկնել էր տալիս, որպէսզի չը մոռանար, մտքի մէջ լաւ տպաւորուէր։

— «Բեղ մասա՛ղ, Գրիգոր, մին էլ ասա՛»։

Եւ Գրիգորը բարձրաձայն աղաղակում էր եւ վերջն էլ հարցնում. «Օ՛հան, գլխումդ մտա՞ւ. միտումդ մնա՞ց, հօ մոռացա՞ր ո՛չ»։

Օհանը կամ նորից կրկնել էր տալիս, կամ ինքն էր դասի պէս մի առ մի արտասանում, որպէսզի ապսպրողը համոզուէր թէ «մտքումը մնացել ա»։

Տիրացու Սահակը, որ ամէնից աւելի էր քաղաք գնում՝ գալիս, իր գործը շատ դիւրութեամբ էր գլուխ բերում. որովհետեւ հայերէն տառերին նմանութիւն բերող գծեր քաշել գիտէր։

Բայց ամէնից աւելի զուարճալին Տէր-Յակոբի գնալու օրն էր։

Տէրտէրը շատ գեղեցիկ ձայն ունէր. լաւ շարական էր երգում. Աւետարան, Գիրք, Մաշտոց՝ ամէն բան անգիր գիտէր. բայց՝ դժբախտաբար՝ գրել չը գիտէր, ըստ հին յաճախադէպ սովորութեան։ Շատ էր աշխատել. բայց գրել չէր սովորել։

Տէրտէրը քաղաք գնացած օրը՝ իր որդին, եւ իմ ընկերակից, Աբէլը մօտն էր կանգնում եւ հօր փոխարէն գրում։ Դա մի զարմանալի երեւոյթ չէր։ Տէր-Յակոբը Սինոդին, Կոնսիստորիային եւ Յաջորդին նամակ, տեղեկագրեր, ծննդատոմարներ ուղարկելիս էլ՝ Աբէլը տակը ստորագրում էր, ըստ ընկալեալ սովորութեան. «Վասն անգրագիտութեան Տէր-Յակոբ քահանայի՝ ի տեղի նորա ստորագրեցի, Աբէլ Տէր-Յակոբեան»։

ընկերներիս մի քիչ առաջ արած ապսպրանքները և յորդորները Խաչիկ գիւղի համայնական կեանքի բեկորների այդ պատկերները վերյիշեցրին:

Ընկած մի տեսակ ինքնամոռացութեան մէջ՝ յաճախ ինձ ու ինձ ժպտում էի, անցեալի այդ պատկերի առաջ:

Ընկեր Մուրատը՝ բեխերը ոլորելով, մօտեցաւ և ընկերային մի գգուալից ձայնով ասաց.

— «Անպատճառ մի բան միտդ ընկել է, որ քեզ ու քեզ ժպտում, ծիծաղում ես... կա՛մ Նարգիզեանն է. կա՛մ Ասօն»: Ու ինքն էլ, այդ անունները վերյիշելիս՝ սկսեց խնդալ:

Պատմեցի, նկարագրեցի հոգեկան բերկրանքիս առիթ տըւող՝ Խաչիկ գիւղի պատկերը:

Ընկեր Մուրատը գլխին զարկելով՝ բացագանչեց. «Վա՜յ, տեսա՞ր. ես մոռացել եմ քեզ ասելու, որ քո այդ վանեցի վարժապետին ես շատ լաւ ճանաչում եմ»:

— Ի՞նչպէս. ո՞ւր. մի՞թէ նա դեռ կենդանի է, զարմացած՝ հարցրի:

— «Ռուսաստանից վերադառնալուց յետոյ՝ գնացած է եղել Վան և ապա Սալմաստ վերադառնալով՝ Փայաջուկ գիւղի վրայ քահանայ էր ձեռնադրուել՝ Տէր Եղիշէ անունն առնելով: Երբ 1899-ին Փայաջուկ էի, քո խօսքդ եղաւ. յիշեց՝ ճանաչեց քեզ. հասցէդ ուզեց, որ նամակ գրի: Դժբախտաբար շատ չը քաշած՝ վախճանուեցաւ...»:

— Մուրատ, այդ մարդին ես շատ բան եմ պարտական, գրեթէ իմ ամբողջ հասարակական կեանքս: Հիմը դնողը, իմ հոգին առաջին անգամ կազմակերպողը, իմ առաջին տպաւորութիւններս ներշնչողը նա՝ այդ սուրբ մարդն է եղել: Ծերունազարդ, պատկառելի, մաքրակենցաղ մի հայ ուսուցիչ էր նա. ուսին ունէր մի «խուրջին», երկու աչքերը գրքեր լցրած՝ ուրիշ ո՛չինչ: Մահտեսու ամբողջ հարստութիւնը դա էր: Գիւղէ գիւղ ման էր գալիս, պտոյտներ անում. եկեղեցիների մէջ թէ՛ երգում, թէ՛ քարոզում: Ուսումնարան եղած գիւղերում՝ վեց ամիս, մէկ տարի էր մնում, աշակերտներ հաւաքում, դաս տալիս, գրել-կարդալ սովորեցնում, և ապա՝ անցնում ուրիշ գիւղեր: Մեր ժամանակի Մաշտոցն էր նա: Նախիջևանի գաւառում գիւղ չը կար, որ նա այցելած՝ աշակերտներ հաւաքած չը լինէր:

Ապահովութեան, հանգիստ կեանքի մէջ ծնած՝ մեծացած երեխաներ էինք. ձմեռը մեր ամենազուարճալի ժամանակներից մէկն էր: Այդ ժամանակն էր, որ քօլօզներով, երիզաւոր բրդէ անդրավարտիկներով, կուրտիկ հագած՝ մազոտ կուրծքերը լայն բացած՝ գալիս էին «կռօներ»ը եւ տներից «ողորմութիւն» հաւաքում:

«Կռօներ»ը շատ լաւ երգում, պարում էին:

Յաճախ նրանց՝ աւելի շատով՝ բամբակ, հաց, մանած, ալիւր, ցորեն, կոպեկներ էինք տալիս եւ տան մէջ պար բռնեցընում: Նրանք պարում էին ձեռք ձեռքի բռնած, բոլորակ կազմելով. թռչկոտում, նստում, ոստոստում էին, և մենք էլ ծափ զարկում, զուարճանում, ուրախանում էինք: Գիւղի մէջ հարսանիք էր, երբ «կռօներ»ը գալիս էին:

Նրանք երգում էին, յիշում եմ, բայց ձայների ելեւէջների մէջ մի տխուր, լալագին շեշտ կար:

Երբ բուք բորանին նրանց նստացնում էինք քուրսու տակ՝ իրենց ընդարմացած ձեռքերը, ոտքերը տաքացնելու. նրանք մեզ օրհնում էին. բայց եւ յաճախ լալիս էին. չը գիտէի թէ ինչո՞ւ:

Մահտեսին էր, որ մեզ սովորացրեց նրանց ո՞վ եւ ո՞րտեղացի լինելը:

Դեռ այդ հասակին՝ նա մեզ հաւաքում էր իր գլխին՝ գաստանի մէջ եւ արտասուալից աչքերով պատմում «քեաֆիր» Օսմանլիի զուլումների մասին:

Ազգային, ցեղային, հասարակական ոգին նա՝ նա արթնցրեց իմ մէջ...

Եւ այնուհետեւ աշնան առաջին օրերից, աչքներս դաշտերի ճանապարհներին յառած՝ անձկանօք սպասում էինք «նրանց», Ուշտունեաց գաւառի մեր արիւնակիցներին. որոնք մեզ համար այլեւս «կռօներ» չէին, այլ երկրից խաբրիկ բերող ԿԸՌՕՒՆԿՆԵՐ, որոնք ո՛չ թէ մեր հեգնանքի, ծաղրի առարկան էին, այլ սիրոյ, գգուանքի:

Այնուհետեւ, երբ հայկական արխութիւնը խարհրդանշող՝ այդ պանդուխտները գալիս էին. մենք իրարու ձեռքից էինք խլում. նրանց մեր տները տանում եւ ինքներս նրանց համար դրամ, ցորեն, ալիւր... հաւաքում, ու մեր սիրելի հիւրը դարձնում:

Ու «նրանք» պատմում էին իրենց գլխից անցած-դարձածները. մենք լսում էինք. սիրտներս լցւում, ուռչում էր: Եւ պատանեկական վառ երեւակայութեամբ՝ սլանում էինք հորիզոններ հեռո՜ւ, հեռո՜ւ. ատամ էինք կրճտացնում, բռունցք շարժում, թէ երբ պիտի չափահաս դառնայինք, մեծանայինք, ուսումներս աւարտէինք, որ երկի՜ր, Հայաստա՜ն երթայինք եւ տանջւող ժողովրդի մէջը մտնէինք:

Այդ տպաւորութեան տակ՝ քանի՜ քանի՜ թուրք լամուկների գլուխ եմ կտրել, թեւքերը ջարդել ու գիւղական կռիւների պատճառ դարձել:

Զարմանալի՜ մարդ էր այդ Մահտեսին. չը տեսայ մի օր նրան ուրախ, խնդացին. միշտ խոժոռ, մտածմունքների, յոյզերի մէջ թաղւած. միշտ Եղիշէն իր ձեռքին: Ծառի տակ, առուերի մէջ հազիւ հանգիստ առած՝ կա՛մ Եղիշէն էր կարդում, կա՛մ Խորենացին... Ուտելու, խմելու, զւարճանալու հակամիտութիւն բնաւ չը կար այդ մարդու մէջ: Նա մի Ստոյիկեան էր. բայց հասարակական ցաւերով, տանջանքներով լի Ստոյիկեան:

— «Եւ գիտնալով, որ քո վարժապետդ է եղել. Փայաջուկի ընկերները մի առանձին շուքով թաղեցին: Ասօն էլ մի գեղեցիկ դամբանական խօսեց»:

—Այո՛, շա՜տ յետոյ, Խրիմեան Հայրիկից, Երուսաղէմ եղած ժամանակս, իմացայ, որ նա իրեն աշակերտել է եւ Աղթամարի վանքի կիսա-սարկաւագներից էր եղել:

Ընկեր Մուրատը այնուհետեւ սկսեց Մահտեսու քահանայական կեանքից զանազան գծեր պատմել, որ ինձ համար նորութիւններ էին եւ ագահութեամբ ծծում էի:

Ապա դառնալով ասաց. «Մահտեսին քո կեանքիցդ էլ շատ բան է պատմել... Դու շատ ծեծ ես կերել, կռիւներ ես սարքել, ժողովրդական իրարանցումներ ես յառաջ բերել: Քանի որ միասին ենք, տեղը եկել է, ո՜վ գիտէ, աշխա՜րհ է. չը գիտենք ի՛նչ կը լինենք, ի՛նչ չենք լինիլ. պատմիր քո ԱՒԱՐԱՅՐԻ ԴԱՇՏԸ եւ Հայ-Թաթարական Կռիւը»:

– Քեզ այդ ո՞վ ասաց:

— «Մահտեսին»:

Եւ Մուրատը սկսեց բարձրաձայն ծիծաղել, խնդալ. աւելացրեց. «Սովորութիւն ունիս միշտ տեղեկագրեր ուղել,

կենսագրականներ պահանջել. մէկ բան պակաս եղած ժամանակ՝ պոռալ, ճչալ ունիս. մինչդեռ ինքդ դրանցից եւ ո՛չ մէկն ես անում: Ինձ՝ անցած-դարձած հազար բաներ ես պատմել տուել. հերթը հիմայ քոնն է. պատմի՛ր, որ լսեմ: Պատմի՛ր, քեզանից էլ եմ ուզում այդ գիտնալ, որ Ասօին պատմեմ, գրի առնել տամ»:

Ընկեր Մուրատը թախանձեց. ու ես պատմել սկսեցի:

ԻՄ ՄԱՆԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ.— Աշնան ամիսներից մէկն է. (1874): Գիւղացիք տարուան այդ եղանակին՝ ամէն ինչ հընձել, կալսել, պատրաստել՝ տուն են հաւաքել: Բոլորի ամբարների մէջ տիրում է լիութիւն, մառանում՝ առատութիւն:

Դաշտային հոգսերից ազատուած՝ գիւղական բոլոր մեծ ու փոքր երեխաները, պատանիները, չափահասները՝ երէկուայ հօտաղը, խուրիկ քշողը, մաճկալը, հոլթարածը, ուլարածը, եզնավարը... լցւում են ուսումնարան՝ տարուան այդ եղանակից օգտուելու եւ մինչեւ գարնանավարի սկսելը՝ «մի քիչ գրել-կարդալ» սովորելու:

Մեր գիւղի ուսումնարանը բաղկանում էր երկու սենեակից: Առաջինը մի մեծ, երկայն, ընդարձակ սրահ էր եւ կարող էր 250—300 հոգի բովանդակել. իսկ երկրորդը՝ հազիւ 50—60:

Առողջապահական պայման, օդ՝ դրանք շատ մեծ նշանակութիւն չունէին: Դասարանական խճողում բառը մեզ համար արժէք չունէր. այդ մասին հասկացողութիւն չունէինք:

Այդ տարին 300 հոգուց աւելի էինք:

Դասարանների մէջ նստարան ունենալու սովորութիւնը դեռ չէր մտել: Ամէն աշակերտ իր տանից բերում էր փոքրիկ ղօշակ, կապերտի, գորգի, խսիրի կտոր եւ նրա վրայ էր նստում՝ իր դասերը սովորում: Բոլորս էլ, մեր ուսման կարգին համեմատ, գետնի վրայ կողք կողքի էինք շարւում, ուսման դասագրքերը առջեւնիս. գրում էինք մեր ծնկների վրայ՝ փետուրէ գրիչով:

Մեր «մեծ» դասարանի վերին պատի լայնութեամբ դրուած էր՝ վարժապետի համար՝ տախտակաշէն ամբիոնի նման մի բան, որ գիշերները վարժապետի համար մահճակալի տեղ էր ծառայում. իսկ ցերեկները՝ որպէս աթոռ, ամբիոն:

Կարգով, ըստ բաժանման, մօտենում էինք, անգիր սեր—

տածներս, գաններս ասում եւ նորը առնելուց յետոյ՝ մեր ան-գերն էինք վերադառնում, եթէ ծեծից կամ չոքելուց ազատւում էինք:

Փոքրերը կարդում էին Այբբենարան· Մայրենի լեզու, Սաղմոս, Ժամագիրք· իսկ մեծերը՝ Զամչեան քերականութիւն, Ագոնց ճարտասանութիւն, Եղիշէ, Խորենացի, Նարեկ, Փաւստոս Բիւզանդացի, Թովմաս Արծրունի, եւայլն:

Մահտեսի Աւետիսը իր ուսումնարանի մէջ մի նորութիւն էր մտցրել: Ամէն շաբաթ՝ խոշոր տառերով՝ հայ մատենագիրներից իմաստալից կտորներ էր գրում հաստ թղթերի վրայ եւ չորս պատերից կախ անում: Մինչեւ միւս շաբաթ՝ պարտաւոր էինք անգիր գիտնալ:

Վերջին աստիճանի խիստ մարդ էր Մահտեսին: «Միսը քեզ՝ ոսկորը ինձ» էին ասում առաջ ծնողները, երբ դպրոցի չէմքից ներս ոտք էին կոխում՝ իրենց երեխաների ձեռքից բռնած: Մահտեսի Աւետիսը այդ մեթոտի մարդն էր: Բայց այդ խստութեան հետ միասին՝ ծայրահեղ փափկասիրտ, հայրական գորովանքով լի՝ դէպի իր աշակերտները:

Դասը չգիտնալը, ժամ չերթալը, փոխասացութեան մէջ սխալուելը, Գրքերը, Մարգարէները անսայթաք չը կարդալը՝ յանցանք էր:

Ես եւ ինձ հետ մէկ-երկու ուրիշները՝ Գրքերը եւ Մարգարէները եկեղեցու մէջ, ըստ սովորականին, պիտի կարդայինք աշխարհաբառ՝ գրաբառ բնագրի վրայ նայելով, այնքա՛ն որ վարժ պիտի լինէինք: Մահտեսին, այդ ժամանակ, դասը կանգնած՝ լսում էր· վա՜յ սխալուողին· պրծում չը կար:

Խորենացու, Եղիշէի, Յովհաննէս Կաթուղիկոսի, Լամբրոնացու... գլխաւոր կտորները ջրի պէս չասելը պատիժ ունէր:

Հայոց Պատմութեան մէջ ժամանակագրական սխալ գործելը· Զամչեանի բացատրութիւնների համեմատ չը մեկնարանելը եւ «աչքերը խփած» ամէն անցք տեղն ու տեղը չը պատմելը՝ Հայութեան անարժան որդի տիտղոսն ունէր իր մէջ:

Աշակերտները, հակառակ վարժապետի խստութեանը, ո՛չ միայն յարգանք, այլ պաշտամունք ունէին դէպի այդ մարդը: Նոյնպէս եւ մեր ծնողները:

Բայց, ինչքան էլ որ լինի, աշակերտը աշակերտ է վերջա-

պէս· նա ամէն բանից առաջ «խաղ», «չարութիւն» է փնտռում· շատ անգամ նախապէս գիտնալով՝ որ դրա ծայրը պատիժ կայ:

Երբ պարտազանցութեան, խաղերի, յանցանքների մէջ էինք բռնւում· Մահտեսին ծեծը քաշում էր՝ հետն էլ միժամանակ աւելացնում· «Հիմայ Խորենացին, Եղիշէն պիտի ասեն, թէ մենք պատմութիւն գրեցինք՝ մեր զաւակներին թողեցինք, որ սովորեն, մարդ լինին եւ հայ դառնան: Իսկ դուք՝ ապերախտներդ, ձեր սուրբ հայրերի խօսքերը, նրանց խրատները անգոսնողներդ· նրանց յիշատակները մոռացողներդ, դուք յանդգնում էք նրանց սուրբ խօսքերը ոտքի տակ առնել, նրանց կամքը արհամարհել, նրանց կտակը չը կատարել եւ նրանց սուրբ հոգին վիրաւորել»:

«Այդպէս հա՛... Ա՛ռ քեզ, ուրեմն, որդի անարժան եւ անհարազատ», ու ճիպոտը սկսում էր իր գործը տեսնել...

Դասը չը գիտցող աղային խրատելիս՝ այսպէս էր ասում· «Ի՞նչ պիտի ասեն հիմայ մեր երանելի նախահայրերը՝ Սուրբն Սահակ եւ Մեսրովբ..., չե՞ն ասիլ, որ մենք գիր ստեղծեցինք, հրեշտակներին արժանի աստուածային լեզու թողեցինք· իսկ Գրիգորը չուզեց սովորել... Այժմ ստացիր հօրդ արդար պատիժը»... Եւ ստանում էր:

Իդէալական անզուսպ հայրենասիրութիւն էր սնուցանում մեր մէջ· ինչըր Հայինն էր, հայկական էր՝ Մահտեսու համար սուրբ էր եւ նուիրական· ու մենք պարտաւոր էինք ընդունել, պաշտպանել եւ գործադրել:

Անշէջ ատելութիւն, զզուանք, զարշանք՝ ինչըր Թուրք եւ Թրքական էր· դա Մահտեսու մէջ տիրող յատկանիշ էր, որ մեզ բաժանել էր տալիս: Մենք Վարդանների, Մուշեղների, Վահանների ... վրէժները առնողներ պիտի լինէինք: Եւ դրա համար՝ ուսումնարանից դուրս գալուց յետոյ՝ Թուրք լամուկներին պատահելիս ծեծկուելը ազգային պարտականութիւն էր: Մինչեւ տուն հասնելը՝ մեր հարեւան Թուրքերի տղաներից Արշակների, Արծրունիների վրէժները մի քանի անգամ պիտի առնէինք՝ քիթ ու պռունգ կոտրտելով, եւ այդ՝ գրեթէ ամէն օր:

Մահտեսին մեզ յաճախ տանում էր ման գալու գիւղի շրջակաները· Սիւնեաց Աշխարհի այդ պատմական, հրաշալի վայրերը· ուր ամէն ծառ, թուփ, ժայռ, բլուր, լեռ, ձոր, դարա-

տալ՝ նիւթեր ասելիք, խօսելիք ունի՝ անցեալի յիշատակներից: Երբ մօտենում էինք այդ սրբազնասուրբ վայրերին՝ կօշիկներս հանած, երեսներս խաչակնքելով՝ տեսնում էինք աղբիւրը, որից Դաւիթ Բէգը ջուր էր խմել. երկնամբարձ լեռների կատարները, որոնց վրայից հայ զօրավարները հրամաններ էին արձակել. «Սոսանները», որտեղից հայ զինուորները, կիները, մանուկները ժայռեր էին վայր գլորել թշնամիների վրայ. «Կթան» քարը, որ սառնորակ ջուր էր ջամբել հայ մարտիկներին:

Եւ իւրաքանչիւր քայլափոխին մեզ ընկերանում էին պատմական յիշատակները. նրանք մեզ դնում էին տաք երեւակայութեան թռիչքների, երազների մէջ եւ կեանքը, իրականութիւնը այլեւս փշալից, անտանելի, հեղձուցիչ էր դառնում մեզ համար: Մենք պատանիներ էինք, բայց իրական աշխարհից դուրս, կտրուած, մի տեսակ երկնաճեմ, երկնասլաց ուղեղով՝ նախահայրերի, պապերի, անցեալ յիշատակների մէջ թաղուած, սուզուած պատանիներ:

Մենք «Ծերունի մանուկներ» էինք. ինչպէս մի օր, յետագայում, ասաց Ծերենցը:

Տեսե՞լ ես, Մուրատ, մեր գիւղի՝ անզուգական «Կարմիր Սար»ը, կոհակաձեւ «Մատկեաց»ը, երկայնաձիգ «Ղաչ»ը, նրա հիւսիսային կողմում բարձրացած «պարսպապատ» Զալխանը եւ սրա յետեւում տարածուող ընդարձակ բարձրավանդակը՝ իր մացառուտ ժայռագագաթներով, մեծ «կթան» քարերով: Պարսկական, արաբական, թաթարական արշաւանքներին վկայ եղող. Դաւիթ Բէգի քաջագործութիւնները ընդգրկող այդ լեռնագագաթների տակ՝ Մահտեսին մեզ շատ արտասուքներ է թափել տուել: Հեռանալուց առաջ՝ մոմերը վառում էինք, համբուրում, եւ կազդուրուած, վերանորոգուած սրտով՝ տուն վերադառնում:

Մի գիծ էլ լաւ յիշում եմ:

Երբ պատժւում էինք. վա՛յ-վա՛յով մեր տեղերն էինք նստում, երդում-պատառում անում, որ է՛լ չարութիւն չենք անիլ եւ իրեն բարկացնիլ. Մահտեսու սիրտը լցւում էր, փղձկում եւ հօր նման մեզ գգւում, փայփայում ու թախծալից խրատում՝ որ է՛լ «ապերախտ որդիներ» չը լինենք:

Վերջապէս նա մի եզակի անհատականութիւն, ինքնու-

բռնութիւն էր․ իր տեսակի մի Պեստալոցցի, Ֆիխտէ։

Թէեւ հազիւ 12 տարեկան․ բայց ուսումնարանի մէջ ես առաջինն էի։ Զամչեան քերականութիւնը վերջացրել՝ Ագոնց ճարտասանութիւնն էի ձեռքս առել։ Հինգերորդ դարու մատենագիրների մի մեծ մասը՝ քերականական վերլուծումով կարդացել, աւարտել էի․ յաջորդ դարերին էի անցել։

Երբ մէկը մեր ուսումնարանն էր այցելում․ Մահտեսին նշան էր անում, վեր էի կենում եւ 200 տեղական ու հարցական մակբայները իրարու յետեւից թափում։ Ագոնց ճարտասանութեան գլխաւոր մասերը անգիր էի արել, գրեթէ ճարտասանական բոլոր ձեւերը։

Խորենացու «Ողբ»ը ամբողջապէս անգիր գիտէի։

Երբ, ըստ Եղիշէի, Յազկերտին էի նկարագրում, «Զի՞ կոծիս, զի՞ բորբոքիս, զի՞ ոչ շիջանիս» պարբերութիւնը լրանալուց յետոյ՝ Մահտեսին յուզուած՝ «Վարդանայ ճառն» էր պահանջում։ «Առանց Հայաստանեայց մեզ ո՛չ գոյ Արեւ»․ ու պէտք էր բացատրել՝ թէ ինչո՞ւ։

Այսպէս, Մահտեսի Աւետիսի առաջին եւ ամենից սիրելի աշակերտն էի։

Մահտեսու բացակայութեան՝ ուսումնարանի մէջ ամէն ինչ ես էի, ո՛չ միայն հսկող էի լինում, այլեւ վարժապետին փոխարինող։

Բայց խոստովանում եմ, ես սոսկալի չար, անհանգիստ, կռուարար տղայ էի, յուզումնալից կեանքի սիրահար։ Հանգիստ նստել չը գիտէի․ միշտ մէկի կամ միւսի հետ հրմըշտուքի, կռուի մէջ էի։ Եւ դրա համար է միշտ եղել իմ ծեծ ուտելս․ իսկ դասերիս համար՝ երբե՛ք։ Կռւում էի մեծի հետ․ կռւում՝ փոքրի հետ․ բայց կռւում էի․ պարապ, անգործ նըստել չը գիտէի։ Ամէն օր մեր բակի դռան առաջ մի քանի հոգի, հայր, մայր նստում էին, սպասում, որ հօրս ու մօրս գանգատուեն իմ ձեռքից․․․ Մեր խեղճ հարեւանները իմ ձեռքից էլ ինչե՛ր չէին քաշում։ Օր չէր լինիլ, որ Մահտեսուն գանգատ չը գային մեր թուրք այն հարեւանները, որոնց փողոցների միջից անցնելու սովորութիւնն ունէի․ նրանց կա՛մ կուժն էի կոտրել, կա՛մ կուլան, կա՛մ տղային էի ծեծել, կա՛մ աղջկան․ եթէ ուրիշ բան արած չը լինէի կա՛մ մզկիթին էի քար նետած, կա՛մ մոլլային։

Վերջապէս՝ հարեւան, դրկից, մեծ ու փոքր գանգատաւոր էին ձեռքիցս: Հօր ու մօր միս ու ճար տղայ եւ յառաջադէմ լինելուս համար՝ որքան որ ներողամիտ· բայց երբեմն էլ խիստ ծեծ էի ուտում... Նորից չարունակելու համար:

Մի օր Մահտեսին ոչխարները գայլի հսկողութեանը յանձնեց· ահա թէ ինչպէս:

Դասներս տալուց յետոյ՝ Մահտեսին ուսումնարանը իմ հսկողութեանը յանձնեց, սովորականին պէս, եւ ինքը շուկայ իջաւ՝ գիւղական «իշխանների»ի հետ խորհրդակցելու դպրոցական զանազան խնդիրների մասին:

Երբ գլուխս պատուհանից հանեցի՝ տեսայ, որ Մահտեսին բաւականին հեռացել է եւ մեր ձայնը չի կարող լսել· բոլոր տղաներին ասացի, որ ամէնքն էլ իրենց գրքերը խփեն, ծալեն, գրելը թողնեն եւ պատրաստուեն ասածս կատարելու:

Մի քանիսը քրթմնջացին· մանաւանդ մեծերը՝ 20—25 տարեկան եղողները, որոնք ուզում էին իրենց «գիր»ը շարունակել:

Կրկնեցի· սպառնացի· չը լսողների անունները քարետախտակիս վրայ գրեցի, որ վերադարձին Մահտեսուն ներկայացընեմ՝ որպէս «անպարտաճանաչներ»ի եւ «անհնազանդներ»ի: Գիտէին, որ դրա ծայրը պատիժ կար· ուստի բոլորն էլ համակերպեցան:

Ամէնքին կարգով իրենց տեղերը կանգնեցրի:

Ասացի· հիմայ պէտք է Վարդանանց Պատերազմը խաղանք: Ամէն մարդ թող իր տակի դօշակը, չորը, խուրը ձեռքին առնի եւ պատրաստ կենայ: — Այդպէս էլ արեցին:

Պէտք է երկու մասի բաժնուել, աղաղակեցի, մէկը Հայ-միւսը՝ Պարսիկ: Հայերը թող վերը կանգնեն· իսկ Պարսիկները՝ վարը:

Ամէնքն էլ վեր վազեցին· ոչ ոք չուզեց Պարսիկ լինել:

Տեսնելով որ այս կերպ անկարելի է· բոլոր յետադէմներին· ըթամիտներին, մեծ ու փոքր ծոյլերին հաւաքեցի, մէկիկ-մէկին զատեցի, իրարուց բաժանեցի եւ Պարսիկների համար նշանակած տեղը կանգնեցրի:

Բոլոր յառաջադէմներին, աշխատասէրներին մէկ տեղ բերելով՝ տարայ վերեւ, Հայոց Բանակը կազմեցի:

Յանկարծ երեւեցաւ, որ բոլոր 20—25 տարեկանները լըց-

ունել են Պարսիկների կողմը․ իսկ վերի մասի մէջ կան միայն փոքրահասակներ։

Դրա էլ ճարը գտայ։ Ընտրովի՝ մի քանի մեծերին վերեւ տեղափոխեցի։

Եւ երբ ամէն բան կարգի մտաւ․ երկու մասի բաժանուեցանք։

Դասարանի ուղիղ մէջտեղն էլ ածուխով սեւ գիծ քաշեցի։ Դա էլ Տղմուտ գետն էր։

Այս ես մէջտեղ անցայ՝ «Վարդանայ ճառը» արտասանեցի։

Պարսից Մուշկան Նիւսալաւուրտն էլ մի կողմ կանգնած՝ իր զինուորներին խրախուսեց։

«Ո՛չ է մեզ Արեւ, առանց Հայաստանեայց», գոռացի, եւ յարձակումը սկսեցինք…

Մեր զէնքերը՝ մեր դօշակները, փալասները, խսիրի կըտորներն էին…

Կռուեցի՜նք, ու կռուեցի՜նք։

Բայց մինակ չէինք կռւում․ հապա աղաղա՜կը, գոռա՜լը, գոչե՜լը, ճչա՜լը…

Բարձրացել էր փոշու մի ամպ․ այնքա՜ն թանձր, որ ո՛չ Պարսիկն էր յայտնի, ո՛չ էլ Հայը։ Իրարու տալիս ու տալիս էինք…

Թանաքաման, թուղթ, գրիչ, գիրք՝ ցիր ու ցան յատակի վրայ…

Փշրուեցան պատուհանների ապակիները․ վառարանը ընկաւ, եւ ծուխը բարձրացաւ…

Բայց մենք մի անգամ տաքացել էինք․ արիւն քրտինքի մէջ կորած՝ հարուածներ էր, որ իրարու իջեցնում էինք։

Փոքր երեխաները յատակի վրայ թափուել, ընկել են․ ո՞րի հոգը․ մենք շարունակում ենք հոգւով-սրտով․ յաղթութի՜ւն պիտի տանել։

Պատերազմը սկսուելուց մէկ ժամ անցել էր։

Մօտենում էինք Տղմուտ գետին։

Մուշկան Նիւսալաւուրտը յառաջ վազեց իմ վրայ… ինձ տապալելու մօտ էր․ երբ «Համհարզ»ս՝ Խորէն Խորխոռունին (Աւետիս Զաքարեանը) վրայ հասաւ եւ Մուշկանին գետին փռեց։

Անցանք Տղմուտ գետը․ Պարսիկներին սրահից դուրս քշե-

ցինք· իր թափի սաստկութեան մէջ՝ Խորէն Խորխոռունին ընկաւ դռան շէմքի վրայ՝ ոտի ճանը դուրս եկաւ· քիթն ու պըռունգը արիւնոտեց…

Այդ ժամանակն էր, ահա՛, դրսի դռան շէմքի վրայ նշմարեցինք Մահտեսուն՝ կանգնած:

Փաղչող փախչողի եղաւ: Իմացանք մեր գլխին գալիքը: Ամէնքս էլ՝ վերջին հաղորդութիւն առնողի նման՝ տեղերնիս նստեցանք, պատժին սպասելով: Էլ բռնուած էինք· փախուստի ճանապարհ չը կար· ո՛չ մի բան չէր կարող մեզ ազատել Մահտեսու արդար զայրոյթից:

Բոլոր ապակիները ջարդ ու փշուր եղած· վառարանը տեղից դուրս· ջրի սափորները կոտրտուած, յատակի վրայ ջուր, մոխիր՝ գրքերի, թղթերի հետ խառն… Վա՜յն եկել՝ մեզ տարել էր:

Երկար ժամանակ Մահտեսին մտնել չը կարողացաւ՝ փոշու ամպից· բաւականին սպասելուց յետոյ՝ ներս եկաւ· աջ ու ձախ նայեց:

Բոլորս մեր տեղերը նստած՝ Անտօն ճգնաւորի նման, կարծես թէ ո՛չ մի բան չի պատահել· գլուխներս կախ՝ մեր գրքերի վրայ, առաջներս ենք նայում, իբրեւ թէ դաս ենք սերտում: Բայց աչքի տակից էլ նայում ենք՝ դողը սրտերիս:

Մահտեսին ինձ մօտեցաւ, մազը վրաս թափ տուեց, ասաց· «Քեզ պիտի սպանեմ, կաշիդ քերթեմ· քեզ պիտի մորթեմ, կտոր-կտոր անեմ»:

Ձայն-ծպտուն չը հանեցի: Ոչինչ արդար՝ քան այդ զայրոյթը:

Մահտեսին դուրս գնաց· փոշին մի քիչ թեթեւանալուց յետոյ՝ նորից ներս մտաւ, երկու խուրձ դալար ճիպոտ թեւի տակին, բերեց եւ խարխլած ամբիոն-մահճակալի վրայ դրեց:

Ուժեղ տղաներից մէկին՝ Մալիլենց Խաչատուրին, 25 տարեկան, պատուիրեց դռան առաջը կանգնել, հսկել, որ ո՛չ ոք դուրս չը գնայ:

Լալօենց Ստեփանին էլ հրամայեց թեւքերը ծալել՝ ծեծուողների ոտքերը բռնել՝ վեր բարձրացնել:

Բոլորս էլ հրամանին համեմատ, մեր ոտնամանները հանեցինք: Կօշիկ, սօլ, տրեխ՝ գուլպաներով՝ մեր առաջն էինք շարել:

Ծեծը սկսուեց ձախ կողմի վերեւի գլխից. իմ տեղս աջ կողմի գլուխն էր։ Այդ հաշուով՝ իմ հերթս ամենքից վերջը պիտի գար։

Զգում էի, որ ամենից շատ ծեծ ուտողը ես պիտի լինէի. որովհետեւ միակ իրական պատասխանատուն ես էի. չէ՞ որ միւսներից շատերը գժկամակելով, սպառնալիքի տակ էին մասնակցել։

Մահտեսին ձախից սկսեց, որ ինձ է՛լ աւելի ահաբեկէր. գա՛ էլ կար, երեւում էր, իր հաշուի մէջ։

Ձախ ծայրի առաջին նստողը՝ շլդիկ աչքերով մի տղայ էր, Թադէոս անունով՝ 25 տարեկան։ Կայտառ, թիկնեղ, հուժկու մի տղայ էր, որ նոր էր եկել ուսումնարան, հազիւ 2—3 շաբաթ, «գիր» սովորելու։

Առաջին ծեծի բախտը սրան վիճակուեց։

Թադէոսի մերկ ոտքերը բռնեցին՝ վերեւ բարձրացրին։

Մահտեսին ուռի գալար ճիպոտի հարուածը իջեցրեց։

Թադէոսը պոռաց. «Ա՛ստուած»։

Հարուածը երկրորդուեց։

Թադէոսը կանչեց. «Ա՛ստուած, Ա՛ստուած»։

Ճիպոտը սկսեց արագ իջնել, բարձրանալ...

Եւ Թադէոսը՝ իր ահարկու ձայնով՝ անդադար, արագ արագ, լեղապատառ կանչեց. «Ա՛ստուած, Ա՛ստուած, Ա՛ստուած...»։

Այնպէս որ իւրաքանչիւր հարուածին 5—10ը «Ա՛ստուած» էր գալիս։

Որքան որ մահուան դուռը հասած հոգեբանութեան մէջ. այնուամենայնիւ՝ Թադէոսի այդ կերպ աղաղակելուն համար՝ անկարող եղանք մեր ծիծաղը զսպել. բոլորս էլ պոռթկացրինք. չը կարողացանք մեզ պահել, ինչքան էլ որ մեզ հուպ տուեցինք, մաններս կծեցինք։

Ծիծաղեցա՛նք ու ծիծաղեցա՛նք. բարձր հրհռոցով։

Մահտեսին է՛լ աւելի բորբոքուեց։

Տղաները բոլորը կարգով ծեծ կերան՝ կո՛ւշտ կո՛ւշտ։

Այդ բոլոր ժամանակ՝ մեզ այլեւս հետաքրքրողը մեր սեպհական կաշին չէր. այլ ծեծուողի լացի եղանակը, աղաչանքի ձեւը։

Ծիծաղում էր մի քիչ առաջ ծեծուողն էլ՝ իր վա՜յ վա՜յի

մէջ, եւ դեռ ծեծը չը ճաշակողն էլ:

Վա՜յ վա՜յի մէջ յաճախ լսում էր. «Մահտեսի, քեզ մատաղ, ձեռքդ համբուրեմ... Մահտեսի, Խորենացու, Եղիշէի, Սուրբ Մեսրովբի արեւը վկայ՝ նրանց գլխովն եմ երդւում, էլ չեմ անիլ. ների՛ր...»:

Հերթը եկաւ՝ հասաւ Տղմուտ գետի ափին վիրաւորուող Աւետիսին, իմ Համհարզին՝ Խորէն Խորխոռունուն: Սա պարթեւ հասակով, թիկնեղ, հուժկու մի երիտասարդ էր՝ 25—26 տարեկան, երկաթի մի կտոր, ամէնից ուժեղը...

— «Քեզ լրացուցիչ տեղեկութիւն տալու համար ասեմ որ, ընդհատեց ընկեր Մուրատը ծիծաղելով, ես քո այդ Համհարզին տեսել եմ Բաթումի մէջ: Տարածը մի անգամ՝ կա՛մ ինքը ուրիշին պիտի ծեծէր, կա՛մ ծեծուէր: Դեռ չեղաւ մի օր, որ նրան վիրաւոր չը տեսնէի. կա՛մ ձեռքն էր կտրած, կա՛մ ոտքը, կա՛մ գլուխը, երեսի վրայ ճանկռտուքները անպակաս էին: Ամէնքն էլ նրանից վախենում էին իր արտաքոյ կարգի ուժի համար: Բաթումի գործադուլների, քաղաքական շարժումների մէջ նա առաջին տեղն էր բռնում»:

Դա ինձ համար նորութիւն էր. հետաքրքրուեցի նրա մասնաւոր կեանքով՝ եւ ընկեր Մուրատը ինչ որ գիտէր, պատմեց:

Այո՛, շարունակեցի, կարգը հասաւ Աւետիսին:

Սա չուզեց իր արժանապատուութեանը կերցնել, խոստովանել որ ոտքը՝ սրունքը ոլորուել, ճանը դուրս է եկել: Երբ Մահտեսին հրամայեց՝ «Աւետիս, պառկի՛ր». նա առաջ գալով՝ ձեռքերը երկարացրած՝ ափերը բանալով ասաց. «Մահտեսի, Վարդանանց Սուրբ Պատերազմը վկայ լինի, երդւում եմ Եղիշէի անմահ գլխով, որ սուտ չեմ խօսում, այս հրեկոյ Եր-ճանղղրէֆ ունինք. ես էլ պիտի գնամ. խնդրում եմ՝ ոտքերիս տակին չը զարկես. ահա՛ ձեռքերս, ինչքան կուզես՝ զա՛րկ»:

Ջէ՛, Մահտեսին չուզեց բացառութիւն կազմել, Աւետիսին նպաստաւորել. ստափ նորից կրկնեց. «Տղա՛յ, պառկի՛ր»:

Երբ Աւետիսը իր երդում-աղաչանքները կրկնելու վրայ էր՝ հարուածները աջ ու ձախ թափուեցան, Աւետիսի ձեռքին, երեսին, գլխին, մէջքին... Աւետիսը տեսնելով, որ այդ է՛լ աւելի խիստ եղաւ, իր ահագին հասակովը՝ փախաւ Մահտեսու մահճակալ-ամբիոնի տակը մտաւ: Մահտեսին կտանելով՝ հարուածները շարունակեց իջեցնել կողքերին, ոտքերին, երեսին,

քթին, բերանին՝ անխտիր, ուր հասնում, ուր որ կարողանում էր: Ցաւը մի քիչ սաստկացաւ. երեւում էր: Աւետիսը ահագին մահճակալը մէջքի վրայ առած՝ այս ու այն կողմ փախչելով՝ տակից աղաղակում էր. «Մահտեսի, թող գամ՝ պառկեմ, էլ խօսքիցդ չեմ դուրս գալ... վա՜յ, վա՜յ...»:

Ծեծող, չը ծեծող՝ իրենց ցաւերը մոռացած՝ Աւետիսի այդ արտաքոյ կարգի արարքից՝ խնդալով ճայթեցան, հրհռոցին չափ ու սահման չը կար:

Մահտեսին բարկութիւնից է՛լ աւելի կարմրեց:

Ծեծը շարունակուեց:

Հերթը հասաւ Մարգարենց Ստեփանին. ինձնից անմիջապէս ցած նստողին. նրանից յետոյ՝ ապուրը ես պիտի ուտէի, կարգը ինձ պիտի գար:

Մարգարենց Ստեփանն էլ մի ճկուն տղայ էր. ոտքերը բռնեցին՝ բարձրացրին. երբ առաջին հարուածը իջնելու վրայ էր՝ յաջողեց ոտքի մէկը բռնողի ձեռքից հանել, այնպէս որ հարուածը իջաւ ոտքերը բռնողի մատներին: Խեղճ Լալօչենց Ստեփանի աջ ձեռքի բթամատը կոտրուեց. սկսեց պոռալ, վա՜յ-վա՜յել: Փախաւ մտաւ մի անկիւն. սկսեց մատը լիզել, բերանի մէջ պահել եւ կսկծալ...

Ես կօշիկներս, գուլպաներս հանած՝ օրհասիս էի սպասում:

Բայց ո՞վ պիտի բռնէր իմ ոտներս. տղայ չը կար. մնացել էր միայն Մայիլենց Խաչատուրը. նա էլ դասն առաջն էր կանգնել. եթէ թողնէր՝ գար ոտքերս բռնէր, բոլոր տղաները դուրս պիտի փախչէին:

Մահտեսին ընկաւ մտածմունքների մէջ. հնարիմացութիւններ էր խորհում. մի-երկու անգամ վեր վայր գնալ գալուց յետոյ՝ իր երկայն ծխափողը վառեց, քաշեց, ծծեց, եւ նստաւ:

Ընկերներս բոլորն էլ մորմոքում էին՝ որը ձեռքը, թեւքը բռնած, որը ոտքը՝ գլուխը...

Խղճահարութիւնս բռնեց. չէ՞ որ այդ բոլորի պատճառը ես էի. իսկ իմ ոտքերս բռնող չը կայ, որ ծեծը ուտէի: Սա ուղղակի իմ արժանապատուութեանս դիպաւ եւ խղճիս վրայ ծանրացաւ: Ուստի ամենայն համակերպութեամբ, հիմակուան արտայայտութեամբ՝ Տոլստոյեան հպարտութեամբ, բոբիկ ոտքերս պինդ պինդ իրարու կպցրած՝ վերեւ պարզեցի, տացի.

«Մահտեսի, ես կը բռնեմ․ զա՛րկ, մեղաւորը ե՛ս եմ»։

Մահտեսին իմ այդ համակերպութիւնս տեսնելով՝ նայեց, խնդաց, պատասխանեց․ «Ես քեզ պիտի մորթէի, մորթէի՛...»։

Ճիշտ այդ խօսքին՝ մեր եկեղեցու մեծ զանգակի ձայնը հնչեց։ Վայ օրհնե՛ալ լինիս, ժամկոչ Աւօ։

Տիրեց ընդհանուր ուրախութիւն․ ազատուելու բոպէն մօտեցել էր, ուրեմն։

Օրը շաբաթ էր․ հետեւեալ օրը եկեղեցական մեծ տօն կար․ պէտք էր եկեղեցին սրբել, մաքրել, զարդարել՝ վաղուան համար պատրաստ անել։

Կէսօրից մի քիչ անց՝ զանգի ձայնը գիւղի չորս կողմը տարածուեց, դաշտ չը գնացած՝ տուն մնացող պառաւներին, նաններին, նորահարսներին, աղջիկներին հրաւիրելու, որ գան եւ գործի սկսեն՝ վաղուան Պատարագին պատրաստ լինելու համար։

Զանգակի առաջին զօղանջիւնին՝ ժամի մօտ տուն ունեցող պառաւները, աղջիկները խումբերով թափուեցան եկեղեցու բակը․ բարձրացաւ ահագին ժխոր, աղմուկ... Դպրոցն էլ արդէն ժամաբակին էր․ պատուհաններից ամէն բան երեւում էր։

«Քո ծեծդ՝ էլ չկայ, երկուշաբթի...»․ ասաց Մահտեսին եւ հրամայեց, որ պատրաստուինք տուն երթալ՝ հաց ուտելու։

Մօտիկ եղող տղաները իրենց տները պիտի երթային՝ հաց ուտէին եւ վերադառնային․ իսկ հեռու գտնուողները ուսումնարանի մէջ էին ուտում, ամէն մէկը սուփրան իր առջեւը բաց, ինչոր տանից բերել էին։

Մեր տունը մօտիկ՝ ժամաթաղումն էր․ դուրս ելայ, որ գնամ։

Տղմուտ գետի ափին վիրաւորուող Աւետիսն էլ ուզեց գալ․ բայց տեսնելով, որ ոտքը շատ է ցաւում, քաշել չի կարողանում, ասաց․ «Ստեփան, մամիկիս ասա՛, որ մեր էշը ուղարկի՝ հեծնեմ, գամ»։

Դուրս եկայ՝ բանտից փախածի նման։

Եկեղեցու բակում՝ առաջին անգամ հանդիպեցայ իմ Խորէն Խորխոռունու մամին՝ Սանամին։ Սա ուղղակի մի աժդահայ կին էր․ հասակը բարձր, լիքը, ուժեղ, վիթխարի՝ կաղնու մի բուն։ Գիւղի մէջ շատ տղամարդիկ նրանից ծեծ էին կերել։ Այնքան ազդեցութիւն էր ձեռք բերել, որ գիւղացիները, մի օր,

համախօսական Թուղթ էին կազմել, բոլորը մէկանց ստորագրել, գաւառապետին էին ներկայացրել, խնդրելով որ Սանամին գիւղապետ, տանուտէր կարգէր:

Երբ Սանամ նանը ինձ տեսաւ. հարցրեց.

— «Բա մեր Աւետի՞սը. ո՞ւր մնաց. ինչո՞ւ չեկաւ»:

— Ձեր Աւետիսը, Սանամ մամի, ասացի խնդալով՝ մխիթարաբար, ձեր Աւետիսը ընկաւ Աւարայրի Դաշտի մէջ՝ Տղմուտ գետի ափին. Պարսիկները զարկեցին՝ ոտքը վիրաւորեցին, չը կարողացաւ գալ. ինձ ասաց՝ որ ձեզ ասեմ՝ ձեր էշը ուղարկէք, որ հեծնի գայ»:

Սանամ տատին կարճամիտ, շատ միամիտ, ջղային, մըղուող բարեխառնութիւն ունեցող մի կին էր. խօսքս հասկացած չը հասկացած՝ սկսեց կատաղի կերպով պոռալ, կանչուըռտել եւ սոսկալի հայհոյանքներ թափել Պարսիկների գըլխին. ձայնը բարձրացրեց՝ կնիկները, աղջիկները հաւաքուեցան գլխին... Այդ ժամանակ՝ որտեղից որտեղ, սատանայի պէս, մոլլա Ալին, եկեղեցու բակի մօտով, իր սովորական ճանապարհով անցնում էր, մզկիթ երթալու: Սանամը նրան տեսնելով, մռնչաց ու մի ահագին քար առնելը, մոլլայի գլխին զարկելը, գետին պառկեցնելը մէկ եղաւ... Մոլլան աղաղակեց, ճչաց, օգնութիւն կանչեց: Հարեւան Թուրք կիները հաւաքուեցան՝ մոլլային շրջապատեցին եւ սկսեցին քարեր տեղալ դէպի եկեղեցու բակը՝ հայ կնիկներին ու աղջիկներին: Սրանք էլ պատասխանեցին աւելի մեծ թափով՝ Սանամ «Հաքիրի» առաջնորդութեամբ:

Աշակերտները տեսնելով պատուհաններից, որ Թուրքերը հայ կիներին քար են նետում, կռիւ կայ, դուրս թափուեցան, եւ քարի կռիւը իր սաստկութեան մէջը մտաւ:

Ես էլ ինձ, այս անգամ, իսկական Աւարայրի մէջ կարծեցի...

Մի քանի վայրկեանից յետոյ՝ կռիւը կայծակի արագութեամբ ընդարձակուեց, տարածուեց բոլոր փողոցներում... յետոյ ծաւալ առաւ ամբողջ գիւղում, նոյն իսկ դաշտերում...

Գլուխ էր, որ ջարդւում էր. մէկ մէկու խնայել չը կար: Կին, աղջիկ, տղայ, տղամարդ, ծերունի՝ երկու ցեղից էլ, զարկւում էին իրարու հանդիպելիս...

Բայց ինչո՞ւ:

Ոչ մէկը որոշ բան գիտէր։

Հայերն ասում էին, որ Թուրքերը յարձակուել են իրենց եկեղեցու վրայ։

Թուրքերն ասում էին, որ հայերն իրենց մզկիթն են կոխել եւ մոլլայի գլուխը կտրել, քաշել՝ տարել իրենց եկեղեցու առաջ՝ ստիպել, պահանջել, որ իր հաւատը ուրանայ...

Առասպելը կազմուեցաւ. արեւելեան երեւակայութիւնը բորբոքուեց. կռիւը երթալով սաստկացաւ...

Կարապետը յարձակւում, զարկում էր Վալիին. որովհետեւ Վալին Թուրք էր։

Մէհմէտը հարուածում էր Մարտիրոսին. որովհետեւ սա հայ էր։

Տանուտէրը ձիաւոր վազցրեց քաղաք՝ Նախիջեւան, գաւառապետին իմաց տալու, որ հայերը եւ Թուրքերը իրարու են կոտորում։

Շատ չանցած՝ կօզակները գիւղ թափուեցան. կռուի շարունակութեան առաջն առան. եկաւ և՛ւ գաւառապետը. մի քիչ յետոյ էլ Հայոց Յաջորդը։

Սկսուեցաւ հարցաքննութիւնը։

Հարիւրաւորների գլուխը, թեւքն է կոտրուել. վիրաւորները լիքն են՝ երկու կողմից էլ։

Բարի գաւառապետը քննե՛ց, քննե՛ց, հարց ու փորձեց, բայց որոշեալ մի եզրակացութեան չը կարողացաւ հասնել. բան չը գտաւ. պատճառը, իսկական շարժառիթը մէջտեղ չէր գալիս։

Բանն այն է, որ իր գալուց առաջ՝ տանուտէրի տեղեկագրին համաձայն, Երեւանի նահանգապետին հեռագրած է եղել, թէ գիւղի հայերն ու Թուրքերը, ցեղային հողի վրայ, իրարու հետ ընդհարւում են։

Եւ հիմայ՝ աշխատում է հանգոյցը, ծայրը, դրդապատճառը գտնել. բայց չի յաջողւում։

— Քեզ ո՞վ զարկեց, Ա՛լի։

— Աղա՛, Կարապետը։

— Կարապետ, ինչո՞ւ զարկեցիր։

— Աղա՛, տեսայ, որ Վալին յարձակուել՝ մեր Մարտիրոսին ծեծում է։

— Վա՛լի, դո՞ւ ինչու ծեծեցիր։

— Աղա՛, տեսայ, որ հասնող հայը Թուրքին է զարկում․ ես էլ ձեռքս ընկածին զարկեցի․․․

Գաւառապետը չուարել է․ մէջտեղը բան չը կայ․ բայց ահագին թուով վիրաւորներ։

Հայը առաջ է քաշում Թուրքերի յարձակումը եկեղեցու վրայ․ Թուրքերը՝ հայերի խուժելը մզկիթի վրայ․․․ Գործը գալիս այստեղ է հասնում։

Բայց դարձեալ բուն պատճառը ծածկուած է մնում։

Վերջը։ Մահտեսին վախվխելով մտնում է Յաջորդի մօտ եւ եղելութիւնը հասկացնում։

Յաջորդը ծիծաղից թուլանում է, երբ իմանում է, որ այդ բոլորի պատճառը «Աւարայր»ի մեր կռիւն է եղել․․․

Յաջորդը ինձ կանչեց․ մի բարի ծերունի․ պատմեցի։

Սանամ մամին էլ կանչեց։ Նա էլ պատմել էր։

Սանամը էնպէս էր հասկացել ասածս, որ մեր գիւղի արեւմտեան կողմը գտնուող գետն ենք գնացել՝ ջուր բերելու ուսումնարանի համար, եւ Պարսիկները յարձակուել, զարկել են ու իր թոռան ոտը կոտրել․․․

Յաջորդը, իսկութեանը տեղեկանալուց յետոյ, կանչում է գաւառապետին, խորհրդակցում, ասում, որ գործը մի կերպ փակենք, սուս ու փուս դառնանք, ձայն չը հանենք․ որովհետեւ լսողը, իմացողը մեր վրայ պիտի խնդայ։

Ինչո՞ւ։

Եւ Յաջորդը պատմում է իր գիտցածը։

Գաւառապետը ինձ կանչեց․ մի անկեղծ, հայրագորով՝ թրքատեաց հայ։

Հասակս գիտեց․ վերից վայր նայեց․ խնդաց։

Բացագանչում էր․ «Հայր սուրբ, էս չը լինելիք բան է․ աշխարհը իրար անցնողը այս տղեկը, այս խօխան է եղել․․․ Ես ի՞նչ բացատրութիւն տամ նահանգապետին․․․»։

Ու, նորից, սկսեց ծիծաղել, ձեռքերը, գլուխը չփել։

Մի քիչ անցնելուց յետոյ, իմ համարձակախօսութեանս վրայ զարմացած՝ ուզեց որ Աւարայրի պատմութիւնը անեմ՝ առանց սխալուելու։

Մահտեսին, խեղճը, կուչ եկած՝ սպասում էր․․․

Հայրս, մայրս դուրսը դողի մէջ էին։

Աւարայրի պատմութիւնը արեցի, գրեթէ բառացի՝ Եղիշէ-

ին հետեւելով:

Յաջորդն էլ, գաւառապետն էլ, Մահտեսին էլ չուզուեցան, երերացին, ձեռները դէպի երեսները, աչքները տարան, ալեկոծուեցան, փղձկացին՝ լացան:

Արթնցաւ Ազգային, Ցեղային ոգին:

Ես ազատուած էի:

Ամենից վերջը՝ Յաջորդը խոստացաւ ինձ ոսկեզօծ Խորենացի եւ Եղիշէ ուղարկել. (ուղարկեց էլ): Յորդորեց, որ երբ մեծանամ՝ անպատճառ վարդապետ դառնամ:

Բարի գաւառապետը գլուխս շոյեց, փայփայեց, ծիծաղելով ասաց. որ շուտ մեծանամ եւ զինուոր դառնամ:

Այսպէս է եղել, այսպէս վերջացել, Մուրատս, իմ «Աւարայրի պատերազմը» եւ «Հայ-Թաթարական կռիւը»:

— «Բա ծեծդ ո՞ւր մնաց», խնդալով հարցրեց ընկեր Մուրատը:

— Չէ ասացի, որ հետեւեալ օրը Կիւրակի էր: Ճաշի Գիրքը եւ Մարգարէն այնքա՜ն լաւ կարդացի՝ աշխարհաբառ, միայն բնագրին նայելով. պատարագին այնքա՜ն լաւ, չուզուած երգեցի, որ Յաջորդը միջնորդեց, ուզեց որ այդ «մեղքս» էլ ներուէր: Եւ Մահտեսին ներեց:

Այդ ծեծից էլ ազատուեցայ. ո՛չ մորթուեցայ. ո՛չ էլ կաշիս քերթուեց:

— Թէ գաւառապետի եւ թէ Յաջորդի ցանկութիւնը կատարուել է, չարեց Մուրատը, խնդալով, բեխերը ոլորելով: Որպէս պրօպագանդիստ՝ վարդապետ ես. որպէս յեղափոխական՝ զինուոր ես... Երթա՜նք: Այս բոլորը պիտի պատմեմ Ասօին»:

Շոգենաւը բաւականին ճանապարհ էր կտրել. դուրս եկանք կամրջակ՝ պտոյտ անելու:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԺԲԱԽՏ ԷՋԵՐԸ.— Կամրջակի վրայից՝ վերջին անգամ ակնարկ ենք գցում Վոսփորի երկայնութեան վրայ:

Դեռ երեւում են՝ նկարչագեղ վայրերը, կանաչազարդ բլրակները՝ մէկը միւսի յետեւից շարան-շարան ընկած, լոյսի ճառագայթներով ցօղուած՝ ամէն ինչ մի սքանչելի ներդաշնակութիւն կազմած՝ մի հաճոյալից, ակնապարար տեսարան է ներկայացնում:

Բայց այդ բոլորը որի՞ համար:

Ո՞վ է այդ հրաշագեղ տարածութիւնների տէրը.— Թուրքը:

Դժբախտ անուն պիտի թողնեն պատմութեան մէջ՝ բոլոր այն պատճառները, որոնք ազդակ եղան Թուրքի այդտեղ մտնելուն, մնալուն և ապրելուն: Դա ուղղակի հայհոյանք է մարդկութեան, անէ՛ծք քաղաքակրթութեան. դա ամպարշտութիւն է բնութեան դէմ:

Պատմութեան մէջ էլ՝ անմահ, անմոռաց կը մնան, երախտապարտօրէն կը յիշուի անունը բոլոր նրանց, որոնք պատճառ կը դառնան, ուժ կը բերեն՝ Թուրքերի տիրապետութիւնը այդ չքնաղագեղ վայրերից ջնջելու, վերացնելու, արմատախիլ անելու, նրա հետքն անգամ չը թողնելու:

Երանի՛, հազա՛ր երանի այն օրը, երբ Թրքական արիւնոտ դրօշը, նրա պղծալից Թուղրան թէ՛ այդ եւ թէ Ասիայի միւս տարածութիւններից կը վերանան եւ այդ տեղերն էլ քաղաքակրթութեան ճանապարհի մէջ կը մտնեն եւ ազատ աշխատանքը իր գործը կը խառնի, կը միացնի բնականի հետ ու այդ հրաշագան տարածութիւններն էլ մարդկային իսկական պէտքերին կը ծառայեն, եւ ո՛չ թէ հարեմական ախտալից կեանքի:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՁԱՐՏԱՃԱՀՈՒԹԻՒՆ.— Մեր շոգենաւը ծայրէ ի ծայր լիքն է. ասեղ ձգելու տեղ չը կայ. մարդիկ ձուկերի պէս իրարու վրայ են լցուած. դա մի կատարեալ գայթակղութիւն կը լինէր, եթէ մի ուրիշ երկրում կատարուէր: Բայց քանի որ «երանելի» Թիւրքիայումն ենք, այստեղ ամէն ինչ կանցնի, կարելի կը լինի. որովհետեւ առաջին զանցառուն, ամենամեծ յանցաւորը ինքը՝ երկրի տէրն է:

Շատ լաւ յիշում եմ. «Պալիա Մադան»ի գործաւորներից՝ հայ, քուրդ, թուրք, յոյն, 50 հոգու չափ, մի օր, «Ենի-Խան»ի մեր գրասենեակը լցուեցան՝ օգնութիւն խնդրելու այդ հանքը չահագործող ընկերութեան արարքների դէմ, իրենց հասցրած զրկանքների եւ չարիքների պատճառով:

Երբ ընկերութեան տնօրէնին դիմեցի, խնդիրը բացատրելուց յետոյ՝ ասացի. «Այսպիսի արարմունք ուրիշ մի երկրում, օրինակ Ֆրանսիայում, անկարելի է գործել, առանց օրինական պատժի ենթարկուելու»: Տնօրէնը ամենայն պաղարիւնութեամբ պատասխանեց. «Պարոն, դուք մոռանում էք, որ մենք

Թիւրքիայումն ենք»։

Եւ Թիւրքիայում ամէն բան կարելի է անել. որովհետեւ Թիւրքիա է. որովհետեւ երկրի տէրը ո՛չ միայն անուանական է. այլ է՛ն առաջին ոճրագործը թէ՛ քաղաքակրթութեան, թէ մարդկութեան օրէնքների դէմ, եւ թէ սեպհական ժողովրդների ու ազգերի։

ԲՈՂՈՔՈՂ ԱԶԳԻ ՋԱԽԱԿՆԵՐԸ. — Մենք ունէինք երկրորդ կարգի տոմսակ, առանց սնունդի։ Ներս էինք մտնում ճաշարահը՝ մեր նաւախուցը երթալու, երբ մի սոսկալի աղմուկ բարձրացաւ։

Երեւեցաւ, որ պատճառը հայ ճանապարհորդներն էին։

Նաւորդները ո՛չ միայն նաւախուցերն են լցուել՝ լիք-լեցուն, այլեւ նրբանցքներում, ճաշարահում. շունչ առնելու տեղ չը կայ. թէեւ երկրորդ կարգի տոմսակ ունեն։

Սպասաւորները օգտուելով այդ հանգամանքից՝ պահեստի նաւախուցեր են պահել. ո՛վ որ «յաւելեալ դրամ», այսինքն կաշառք է տալիս, նրան լաւ տեղաւորում են. չը տուողին ըստիպում են ճաշարանի, նրբանցքների մէջ նստած մնալ։

Շատ Թուրքեր, յոյներ համակերպել էին. կային էլ ոմանք, որ կաշառք տալով՝ բաւականութիւն էին ստացել։

Հայերը չէ՛. ո՛չ կաշառք են տալիս, ո՛չ էլ ուզում են ճաշարահում ոտքի տակ մնալ. պահանջում են նաւախուցերի մէջ առանձին անկողին ունենալ, ինչպէս որ տոմսակների վըրայ գրուել է։

Սպասաւորն էլ ուսերը թափ տալով՝ ասում է, որ տեղ չը կայ. եթէ չեն ուզում. թող դրամները յետ առնեն եւ նաւից դուրս գան։

— Գո՞ւրս գամ. ո՞ւր. Սեւ Ծովի ջրերի մէ՞ջ. հարցնում է մի երիտասարդ հայ։

— Եթէ չես կարող դուրս գալ, ուրեմն բաւականացի՛ր ունեցածովդ, ասում է ծառան, եւ նշանակալից կերպով բթամատըն ու ցուցամատը իրար է զարկում։

— Եթէ տեղ չը կար, ասում են հայերը, ինչո՞ւ տոմսակ տուին. թող առաջուց ասէին եւ տոմսակ չը կտրէին։

— Ե՞ս ինչ անեմ. ես մեղաւո՞ր եմ դրա համար. յանցանքը

նաւային գործակալութեանն է, պատասխանում է ծառան. միշտ չը մոռանալով՝ գաղտագողի բթամատն ու ցուցամատը իրար զարկելու եւ կռուող-խօսող Հայերին ցոյց տալու:

Նաւային ծառաները, իրաւ է, ճարպիկ էին, եւ աչքալիռով բաւականաչափ դրամ էին ձեռք բերում ճանապարհորդներից. բայց, այս անգամ, հաշւէի մէջ սխալուել էին. նրանք չը գիտէին թէ որո՛նց հետ գործ ունէին:

Հայի գլուխը երբ մի անգամ տաքացաւ, աչքը կարմըրեց՝ էլ առաջ կերթայ, հայկական յամառութեամբ, ինչ էլ որ պատահելու լինի: Նա դիւրութեամբ տեղի տուողը չէ:

Հայերը ո՛չ կաշառք են տալիս, ո՛չ էլ զիջում անել ուզում. միայն պահանջում են:

Մի ճարպիկ Մարզուանցի՝ մատը ծառաների վրայ թափ տալով՝ ասաց. «Կաշա՞ռք էք ուզում՝ հա՛. ես ձեզ հիմայ ցոյց կը տամ». ասաց ու վեր բարձրացաւ նաւապետին երթալու՝ բողոքելու համար:

Դեռ ոտքը սանդուղի առաջին աստիճանին էր դրել՝ ծառաները շփոթութեան մէջ ընկան: Սեղանապետը վազեց՝ առաջը կտրեց, խնդրեց որ մի քիչ էլ համբերի եւ իրենց համար անպատճառ տեղ կը գտնի:

Այդպէս էլ եղաւ:

Որ մեր անունը բողոքող, կռուող, դժգոհ, չը համակերպող ազգ է դուրս եկել. դա իրաւ է: Ուրիշ ազգերից ո՛չ մէկը բերան բացեց. մերոնք թէ՛ պոռացին, թէ՛ հայհոյեցին եւ թէ՛, իրենց խեցբեկ ֆրանսերէնով, իրաւունքները պաշտպանեցին ու ճանաչել տուին:

«ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՇԱՄՊԱՆԻԱՅՈՎ ՃԱՇԸ» — Երեկոյ է. զանգակը զարկել են. երկրորդ կարգի՝ սնունդով միասին՝ տոմսակ ունեցողները ճաշարան են լցուել:

Մենք էլ ուղղուեցանք մեր նաւախուցը՝ մեր «խորտիկը» ուտելու:

Ճաշասեղանի գլուխը նստող Կարապետ աղան, Թոքատցի, մեզ հրաւիրեց՝ միասին ճաշելու:

Շնորհակալութիւն յայտնեցինք՝ մեր խուցը քաշուեցանք:

Բացեցինք կապոցը. մեր «խորտիկ»ը բաղկացած էր ձիթապտղից եւ պանիրից...

Ընկեր Ռուբէնը, քարափի վրայ ասել էր· «Ձեզ համար լաւ խորտիկներ եմ պատրաստել՝ թղթի մէջ փաթաթել· ախորժակներդ լաւ պիտի գրգռուի՝ մինչեւ որ Սամսոն հասնէք...»:

Ընկեր Մուրատը հիմա հասկացաւ Ռուբէնի կատակը· սկսեց խնդալ· պանրի մի քանի կտոր մի կողմ դրաւ, որ Սամսոնից «պարգեւ» ուղարկէր Ռուբէնին...

Երջանիկ օրե՜ր: Կո՜ւշտ ծիծաղեցինք:

Այդ ժամանակ՝ մեր կիսաբաց դռնից՝ լսեցինք ճաշարանի մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը՝ մեր հաշուին:

Մարգուանցի Մկրտիչ աղան, խօսքը դարձնելով Կարապետ աղային՝ ասում էր· «Ախպա՛ր, նրանք յեղափոխականներ են· պատիւ չեն համարիլ մեր կերած կերակուրներից ուտելու, մեզ հետ սեղանակցելու· նրանք դիտմամբ առանձնացան, որ իրենց շամպանիան առա՜տ առա՜տ խմեն, ու մենք չը տեսնենք· եթէ այդպէս չանեն՝ ազգի դրամները էլ ի՞նչպէս կուտեն...»:

— «Վա՜յ, անաստուած, վա՜յ», ասաց ընկեր Մուրատը, «արի՛ եւ մի ճաթիր...»:

— Ո՛չինչ, Մուրատ, ո՛չինչ· դա լաւ է· թող այդ գաղափարը ունենան· թող կարծեն թէ յեղափոխականները շամպանիայով են մեծանում· դա էլ, գուցէ, հրապուրիչ մի բան լինի մեր աղաներին, որ գան՝ յեղափոխական դառնան, ենթադրելով՝ որ առա՜տ առա՜տ շամպանիայ պիտի խմեն...»:

Հայ յեղափոխական գործիչի գլխից այդպիսի անարդար մեղադրանքներ ե՞րբ են անպակաս եղել...:

Դուրսը՝ մի փոքր օդ առնելուց յետոյ, դարձանք մեր նաւախուցը եւ անկողին մտանք:

ՏՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԸ.— Հինգշաբթի, Մայիս 11: Առաւօտեան շատ վաղ արթնացանք՝ վեր կացանք: Թէեւ իր փոթորիկներով համբաւաւոր Սեւ Ծովի վրայ ենք· բայց կատարեալ անդորրութիւն է տիրում· ծովը հազիւ թէ շարժւում է· շոգենաւը առանց ամենափոքր ցնցումի՝ գնում է սուրալով:

Աջ կողմը երեւում են ծովահայեաց գիւղեր, անտառախիտ լեռներ, գեղեցիկ դաշտագետիններ· արածող ոչխարների հօտեր, թռչունների տարմեր... Իսկ ձախ կողմը Ծովն է, իր ընդարձակութեանը մէջ:

Բարձրացանք կամրջակի վրայ՝ հայրենակիցներ գտնելու, խօսելու, ժղլելու, ժամանակ անցկացնելու։

Երրորդ կարգում՝ մարդիկ ոչխարի պէս իրարու վրայ են թափուել։ Ճեղքում՝ անցնում ենք այդ մրջիւնանման բազմութիւնը, աչքներս այս ու այն կողմ դարձնելով։ Վերջապէս տեսանք բաւականաչափ ծանօթ դէմքեր՝ Խարբերդցիներ, Բղեշցիներ, Մշեցիներ, Տիգրանակերտցիներ, Դերջանցիներ, որոնք տուն, հայրենիք, ծննդավայր, իրենց օջախն էին վերադառնում։

Կազմում ենք հայկական մեծ շրջան եւ խօսակցութեան մտնում։

Դրանցից շատերը, ժամանակին, «չէզոք» էին եղել․ ոմանք էլ պատմում էին, ծիծաղով, այն հալածանքները որ իմ եւ ուրիշ յեղափոխական գործիչների դէմ յարուցել էին՝ Ամերիկայում։ Հիմայ այլեւս զգաստացել էին․ զգում էին իրենց գործած սխալները․ տեսնում էին, որ յեղափոխականները իրենց առաջուան կարծածին պէս վնասակար, ազգակործան մարդիկ չէին․ այլ շատ օգտակար եւ իրենց քարոզածներն էլ՝ նպատակայարմար։

Առաջ՝ Քիւրդին, Թուրքին սիրաշահելու, համակերպելու քաղաքականութեան նախապատուութիւն տուողներ էին․ բայց այժմս ո՛չ․ փոխուել էին․ խոստովանում էին զէնքի, ինքնապաշտպանութեան, կռուի, յեղափոխական շարժումների պատմական անհրաժեշտութիւնը։

Ասացին, որ սխալուել են եւ զղջում իրենց անցեալ արարքների վրայ․ որոնք անգիտակցութեան արդիւնք էին միայն։

Դա փրկարար, խրախուսիչ, յուսադրիչ մի երեւոյթ էր։

Տուն դարձողները, հիմայ, իրենց հետ առել՝ տանում էին մաուզէրի ատրճանակ-հրացաններ, բաւականաչափ փամփուշտներով։ Բայց անհանգիստ էին․ չէին իմանում ինչպէս ցամաք հանէին եւ Սամսոնի մաքսատնից ազատէին։

Այդ բանը յանձն առաւ ընկեր Մուրատը, ասաց, որ նաւահանգստին մօտենալիս՝ ատրճանակներն ու փամփուշտները թող իրեն յանձնեն․ մեր ընկերները մեզ դիմաւորելու պիտի գան, ինքը նրանց միջոցով ամէն բան կը կարգադրի եւ իրենք կարող են գալ՝ իրենց զէնքերը անվտանգ ստանալ, Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Ակումբից։

Դա չափ մեծ ուրախութիւն պատճառեց եւ նրանց հանդըստացրեց։

Պանդուխտներից շատերը, մասնաւորապէս Խարբերդցիները զղջում էին Ամերիկա գնալուն համար, ուր կորցրել էին իրենց առողջութիւնը. հազը շատերի անբաժան ընկերն էր դարձել։ Ասում էին, որ իրենք՝ երկրի մէջ, իրենց տներում՝ է՛լ աւելի լաւ, երջանիկ կարող էին ապրել. եթէ նոյն չարքաշութիւնը, նոյն տանջանքը, նոյն տաժանելի աշխատանքները յանձն առնէին այնտեղ էլ անել, ինչոր կատարում էին Ամերիկայի գործարաններում։

Բզեցիները իրենց պանդխտութեան մասնաւոր պատճառը համարում էին սակաւահողութիւնը. եւ դրա համար էլ հարկադրուած էին դուրսը՝ օտարութեան մէջ գործ, աշխատանք որոնել։ Բացի դրանից, որ իրենք է՛լ աւելի ենթակայ էին քըրդական հարստահարութիւնների եւ կեանքի նիւթական անապահովութեան։

Բզիի Զանագչի գիւղից, 16—17 տարեկան մի պանդուխտ, որ Ամերիկայից էր գալիս, ոգեւորուած խօսեց, ասաց, որ իրենց գիւղի դպրոցը այլեւս ապահովուած է, որովհետեւ իրենց «Կրթասիրաց»ը ամուր հողի վրայ են դրել։ Եւ երբ իր կեանքի գարունի առաջին օրերին գտնուողն էլ հասարակական գործունէութեամբ է խանդավառւում, էլ գործիչի հոգին ի՞նչ թըռիչքներ չի կարող ունենալ։

Ու դրանք բոլորը կեանքի պայմաններից դուրս բերուած իրենց դիտողութիւններն էին։

Հետաքրքիր էր մշեցիների խումբը։ Սրանք աշխատաւորներ, մշակներ, բեռնակիրներ, տներում ծառայողներ, պահապաններ էին, ըստ մեծի մասին Իզմիրից վերադարձողներ։

Մեր միամիտ, առողջակազմ, հաստաբազուկ, հայի կարգն ու օրէնքը ամէն տեղ պահող-պահպանող Հայաստանցիներն են դրանք։

Նրանք արմանք-զարմանքով պատմում էին, տեղեկութիւններ էին տալիս Իզմիրցի հայերի օտարամոլութեան, խարթացման պարագաների մասին. պատմում էին նրանց ընտանեկան շրջանների մէջ տեղի ունեցած, եւ մինչ այդ իրենց բոլորովին անծանօթ եղող, ամօթալից գայթակղութիւնների մասին. ասում էին թէ ինչպէս նրանցից շատերը օտարացել, այլասեր-

տուել էին. աւելացնում էին ուրախութեամբ եւ ա՛յն, որ շատ շատերը, որոնք առաջ ամաչում էին իրենց հայ համարել, հիմա սկսել են հայի մօտենալ, տեսնելով որ իրենց ազգն էլ «պէտքական բան» է եղել:

Պատմում էին նա՛եւ՝ թէ ինչպէս հայ վաճառականները իրենց ամսական 8—12 արծաթ էին տալիս՝ աւելի ծանր աշխատանքների գործածելով. մինչդեռ նոյն աշխատանքի համար՝ ուրիշ ազգերից առնուած մշակներին, ծառաներին կրկնապատիկ աւելի էին տալիս, ու այդպիսով իրենց համար «հայութիւն» չէին անում:

Ցաւելով ասում էին՝ թէ ինչպէս իրենցից շատերի ռոճիկները կտրում էին, հակառակ դրուած խոստումներին եւ առաջին պատեհութեամբ էլ գործից դուրս ձգում, ուրիշ մարդ առնում, թէեւ իրենք հայ էին, իսկ միւսները՝ օտար:

Ոմանք էլ կսկծալից բառերով մանրամասնեցին, թէ ինչպէս իրենց գործից դուրս էին գցել. որովհետեւ կասկածել էին աղաները՝ թէ իրենք յեղափոխականներ էին:

Մեր բարի հայասէրները դեռ չը գիտէին թէ ի՛նչ ասել է դասակարգային կռիւ, եւ թէ նա ի՛նչպէս խորութիւն դնել չը գիտէ ազգակիցների եւ օտարների միջեւ. չէին իմացել, որ ուրիշի աշխատանքը ծախու առնողի համար՝ միայն զուտ շահ, յաւելեալ արժէք է պէտք, որ տեղից որ կը գայ՝ թող գայ:

Բոլոր ճանապարհորդները մի բանի մէջ համաձայն էին. այն՝ որ Տաճկաստանի վիճակը անապահով էր. քանի որ նախարարական տագնապները իրարու էին յաջորդում, ներքին ցնցումները անպակաս էին եւ կոտորածի երկիւղը սաւառնում էր բոլորի գլխին: Ու դրա համար էլ անհանգիստ սրտով հարցնում էին՝ արդեօք կոտորած չի՞ լինիլ, սխալ չէ՞ր եղած իրենց վերադառնալը:

Իրենց ասացինք, որ Տաճկական «Սահմանադրութիւն»ը ո՛չ միայն խախուտ էր, այլ մի կատարեալ խեղկատակութիւն: Հասկացրինք, որ կոտորածի պատճառը, առիթը մնայուն է, շարունակական, որ նա կայ, իրականութիւն է, եւ օր մը չէ օրանց պիտի պայթէր, որ դա Թիւրքիայի սովորական կեանքն էր, քանի որ նա գոյութիւն ունէր: Իսկ իրենք ո՛չ միայն չէին սխալուել երկիր, տուն վերադառնալով, ընդհակառակը՝ որ

իրենք շատ գովելի գործ էին կատարել, միայն թէ յեղափոխականներ դառնային՝ կազմակերպութեանց մէջ մտնէին եւ ինքնապաշտպանութեան, կռուի պատրաստուէին, որպէսզի, ի հարկին, զէնքի պարտականութիւն կատարէին:

Այրուած սրտով խօսում, հաստատում էին մեր Հայաստանցիները, թէ ինչպէս իրենց մէջ քաջ եւ կռուող երիտասարդներ շատ կան եւ կարող էին ֆիզիքական հողի վրայ դիմանալ, իրենց իրաւունքները պաշտպանել յարձակողների դէմ. բայց զէնքն էր, որ իրենց պակասում էր: Քուրդը, Թուրքը զինուած է. իսկ իրենք զուրկ: «Եթէ բոլորս էլ զէնք ունենայինք, մենք իսկ իրենք զուրկ: «Եթէ բոլորս էլ զէնք ունենայինք, մենք

Բերկրալից էր տեսնել, որ մեր հայրենակիցները, ընդհանրապէս, այնքան առաջուան հլու, հնազանդ, համակերպութեան ոգի կրողները չէին: Ամերիկայի ազատ կեանքը եւ օտար երկիրները նրանց փոխել, շատ բան էին սովորացրել:

Նրանց դիտողութիւնները, շատ անգամ, սուր էին. դատողութիւնները՝ ուղիղ:

Կալիֆօրնիայից, Պ. Ոստիկեանը, համակրելի մի երիտասարդ, որ Ամերիկա ծնած իր զաւակներին հետն առած՝ երկիր, Խարբերդ էր գնում՝ իր «հայրենի օդ»ը մէկ էլ շնչելու, իր պապենական «օջախ»ը մէկ էլ տեսնելու, այն կարծիքն յայտնեց, որ քաղաքակիրթ երկրների մէջ մեծացող, ապրող մի մարդու համար՝ եթէ ոչ անկարելի, գէթ շատ դժուար էր Թիւրքիայի մէջ ապրել եւ գործ կատարել. որովհետեւ, այդ երկրում, առուտուրի, վաճառականութեան մէջ տիրապետող ազդակը, ուղղութիւնը, ոգին, հիմը խաբեբայութիւնը, ստախօսութիւնն էր:

Նրա այդ դիտողութեան՝ մեր միւս հայրենակիցները ուժ տալով՝ շատ ծիծաղելի օրինակներ էին պատմում իրենց տեսած, լսածներից:

Եւ յետոյ, իրենց ասելով, դրսից եկածների համար՝ հիմայ է՛լ աւելի մեծ չափով աչքի էին ընկնում Թուրքի բացասական կողմերը, քան առաջ:

Ամերիկայի կապիտալիստական ազատութիւն ընձեռող միջավայրից խուարակուռ, անպատրաստ, կիսախարխուլ Թիւրքիայի մէջ ընկնելով՝ շատ շուտով նրանց աչքին էին ընկնում Թուրքի յետադիմական հողին, նրա դանդաղ, յամրընթաց շարժ-

ու ձեւերը, ասիական բրտութիւնը, նրա ազգային նկարագրի յատկանիշը կազմող՝ կեղծաւորութիւնը, շողոքորթութիւնը, նենգութիւնը, խաբեբայութիւնը, նրա վատշուէր կեանքի գարշելի կողմերը:

Դրանց դիմաց՝ նրանք պայծառ գաղափարներ ունէին է՛լ աւելի բարձր կեանքի, մարդկային է՛լ աւելի վսեմ նկարագրի եւ գործերի մասին:

Մեր հայրենակիցների այդ դիտողութիւնները սրտապնդիչ էին եւ որոշ նշաններ մեր ազգային յառաջադիմական ոգուն, նրա կենսունակութեանը:

Էլ ի՞նչ աւելի ուրախալի երեւոյթ, քան այն, որ երէկուայ պարզ հայաստանցին, մշակը, բեռնակիրը, արհեստաւորը, «կեանքի փոքրիկ»ը, ուսման, դպրոցի երես չը տեսնողը իրեն շատ աւելի բարձր է համարում իր միջավայրից:

Ազգերի կեանքի մէջ՝ հոգեբանական այդպիսի տարրեր շատ մեծ նշանակութիւն ունին:

Խօսք անցաւ, այնուհետեւ, Թիւրքիայի մէջ եղող տարրերի՝ ազգութիւնների համերաշխութեան, համագործակցութեան մասին: Ո՛չ ոք դրան հակառակ էր սկզբունքով. բայց եւ ո՛չ մէկը դրա կարելիութեանը, իրականացմանը հաւատում էր: Ահա բոլորի եզրակացութիւնը այդ մասին էլ:

«Համերաշխութի՛ւն, համագործակցութի՛ւն. շա՛տ լաւ, մենք կընդունենք. բայց միւսներն էլ անկեղծօրէն կուզե՞ն, կը ցանկանա՞ն. բնաւ երբէք: Քիւրդ գիւղացու, հասարակ աշխատաւորի հետ կարելի *է համերաշխել. նա՛ էլ հողագուրկ է. նա էլ մեզ պէս կեղեքւում, հարստահարւում է՝ նոյն բէգից, նոյն աղայից, թէեւ իր ազգակիցը կամ կրօնակիցը: Բայց նա գիտակցութիւն չունի, տգէտ է, կաշկանդուած է կրօնական, պապենական, ցեղային նախապաշարումներով, սնոտիապաշտական սովորութիւններով. Նրա բարոյական հասկացողութիւնը բոլորովին տարբեր է մերինից. նա իր տիրոջի, իր կրօնապետի, իր ցեղակցի դէմ ծառանալ, բողոքելը* մեղք *է համարում. ինքն էլ կէս թափառական, նիւթապէս, տնտեսապէս բոլորովին ենթակայ. փոփոխամիտ, ազնիւ նկարագրից, հաստատուն կամքից զուրկ: Երբ դասակարգային գործ է մէջտեղ գալիս, եւ քիւրդ, հայ հարստահարուողներ կողք կողքի պիտի կանգնեն. երէկուայ քրթմնջացող եւ քեզ*

համամիտ երեւացող քուրդը՝ առաջին վայրկեանից՝ համոզւում է, ձգում, թողնում է քեզ եւ անցնում միւսի՝ իր մեծի, ցեղակցի, կրօնակցի կողմը: Բացառութիւնները այնքա՛ն հազուադէպ են, որ այդ մասին խօսելը աւելորդ է»:

Թուրքերի վրայ՝ մեր հայրենակիցները եւ ո՛չ մի վստահութիւն ունէին:

Արտայայտուած այդ տեսութիւնների մէջ շատ մեծ չափով ճշմարտութիւններ կային. ու նրանք խօսում էին իրական կեանքից. եզրակացութիւնները կշռադատում էին իրենց սեփական աչքերով տեսածներից, իրենց անձնական փորձառութիւններից:

Եւ զէ՛նք, գործիչ *էին ուզում...:*

ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԸ.— Բազմութեան միջից ճեղքելով՝ մի քիչ էլ առաջ անցանք:

Տեսնում ենք պառկած՝ երկու ծննդական հայ կիներ. դա մեր ազգի բեղմնաւորութեան, արգասաբերութեան ընդհանուր երեւոյթներից մէկն է: Ուրախ ենք:

Կամրջակի ծայրի կողմը լիքը հայ երեխաներ են: Նրանցից շատերը օտար երկիր են ծնուել, մեծացել. շատերն էլ երկիր ծնած՝ պանդխտութեան մէջ են մեծացել: Բայց բոլորն էլ հայերէն գիտեն. խօսում, ծլուըլում են գրականին մօտ՝ զանազան զուարթաբարբառներով:

Մօտենում եմ, զանազան հարցեր եմ տալիս. երեւում է, որ շատ քիչ բացառութեամբ՝ ամենքն էլ հաստ ու կտոր տեղեկութիւններ ունին մեր հին պատմութիւնից: Իսկ մեր յեղափոխական կեանքի դրուագներից՝ բոլորեքեանն էլ մի բան ասում են. յեղափոխական շատ դէմքեր էլ ճանաչում են, նրանց մասին լսել, կարդացել են:

Իմ խրախուսականիս եւ ստացածս ուրախութեան վրայ՝ Սեւ Ծովի ալիքները բախտ ունեցան «Մեր հայրենիք»ի, «Հընչակ»ի, մանկական բերանով երգուած, անոյշ ձայները իրենց ծալքերի մէջ առնել...

Դա Հայաստանի, Հայ Ազգի անթառամ հոգին էր, որ միշտ կար ու կար:

ՀԱՅ ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐԸ.— Բացօդեայ՝ նաւի մի հեռաւոր անկիւնում՝ հաւաքուել են ուրիշ մի խումբ հայեր: Սրանք շըրջապատել են մի քանի հոգու եւ նրանց ասած՝ խօսածները ու-

չի ուշով լսում։

Դրանք Ախալքալաքցի, Հին-Նախիջեւանցի, Երեւանցի հայեր են, Երուսաղէմից վերադարձող ուխտաւորներ, որոնք մի առանձին եռանդով պատմում են իրենց տեսածների մասին։ Բարի, միամիտ հայեր, որ արիւն-քրտինքով մի քանի «կոպէկ» հաւաքել, մի կողմ են դրել ու վերջապէս յաջողել են իրենց ուխտը կատարել։

Ունկնդիրները նրանց հարց են տալիս՝ մանաւորապէս Հայ—Թաթարական ընդհարումների մասին։

«Ուխտաւորներ»ը, մէկը միւսի բերանից խօսքը խլելով՝ ոգեւորուած, յափշտակուած՝ պատմում ու պատմում են... Գովասանում են Հայ Յեղափոխականներին, հայ զինուորներին, ասում, բացատրում, որ եթէ նրանք չը լինէին, իրենց անպատճառ կը կոտորէին, մէկ հոգի հայ էլ չէին թողնի։

Ու այսպէս՝ Ծովի վրայ էլ Հայ Տառապանքի, Հայ Ցաւերի, Հայ Յոյսերի ալիքներն էին գլորւում։

Սահմաններ չը կային, նրանք իրարուց չէին անջատուած․ բոլորի էլ Ցաւը մի եւ նոյնն էր․ չէ՞ որ նրանք եղբայրներ էին։

Ինչոր աչքի էր ընկնում՝ դա այն էր, որ Ռուսահայաստանցիները համարձակախօս էին, է՛լ աւելի ինքնավստահ կեցուածք, շարժ ու ձեւեր ունէին։ Մինչդեռ սահմանից այս կողմ եղողները աւելի նկուն, ընկճուած դիրք ու կերպարանք էին բռնած՝ ընդհանուր խօսակցութեան ժամանակ։

Դա, սահմանից այս կողմի դժբախտ իրականութեան արդիւնքն էր, պատմութեան մի շատ անցողական երեւոյթը։

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ.— Փոքր-Հայքի, Սեւ Ծովի ափերի զանազան քաղաքներից բաւականին մեծ թուով վաճառականներ կան, որոնք Կ. Պոլսից, Եւրոպական քաղաքներից են վերադառնում։ Իրարու մօտեցած՝ իւրաքանչիւրը իր տպաւորութիւններն է պատմում։ Ընկճուած ոգի չը կայ․ բոլորն էլ ուրախ, զուարթ են։

Խօսակցութիւնը գլորւում է ազգային նիւթերի վրայ․ բռկըւում է վիճաբանութիւն։ Երեւում է, որ բոլորն էլ լաւ եւ հիմնական տեղեկութիւններ ունեն մեր «Ազգային Սահմանադրութեան» մասին։ Ընդհանուր հայութեան վիճակի նկատմամբ էլ բաւականին որոշ եւ յստակ գաղափար ունեն։

Ոմանք վստահաբար ասում են, որ Թիւրքիան մնացողը չէ՛ · նա պիտի կործանուի · ուստի աշխատենք մի կերպ մեր գլուխը պահել եւ բացառապէս մեր ազգային գործերով պարապել:

Ոմանք առարկում են, որ հէնց մեր գոյութեան եւ ազգային ապահովութեան տեսակէտով՝ պէտք է որ մենք էլ պետական ընդհանուր խնդիրներով զբաղուենք եւ մեր ուժերի սահմանների մէջ թոյլ չը տանք, որ մեզ հետ վարուեն՝ իրենց ուզածին պէս:

Մի քանիսն էլ այն կարծիքն ունեն, որ Թուրքի պետական գոյութիւնը վնասակար չէ · միայն թէ բարեկարգուի, կարգ ու կանոն ներմուծուի · որովհետեւ հայը, որպէս է՛լ աւելի ճարպիկ եւ յառաջադէմ՝ կարող է դրանից աւելի՛ շահուել:

Մի մասն էլ չիփ-չիտակ այն գաղափարն է յայտնում, որ հայերի հարստութիւնը կազմւում է Թուրքերի յետամնացութեան երեսից · ուստի այդ անկարգ-անկանոն վիճակից գոհ պիտի մնան · միայն թէ մի քիչ ապահովութիւն լինի, որ վաստակածները ձեռքներից չը խլեն:

Որոշ է · հին սերունդի վաճառականները՝ տարիքոտները աւելի թրքասէրներ են · մինչդեռ նորերը այդպէս չեն · նրանք միջոց, ասպարէզ են ուզում ունենալ ո՛չ միայն իրենց գործերը ընդարձակելու, այլ աւելի ազատ, ապահով կերպով էլ իրենց ունեցածները, վաստակածները վայելելու:

Ինչո՞ւ համար չէք միանում եւ արտադրողական, սպառողական, գործակցական, վաճառականական զանազան ընկերակցութիւններ կազմում · հարցնում ենք:

Դրա պատասխանը այն է լինում, որ իրենք շատ լաւ զգացել են ընկերակցութիւնների, փոքրիկ դրամագլուխների միացման օգտակարութիւնը · բայց ընկերակցութիւններ կազմելու ձեւը, կերպը, կանոնները չը գիտեն · չեն իմանում ո՞րտեղից եւ ի՞նչպէս սկսել: Տալիս են օրինակներ այդ ուղղութեամբ իրենց կատարած փորձերի եւ խոստովանում, որ գործի թերի հասկացողութեան պատճառով՝ անկարող լինելով իրարու հետ վարուելու, ընկերակցաբար գործառնութիւններ յառաջ տանելու՝ շատ չանցած՝ կռուով եւ թշնամական յարաբերութիւններով իրարուց բաժանւում՝ հեռանում են:

Վաճառականական դպրոցների, տնտեսական գիտութիւն-

ների պակասութիւնը, այդպիսով, մեծապէս զգալի էր իրենց համար:

Եւ հէնց դրա համար էլ խնդրում էին, որ Կուսակցութիւնները այդ տեսակէտով էլ աշխատեն, իրենց ուժ տան, բան սովորեցնեն, ճանապարհ ցոյց տան:

Հին սերունդի վաճառականները ասում էին, որ եւրոպական կապիտալիզմի յարաճուն մուտքը Թիւրքիայի մէջ՝ իրենց արդէն նեղում էր եւ նոյն իսկ շատերի էլ սնանկութեան, անկման պատճառ էր դարձել: Բայց եւ մտածում էին, որ իրենք ուժ չունենալով պետական արգելքները վերացնելու ու տնտեսական նոր իրաւունքներ ձեռք բերելու, աւելի իմաստութիւն էին համարում, առ այժմս, սպասողական դիրք բռնել, մի կերպ գլուխ պահել, մինչեւ որ յաջող պայմաններ յառաջանային:

Երիտասարդները, ընդհակառակը, շատ մեծ ինքնավստահութեամբ էին խօսում. ասում էին, որ իրենք բնաւ երկիւղ չունին եւրոպական կապիտալիստներից, ինչքան էլ որ նրանք մեծ գումարներով գործի սկսէին. բաւական էր, որ ապահովութիւն լինէր, եւ իրենք, շնորհիւ իրենց ընդունակութիւնների, կարող էին մրցել եւ յաղթել: Ու տալիս էին օրինակներ, թէ ինչպէս եւրոպացի շատ վաճառականներ աշխատել էին կաշիի, պղնձի, եազմայի եւ արեւելեան զանազան ապրանքների վաճառականութիւնը իրենց ձեռքը կեդրոնացնել. բայց հայերը յաջողել էին ասպարէզից նրանց դուրս քշել՝ թէեւ նրանցից անհամեմատ քիչ կապիտալով:

Կիրասոնցի մի վաճառական պատմեց թէ ինչպէս ինքը ածուխի եւ պղնձի 3 հանք էր գտել Օրտուի եւ Կիրասոնի մէջտեղը, ծովից հազիւ մէկ ժամ հեռու. թէ ինչպէս իր ունեցած փոքրիկ դրամագլուխով գործը կարգի էր բերել, դիմել էր հայ վաճառականներին, առաջարկելով՝ որ գան՝ միանան եւ միատեղ շահագործեն. բայց նրանք երկրի անապահով վիճակը պատճառ բռնելով՝ չէին յօժարած մասնակցել, առարկելով թէ մեզ՝ հայերիս հիմակ ու հիմայ արշինը եւ դազգեահը միայն հերիք է, հանքերի շահագործութեամբ զբաղուելը դեռ շատ կանուխ էր. որովհետեւ մի օրուան մէջ կարող էին թէ իրենց հանքերը ձեռքներից խլել եւ թէ ամէն ինչ փճացնել, տակն ու վրայ անել եւ իրենց դրամագլուխները այդպիսով կորստի մատնել: Եւ այդպէս, ո՛չ մի հայ վաճառական չուզեց մասնակցել,

թէեւ այդ կարողութիւնը նրանք ունէին: Ուստի ես ստիպուեցայ այդ հանքերս չնչին գներով վաճառել ֆրանսիական մի ընկերութեան:

Վերջապէս, պարզ էր. երկրի անապահով վիճակը, ապագայի անստոյգ հեռանկարը մեծապէս ծանրացել էր բոլորի վըրայ եւ տնտեսական գործունէութեան թռիչքի ճանապարհը կտրել, խափանել էր:

Այս բոլորը ժամանակի կառավարութեան դատապարտութեան վաւերաթղթերն էին. Թուրք պետութեան անկման անհրաժեշտութեան փաստերից մէկը: Անհատական ընդունակութիւնները անդամալուծւում էին, ձեռներէցութիւնները կաշկանդւում, երկրի խորքերում բովանդակուող հարստութիւնները անշահագործելի էին մնում եւ մարդկանց պէտքերին չէին ծառայում. որովհետեւ անկարգ, անկանոն, ասիական մի պետութիւն այդ տարածութիւնների տէրն էր հանդիսացել՝ պատմութեան կոյր բախտի բերումով:

Վաճառականներից միայն մի քանիսը ինքնապաշտպանութեան գաղափարի ջատագովը, պաշտպանը հանդիսացան. մեծամասնութիւնը հաւատում էր, որ «Սահմանադրութիւն»ը այլեւս այդ բանի պէտքը չը պիտի թողնէր: Այս վերջինները իրենց փաստերն ու եզրակացութիւնները յենում էին Կ. Պոլսից առած տեղեկութիւնների վրայ: Ինչոր մենք, բնականաբար, աճապարեցինք է՛լ աւելի ուժեղ փաստերով եւ ապացոյցներով հերքել:

Բայց մեր հայրենակիցները չը մոռացան մեր խնդրի մի ցաւոտ կողմն էլ ներկայացնել. այն՝ որ հայերը ցրուած էին:

Դրա գլխաւոր ճարն ու դարմանը մեր կուսակցական շարքերի մէջ մտնելը ու կազմակերպուելն էր, պատասխանեցինք:

Շոգենաւը կանգ առաւ Զօնգուլդաղի առաջ:

ՃԱՐՏԱՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳԻՒՂԱՔԱՂԱՔԸ.— Շղթայաձեւ բլրակներից կազմուած՝ կիսաբոլորակ տարածութեան վրայ նստած, մի գիւղաքաղաք է Զօնգուլդաղը: Մարդկային բնակութիւն այստեղ հաստատուել է 15 տարիից ի վեր. բնակչութեան մեծամասնութիւնը գաղթել են Պոլսից եւ Համիտիէից: Գիւղաքաղաքի յառաջ գալու միակ պատճառը ածուխի հանքերն են: Դա ֆրանսիական մի գաղթավայր է, իրական տիրա-

պետութեամբ, թէեւ անուանապէս Թիւրքիա։

Շոգենաւը հազիւ կանգ առած նաւահանգստում՝ գործաւորները իրենց առօրեայ աշխատանքն սկսեցին։

Ծովախորշի վրայ ծփում են բազմաթիւ ածխատար նաւակներ. 150–ի չափ գործաւորներ՝ 8—10 տարեկան երեխաներ, չափահասներ, ծերունիներ՝ փոքրիկ կողովները իրենց ուսերը, չուալները առած՝ կրակի նման վազում՝ լցնում, բերում՝ դատարկում են «Սիրկասիէն»ի ածխարանը։ Նոյն աշխատանքը կատարում են գործաւորները՝ նաւահանգստում խարսխած ուրիշ շոգենաւերի համար էլ։

Մօտենում եմ գործաւորների վերակացուին՝ ուզում եմ խօսեցնել, հարցեր առաջարկել. նա քաշւում, երկչոտ դէմք է բռնում, զարմանալով՝ որ եւրոպական զգեստներ եւ գլխարկ կրող մէկը ցանկութիւն է յայտնում իրենց նման խոնարհ դասակարգի մարդոց հետ խօսելու։

Վերակացուին մի քանի բառերով համոզեցի, որ երկնչելու ո՛չ մի առիթ ունէր. որովհետեւ ես ներկայացնում էի Սօցիալ Դէմօկրատ մի Կուսակցութիւն, որ ընդգրկել էր գործաւորների դատը։ Աջարացի վերակացուն տեղի տուեց. սակայն վախենալով, որ մի գուցէ կապալառուն մեր խօսակցութիւնը լսի. քաշուեցանք մի անկիւն։

Ահա թէ ինչ ասաց.

«Այս նաւահանգստի մէջ աշխատում ենք 300—350 հոգի. աշխատաւորները, գլխաւորապէս, թուրք, քուրդ, լազ, ալբանացի, աջարացի են. հայ եւ յոյն չը կայ։ Օրական մեր աշխատավարձն է 3, 5 եւ 10 ղուրուշ. Փոքրիկ երեխաները, 8—16 տարեկան, ստանում են 3 ղուրուշ. պատանիները՝ 5. մնացածները՝ 10–ը։ Մեր աշխատավարձից՝ ամէն մէկս օրական, նուազոյն չափով, 1—2 ղուրուշ պիտի տանք «Սուրբ Կուսակցութեան»ը՝ Իտտիհատին. չը տուողը գործից կը զրկուի։ Այս նաւահանգստի մէջ խարսխող նաւերին ածուխ մատակարարելու գործը իր վրայ է առել՝ քիւրդ ծագում ունեցող՝ Մէհմէդ չաւուշը։ Ինքը Իտտիհատական է. նա ամէն ինչ է մեզ համար. մեր տէրն ու տիրականն է։ Մեզ ծեծելը, պատժելը, զարկելը, գործի մէջ պահել՝ չը պահելը, ամբողջը նրա ձեռքին է։ Եթէ հիւանդանանք՝ դարձեալ նրա հրամանովն ու թոյլտուութեամբն է, որ հիւանդանոց պիտի մտնենք, օրական 20 ղուրուշ իրեն

դարմանավճար տալու պայմանով: Մենք գլուխներս կախած՝ նրա հրամանները սրբութեամբ պիտի գործադրենք. անհնազանդութեան ամենափոքր նշանին, քրթմնջիւնի ամենամեղմ ձայնին՝ նա մեզ մտրակում, արձակում է. եւ ո՛չ մի տեղ բողոքելու իրաւունք ունենք. բողոքենք էլ լսող չի լինիլ, որովհետեւ ամէն իշխանութիւն նրա ձեռքին է. ամէն հաստատութիւնների եւ պաշտօնեաների հետ՝ նա միայն կապ ունի: Ընկերութեան դրասենեակից նա է մեր վարձադները ստանում եւ 15 *օրը մի անգամ մեզ բաժանում, միջից նախապէս հանելով «Սուրբ Կուսակցութեան» իրաւունքը եւ մեր «զանցառութեան», «անպարտաճանաչութեան», «թերացումներ»ի տուգանքը, ինչոր յաճախ չինովի է լինում: Մէկ տարի էլ գործենք՝ տասը տարի էլ, տարբերութիւն չը կայ. միշտ այն օրավարձն է, ինչոր Մէհմէդ էֆէնդին որոշել է. չուզողը կարող է երթալ: Երբ աշխատանքի անընդունակ ենք դառնում՝ մեզ ճանապարհ է դընում, մեր օրավարձերի հաշիւները իր խղճին համեմատ մաքրելով. մէկ օրական էլ աւելի չի տալ, եթէ չաշխատենք: Տկարանալու, հիւանդանալու, զանազան արկածների պատճառով խեղանդամուելու պարագային՝ մեզ համար յաւելեալ ո՛չինչ կայ»:*

«Գիշերները պառկում ենք խղիկների մէջ. 10—15 *հոգի մէկ տեղ: Ամէն ինչ մեր վրայ է. այդ տնակներն էլ վարձու պիտի առնենք Մէհմէդ էֆէնդուց:*

«Օրական աշխատում ենք, սովորաբար, 16—18 *ժամ: Գործաւորական ընկերութիւն չունենք, ո՛չ էլ կարող ենք ունենալ՝ առանց Մէհմէդ չաւուշի հրամանի. ամէն ինչ նրա հրամանով պիտի ընթանայ, քանի որ բոլորս էլ* նրա մարդիկն *ենք»:*

— Ուրեմն, եթէ գործաւորներից մէկը, այսպէս՝ քամու նման վազվզած ժամանակ՝ ընկնի, ոտքը, ձեռքը, գլուխը կոտրուի, ծովամոյն լինի՝ խեղդուի, նրան ո՛չինչ, ո՛չ մի յաւելեալ վարձատրութիւն կայ:

— «Ո՛չ մի. ո՛չինչ: Եթէ այս ռոպէիս էլ մեռնիմ, ինձ աւելի բան չեն տալ»:

— Ինչո՞ւ չէք բողոքում Ընկերութեան Վարչութեան:

— «Ո՞վ կը համարձակի բերան բանալ. մեզ ո՛չ կընդունեն, ո՛չ էլ մեզ հետ խօսքի կը բռնուեն: Մի–երկու անգամ ծածուկ փորձ արեցինք, ասացին, որ դրա համար Մէհմէդ չաւուշի

մօտ պիտի երթալ. իսկ Մէհմէդ չաուշը ինքն իր դէմ դատախազ եւ արդար դատաւոր չի կարող լինել: Վախենում ենք մէկին խօսելը. Կառավարութիւն էլ չը կայ. վախենում ենք, որովհետեւ արիւն-քրտինքի մէջ կորած այն փոքրիկ երեխաները, որ տեսնում էք՝ նրանք ծերունի ծնողներ ունին պահելիք. եթէ թողնեն, երթան, նրանց ո՞վ պիտի հոգայ. ուստի լռում են եւ իրենց ճակատագիրը տանում: Հասակաւորները բոլորն էլ բազմանդամ ընտանիքի հայրեր են, հեռու տեղերից եկած՝ զաւակների, անկարող ծնողների տէր. ո՞ւր երթան, ո՞վ նրանց աշխատանք կը տայ: Մանաւանդ որ Մէհմէդ չաուշը ուրիշ տեղերի կապալառուներին նամակ կը գրի, որ գործ չը տան. ինչպէս որ մի քանի անգամ էլ պատահեց: Այստեղից մէկը Կ. Պոլիս փախաւ, աշխատանքի չը դիմանալով: «Չաուշ»ը նամակ գրեց այնտեղի նաւահանգստի գործաւորների պետին, որ նրան գործ չը տան. այդ պէս էլ եղաւ: Խեղճ մարդը վերադարձաւ՝ եկաւ. Մէհմէդ չաուշի «ոտքն ընկաւ», «փէշերը պագեց», եւ յետոյ նորից գործ առաւ... ի՞նչ անենք. մենք գերի ենք, գերի՛»:

— Ե՞րբ էք հաց ուտում:

— «Հաց ուտելու առանձին ժամանակ չունենք. մենք սեղան նստել՝ հաց ուտել չը գիտենք. մի քիչ պանիր ու հաց՝ ձեռքներս բռնած՝ թէ՛ պիտի ուտենք եւ թէ՛ աշխատենք: Մենք 16—18 ժամ դադար չունենք»:

Բացատրում եմ մեր Կուսակցութեան սկզբունքները. կապիտալիստական շահագործութեան հանգամանքները, առաջարկում, որ Գործաւորական Միութիւն կազմեն եւ մեր Կուսակցութեան հովանաւորութեան ներքոյ գործեն:

— «Աչքներիս, գլուխներիս վրայ. ինչո՞ւ չէ. մեր ուզածն էլ հէնց այդ է, ասում է խօսակիցս. բայց դա անկարելի է: Եթէ Մէհմէդ չաուշը իմանայ թէ մենք Միութիւն ենք կազմել և իր դէմ պիտի կռուենք. այն ժամանակ՝ Կառավարութեան միջոցով՝ մեզ բոլորիս այստեղից կը քշի, թեւքներիցս բռնելով՝ դուրս կը շպրտի: Ձեր Կուսակցութիւնը Կառավարութեան այդ հրամանը կարո՞ղ է ոչնչացնել եւ նոյն այդ Կառավարութեան ձեռքով Մէհմէդ չաուշին այստեղից հեռացնել տալու ուժն ունի՞: Այդ մարդը մեր փաշան էլ է, գայմագամն էլ. նրա կտրածը կտրած է, թափածը՝ թափած: Նա ինքը օսմանեան կա-

ռավարութիւնն է։

Աջար վերակացուն շատ լաւ էր հասկացել կեանքի անհրաժեշտութեան օրէնքը։

Ահա թէ ինչ ասել է Թիւրքիա․ թէ ինչպէս էր Իտտիհատը այդ խեղճ գործաւորներին իր ազգայնական ճանկերի մէջը առել եւ նրանց արիւն-քրտինքի արդիւնքը ծծում՝ հարիւրաւոր ոսկիներ հանելով՝ այդ թշուառների մէջքից։

Նաւակ առանք՝ դուրս ելանք գիւղաքաղաք։

Անցնում ենք շուկայով։ Ճանապարհները եզերուած են գործաւորների կենսական պէտքերին վերաբերեալ խանութներով։ Ամէն քայլափոխի երեւում են բանջարավաճառներ, սրճագործներ, հնակարկատներ, զգեստավաճառներ, երկաթագործներ․ դրանց շարքին՝ հազիւ երբեմն պատահում են մեծ խանութներ՝ պերճանքի վերաբերեալ ապրանքներով։ Ամէն կարգի արհեստագործներ լիքն են։

Ամենից աւելի աչքի են ընկնում արեւելեան սուրճ ու կարգի սրճարանները, որոնք չափից աւելի խճողուած են անգործ բանուորներով՝ ցնցոտիների, գրգլեակների մէջ։ Կեղտի եւ անմաքրութեան մէջ լողացող այդ բանուորները կա՛մ ծխում են, սուրճ խմում, բարձրաձայն իրարու հայհոյում, եւ կամ ճատրակ, թուղթ են խաղում․ շատերն էլ ճանճերի հոյլերով շրջապատուած՝ նստած տեղերը նիրհում, քնում են։ Մարդկային թշուառութիւնը ուղղակի մարմնացած՝ խօսում է։

Բարձրանում ենք վեր, դէպի ածխահանքի բերանը, մուտքը։

Մեր ճանապարհի երկայնութեամբ թափուած, լցուած են հարիւրաւոր մեծ ու փոքր մեքենաներ՝ ամէն տեսակի։ Երկաթուղու կառախումբերը անդադար աջ ու ձախ սուրալով՝ անցնում են կանաչազարդ հովիտների, դալարագեղ դաշտագետինների միջով։ Բնութիւնը պերճ, ճոխ․ բուսականութիւնը առատ․ ամէն կողմ ծաղկալից դաշտեր, կանաչագեղ մարգագետիններ, խշխշուն առուակներ, պարզ, վճիտ, մաքուր աղբերակներ․ ոչ ոքի մտքով չի կարող անցնել, որ հովուերգութիւնների միայն նիւթ մատակարարելու արժանի այդ պերճաշուք վայրերի մէջ, փոխանակ երանաւէտ կեանքի՝ մարդկային դըրամաներից ամենադաժանն է գլորւում․ ո՛չ մէկի հաւատալը

պիտի գար՝ լսելու, իմանալու, մարմնական աչքերով տեսնել, շօշափելու, որ այդ տեղերում էլ մարդը մարդի արիւնարբու գայլը դարձած՝ մարդկային հազարաւոր կեանքեր են յօշոտւում, պատառոտւում, հիւծւում, մաշւում, այլանդակութիւնների ենթարկւում՝ երկրի ընդերքում:

Հովասուն բլրակների վրայ՝ չար ի չար ընկած են աշխարհիս երջանիկների չքեղազարդ, մեծակառոյց տները՝ զարդարուած ծառախիտ անտառակներով, բազմերանգ բուրաստաններով: Այդ տեղերում՝ մարդը յղփօրէն վայելում է այն՝ ինչոր գեղեցիկ բնութիւնը կարող է տալ: Ամէն վայր՝ ամէն փողոց մաքուր, ջինջ, նման ժայռերի կատարներից գահավիժող վըճիտ յստակ առուակներին՝ մի պայծառ, ապակենման երկնակամարի տակ:

Պատշգամբների, օրօրուն աթոռների վրայ նստած այրերը, կիները, աղջիկները, երեխաները՝ հանգստաւէտ կեանքի վայելքների մէջ՝ երգում, նուագում, զրուցատրում են:

Սրանք այդ վայրերը շահագործողների բնակարաններն են:

Հասնում ենք հորի բերանին. վերակացուին յայտնում ենք, որ ցանկանում ենք աշխատաւորներին, գործաւորներին տեսնել: Պատասխան ենք առնում, որ ուշ է. բոլորն էլ արդէն հորերն են իջել. նրանց տեսնելու համար՝ պիտի սպասել վաղուան՝ առաւօտեան ժամը 6—7-ին, կամ այս երեկոյ՝ ժամը 7—8-ին: Ինչոր մեզ համար անկարելի էր:

Այդ րոպէին, բարեբախտաբար, ուշացած՝ կէս հիւանդ մի թուրք գործաւոր, լամպարը վառած՝ պատրաստւում էր հոր իջնել, երբ իր առաջը կտրեցինք, խնդրեցինք կանգնել եւ մեզ մի քանի տեղեկութիւններ տալ, որի համար էլ իր օրավարձը կարող էր մեզանից ստանալ: Նա ուրախութեամբ ընդունեց, եւ պատմեց:

— «Ահա իմ վրա-գլուխս. մէկ թել քաշես՝ հազար կարկատան կը թափի. կեղտի, անմաքրութեան մէջ. բոլորս էլ այսպէս ենք: Մեր օրավարձն է 8–10 ղուրուշ, նայելով աշխատանքի տեւակին եւ իւրաքանչիւր գործաւորի արտադրոյթին: Մեքենավարներն են միայն օրական 20 ղուրուշ ստանում: Մեր աշխատավարձերը 15 օրը մի անգամ են տալիս:

«Գործաւորների ընդհանուր թիւը հասնում է 10—15 հազարի. նայելով տարուայ եղանակին եւ գործերի չատութեանը:

Ձմեռները, ընդհանրապէս, հանքագործների թիւը խիստ շատանում է»։

«Այն ներքնուղիները, երկար նրբանցքները, որոնցով գընում՝ հասնում ենք մեր գետնաշխարհը՝ մեր աշխատանքի վայրերը՝ դժուարութիւններով լի են. ժամերով մէջքներս ծռած՝ առաջ պիտի երթանք, աղօտ լամբարները ձեռքներիս. եթէ գլխներս, բազուկներս, կողքներս չը դիպչեն սրածայր ժայռերին, որոնք ամէն քայլափոխին մեր գլխների վերեւ ցցուած՝ կախուած են։ Հասնում ենք աշխատավայրը, որ բաւականին ընդարձակ տեղ է. այդտեղ մեզանից մէկ հոգի շարունակ փորում է, ածխաքարեր է վայր բերում. իսկ միւս երկուսը կըրում, տանում, սայլերը լցնում։ Երեքս միասին պարտաւոր ենք 15 սայլ լցնել, որպէսզի կարողանանք դուրս՝ լոյս աշխարհ գալ, եւ մեր կանոնաւոր օրավարձերը ստանալ։ Եթէ այդ 15 սայլը չը լցրած՝ դուրս գանք, մեր աշխատավարձքից կը կըտըրուի. իսկ մի քանի անգամ այդպէս պատահած ժամանակին՝ մեզ ճանապարհ կը տան, կը վտարեն։ Ուստի ստիպուած ենք՝ օրական 12—15 ժամ աշխատել, մինչեւ որ սայլերը բերնէ բերան լցնենք»։

«Դուրս գալուց յետոյ՝ մեր սայլերը յանձնում ենք վերակացուներին եւ տեսչին. գնում ենք, ապա, մեր տախտակէ սենեակները, որ ընկերութիւնը մեզ վարձու է տալիս՝ օրական ամէն մէկից 2-ական ղուրուշ առնելով։ Մէկ սենեակի մէջ՝ յատակի վրայ ընկած՝ պառկում ենք 10—15 հոգի։ Մեր կերակուրը մենք պիտի եփենք. մեր շորերը մենք պիտի լուանանք. բոլորն էլ այդ մի եւ նոյն սենեակի մէջ...»։

«Ես չեմ տեսել, չը գիտեմ թէ Դժոխքի մէջ մարդ ի՛նչ չարչարանք է քաշում. բայց մեր տանջանքը տեսնողը պիտի ասի, որ Դժոխքի մէջ եղածը դրանից աւելին չը պիտի կարողանար ունենալ»։

«Ամէն օր իջնում ենք հորը. դա մի Դժոխք է, կատարեալ Դժոխք. իջնում ենք, բայց ողջամբ դուրս գալներնիս չը գիտենք. որովհետեւ յաճախ փապուղիները փլչում են՝ տակն ենք մնում. յաճախ էլ աշխատանքի տեղերում սաստիկ փլուզումների պատճառով՝ չենք կարողանում արագ փախչել եւ մնում ենք տակը՝ թաղուած։ Շաբաթ չի անցնիլ, որ արկած չը պատահի. մահը ամէն րոպէ սաւառնում է մեր գըլ-

խին. խեղանդամութիւններ, չնչահեղձութիւններ սովորական երեւոյթներ են»։

«Երբ մէկ տեղերնիս վնասւում է, գործելու անընդունակ ենք դառնում՝ առանց մէկ դուրուշ աւելի վարձագին տալու՝ մեզ ճանապարհ են դնում»։

«Պատահում է, որ հաշմանդամը իր կորցրած անդամները ձեռքը բռնած՝ Վարչութեան գրասենեակն է գնում, լալիս, աղաչում, պաղատում է, որ մի քանի դուրուշ աւելի դրամ տան. քարից եթէ պատասխան գայ, նրանցից էլ մի բան դուրս կը գայ. մեզ դուռը ցոյց կը տան...»։

— Լուացուելու համար՝ բաղնիք, առանձին լուացարան ինչպէս եւ օճառ ձեզ տալի՞ս են։

— «Երբէ՛ք. այդպիսի բան տեսած չունենք։ Մեր բաղանիքը, մեր լուացարանը ծովն է։ Ուզողը կարող է այնտեղ երթալ, ջուրը մտնել, լողանալ՝ ուզածին չափ։ Եթէ տաք ջուր ուզենք, մեր սենեակների մէջ պիտի պատրաստենք»։

— Ձեր օրավարձերը արդար կերպով ստանո՞ւմ էք։

— «Այո՛... 15 օրը մի անգամ. մենք հաշւում ենք, տեսնում ենք, որ մեր օրուան գործ-գլուխը հանել ենք՝ 15 սայլերը լցրել. բայց տեսուչը մեր ասածը չի ընդունիլ. նա իր հաշիւն ունի. ամէն անգամ առարկութիւններ է անում, թէ սայլերը լիքը չեն եղել, պակաս են եկել. ու մեր աշխատավարձերից կտրում է...»։

— Բողոք, խռովութիւն չի՞ պատահում։

— «Այո՛, երբեմն պատահում է. խեղճ գործաւորները ակընյայտնի կերպով տեսնելով՝ որ իրենց զրկում, կողոպտում են. աւելի յանդուգները բողոքում, խռովութիւն են հանում, աղմուկ բարձրացնում, անէծք թափում... Բայց հետեւեալ օրն էլ ճանապարհ են դրւում։ Դրա համար էլ ստիպուած ենք աչք գոցել, լռել, այո՛ ասել, համակերպել. ամէն ինչ տանել. որպէսզի մի քանի դուրուշ վաստակենք եւ մեր տները ուղարկենք, որ ուտեն եւ չը մեռնեն»։

— Ձեր մէջ հանքագործ հայեր կա՞ն։

— «Ո՛չ. ո՛չ մէկ հոգի. մէկ-երկու անգամ հայեր եկան. բայց շուտով թողին՝ հեռացան»։

— Դուք «Սուրբ Կուսակցութեան»՝ Իտտիհատին դրամ տալի՞ս էք։

— «Այո՛, ինչպէս չէ՛․ 15 օրը մի անգամ՝ նաւահանգստի գործաւորների մեծը՝ Մէհմէդ չաւուշը գալիս է եւ մեր աշխատավարձերը առնելիս, ամէն մէկից 2—3 ղուրուշ վեր է առնում՝ նրա համար»։

— Ձեզ մօտ Հայ կուսակցականներ եկե՞լ են։

— Ո՛չ․ մի քանի չարաթ առաջ՝ դօքտօր Նազըմը եկաւ․ նրանից շատ առաջ էլ եկել էր Նաճի պէյը․ նրանք մեզ ասացին, որ եթէ Հայ Կուսակցութիւններին պատկանող մարդիկ գան եւ ձեր մէջ մտնել, քարոզել ուզեն․ նրանց չը լսէք, ձեր մէջ չընդունէք․ եթէ ո՛չ գործից կը զրկուիք եւ բանտ կերթաք․․․»։

Ցոյն վերակացուն մեզ չարգելու համար՝ ուշացած գործաւորին թոյլ է տալիս գնալ, հորը իջնել։

Վերակացուն աւելի նոր տուեքներով հաստատեց գործաւորի ասածները։ Ապա սկսեց մեզ ցոյց տալ «օդամղիչ» մեքենաները եւ նրանց կազմը բացատրել։

«Այս երկայն խողովակները անդադար պտտելով՝ չաբեց, օդ ենք փչում հեռաւոր հորերի մէջ․ հորը գնում, հասնում է մինչեւ 400—500 մէտր․ իսկ նրանից այն կողմը գործաւորները՝ բաղալի մօքով՝ լողում են քրտինքի բաղանիքների մէջ․․․ Հեռու տեղ եղող գործաւորները երբեմն երբեմն չեն են գալիս, մի քիչ զովանում, շունչ առնում, եւ ապա վերադառնում․․․ Այնպէս որ շնչահեղձութիւնը սովորական երեւոյթ է։ Խողովակները, որ տեսնում էք՝ հին ձեւի են եւ խախթարուած, լաւ չեն բանում․ թէեւ միշտ ասում են, որ նորերը պիտի բերեն»։

— Հիւանդութիւններ պատահո՞ւմ են։

— «Շատ չաճախ․ միայն հորերի ականների մէջ հանդիպածներից չէ, որ մարդիկ մեռնում են․ աւելի մեծ թուով մեռնողները լինում են թոքախտից, որ այստեղ սարսափելի ճարակ է անում։ Արիւն-քրտինքի մէջ լողացող գործաւորը դուրս է գալիս հորից եւ իր ցնցոտիներով սենեակ գնում՝ խսիրի վրայ պառկում, փալասի մի կտոր իր վրայ առած․ մրսում է․ գալիս է հազը եւ սրընթաց թոքախտը իր գործը լրացնում։ Մահերի թիւը չափազանց բարձր են, որովհետեւ հիւանդանոցները ձրի չը լինելով՝ աղքատները չեն կարողանում խնամուել․․․»։

— Հայեր կա՞ն այստեղ։

— «Այո՛, որպէս խանութպաններ, վաճառականներ, ընկե-

րութեան գրասենեակների պաշտօնեաներ: Հայը եւ Յոյնը չեն խենթացել, որ գան եւ այս հորերի միջից իրենց օրապահիկը հանեն: Այստեղի ծանր եւ տաժանելի աշխատութիւնները կարող են տանել միայն Թուրքերը, քիւրդերը, ալբանացիները, աջարները, որոնք աւելի ընդունակ են ծանր աշխատանքների, քան Հայերը եւ Յոյները...»:

— Իտտիհատականներից այստեղ եկողներ եղա՞ծ են:

— «Մի քանի անգամ. ժողովներ, դասախօսութիւններ էլ են սարքել եւ գործաւորներին խրատներ տուել: Նրանց այստեղի ընդհանուր ներկայացուցիչն է Մէհմէդ չաւուշը. ամէն կարգադրութիւն նրա միջոցով է լինում: Այստեղ ակումբ ունեն. մասնաճիւղ են հաստատել. նոր մզկիթ շինել: Մի բան որոշ է, որ տեղական միւսլիման ազգաբնակչութեան, մանաւորապէս գործաւորներին՝ սաստիկ կերպով գրգռում են քրիստոնեաների դէմ՝ կրօնական եւ ազգայնական հողի վրայ...»:

Շնորհակալութիւն ենք յայտնում. մնա՛ս բարեւ ասում յոյն վերակացուին եւ խնդրում, որ Ընկերութեան Վարչութեան գրասենեակի ճանապարհը մեզ ցոյց տայ:

Մտնում ենք գրասենեակը. մեզ ներկայացնում. ցանկութիւն ենք յայտնում պատասխանատու տնօրէնին տեսնելու:

Տնօրէնը շատ մեծ քաղաքավարութեամբ մեզ ընդունում է:

Բացատրում ենք նաւահանգստի գործաւորների դրութիւնը եւ Մէհմէդ չաւուշի դիրքը:

Պատասխան ենք ստանում, որ Ընկերութիւնը մարդ–գլուխ՝ օրական 10—15 ղուրուշ է վճարում:

Հասկացնում ենք, որ գործաւորները ստանում են հազիւ 3, 5, 8, եւ, բացի դրանից, Իտտիհատին էլ հարկադրում են առատ բաժիններ հանել:

«Ի՞նչ կարող ենք անել, ասում է գաղղիացի խօսակիցս. մեր գործը այդպէս է առաջ գնում. մենք չենք եկել Թիւրքիան բարեկարգելու. կառավարութիւնը ինքը ա՛յլ կերպ պատասխանատուութիւն յանձն չի առնում, քան ինչոր կայ, ինչպէս որ կատարւում է... եւ վերջապէս մենք մեր գործին պիտի նայենք...»:

— Բայց վստահ եմ, որ Ֆրանսիայում այսպէս չէիք անի հէնց ինքներդ՝ ձեր կապիտալիստական շահի տեսակէտից:

— «Այո՛. բայց այստեղ Ֆրանսիա չէ. այստեղ Թիւրքիա

է, ուր պետական որոշ օրէնքներ գոյութիւն չունեն, եւ տիրում են միայն սովորութիւնները· զանազան բարձրագոյն շրջաններից եկած կարգադրութիւնները։ Օրէնք չեղած տեղը ամէն ինչ ենթակայ է քմահաճոյքի։ Ցաւում ենք, բայց այլապէս չէինք կարող վարուել։ Նոյն իսկ այդ գործաւորները մեզ դէմ կը դառնան վաղը՝ եթէ փորձենք Մէհմէդ չաուշին հեռացնել եւ մենք ինքներս անմիջական յարաբերութիւն հաստատենք նրանց հետ· քանի որ գործաւորական շահի եւ ո՛չ մի գիտակցութիւն ունեն իրենց մէջ»։

Նաւի սուլոցը լսուեց· ստիպուած ենք աճապարել։

— Իրա՞ւ է, պր· Տնօրէն, որ Թոքախտը այստեղ սոսկալի ճարակ է անում, ո՛չ բաղնիք կայ, ո՛չ գործաւորական ապահովութեան սնդուկ, ո՛չ էլ արկածեալների համար յաւելեալ մի գումար։ Վերջապէս մարդ են սրանք...։

— «Այո՛· ի՞նչ կարող ենք· մենք այստեղ չենք եկել բարեգործութիւն անելու· հանք ունենք եւ պիտի շահագործենք· կապիտալ ենք դրել· մեզ ձեռք, բազուկ, մկանունքի ոյժ է պէտք, եւ Թիւրքիայում շա՛տ կայ· ինչքան էլ որ մեռնեն, անդամատուեն՝ դարձեալ լիքն են· փողոցների մէջ մէկի փոխարէնը 10—20 մարդ կայ սպասող, որ գործելու պատեհութիւն ներկայանայ։ Այստեղ մէկին գործի առնելը բարիք է· երկար աղաչանք-պաղատանքներից յետոյ է, որ մէկին զիջում ենք գործ տալու։ Թիւրքիայի ներկայ քաղաքական, տնտեսական, ընկերային կազմի մէջ՝ գործաւորի դրութիւնը սրանից աւելի չի կարող լինել· եթէ մենք ցանկանանք իսկ՝ շատ բան չենք կարող անել, որովհետեւ մեր ձեռքին չէ հանքերի շահագործման նկատմամբ որոշ պարտականութիւններ եւ իրաւունքներ խմբագրել։ Սա մի երկիր է, ուր գործաւորական, բանւորական օրէնք ասուածը գոյութիւն չունի։ Այդ պարագայում մենք պիտի վարուենք ներկայացած պայմաններին համեմատ· ուրիշ կերպ չենք կարող անել»։

— Չէ՞ք կարծում, որ նոյն իսկ ձեր շահերի տեսակէտից՝ աւելի օգտակար եւ ձեռնտու կը լինէր, եթէ այստեղ էլ Գործաւորական Միութիւններ կազմուէին· դրանով նրանք մի անգամից կազատուէին այդ մակաբոյծներից, որոնք նրանց անպատիժ կերպով քամում են՝ իրենց անգիտակցութիւնը շահագործելով։ Այդպիսով՝ նրանց կենցաղավարութեան պայմանները դէթ մա-

սամբ կը բարւոքուէն :

— « . . . Տեսականապէս շատ լաւ կը լինի եւ մեզ բնաւ արգելք չի լինիլ. բայց դրա համար նախ խօսք պիտի հասկացընել այս երկրի կառավարութեան, մոլլային, խոջային... Իտտիհատին...: Եթէ այդ բոլորը անէք՝ շատ լաւ կը լինի. մեր կողմից, հաւատացէ՛ք, արգելք չի գայ, եւ մենք, Ֆրանսիայում եղածների նման, նոյն իսկ որոշ գումար էլ կը յատկացընենք գործաւորական սնդուկներին : Բայց հարցնում եմ. հընարաւո՞ր են դրանք ներկայ Թիւրքիայում» :

— Ֆրանսիացիներ շատ կա՞ն այստեղ :

— «Վերեւի բարձունքներում՝ բլրագագաթների վրայ շարէ ի շար ընկած տները բոլորը ֆրանսացիներ են : Սա ֆրանսիական մի բարգաւաճ գաղութ է : Ֆրանսիացիները կա՛մ բաժնետէրեր են եւ կա՛մ բարձր պաշտօնեաներ : Ձեր աչքը կտրածին չափ երեւացող տարածութիւնները բոլորն էլ մերն են. մեր շահագործութեանն են թողնուած՝ շատ նպաստաւոր պայմաններով» :

— Կարծեմ՝ ընկերութիւնը լաւ շահ պիտի վերցնի :

— «Եթէ այս վայրերը բուն ֆրանսիական տիրապետութեան տակ լինէին, մենք մեր շահի կէսն անգամ արած չէինք լինիլ : Սա անուանապէս Թիւրքիա է. իսկ իրականապէս՝ Ֆրանսիա, ֆրանսիական մի գաղթավայր» :

Դիտողութիւնը, եզրակացութիւնը ուղիղ էր : Այստեղ էլ խօսում էր անհրաժեշտութեան փաստը, մարդի շահագործման ընկերային անգիր օրէնքը :

Մնա՛ս բարեւ ասացինք. դուրս եկանք :

Կամաց կամաց զատւում ենք այդ հմայիչ վայրերից, որի խորքերում «Դժոխք» կայ, եւ ուր ծիծղուն կեանքի հետ՝ մարմընացած թշուառութիւնը առաջ է գնում, անխիտ շահագործման հետ ձեռք ձեռքի տուած :

Անցնում ենք, այս անգամ, ֆրանսիական թաղով : Փողոցները մաքուր, սրբուած, աւելուած են. կչկչան առուակներով ակօսուած. ծառերով եզերուած : Ամէն տան առաջ՝ տարածւում են գեղեցիկ մարգեր, պարտէզներ՝ շատրուաններով, աւազաններով զարդարուած : Տները, պատշգամբները թաղուած են մագլցող բոյսերի խուրձերի տակ : Բուրաստանների մէջ ծիծա՛ղ, ուրախութի՛ւն, պա՛ր. երեխաների ծըլւըլոց, խայ-

տանք. ու ճօճուն աթոռների վրայ ընկողմանող կանանց, օ-րիորդների, երիտասարդների հեշտաւէտ կեանքը գալիս՝ լրա-ցընում է դաշնամուրի մեղեդին, սիրերգը...

Այսպէս էր տէրերի պատկերը։

ՀԱՅԵՐԸ.— Բլրակներից վայր իջել՝ գնում էինք, երբ շուկայի մէջ հանդիպեցանք մի քանի ծանօթ հայրենակիցների, որոնք մեզ տեսնելով՝ խնդրեցին մի բաժակ սուրճ առնել, քա-նի որ դեռ նաւը մեկնելու բաւականին ժամանակ կար։

Հաւաքուեցան հայերը. օրուան խնդիրների մասին հարց ու փորձեր արեցին։ Պատմեցինք մեր գնացածները։

Տեղւոյն հայերի նկատմամբ՝ պր. Փանոսեանը հետեւեալ լրացուցիչ տեղեկութիւնները տուեց.

«Այստեղ հազիւ 25—30 տուն հայ կայ. բնտանիքաւոր սըն-ուորների թիւը քիչ է. մեծամասնութիւնը պաշտօնեաներ են։ Կերպասեղէնների եւ ամէն կարգի հագնելիքների գործերը հա-յերի ձեռքին են. 10 վաճառական հայ կայ։ Ունենք փոքրիկ երկսեռ վարժարան եւ մատուռ՝ մի քահանայով։ Հայերը շու-կայի մէջ շատ մեծ դիրք ունեն. գործաւորներ չը կան. խառն ամուսնութիւններ տեղի չեն ունենում։ Թուրքերը քիչ են. ա-ռաջ նրանք աւելի լաւ էին մեզ հետ, քան վերջերս...»։

Հայկական շրջան լինի եւ խօսք չը բացուի կուսակցութիւն-ների եւ կուսակցական գործերի մասին. դա անկարելի է։

— Շատ լաւ, եղբակացնում եմ, դուք ո՞ր կուսակցութեան էք պատկանում։

Այս հարցիս մի քանիսը իրենց գրպանից հանում են «Եր-կիր»ը եւ «Երիտասարդ Հայաստան»ը, որպէս ապացոյց ո՛ր կուսակցութեան իրենց համակիր լինելուն։

Մի քանիսն էլ հետեւեալ կտրուկ հարցը դրին.

— «Կուսակցակա՞ն պէտք է լինել, թէ՞ հայ»։

— Կուսակցական եղողը արդէն հայ է, եւ որոշեալ սկըզ-բունք, գաղափար, իդէալ ունեցող հայ։ Բայց հայ լինել ա-ռանց մեր կուսակցութիւններից մէկն ու մէկին պատկանելու. դա մի քիչ կասկածելի հայ լինել է. որովհետեւ Իսթիհատա-կան հայեր էլ կան, որոնք մեր Դատի դիտակից թէ անգիտակից թշնամիներն են հանդիսանում. կան պահպանողական, չէզոք հայեր էլ, որոնք միայն իրենց կաշիի եւ դրամունքների վրայ

են մտածում. եւ հասարակական գործերի նկատմամբ պարտականութիւն չեն ստանձնում: Այնպէս որ կուսակցական լինելով՝ դուք երբէք չէք դադարում հայ լինելուց»:

Մեր խօսակցութիւնը շարունակեցինք. 15 հոգի արձանագրուեցան որպէս Սօցիալ Դէմօկրատ Հնչակեաններ. կազմուեցաւ Մասնաճիւղ եւ դրուեցաւ Փոքր–Հայքի Գործադիր Յանձնախմբի իրաւասութեան շրջանակի մէջ:

Տեղական գործունէութեան համար մի քանի կարեւոր հրահանգներ տալուց յետոյ՝ շրջապատուած ընկերներով եւ համակիրներով, իջնում ենք դէպի նաւահանգիստ:

ԵՐԹԸ. — Մտնում ենք նաւ. խարիսխը բարձրացաւ. տասնեակ մեծ ու փոքր նաւերի, հարիւրաւոր նաւակների միջից կամաց կամաց սուրալ, առաջանալ սկսեց «Միրկասսիեն»ը:

Մեր յետեւն ենք թողնում. գնում, հեռանում ենք Զօնգուլդաղից, ուր մարդը, մարդկային բազուկը, գործաւորի աշխատանքի ոյժը՝ մուրճի, տապարի հարուածների ծանրութեան տակ սախպում, հարկադրում, բռնադատում է բնութեան ղուրս թափելու իր ընդերքի մէջ պահած հարստութիւնները՝ մարդկային հազար ու մի պէտքերի համար: Եւ մայր բնութիւնը՝ տանջածագործող աշխատանքի առաջ՝ տեղի է տալիս. բայց ո՛չ թէ արժէքներ ստեղծողի, արտաքին աշխարհ դուրս բերողների համար՝ այլ մի ուրիշի:

Եթէ բնութիւնը լեզու լինէր, նա չէ՞ր ասիլ գործաւորին, թո՛ղ, եղբայր, թո՛ղ. հարուածդ մի՛ իջեցրու. խնայի՛ր քեզ. աւելի լաւ է որ այդ հարստութիւնները իմ խորքերումս պահեմ՝ քան ոտքդ, ձեռքդ, կեանքդ տաս, եւ դրանով վայելքների, յղփանքների մէջ լողացնես մի ուրիշին, որ սակայն դու չես...

Բայց չէ՞ որ պէտք է ապրել. կին կայ, երեխայ կայ. ծերունի հայր, մայր կայ:

Այո՛. դա անհրաժեշտութեան օրէնքն է:

Եւ հէնց այդ օրէնքի դէմ է, որ մարդկութեան ազնիւ դասակարգը կռւում է՝ նոյն ինքն գործաւորը:

Նաւը բացեցը մտաւ. Զօնգուլդաղը մեր աչքից չքացաւ. ամպերի յետեւում թաղուեց: Գիշերը վրայ հասաւ. իջանք քնելու:

ՍԻՆՈՊ. — Ուրբաթ, Մայիս 12. առաւօտեան՝ առաջին ար–

չալոյսին, կամրջակի վրայ դիտում ենք Սեւ Ծովի դիւթիչ տեսարանները: Հայ երեխաները մեզ տեսնելով՝ վազում, պար են բռնում եւ յեղափոխական *երգեր երգում:*

Ծովը հանդարտ է. աջ կողմից՝ հեռու հորիզոնների վրայ նկարուած՝ երեւում են ձիւնազարդ լեռների շարաններ. ծովեզերքը համակ կանաչութիւն է, հօտերը կամաց կամաց վեր են բարձրանում: Մի քիչ էլ, եւ մօտենում ենք Սինոպին:

Այստեղ Թրքական նաւատորմիղը սոսկալի ջարդ է կերել ռուսներից. դա միշտ էլ ուրախութեան առիթ կարող է տալ յառաջադիմութեան բարեկամներին:

Սինոպը մեր Յեղափոխական պատմութեան մէջ շա՜տ տըխուր յիշատակներ ունի. քանի՛ քանի՛ ընկերներ այստեղ իրենց արդար հողին են փչել. քանինե՛րն են իրենց կեանքը այստեղ մաշել, հիւծուել եւ մարտիրոսութեան պսակը ընդունել:

Աչքիս առաջն է պատկերանում մեր անմեղունակ Արմենակի պատկերը. նրա ուրախ, ժպտուն, համայն բերկրանք, անմեղութիւն բուրող դէմքը. նա 15—16 տարի այստեղ մաշուել, հալուել էր: Բանտի դռնից ներս էր մտել 16 տարեկան հասակին. դուրս եկաւ 1908-ին: Խեղճ ընկերը իր կեանքի կէսը անց էր կացրել զնդանի մէջ. այդտեղ էր աճել, մեծացել եւ իր հրեշտակային անմեղութիւնը պահել: Բանտային կեանքը անզօր էր եղել նրան ընկճելու, նկուն դարձնելու. նո՛յն զըւարթ, կրակոտ, վառվռուն Արմենակն էր: Սիմոն պէյին դարկելուց յետոյ՝ մի քանի անգամ ամբոխի միջից յաջողել էր փախչել, կտուրերի վրայ ցատկել, վայր իջնել, վազել. բայց վերջը բռնուել էր՝ ընչասպառ գետին փռուած ժամանակ: Շատ թեթեւ կերպով իր մազերն էին միայն սպիտակել. մնացածը նոյն առաջուան Արմենակն էր: Լինելով հին կռնդ *Սօցիալ Դէմօկրատ Հնչակեաններից՝ երբ բանտից դուրս եկաւ, Կէդիկ Փաշայի մեր Կեդրոնավայրը եկաւ՝ շատ մեծ դժուարութեամբ կարողացանք իրեն համար մի ձեւք նոր հանդերձ գնել՝ հագցընել: Մի փոքր ճանապարհածախք անելով՝ Ադաբազարի կողմերը գնաց աշխատելու, իր ծերացած հօրն ու մօրը պահելու: Արմենակը այդ* անիծուած *տեղի մասին. շա՜տ բաներ էր պատմել...:*

Ընկեր Մուրատը պարտականութիւն դրեց վրաս՝ 90-ական թուականների մեր տերրորիստների կեանքը մանրամասնօրէն

գրելու, վեր հանելու նրանց գործունէութիւնը, անվեհերութիւնը եւ անձնազոհութեան այն հոգին, որ միշտ կարող է օրինակելի լինել՝ մեր յաջորդ սերունդների համար եւ մեր յեղափոխական պարծանքների մէջ առանձին տեղ գրաւել:

Տխուր յիշատակներով համակուած՝ թողեցինք Սինոպը, մեզ համար անիծուած այդ ժայռաբերդը:

ԳԱՆԳԱՏԱՒՈՐ ՀԱՅԸ. — Առաջին օրուայ դէպքը անհետեւանք չի մնացել: Հայը ծովի վրայ էլ իր ատրոգելիների, աղգային գծերի տէրն է:

Մտենում են չորս հոգի հայ վաճառականներ, մի թուղթ ձեռքներին. խնդրում են ստորագրել: Ֆրանսերէն լեզուով մի գանգատագիր է, ուղղուած չոգենաւային Ընկերութեան Սամսոնի Գործակալութեան:

«Որովհետեւ այս գծի վրայ Հայերը յաճախ երթեւեկութիւն ունեն եւ կարող են պաշտօնեաների զօշաքաղութեանը զոհ երթալ, ուստի չարիքի արմատը մի անգամից կտրելու եւ կարգ ու կանոն հաստատելու համար՝ անպատճառ բողոքագիր պէտք է տալ, որպէսզի այլեւս մեր գլխին եկածի նման անկանոնութիւններ չը պատահեն»:

Գովելի միտք. դա Հայի գլխաւոր յատկանիշներից մէկն է. նոր չէ, որ Հայը աշխատել է կարգ ու կանոն հաստատել այն տեղերում, ուր նա բացակայել է. Թիւրքիան այդ մասին աւելի քաջ պիտի ունենայ:

Թուրք ճանապարհորդները այդ թուղթը չեն ստորագրել, ասելով որ դա Կառավարութեան գործն է. նրանք էլ իրենց ցեղային հոգեբանութիւնն են արտացոլացրել:

Յոյներից շատերը վախեցել են. միայն 5—6 հոգի են ստորագրել:

Բոլոր հայերը ստորագրել են բացի երկու հոգուց:

Սրանցից մէկը չի ստորագրել այն պատճառաբանութեամբ՝ թէ ինքը գործ ունի Ընկերութեան հետ. վա՛յ թէ իրեն վնաս գայ, թէեւ ձեռնարկի գաղափարին համակրող է:

Միւսի առարկութիւնը բոլորովին բնորոշիչ գիծ ունի:

Այս մէկը Կարնոյ «ՍԱՆԱՍԱՐԵԱՆ»ը աւարտելուց յետոյ՝ Բերլին է գնացել՝ արուեստագիտութիւն սովորել, վերադառնում է տուն: Ճանապարհորդական նորաձեւ զգեստներ հագած՝

քիթը միշտ վեր, ամպարտաւան ձեւերով, հեռադիտակը աչքին՝ երբէք չի զիջանում իր հայրենակիցների հետ տեսնուելու, նրանց հետ խօսակցելու. շարունակ իրեն հեռու է պահում հայերից:

Գիտնալով որ հայ է. անցած ժամանակին սրան էլ են առաջարկել, եւ պատասխանել է. «Ի՞նձ ինչ. իմ ի՞նչ գործս է. ես շատ լաւ տեղ ունէի եւ ամէն ծառայութիւնից էլ գոհ. ուրիշների ցաւը ե՛ս ինչո՞ւ պիտի քաշեմ. ե՛ս այդպիսի մի գանգատ չեմ ստորագրիլ...»:

Ծիծաղելով՝ գանգատողները ասում էին. «Մե՞ղք Սանասարեանին, որ դրամ է ծախսել եւ իր դպրոցի չէմքից այսպիսի մէկին հանել...»:

Բայց իմ մտածմունքս այդ չէր. ես քրքրում էի մեր յեղափոխական կեանքի պատմութիւնը: Գերմանական համալսարաններից աւարտող՝ գրեթէ ոչ ոք գտայ, որ գործօն եւ շարունակական դեր կատարած լինէր մեր յեղափոխական շարժումների մէջ՝ թէ՛ առաջ եւ թէ՛ յետոյ:

Հայ բոլոր Կուսակցութիւնների մէջ աչքի ընկնող՝ ականաւոր գործիչները, խմբագիրները, պրօպագանդիստ-կազմակերպիչները, կուսակցական հիմնադիրները կա՛մ հայ դպրոցներից աւարտող, դուրս եկողներ են եղել, կա՛մ ռուսական գիմնազիաներից եւ համալսարաններից եւ կա՛մ, ըստ մեծի մասին, Ֆրանսիական, Զուիցերիական համալսարաններից ընթացաւարտներ:

Թիֆլիզի Ներսիսեան Դպրանոցի եւ Էջմիածնի Գէորգեան Ճեմարանի այն աշակերտները, որոնք գերմանական համալսարաններն էին յաճախել. նրանք՝ ըստ մեծի մասին, անուղղայ պահպանողականներ էին դարձել կեանքի մէջ: Իսկ Ռուսական, Ֆրանսիական, Զուիցերական համալսարան գնացողները՝ գրեթէ ջախջախիչ մեծամասնութեամբ՝ մեր յեղափոխական շարժման գործօն ազդակները, պարագլուխներն էին հանդիսացել:

Կրթութեանց սիստէմի մասին այդ իրողութիւնը շատ բան է բացատրում:

Դպրոց երթալը, համալսարան աւարտելը դեռ հերիք չէ՛. խնդիրն է ոգին, տիրապետող գաղափարը, անբաժան իդէալը, որ ենթակայի հոգին, միտքը, էութիւնը պարագրում, տոգորում, իր թեւերի մէջն է առնում:

Մեր կեանքը «համալսարանաւարտ», բայց անպէտք երիտասարդներով լի է․ որոնք ե՛ւ ո՛չ մի օգտակարութիւն ունեն՝ հասարակական տեսակէտով։ Եւ գերմանական համալսարաններից աւարտածները աչքափակիների մէջ շատ մեծ տոկոս են կազմում։

«Համալսարանակիրթ անկեղուներ»ը յաճախ գիտութիւնը բացառապէս իրենց անձնական օգտին են ծառայեցրել, քան հասարակութեան․ եւ դրանցից չէ, որ հասարակական գործ պէտք էր սպասել։

Նաւորդները խռնուեցին կամրջակի վրայ․ ամէնքի դէմքի վրայ ուրախութեան ժպիտները փայլել սկսան։

Մօտենում էինք Սամսոնին։

ԳԼՈՒԽ Գ․

ՍԱՄՍՈՆՈՒՄ

ԴԻՄԱՒՈՐՈՂՆԵՐԸ․— Ուրբաթ, երեկոյեան ժամը 2–ն է․ հորիզոնի վրայ պայծառ կերպով երեւիլ սկսեց Սամսոնը, կիսաբոլորակի վրայ տարածուած։

Հազիւ շոգենաւը խարիսխը ձգեց․ երբ երեք նաւակ սկսեցին առաջանալ․ դրանք ընկերներն էին, ամէն մէկի ձեռքին մի մի դրօշակ՝ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան գինանշանով․ բոլորի կուրծքին էլ չքաժապաւէններ։ Սեւ Ծովի ծփանքը իրեն ընկերակից ունէր «Մեր Հայրենիք»ը եւ «Հնչակ»ը։

Ողջագուրուեցինք․ դուրս ելանք ափ։ Նաւամատոյցի վրայ խռնուած հայ հասարակութեան հետ միասին՝ ուղղուեցանք դէպի մեր Ակումբը, որ այդ ժամանակ գտնւում էր շուկայի մէջ տեղը՝ քաղաքի կեդրոնական մասում։

Ակումբը շատ գեղեցիկ կերպով զարդարուած, կահաւոր–

ուած է. ներկայ են ո՛չ միայն ընկերներ, այլ Սամսոնի հայ հասարակութեան աչքի ընկնող բոլոր անդամները, կուսակցական եւ ոչ-կուսակցական:

Մի քանի խրախուսական խօսքեր ասելուց յետոյ՝ բոլորս միասին դուրս եկանք դէպի եկեղեցի գնալու, ուր տարւում էր յայտնի ջութակահար Դուլեանի դագաղը, որ յանկարծամահ էր եղել Մարզուանի մէջ: Հանգուցեալը մեր Կուսակցութեան մօտիկ համակիրներից էր. ուստի ընկերները դագաղի վրայ առանձին ծաղկեպսակ էին դրել:

Եկեղեցական արարողութիւնը կատարուելուց յետոյ՝ բոլոր ընկերներով միասին վերադարձանք մեր Ակումբը՝ մի փոքր հանգչելու համար:

ՎԱՐՉԱԿԱՆ ԵՒ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ.— Երեկոյեան ժամը 8-ին տեղի ունեցաւ Վարչական եւ ապա Անդամական ժողով:

Այդտեղ են բոլոր հին ու նոր ընկերները. սրանցից շատերը քառորդ դարու յեղափոխական պատմութիւն ունեն եւ աչքի դեր են կատարել Փոքր-Հայքի մեր շարժումների մէջ. չէ՞ որ Հայրենակցութեանց գլխաւոր բանալիներից մէկն էլ Սամսոնն էր:

Այդտեղ են Սարգիսը, Վահանը, Նազարէթը... մեր պատմութեան կենդանի վկաները: Ընկերներից շատերը դեռ վէրքեր ունին՝ ալիքացած. շատերն էլ թէեւ ծերացած՝ բայց տակաւին իրենց երիտասարդական աշխուժութիւնը չեն կորցրել:

Բոլորը ոտքի են կանգնում պարտականութեան դաշտի մէջ մեռած, գնացած ընկերների յիշատակը յարգելու համար:

Ընկերների ընդհանուր թիւը հասնում է 100-ի: Մասնաճիւղի շարքերումն են քաղաքի ծաղիկ երիտասարդութիւնը, ընկերային որոշ դիրք ունեցող բոլոր անհատները:

Ժողովը անցնում է խանդավառութեամբ:

Որոշւում է աճէլիէք:

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.— Նախապէս ցրուած ազդագրերի համաձայն, ժամը 9·30-ին կայացաւ Համակրական ժողով. եկել է աչքի բազմութիւն. Ակումբի ընդարձակ սրահը հազիւ կարողանում է հիւրերին բովանդակել. բոլոր ընկերները ոտքի վրայ են:

Խօսակցութեան նիւթն է օրուան Հրատապ խնդիրները եւ Հայ ժողովրդի բռնելիք դիրքը։

Ամէնքը մեկնում են գոհ․ պահանջելով, որ իրարու յետեւից մի քանի հրապարակային ժողովներ սարքուեն։

Գիշերը ուշ ատեն՝ հասարակութիւնը ցրւում է։

Մենք մնում ենք Ակումբը՝ գիշերելու։

Կէս գիշերը անց՝ ոտքի ձայնից արթննալով՝ տեսանք, որ ընկերներից 3-ը հերթով գիշերապահութիւն, հսկողութիւն են անում։ Հարցրինք պատճառը․ միայն այն ասացին, որ այդ կարգադրութիւնը վարչութիւնն է արել։ Ինչքան որ ընկեր Մուրատը համոզեց տուն երթալ, վստահացնելով, որ ոչինչ դժբախտ չի պատահիլ․ անկարելի եղաւ․ պահակները իրենց դերի մէջը մնալ ուզեցին մինչեւ լոյս-առաւօտ։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ․— Շաբաթ, 13 Մայիս։ Հազիւ լուսաբաց՝ բոլոր ընկերները հաւաքուեցան։ Տեղի են ունենում կարգադրութիւններ շրջակայ հայաբնակ վայրերի նկատմամբ։

Առաջին գործերից մէկն է լինում՝ Մասնաճիւղի Վարչութեան կազմած ցուցակի համաձայն, այցելել քաղաքի մէջ աչքի ընկնող զանազան անձնաւորութիւնների, որոնք հասարակական գործերից իրենց հեռու չեն պահում։

Մեզ հետ է նաեւ պատուելի Փանակ Իսկէնտէրեանը, որին ճանաչում էի դեռ 1908-ին, Իզմիրի շրջանին այցելութիւն տուած ժամանակից։ Հայերէն լեզուով տուած դասախօսութիւններս, հրապարակային ժողովների մէջ ասածներս նա այնքա՛ն ճարտար եւ հարազատ կերպով էր Թուրքերէնի թարգմանել, որ ունկնդիրների մասնաւոր գոհունակութեանն էր արժանացած։

Հայերին այցելելուց յետոյ՝ Վարչութիւնը եւ ընկերները միահամուռ ցանկութիւն են յայտնում, որ Իտտիհատականների երկու ակումբն էլ այցելենք, որպէսզի թշնամական բացատրութիւնների տեղիք չը տրուի։ Ընդունում ենք․ լուր ուղարկում, որ այցելութեան պիտի գանք։

Իտտիհատականները հաւաքուած՝ սպասում են։

Մեկնում ենք․ հետս են ընկեր Մուրատը, Վարչութեան երկու անդամները եւ պատուելի Փանակը։

ՇՄԱՒՈՆԻ ՔԱՐՎԱՆՍԱՐԱՆ․— Անցնում ենք շուկայի բազ-

մամարդ փողոցներով. ընկերները կանգ են առնում մի լայ-նադուռ քարվանսարայի առաջ եւ ասում, որ Շմաւոնը այս քար-վանսարայի դռնից է փախել. եւ դրա համար էլ անունը մնացել է «Շմաւոնի քարվանսարայ»:

Քարվանսարայի դիրքը, շուկայի բազմամարդութիւնը աչ-քի առաջ ունենալով՝ անկարելի է չը հիանալ Շմաւոնի կատա-րած այդ յանդգնութեան վրայ: Ու հէնց դրա համար էլ նրա վրայ ահագին առասպելներ կան հիւսուած Փոքր–Հայքի բոլոր շրջաններում՝ թէ՛ հայ եւ թէ թուրք հասարակութեան խա-ւերում:

ԻՏՏԻՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԸ.— Սամսոնի Իտտիհա-տականների Ակումբը մի հին շէնք է. մի քանի սենեակներից բաղկացած: Հազիւ դռնից ներս մտած՝ մեզ են դիմաւորում Ակումբի վարչութեան անդամները եւ բարի գալուստ մաղ-թում: Ներկայ են բաւականին թուով թուրքեր, շատերը փաթ-թոցաւոր. մէջներնին կան զինուորականներ էլ: Տեղի է ունե-նում մտքի փոխանակութիւններ ժամանակակից կացութեան մասին: Խօսողների մէջ աւելի աչքի են ընկնում Ամասիայի մուասէբէճիճ եւ Մուստաֆա Նէճիպ բէյը:

Ընդհանուր երեւոյթն է, որ Սուլթան Համիդի տապալու-մից գոհ են. բայց խոստովանում են, որ գտնւում են մի մեծ անստուգութեան առաջ. կարծում են, որ երկրի միջազգային կացութիւնը աւելի անապահով ուղղութիւն է առել:

Խօսքը դարձնում եմ Մուսթաֆա Նէճիպ բէյի վրայ, որ օրուան հերոսներից մէկն է: Նա Կիմիշ Հաճի գիւղացի է, Մարզուանի մօտ, բռնապետութեան շրջանին եղել է «մի-լայըմ». պատմական դէմք է, տերրորն է Սուլթան Համիդի ամենամտերիմ Նազըմ Բէկի, որ գնացել էր Սալօնիկ, այնտեղի «Երիտասարդ զինուորականներին» լրտեսելու եւ տեղեկագիր տալու: Թէեւ հազիւ 35 տարեկան, բայց Մուստաֆա Նէճիպը Իտտիհատի բացարձակ լիազօր ներկայացուցիչն է Փոքր–Հայքի ամբողջ շրջանի եւ նրա յարակից մասերի համար: Նա ամէն ինչ է. կառավարութիւնը ինքը:

Ասում եմ. «Բէյ էֆէնդի, թող վիրաւորանք չը համարուի հարցնելը, ի՞նչպէս եղաւ որ դուք այդ տերրորական գործո–

դութիւնը կատարեցիք: Այդպիսի արիական գործեր միայն Հայ Յեղափոխականներն էին ցոյց տուել: Իրաւ է ձեր մէջ զինուորական քաջութիւն պակաս չի եղել, բայց տերրորական՝ երբէք, մինչ այդ. որովհետեւ դրա համար կամքի եւ գաղափարի առանձին մղում պէտք է, որից Թուրքերը զուրկ են եղել, եւ դուք առաջին օրինակն է, որ տուել էք»:

Մուստաֆան համեստութիւն ձեւացնելով՝ ժպտաց, խոստովանեց, որ հայերը այդ կողմից գերազանց առաքինութիւններ են ցոյց տուել, որ անկարելի է ուրանալ, եւ վերջը սիրտ առնելով, մի առանձին ոգեւորութեամբ պատմեց.

«Ես Նազըմ Բէկին զարկեցի այն ժամանակ, երբ քննութիւնները կատարել, վերջացրել էր, պատրաստւում էր նաւ նստել, Կ. Պոլիս երթալու, իր տեղեկագիրը տալու: Մեզանից հարիւրաւորները պիտի ոչնչանային, որովհետեւ շատերը երկիւղից ամէն բան խոստովանել էին: Մահու եւ կենաց խնդիր կար. ընկերներիցս շատերը սկսան լալ, աղաչել: Անկարելի եղաւ Նազըմի ձեռքից կազմուած արձանագրութիւնները առնել: Ես ու մի քանի ուրիշներ ամէնից աւելի էինք վտանգուել: Ոչ ոք տեղից չուզեց շարժուել. վերջին րոպէին ես յանձն առայ գնդակահարել, մտածելով որ մի օր ուշ մեռնելու փոխարէն՝ մէկ օր առաջ մեռնեմ. չէ՞ որ վերջապէս պիտի մեռնեմ: Ոյժս հաւաքեցի՝ եւ տարձանակս պարպեցի. Նազըմը թաւալգլոր ընկաւ»:

— Աչքի ընկնող՝ ձեր միւս ընկերները ովքե՞ր էին:

— «Էնվէր, Թալաթ, Խօմէր Նաճի: Ջավիտ բէկը դեռ մեզ հետ միացած չէր այդ ժամանակ»:

— Ի՞նչ տպաւորութիւն թողեց այդ տերրորական գործողութիւնը:

— «Մեր մէջ մինչ այդ՝ այդպիսի բան պատահած չէր. մի կողմից բոլորի վրայ ահ ու սարսափ տիրեց. միւս կողմից՝ փախող փախողի եղաւ. ոտք ունեցողը լեռ բարձրացաւ, դրամ ունեցողը՝ հեռու տեղեր ապաստանեց: Երբ, ժամանակ անցնելուց յետոյ, Շէմսի փաշան եկաւ եւ Աթըֆ բէյն էլ նրան վիրաւորեց. այն ժամանակ մեր Կօմիտէի ազդեցութիւնը ահագին եղաւ. մարդիկ կարծում էին մենք հազարներ ունենք մեր յետեւը կանգնած»:

— Ո՞ր Աթըֆ բէյը:

— «Նա, որ այժմս Երեսփոխանական Ժողովի անդամ է»:

— Զարկելուց յետոյ՝ դուք ո՞ւր մնացիք:

— «Լեռը փախայ, Սանդանսկու մօտ: Այնտեղ նրա հետ մնացի, մինչեւ որ զինուորական ապստամբութիւնը ծագեց, յաղթող հանդիսացաւ: Դրանից յետոյ ես դարձայ Էնվէրի միւլազըմը»:

— Այդ «ապստամբութեան» ժամանակ Մակեդոնացիները, Բուլղար՝ յեղափոխականները ձեզ օգնեցի՞ն:

— «Այո՛. ինչպէս չէ՛. նրանք է, որ մեզ առաջնորդեցին: Կազմակերպական դրութիւն, ներքին կանոնադրութիւն նրանք մեզ սովորացրին. նրանից մենք շատ բան ենք պարտական. առանց նրանց օգնութեան մենք շատ բան չը պիտի կարողանայինք անել»:

— Հիմայ ի՞նչ պաշտօն ունիք:

— «Սահմանադրութիւնից յետոյ՝ Մեծ Կղզին աքսորուած նախարարների վրայ ինձ հսկիչ, պահապան նշանակեցին...»:

— Եթէ այդ նախարարները յանցաւոր էիք դատել, ինչո՞ւ բաց թողեցիք, արձակեցիք:

— «Նախ, որ մեր Կեդրոնական Վարչութիւնը նրանց քամեց. բոլոր հաւաքածները ձեռքներիցը առաւ, մաքրեց: Եւ յետոյ՝ եղածը եղած համարելով՝ ներեց. մանաւանդ որ նրանցից շատերը ցանկութիւն յայտնեցին մեզ անդամակցել: Միջնորդութիւններ եղան. Կեդրոնական Վարչութիւնը խորհրդակցեց, տեսաւ, որ նրանցից դեռ կարելի է օգտուել, քանի որ մէջերնին շատ փորձառուներ կային եւ անցեալի անցած-դարձածից տեղեկութիւններ ունէին»:

— Յետո՞յ:

— «Յետոյ, մեր Կոմիտէի յատուկ որոշումով, որպէս ընդհանուր լիազօր ներկայացուցիչ, այցելեցի Վան, Մուշ, Բիթլիս, Դիարբէքիր, Խարբերդ եւ Սեբաստիա: Հիմայ էլ Սամսոնից սկսած մինչեւ Ճանիկ եւ Սեբաստիա՝ լիազօր ներկայացուցիչ եմ: Այդ շրջանների պատասխանատու քննիչը, տեղն ու տեղը կարգադրութիւններ անողը ես եմ»:

— Ձեր տեսած գործերը ընդհանրապէս ի՞նչ են:

— «Քննութիւն եմ բաց անում. ոչ-իտտիհատական պաշտօնեաներին պաշտօնից հեռացնում եմ եւ նրանց տեղը մեր ընկերներին եմ կարգում»:

Արդէն լսել էի, գիտէի, որ Իտտիհատական ազգայնական
ծրագրի գործադրիչը նա էր այդ շրջաններում :
— Ա՞նդամ էք ձեր Կեդրոնական Վարչութեան :
— «Այդ մասին իրաւունք չունեմ բան ասելու» :
— Հիմայ ովքե՞ր են ձեր Կուսակցութեան իսկական վա-
րիչները :
— «Կը ներէք, որ այդ մասին էլ որոշ բան չը պիտի կա-
րողանամ ասել» :
— Ահմէդ Րիզա բէյը հիմայ ի՞նչ պաշտօն ունի ձեր մէջ :
— «Նա գործից քաշուած է. գործօն դեր չունի» :
Այդ պատասխանին ես խնդացի, ինքն էլ ինձ հետեւեց, ինչ-
պէս եւ ներկաները...
— Ի՞նչ է ձեր տպաւորութիւնը. ի՞նչ համոզում ունիք.
քրդական ընդհանուր, ազգային միութիւն կարո՞ղ է լինել, այն
աստիճան, որ մի օր պետական սպառնալիքի հանգամանք աս-
նի, ինչպէս որ մի քանի քուրդ ազգայնականներ մտածում են :
— «Երբէ՛ք. այդ կողմից բոլորովին ապահով կարող ենք
լինել : Քրդերի մէջ ո՛չ մի ժամանակ ընդհանուր միութիւն կա-
րող է լինել՝ մանաւանդ մեր Պետութեան դէմ : Նախ մեր երկրի
հարաւային լեռներում, Միջագետքի վերին մասերում, Տաւ-
րոսի լեռնաշղթայի հարաւային փէշերի վրայ տարածուող Սի-
լէյմանիէի քրդերը ուղղակի Թրքացումի ուղիի մէջն են մտել.
մեր քիւրդ պաշտօնեաներից մեծամասնութիւնը նրանցից են.
նրանք ո՛չ մի պարագայում կարող են եւ կը ցանկանան ընդհա-
նուր գործ կատարել Հիւսիսային եւ Արեւելեան կողմերը եղող-
ների հետ, որ աւելի լեռնակեաց, վրանաբնակ են եւ նախնական
դրութեան մէջ են գտնւում : Յետոյ՝ կրօնականները, շէյխերը,
գլխաւոր ցեղապետները կան, որոնք մեր ձեռքին են եւ շատերն
էլ պետական գանձարանից ռոճիկ ստացողներ : Դրանց հետ
կան ե՛ւ Համիդիէները, որոնք պետական մեծ կապ են : Բացի
դրանից՝ իրենց մէջ տիրող աւատապետական դրութիւնը եւ
մնայուն թշնամական փոխադարձ յարաբերութիւնները կան,
որոնք երբէք թոյլ չեն տալ, որ նրանք իրարու հետ միանան
եւ մեզ դէմ քայլեն : Այդ բոլորից աւելի քրդի հոգեբանու-
թիւնը կայ : Նա մինչեւ որ նախապէս չը համոզուի, որ ինքը
յաղթող պիտի լինի, յառաջ չի նետուիլ, յարձակում չի գործիլ :
Աչքի առաջ պէտք է ունենայ ե՛ւ քրդերի ցրուածութիւնը թէ՛

մեր երկրի, թէ՛ Ռուսաստանի եւ թէ՛ Պարսկաստանի մէջ: ... Թուրքը իր ջախջախիչ մեծամասնութեամբ՝ մի անտան-անտեղ, կիսանօթի, խաշնարած, լեռների, ձորերի մէջ ապրող աւազակաբարոյ ցեղերի շեղջակոյտ է, անկազմ, անկերպարան: Նրանք չեն, որ պիտի յաջողեն իրարու հետ միանալ եւ ազգութիւն կազմել ու մեր պետութեանն էլ սպառնալ: Այնպէս որ, քրդերից մեզ ո՛չ մի վտանգ է սպառնում եւ կարող է սպառնալ»:

— Շատ լաւ. երբ քրդական միութիւն, ազգութիւն չը կայ, չի կարող լինել. ապա էլ ինչո՞ւ ձերոնք յաճախ մէջտեղ են գլորում քուրդ ազգի պահանջները. նրա էլ ինքնավարութեան խնդիրը, ամէն անգամ, երբ հարցը դառնում է Հայ Ազգի պահանջների շուրջը. արդեօք դա մեր պահանջները հակակշռելու, հակազդելու, չէզոքացնելու դիտումո՞վ է լինում:...

Մուստաֆան եւ իր ընկերները լուռ մնացին. ապա սասցին. «Ամէն երկիր իր քաղաքականութիւնը ունի... Յոյս ունենք, որ շուտով ամէն թիւրիմացութիւններ մէջտեղից կը վերանան եւ իրարու կը հասկանանք, բոլորս էլ մէ՛կ սիրտ, մէ՛կ հոգի կը լինենք»:

— Դուք ի՞նչպէս գտաք այդ շրջանների հայերի եւ քրդերի փոխ-յարաբերութիւնները:

— «Այս օրերիս մէջ՝ Կարնոյ կուսակալութիւնը կարելի է ապահով համարել ներքին ցնցումներից. այդտեղ ներքին խռովութեան վտանգ չը կայ, որքան որ ես կարողացայ հասկանալ, իրերի դրութեան մէջ թափանցել: Վանը կարելի է մասամբ ապահով նկատել: Բիթլիսը երերուն վիճակ ունի: Իսկ Դիարբէքիրի եւ Խարբերդի շրջանների մէջ՝ կարող են ներքին խռովութիւններ, ցնցումներ տեղի ունենալ, որովհետեւ այդ կողմերում հայերի եւ քրդերի յարաբերութիւնները բաւականին լարուած են եւ տեղական շատ ազդեցիկներ կան, որոնք կարող են գրգռութիւններ յառաջ բերել, եթէ ուզենան: Իսկ Փոքըր-Հայքի շրջանը կարելի է կատարելապէս ապահով համարել»:

— Կը ցանկանայի, որ ինձ հետ խօսէիք, բացուէիք՝ որպէս ճշմարիտ յեղափոխական, ազատական հոգով: Ասացէք, խնդրեմ, այդ տեղական գրգռումների մէջ՝ տեղական կառավարութիւնը մաս չունի՞. պարզեցէ՛ք այն՝ ինչոր իրողու-

թիւն է:

— «Չեմ կարող ասել, որ ամբողջ կառավարութիւնը· բայց կառավարական ագենցիկներ կան, որոնք այդպիսի խռովութիւններ յարուցանելու, սննդելու, արծարծելու եւ վառ պահելու մէջ՝ մասնաւոր շահեր ունեն»:

— Շնորհակալ եմ անկեղծ խոստովանութեանդ համար· որովհետեւ ես ինքս էլ շատ տեղեկութիւններ եմ հաւաքել, բազմաթիւ թուղթեր ունեմ ձեռքիս, որոնք գալիս են միաբերան հաստատելու, որ ծագած ներքին, տեղական խռովութիւնների եւ տարաձայնութիւնների մէջ՝ միշտ եւ ամէն ժամանակ, եթէ ո՛չ կառավարութիւնը ամբողջապէս՝ գէթ նրա տեղական ագենցիկ եւ պատասխանատու մասը մասնակցութիւն է ունեցել եւ ինքը առաջին գրգռիչի, վառիչի դերն է ստանձնել, ովին հանդիսացել: Սա աւելի քան ցաւալի մի իրողութիւն է: Բայց անցնենք:

Կուզէի հարցնել նաեւ, թէ քուրդ-արաբական միութիւն կարո՞ղ է լինել· դրա նշանները տեսա՞լ էք· ի՞նչ կարծիք ունիք այդ մասին:

— «Երբէ՛ք· ո՛չ մի տեղ: Քիւրդերը եւ Արաբները, թէեւ երկուսն էլ Իսլամներ, բայց բոլորովին տարբեր մշակոյթի, տարբեր նկարագրի եւ բնաւորութեան տէր ժողովուրդներ են. Նրանց մէջ բնաւ նմանութիւն չը կայ: Քիւրդը Արաբից աւելի է խորշում, քան Հայից: Քիւրդը աւելի շատ ընտանեկան, բարեկամական կապեր է պահում Հայի, քան Արաբի հետ: Քրդերը եւ Արաբները մի տեսակ բնական ներհակութիւն ունեն իրարու հանդէպ· նրանք իրարու քաշել, տանել չեն կարողանում. Նրանցից ամէն մէկը իր առօրեայ յարաբերութիւնները աւելի Հայերի հետն է անում, քան միմեանց»:

«Իմ շրջակայած վայրերում՝ Արաբները Ակումբներ ունեն. Նրանց մէջ ազգային ոգի աւելի կայ, է՛լ աւելի դժգոհ են մեզանից· բայց աչքի առաջ ունենալով Իսլամութիւնը, որ կրօնա-քաղաքական մի գաղափարակցութիւն է բերում իր հետեւողների մէջ. ուստի դժուար թէ այդ տարրերը մի օր միանան եւ մեր պետութեան սպառնան: Բացի դրանից, մենք միշտ միջոց ունենք նրանց իրարուց զատելու, հեռացնելու եւ առաջին պատեհութեամբ երկուսին էլ ճզմելու: Այս էլ կայ, որ Միջագետքի եւ Սուրիայի մէջ գտնուող Արաբները շատ թոյլ են

եւ փափուկ, մեղկ կեանքի սովոր· նրանք Անապատի Արաբների սիրտն ու հոգին չունեն· ուստի դրանցից չէ, որ մեզ վտանգ կարող է գալ»:

— Այս ցնցումները, որից պետական անապահովութիւն է գալիս եւ բոլոր ազգերն էլ տուժում են, աւելի ո՞ր տարրերից, ո՞ր դասից է գալիս:

— «Ամենից աւելի՝ Էշրաֆներից· նրանց ազդեցութիւնը շատ մեծ է եւ գերակշիռ ո՛չ միայն կառավարական գործերի մէջ՝ այլեւ իրենց շրջաններում: Մեր հին դրութեան հետեւելով, ուրիշ միջոց չը գտնելով, կառավարութեան անունը եւ ազդեցութիւնը գէթ անուանապէս պահելու համար՝ տեղական կառավարական բոլոր գործերը յանձնուել են այդ Էշրաֆներին, որոնք իսկապէս կառավարութիւն չեն ճանաչում· իրենց սեպհական կամքից բղխող օրէնքն ու շահն է, որ թագաւորեցնել են տալիս: Նրանց ազդեցութիւնը կտրելը, խորտակելը եթէ ո՛չ բացարձակապէս անկարելի, գէթ այժմս աւելի քան դժուար է, անհնարին»:

— Բայց քանի որ Էշրաֆների գոյութիւնը այդքա՛ն վնասակար էք գտնում պետական վերակազմութեան, նորագունացման տեսակէտից, ապա ինչո՞ւ նրանց դէմ կուսակցական պայքար չէք մղում, չէք աշխատում նրանց հիմնական տապալումը յառաջ բերել: Աւատականութիւնը դեռ այս երկրում կանգուն դրութիւն ունի· որքան շուտ նա ջնջուի, այնքան էլ աւելի լաւ:

— «Դա անկարելի է· նախ նրանցից շատ շատերը, բոլոր գլխաւոր շրջաններում, մեր Կուսակցութեան անդամներն են այժմս, եւ ազդեցիկ անդամները· գաւառական մեր Ակումբները եւ տեղական կազմակերպութիւնները համարեա թէ բոլորն էլ նրանց ձեռքերումն են: Եթէ փորձենք՝ ներքին խռովութիւններ, ցնցումներ ծայր կը տան· իսկ մենք հիմայ, որպէս Կուսակցութիւն, դեռ շատ թոյլ ենք: Բացի դրանից՝ մեր գաղափարական ընկերներից մի քանիսը այն համոզումն ունեն, որ ո՛չ միայն Էշրաֆութեան վերջ չը պիտի տալ· այլ՝ ընդհակառակը՝ նրանց արտօնութիւնները, առանձնաշնորհումները է՛լ աւելի պէտք է զօրեղացնել, ուժեղացնել, եւ նրանց դիրքը ժողովրդի աչքին է՛լ աւելի բարձրացնել· ճիշտ այնպէս, ինչպէս որ Անգլիայում եւ Գերմանիայում»:

— Բայց չէ՞ որ ինքներդ խոստովանում էք, որ նրանք վընասակար դեր են խաղում, եւ նոյն իսկ այս քաղաքիս մէջ ձեր Մասնաճիւղը նրանք երկու մասի են բաժանել եւ ընկել էք ներքին՝ կուսակցական անհամաձայնութիւնների մէջ:

— «Ճիշտ է. բայց որոշել ենք, առայժմս, ժողովրդային այդ դասին ձեռք չը տալ, նրան չը դիպչել. Թողել ենք, որ իրերը իրենց նախկին կարգով ընթանան. որովհետեւ, ինչպէս ասացի, մէջերնին կան շատերը, որոնք օգտակար են մեզ եւ անհրաժեշտ. ուստի չենք կարող բոլորին մէկ ջրով լուանալ. նրանց հետ մեր կապը խզել անկարող ենք. եւ եթէ ուզենանք էլ՝ չենք կարող, որովհետեւ ոյժ չունենք, եւ ի զուր տեղը մեր Կուսակցութեան դիրքն ու տիրապետութիւնը կը վտանգենք»:

— Չէ՞ որ Պարլամէնտը ձեր ձեռքն է. այնտեղ ջախջախիչ մեծամասնութիւն ունէք. զինուորական իշխանութիւնն էլ ձեր կողմն է...

— «Այո՛. բայց Պարլամենտի մեծամասնութիւնը մեր այդ ոյժերի ներկայացուցիչներից է կազմուած: Վերջապէս, կուսակցական որոշում ենք կայացրել՝ հիմակ ու հիմայ այդ դասով չը զբաղուել եւ նրանց իրենց նախկին վիճակին թողնել»:

— Ապա ի՞նչ կասէք քիւրդ ցեղապետների, դէրէբէյների համար. չէ՞ որ դրանք խռովութեան բներ, անապահովութեան ազդակներ, խաղաղ ժողովրդի աշխատանքի թշնամիներն են:

— «Նրանց մէջ էլ մեզ կողմնակից ընկերներ շատ ունենք: Առաջ մի այդպիսի մտածմունք անցաւ մեր Կեդրոնական Վարչութեան մտքով. բայց շուտով յետ կեցան. մանաւանդ որ նրանցից շատերը ինքնակամ պատերազմի ելան՝ ապստամբ Ալբանացիների դէմ: Նրանց էլ բան չը պիտի կարողանանք անել: Քրդական այրուձիին մենք շատ պէտք ունենք՝ այս օրերիս մէջ»:

— Պարզ է. դուք ամէն բանից առաջ ձեր Կուսակցութեան գոյութիւնը, ամրապնդումը, զօրեղացումը աչքի առաջ ունէք. եւ ո՛վ ձեզ հետ է, ձեր ընկերն է, այն դասը, որ ձեզ համակիր է, փոյթ չէ ի՛նչ տեսակէտից եւ շահերից առաջնորդուած, դուք չէք ուզում նրանց դիպչել, նրանց շահերը ոտնակոխ անել եւ ժողովրդական իրաւունքները պաշտպանել: Եւ սակայն

դա սխալ գործելակերպ չէ՞, մի՞թէ դեռ համոզուած չէք, որ այս երկիրը ապրելու, այս պետութիւնը իր գոյութիւնը պահելու տեսակէտից՝ բացարձակ անհրաժեշտութիւն է, որ նա եւրոպականանայ, իրաւական նորագոյն պետութիւն դառնայ: Ձեր գործելակերպը, ղեկավարիչ մտածմունքները ո՛չ միայն սխալ են, այլ դուք ինքներդ ձեր ձգտումների դէմ էք գնում, եթէ, իրաւ, ցանկանում էք իսկական Պարլամենտականութիւն առաջ բերել, ինչպէս որ յաճախ բարձրաձայն յայտարարում էք:

— «Ճիշտ է. առարկութիւն չունեմ. բայց այդ բոլորը մեզ համար ապագայի խնդիրներ են...»:

— Ի՞նչ էք կարծում Ալբանական Միութեան մասին. ենթադրում եմ, որ նրանց հետ շատ լաւ ծանօթ էք:

— «Անշուշտ. Ալբանացիներին շատ լաւ եմ ճանաչում. նրանց միութեանը հաւատում եմ. կարող են, կը յաջողեն. ոգեւորութիւն կայ իրենց միջեւ, եւ մեր պետութեան ազդեցութիւնը այնտեղ շատ թոյլ է»:

— Ի՞նչ մտադրութիւն ունէք. ի՞նչպէս էք ուզում այդ երկիրը բարեկարգել, ձեզ հետ կապել:

— «Միանման կրթութիւն տալով. բոլորին էլ օսմանականութեան մէջ տարրալուծելով. նրանց հոգին պէտք է փոխել»:

— Դա, ժամանակին, Բէչիդ եւ Ալի փաշաներն էլ ուզեցին անել. բայց ի՞նչպէս պիտի կարողանաք այդ երկիրը կրթական հաստատութեան ցանցերով տարածել՝ ձեր ներկայ ուժերով: Բացի դրանից՝ դրանով միւս ազգութիւնների դպրոցները ջնջելու, մէջտեղից վերցնելու ենթադրութիւնը չունի՞ք՝ այդպիսի մտածմունքներով առաջնորդուելով:

Խօսակիցս այստեղ լռեց:

Մէջ ընկաւ Ամասիայի մուսաէբէճին, ասաց որ. «Իրենք, որպէս ժողովուրդ՝ նոր են ասպարէզ գալիս. յայտնի բան է, որ շատ սխալներ կունենան, քանի որ այժմս՝ մինչեւ ցարդ իրենց համար անծանօթ ճանապարհներից պիտի քայլեն: Իրենք նոր են զարթել, եւ տեսնում են, որ երկրի վաճառականութիւնը, արհեստներ.. ազատական զբաղումները արդէն բոլորը Հայերի եւ Յոյների ձեռքն են անցել. Թուրքերը շատ բան չունեն, բացի զինուորական իշխանութիւնից»:

— Դրանից ի՞նչ վնաս այս պետութեան. չէ՞ որ նրանք էլ

նոյն պարտականութիւնն են յանձն առնում դէպի պետութիւնը․ ինչոր պիտի առնէր թուրք արհեստաւորը, թուրք վաճառականը։

— «Այո՛․ բայց ուզում եմ ասել, որ թուրք ժողովրդին շատ բան չի մնացել․ իսկական ասպարէզը մեր ձեռքից գնացել է, ուրիշների ձեռքն է անցել»։

— Արդեօք կա՞յ․ դո՛ւք էլ աշխատեցէք այդ ասպարէզների մէջ յառաջ երթալ․ ո՞վ է ձեր ձեռքը բռնողը․ ամէն ինչ ընդունակութեան գործ է։

— «Հարկաւ․ բայց մենք նոր պիտի աշխատենք․ մեր Կոմիտէն է, որ ույժ, ուղղութիւն պիտի տայ, որ մենք յետ մնացած մեր ճանապարհը կտրենք, անցնենք․ մենք ինքներս ի՞նչ կարող ենք անել․ մեզ առաջնորդող է պէտք․ մեր ժողովուրդը տգէտ է, Հայերի, Յոյների չափ զարգացած չէ՛։ Խնդիրն այն է, որ մենք այլեւս ի՞նչպէս պիտի կարողանանք Հայերին, Յոյներին հասնել, քանի որ ասպարէզը նրանք արդէն գրաւել են»։

— «Այդ բոլորը շատ դիւրութեամբ կը հարթուէր, ընդհատեց Մուստաֆա Նէճիպը, եթէ մենք էլ մէկ ազգ լինէինք․ թող կրօնները տարբեր լինէին․ դրանից վնաս չէր գալ․ բայց ազգութեամբ բոլորն էլ մէկ լինէին։ Ֆրանսիայում, Գերմանիայում տարբեր կրօններ կան․ բայց մէկ ազգութիւն կայ․ եթէ մեր մէջ էլ այդպէս լինի, այլեւս ամէն բան ապահով կը դառնայ, եւ ո՛չ մի մտահոգութիւն չենք ունենալ»։

— Ուրեմն դուք դեռ ձուլման գաղափարներից ձեռք չէ՞ք վեր առել․ դեռ հետապնդո՞ւմ էք։

— «Այո՛․ բոլորն էլ օսմանցի պիտի լինեն, օսմանցի դառնան՝ հոգով, սրտով․ մենք համոզուած ենք, որ այս երկրի փրկութիւնը միայն եւ միայն դրա մէջը պիտի լինի։ Դուք այս գաղափարին հակառակ էք եւ մեր Օմէր Նաճի բէյի հետ այդ մասին խիստ վիճաբանութիւն էք ունեցել՝ Զագմազչըլար Եօգուշիի վրայ․․․»։

— Ձեզ այդ ո՞վ ասաց։

— «Ինքն էր գրել, երբ ձեր Կուսակցութեան այս կողմերի ճիւղաւորման մասին տեղեկութիւններ էր հարցրել»։

— Ճիշտ է։ Այդ տեսակէտով գաղափարի անվերածելիութիւն կայ մեր եւ ձեր մէջ։

— «Դուք, կարծեմ, աւելի անջատականներ, սէպարա-

տիտաններ էք՝ ձեր ձգտումներով եւ գաղափարներով»:

— Հարց է. նախ մենք այս երկրի մէջ՝ որպէս Ազգ պիտի ապրե՞նք. մի ազգի վերաբերեալ՝ մեր կեանքի ինքնայատուկ քաղաքական պայմանները պիտի ունենա՞նք. եթէ այո՛, ապա անջատողական ո՛չ մի ձգտում չի կարող իրականանալ: Մենք մեր ծրագրի մէջ որոշ կերպով ասել ենք, որ ճշմարիտ Սահմանադրական Թիւրքիայի հանդէպ՝ մենք անջատական ո՛չինչ ունենք: Տարասեռ ազգերից բաղկացած մի պետութիւն, մեր օրերում, ապրելու, ապահով գոյութիւն ունենալու համար՝ այդ պետութիւնը իր մէջ պատմականօրէն ամփոփուած բոլոր ազգերի ընդհանուր, համահաւասար քաղաքական սեպհականութիւնը պիտի լինի, առանց մէկի կամ միւսի մասնակի նպաստաւորումին: Այս երկիրը, այս պետութիւնը միայն մի պայմանով կարող է, եթէ ընդունակ լինի, իր գոյութիւնը պահել եւ շարունակել. երբ բաղկացուցիչ ազգերը իրենց Քաղաքական Ինքնավարութիւնը կունենան, երբ ազգերի ինքնորոշման սկզբունքը ո՛չ թէ խօսք, այլ իրականութիւն կը դառնայ, եւ այդ ուղղութեամբ քաղաքական հաստատութիւններ յառաջ կը գան՝ իւրաքանչիւր ազգին իր ինքնայատուկ պայմանները աչքի առաջ ունենալով: Եթէ այս ուղղութեամբ ընթանաք. եթէ այս ոգին տիրապետէ, մտնի ձեր պետական կազմի մէջ. եթէ Ինքնավար Հայաստանը իրականութիւն դառնայ. ապա անջատականութեան խօսք չի կարող լինել: Իսկ եթէ ձեր ձուլման քաղաքականութիւնից ձեռք չը վեր առնէք, մէկ ազգի՝ մէկ լեզուի սկզբունքը շարունակէք պաշտպանել եւ ձգտէք բաղկացուցիչ ազգութիւններին սպանել՝ օսմանեան միաձուլութիւն յառաջ բերելու դիտումով, համոզուեցէ՛ք, որ անջատականութիւնը ինքնին կը գայ, որպէս պատմական անհրաժեշտութիւն: Իրերի ընթացքը մեզանից առաջ՝ ձեզանից կախումն ունի: Կարծեմ միտքս հասկանալի եղաւ: Կայ Հայ Ազգ, կայ Հայաստան. նրանք պիտի ապրեն՝ Քաղաքական Ինքնավար ձեւի տակ. եթէ չէք ուզում մեզ ձեզանից անջատել՝ տուեցէք մեզ գոյութեան, բարգաւաճման պայմաններ՝ համաձայն մեր ազգի կենսական պահանջներին, որոնք արդարութեան եւ իրաւունքի վրայ են յենուած, եւ ո՛չ թէ անհատական ու կուսակցական քմահաճոյքների:

Մուստաֆա բէյը ձայն չը հանեց:

Մուստաֆէջին ասաց. «Ես այնքան գիտեմ, մեր Ամասիան եւ իր շրջակաները վեր առնելով, որ առանց հայերի օգնութեան՝ մենք բան չը պիտի կարողանանք անել: Խոստովանե՛նք այդ. նրանք ամէն բանով մեզանից բարձր են. ես միշտ այդ բանը ասել եմ մեր Կոմիտէի անդամներին: Հայերը ինչո՞ւ մեզանից պիտի դժգոհեն, անջատուել ուզեն, եթէ գոհ թողնենք. սա ճշմարտութիւն է»:

Ներկայ Հայերը եւ Թուրքերը այդ խօսքերին գլխով հաւանութիւն տուեցին:

Մուստաֆէջին ասում էր այդ. բայց ասում շրթունքներով, թրքեվար շարժ ու ձեւերով:

— Երբ մի թաղի մէջ հրդեհ է ընկել, ամէն մարդ նախ իր տան մասին է մտածում, եւ այդ այնքան աւելի, որքան որ հրդեհուող առաջին տան տէրը անհոգ է մնում...

— «Այո՛, այդպէս է». լսուեցին ձայները:

— Մի քիչ էլ անցնենք տեղական խնդիրներին, յարեցի. ձեր այստեղի Ակումբի անդամները աւելի ո՞ր ազգերից են:

— «Գլխաւորապէս Թուրք հասարակ դասակարգից. էշրաֆները եւ հարուստները մեզանից հեռացան. նրանք Նէմնիգադէների առաջնորդութեամբ մի նոր Ակումբ կազմեցին, ուր յաճախում են միայն ունեւոր Թուրքերը. նրանք մեզ հետ տեսնուել, գործ ունենալ չեն ուզում, թէեւ մնում են Իտտիհատականներ, մեր Կուսակցութեան անդամներ: Առաջ բաւականին մեծ թւով Հայ եւ Յոյն անդամներ ունէինք, լաւ ամսական վճարողներ. հիմայ շատ քիչ են մնացել: Մեր նախկին հայ ընկերներից հազիւ հիմայ 30 հոգի կայ. այն ինչ առաջ 80—100 հոգի էին: Մնացող թէ՛ հայերը եւ թէ՛ յոյները առաջուան եռանդը չունեն, իրենց ամսականները չուզելով, դժուարութեամբ են վճարում»:

Նորից հիւրասիրուեցանք օշարակներով եւ սուրճով. շնորհակալութիւն յայտնեցինք եւ մնա՛ք բարեւ ասելով՝ դուրս եկանք ընկերներով:

Ճանապարհին պատուելի Փառնակը ուզեց, որ Նեմնիգադէների Ակումբն էլ այցելենք. բայց դա չընդունուեցաւ ո՛չ իմ եւ ո՛չ էլ ընկերների կողմից, որովհետեւ այդ ընտանիքը, թէեւ հիմայ ընկճուած, բայց 1895—1896-ի Հայկական կոտորածների մէջ ահագին դեր էր խաղացել եւ, ինչպէս ասացին, իր Իտտի-

հատական միւս ընկերների հետ կռուել, բաժանուել էր՝ պարզապէս պաշտօնի պատճառով:

Իտտիհատական կեանքը է՛լ աւելի որոշ կը լինի, երբ ասենք, որ առաջին Ակումբը, ուր տիրապետող էր Մուստաֆա Նէճիպը, կոչւում էր դէմօկրատների Ակումբ· իսկ Նէմնիզադէներինը՝ էշրաֆների:

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ.— Շաբաթ, 13 Մայիս: Իտտիհատի գլխաւոր գործիչ, հռետորի համբաւ ունեցող երիտասարդ խօժէր Նաճին մի քանի անգամ այցելել էր ծովեզրեայ քաղաքները, ուրեմն եւ Սամսոնը, եւ ամենաուժեղ թափով պաշտպանել, ջատագովել էր միութեան, ձուլման, օսմանականութեան գաղափարները:

Ասել, որ այդ դասախօսութիւնները անհետեւանք էին մնացել, շատ սխալ կը լինէր· որովհետեւ ո՛չ միայն դրա հետեւանքով Հայերից շատերը Իտտիհատականութեան գիրկն էին անցել· այլ նրանք համոզուել էին, որ իրերի ընթացքը անխուսափելիօրէն դէպի օսմանականութիւնն էր տանում· քանի որ պետական հաստատութիւնները այդ ուղղութիւնն էին արդէն առել:

Հարկաւոր էր հակազդեցութիւն յառաջ բերել· Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը այդտեղ չեշտուած գիրքով պէտք է երեւան գար· քանի որ ազատ երթեւեկութեան խարուսիկ երեւոյթը , Իտտիհատի գիրքը հետզհետէ ամրապնդում էր հայ, մանաւանդ վաճառական դասի մէջ:

Հայոց Մանկապարտէզի սրահն է· դասախօսութեան նիւթն է՝ «ՍՕՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ»:

Վաղօրօք ցրուած էր յայտարարութիւն:

Կայ յոգնախուռն երկսեռ բազմութիւն· ընդարձակ դահլիճը ծայրէ ի ծայր լիքն է· ներսը տեղ չը լինելու պատճառով՝ բազմութիւնը բռնել է ամբողջ բակը· ժողովրդական ալիքը հասնում է պատուհանների, դռների առաջ· պատանիները բարձրացել են ծառերի վրայ:

Ունկնդիրների մէջ կան, բացի Յոյներից, բազմաթիւ Թուրքեր, որոնցից շատերը պաշտօնեաներ· Իտտիհատականները առաջին կարգի աթոռներն են գրաւել, ծանօթագրութեան թուղ-

թը, մատխը ձեռքներին:

Նախագահում է պատուելի Փառնակ Իսկէնտէրեանը: Բեմի վրայ են մեր աչքի ընկնող ընկերները եւ Վարչութեան անդամները:

Երգեցիկ խումբը շատ խրոխտ շեշտով երգեց «Հնչակ»ը:

Խօսքը իմս էր:

Իմ թէզս եղաւ ցոյց տալ միասեռ եւ տարասեռ տարրերից կազմուած պետութիւնների տնտեսական եւ քաղաքական հիմունքները. երեւան բերել տիրապետող, նուաճուող բազկացուցիչ ազգութիւնների ձուլման պետական քաղաքականութիւնները և ձեռք առնուած միջոցները այնպէս, ինչպէս որ երեւացել են Պատմութեան ընթացքում: Ապա անցայ Թուրք ազգային եւ ազգայնական քաղաքականութեան մէջտեղ գալուն՝ թէ Համիդից առաջ եւ թէ նրա օրօք: Բացատրեցի այդ քաղաքականութեան մահաբեր լինելը թէ՛ ընդհանուր պետական եւ թէ՛ տիրապետուող ազգերի գոյութեան տեսակէտից: Ցոյց տուեցի, պաշտօնական աղբիւրներից առնուած վաւերագրերի համաձայն, լարուած այն մեքենայութիւնները, որոնք ուղղուած էին մասնաւորապէս Հայ Ազգի դէմ. ապա Հայկական Կեանքի պատկերը գծելով, տիրող իրերի բնութեան վերլուծումը տալով՝ մեկնաբանեցի թէ ինչու համար Հայ Յեղափոխութիւնը այլեւս դարձել էր բնական մի անհրաժեշտութիւն, ու այդտեղ երեւեցաւ այն բախտորոշ, վճռական հսկայ դերը, որ կատարել էր Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը:

Եզրակացութիւնն էր, որ Թիւրքիան, նոյն իսկ այսօր, կանգնած է մի երկընտրանքի առաջ. նա կա՛մ պիտի ընդգրկէր առաջուան քաղաքականութիւնը եւ ժամանակակից պետական վարիչները նոյնպէս ականատես լինէին նրա քայքայման եւ անկման գործողութեանը. եւ կամ պիտի ընդունէր բոլորովին նոր քաղաքականութիւն, համաձայն նորագոյն քաղաքագիտական գիտութիւնների տուած վարդապետութիւններին, այն է՝ ճըշմարիտ պարլամէնտականութիւն, եւ Քաղաքական Ինքնավարութիւն բազկացուցիչ ազգութիւնների համար՝ ինչոր պահանջում էր Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը:

Պաշտպանուած մտքերի ազդեցութիւնը ահագին եղաւ. դա երեւում էր անընդհատ ծափահարութիւններից. ծափահարողների մէջ առաջին տեղ բռնողներն էին հայախօս Յոյները, ո-

րոնք ամէն պատեհ առթիւ հաւանութեան արտայայտութիւններ էին անում :

Դատախօսութիւնը չանթահարիչ էր եղել միայն Թուրքերի եւ Իտտիհատականների համար, որոնք գլխները կախած՝ գըրում էին ու գրում :

Դատախօսութիւնը լրանալուց յետոյ՝ խօսք տրուեցաւ ժողովրդին. եղան 20 հարցեր, որոնք պատճառ տուեցին հարցերը է՛լ աւելի խորացնելու :

Եղան հարցեր հայ կանանց կողմից. նրանցից մէկը, շատ սահուն եւ գեղեցիկ գրական ոճով Հայ Ազգի Ինքնավարական իրաւունքի ջատագովանքը անելուց յետոյ՝ հարց դրեց, թէ արդեօք Բերլինի Դաշնագրութեան 61-րդ յօդուածը արդէն ոչընչացուա՞ծ կարելի է համարել :

Պատասխանը եղաւ. «Բերլինի Դաշնագրութիւն, Սան Ստեֆանոյի Դաշնագրութիւն, հին ու նոր դաշնագրութիւններ, 1895 Մայիս 11-ի ծրագիր. դրանք բոլորը գոյութիւն կունենան այնքան ժամանակ, որքան որ Հայկական Դատ կայ. իսկ Հայկական Դատ կայ եւ կը լինի մինչեւ այն ժամանակ, որքան որ Հայ Ազգը չի ստանալ, ձեռք չի բերել իր արդար իրաւունքները. որոնք բոլորը պիտի խտանան Ինքնավար Հայաստանի գոյութեան մէջ» :

Ուրիշ հարցեր առիթ տուեցին՝ նորից Իտտիհատի հետապնդած ձուլման քաղաքականութեանը վերադառնալու :

Ժողովը տեւել էր մօտ երեք ժամ :

Հասարակութիւնը պահանջեց երկրորդը, երրորդը...

Մենք վերադարձանք մեր Ակումբը :

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ.— Երեկոյ է. հրաւիրուած են Հայոց եւ օտար դպրոցների բարձրագոյն դասարանների աշակերտները : Բոլորն էլ աշխոյժ, բան սովորելու ցանկութեամբ լի երիտասարդներ :

Բացատրում եմ թէ ինչպէս օտար դպրոցները եթէ ո՛չ բացարձակ այլասերում, գէթ ապազգայնացում են յառաջ բերում. որովհետեւ իրենց ուսուցիչներն են հանդիսանում նրանք, որոնք իրենց սեպհական երկիրների մէջ ո՛չ միայն ուսուցչական, կրթական գործ չեն կարող ունենալ, այլ շատերն էլ իրենց երկրից վտարուած են՝ հէնց իրենց թիւր, սխալ եւ վնասակար կըր-

թական, դաստիարակչական մտքերի համար:

Մեկնաբանում է կրթութեանց սիստէմը. ասում է թէ ինչո՛ւ հայ դպրոցների ուսուցիչներն էլ չեն կարողանում պէտք եղած նորագոյն կրթութիւնը տալ, որով աշակերտների մէջ շարունակում է գոյութիւն ունենալ անհրաժեշտ տեղեկութիւնների, մանաւանդ քաղաքական եւ տնտեսական, բացակայութիւն: Եւ ահա այդ պակասն է, որ պիտի գայ լրացնելու Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը՝ իր Ուսանողական Միութիւններով:

Ուսանողները խնդրեցին Հայ Յեղափոխութեան համառօտ պատմութիւնը անել եւ Ազգային ու Սոցիալիստական մի քանի խնդիրներ բացատրել: Իրենց բաւականութիւն տրուեցաւ:

Ներկաները բոլորն էլ արձանագրուեցան. կազմուեցաւ վարչութիւն. տրուեցաւ Ուսանողական Միութեանց վերաբերեալ մշակուած Կանոնագիրը: Խօսուեցաւ իրենց անելիքների մասին: Նորակազմ մարմինը յարաբերութեան մէջ դրուեցաւ Կ. Պոլսոյ մեր Ուսանողական Միութեան Վարիչ Մարմնի հետ:

Ուսանողները ցրուեցան ուրախ տրամադրութեամբ. խոստանալով բեղմնաւոր եւ նպատակայարմար գործունէութիւն ցոյց տալ:

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ. — *Կէս օր է, Կիրակի,* 14 *Մայիս: Դարձեալ Մանկապարտէզի սրահը. երկսեռ հասարակութիւնը այս անգամ է՛լ աւելի հոծ բազմութիւն է ներկայացնում. օդը ուղղակի խեղդիչ է: Օտարականներն էլ շատ են. մանաւանդ Թուրքեր, Իտալհպատակներ, իրենց կողքին նստեցրած թարգմաններով:*

Դասախօսութեան նիւթն է. «ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ»:

Ուրուագծում է պետական կազմերի յառաջանալը տնտեսական հողի վրայ. պատկերացնում է պետութիւնը ստրկատիրական, ճորտատիրական եւ ներկայ շրջանների մէջ՝ տիրող դասակարգերի տնտեսագիտական հասկացողութիւններով ու քաղաքականութեամբ:

Ապա խօսքը դառնում է Համիդի եւ Իտտիհատի ներկայ տնտեսական քաղաքականութեան մասին, որի տարրերից մէկն էլ է, ազգայնական հողի վրայ կանգնած, պետական մեքենան

այնպէս քայլեցնել, որ բաղկացուցիչ ազգութիւնները տնտեսապէս փճանան, թուլանան եւ այդ ազգակների էլ բացարձակ տիրապետութիւնը անցնի տիրող ցեղի ձեռքը:

Ցոյց է տրւում այդ քաղաքականութեան վնասակարութիւնը, նրա մահաբեր լինելը. առաջադրւում է Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան տնտեսագիտական հասկացողութիւնը, նրա ծրագրի սօցիալիստական նուազագոյն մասը, որպէս միակ ելքը, ժամանակակից Նորագոյն Պետութիւն յառաջ բերելու եւ ժողովրդներին յարաբերական տնտեսական բարօրութեան մէջ պահելու:

Հարցերը եկան ցոյց տալու, որ հայ ժողովուրդը, ինչպէս եւ օտարազգի ունկնդիրները, ո՛չ միայն չեն խրտչում, այլ ուղղակի ծծում են սօցիալիստական գաղափարաբանութիւնը եւ նրանից յառաջացած իրերի դրութիւնը:

Դասախօսութիւնը տեւեց աւելի քան երեք ու կէս ժամ:

Հայ կիները ցանկութիւն յայտնեցին կազմակերպուելու եւ մեր Կուսակցութեան դրօշի տակ գործելու:

Այդ հարցը թողուեցաւ յաջորդ ժողովներին եւ կամ Վարչութեան, եթէ ժամանակս չը ներէր: Բայց այդտեղ մի յուզիչ տեսարան տեղի ունեցաւ. մի հայ կին սրտառուչ կերպով պատմեց Շմաւոնի Սամսոն բերուելը. նրա փախուստը. ապա նորից ձերբակալումը ու իր կնոջ Սամսոն գալը եւ ամուսնու ազատութեան համար թափած ջանքերը. խօսք առնող կինը պատմեց մի քանի սրտաճմլիկ տեսարաններ Սամսոնի հայ կանանց այդ ժամանակի աշխատանքի մասին:

Ժողովուրդը ցրուեցաւ. առաջուց խոստում անելով, որ նորից ժողով կը սարքուի:

ՓՈԽ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.— Երեկոյեան՝ ժողովից յետոյ, Հայ հասարակութիւնից մեծ բազմութիւն փոխ-այցելութեան է եկել՝ մեր Ակումբը. որ շատ պատշաճաւոր կերպով կահաւորուած, դրօշազարդուած է: Ընկերները տեղական հիւրասիրական սովորութիւնները կատարում են ամենայն փոյթեռանդութեամբ եւ ճշտապահութեամբ:

Խօսակցութեան նիւթն է օրուան հրատապ խնդիրները. մանաւորապէս Թրքական ներքին ընդհարումները:

Մի քիչ յետոյ՝ ներս մտան Թուրքերը, Մուստաֆա Նէճիպ բէյը իր ընկերներով:

Հիւրասիրական սովորական զրուցատրութիւններից յետոյ խօսքը գլորուեց օրուան հարցերի շուրջը: Որոշ է, որ նրանք *ուզում են ինձ լսել. ես էլ՝* նրանց:

Խօսք է բացւում Հայերի եւ Թուրքերի, ժամանակից ի վեր, սառն յարաբերութիւնների մասին:

Թուրքերը ցաւ են յայտնում, որ «Սահմանադրութեան» առաջին օրերի խանդավառութիւնները այլեւս չը կան, որ մտերմական նախկին հաղորդակցութիւնները այլեւս դադարել են, գոյութիւն չունեն. ինչոր ցանկալի չէ, եւ ցաւալի է, բոլորի համար էլ:

Ընկեր Ղազարեանը, համարձակախօս սեբաստացի, այդ բանի մէջ մեղադրեց մասնաւորապէս Իտտիհատին. պատճառ բերեց Ադանայի կոտորածը, նրա առթիւ կառավարութեան բռնած ընթացքը եւ Իտտիհատի հետապնդած քաղաքականութիւնը, ու ա՛յն ազգայնական նեղ ոգին, որ նրա Ակումբները ամէն տեղ ցոյց են տալիս:

Թուրքերը աշխատեցին դրա մեղքը բառնալ մասնաւորների վրայ. յոյս յայտնեցին, որ ժամանակի ընթացքում այդ բոլորը կը մոռացուեն եւ դարձեալ նախկին ոգեւորութիւնը մէջտեղ կը գայ:

Ասացին. բայց դրանք կարկատաններ էին. որ իրականութեան չէին պատշաճում:

Ներկաներից մէկը, հարցրեց Մուստաֆա Նէճիպին, թէ ինչո՛ւ իրենք ա՛յդքան խիստ կեդրոնացման ուղղութեան են հետեւում:

Պատասխանը եղաւ. «Ամենափոքր ապակեդրոնացումն անգամ այս երկիրը դէպի անվերականգնելի կործանում պիտի առաջնորդէ: Մեր երկրի մէջ բովանդակուած տարրերը այնքա՛ն տարասեռ են, իրարուց խորթ, որ նրանց միմեանց հետ կարելի է կապել՝ միայն խիստ կեդրոնացման միջոցով»:

Մուստաֆան այստեղ կանգնել էր իր կուսակցական հայեացքների անվերածելիութեան վրայ:

Եւ ես ուրախ էի, որ այդ խօսակցութիւնը տեղի էր ունենում բաւականին լայն շրջանի մէջ, ուր Սամսոնի Հայութեան «ղեկավարիչներից», «ազդեցիկներից», «երեւելիներից», շատ

շատերը իրենց ականջովն էին լսում: Այդտեղ կային Հայեր, որոնք թունդ իթթիհատականներ էին, եւ շատերն էլ դեռ իրենց կապերը չէին խզել Թիւրքիայի «Սուրբ Կուսակցութեան» հետ:

Խօսակցութիւնը բաւականին երկարեց. վիճաբանութիւնը ընդարձակուեց:

Դուրս գալիս՝ Մուստաֆան դառնալով դէպի ներկաները եւ մեր ընկերները, ասաց. «Այս Սահմանադրութիւնը, եթէ ուրիշ բան չարեց, գէթ միջոց տուեց, որ Թիւրքիայի ժողովուրդները իրարու հետ խօսեն, յարաբերեն եւ կարծիքների, հայեցակէտերի փոխանակութիւններ կատարեն: Մենք հակառակ ենք Սօցիալ Դէմօկրատ Հնչակեաններին. բայց չենք կարող ուրանալ նրանց թափած աշխատանքը ժողովուրդը կրթելու, դաստիարակելու, գործունէութեան մղելու տեսակէտից: Մանաւանդ որ ես Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան բոլոր Ակումբները այցելել, տեղեկութիւններ եմ հաւաքել, տեսել եմ թէ ինչպէս նրանք լուիկ մնջիկ, անաղմուկ գործում են: Այդ տեսակէտով ես ինքս ինձ հպարտ եմ զգում՝ իմ ազնիւ եւ աշխատասէր հակառակորդների ձեռքը սեղմելու»:

Նոյն կարգի տրամաբանութեան հետեւելով, ընկեր Մուրատի խօսքն էլ եղաւ. «Որ քաղաքական կեանքի համար կուսակցութիւնների գոյութիւնը անհրաժեշտութիւն լինելով՝ նրանց փոխադարձ պայքարից միայն լոյս կարող է ծագել. բաւական է որ կուսակցամարտը ազնիւ հողի վրայ դրուի»:

Մեր հիւրերը ցրուեցան:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.— Նոյն երեկոյեան սարքուած է համակրական ժողով: Հրաւիրուած են մեր Կուսակցութեան շատ մօտիկ համակիրները եւ քաղաքի մէջ ընկերային դիրք ունեցող ծանօթ անձնաւորութիւնները. ներկայ են նաեւ Մասնաճիւղի Վարչութեան անդամները եւ բոլոր ընկերները:

Նիւթն է՝ «ՕՐՈՒԱՆ ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐՆԵՐԸ»:

Պարզուեցաւ Իտտիհատի ներքին քաղաքականութիւնը. կարդացուեցան նրա բաց թողած ներքին շրջաբերականների կտորները. գծագրուեցաւ Հայ Ազգի անապահով վիճակը՝ մանաւանդ գաւառներում. մատնանշուեցաւ իրենց այդ օրերի

պարտականութիւնը՝ Ինքնապաշտպանութեան տեսակէտով:

Ժողովը իր միջից բղխեցրեց 10 հոգի, որ ընդհանուր ապահովութեան խնդրի մասին պէտք եղած միջոցները անյապաղ կերպով ձեռք առնէր եւ պէտք եղածը տնօրինէր···

Այդտեղ, նորից երեւեց, որ Հայ ժողովուրդը ո՛չ միայն կենսունակ է, այլ րոպէի լրջութիւնը ըմբռնող:

Առաջադրուած հարցերը այնքան խելօք, բանաւոր, կըշռադատուած էին լինում, որ մարդ շուարում, հարցնում էր, թէ արդեօք եւրոպական մի ուրիշ ժողովուրդ դրանից աւելին կարո՞ղ էր անել, եթէ նա էլ համանման պարագաների եւ պայմանների տակ գտնուելու լինէր···

Ընկեր Մուրատը այդ երեկոյ իր իսկական դերի մէջն էր···

Բայց ռազմական մաշուած հոգու երկչոտ արտայայտութիւններ էլ եղան մէկ-երկուսի կողմից· այդ էլ չը մոռանանք:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴԻՒՆՔԸ.— Մեր Մասնաճիւղը քաղաքի մէջ՝ արդէն տիրապետող քաղաքական *ազդակն էր Հայերի մէջ· ընկերների թիւը 60-ով աւելացաւ:*

Նորից պէտք եղած հրահանգները տրուեցան, եւ անելիքները *գծուեցան:*

Կանցնեն օրեր· բայց այդ *օրերը չեն մոռացուիլ, ու չը պիտի էլ մոռացուեն···*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԾԵՐ.— Իր ներկայութեամբ դատախօսութիւններին, հրապարակ դրած հարցերով եւ կիրթ ձեւերով՝ Սամսոնի ժողովուրդը եկաւ ապացուցանելու, որ ինքը կենդանի Հայութեան մի բարգաւաճ կտորն է:

Կանանց հարցերից երեւեց, որ նորագոյն Հայ Կինը կազմուելու վրայ է· առանց իր ներբողուած առաքինութիւններից մի բան պակասեցնելու: Դա աւելի քան խրախուսիչ եւ յուսադրիչ էր:

Սրա վրայ աւելացնելով հայ երկսեռ դպրոցների բաւականին բարգաւաճ դրութիւնը, համարձակօրէն կարելի է ասել, որ Հայ Ազգը, իր մասունքները միատեղ առնելով, ամենայնիւ արժանի է իր տէրն ու տնօրինողը լինելու, իր սեպհական բախտը իր ձեռքին ունենալու:

ՍԱՄՍՈՆ — Փողոցները կեղտոտ, Թրքական մասերը ղարչահոտութեան բոյներ են. տները ըստ մեծի մասին փայտէ. քաղաքի վերերը ճախճախուտ տարածութիւններով ծածկուած, որի պատճառով էլ տենդը տեղական հիւանդութեանց կարգն է անցել:

Շուկան գլխաւորապէս Հայերի եւ Յոյների ձեռքն է. Թուրքերը աւելի նպարավաճառ, պտղավաճառներ են:

Ունի բանուկ նաւահանգիստ. Փոքր-Հայքի արտադրութեան եւ ներածութեան դուռն է:

Արտահանւում են մեծ քանակութեամբ հացահատիկներ, ալիւր, ծխախոտ, խաշխաշ, մորթ, ձու, կաղին:

Հայերի թիւը աւելի քան 3000 է. ըստ մեծի մասին սեպհականատէրեր, առեւտրականներ. կան շատ հարուստ հայ տըներ էլ. որոնցից ոմանք ժամանակին ահագին հարստութեան տէր լինելով՝ հիմայ անկման շրջանի մէջ են մտել, շնորհիւ իրենց այն զաւակների, որոնք հօրենական հարստութիւններից միայն վայելել գիտեն:

Քաղաքի մէջ աղքատ, մուրացկան եւ ո՛չ մի հայ, բոլորն էլ գործի տէր:

Սամսոնի հայերի մէջ Թրքախօսութիւն չը կայ. շատերը մաքուր գրական հայերէն են խօսում:

ՏԻՊ — Փոքր-Հայքի, գլխաւորապէս Սեբաստիայի, և ներքին զանազան գաւառներից գաղթող, քաղաքի մէջ բնակութիւն հաստատող հայերը դեռ լրիւ պահել են Հայաստանցու որոշ յատկութիւնները՝ բնաւորութիւնն ու կամքը:

Ճկուն, յարափոփոխ, կամազուրկ տարրեր էլ կան. բայց սրանք թէ ցանցառ են եւ թէ յետնորդներ մի քանի սերունդների, որոնք երկար ժամանակ երկրից հեռացած լինելով եւ օտար տարրերի հետ մօտիկ շփում ունենալով՝ մասամբ կորցրել են իրենց հայկական տիպը եւ արեւելցու մի քանի գծեր առել իրենց վրայ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ — Հէնց դրա համար էլ Քաղաքական Կուսակցութիւնների պարտականութեան դաշտը շատ ընդարձակ էր այդտեղ: Հայ ուրիշ Կուսակցութիւններից, այդ ժամանակ, միայն անհատներ լինելով, քաղա-

քական գործերի բեռը ծանրացել էր գլխաւորապէս մեր վրայ: Ու Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Մասնաճիւղը չէր, որ իր կոչման բարձրութեան վրայ կանգնած չը լինէր: Կարճ ժամանակի մէջ նա բարեբար դեր էր կատարել ժողովրդի քաղաքական կրթութեան տեսակէտից: Մեր ընկերները դրա համար էլ՝ Հայ եւ օտար շրջանների մէջ՝ մասնաւոր յարգանք էին վայելում: Առանց մեր Կուսակցութեան՝ հասարակական ո՛չ մի գործ չէր կարող լինել. Նրա ներկայութիւնը անհրաժեշտ էր դարձել:

Մասնաճիւղի ընկերները մեզ վրայ այն տպաւորութիւնը թողեցին, որ Սամսոնի մէջ մեր տեղական օջախը վառ էր եւ անշէջ:

ԳԼՈՒԽ Դ.

ԲԱԺԱՆՈՒՄ.— Երկուշաբթի, Մայիս 15, առաւօտեան ժամը 6·30-ին ճանապարհ ենք ընկնում դէպի Մարզուան:

Մեծ թուով ընկերներ եւ ծանօթ-բարեկամներ են եկել ողջերթի:

Ընկերներից մի քանիսը ձի նստած՝ բաւականին տեղ մեզ ուղեկցեցին:

Վերջապէս եկաւ բաժանման ժամը. համբուրուեցանք՝ իրարուց բաժանուեցանք:

Նստեցանք մեր զսպանակաւոր կառքը («եայլի»):

Մեր կառապանն է ընկեր Սարգիսը. պատմական դէմք. անվեհեր, կորիճ մի տղամարդ, որ 15—16 տարի շարունակ կառապանութիւն է արել, հին ժամանակները, եւ յեղափոխական ընկերներին փոխադրել, տարել-բերել, ու մեր գրականութեան ծաւալող, փոխադրող ուժերից մէկը հանդիսացել:

Նա պատմում է, հէնց առաջին րոպէից, անցած տեղերը մատնանշելով, իր եւ ընկերների չարչարանքներից, նրանց կատարած հերոսական քաջագործութիւններից:

Զառ ի վեր է. անդադար բարձրանում ենք. սա միակ կառուղին է Փոքր-Ասիայի մէջ, որ շատ ու քիչ տանելի է՝ հանգստութեան տեսակէտից: Բայց Թիւրքիայի մէջ ամէն ինչ համեմատական է. բացարձակ այստեղ՝ ո՛չինչ:

Ճանապարհի խորթուբորութիւնը կատարեալ խաղի մէջ է դրել մեր կառքը. նստած թէ պառկած՝ մարդու մէջք է կոտրտւում. անդադար ոստոստում, վեր ու վայր ենք թռչկոտում:

Հանդիպում ենք մեծ թուով հաւկթատար էշերի երամակների՝ չարա՛ն-չարան: Սնդուկների մէջ հաւկիթներ լցած, բեռցուած՝ երկրի խորերից կրում, տանում են դէպի Սամսոն՝ այնտեղից Եւրոպա, գլխաւորապէս Մարսիլիա արտածելու համար:

Թիւրքիայի փոխադրութեան միջոցների մէջ՝ դեռ բեռնատար մարդերը եւ անասունները առաջին տեղն են բռնում:

Էշերը աչքի են ընկնում իրենց բարձր հասակով, մարմնեղ կազմուածքով եւ խոշորութեամբ. սրանք Համադանի հռչակաւոր էշերից պակաս չեն: Շատերի համետները զարդարուած են գոյնզգոյն թաղիք-կապերաններով, վզերնին կախուած չուլունք վզնոցներ՝ մէջտեղը խոշոր զանգակներով եւ բոժոժներով: Քարվանը ընում է չամբրընթաց. Հին Արեւելքի պատկերը դեռ ոչինչ չի կորցրել:

Իշապանները երգում են անհո՛գ, անվի՛շտ. իրենց սովորական «չո՛ւ չո՛ւ»ն են անում եւ աչքի տակով էլ հեգնութեամբ մեր կառքին նայում. կարծես մեզ ասելիս լինէին՝ թէ աւելի լաւ չէ՞ր լինիլ հետիոտն երթալ, քան այդ կառքով:

Պատահում ենք ե՛ւ մեծ թուով յոյն, թուրք կանանց, աղջիկների, երեխաների խմբերի. նրանցից ոմանք զանազան մեծութեամբ կողովներ են դրել իրենց գլխի վրայ. ոմանք տոպրակներ, պարկեր ունեն մէջքներին. շատերն էլ ձեռքներին բռնած են կանաչեղէնների կապոցներ, հաւեղէններ. բոլորի էլ տարածներն են պանիր, կարագ, ձու, մածուն եւ գիւղական ամէն տեսակ բարիքներ: Ամէնքն էլ գնում են քաղաք՝ Սամսոն իրենց նպարեղէնները ծախելու եւ այդպիսով իրենց տնային պէտքերը հոգալու: Բոլորի էլ արտաքին կերպարանքից, կրած հագուստներից թշուառութիւն է թափում:

Խմբեր կազմողներից մեծամասնութիւնը ոտաբոբիկ են. երեխաները եւ աղջիկները թէ ոտաբոբիկ են եւ թէ գլխաբաց: Հակառակ իրենց ունեցած ծանրութիւններին՝ այնպէս թեթեւոտն կերպով կոխկրտում, անցնում են խճաքարերի վրայից, որ կարծէք թէ թաւիշների վրայից են քայլում:

Յոյն կիներն ու աղջիկները իրենց հագուստներով բնաւ չեն տարբերւում թուրք գեղջկուհիներից:

Լեռնալանջերից անդադար բարձրանալով՝ կառքը գլորւում է նրանց գագաթների վրայով. մեր երկու կողմը տարածուած են անդնդախոր ձորեր. մի փոքր սայթաքում հերիք է, որ անխուսափելի գահավիժումը գայ. այդպիսի վտանգաւոր տեղերում՝ ճանապարհի եզրերին ո՛չ ձող կայ, ո՛չ գերան՝ գլորւող ձիերին կամ կառքերին բռնելու. ձորերի բերանը լայն բացուած է:

Շրջակայ ձորահովիտներում, լեռնագագաթների վրայ ոչխարների հօտերը փռուած են շար ի շար. փոքրիկ ուլերի այդ

սեպաձեւ ժայռերի վրայով կայտռելով թռչկոտել՝ անցնելը կատարեալ իրաւունք է տալիս՝ նրանց «սատանայի ձագուկներ» անուանելու:

Քանի գնում՝ բարձրանում ենք. չորս կողմը թարմ կանաչութիւն է. ծաղիկների անուշահոտ բուրում. մաքուր օդ, ջինջ երկնակամար, ամպածրար լեռներ, որոնց սէգ գագաթների վրայ դեռ ձեան զանգուածը իր տիրապետութեան մէջն է: Լեռնակողերից քչքչալով իջնող առուակները, ձորերի միջով վազող ջրերի կարկաջը. թփոտ, մացառուտ բլուրները, թռչունների ծլվլոցը, անգղերի սաւառնաթեւ սլացումը անդունդների վրայից՝ դրանք բոլորը յայտարարում են, որ մենք այժմս բնութեան ծոցումն ենք, նրա թագաւորութեան ենթակաները: Բնութիւնը այլեւս իր իրաւունքի մէջն է. նա մոռացնել է տալիս ամէն ինչ. մարդու զգացումներ գերում. հոգին դիւթում, թռչում է, ստիպում բացառապէս իր հազար ու մի գեղեցկութիւններով, իր հիասքանչ ձեւերով վերանա՛լ, վերանա՛լ եւ անձնատուր լինել:

Ընկեր Մուրատը անուշ ձայնով երգում է, իր զիլ ձայնը հովերին է տալիս. բայց այդ ձայնի ալիքների մէջ տիրապետում է կսկիծը, դառնութիւնը, թախիծը: Նա երգում է բնութեան գեղեցկութիւնները. վազվզող՝ գլգլան աղբիւրների, լեռնագագաթների, ծմակների գովքը անում եւ վերյիշում իր Կովկասը, հայկական լեռնաշղթաները՝ հեռու Վասպուրականի խորքերում թողուած:

Մեր գլխի վրայով սաւառնող չար թռչուններ վայր գլորուեցան Մուրատի անվրէպ գնդակից. այդ տղամարդը աննման նշանաձիգ էր...

Ցուրտը կամաց կամաց սաստկանում է. բայց դեռ ահագին ճանապարհ ունենք անցնելիք:

Կէսօրին մօտենում ենք Թուրք գիւղերի. արտաքին երեւոյթը գրաւիչ ոչինչ ունի. հողակառոյց տնակներ, անմաքուր փողոցներ. դռների առաջ նստած մարդկանց տեսքը ցոյց է տալիս, որ աղքատութիւնը բոլորի բաժինն է. եւ դա էլ այդ հրաշագեղ վայրերի մէջ, ուր հարիւրաւոր մղոն անմշակ դաշտեր կան:

Կէսօրից մի քիչ անց՝ կանգ առանք Զաղխալի. իջանք խանը:

Ս․ ՄՈՒՐԱՏ, 1892

«Խանչի» Ջաֆար աղան թէյ պատրաստեց, եկաւ մեզ մօտ նստաւ: Խօսում է հայերէն շատ սահուն կերպով:

— Ո՞րտեղից ես հայերէն այդպէս լաւ սովորել, Ջաֆար աղա, հարցնում ենք:

— «Պատանի եղած ժամանակս Մարզուանի մէջ հայի տան մէջ եմ ծառայել, այնտեղ մեծացել. երբ հայ տեսնեմ՝ շատ կուրախանամ, որ հայերէն պիտի խօսեմ. անուշ լեզու է...»:

— Ձեր այս գիւղի մասին մի քանի խօսք կարո՞ղ ես ասել:

— «Ինչո՞ւ չէ. մեր այս գիւղը բաղկանում է 27—30 տնից: Բոլորս էլ ՆՈԳԱՅՆԵՐ ենք, Օսմանլի չենք. այստեղ գաղթել ենք Ռումէլիից, մօտ 30 տարի առաջ, երբ նոր ազատուած բուլղարները սկսեցին մեզ նեղել եւ ամէն տեսակի չարիքներ հասցնել: Մեզանից շատերը օրական հացի կարօտ են. աղքատ ենք ծայր աստիճան: Ժամանակի կառավարութիւնը մեզ ո՛չ բերրի դաշտեր տուեց, ո՛չ էլ թոյլ տուեց քաղաքների մէջ ապրել. այս անջրդի տեղերն են, որ մեզ համար բնակութեան տեղ որոշուեցին: Վար ու ցանք չունենք. արգաւանդ հողերը, յուաթի դաշտերը գրաւել են Թուրքերը եւ չոյները: Մենք մեր ապրուստը հանում ենք իշապանութեամբ եւ երկրագործական աշխատանքներ կատարելով շրջակայ հայերի եւ այլ ազգաբնակչութեանց մօտ: Եթէ մեզ բոլորովին չը կորցրինք, շատ ու քիչ չոկել կարողացանք, գլուխներս ողջ պահեցինք, դրա էլ պատճառն այն է, որ կառավարութիւնը եօթը տարի շարունակ մեզանից որ եւ է տուրք եւ հարկ չառաւ»:

— Ուղիղն ասա՛, Ջաֆար աղա, այն ժամանակ Կառավարութիւնը ձեզ չասա՞ւ, հրաման չը տուե՞ց, որ գողութիւն անէք:

— «Այո՛, ինչպէս չէ՛, ասաց, հրահանգեց. բայց մեր ժողովուրդը այդ տեսակ կեանքով ապրելու սովորութիւն չունի. գողութիւնը մենք մեղք ենք համարում. ուստի չարեցինք: Այդ բանի մէջ աւելի առաջ գնացին Չէրքէզները. նրանք Կառավարութեան ասածները մէկին տասով կատարեցին. տարիներ շարունակ գողութիւն, աւազակութիւն արեցին՝ առանձին խմբեր կազմելով: Դրա շնորհիւ հիմա մեզանից աւելի լաւ վիճակ ունեն. մասնաւոր գողութիւններ չեն անում, պարապում են սաւարի առուտուրով, ծխախոտի փոխադրութեան գործով.

մէջերնին բաւականին մեծ թւով խանութպաններ կան: Այս շրջանիս բոլոր մաքսախոյսները եւ ծխախոտ փախցնողները Ջէրքէզներն են»:

— Այս շրջականներում հայ գիւղեր կա՞ն:

— «Ո՛չ. հայ գիւղեր չը կան. գիւղերի մէջ հայ խանութպաններ կան միայն. մենք ընդհանրապէս հայերից գոհ ենք. մեզ լաւ վարձատրում են՝ իրենց համար աշխատած ժամանակներս»:

Նագալի գիւղի կեղտոտութիւնը ուղղակի առասպելական կարող է համարուել. գարշահոտութիւնը ամէն կողմ է. փողոցների մէջ սատկած անասունների՝ ձիերի, ջորիների, եզների, կատուների, շների դիակները փռուած՝ կեցած են, տասնեակ շներ էլ այդ դիակների շուրջը հաւաքուած թէ կրծում եւ թէ կռւում են: Բոլոր փողոցները աղբակոյտերի թանձր զանգուածներով են ծածկուած, ձիւնահալից աղբալճակներ են կազմուել. ոտով երթեւեկութիւնը մինչեւ ծունկերը ցեխերի մէջ թաղուելու պայմանով միայն կարող է կատարուել:

Մի քիչ հանգիստ առնելուց յետոյ՝ Սարգիսը կառքը լծում է:

Անցնում ենք ամայի, լքուած, հազիւ տեղ տեղ մշակուած լեռնադաշտերի միջով. մարդկային բնակութեան հետք անգամ չը կայ՝ ճանապարհի ամբողջ տեւողութեան ընթացքում: Գիւղերը սեւ կէտերի նման երեւում են հեռաւոր հորիզոնների վրայ: Մենք գնում ենք, ջարդուած-փշրուած կողերով՝ վերջապէս երեկոյեան ուշ հասնում ենք Իւչխանլար. այստեղ է, որ պիտի գիշերենք:

ԻՒՋԽԱՆԼԱՐ — Պանդոկապետը մեր ընկերն է, սեբաստացի Աւետիսը. ուժեղ, թիկնաւէտ, անվախ մի երիտասարդ՝ «զէնքի հետ խաղացող»: Այդ ամայի վայրերի մէջ երկար տարիներ շարունակ պանդոկ պահելը ինքնին փաստ է իր կորճութեանը, որովհետեւ շրջակաները լիքն են աւազակախմբերով:

Ցուրտը սաստիկ է. ուժ ենք տալիս վառարանի կրակին եւ թէյին: Արեւելեան խաների մէջ այդ յարմարութիւններն երբ կան, ճանապարհորդը գրանով շատ գոհ պիտի լինի:

Մութ՝ խաւարամած գիշեր է. երկնքի վրայ աստղի պծառ

անգամ չը կայ· քամին զզզում է· պատշգամբների վրայ կանգնել անկարելի է· փակում ենք մեր սենեակը:

Մեզ նման ուրիշ շատ ճանապարհորդներ էլ կան· երբ մեր ո՛վ լինելը իմացան՝ թափուեցան մեր սենեակը· կազմուեց հայկական շրջան:

Ամէն մէկը իրը սկսեց:

Զիլեցի վաճառական՝ Գրիգոր աղան պատմում է իրենց անցեալի ցաւերից· մի եղերգական լեզուով նկարագրում է 1896–ի իրենց կոտորածը եւ քաշած տառապանքները: Իր պատմութեան ընթացքում յաճախ յուզւում, արտասուք է թափում, մանաւանդ երբ թուում է իր սիրելիների մահը, իր աչքի առաջ չարերի խողխողուիլը: Յետոյ աւելացնում է· «Հիմայ մեր կողոպտիչները մեր ծառաներն են· շուկան էլի մեր ձեռքին է»: Ապա դառնալով դէպի ինձ՝ մի առանձին շեշտով, հայկական ինքնասիրութեամբ ասաց· «Մեր պապերի լեզուները ծոծրակից քաշել՝ դուրս են հանել, ստիպել են, որ թուրքերէն խօսեն· մենք թէեւ թրքախօսութեան մէջ ենք ծնուել, մեծացել, բայց մեր ազգութիւնը, մեր կրօնքը, մեր սովորութիւնները պինդ պահել՝ պահպանել ենք: Մենք հայ ենք· հայ կը մնանք· հայ էլ կը մեռնենք: Մենք մեր ազգութիւնից, մեր կրօնքից ձեռք վեր առնողը չենք, ինչ էլ որ պատահելու լինի· երբ մեր քաղաքը գաս՝ կը տեսնես թէ ի՛նչ ենք...»:

Հետաքրքիր խօսակցութիւն է բաց անում սեբաստացի Միհրան Խորիկեանը, որ գործագործութեան առանձին արհեստանոց ունի· գնում է Իզմիր:

Նա բացատրում է այն յարաբերութիւնները, որ իրենք ունեն Իզմիրի հայ եւ օտար գործավաճառների եւ մթերանոցների հետ: Կծու բառերով գանգատւում է Իզմիրի մէջ շատ յայտնի գործավաճառ էքիպլէրից:

Այո՛· իրողութիւնը պարզւում է· խնդիրը իր տնտեսական հիմունքներն ունի· Իզմիրի մեծ կապիտալիստները, նշանաւոր գործավաճառները, որոնց մէջ առաջին տեղն են բռնում հայերը, ամէն աններելի միջոցներով ձգտում, աշխատում են, մրցակցութեան հիմունքներով, արմատապէս կործանել, հրապարակից քշել գործագործութեամբ պարապողներին, որոնք բընիկ սեբաստացիներ լինելով՝ գերմարդկային ճիգ են թափում թոյլ չը տալու, որ իրենց քաղաքի արտադրութեան այդ ճիւղը

ձեռներից բոլորովին դուրս գայ, օտարների՝ դրսեցիների ձեռքըն անցնի եւ իրենք էլ նրանց հասարակ ծախողները, պաշտօնեաները դառնան:

Տեղացի փոքր արտադրողները, օրհասական այդ կռուի մէջ, դեռ դիմանում են, իրենց տեղական պայմանների հետ աւելի լաւ ծանօթ լինելուն համար. ո՛չ միայն շատ պարագաներում տակաւին յաղթող են դուրս գալիս, այլ բաւական մեծ գումարներով էլ շահ անում:

Դրա համար էր, որ մեր խօսակից, շատ երիտասարդ Խորիկեանը միշտ կրկնում էր. «Եթէ Էքիպլէրի ձեռքից գայ. նա ինձ մորթել, սպանել կը տայ. թէեւ որպէս վաճառական եւ մեծ արտադրող՝ ինձանից եւ ինձ նմաններից ահագին օգուտներ է ստանում»:

Էքիպլէրին ճանաչում էի. նա Իզմիրի մէջ ծանօթ է, որպէս «ազնուական», «հայրենասէր» վաճառական. բայց այդ բոլորը բառերով: Իրօք նա մեծ արտադրող–վաճառական էր, իր նման շատերի պէս. այսինքն նախ իր շահը, ամէն բան իր շահի համար, խոչնդոտին ճզմել:

Մեր միւս խօսակիցները, գլխաւորապէս գիւղացիներ, զանազան օրինակներով հաստատում են, որ Օսմանեան Երկրագործական Դրամատունը միակ նպատակ ունի հայերին կողոպտել: Ո՛չ թէ հայ գիւղացիներին դիւրութիւններ տալու նպատակով է նա կազմուել, հաստատում են, այլ Թուրք ազգայնական քաղաքականութեան մի պակասը լրացնելու: Որովհետեւ եթէ մէկ հայի հարկաւոր լինի այդ Դրամատնից 20—30 ոսկի փոխ առնել. նախ հարիւրաւոր ոսկիների արժողութեամբ իր արտերը գրաւ պիտի դնի. ձեւականութիւնն էլ այնքան շատ ու բարդ է, որ այդ գումարը ձեռք բերելու համար 5—10 ոսկի նախապէս պիտի ծախսել: Իսկ երբ յանձնառութեան կատարման մէջ մի փոքրիկ թերացում նկատուի, ինչոր պաշտօնեաները յաճախ խարդախելով, խեղաթիւրելով անում են. այն ժամանակ գրաւի դրուած այդ արտերը չնչին գներով ծախւում են եւ գնողն էլ նոյն այդ դրամատունն է լինում:

Այսպէս, «խան»երի յարկերի մէջ էլ մեր ցաւերի, մեր տառապանքների արձագանգն է լսւում: Այնտեղ էլ Հայը վիշտեր ունի բացելիք, հառաչանքներ էլ՝ դուրս թափելիք:

Հարցնում ենք ճանապարհների ապահովութեան մասին. ասում են, որ թէեւ դեռ երթեւեկութեան կատարեալ ապահովութիւն չը կայ. բայց առաջուան չափ էլ կառավարական խըստութիւններ չը կան։ Ամենքի էլ համոզումն այն է, որ Թիւրքիայից չուղկահարութիւնների արմատը կտրել անկարելի է, որովհետեւ դա արդիւնաբեր զբաղումներից մէկն է տեղական ազդեցիկների եւ պաշտօնեաների։

Մի հայ կառապան ծիծաղելով ասաց, որ մի քանի մէճիտիէ կաշառք տալով՝ մինչեւ Բաղդադ գնաց, փորձելու համար. բայց վերջը համոզուեց, որ ամէն անգամ աւազակների եւ պաշտօնեաների ձեռքից այդպէս արժան չէր կարող պրծնել։

Եւ իրաւ. մի քանի օր մեզանից առաջ, աւազակները, օրը ցերեկով, այդ կողմերում յարձակուել էին՝ 40—50 հոգի մէկ մէկու կապկպել, շրջակայ ձորերը իջեցրել, վրայ–գլուխները լաւ կողոպտել, ունեցած–չունեցածները ձեռքներիցը առել, մի քանիսին էլ վիրաւորել, և ապա բաց թողել՝ խոստում առնելով՝ որ ոչ ոքի չասեն եւ միւս անգամ գալիս–գնալիս աւելի շատ քանակութեամբ դրամ ունենան իրենց վրայ. եթէ կուզեն գլուխները ողջ պահել։

ՀԱՒԶԱ.— Երեքշաբթի, Մայիս 16. լուսադէմին՝ շատ վաղ արթնացանք, ճանապարհ ընկանք դէպի Հաւզա կամ Ղաւզա։

Այդ անունը ցնցիչ տպաւորութիւն է գործում լսողի վրայ. այստեղ է, որ 1895—1896-ին 1000 հայ կոտորեցին՝ առանց հասակի եւ սեռի խտրութեան։ Այստեղ է, որ հայերի ամբողջ ինչքն ու գոյքը աւարի տուեցին, նրանց տները, ջրաղացները հրկիզեցին, քար ու քանդ արեցին։ Թրքական խժդժութիւնը իր վայրագութեամբը այստեղ արձանացաւ։ Հէնց դրա համար էլ այդ անունը տխուր, սարսռեցուցիչ յիշատակների հետ է կապուած։

Անցնում ենք մեծատարած դաշտերով՝ ծաղկեբոյսերով ցանցնուած. ճանապարհի երկու կողմը տարածուել են բարձրադիր ապառաժներ, գեղեցկանիստ լեռներ, եւ ապա անհուն սարահարթեր։

Բնութիւնը վեհ, մեծատեսիլ է։

Շարան–շարան գնում են ե՛ւ ուղտերը· սէգ, հպարտ, վիզը չարունակ վեր բռնող Նաւը իրենց առջեւը· ուղտապանն էլ իր էշի վրայ հեծած: Անփոփոխ արեւելքն է, իր բոլոր շրջանակներով: Ուղտերի զանգակների զրնգզրնգոցի անուշութիւնը միայն արեւելքին գիտէ· Նրա հետ պատմական շատ յիշատակներ են կապուած:

Բեռնատար էշերի, ջորիների երամակները անհագին տարածութիւն են բռնել, էլ ծայրը չի երեւում... գնում են ու գնում:

Քարվանսարաների երգերն էլ ամէն ինչ լրացնում են, եւ Ասիան իր մասնայատուկ հրապոյրի մէջն է:

Սրընթաց ձիերի վրայ նստած՝ արագ քշում, անցնում են Չերքէզները, խափուճիներով ծածկուած· գողի պճլտուն աչքերով երբեմն մօտենում են մեզ՝ հեռուից ծխախոտի տրցակը ցոյց տալիս· երբ ձեռքով բացասական պատասխան ենք տալիս՝ իրենց ձիերը է՛լ աւելի ուժգին թափով յառաջ են քշում... Անշուշտ նրանք չէին, որ մեզ չը կողոպտէին, եթէ ամէն երեւալիս իրենց աչքին չը ցցուէր Մուրատի մաուզէրը:

Աղամամութը տեղի տուեց· լոյսը կամաց կամաց ծաթել սկսեց, աղօթարանը ճեղքուեց եւ վառ Արշալոյսը իր փառահեղութեանը մէջ մտաւ:

Եթէ հին Յոյները Արշալոյսը կառքի վրայ դրած էին քայլեցնում· իրաւունք ունէին:

Արեւելեան երկրների այդ գեղեցկութիւնը կը մնայ եզակի տեսարան:

Մեր նախահայրերը չէին կարող գեղեցկապաշտ չը լինել: Հայաստանի Արշալոյսը, Արեւագալը տեսնողը, այդ չքնաղագեղ տեսարաններով մեծացողը ուրիշ ինչ կարող էր լինել, եթէ ո՛չ բնապաշտ:

Վայելում ենք կո՛ւշտ կուշտ այդ հրաշագան տեսարանը:

Միտս է ընկնում Լօնդօնը· ուր տարիներ ապրելով՝ Արշալոյս չը տեսանք, որովհետեւ չը կայ:

Այնտեղ, կէսօրին, յաճախ, երկնակամարի վրայ դեղնաւուն գնդաձեւ մի բան է երեւում: Բայց դա արդեւք չէ, որ հիւսիսի զաւակ Անգլիացին իր հիացումը չարտայայտի եւ իր սովորական «Հիանալի՛, Գեղեցի՛կ Օր»ը չասի եզակի սքանչացումով:

Եւ ի՛նչ զարմանք, որ մի անգամ Արեւելք տեսնող Անգլիացին՝ շատ մեծ դժուարութեամբ է վերադառնում իր բուն Հայ-

րենիքը ։

Մեր կառքը դարձեալ վե՛ր, վե՛ր է բարձրանում․ ապա իջնում ենք ցած․ ճանապարհներս այս անգամ դար ու վար է ։

Անցնում ենք մշակուած արտերի, նկարչագեղ դաշտերի միջով․ գորտարնակ ճախճախուտներ էլ լիքն են․ անջրդի վաշբերի մօտ՝ մացառուտներ․ մարդկային բնակութիւն շատ քիչ ։

Կէսօրին հասանք՝ Հաւզա ։

Հաւզան մօտ 600 տնից բաղկացած գաւառագամանիստ քաղաք է․ ազգաբնակչութեան մեծամասնութիւնը Թուրքեր եւ չոյներ են ։ Միայն 48 տուն հայ կայ․ ունին երկսեռ դպրոց եւ մէկ եկեղեցի ։

Իր մէջ ունեցած բնական, հանքային բաղանիքների համար՝ Հաւզան բաւականին բանուկ շուկայ ունի․ մանաւանդ որ գտնւում է Բաղդատ գնացող ճանապարհի վրայ ։

Բաղանիքների վարձակալները հայեր են ։

Հայերը ընդհանրապէս փոքրիկ առեւտրականներ, խանութպաններ են․ զանազան տեսակի արհեստաւորներ էլ կան ։ Կալուածատէր հայ, գրեթէ, չը կայ ։

— Ի՞նչ է այժմ ձեր դրութիւնը, ձեր յարաբերութիւնը Թուրքերի հետ, հարցնում ենք մեր գլխին հաւաքուած, տեսութեան եկող հայերից ։

Պատասխանում են․ «Ընդհանրապէս շատ նեղ կացութիւն ունենք․ Թուրք ազգաբնակութեան հետ մի կերպ լաւ՝ վատ վարւում ենք․ ստիպուած ենք․ ի՞նչ կարող ենք անել ։ Սովորութիւն չունենք դատարան երթալ, գանգատ անել, ինչքան էլ որ զրկանքների ենթարկուենք․ որովհետեւ համոզուած ենք, հարիւրաւոր փորձերով, որ մեզ համար արդարութիւն չը կայ ։ Որքան էլ որ մեր դատը արդար լինի եւ իրաւունք ունենանք՝ մենք դարձեալ կը կորցնենք․ կողմնակալութիւնը ակնարախ է, չարունակական, մի տեսակ օրէնք ։ Ուստի մեզ ինչ էլ որ անեն՝ սովորութիւն չունենք Թուրք դատարան երթալ՝ բողոքել․․․ Հին դատաւորներ երթան, նորերը գան՝ փոփոխութիւն չի լինիլ․ մեր վիճակը նոյնն է ։ Թուրքերի միտքն է մեզ այստեղից բոլորիս էլ դուրս քշել» ։

— Ասացէք մի քանի խօսք այս հանքային ջրերի մասին ։

Պատասխանում են. «Հանքային այս ջրերը առաջ պատկանում էին Մէմտուհ փաշային. երբ ասում ենք թէ նրան էին պատկանում, դրանով չը պէտք է հասկանալ թէ նա հայրական ժառանգութեամբ էր ստացել կամ ինքը գտել, բաց արել եւ կամ թէ ծախու գնել. ո՛չ: Մի օր, Սեբաստիայի վալի եղած ժամանակը, եկաւ եւ ասաց, որ սա այնուհետեւ իմս է. այդպէս էլ եղաւ. ամէն բան իր ձեռքն առաւ, գրաւեց, սեփհականացրեց եւ սկսեց շահագործել: Երկու տարի սրանից առաջ՝ քաղաքիս հասարակութիւնը բողոք բարձրացրեց, բերանացի վկայութիւններով եւ գրաւոր վաւերաթղթերով հաստատեց, որ հանքաջրերը ամբողջապէս պատկանում էին քաղաքիս ամբողջ հասարակութեան, որ դրանք համայնական սեփհականութիւն էին: Գործը դատավարութեան ընկաւ. փաստաբաններ վարձուեցան. մենք էլ մէջը մտանք՝ ահագին ծախքեր արեցինք: Վերջը Մէմտուհ փաշայի ժառանգների ձեռքից առնելով՝ յատկացրին Կրթական Նախարարութեան: Խոստացան Յոյներին եւ մեզի բաժին տալ: Յոյներին մի բան տուեցին: Մենք գնացինք, եկանք, աշխատեցանք, յոգնեցանք. ո՛չինչ մեզ չը տուեցին: Մէկ օր էլ լաւ սպառնալիք կերանք. թողեցինք դուրս ելանք: Դրանից յետոյ է՛լ աւելորդ համարեցինք ձայն հանել»:

— Ձեր մէջ Հայ Կուսակցութիւններ կա՞ն:

— «Այո՛. ուրախութեամբ պատասխանում են: Շատ անգամ հրապարակային ժողովներ, դասախօսութիւններ ենք սարքում. հայ բոլոր թերթերը ստանում ենք, ունենք փոքրիկ ընթերցարան»:

— Իտտիհատականներ կա՞ն այստեղ:

— «Այո՛. մէկ Ակումբ էլ ունեն. երբեմն շատանում են, երբեմն՝ քչանում: Բոլոր ուտողները, զարկող–թափողները նրանցից են. երբ բաժանելու մէջ չը կարողանան համաձայնել՝ կը կռուեն, կը հեռանան... Նորից կը գան, կերթան... Վերջապէս թուրքի գործ... Մէջերնին մի քանի հայատեաց, մոլեռանդներ կան. նրանք դէպի մեզ շատ վատ են տրամադրուած: Առաջ մեզանից շատերը Իտտիհատականներ էին. բայց Մարզուանից Սօցիալ Դէմօկրատ Հնչակեաններ եկան, եղելութիւնները մեզ հասկացրին. Հնչակեան Կուսակցութեան առանձին Մասնաճիւղ կազմեցինք: Հիմա Թուրքերը գալիս են մեզանից

անդամավճար ուզում․ բայց մերժում ենք եւ ասում, որ մեր Կեդրոնին կը գրենք․ եթէ այդ էլ չը լինէր, մեր ապրանքները կը ծախէին եւ «իրենց դրամները» կը գանձէին: Իտալհատականների հետ չափազանց լարուած դրութիւն ունենք: Մեր Մասնաճիւղը բաղկացած է 30 հոգուց»:

— Հայ ուրիշ կուսակցութիւններ չը կա՞ն:

— «Ո՛չ»:

— Ձեր վիճակը ի՞նչպէս է:

— «Գէշ չէ․ մի կերպ ապրում ենք: Բոլորս էլ գործի, դրամունքի տէր ենք: Մեր աշխատանքի կէսն էլ եթէ մեր ձեռքին մնայ, դարձեալ գոհ կը մնանք… Միշտ երկիւղի մէջ ենք՝ թէ մի բան կը պատահի: Մեր տները, խանութները շատ յաճախ գողութիւնների են ենթարկւում․ ապահովութիւն չունենք…»:

Այցելեցինք դպրոցը․ երեխաները ընկճուած երեւոյթ ունեն: Մարդու գլխի կրակ է թափւում, սիրտը ճմլթում, երբ համատարած այդ բարբարոսութեան մէջ Հայի լուսոյ ջահին է հանդիպում:

Կաշկանդող ոգին՝ թուրք բռնապետութիւնը իր ամբապետութեան մէջն էր այստեղ էլ:

Տխուր սրտով բաժանուեցանք:

ՀԱՒԶԱՅԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԱՐԶՈՒԱՆ — Իրիկնապահին ճանապարհ ընկանք դէպի Մարզուան:

Մեր ճանապարհը անցնում է ուռենիներով եզերուած ձորակի միջով․ ձախ կողմից անցնում է փրփրադէզ մի գետակ:

Զաւիթափերի բերանին հասած՝ տեսանք, որ Մարզուանի կողմից դէպի մեզ է գալիս մի կառք, ուրախութեան աղաղակներով: Դուրս են գալիս, վազում, գրկախառնւում ենք․ դրանք մեր վաղեմի՝ կոճղ ընկերներն են՝ Խաչատուր Ադամեան, Արգար Պարսամեան եւ Ադասի Ադայլկեան:

Իջնում ենք վայր միասին․ հանգիստ առնելու՝ մտանք Թումայեանների ջրաղացների առաջ տարածուած օդասուն ծառաստանները:

Դիմաւորելու եկան, այստեղ, առանձին կառքով՝ Հ․ Յ․ Դաշնակցութեան Մարզուանի ընկերները:

Միասին ճաշեցինք. երգեցինք. մեր ընդհանուր ցաւերի մասին զրուցատրեցինք:

Դուրս եկանք միատեղ ճանապարհը շարունակելու:

Մի քանի քայլ առած՝ երեւացին վեց ձիաւոր ընկեր. առաջ անցանք՝ ձիաւորները սկսեցին շատանալ, դեռ քաղաքին չը հասած՝ 200-ից աւելի հասաւ ձիաւորների թիւը: Ապա դէպի մեզ ուղղուեցան կառքերի շարանները:

Մի քիչ յետոյ՝ եկաւ ուսուցչական խումբը՝ ընկեր Գագիկ Օզանեանի առաջնորդութեամբ. ճանապարհի երկայնութեամբ շարուած էին դպրոցների երկսեռ աշակերտները եւ աշակերտուհիները:

Քաղաքի մօտերը՝ առանձին կառքով եկաւ գայմագամի ներկայացուցիչը՝ բարի գալուստ մաղթելու:

Բազմութեան թիւը հասաւ աւելի քան 3000-ի:

Կազմուեց հսկայ թափօր†:

Այդ ահագին բազմութեամբ անկարելի էր սովորական ճանապարհով՝ շուկայի միջով անցնել. բռնեցինք այգիների ուղին:

Բազմութիւնը հետզհետէ աւելի ու աւելի ստուարացաւ:

Դուրս էին թափուել՝ եւ խումբ խումբ շարաններ կազմել թուրքերը, նրանց կիները, երեխաները:

Թափօրը կանգ առաւ ընկեր Գագիկ Օզանեանի դրան առաջ:

Այդ ծովածաւալ բազմութիւնը միաբերան սկսեց «Մեր Հայրենիք»ը եւ «Հնչակ»ը:

Հասարակութիւնը սպասում էր խօսքի:

Պատուհանի առաջ կանգնած՝ ասացի.

«Մարզուանը Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան որրաններից մէկն է եղել:

«Դեռ այստեղ թարմ են մեր նահատակ ընկերների յիշատակները. դեռ կենդանի են մեր հինաւուրց մարտիկ ընկերները:

«Լեւոնի, Մխիթարի, «Եօթը եօթը հարիւրի դէմ կանգնող» *մեր մարտիրոսների գերեզմանները ձեզ գրաւական, որ մեր*

---

† Մանրամասնութիւնը տեսնել՝ ընկեր Գագիկ Օզանեանի շունչով գրուած՝ «Երկիր»ի մէջ:

Կուսակցութիւնը, որին դուք տալիս էք այդ եզակի պատիւը, երբէ՛ք, երբէ՛ք չը պիտի դադարի Հայ Ազգի արդար Դատը պաշտպանելուց մինչեւ վերջ․ նա հաւատարիմ իր ընդգրկած սկզբունքներին՝ միշտ պիտի քայլէ՛, քայլէ՛, միշտ պատնէշի վրայ մնալով՝ մինչեւ որ հայ ժողովուրդը ստանայ իր լիակատար ազատագրութիւնը։

Այս «Սահմանադրութիւն»ը որ կայ, նա նպատակ չէ՛ մեզ համար, այլ մի շատ սեղմ միջոց՝ իսկական պարլամենտականութեան եւ ազգերի ինքնորոշման իրաւունքին հասնելու համար։

Մենք դեռ շատ ճանապարհ ունենք քայլելիք, շատ խութեր անցնելիք․ գուցէ նորից արեան գետեր ունենանք՝ մինչեւ մեր վերջնական յաղթանակը ձեռք բերելը։

Հէնց դրա համար էլ ժողովուրդը պիտի մնայ հաստատուն, աննկուն․ իր կամքը եւ աջակցութիւնը բերի, որպէսզի համազգային պարտականութիւնը կատարուի ցանկալի սահմաններով։

Ժողովուրդ, չը փորձուես, դու ինքդ քեզ ինքնամոռացութեան մէջ չը ձգես․ մի՛շտ արթուն, մի՛շտ հսկող մնացի՛ր քո Դատիդ։

Մի՛ մոռացիր, որ ձեռք բերուածը քո արեան գինն է եղել․ մի՛ մոռացիր, որ դուն դեռ Պահանջներ ունես։

Մարզուանցիներ, Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան պատուանդաններից մէկն էք եղել․ շարունակեցէք մընալ ձեր դիրքի մէջ, մինչեւ որ այդ պատուանդանների վրայ կառուցուած Ինքնավար Հայաստանի արձանը մէջտեղ գայ։

Եւ այդ կը լինի, երբ ամբողջ Հայ ժողովուրդը կը շարունակի հաւատարիմ մնալ Հայ Յեղափոխութեան սկզբունքներին․ բոլորն էլ նրա ազդակները կը լինեն եւ պարտականութեան զինուորներ կը դառնան։

Արթնեցէք, գործեցէք, աշխատեցէք․ բայց ամէն բանից առաջ արթնեցէք, գործեցէք, աշխատեցէք Հայ Ազգի ազատագրութեան համար․ Հայաստանը, մեր արիւնոտ հայրենիքը մոռահան մի՛ արէք, ուր էլ որ լինիք»։

Բազմութիւնը աղաղակեց․ «Կեցցէ՛ Հայաստան», «կեցցէ՛ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւն»։

Հասարակութիւնը ցրուեցաւ՝ երգելով:

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ.— Գիշերը մինչեւ վերջին ժամերը, գունդագունդ բարի գալուստի եկան հասարակութեան բոլոր խաւերից:

Յեղափոխական տարրը, անխտիր, մասնաւոր ոգեւորութեան մէջ էր:

Առանձին խմբերով եկան Հայոց դպրոցների եւ Ամերիկեան Կոլէժի ուսուցիչները:

Եկան ե՛ւ Իթթիհատի Ակումբի հայ ու թուրք անդամները միասին:

Ընկերները ուշ ժամանակ ինձ «յանձնեցին» ընկեր Գադիկ Օզանեանին:

ԳԼՈՒԽ Ե.

ԿՈՒՍԱԿՑԱԺՈՂՈՎՆԵՐ.— Չորեքշաբթի, Մայիս 17. առաւօտեան շատ կանուխ գործի սկսեցինք:

Անհրաժեշտ կարգադրութիւններից յետոյ՝ Մասնաճիւղի Վարչութեան եւ Գործադիր Յանձնախումբի անդամների հետ խառն ժողով կազմեցինք՝ գործելիքի, անելիքի մասին տնօրինութիւններ անելու: Վճռուեցան տակտիկական զանազան առկախ խնդիրներ:

Երեկոյեան՝ մեր թատերասրահի մէջ ունեցանք ընդհանուր անդամական ժողով. ներկայ էին 450 ընկերներ եւ 30 ընկերուհիներ: Տեղի անձկութեան պատճառով մի մասը գրաւեց թատերաբեմը:

Բանախօսութեան նիւթը եղաւ Կուսակցութեանս Կազմական Կանոնագրի տրամադրութիւնները, Ծրագրի զանազան մասերը. քաղաքական ընդհանուր կացութիւնը եւ մեր Կուսակցական տակտիկան:

Ընկերները առաջարկեցին 150 հարցեր՝ քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մասնաւորապէս Սօցիալիստական խնդիրների մասին:

Միայն մի մասի պատասխանը տրուեցաւ. որոշուեցաւ մի մասը յետաձգել ուրիշ ժողովների:

Մարզուանի կորիճ, կորովի, անձնուրաց երիտասարդութիւնը այստեղ էր: Տիրող ոգեւորութիւնը, խանդավառութիւնը ցոյց էր տալիս Հայի աննկուն, անընկճելի կորովը:

Ոչինչ այնքա՜ն բոցավառող, որքան հին, ամէն տառապանքներ քաշող ընկերների կողքին տեսնել նորերը՝ է՛լ աւելի խիզախ, յանդուգն:

Մեր թափած արիւնը ի զուր չէր անցել. մեր նահատակների ցանած սերմերը ապառաժների չէին հանդիպել: Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ծլել, ծաղկել, ընդարձակ դաշտեր էր գրաւել. ընկնող մէկի փոխարէն հարիւրաւորներ էին եկել:

Այդ ժամերի յիշատակները կը մնան անթառամ:

ՊԱՏՄԱԲԱՆԸ.— Հինգշաբթի, 18 Մայիս. կանուխ այցելութեան է եկել պատմաբան, նաեւ գրագէտ, Կիւլպէնկեանը.

խօսակցութեան առինքող ձեւ ունի. լեզուն գրաւիչ՝ հմայիչ է. փիլիսոփայի ծանրախոհութեան հետ միասին՝ ունի և՛ Սերվանտէսեան խայթիչ երգիծանք: Պատմում է անցեալ սեւ օրերից. աշխատում է պատկերները վերարտադրել մի գունագեղ լեզուով, իրական նկարչի վրձինով:

Աւելացնում է. «Կառավարական խստութիւնները որքան որ ծայրագունութեան հասնէին. այնուամենայնիւ մենք նրա քըթին կը խնդայինք»:

Համոզելու համար՝ խօսակիցս ցոյց է տալիս այդ ժամանակները *գրուած նամակները: Կարդում եմ. դրանք բոլորն էլ չէնքով-շնորհքով բարեւագրեր, սիրահարական եւ կամ վաճառականական նամակներ են: Կարդացնել է տալիս տող ընդ մէջ կամ վայրից վեր՝ դուրս է գալիս յեղափոխական բովանդակութեամբ մի «վնասակար» նամակ: Բացատրում է իրենց գաղափարագրութիւնները. Թւում է իրենց ծածկալեզուի բառերը. օրինակ* պղպեղ՝ *նշանակելիս է եղել վառօդ:* Աւետարան՝ *գործ է ածուել ատրճանակ, մանր զէնքեր հասկացնելու. իսկ* Աստուածաշունչ՝ *հրացան, խոշոր զէնքեր:*

Պատմարանս ծիծաղելով ասում է. «Մի օր, Սամսոնում, այդ նամակներից մէկը բռնուել է. Կառավարութիւնը զարմանքով հարցրել է թէ՝ այս ի՞նչքան պղպեղ *էք կերել մի քանի ամսուայ մէջ. հէնց դրանից է, որ ձեր քաղաքը խենթացել է: Աւելի ծիծաղելին է Մարզուան ներս մտնող ապրանքների մասին Կառավարչի տուած տեղեկագիրը. նա գրած է եղել. «Սամսոնից այս տարի Մարզուան է ուղարկուել չափազանց քանակութեամբ պղպեղ, Աւետարան եւ Աստուածաշունչ: Դրանք ցոյց են տալիս որ Ամերիկեան միսիոնարների ազդեցութիւնը շատ մեծ ծաւալ է առնում»:*

ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏԸ.— Մասնաւոր տեսակցութեան եկաւ նա՛եւ պրոֆեսոր Յակոբեանը, որ «Ամերիկեան Կոլէժ»ի գիտնական ույժերից մէկն է:

Թողնում է իսկական գիտնականի տպաւորութիւն: Ինքը արդէն ներհուն հայկաբանի, լեզուաբանի եւ բանասէրի համբաւ ունի:

Իր բառերը չափուած, կշռուած են. խօսակցութեան եղա-

նակը՝ տպաւորիչ։ Շատ լաւ ուսումնասիրած է Թուրքի հոգեբանութիւնը. ամէն տեսակ չար ու բարի տեսած՝ յարգելի մի անձնաւորութիւն։

Շատ մեծ հաւատք ունի Հայ Ազգի տոկունութեան, ընդունակութեան, ուժեղ նկարագրի վրայ։ Միայն ուզում է, որ այս անցողական շրջանը մի կերպ բոլորենք, անցնենք, առանց շատ մեծ կորստի, մինչեւ որ վերջնական կարգադրութիւն գայ։

Եւ փիլիսոփայի սեւեռուն մտահայեցութեամբ նա համոզուած է՝ տաք կերպով, որ այդ վերջնական կարգադրութիւնը կը գայ ճակատագրականօրէն, որովհետեւ Թիւրքիայի օրերը այլեւս համրուած են Պատմութեան էջերի մէջ։

Պատկառելի ուսուցչապետը իր ճերմակ, ճինաթոյր մազերը ոգեւորութեան ալիքներին տալով՝ պատմեց շատ քաղցր պատմութիւններ. կեանքը, իրականութիւնը արտայայտող՝ մի տեսակ վարքագծեր, բնոյթագրեր։

Դրանցից երկուսը նշանակել եմ Յուշատետրիս մէջ։ Տալիս եմ նոյնութեամբ։

«Յաճախ «Երիտասարդ Թուրքեր»ը սուտ–սխալ՝ զանազան դիտումներից մղուած, աջ ու ձախ ասում, յայտարարում են, որ Ղուրանի մէջ Տիրող Իշխանաւորներին պատուիրուած է, որ ամէն բան, ամէն կարգադրութիւն անեն ժողովրդի մեծամեծների հետ խորհրդակցելով։ Այդ տեղից նրանք եզրակացնում են, որ Ղուրանը հրահանգում է Սահմանադրութիւն եւ Պարլամէնտական Դրութիւն։

«Հարկաւ «Երիտասարդներ»ը դեռ չգիտեն թէ պետութեանց ծագման, կազմակերպութեան սկզբնական օրերին՝ ժողովրդական մեծամեծների խորհրդակցութիւնը Իշխանի, Թագաւորի հետ մինչեւ ուր էր հասնում եւ ի՛նչ բնոյթ ունէր։ Բայց այդ թողնենք։

«Մի օր՝ «Երիտասարդ Թուրք»երի այդ բացատրութիւնը, ինչպէս որ Թուրք թերթերի մէջ գրուած էր, հիմ բռնելով՝ մեր քաղաքի նշանաւոր Խոջային հարց դրի. ասացի, Խոջայ, քանի որ Սահմանադրութեան գաղափարը Ղուրանական ծագում եւ սրբագործութիւն ունի՝ ապա ինչո՞ւ այդքան ուշացրիք. ինչո՞ւ էք քրթմնջում, երբ խնդիրը սահմանադրական իրաւունքների է՛լ աւելի ընդլայնմանն է գալիս. ուրեմն դրա–

նով հակաղուրանական գործ չէ՞ք կատարում :

«Մեր Խոջան, որ Ղուրանի մեկնաբանութեան եւ մուսուլմանական Շէրիաթագիտութեան մէջ առանձին հեղինակութիւն ունէր · աչքերը ճմռելով՝ ասաց · «Այո՛, Ղուրանի մէջ մի այդպիսի զուրցուածք կայ · բայց դա ուղղուած է Իսլամ Պետերին, Իսլամ մեծամեծների հետ խորհրդակցելու եւ ո՛չ թէ Քրիստոնէից, որոնք առ առաւելն մեր հաւատարիմ ենթակաները, մեր մշտական «աւանդները» պիտի մնային : Սրանից դուրս եղածը բռնազբօսիկ բացատրութիւն է, խեղաթիւրում է Ղուրանի ոգուն» :

«Մի օր էլ՝ այդ 80 տարեկան ծերուկը ինձ հարցրեց՝ մի քիչ այրուած սրտով, հեգնական ոճով · «Իրաւ, դուք հայերդ հաւասարութի՞ւն էք ուզում : Այդպիսի պահանջ դնողները ձեր անփորձ երիտասարդները, տաքարիննե՞րն են, թէ՞ լուրջ, բանիմաց մարդիկը : Մի՞թէ մեր եւ ձեր մէջ հաւասարութիւն կարող է լինել» :

«Գիտենալով Խոջայի հոգին, նրա զգացմունքների սահմանը՝ ամենայն հանդարտութեամբ պատասխանեցի՝ ո՛չ : Մենք հաւասարութիւն չենք ուզում · որովհետեւ արդէն չի կարող լինել · միայն թէ էն էլ բաւական է, եթէ մեր գոյքերի կէսը մեզ թողնէք, կէսն էլ ձեզ առնէք · այդ արդար կէսի հաւասարութեան դուցէ հաւատացուի · եթէ այդպէս լինի՝ գոհ եւ շնորհակալ կը մնանք ձեզանից · իսկ մնացած հաւասարութիւնը, գիտենք, որ չը կայ եւ չի կարող լինել : — «Այո՛, բացագանչեց Խոջան համոզուած ձայնով, այդ էլ ձեզ հերիք է · հաւասարութիւնը մեր եւ ձեր մէջ այդ գնով, այդ չափ կարող է լինել, ո՛չ աւելի» :

Պրօֆեսորը շարունակեց :

«Սրանից մի քանի ամիս առաջ այդ Խոջան մեռաւ · մեռնելուց ուղիղ երեք շաբաթ առաջ՝ ճանապարհին ինձ բռնեց՝ ասաց · «Մենք ձեզ շա՛տ չարչարեցինք, շա՛տ տանջեցինք · ձեր ունեցած-չունեցածը յափշտակեցինք, աւարի տուինք՝ «Կոմիտաջի Ազգ» էք ասելով : Ձեզանից շատ անմեղների ամէն տեսակ խոշտանգանքների, սարսափելի կտտանքների ենթարկեցինք : Շատերին բանտերի, աքսորավայրերի մէջ մաշեցրինք, հալեցրինք · էլ բան չը մնաց, որ ձեզ փճացնելու համար խորհած

եւ գործադրած չը լինէինք: Բայց այդքա՛ն արհաւիրքներից, այդքա՛ն կոտորածներից յետոյ՝ ի՞նչ եմ տեսնում. տեսնում եմ, որ դուք դարձեալ մեր ձեռքից ամէն բան առել էք. դուք նորից յառաջադիմել և ահագին ապարէզներով մեզանից հեռացել էք. դուք վերստին տուն ու տեղի, կալուածների տէր էք դարձել եւ երկրի ամէն կողմերում պատկառելի ույժ էք ներկայացնում: Այդ բանի վրայ մտածելով՝ շատ անգամ ասել եմ, արդեօք եգիպտական պատմութիւնը մեզ հետ էլ չը պիտի՞ կրկնուի. արդեօք մեր Փատիշահի գահն էլ Փարաւոնների վախճանին չը պիտի՞ հասնի: Կը վախնամ, որ մեր Տէրութիւնն էլ այդպիսի տխուր վախճան ունենայ»: Եւ Խօջան այդ ասած ժամանակին՝ մօրուքը շփեց, աղաղակեց. «Ալլա՛հ, հեռացրու այդ օրը»: Խօջան մնաս բարեւ ասաց. գնաց միւս աշխարհը. է՛լ չը տեսայ»:

«Աւելացնեմ հետեւեալն էլ: Երբ, բոլորովին վերջերս, հայերն ու Թուրքերը հաւասարութեան օրէնքի բացատրութեան համար դատախազին են դիմում. նա ասում է. «Այո՛, բոլոր Օսմանցիները օրէնքի առաջ հաւասար են եւ ազատ իրենց քըւէները տալու մէջ. բայց աւելի լաւ է, որ ձեր քուէները խալամի տաք. դա ձեր գործը է՛լ աւելի կը դիւրացնի»: Սա արդէն ցոյց է տալիս, թէ այս երկրի մէջ հաւասարութեան սկզբունքը ինչպէս է գործադրւում»:

«Քանի որ խօսքը հաւասարութեան մասին է, յարեց խօսակիցս, պատմեմ մեր քաղաքի օրինակը. դա ամենից աւելի լաւ կը պարզաբանի տիրող ոգին»:

«Համիտի բռնապետութեան շրջանին՝ Հայերի տները իրենց արժէքից շատ վեր գնահատուեցան կառավարական գործակալների կողմից՝ մեզանից աւելի մեծ գումարներ շորթելու դիտումով: Թուրքերինը՝ ընդհակառակը՝ որ մերիններից կրկնապատիկ, եռապատիկ աւելի արժէր, շատ ցած արժէքաւորուեց, որպէսզի քիչ հարկ առնուի: Եւ բռնապետութեան շրջանին մենք այդ եղանակով կեղեքուեցանք՝ չորս, հինգ անգամ աւելի վճարելով՝ քան մեր հարեւան Թուրքերը: Արդ, երբ եկաւ այս՝ Միտհատեան հռչակաւոր «Սահմանադրութիւն»ը, Թուրքերը բռնուեցան իրենց սեպհական ձեռքերով ձգած թակարդի մէջ: Հայերն էլ իրաւունք ունէին քաղաքապետական գործերին մաս-

նակցելու, քուէ տալու։ Եկան քաղաքապետական պաշտօնէից ընտրութիւնները․ հարկաւոր էր ընտրել քաղաքագլուխ։ Երկու մրցող ընտրելիներից Հայը յաղթող հանդիսացաւ՝ 80 քուէ աւելի շահելով։ Թուրք պետական օրինականութեան բոլոր ձեւականութիւնը՝ իր տառացի հասկացողութեան մէջ՝ լիակատարապէս գործադրուել էր, եւ այդ էլ իրենց՝ Թուրք պաշտօնէից ձեռքով։ Բայց ի՞նչ եղաւ դրա արդիւնքը։

«Հաստատուե՞ց, պաշտօնի գլուխ անցա՞ւ Հայ քաղաքագլուխը․ երբէ՛ք։ Ահա թէ ինչ դարձուածքներ տեղի ունեցան։

«Մարզուանի Թուրքերը բոլորովին մի անիմաստ գրութեամբ բողոքեցին Ամասիայի կառավարչին․ սա գործը քննելով, քուէարկութեան պարագաները եւ քուէ տուողների համգամանքները ճշտելով՝ իրաւունք տուեց հայ ընտրեալին։

«Բայց մեր քաղաքակից Թուրքերը դրանով չը բաւականացան․ Խաթիհաթի Ակումբի անդամները իրենց գլուխ ունենալով՝ նրանք դիմեցին Սեբաստիայի կուսակալին․ սա էլ, առանց աջ ու ձախ նայելու, անմիջապէս նշանակեց ժամանակաւոր *մի Թուրք քաղաքագլուխ եւ քուէարկութեան, ընտրութեան վաւերաթղթերը պահանջեց։ Երկար սպասելուց յետոյ՝ պատասխանը առանք․ Հայի ընտրութիւնը բեկանուեց․ ահա թէ ինչ պատճառաբանութեամբ»։*

«Ի նկատի ունենալով, որ Բռնապետութեան շրջանին միւլքիմանների կոչուածները պէտք եղած հոգացողութեամբ չեն գնահատուել եւ հայերը զանազան նկատումներով իրենց տները աւելի արժէքաւոր են ցոյց տուել․

«Ի նկատի ունենալով, որ այս քուէարկութիւնը հայերի գործած այդ անարդարութեան եւ անհաւատարութեան արդիւնքովն է եղել․

«Կառավարութիւնս բեկանում է եղած ընտրութիւնը, նշանակում է ժամանակաւոր *քաղաքագլուխ, մինչեւ որ իրերը օրինական սահմանի մէջը մտնին»։*

«Ահաւասիկ թէ հաւասարութեան, արդարութեան գաղափարը ինչպէս գործադրուեց մեր աչքի առաջ՝ այս «Ազատութեան», «Սահմանադրութեան», օրերի մէջ։ Եւ մեր Խոջան իրաւունք չունէ՞ր հեգնելու»։

«Բայց մի թարմ օրինակ էլ։

«Քաղաքիս մէջ բաւականաչափ Թուրք գործաւորներ եւ փոքրիկ արհեստաւորներ կան: Սրանք դիմում են Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան տեղւոյս Մասնաճիւղին եւ բողոքում իրենց եղած զրկանքների, իրենցից անխղճօրէն առնուած յաւելեալ տուրքերի դէմ:

«Մասնաճիւղի Վարչութիւնը, որպէս քաղաքական մարմին, միջամտում է, գործը գայմագամին է հանում»:

«Մեր մոլեռանդ գայմագամը լսում է, ձայն չի հանում. խոստանում է կարգադրել:

«Նա կանչում է գանգատաւոր Թուրք գործաւորներին եւ արհեստաւորներին, ու նրանց ասում. «Իսլամի համար ամբարշտութիւն է ոչ-իսլամի բերանով եւ միջոցով արդարութիւն, իրաւունք խնդրելը՝ իր իսլամ եղբօրից: Դրանով մեր կրօնական եւ պետական օրէնքները բոլորովին կոտնակոխուեն, կանարգուեն, եւ այդպէս արողները օրէնքի խստութեանը կենթարկուեն, որպէս օրինազանցներ, ոչ-ճշմարիտ իսլամներ: Եթէ մի բան ունէք ինձ ասելիք, կա՛մ ինքներդ ուղղակի եկէք եւ կա՛մ Իտտիհատի Ակումբի միջոցով ձեր պահանջները ներկայացրէք, որպէսզի նկատողութեան առնեմ: Հիմա գնացէ՛ք, մի առ ժամանակ էլ սպասեցէք, ձեր գործը վերջը կը լսեմ, կը կարգադրեմ»:

— Եւ ի՞նչ է հիմայ ձեր կարծիքը, ի՞նչ խորհուրդ կը տաք, յարգելի պրոֆեսոր:

— «Եթէ խորին ծերութեան մէջ չը գտնուէի, ես էլ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Գործիչ, Պրօպագանդիստ կը դառնայի. ես էլ հայ ժողովրդին կասէի ա՛յն, ինչոր ձերոնք ասում են. ես էլ հայ ազգին կը թելադրէի բռնել այն ուղին, ինչոր մատնանիշում էք:

«Կազմակերպեցէ՛ք այս ժողովրդին, քարոզեցէ՛ք, խօսեցէ՛ք, բացատրեցէ՛ք, պարզաբանեցէ՛ք իրերի իսկական դրութիւնը:

«Այս ժողովուրդը անապատի մէջ մի ովասիս է. խաւարի մէջ լուսոյ մի պայծառ սիւն:

«Եւ թող այս ժողովուրդը ապրի՛, ապրի՛:

«Նրա կեանքը պէտք է Մարդկութեան, Քաղաքակրթութեան եւ Յաւիտենական Աստուծոյ համար...»:

Ուսուցչապետը մնա՛ս բարեւ տալ․ գնաց։ Նա լեռն վրայ թողեց Աստուածաշնչի Յակոբ Նահապետի տպաւորութիւնը։ Իր խօսակցութեան ձեւը, շեշտը, հայրական նայուածքը, դրդուանքը․ իր ալեխառն գլուխը, սպիտակ մօրուքը, կնճռալից ճակատը՝ տալով էին, այդտեղ կայ կեանքը ճանաչող, գրքերի ծալքերի մէջ չունչը հատցնող, իր Ազգի եւ Ժողովրդի համար խորհող մի գլուխ, զգացող մի սիրտ։

Այդ պատկերը քանդակուած կը մնայ յիշողութեանս մէջ՝ մինչեւ վերջ։ (*)

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ․— Երեկոյեան ժամը 8–ին․ Ս․ Սահակեան Մանկավարժէցի ընդարձակ սրահի մէջ՝ տեղի ունեցաւ առաջին հրապարակային ժողովը։

Նիւթն էր․ «ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐ ԵՒ ՍՕՑԻԱԼ ԴԵՄՕԿՐԱՏԻԱ»։

Ժողովի ատենապետն է ընկեր Խաչատուր Ադամեան։

Ժողովրդի բազմութիւնը ահագին էր․ հազիւ թէ 1500 հոգի մի կերպ իրարու վրայ էին թափուել՝ սրահի մէջ․ շատերը կանգնել էին դուրսը՝ եւ բաւականանում պատուհաններից, դռներից լսելով․ յետ գնացողների թիւը քիչ չեղաւ՝ տեղի անձկութեան պատճառով։

Ներկայ էին հայ եւ ամերիկեան վարժարանի բոլոր ուսուցիչները եւ ուսուցչուհիները, նմանապէս բարձրագոյն դասարանների աշակերտներն ու աշակերտուհիները։

Թուրք Իտտիհատականներն էլ, իրենց հայ ընկերներով, առանձին տեղ էին գրաւել։

Շօշափուած խնդիրներն էին, ցոյց տալ, որ Օսմանեան Պետութեան մէջ կան Ազգեր․ ապացուցանել գիտական բոլոր տուեքներով՝ որ Հայը Ազգ է․ հաստատել, որ Օսմանեան մէկ ազգութիւն չը կայ, որպէս արդիւնարար բոլոր ազգերի, որ Օսմանեան ազգութիւն եւ Թրքութիւն համանիշ են։ Ապա հերքուեցաւ պուռտ, լրջութեան հետք անգամ իր մէջ չը բովանդակող

(*) Մինչեւ ցարդ հասած տեղեկութիւններից երեւում է, որ Մարզուանի տեղահանութեան ժամանակ՝ Պրօֆեսորին սպանել են, չարաչար տանջանքների ենթարկելուց յետոյ։

այն կարծիքը՝ թէ Սօցիալիզմը մասնաւոր՝ կանխամտածուած ծրագիր ունի ազգութիւնը ջնջել։

Ժողովը տեւեց երեք ժամ։

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՈՒՀԻՆ.— Ուրբաթ, Մայիս 14։ Այդ օրը չափէտ թարմ, անջնջելի պիտի մնայ յիշողութեանս մէջ։

Վաղ առաւօտեան տեսութեան եկաւ ընկերուհի ՄԱՐԻՆՈՍԸ, իր փոքրիկ երեխայի ձեռքից բռնած։ Արտասուքը աչքերին՝ ջղաձգութիւնների մէջ՝ նա շարունակում է առաջ գալ. մօտենում է՝ աղաչում, պաղատում, թախանձում, պահանջում է ձեռքս համբուրել...։

Ես էլ յուզուեցայ։

Կեանքի մէջ բոպէներ կան, որ փիլիսոփայութիւնը, սառը դատողութիւնը գործ չունի։ Խօսքը մնում է զգացմունքին, եւ սա ենթակային ճմլում, առնում է իր տիրապետութեան տակ՝ արորում։

Մարինոսը մեր նահատակ Մխիթարի քոյրն է. այն Մխիթարի, որի յիշատակով, որի անունով յեղափոխական սերունդներ են կրթուել, դաստիարակուել, նրան՝ իրենց կեանքի օրինակը դարձրել։

Մարինոսի ջղուտ դէմքը ոչնչով չի տարբերւում Ժան դ'Արքի դիմագծերից։ Նրագուն, միշտ վերեւ սլացող, անուրջների թեւերի վրայ թռչող հոգի ունի։ Խօսակցութեան ժամանակ՝ իր ձեռքերի շարժումները, գլխի շարունակ վերեւ՝ ուղղաձիգ պահելը, աչքերը հեռուն սեւեռելը եւ յանկարծ վար իջեցնելը այդ արտայայտութիւնն են տալիս։

Նա համակ բնաւորութիւն է. ուժեղ կամք. երկաթի նկարագիր, որ խօսքից, մի անգամ տրուած վճռից յետ դառնալ չը գիտէ։

Առաջին բոպէից ունկնդիրը տեսնում է, որ արտաքոյ կարգի մի անհատականութիւն է նա։

Մեր Կանանց Մասնաճիւղը, գլխաւորապէս, նրան ենք պարտական. դա նրա անխոնջ ջանքերի արդիւնքն է։

Յոգնել, ձանձրանալ նա չը գիտէ. միշտ ոտքի վրայ. անդուլ անդադար վազել, երթալ, գալ, տնօրինել, գործ տեսնել։

Մենք ո՛չ նուազ նրա ճիգերին ենք պարտական Ե՛ւ Արանց

Մասնաճիւղը: Բացակայ, թերացող ընկերներին հրաւիրողը, գործի կանչողը նա է: Նա կուսակցական մի մտրակող է, ինչպէս որ ասում են Անգլիացիները՝ իրենց կուսակցա-պարլամենտական լեզուի մէջ:

Ի՞նչ կը լինէր Մասնաճիւղը, եթէ Բռնապետութեան շըրջանին Մարինոսը եղած չը լինէր: Տնէ տուն վազող, գիւղէ գիւղ գնացող, քաղաքէ քաղաք երթեւեկող՝ տեղի վրայ եղած խընդիրները, իրերի դրութիւնը, Կեդրոնական Վարչութիւնից եկած հրահանգները Խմբապետներին հաղորդողը՝ նա է եղել:

Մարինոսը 15 տարեկան է եղել, երբ Յեղափոխական կեանքի մէջ է մտել: Նա տեսել, ճաշակել է բանտի տանջանքները, օրերով սովամահութեան է ենթարկուել, ծեծուել, խոշտանգուել է. բայց նրա շրթունքները չեն բացուել՝ բերանից մի գաղտնիք դուրս հանելու:

Շմաւոնը իր Փոքր-Հայքի յաջողութիւնների եւ գործունէութեան շրջանակների ընդլայնման մեծ մասը նրան է պարտական, եւ բացառապէս նրան:

Թագստոցների մէջ ապրող խմբերին, լեռների վրայ ապաստանող «Հրոսակ»ներին կերակրող, լուր, տեղեկութիւն, ռազմամթերք տանող-հասցնողը նա է եղել: Եւ միշտ էլ յաջողել: Մինչեւ որ մատնիչը իր մասը պարզել, նրան ցոյց է տուել, եւ բանտ, զնդան մտել:

Մարինոսը իր բանտային կեանքը, եղբօր՝ Մխիթարի չարչարանքները, ծերունազարդ հօր կրած տուայտանքները այնպէ՛ս ոգեւորուած, խանդավառ ոճով է պատմում, որ մարդ շուարում է, զգում, տեսնում է, որ ներշնչուածի հետ գործ ունի:

Եթէ Սաադին ներկայացնէր վարդաստան եւ սոխակների գեղգեղանքից ալեկոծուող մի վարդ, որին քաղելու է մօտենում երազուն մի օրիորդ, գուցէ նա էլ չը կարողանար տալ երազողի այն վառ, խորազգած հոգին, ինչպէս որ Մարինոսն է արտացոլացնում, երբ հեւ ի հեւ պատմում է իր հարցաքննութեան այն պարագաները՝ թէ ինչու ինքը Յեղափոխական էր դարձել եւ ի՞նչ ուզում:

Այդ նիհար, փոքր կազմի մէջ բովանդակուող հոգին, որ անօրէն մարդկութեան ձեռքից դառնութեան բաժակը քամել

է մինչեւ մրուրը, հոգեկան մի առանձին հրճուանքով, սրտի մի մասնաւոր արխութեամբ երգում է. «Ուրախ եմ, որ եղբայրըս մեռաւ Ս. Գործի համար. հազա՛ր երանի, եթէ ես էլ մեռած լինէի, միայն թէ Հայաստանը, Ազգը ազատուէր»:

Բայց նա այդ չի ասում՝ բեմից խօսողի նման, որպէս նախադասութիւններ արտայայտող:

Նա այդ ասում է, որպէս համոզմունք, եւ մի ա՛յնպիսի շեշտով, ձեռքերի ա՛յնպիսի շարժումներով, որ վճռական հոգին, պատասխանատուութեան գիտակցութիւնը անմիջապէս նկարւում, արտացոլանում է:

Գիծը դրանով չի վերջանում:

Մարինոսը մի գթոտ հայեացքով՝ ճարտասանական դիմանութիւններ է անում դէպի բացակաների ուրուականները, դէպի նրանց՝ մանաւանդ՝ որոնք այսօր այլեւս չը կան, եւ եթէ կան, ապա բարոյական պարտութեան մէջ են: «Հակայեղափոխականները ասում էին առաջ, դեռ մինչեւ երէկ, թէ Հայ Յեղափոխականները ոճրագործներ, Ազգի տունը քանդող, աւերողներ էին: Նրանք մեզ հայհոյում, մեր գլխին անէծք էին թափում, մեզ մատնում, բանտերի մէջն էին թաղում: Բայց վերջը իրենք ամաչեցին, զղջացին, տեսան, որ սխալուել են, որ մեր փրկութիւնը Յեղափոխութիւնից պիտի գար»:

Ու երբ Մարինոսը տալիս է կուրծքը գնդակներով ծակծըկուած Մխիթարի հերոսական մարտնչումի վերջին արարուածը, «Եօթը եօթը հարիւրի դէմ» *պատմական կռուի պատկերը՝ սլացած, ոգեւորուած, զգում ես, որ առաջդ կանգնած է մի վեհագոյն անհատ, որ սովորականներից չէ:*

Իսկ երբ հրոսակախմբին շրջապատելու եկող Թուրք զինուորների եւ ծովածաւալ խուժանի խուճապի ընդհանուր նկարագրութիւնն է տալիս, ու դրա հետ իր արհամարհանքի ժպիտն է արձակում, այլեւս համոզւում ես, որ դա մի հերոսուհի է, Հայ հերոսուհի՝ աւելի՛ բարձր, աւելի՛ վսեմ...:

— Մարինոս, փոքրիկդ քանի՞ տարեկան է:

— «Եօթը. ուխտել եմ, ասել եմ, թող չը մեծանայ, թող աչքս չը տեսնի. եթէ իր քեռու ճանապարհովը չը պիտի երթայ:

Ի՞նչ պիտի անեմ աշխարհը· ինչի՞ս պէտք ուսում, գիտութիւն, երբ մեր ազատութեան համար չէ»։

— Կարդացել եմ· Մանանճիւղի Վարչութիւնը իր վրայ է առել մանկանց կրթութեան հոգսը· նրան կը մեծացնեն, կը դաստիարակեն քո ուզածիդ պէս· ապահով կարող ես լինել, քո սրտիդ հատորը քեզ եւ իր քեռուն կը հետեւի։

— «Իմ երեխայի նման շատերը կան· ես եկել եմ առաջարկելու, որ մեր սիրելի Կուսակցութեան բոլոր որբերի համար մի առանձին դպրոց բացուի։ Մեր զաւակներին ամէն վարժապետի չենք կարող վստահել, չեղեցնողներ կարող են լինել։ Մեր հարիւրաւոր նահատակների որբերը կա՛մ առանց ուսման են մնում, կա՛մ պէտք եղած Յեղափոխական կրթութիւնը չեն ստանում։ Ուստի այդ մասին մանաւոր կարգադրութիւն պէտք է անել։ Կանանց Մանանճիւղի այդ որոշման գործադրութիւնը եկայ խնդրելու»։

— Շատ լաւ· այդ որոշում-առաջարկը մեր Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին կը ներկայացնեմ, եւ վստահ եմ, որ մեր Կուսակցութիւնը նրա իրագործումը կապահովի, եթէ քաղաքական պայմանները ներեն։

Մարինոսը դուրս գնաց՝ վաղուան Հրապարակային Ժողովի համար պէտք եղած հոգացողութիւնները անելու։

Հայ կնոջ առաքինութիւնների ամփոփոյքը, նրա սխրալի ստորոգելների մարմնացումը մենք յաճախ որոնում ենք Հինգերորդ Դարու Հայ Կանանց մէջ։

Բայց կայ մի իրականութիւն, որի վրայ մինչեւ ցարդ պէտք եղած ուշադրութիւնը չի դարձուել· դա Հայ Յեղափոխական կինն է։

Կնոջ դերը մեր Յեղափոխական Պատմութեան մէջ ահագին է եղել եւ վճռական։

Հարկաւոր է նրանց բոլորի պատմութիւնը, ընդարձակ կենսագրականները հաւաքել, կազմել եւ յետնորդներին թողնել։

Վստահ եմ, որ մարդկութիւնը այդտեղ շատ գեղեցիկ եւ վսեմ խղճերի պիտի հանդիպի· նա վաւերաթղթեր կունենայ համոզուելու, որ Հայ Կինը ո՛չ միայն Հայ Ազգի պահպանութեան, յառաջադիմութեան մէջ մեծ դեր է կատարել, այլեւ նա

բնաւ չետ չի մնացել իր այն քայլերից, որոնք մարդկային ազգի Պատմութեան էջերի զարդն են համարւում:

ՀԱՅ ԴԵՐՁԱԿՆԵՐԻ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐՆԵՐԻ ԳԱՆԳԱՏԸ.— Եկան Հայ դերձակների եւ կօշկակարների ներկայացուցիչները. նրանց գանգատը.

«Սրանից տարիներ առաջ՝ ամէն կարգի դերձակութիւն եւ կօշկակարութիւն բացառապէս Հայ արհեստաւորների ձեռքին էր:

«Բռնապետութեան շրջանին՝ Կառավարութեան մասնաւոր հրահանգով, աշխատեցին Թուրք արհեստաւորներ յառաջացնել այդ ճիւղերի մէջ:

«Մեզ ստիպեցին, մեզ պարտաւորեցրին Թուրք աշկերտներ առնել: Հարկադրուեցանք ընդունել՝ ըմբոստի, Ցեղափոխականի յանցանքով չը մեղադրուելու համար: Այդ կերպով մի քանի Թուրք դերձակներ եւ կօշկակարներ յառաջ եկան. խանութ բացեցին: Բայց իրենց արտադրած ապրանքներով շատ հեռու էին մեզ հետ մրցելուց. թէեւ կառավարական ամէն պաշտպանութիւն վայելում էին:

«Այդ պահանջը «Սահմանադրութեան» այս շրջանին է՛լ աւելի խստացաւ. հիմա Թուրքերը կողմնակի ամէն խոչընդոտներ մեր դէմ յարուցանելով՝ մեր առօրեայ գործերին շատ մեծ վնասներ են տալիս. մեզ նորից ստիպում են, որ Թուրք աշկերտներ առնենք: Արդէն բաւականաչափ ունենք. մեզ պէտք եղածից աւելին. բայց հարկադրում են մէկի տեղ երկուսը, երեքը պահել, ինչի որ բնաւ պէտք չունենք:

«Սրա հետ միասին՝ այդ Թուրք աշկերտները ո՛չ միայն սովորում են ապագային մեր աններող եւ ոխակալ մրցակիցները հանդիսանալու. այլեւ նրանք մեր խանութների մէջ նստած՝ լրտեսական գործեր են կատարում: Նրանք իմանում, ճանաչում են մեր յաճախորդներին եւ կողմնակի կերպով միջոցներ ձեռք առնում, որ մեր Թուրք յաճախորդները Թուրք արհեստաւորներին երթան եւ գնումները նրանցից անեն:

«Իսկ Թուրք արհեստաւորները, որպէս արհեստաւոր, խեղճ ու կրակ բաներ են. նրանք արհեստը աւելի սպանում, դէպի անկում են տանում, քան կատարելագործում»:

— Գործողութիւնը ի՞նչպէս է կատարւում. ի՞նչպէս են յաջողեցնում այդ խարդաւանանքը:

— «Շատ պարզ կերպով. մեր խանութների առաջ մարդիկ են կանգնեցնում. մտնողներին աչքերով, յօնքերով դուրս են կանչում, Իտտիհատի Ակումբը հրաւիրում եւ այնտեղ պէտք եղած խրատները իրենց տալիս: Այդ մասին շատ որոշ փաստեր ունենք: Եւ Թուրքերը, Իտտիհատականները այդ չեն ծածկում. նրանք բացորոշ կերպով ասում են՝ «Պէտք աշխատենք, որ արհեստները Թուրքերի ձեռքն անցնեն»: Բայց խնդիրն այն է, որ նրանք այդ ցանկութեան իրականացումը չեն թողնում մրցումին, կեանքի պարագաներին, արհեստի կատարելագործութեանը. ո՛չ: Նրանք իրենց այդ տենչանքը գործադրում են կառավարական սպառնալիքներով եւ վաւերացումներով:

— Ո՞րքանի է հասնում այդ տեսակի Թուրք արհեստաւորների թիւը.

— «Ընդամէնը 4—5 հոգու»:

— Իսկ Հայերի՞նը.

— «55—60-ի»:

— Ինչո՞ւ համար Հայ աշկերտներ չէք պահում:

— «Ունենք. Հայ աշկերտներ փնտռում ենք. ուզում ենք ունենալ. բայց չը կայ: Հայ աշկերտի մի քանի ամսուան սովորածը, գործած գործը՝ Թուրքը տարիների ընթացքում չի կարողանում սովորել: Թուրքը արհեստի նրբութիւն ասած բանը չը գիտէ:

— Ինչո՞ւ Հայ աշկերտներ չը կան. պատճա՞ռը:

— «Պատճառը այն է, որ Հայ տղաները դպրոցը աւարտելուն պէս՝ մտածում, նախընտրում են մի խանութի մէջ գրագիր դառնալ, օսլայած չապիկ հագնել, թափառական կեանք վարել. քան գոգնոցը առաջը կապել, ձեռքը հերիւն, մուրճ, մանոց, մկրատ, ասեղ առնել և հաստատուն ու տեւական արհեստ սովորել, որ հարիւր անգամ աւելի շահաւէտ է, քան իրենց գրագրութիւնը, որ մի օր կայ, միւսը՝ ո՛չ: Կոկիկ հագնուելու, զարդարուելու, գեղեցիկ փողպատներ կապելու իրենց հակամիտութիւնը արգելք է լինում, որ կօշտ ու կոպիտ, համբերութիւն, տոկունութիւն պահանջող արհեստներին անձնատուր լինեն:

«Արհեստները մեր ազգային տնտեսութեան հիմունքներից մէկն են կազմում. ուստի այդ մասին հիմակուանից, քանի ուշ չէ, քանի որ բոլորովին չի անցել Թուրքերի ձեռքը, պէտք

է մտածել, եւ նրանց վրայ մասնաւոր ուշադրութիւն դարձնել:

— Բայց չէ՞ք կարծում, որ Հայ աշկերտներ չը կարենալ ունենալու գործի մէջ՝ մի քիչ էլ դուք՝ Հայ արհեստաւորներդ էք մեղաւոր:

— «Ինչո՞ւ»:

— Ահա թէ ինչո՞ւ: Դուք ձեր աշկերտների հետ վարւում էք շատ կոպիտ կերպով: Ներկայ սերունդը շատ ու քիչ կըրթութեան երես է տեսել, մարդկային արժանապատուութեան վրայ աւելի բարձր գաղափար ունի. ուստի ձեր վարուեցողութեան նախկին բիրտ եղանակը պիտի թողնէք. ձեր արհեստը հրապուրիչ պիտի դարձնէք՝ բացի օգտակարից: Դրա հետ միասին՝ ձեր տուած աշխատավարձերը շատ քիչ են, բոլորովին անգոհացուցիչ. դուք առաջուայ հաշուին էք գնում. հիմա ժամանակները փոխուել են: Հայ նորեկ աշկերտի պէտքերը այժմ աւելի շատ են քան առաջ, նրա կարիքները աւելի մեծ են այս օրերիս մէջ: Ուրեմն, նրանց վարձադները պիտի աւելացնէք: Դուք մի՛ նայէք Թուրք աշկերտներին, նրանց կարիքները աւելի քիչ են, նրանց սակաւ պահանջից խաբւում էք. բայց վերջը, ինչպէս տեսցիք, նոյն իսկ արհեստն է, որ տուժում է: Փողպատը, օրլայած չափիկը չէ, որ նրանց ստիպում է ձեզանից հեռու մնալ, այլ նիւթական կարիքները, որոնց նա բաւականութիւն է տալիս՝ ուրիշ ճիւղերի տալով իր ընդունակութիւնը եւ աշխատանքը:

Հանգստեան ժամերի վրայ էլ պիտի ուշադրութիւն դարձնէք. օրական 15—16 ժամ աշխատեցնել չի կարելի:

Մի ուրիշ հանգամանք էլ կայ. դուք ձեր աշկերտներին բանեցնում էք որպէս ծառայ. ձեր խանութի եւ յաճախ տան, գերդաստանի, ծառայական գործերը նրան էք անել տալիս: Դա էլ չը պիտի լինի:

Կայ ժամանակի խնդիր էլ: Մի արհեստ սովորացնելու համար՝ դուք երկար ժամանակ էք պահանջում աշկերտից՝ 3—5 տարի, ինչոր չափազանցութիւն է. դրանից յետոյ հազիւ նա դառնում է խալֆա, եւ ապա՝ վարպետ: Մինչդեռ նոյն արհեստը կարելի է սովորել, համեմատաբար, շատ քիչ ժամանակում եւ է՛լ աւելի դիւրատար պայմաններով: Կարճացրէք արհեստ սովորացնելու ձեր ժամանակը:

Սրանք էլ պատճառներ են, որ Հայ աշկերտները այլեւ

ձեզ դժուարութեամբ են գալիս։

Խօսակիցներս բաւականին արդար հիմունքներ գտան դիտողութիւններիս մէջ։

— Ի՞նչպէս է ձեր ընդհանուր՝ նիւթական վիճակը։

— «Շատ նախանձելի չէ․ հազիւ կարողանում ենք մեզ պահել․ խնայողութիւն շատ քիչ ենք անում։

«Նախ Թուրքերի մրցումը կայ՝ կառավարութեան ակընյայտնի հովանաւորութեամբ։ Գործի նրբութիւնից շատ բան չը հասկացող Թուրքը՝ առաջին խրատին՝ շուտ համոզւում է, նախընտրում է դրամը տալ իր ցեղակցին, քան մեզ։

«Միւս կողմից կայ արտաքին՝ վաճառականական մըրցումը։ Դրսից՝ վաճառականները ահագին քանակութեամբ հագուստեղէններ, հագնելիքներ, կօշիկներ, ոտնամաններ են ներմուծում, եւ աւելի արժան ծախում։

Նոր սերունդը աւելի նախընտրութիւն է տալիս դրսից եկածներին։ Դա էլ մեզ հարուածող, քայքայող ազդակներից մէկն է։

— Արհեստակցական Միութիւն ունէ՞ք։

— «Ո՛չ․ ուզեցինք կազմել, բայց կառավարութիւնը լսեց՝ արգելեց, թոյլ չը տուեց»։

— Ո՛չինչ․ մի՛ վհատիք․ մեր Կուսակցութեան հովանաւորութեամբ այդ կարելի է․ Պատգամաւորական ժողովի մէջ այդ մասին նորից յատուկ որոշումներ կը տրուեն եւ Մասնաճիւղի Վարչութիւնը ձեզ կասի ձեր անելիքը ու գործելու եղանակը։

Արհեստաւորները մեկնեցան։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ․— Ընկեր Ս․ Մուրատը զանազան կարեւոր խնդիրներ կարգադրելու համար՝ գնաց Սիմ-Հաջի գիւղ։

Ընկեր Խաչատուր Ադամեանի հետ միասին այցելում ենք Հ․ Յ․ Դաշնակցականների ժողովատեղին։

Հաւաքուած են բոլոր ընկերները։ Ուրախ, ոգեւորիչ մըթնոլորտ է․ ամէնքն էլ երիտասարդ ուժեր։ Խօսում ենք օրուան զանազան խնդիրների մասին։

Հարցնում եմ․

— Այստեղ՝ ի՞նչ է ձեր եւ Իտտիհատի փոխադարձ յարաբերութիւնը։

— «Նրանք երբեմն շատ տաք վերաբերմունք են ցոյց տա-

լիս. երբեմն էլ՝ շատ պաղ, անտարբեր»:

— Ձեզ չե՞ն դրդում մեր ընկերների դէմ:

— «Ասում են, որ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեանները անջատականներ են եւ Հայ Ազգին դրդում են դէպի Ինքնավարութիւն»:

— Չէ՞ք նկատել, որ նրանց դէպի ձեզ «տաք» վերաբերմունք ցոյց տալու օրերը այն ժամանակներն են, երբ ձեզ պէտք է տեսնուել մեզ դէմ մղելու. օրինակ՝ քուէարկութիւններին, տեղական եւ ազգային զանազան խնդիրների ժամանակ, երբ կասկածել են, որ կարող ենք մէկ ճակատ կազմել իրենց դէմ:

— «Այո՛, հէնց այդ օրերին. թէեւ նրանց միտքը, հոգեբանութիւնը մենք հասկանում ենք»:

— Մինակ հասկանալը հերիք չէ. հարկաւոր է հակահարուած տալ՝ մեր ընկերների հետ համագործակցելով:

— «Մենք շատ մեծ ուրախութեամբ կը համագործակցենք ձեր այստեղի ընկերների հետ. եթէ մեր վերին՝ պատասխանատու մարմնից թոյլտուութիւն գայ»:

— Իսկ մինչ այդ՝ իմ խորհուրդս է ձեզ, դէթ ձեր տեղական, ազգային եւ հանրական բոլոր գործերի մէջ՝ միշտ համագործակցել, համընթաց լինել մեր ընկերների հետ. միշտ էլ հակառակ դիրք բռնելով դէպի Իտտիհատը:

— «Բայց դա կարգապահութեան դէմ չի՞ լինի»:

— Կարգապահութիւնը Գործի շահի համար է. երբ Գործը տուժում է՝ կարգապահութիւնը ինքնին վերանում է: Նորից ասում եմ, ընկերներ, ազգային, քաղաքական, տեղական բնոյթ ունեցող բոլոր խնդիրների մէջ մօտեցէ՛ք մեր ընկերներին, նրանց հետ համագործակցեցէ՛ք. թողէք որ ձեր կարգապահութիւնը քնանայ, և եթէ մի օր ձեր այդ հակակարգապահութեան համար տուժէք ձեր բարձրագոյն մարմինների առաջ՝ դրանով դուք պատուանուն վաստակած կը լինիք, քան աղարտանք»:

Ձեմ մոռացել մի կրակոտ երիտասարդի խօսքը, նա ասաց. «Վերջապէս խո՛րթ են, խո՛րթ. չիտակն այն է, որ մեր ու նրանց մէջ՝ երթալով աւելի ու աւելի պաղութիւն է տիրում»:

Մնա՛ք բարեւ ասացինք. դուրս եկանք:

Մարզուանում, այդ ժամանակ, Հ. Յ. Դաշնակցականների թիւը հազիւ 30-ի էր հասնում. ունէին մի սենեակից բաղկացած մի փոքրիկ ժողովատեղի, որ դեռ մի քանի օր առաջ էին

վարձել:

Սամսոնում, այդ ժամանակ, այդքանն էլ չունէին:

ԻՏՏԻՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԸ.— Հետս են ընկերներ՝ Խաչատուր Ադամեան եւ զինուորապետ՝ Աղասի Ադայիկեան:

Արեւելեան եղանակով՝ չատ ճոխ կերպով զարդարուած 3—4 սենեակներից է բաղկացած այդ Ակումբը. որ տեղական կառավարական գործերի իսկական կեդրոնավայրը, հանգուցատեղին է՝ այստեղ, ինչպէս եւ ուրիշ վայրերում:

Մեր հիւրընկալներն են փաթթոցաւորներ եւ էսնաֆ դասակարգին պատկանողներ. Թուրք վարժարանների ուսուցիչներն էլ ներկայ են. դեռ չը կան զինուորականներ եւ պետական պաշտօնատարներ:

Մեծարանքը թրքեվար է. բան պակաս չը կայ՝ մեզ գոհ թողնելու համար: Սովորական բարեւանքներից յետոյ՝ անցայ ինձ հետաքրքրող նիւթերին:

Ցանկանալով մեր կուսակցական հակառակորդների հոգին եւ ձգտումները որքան կարելի է կենդանի՝ իր թրթռուն լարերի վրայ բռնել. ես ստիպուեցայ խօսք բանալ իմ խեցբեկ թուրքերէնովս: Այդ օրը բառերը բաւականին առատութեամբ եւ դիւրութեամբ էին գալիս՝ առանց ինձ մասնաւոր նեղութիւն տալու:

Ներկայ են՝ բացի բուն Թուրք Իտտիհատականներից, նաեւ Հայ Իտտիհատականներ, որոնց մէջ առաջին տեղն են բռնում Ամերիկեան Կոլլեժի ուսուցիչները՝ Պրոֆեսոր Կիւլեանի ղեկավարութեամբ:

Պրոֆեսոր Կիւլեանը իր թարգմանական ծառայութիւնը առաջարկեց. խնդրեցի միայն չը գիտցած բառերիս համար օգնութեան հասնել եւ մնացածը թողնել ինձ:

Ի՛նչ հարց, որ տալիս եմ, միայն մի պատասխան եմ ըստանում թէ՛ մեծից եւ թէ՛ փոքրից. ամէնքն էլ ձեռները սրտների վրայ դրած՝ գլուխ են խոնարհեցնում եւ «էվէ՛տ էֆէնդըմ» ասում: Մի գաղափար, մի միտք անկարող եղայ դուրս քաշել:

Տարէց փաթթոցաւորը ասում է, որ իրենց միտքը ինչ որ է՝ գիտէ Պրոֆեսոր Կիւլեանը. թող նա խօսի, եւ ի՛նչ որ ասի, իրենց համար «դարուլ» է, ընդունելի է:

Ու Պրոֆեսոր Կիւլեանը, դասը լաւ սովրած աշակերտի

պէս՝ իր երգող ձայնով սկսեց. «Այս «Սահմանադրութիւն»ը մեծ օրհնութիւն եղաւ մեր ժողովրդին. բռնապետութիւնը մեր աչքերի առաջ վարագոյր էր քաշել, մեր միջեւ պարիսպ էր կանգնեցրել. եղբայրը եղբօրը չէր ճանաչում: Հիմա մեր աչքերից այդ վարագոյրը հեռացել է, մեր միջեւ եղած այդ պարիսպը խորտակուել եւ մենք տեսնում, զգում ենք, որ բոլորս էլ եղբայրներ ենք. ամէնքս միեւնոյն Հայրենիքի, միեւնոյն ազգի հարազատ զաւակներն ենք. բոլորս էլ անկեղծ Օսմանցիներ ենք՝ միեւնոյն հողի վրայ ծնած, մեծացած, միեւնոյն օդը ծծած, միեւնոյն ջուրը խմած: «Սահմանադրութեան» շնորհիւ մեր Ազգը, մեր Պետութիւնն էլ լուսաւորեալ Եւրոպային պիտի հասնի .եւ մենք ամէնքս, բոլոր Օսմանցիներս՝ երջանիկ, բախտաւոր պիտի ապրենք: Մեր առաջին նպատակը պիտի լինի՝ Օսմանեան փառապանծ ազգութեան բոլոր ուժերը իրարու սերտ կերպով մօտեցնել, մէկ ամբողջութիւն, միութիւն կազմել. նմանապէս՝ գիւղացիների, արհեստաւորների իրաւունքները պաշտպանել. արհեստները ծաղկեցնել, վաճառականութիւնը զարգացնել, նաւատորմիղը ուժեղացնել, զօրքը բազմացնել, կրթութիւնը համատարած անել եւ մեր փառահեղ դրօշը յարգելի ու պատկառելի դարձնել ամէն տեղ, ամէն ազգի մէջ...»:

Այդ բոլորը շատ լաւ. դրանք Իտտիհատական հասարակաց-տեղիք զուրցուածքներ էին: Բայց խնդիրն այն է՝ թէ Պրոֆեսորը իսկապէս ամէն բանից տեղեկութիւն ունէ՞ր. Իտտիհատականների մէջ անցած-դարձած բոլոր խնդիրներին գիտա՞կ էր:

Դա աւելի քան կասկածելի էր. որովհետեւ դրանից առաջ ես փաստեր ունէի հաւաքած, որոնք ցոյց էին տալիս, որ Իտտիհատականները կանոնագրային ներքին դրամադրութիւն էին անցրել՝ զուտ Թրքական, ընդհանուր պետական գոյն ունեցող հարցերի մէջ՝ գործերը կարգադրել, վարել առանց Քրիստոնեայ Իտտիհատականների գիտակցութեան և մասնակցութեան: Այդ մասին Իտտիհատի Կեդրոնական Վարչութիւնը որոշ հրահանգներ էր տուել, կարգադրութիւններ, ձեւակերպութիւններ էր կանոնագրել, որոնց բոլորի էլ բնագիրը իմ ձեռքին էր:

Ասել է թէ, ես կատարեալ իրաւունք ունէի, Պրոֆեսորի ասածները, առ առաւելն, լոկ Թելադրանքների արդիւնք հա-

մարելով՝ մարդկանց աչքին փոշի ցանելու մի ճիգ նկատել:

Թէեւ, այդ էլ սուտ, իր բոլոր ասածներին ներկաները գլխով հաւանութիւն էին տալիս:

Մի քանի րոպէից յետոյ՝ եկան իսկական Իտտիհատականները: Ինձ դրանք էին պէտք:

Հագնուած կէս Եւրոպական ճաշակով. մասնաւոր ուշադրութիւն դարձնելով իրենց կեցուածքի եւ ձեռքերի կիրթ շարժումների վրայ՝ բոլորն էլ խօսում են նազանքով, ծեքծեքումներով: Երեւում է, որ կեանքի «լիութեան» մէջ ծնած, մեծացած՝ «Հօր Տղաներ» են. փառասիրական անչափաւոր տենչանքով լի: Դրանք ապագայ գայմագամներ, միւթէսարրֆներ, փաշաներ են, եթէ ո՛չ նախարարներ: Իրենց խօսակցութեան մէջ աշխատում են ֆրանսերէն բառեր խառնել՝ իրենց զարգացած մարդ լինելը ցոյց տալու համար. այդ միտումն ունին, մասնաւորապէս, երիտասարդ պաշտօնատարները, զինուորականները եւ Նորոյթի զգեստ կրողները:

Սովորական՝ թեթեւ խօսակցութիւնից յետոյ՝ հրաւիրուեցանք ուրիշ սենեակ, ուր ճոխ սեղան էր պատրաստուած, ամէն տեսակ ըմպելիքներով:

Մեր անցած նրբանցքների եւ սենեակների մէջ տեսանք թափուած, իրարու վրայ կուտակուած ամէն տեսակի սարկաներ, զանազան կահ-կարասիներ, արժէքաւոր կերպասեղէններ, գրքեր, ապակեղէն անօթներ, եւայլն: Առ նուազն 2—300 ոսկու ապրանք կար այդտեղ:

— Ինչո՞ւ համար են սրանք:

— «Սրանք առարկաներ են, որ շուկայից ենք հաւաքել. վիճակահանութեան պիտի դնենք մեր դպրոցի ծախքերը հոգալու համար», ասում է Օսման էֆէնդին, որ ղեկավարչի դեր ունի:

— Մի՞թէ ձեր Կուսակցութիւնը այստեղ առանձին դպրոց ունի. չէ՞ որ կառավարական ամէն կարգի վարժարաններ կան այս քաղաքիս մէջ:

— «Կառավարական դպրոցներ կան. բայց նրանք բաւական չեն. բացի դրանից՝ մենք առանձին դպրոց ենք բացել, որպէսզի շրջաններից էլ տղաներ հաւաքելով՝ բերենք այստեղ եւ բոլորին էլ միանման կրթութիւն, դաստիարակութիւն տանք:

— Ի՞նչ տեսակի միտման:

— «Օսմանցիութեան ոգւով. մէկ ազգ, մէկ լեզու. դա է մեր նշանաբանը»:

— Քանի՞ Հայ երեխաներ ունէք:

— «Ունէինք 10—15 հոգի. հիմա հազիւ թէ 5—6-ն է մնացել»:

— Յոյներ էլ կա՞ն:

— «Այո՛, նրանց թիւը աւելի շատ է»:

— Կարծում էք թէ կարո՞ղ պիտի լինէք ձեր այդ նպատակին հասնել:

— «Մենք արդէն սկսել ենք. գործը յաջողութեամբ է գնում. դեռ արդիւնք չը տեսանք. յուսահատուելու ո՛չինչ կայ. եւ ինչո՞ւ պիտի յուսահատուենք, քանի որ կառավարութիւնը մեզ հետ է: Ինչ էլ որ լինի, մեր Կուսակցութիւնը պիտի ջանայ իր կրթական ծրագիրը իրագործել, նրան ուժ տալ իր կառավարութեան բոլոր սահմանների մէջ»:

— Ի՞նչպէս է ձեր եւ Հայ կուսակցութիւնների յարաբերութիւնները:

— «Ձեր ընկերներից մի քիչ գանգատաւոր ենք. մեզ շատ են հակառակ գնում. իրենց պրօպագանդան մեր դէմ շատ խիստ է. մինակ Հայերի մէջ չէ՝ Թուրքերի մէջ էլ մեզ դէմ են խօսում: Գլխաւորապէս ձեր ընկերները եղան պատճառ, որ մեր հարիւրաւոր լաւ վճարող Հայ անդամները կորցրինք»:

Պրոֆեսոր Կիւլեանը գլխով արաւ. հաստատութեան նշան ցոյց տուեց:

— Այս կողմերը շատ անջրդի տարածութիւններ կան. մինչդեռ շրջանից ժողովուրդը՝ հողի սակաւութեան պատճառով՝ պանդխտում է. ինչո՞ւ համար ընկերակցութիւններ չէք կազմում՝ միասին ջուր բերելու, այդ տարածութիւնները շահագործելու համար:

— «Այդ մասին էլ մտածել ենք եւ մի քանի անգամ ժողովներ արել: Բայց Հայերը դրամ չեն տալիս, նրանք չեն ուզում գործի մէջ մտնել. առարկելով՝ որ դեռ կասկածում են, կատարեալ ապահովութիւն չունեն: Թուրքերն էլ չեն մասնակցում՝ ասելով՝ որ իրենք արդէն պէտք եղածին չափ հողեր ունեն: Յոյները աւելի վաճառականութեամբ են սիրում պարապել: Այդ մասին Հայերը պէտք է ամենից աւելի ձեռնամուխ

լինէին. որովհետեւ գլխաւոր օգտուողը նրանք պիտի լինէին»:

— Եթէ այդպէս է, ինչո՞ւ համար ձեր գործերով Հայերին ապահովութիւն չէք տալիս. չէ՞ որ դա միմիայն, այսօր, ձեզանից կախումն ունի:

— «Մենք ասում ենք. խօսում ենք»:

— Բայց գո՞րծ:

— «Դրանից աւելին ի՞նչ կարող ենք անել»:

— Քանի որ քուէի մեծամասնութիւնը Հայ քաղաքագլուխն էր շահել. ինչո՞ւ նա զրկուեց. ինչո՞ւ դուք չը պաշտպանեցիք, մի՞թէ դա արդարութեան, հաւասարութեան սկզբունքների մէջը չէր մտնում, որի պաշտպանն էք դուք ձեզ յայտարարում:

— «Այո՛. Հայ քաղաքագլուխը մեծամասնութիւն շահեց. մեր հասարակութիւնից բողոքողներ եղան. մենք գրեցինք մեր կեդր. Վարչութեան, այնտեղից պատասխան ստացանք, որ այդպիսի պատասխանատու պաշտօններ Հայերին, առ այժմ, պէտք չէ յանձնել. որովհետեւ միւսլիման ժողովուրդը կարող է գրգռուել եւ խռովութիւններ կարող են տեղի ունենալ: Դրա համար էլ մենք լռեցինք, եւ Հայերին խորհուրդ տուեցինք, իրենց հանգստեան տեսակէտից, որ համակերպեն եւ Կառավարութեան որոշումը յարգեն»:

— Բայց չէ՞ որ քուէարկութեան իրականութիւնը կայ մէջտեղ:

— «Այո՛. բայց կառավարութիւնը անհրաժեշտութեան առաջ էր կանգնած. տարբեր ընթացք չէր կարող բռնել...»:

Օսման էֆէնդին խօսեց պարզ եւ ուղիղ:

Օսմանեան Կառավարութիւնները միշտ էլ անհրաժեշտութիւն են փաստել՝ երբ հարցը եկել է Քրիստոնեայի եւ Մահմէդականների փոխ-յարաբերութիւններին. դա նոր երեւոյթ, նոր փաստ չէր:

Չը գիտցողը միայն մեր Պրօֆեսոր Կիւլեանը եւ իր Հայ միւս ընկերներն էին:

Շնորհակալութիւն յայտնեցինք՝ իրենց արած կրկնակի ընդունելութեան համար, ու դուրս եկանք այն հնոցից, որ Հայի կորուստը դարբնողներից մէկն էր:

Եւ տե՛ս, որ Հայեր էլ կային, որոնք իրողութիւնը չէին տեսնում, չէին զգում՝ հակառակ ամէն զգուշացումների:

Դա մի դժբախտութիւն էր. ցաւալի մի երեւոյթ, որի դէմ, սակայն, քաջութեամբ կռուել եւ կռւում էին ընկերներս. դա էր միակ մխիթարութիւնը:

ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ.— Մեր Մանածիւղը՝ բացի իր ընդարձակ թատերասրահից՝ պահում է նա՛եւ ժողովրդական մի ընթերցարան:

Այցելում ենք. ընթերցողների շատ մեծ բազմութիւն կայ՝ Հայ հասարակութեան բոլոր խաւերից: Ստացւում են Հայ բոլոր թերթերը թէ՛ երկրի մէջ հրատարակուող եւ թէ՛ արտասահմանի:

Մանածիւղը այդ մասին՝ ժողովրդի կատարեալ գոհունակութիւնն ունէր:

Ընկերները մտադրուել էին շուտով մի ճոխ գրադարան էլ ունենալ՝ դարձեալ ձրի՝ հասարակութեան տրամադրելի անելու համար:

Արժանաւոր խրախուսանք տուեցինք ընկերներին, որ այդպիսի օգտակար հաստատութիւն էին հիմնադրել՝ իրենց սեպհական միջոցներով:

«ՀԱՅՈՐԴԻ»ՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ.— Հայոց դպրոցի բարձրագոյն կարգի աշակերտները համակրելի գաղափար են յղացել՝ կազմել մի ընկերակցութիւն՝ «ՀԱՅՈՐԴԻ» անունով: «Հայորդի»ն իր գործերը վարում է ընկեր Գագիկ Օզանեանի ղեկավարութեամբ, որ ոչ միայն երկսեռ դպրոցների տեսուչն է, այլ իրական հոգին:

Իրենց կանոնագրին համեմատ՝ աշակերտները կանոնաւոր դասախօսութիւններ են սարքում, մտաւոր միջոցներ ստեղծում իրենց բազմակողմանի զարգացման և յառաջադիմութեան համար:

Այսօր, Մայիս 20, Շաբաթ՝ կէսօրին՝ «Հայորդի»ների կողմից հրաւիրուած եմ դասախօսութիւն կարդալու:

Նիւթն է՝ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ»:

Ընդարձակ սրահը լիքն է երկսեռ դպրոցականներով. ներկայ են նա՛եւ Ամերիկեան Կոլլեժի բարձրագոյն դասարանների աշակերտները եւ աշակերտուհիները՝ իրենց ուսուցիչներով եւ ուսուցչուհիներով միասին:

Զարգացնել ուղեղի հետ ե՛ւ կամքը. դուրս բերել բնաւորութիւններ, անհատականութիւններ:

ինքնագործող, ստեղծագործող միտումները խթանել:

Ո՛չ թէ եսասիրական, այլ այլասիրական *զգացումներ յառաջանալուն նպաստել:*

Սրանք են նորագոյն կրթութեան գլխաւոր գծերը:

Պարզեցի, խորհուրդ տուեցի թէ ինչո՛ւ իրենք Հայ ազգային կեանքով, գրականութեամբ պիտի պարապեն. մեր ժողովրդի իրական կարիքների եւ Յեղափոխական Պատմութեան հետ ծանօթանան եւ հասարակական խնդիրներին մօտենան՝ Գիտական Սօցիալիզմի հիմունքներով:

Եղան չատ խելացի հարցեր. որոնք ցոյց էին տալիս, որ աշակերտութիւնը մտաւորական առատ պաշար ունէր՝ թէ՛ ազգային եւ թէ՛ տնտեսագիտական ու սօցիալիստական խնդիրներից:

Դա ուրախալի մի երեւոյթ էր:

Վաղվուն, ապագայ խոստացող մի աշակերտութիւն կար:

Դասախօսութիւնը տեւեց երեք ժամ:

ԿԱՆԱՆՑ ԶԱՐԳԱՑՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ. — *Դասախօսութիւնը լրանալուց յետոյ՝* «Կանանց զարգացողական Միութեան» *կողմից առանձին պատգամաւորութիւն ներկայացաւ. խնդրելով որ իրենց համար էլ առանձին դասախօսութիւն յանձն առնեմ:*

Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Տիկինները եւ Օրիորդները այդ անունով մի առանձին ընկերակցութիւն էին կազմել՝ նըպատակ ունենալով կանանց դաստիարակութիւնը: Այդ ուղղութեամբ նրանք արդէն բաւականին ջանք էին թափել՝ մեծ զարկ տալով քաղաքի կանանց եւ օրիորդաց ինքնազարգացման գործին, ու հէնց դրա համար էլ քաղաքի Հայ երկսեռ հասարակութեան մասնաւոր համակրութիւնն էին վայելում: Ունէին ճոխ գրադարան՝ գլխաւորապէս կանանց հարցին նուիրուած, բայց էին արել առանձին ԿԱՐԱՆՈՑ, ԱՐՀԵՍՏԱՆՈՑ:

Ուրախութեամբ ընդունեցի առաջարկը, խոստանալով այդ ուղղութեամբ ո՛չ մի ջանք չը խնայել՝ կարողութեանս սահմանների մէջ:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ. — *Կիւրակէ, Մայիս 21-ին, վաղ՝ առաւօտեան տեղի է ունենում Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Փոքր-Հայքի Պատգամաւորական ժողովը:*

Ներկայ են 40 Մանածխաղերի Պատգամաւորներ։

Դա պատմական մի գործողութիւն է. ո՛չ միայն Կուսակցական, այլ հասարակական տեսակէտից։

Եկած են ընկերներ, որոնք 20—25 տարուան Յեղափոխական կեանք են մաշել. ընկերներ՝ որոնք յաւխտենականութեան գիրկը հանգչող՝ մեր լուսապսակ նահատակների հետ գործել, գինակցել, վահանակից են եղել։

Տմաւոնի, Ձեյլօի, Դանիէլ Չաւուշի, Մխիթարի, Լեւոնի, Մինաս օղլու, Փէհլիվանի գործակիցները այստեղ են՝ իրենց ալեհեր գլուխներով։

Դրանք մեր նորագոյն պատմութիւնը արտայայտող, կերտող՝ անթառամ ոյժերն են։

Ընկերների եւ ընկերուհիների խուռն բազմութեան առաջ՝ Փոքր-Հայքի Գործադիր Յանձնախմբի ատենապետ՝ ընկ. Խաչատուր Ադամեանը, վկայականները վերատուգելուց յետոյ՝ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Փոքր-Հայքի Անդրանիկ Պատգամաւորական Ժողովը բացուած յայտարարեց՝ մի յուզուած ճառով։ Համեստ, բայց աննկուն կամքի, անշէջ կրակով տոգորուած ընկերը վեր հանեց այն ցաւերը, տանջանքները, իղձերը, որոնք ծնունդ էին տուել Կուսակցութեանս. գծեց այն փշոտ ուղին, որով անցել էինք. նկարագրեց այն գործերը, որոնք Հայ Յեղափոխութեան անդուգական էջերն էին կազմում, չեշտեց անելիքը։

Ներկայ ընկերների եւ ընկերուհիների հոգեկան հրճուանքը իր գագաթնակէտին է հասել։

Երգուեցան մեր օրհներգութիւնները։

Խօսքը իմս էր։

Ես ի՞նչ պիտի ասէի Փոքր-Հայքի ընկերներին, մանաւանդ նրանց, որոնք իրենց գերմարդկային տանջանքներով, բոլորանուէր աշխատանքով կերտել, շինել, կառուցել էին ո՛չ միայն Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան, այլ ամբողջ Հայ Յեղափոխութեան է՛ն հրաշագան, է՛ն սխրալի, է՛ն անթառամ էջերը։

Ես ի՞նչ խօսէի նրանց, որոնք տարիների ընթացքում՝ մի աննկուն կորովով ոքնել, չարչարուել էին, մի՛շտ բարձր, մի՛շտ անպարտելի մնալով, միջնադարեան հալածանքի խանդավառութեամբ։

Ի՞նչ կարող էի սովորացնել այն ունկնդիրներին, որոնք ամէն օր քերում, անցնում էին այն արիւնազանգ փողոցների միջով, որոնք մեր սրբավայրերն էին, ուր արիւնաթաթաւ մեր մարտիրոսներն էին ընկել:

Ի՞նչ խրախուսանք կարդայի նրանց, որոնք ամէն րոպէ իրենց աչքերի առաջն ունէին Լեւոնի եւ իր ընկերակիցների գերեզմանները:

Կարո՞ղ էի մի նոր բան ասել այն վայրերի մասին, ուր դեռ թեւատարած սաւառնում էր Մինասեանների հրոսակախմբերի հոգին, չէ՞ որ մի քիչ հեռուն, «Թաւշան-Դաղ»ին կար, եւ նա տեսել, արձանագրել, իր լանջերի վրայ դրոշմել էր 60 հողու յաղթանակը 800-ի դէմ:

Ունէի՞ ես նոր բան ասելիք, քան Հէնի եւ Նորի զուգակշիռը ուրուագծել, պատկերացնել եւ այդ բոլորից մի համադրութիւն կազմել:

Դարձեալ նո՛յն գաղափարները, նո՛յն սկզբունքները, նո՛յն գործը, նո՛յն միջավայրը, նո՛յն ձեւը, նո՛յն տանջանքը, նո՛յն պարտականութիւնը:

Քայլէ՛, Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան, քայլէ՛, ընկեր, դու դեռ շա՛տ ճանապարհ ունես անցնելիք:

Քայլէ՛, բայց անվհատ, առիւծի պէս, լի հաւատքով, զօտեպնդուած քո սրբազնասուրբ խանդավառութեամբ. քայլէ՛ մինչեւ վերջ, չէ՞ որ կեանքը քեզ համար լոկ միջոց է պարտականութիւններ կատարելու, եւ դու քո էութեամբդ ո՛չ այլ ինչ ես, եթէ ոչ պարտականութեան անվեհեր զինուոր:

Ես ուրիշ բան չարեցի. համբուրեցի, ձեռքս առայ աւելի քան քառորդ դարու հնութիւն ունեցող Մասնաճիւղի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԵՏՐԱԿՆԵՐԸ, ՀԱՇՈՒԵՄԱՏԵԱՆՆԵՐԸ եւ՝ որպէս Կուսակցական, Յեղափոխական մասունքներ դրեցի սեղանի վրայ եւ նրանցից կտորներ կարդացի:

Ու վերադարձնեց հոգին նրանց, որոնք թէեւ մեռած, գընացած էին. բայց իրենց շունչը, իղձերը, բաղձանքները, ա-բարքները այդ էջերի մէջ անեղծ պահուել, մնացել էին:

Ստեղծուեցաւ մի աննման մթնոլորտ. յառաջ եկաւ սրբութեան մի տաճար:

Ու ընկեր Մուրատը, իր առնական ձայնով, բա՛րձր, յուզուա՛ծ, կորովի շեշտով՝ երգեց մեր անմահ երգը՝ «ԵՕԹԸ ԵՕ-

ԹԸ ՀԱՐԻՒՐԻ ԴԷՄ»։

Դրանք անմոռանալի, անանցանելի վայրկեաններ էին. երբ ամէն ինչ դառնում էր հոգի, շունչ եւ անցեալը մարմնաւորւում, անձնաւորւում էր ներկայի մէջ ու մի համագոյակցութիւն կազմում։

Եւ նորեկ ընկերներն ու ընկերուհիները՝ նորից վերանորոգում են իրենց ուխտը, յաւիտեա՛ն, յաւիտեա՛ն՝ մինչեւ վերջ, մինչեւ վերջին շունչ հաւատարիմ, անշեղ մնալ, չարունակել իրենց Սուրբ Պատմութիւնը, հետեւողական լինել իրենց փառաւոր անցեալին եւ գործել անվհատ, գործել առանց յուսալքումի, միշտ բարձր բռնելով Կուսակցութեանս նուիրական Դրօշը։

Խօսեց ե՛ւ ընկեր Գագիկ Օզանեանը՝ իր հռետորական տաղանդի ամբողջ ուժգնութեամբ։

Խօսեցին ե՛ւ ընկերներ Մինաս Իփէքճեանը, Դօքտոր Թապլիպեանը։

Այնուհետեւ կազմուեց յատուկ յանձնախումբ՝ օրակարգի խնդիրները դասաւորելու։

Ժամանակը ուշ էր. մօտեցաւ կէսօրը. դասախօսութիւն կար։

Ժողովը փակուեց՝ երեկոյեան շարունակուելու համար։

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ.— Այս անգամ բազմութիւնը չը տեսնուած չափ է առել. ո՛չ միայն սրահի մէջ, այլ բակն էլ տեղ չը կայ. շատերը լցուած են մօտակայ փողոցների մէջ։ Դպրոցական տղաները մանաւոր մի ցոյց սարքեցին՝ իրենց տեղ չը լինելու համար. վերջապէս մի կերպ բաւականութիւն տրուեց։ Ներկայ՝ աւելի քան 2500 հոգուց՝ շատերը զրկուեցան ուղղակի լսելուց։

Դասախօսութեան նիւթն էր. «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹԻՒՆԸ»։

Դա մի պատմական դատավճիռ էր՝ Համիտի բռնապետութեան եւ նրա շարունակութիւնը եղող Իտտիհատի ներքին եւ արտաքին քաղաքականութեան։

Ի՞նչ է քաղաքականութիւն։

Քաղաքականութեան տնտեսական հիմունքները որո՞նք են:

Ի՞նչ է եղած Թուրք ազգայնականութեան տնտեսական քաղաքականութիւնը՝ մանաւորապէս Հայերիս նկատմամբ:

Նիւթ եղած թէզերը դրանք էին գլխաւորապէս:

Խնդիրները ե՛ւս աւելի լաւ պարզաբանելու համար՝ հարց տուեցաւ ժողովրդին, որ շատ մեծ լրջութեամբ օգտուեց այդ հրաւէրից:

Այդ, եւ ուրիշ շատ տուեալ իրողութիւններ մէկտեղ՝ բերելով՝ առանց չափազանցութեան, որպէս իրողութիւն կարելի է ասել, որ Մարզուանը Փոքր-Հայքի Աթէնքն է:

Ժողովը փակեց ընկեր Ադամեանը՝ ժողովրդին մի ուրիշ նորը յուսադրելով:

Նոյն երեկոյեան, ժամը 8-ին, Պատգամաւորական Ժողովի շարունակութեանն ենք գնում:

Այդ մասին այլեւս խօսք չը պիտի լինի. որովհետեւ դա վերաբերում է մեր Կուսակցութեան Պատմութեանը:

Բայց չեմ կարող չը յիշել այն ձեռնհասութիւնը, այն խորին լրջութիւնը, որ Պատգամաւոր ընկերները երեւան բերեցին՝ ամենադժուարին խնդիրները լուծելիս:

Ընկերների հաւաքած փաստերը, տեղի ունեցող երեւոյթների առթիւ տրուած բացատրութիւնները ինձ դրեցին հոգեկան մի անհուն հրճուանքի մէջ:

Փոքր-Հայքի մէջ մենք ապահով, կարող եւ վստահելի կայաններ ունէինք:

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԲՈՂՈՔԸ.— Այսօր, երկուշաբթի, 22 Մայիս, ստացայ բողոքագիր Հայ Կանանց կողմից՝ 25 ստորագրութեամբ:

Ընկեր Ադամեանի տան հիւրանոցն եմ. բողոքարկուները ներս են գալիս:

— Ի՞նչ է ձեր ընդհանուր բողոքը:

— «Մեր պահանջն է, որ այս շրջանի մատնիչների եւ դաւաճանների անունները հրատարակուեն, նրանց արարքներն ու գործերը երեւան գրուեն. որպէսզի արար-աշխարհը նրանց ճանաչի: Եթէ քննել պէտք է, թող գան մեր ներկայութեանը՝ խօսեն:

— Այո՛. այդ մատնիչների եւ դաւաճանների անունները մասամբ յայտնի են. ամբողջութիւնը դուրս կը գայ մեր Պատ-

մութեան մէջ: Գործադիր Յանձնախումբը եւ Պատգամաւորական Ժողովը այդ մասին որոշումներ կունենան: Բայց դա ի՞նչ մասնաւոր կապ ունի ձեզ եւ ձեր բողոքի հետ:

— «Այդ մարդիկը երկար տարիներ հասարակութեան մէջ լուր շրջեցրին, նրա միամիտ մասին էլ հաւատացրին, որ մեծ անբարոյականներ ենք այն պարզ պատճառով, որ մեր եղբայրները, մեր ամուսինները Յեղափոխականներ էին եւ մենք մեր տանը Յեղափոխականներ էինք պահել, կերակրել:

«Հիմայ, տեսնում ենք, նրանք Հրապարակային Ժողովներին են գալիս եւ Յեղափոխութեան անունը տալով՝ պարծենում են ու մեզ հետ էլ ծախահարում: Մենք բողոքում ենք այդ մարդկանց դէմ: Կա՛մ՝ նրանք պիտի գան այստեղ եւ Հրապարակապէս մեզանից ներողութիւն խնդրեն. խոստովանեն անցեալի մէջ գործած իրենց յանցանքները. յետ վեր առնեն իրենց բամբասանքներն ու զրպարտութիւնները. ընդունելով որ մենք մեր պարտականութիւնն ենք կատարել Հայ Յեղափոխութեան հանդէպ: Կա՛մ՝ որպէս անարգ արարածներ՝ Հրապարակային Ժողովներից դուրս պիտի քշուեն. հասարակական հաւաքոյթների դռները նրանց առաջը միշտ պիտի փակուեն եւ նրանց անունները խայտառակութեան սիւներին գամուեն, որ իրենք էլ տեսնեն, իմանան թէ ի՞նչ առել է Յեղափոխական կին զրպարտելը՝ իրենց անմաքուր կաշին փրկելու համար»:

«Ես դեռ նոր հարս էի, պատմեց Տիկին Ադամեանը, երբ ամուսինս ձերբակալուեց, բանտ տարուեց՝ Լեւոնի գործի պատճառով: Ես տեսել, ճանաչել էի իմ նշանածիս. նա բարի, ազնիւ, քաջսիրտ, Ազգի եւ Յեղափոխութեան համար կեանք տուող էր: Գիշեր-ցերեկ Յեղափոխութեան, Ազգի ազատութեան համար էր մտածում: Մէկ օր նրա մէջ դէշ բան չը տեսայ. մաքուր վարք ու բարքի տէր. մէկին վատութիւն չէր անիլ՝ բացի լաւութիւնից: Երբ՝ հազիւ մի քանի օրուայ ամուսնացած՝ ամուսինս ձերբակալուեց. եկան երեսիս տացին, որ Աստուած ինձ պատժեց. որովհետեւ ես անբարոյականի հետ էի ամուսնացել. ուրեմն, հասկացրին, ես էլ անբարոյական էի: Ես լացի. շա՛տ լացի. երդուեցայ, որ մեր ընտանեկան յարկը սուրբ, մաքուր է եղել: Բայց ո՞րն տեսս, ո՞րն հասկացնես. չէ՞ որ ամուսինս բանտն էր. չէ՞ որ Յեղափոխականներ էին մտել-ելել մեր տունը. չէ՞ որ Շմաւոնը, Լեւոնը մեր տանն էին

պատապարուել, մեր հացն էին կերել։ Ի՞նչ ասեմ․ այդ օրերին՝ երբ փողոցով անցնելիս լինէի, ուղղակի փախչում էի, որ նրանց նետած ծանր խօսքերը իմ եւ իմ ամուսնուս հասցէին չը լսէի։ Ինչքա՛ն բամբասեցին, ինչքա՛ն զրպարտեցին, հալածեցին, որ ժամանակ եկաւ, ճշմարիտ ասած, ես էլ սկսեցի կասկածել․ ասացի ՛մի՛ գուցէ այդպէս է, մի՛ գուցէ ես սխալուել եմ․․․ Զարախօս հասարակութեան լեզուն շա՜տ երկար է․ նրա թոյնը, ժահրը շատ անմաքուր․․․ Ու ես տանջւում, գալարւում էի․․․ Բայց անցան ժամանակներ․ եւ ես, հետզհետէ՝ է՛լ աւելի ամրապնդուեցայ իմ հաւատքիս եւ գաղափարիս մէջ․ տեսայ, որ Յեղափոխականները ամենից աւելի արժանաւոր եւ պարտաճանաչ մարդիկն են, որ իրենց կեանքը զոհաբերում են բոլորի ազատութեանը։ Արդ, ես էլ ուզում եմ, իմ միւս ընկերուհիներիս հետ, որ այդ մարդիկը գային այստեղ, խօսէին եւ իրենց պատասխանը տնէին։ Այդ մարդկանց համար հասարակական պատիժ ենք ուզում»։

— Դուք ձեզ արտաւորուած զգո՞ւմ էք՝ նրանց խօսքերից։

— «Երբե՛ք․ մինակ շատ ենք ցաւել․ սրտի վրէժ ունենք»։

— Ի՞նչ էք կարծում՝ նրանք իրենց արտաւորուած չե՞ն զգում։

— «Երէկ՝ գող կատուի նման՝ միշտ աջ ու ձախ էին նայում ծափահարելիս», ծիծաղելով ասաց Տիկին Աժդերեանը։

— Եթէ ձեր պատիւը մազաչափ արտաւորուէր․ այն ժամանակ մարդկութեան բարոյագիտութիւնը օրէնք պիտի անցրնէր, որ Անմեղութեան, Արդարութեան վճիռն ու որոշումը Արատից, Անարդարութիւնից պիտի գար։ Արդ, քանի որ իրականութիւնը դրան հակառակ հիմունքներ ունի՝ ամէն աշխարհի եւ ժամանակի մէջ, ասել է թէ՝ դուք այնքան բարձր էք կանգնած՝ որ այդպիսի սողունների լորձունքները ձեր անբիծ ճակտին չեն կարող հասնել։ Եթէ մի-երկու մանուկներ, մի քանի դաւաճաններ ձեր հասցէին գաղտագողի, անկիւնների մէջ՝ խօսքեր են շպրտել, որից իրենք իսկ այսօր կարմրում են եւ ծափահարում այն գաղափարներին, այն արարքներին, որոնց մարմնացնողներին առաջ «անբարոյականներ» էին կոչում․— անդին կայ տասնեակ հազար ընկերներ, կայ Հայ Ազգը, կայ Պատմութիւնը, որ ձեզ է տուել իր առաքինութեան քուէն՝ ձեր հաւատարմութեան եւ պարտաճանաչութեան համար։

Դուք ո՛չ թէ բամբասանքի, այլ՝ որպէս Յեղափոխական կիներ՝ պարծանքի յուշարձաններ կը մնաք»:

Ամէն ինչ լոյս աշխարհ էր ընկել. այլեւ ծածուկ ո՛չինչ կար:

Ընկերուհիները եւ բողոքարկու Հայ կիները խոստացան մոռանալ իրենց հանդէպ եղած վիրաւորանքները եւ շարունակել այն Գործը, որի համար իրենք էլ՝ իրենց ամուսիններին եւ եղբայրներին հաւասար կեանք էին մաշել:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈԼԼԷԺԻՆ.— Ճաշից երկու ժամ առաջ՝ ընկեր Գադիկ Օզանեանի հետ միասին այցելութիւն ենք տալիս Ամերիկեան Կոլլէժին:

Դպրոցը ունի իրեն յատուկ պակասութիւնները:

Որոշ է, որ հայերէն լեզուի համար մասնաւոր խնամք է տարւում՝ շնորհիւ Հայ ուսուցիչների: Աւանդւում է նա՛եւ Հայ Մատենագրութիւն եւ Պատմութիւն:

Դպրոցի ընթացքը բոլորովին համապատասխան չէ՝ Միացեալ-Նահանգների մէջ եղող համանման հաստատութիւններին: Միսիօնարական գաղափարաբանութեան հետ միասին՝ կրօնական ոգին շատ աւելի է շեշտուած:

Աչքի ընկնող մի ուրիշ գիծ էլ. այդ այն է՝ որ բարձրագոյն կարգերի աշակերտների եւ աշակերտուհիների մեծ մասը իրենց նախնական կրթութիւնը ստացել են Հայոց դպրոցներից: Զը նայելով դրան՝ դարձեալ այն ընդհանուր երեւոյթը կայ, ինչոր կոչւում է միսիօնարական դպրոցի տափակութիւն:

Մեզ ընդունում է դպրոցի ընդհանուր տնօրէն՝ մըստր Թըրէյսին. մեզ ուղեկցում է նա՛եւ իր կինը:

Դասարանական այցելութիւններից յետոյ՝ հրաւիրւում ենք Հիւրասենեակը խօսակցելու:

Տնօրէնը եւ իր կինը խօսում են մաքուր հայերէն. բայց Անգլիական շեշտով: Այնուամենայնիւ՝ հէնց այդ շեշտը մեր լեզուին տալիս է մի առանձին անուշութիւն՝ օտարի բերանում:

Մեզ հիւրասիրողները շատ գոհ են Հայ աշակերտներից եւ աշակերտուհիներից. առանձին ջատագովանք են տալիս՝ նրանց աշխատասիրութեանը, ընդոծին ուշիմութեանը. ներբողում են Հայ ազգի յառաջադիմական ոգին, նրա առաքինի վարք ու բարքը, մաքուր կենցաղը:

«Ձեր ազգը ուսման շատ մեծ ծարաւ ունի, ասում է մստր Թրէյսին. ամենաչքաւոր ծնողն անգամ աշխատում է կրթու-

թիւն տալ իր երեխաներին․ հազիւ իր ապրուստը ճարող Հայը ճիգ է անում իր զաւակներին միջնակարգ կրթութիւն տալու, ինչոր Ամերիկայում հազուադէպ է: Թէեւ այնտեղ միջնակարգ դպրոցներ շատ կան․ բայց նախնական վարժարանները աւարտելուն պէս․ այստեղի Հայերից շատ աւելի դիւրակեաց՝ այնտեղի Հայերը իրենց զաւակներից անմիջապէս ուզում են օգտուել․ ուստի նրանց աշխատանքի, գործի են տալիս: Մինչդեռ Հայ հայրը ինքն իրեն հազար զրկանքի է ենթարկում՝ որդուն աւելի բարձր ուսման հասցնելու համար»:

Տիկին Թրէյսիի չափ ու ձեւերը, խօսակցութեան եղանակը Հայկական դրոշմ ունին: Եւ ի՞նչ է ասում․

«Շատ ցաւում եմ յայտնելու, որ ես տեսած եմ Հայեր, որոնք ամաչել են իրենց Հայ անուանելուց․ մինչդեռ նրանք կարող էին իրենց անունով եւ ազգով պարծենալ․ դա մի դժբախտութիւն է, որ աւելի յաճախ հանդիպում է օտարութեան մէջ մընացող Հայերի հետ, մանաւանդ նրանց, որոնք մի կերպ հարստացել են եւ կարողութեան, դիրքի տէր են դարձել՝ օտար երկրներում: Մի բան էլ, որ չեմ սիրում եւ ատելով ասում եմ, այդ այն է՝ որ Հայ երիտասարդները շուտով մոլորւում են եւ օտար աղջիկների հետ ամուսնութիւն կնքում: Նրանք չեն կարողանում գնահատել Հայ աղջկայ արժանաւորութիւնները, որ շատ բաների մէջ բարձր է մեր Ամերիկացի աղջիկներից, որոնք արդ ու զարդի գերիներ են: Չեմ հաւանում նա՛եւ նրանց, որոնք գնում են Ամերիկա, դրամ վաստակում եւ օտարների հետ ամուսնանալով՝ այնտեղ են մնում, մոռանալով իրենց ծնողները, օջախը: Երիտասարդները պէտք է իրենց երկիրը վերադառնան, այնտեղ ամուսնանան, տան տէր դառնան՝ ընտանիք կազմեն»:

— Տիկին, ի՞նչ կարծիք ունէք Հայ աղջկայ եւ Հայ ընտանիքի մասին․ խնդրեմ, տուէք դուք ձեր կարծիքը այնպէս, ինչպէս որ ժամանակի ընթացքում կազմել էք:

— «Ես ասում եմ․ Հայ աղջիկը իր տարիքից առաջ լրջախոհ է, համեստ, ծանրաբարոյ: Այսքա՛ն տարի՝ ես դեռ չը տեսայ մի թեթեւամիտ Հայ աղջիկ, որ ուտելու, խմելու, արդ ու զարդի մասին մտածէր: Աշխատասէր, չարքաշ՝ նրանք միշտ աչքի առաջ ունեն իրենց ծնողաց վիճակը եւ հասարակական կարծիքը: Իսկ ձեր ընտանեկան կեանքը շատ մաքուր է․ այսքա՛ն տարի կը լինի, որ այս քաղաքի մէջն եմ․ և դեռ ըն-

տանեկան դայթակղութիւն չը տեսայ. ինչոր մեր երկրում շատ սովորական մի երեւոյթ է: Ես Հայ ազգը սրտանց սիրած եմ՝ իր ուշիմութեան, աշխատասիրութեան եւ մաքրութեան համար»:

Խօսակցութեան այդ պահուն՝ 20 տարեկանի մօտ մի Օրիորդ, դպրոցական սովորութեան համեմատ՝ մեզ սուրճ բերեց:

Արտաքինը ցոյց էր տալիս, որ Հայ չէր: Տիկին Թրէյսին ասաց, որ Ռուս էր: Երբ ռուսերէն լեզուով շնորհակալութիւն յայտնեցի, Օրիորդը ժպտալով՝ հայերէն պատասխանեց, եւ շարունակեց խօսիլ այնքա՜ն յստակ, մաքուր առոգանութեամբ, որ բնաւ չէր տարբերւում իսկական Հայ աղջկանից:

— Ո՞րտեղ էք հայերէնը սովորել, Օրիորդ, հարցնում եմ:

— «Առաջ Տրապիզոնում. հայրս Ռուսաց հիւպատոս էր. եւ Հայոց դպրոցն էի յաճախում: Հայրս ստիպուեցաւ Ռուսաստան վերադառնալ՝ իր պաշտօնի փոխուելուն պատճառով. ես իմ մի քանի Հայ ընկերուհիների հետ այստեղ եկայ՝ ուսումս շարունակելու. այստեղ դարձեալ հայերէն եմ սովորում»:

Մեր յարգելի հիւրընկալներին մնա՛ք բարեւ ասացինք:

Դուրս գալիս՝ նախասենեակների մէջ տեսանք բաւականչափ Հայեր, զանազան կողմերից, որոնք եկել՝ մայր Թրէյսիի աջակցութիւնն էին խնդրում իրենց դէմ եղած՝ կառավարական զանազան զրկանքների համար:

Անկարելի է ուրանալ այն մեծ ծառայութիւնը, որ միսիոնարութիւնը, մանաւանդ Ամերիկեանը, մատուցել է Հայ լուսաւորութեան գործին՝ իր մի քանի պակասութիւններով հանդերձ:

Այսպէս, թողեցինք Ամերիկեան Կոլլէժը, մեկնեցանք գոհ տպաւորութեամբ: Այնտեղ տեսանք Հայ ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ, ինչպէս եւ Ամերիկացիներ, որոնք կրթական գործի իսկական մշակներ կարող էին համարուել:

Այդ բոլորից յետոյ՝ մտածում եմ, եթէ այս ազգը յառաջադիմութեան ամէն ազատ պայմաններ ունենայ. ո՞վ կարող է համարձակիլ ասելու, որ նա լուսոյ իրական ջահ չի դառնալ խաւարաշէն Ասիայի մէջ եւ իր միջավայրի յառաջադիմութեան առաջին գործօնը չի հանդիսանալ:

Եւ ա՛յս Ազգին, ա՛յս Ազգին են ուզում սպանել: Եւ սպա—

նել ուզողն էլ Թուրքն է. արի՛ եւ հոգեկան հաւասարակշռութիւնդ մի՛ կորցրու:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԳԱՅՄԱԳԱՄԻՆ.— Քաղաքավարական պարտականութեան մէջ չը թերանալու համար՝ ընկերներ Խաչատուր Աղամեանի եւ Գադիկ Օզանեանի հետ՝ այցելում ենք տեղական գայմագամին, Կոստանդին անունով մի Յոյն, որ հազիւ չորս ամիս է, ինչ պաշտօնի գլուխ է անցել եւ ժողովրդի համար դեռ համարւում է հարցական նշան:

Ընդունելութեան ղահլիճը բաւականին ընդարձակ է. կահաւորումը պերճանքի հասնող՝ ուրիշ տեղերի հետ համեմատելով: Բացի գայմագամից՝ այդտեղ են միւֆթին եւ մի քանի Թուրք երեւելիներ:

Մեր խօսակցութիւնը անմիջապէս դառնում է օրական խնդիրների շուրջը: Երեւում է, որ գայմագամն էլ լցուած սիրտ ունի. ուզում է դուրս թափուել:

— Ի՞նչպէս էք գնահատում ներկայ իրականութիւնը, հարց ենք դնում, գայմագամին դառնալով:

— «Խօսե՞մ անկեղծօրէն, արտայայտուե՞մ անվերապահօրէն. պատմութեան մէջ թռիչք չը կայ: Ժողովրդների քաղաքական եւ տնտեսական կեանքի բարեփոխութիւնը, նրա յառաջադիմութիւնը շատ մեծ կապ եւ առնչութիւն ունի բնաշրջութեան, էվօլիւցիայի հետ: Արդ՝ ես մեր ժողովրդի մէջ այդպիսի մի երեւոյթ չեմ նկատել. էլի նո՛յն գլուխները, նո՛յն սիրտերն են: Նո՛ր մի բան չը կայ, որ ինձ ապահովութեան նեցուկ տայ՝ այս եղածի շարունակութեան համար. սա աւելի մի բնադատովլի բան է, քան մեր ժողովրդի մշակոյթից ծնուած: Ես չեմ հաւատում, որ մի երկրի մէջ արմատական բարեփոխութիւն կարող է լինել. երբ պետական պաշտօնեաները՝ որպէս հասարակական գործեր վարողներ, եւ ո՛չ մի ապահովութիւն ունենան: Նրանք քմահաճոյքով գալիս, քմահաճոյքով էլ գնում են: Ո՞վ է փնտռողը, հարցնողը թէ արդեօք պաշտօնեան ձեռնհասութիւն ունի՞, արդարադա՞տ, օգտակա՞ր է: Ո՛չ երբէք: Ընդունակութիւն, ազնուամտութիւն, պաշտօնի խղճմտաւոր գիտակցութիւն՝ դրանք յատկութիւններ են, որ այս երկրի մէջ՝ կարող եմ ասել՝ շատ քիչ գոյութիւն ունի: Շատ անգամ կուսակալ, միւթասարրֆ է դառնում այն մարդը, որին

եթէ մրցում եւ արդարախոհութիւն լինի, ամենափոքր մի պաշտօն անգամ չի կարելի վստահիլ։ Ընդհակառակը՝ մէկը մնում է միշտ իր խոնարհ դիրքի մէջ՝ ինչքան էլ որ զօրեղ իմացականութեամբ եւ իր կոչման վերաբերեալ ամէն յատկութիւններով օժտուած լինի. Նա յառաջադիմելու որ եւ է յոյս չունի, քանի որ զօրաւոր պաշտպաններ չունի։ Դատաւորական անկախութիւն ասուած բանը այս երկրում գոյութիւն չունի։ Դատաւորը ստիպուած է անել այն, ինչ որ դրսից, վերեւից իրեն թելադրւում է. որովհետեւ անկախ չէ։ Աշխարհս հրեշտակներով լեցուն չէ. մարդիկ ուզում են ապրել. կին, զաւակ ունեն. ապագայի մասին են մտածում. ուստի ստիպուած են աչքները փակել. խղճերնին՝ եթէ ունեն՝ յարմարեցնել եկող հրամանին. իսկ եթէ չունեն՝ արդէն այդ մասին խօսելը աւելորդ է։ Պետական փոքր աստիճան պաշտօնեաների ռոճիկը շատ չնչին է. ամսական 100—200 ղուրուշով ոստիկան պահել չի կարելի եւ նրանց ձեռքով էլ գործ տեսնել։ Իսկ թէ դրա հետեւանքը ուր է հասնում՝ այդ մասին խօսելը աւելորդ է։ Արդ, երբ պետական պաշտօնեաների մէջ ընտրութիւն, դընահատութիւն չը կայ, պաշտօնի ձեռնհասութիւն, գիտակցութիւն չը կայ եւ տիրում է բացարձակ կողմնակալութիւնը. այլեւս ի՞նչ կարելի է ուզել այս իրականութիւնից. կարո՞ղ է նա վարդագոյն լինել։ Այդ տեսակէտով՝ մենք այսօր էլ նոյնն ենք, ինչ որ երէկ»։

— Կարո՞ղ էի խնդրել, որ մի քանի օրինակներ տայիք։

— «Հեռուն չերթանք. հէնց իմ անձս։ Բարձրագոյն կըրթութիւն առած մարդ եմ. 25 տարի պետական զանազան կարգի պաշտօններ եմ վարել. ի՞նչ կասէք, երբ լսէ՛ք թէ իմ երէկուայ հասարակ գրագիրս մի օր սենեակս է մտնում եւ խրոխտապանծ ձայնով ինձ առաջարկում Իտտիհատական դառնալ. եւ երբ ես մերժում եմ, էլ նախատինք չի մնում, որ երեսիս է շըպըրտում. «Հա՛յտէ, կորի՛ր, է՛լ այստեղ գործ չունես...» եւ փողոցային յիշոցներ։ Եւ արդարեւ, երկու օր չանցած՝ ինձ հեռացրին եւ ժամանակաւորապէս այստեղ փոխադրեցին՝ մի օր պաշտօնից բոլորովին դուրս նետելու համար։ Ինձ նման հարիւրաւորներ կան, ո՛ր մէկն ասեմ»։

— Վերջերս, կարծեմ, աշխատում են աւելի շատ թուով Քրիստոնեայ պաշտօնեաներ առնել. եւ նոյն իսկ մրցակցու-

թեան, Հրապարակային պաշտօնական քննութեան ենթարկելով:

Ցոյն գայմագամը, այդ խօսքիս, կուշտ ծիծաղեց. խնդացին ներկայ եղող միւսներն էլ. աւելացրեց. «Երեւում է, որ Ֆրանսիային դաս պիտի տանք: Բայց ովքե՞ր են այդ քննիչները. ովքե՞ր են գնահատութեան, արժանաւորութեան վկայական տուողները. այդ ո՞ր երկրի մէջն է գործադրւում, ա՞յն՝ ուր մէկը չոգել գիտէ, իսկ միւսը հրամայե՞լ. ա՞յն երկրում, ուր մի րոպէի մէջ՝ ամենաչնչին առթիւ՝ մարդկային է՛ն բարձր արժանապատուութիւնը ոտքի տակ է առնւում եւ նրան որդի հաւասարեցնում: Ես ինքս էլ հրաման *եմ ստացել այդպիսի մրցումների մտնել, եւ մտել եմ. գիտեմ թէ դրա տակը ի՛նչ կայ: Մի՛ հաւատացէք, արդարութիւն, անկողմնակալութիւն չը կայ: Քրիստոնեայ պաշտօնեաների խօսք էք անում. նախ՝ դրանց թիւը շատ սահմանափակ է, երկրորդ՝ նրանք է՛լ աւելի անապահով են: Պարզ ասեմ, ես այստեղ գայմագամ եմ. միւֆտին էլ այստեղ նստած. սրանք էլ մեր քաղաքի երեւելիներն են: Մենք, այստեղ, ո՛չինչ կարող ենք անել առանց Մուստաֆա Նէճիպ բէյի հրամանի. մեր ձեռքերը ծալած՝ նրա հաւանութեան եւ հրահանգներին պիտի սպասենք. եթէ ո՛չ՝ մեր տները պիտի երթանք»:*

Միւֆտին գլխով հաւանութեան նշան արեց, աւելացնելով՝ «Գէթ մի բան էլ գիտնա՞ր. գէթ բանդէտ մարդուն մէկն էլ լինէ՞ր...»:

«Երէկուայ «միւլազըմը», անօթին այսօր ահագին տարածութեամբ հողերի, կալուածների, հօտերի եւ ջոլիրների տէր է դարձել», վրայ բերեց «երեւելի»ներից մէկը:

Գայմագամը շարունակեց. «— Իսրաէ գնահատում եմ ձեր Կուսակցութիւնը. տեսնում եմ, որ շինարար գործ է կատարում. ժողովրդի միտքը բացում, լուսաւորում, կրթում, դաստիարակում է: Բայց անցէ՛ք մի քիչ հեռուն, մտէ՛ք շուկայի նեղ փողոցները. կը տեսնէք որ հարիւրաւոր խլամներ ծո՛յլ ծո՛յլ նստած՝ կա՛մ խաղում են, կա՛մ ծխում եւ կա՛մ իրենց տեսած երազները պատմում, ու ուտելիքի, խմիչքի, շուայտաբարոյութեան մասին զրուցատրութիւններ անում: Թուրք նոր սերունդն *էլ անձնատուր է եղել* սինէմաներ *յաճախելու. դա էլ մեր գլխին քիչ փորձանք չի բերել. կոխը, անկարգութիւնը*

ծայր է տուել: Ինչո՞ւ համար՝ երբեմն երբեմն այդ մարդկանց չը հաւաքել եւ քաղաքական առողջ դաստիարակութիւն չը տալ ու թողնել, որ նրանք շաղփաղփութեան մէջ լողան: Դա չէ՞ր Իտտիհատի առաջին եւ գլխաւոր պարտականութիւնը. իր Ակումբների գործը ա՛յդ պիտի լինէր եւ ո՛չ թէ պետական պաշտօնեաները լրտեսելու, պետական գործերը անուանապէս մեր ձեռքը թողնելով՝ ամէն ինչ ինքը կարգադրելու՝ առանց պատասխանատուութիւն ստանձնելու: Ասում եմ համարձակ՝ նրա Ակումբները այս երկրի անապահովութեան գլխաւոր ազդակներն են. երբեմն երբեմն այդ տեղերում հաւաքոյթներ են կատարւում եւ ազգայնական այնպիսի՜ թոյներ են թափւում, որ իմ հասարակ պաշտօնեաներն անգամ եկել, սարսափով պատմել են թէ՝ ժողովուրդը մի օր իրարու պիտի կոտորի, դրդումները այնքա՜ն որ սաստիկ են լինում»:

— Իտտիհատականները ինձ միշտ գանգատուել են էշրաֆներից, որպէս յառաջադիմութեան արգելք եղող ազդակներից, ի՞նչ կայ դրա տակը:

— «Ասեմ պարզ. նրանք էշրաֆներից են գանգատւում եւ ո՛չ թէ էշրաֆութիւնից: Այն էշրաֆը, որ իրենց հետ է, նա լաւ մարդ է, ամէն բան է, եւ տեղական բոլոր գործերի հրակողութիւնը նրան են յանձնում՝ որպէս իրենց գործիքի: Իսկ այն էշրաֆը, որ կեանքի չարն ու բարին տեսել է, որ նրանց տրամադրելի չի անում իր հարստութիւնը. նրան թշնամի են նկատում եւ պարտականութիւն համարում ճզմել ի՛նչ գնով էլ որ լինի: Գաւառների մէջ ուտող, կաշառող, հնուց ի վեր՝ պետական ամէն օրէնքներ արհամարհող եւ ինքնագլուխ գործող բոլոր էշրաֆները Իտտիհատականներ են, եւ ջերմ Իտտիհատականներ են. նրանք են այս երկրի տէրն ու տնօրինողը»:

— Իտտիհատականները ուզում են կրթական գործին զարկ տալ կուսակցական դպրոցներ բանալով:

— «Այո՛. Հայերի եւ Յոյների տղաներին պիտի հաւաքեն եւ թրքացնեն. սա խե՞լք է»:

— Ձեր խօսակցութիւնը, Գ. գայմագամ, աւելի քան հետաքրքրական է ինձ համար՝ ուրիշ ի՛նչ նկատողութիւններ ունիք այս երկրի իրականութեան նկատմամբ:

— «Աչքներովդ տեսաք, որ ճանապարհներ չը կան. այն էլ ասեմ, որ ամենից լաւ կառուցուած կառուղին եւ ապահով ճա-

նապարհը այն է, որով դուք անցել էք եւ պիտի անցնէք մինչեւ Սեբաստիա: Ջը կայ ճանապարհ, չը կայ երթեւեկութեան ապահովութիւն: Մեզ վրայ հակակշիռ հաստատող Իտտիհատը խորհե՞լ է այդ մասին· ազգայնական դպրոցներ բանալուց առաջ՝ նախ այդ մասին պիտի խորհէր:

«Ներկայ՝ այս դարուս մէջ՝ տեսնում էք մեր երկրագործական գործիքների ինչ աստիճան նահապետական վիճակ ունենալը· գիւղացուն միջոց տուեցա՞ւ նոր դրութեամբ գործիքներ գնելու եւ երկրագործութիւնն ու ճարտարագործութիւնը յառաջ տանելու:

«Մի երկիր յառաջադիմելու համար՝ անհատական ազատութեան պէտք ունի, որպէսզի ձեռներէցութեան ոգին գործէ: Անհատական ազատութիւն չեղած տեղը՝ ձեռներէցութեան ոգի չի կարող գալ· եղածն էլ կը խեղդուի, կը կաշկանդուի, ինչպէս որ ինքներդ արդէն նկատած կը լինէք: Այս քաղաքիս շըրջակայ անջրդի եւ խոպան վայրերը ոսկիի կարելի է վերածել, եթէ անհատական ազատութեան եւ ձեռներէցութեան ոգին գործէ»:

— Ժողովրդի յարաբերութիւնը դէպի պետական պաշտօնէութիւնը ի՞նչպէս է:

— «Քրիստոնեաները, սովորաբար, շատ քիչ են դատարան գալիս, երբ ստիպւում են· որովհետեւ գիտեն, որ շատ քիչ բան կարող են ստանել՝ իրաւունքի տեսակէտից· իսկ Մահմէտականները մի առանձին փութկոտութեամբ իրաւունքի համար դատարան չեն վազիլ: Դատաւորներից եւ դատարաններից ամէնքն էլ վախենում են, բացի Իտտիհատականներից, որովհետեւ գիտեն թէ՝ արդար կամ անարդար՝ ծայրը կարմիր ոսկիներ կան (ծիծաղ):

«Եւրոպայի անիշխանականները այստեղ գալու են, ուսումնասիրելու համար՝ թէ օրէնքների եւ դատարանների բացակայութիւնից ինչեր կարող են յառաջանալ:

«Թիւրքիայում ո՛չ դատարան կայ, ո՛չ էլ դատաւոր· մանաւանդ Քրիստոնեաների համար· ահա, մէկ խօսք»:

Կոստանդինը մի համարձակախօս մարդ էր· բաւականին անկախ ոգու տէր· իր փաստաբանական ուսումը Աթէնք էր առել· մի քանի տարի Եւրոպա էր ապրել, երկար տարիներ էլ զանազան պաշտօններ վարել Թիւրքիայի մէջ: Որքան որ Հա-

յաշէր երեւեց՝ բայց մինչեւ ուղն ու ծուծը Ցոյն էր՝ «Մեծ գաղափար»ի աշակերտներից: Սաստիկ կերպով արհամարհում էր Թուրքերին: Երեւում էր, որ դիտմամբ էր կանչել տուել քաղաքի այն Թուրք երեւելիներին, որոնք հակա-Իտտիհատականներ էին:

Աչքի ընկնող մի գիծ էլ կայ. գայմագամը խօսում էր Թուրքերէն՝ յունական շեշտով. բայց ներկայ եղող Թուրքերի ազգային արժանապատուութիւնը վիրաւորելու կասկածից հեռու մնալու համար՝ խօսակցութեան հոգեբանական կէտերը ֆրանսերէն լեզուով էր արտայայտում, աւելացնելով՝ «ինչպէս որ ասում են Ֆրանսիացիները».

Վերջապէս Կոստանդինը Ոդիսեւսի թոռներից մէկն էր:

Զառամեալ միւֆտին էլ իր խօսքն ասաց. «Սահմանադրութիւն, կուսակցութիւն՝ դրանք ինչո՞ւ համար են՝ եթէ ամէն մարդ Ալլահի ճանապարհով երթայ: Երբ Մահմէդականը իր Ղուրանին հետեւի, Քրիստոնեան իր Աւետարանին՝ այլեւս ամէն բան կարգի կը մտնի»:

— «Եթէ մեր Տէրտէրը այստեղ լինէր եւ միւֆտիի խօսքից յետոյ «Պահպանիչ» ասէր. այլեւս ամէն բան կը վերջանար», սրախօսեց ընկեր Ադամեանը:

Ինչքան աշխատեցինք խօսեցնել տալ Թուրք միւս երեւելիներին. նրանք կրաւորական դիրքից դուրս չեկան. թէեւ որոշ էր, որ նրանք բոլորն էլ հակա-Իտտիհատականներ էին:

Շնորհակալութիւն յայտնեցինք. դուրս եկանք:

ՓՈԽ-ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ.— Աստուածեան, Մայիս 23, երեքշաբթի, հազիւ նախաճաշել էի. երբ ընկերները եկան՝ յայտնեցին, որ գայմագամը եւ «Կոմիսէր» Մահիր էֆէնդին փոխ-այցելութեան են գալիս:

Հիւրերին ընդունում ենք:

Կոստանդինը ուրախ է. ներկայացնում է իր «Կոմիսէր»ին, ձեռքն եմ սեղմում:

Մահիր էֆէնդին, որոշ է, հոգու մէջ մի բան ունի. միշտ չփոթ, վարանոտ արտայայտութիւն, յուզուած տրամադրութիւն է ցոյց տալիս:

Քիչ անցած՝ «Զաւուշ»ին մէկը եկաւ եւ «Կոմիսէր»ին կանչեց. սա ներողութիւն խնդրեց, հարցրեց թէ մի օր առանձին

կարո՞ղ էր ինձ տեսնել· դրական պատասխանիս վրայ՝ դուրս գնաց:

Կոստանդինը պատմեց, որ այդ մարդը Հայկական ծագում ունէր՝ Հայ էր, Վանի կողմերից, որ շատ փոքր ժամանակը այս կողմերը ընկնելով՝ Թրքացել, ամուսնացել էր, 5—6 զաւակի տէր դարձել եւ իրեն մի քանի անգամ հարցրել է թէ արդեօք նորից կարո՞ղ է Հայ դառնալ: «Ես իրեն խորհուրդ եմ տուել, յարեց Կոստանդինը, Ռուսաստան անցնել· բայց խեղճի կարողութիւնը չի ներում· հաւանական է, որ այդ մասին ձեզ հետ պիտի խօսի...»:

Վերջը՝ երէկուայ խօսքին դառնալով՝ դայմադամը ասաց· «Կ. Պոլսում՝ մերոնց հետ ի՞նչպէս էք»:

— Շատ լաւ· մանաւանդ կրակ ու բոց Պուչօյի հետ:

— «Որպէս Քրիստոնեայ՝ ասեմ, որ եղածին չը հաւատաք, շատ մեծ նշանակութիւն չը տաք· ձեր գործին եղէք· զգուշութիւնը բնաւ ձեռքներիցդ բաց մի՛ թողնէք»:

— Յատկապէս խնդրում եմ՝ ասէ՛ք, արդեօք մասնաւոր շշուկներ լսած ունի՞ք:

— «Նշանակալիցն այն է, որ Իտտիհատականները սոսկալի կերպով զինւում են եւ աշխատում են համիսլամական, Թուրք ազգայնական թոյնով տոգորել ժողովրդին եւ Քրիստոնեաների դէմ միշտ գրգռուած վիճակի մէջ պահել»:

— Այդ ուղղութեամբ եւ ոգւով որոշ կարգադրութիւններ, տնօրինութիւններ լինո՞ւմ են:

— «Երեւակայեցէ՛ք, մի տող անգամ մեզ՝ պետական հաստատութեանց ներկայացուցիչներին՝ չի գրւում: Ամէն ինչ կարգադրւում է ձեռքի տակից՝ անհատների եւ Իտտիհատական Ակումբների միջոցով: Մենք պարզ խրտուիլակներ ենք· այս ամբողջ շրջանի հրամանատարը՝ Մուստաֆա Նէճիպն է եւ իր ստորադաս ընկերները»:

— Թէ՛ Սամսոն եւ թէ՛ այստեղ շատ մեծ քաղաքավարութեամբ վարուեցան մեզ հետ:

— «Մի՛ հաւատաք· դրանք Թուրք չողոքորթութիւններ են՝ ձեզ եւ ձեր միջոցով Հայ ժողովրդին քնացնելու.... Ես էլ արդէն չափազանց զզուած՝ պաշտօնս պիտի ձգեմ, հեռանամ· աւելի լաւ կը համարեմ Յունաստան մի վաճառականի մօտ գըրագիր լինել, քան այստեղ դայմադամ մնալ»:

Հիւրս մնա՛ք բարեւ ասաց. իր հետ տանելով իմ անխառն յարգանքը։

ԿԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ.— Մեր Թատերասրահումն ենք. Կանայք եւ Օրիորդները խռնուած են. ասեղ ձգելու տեղ չը կայ։

Հրաւէրը եղած է Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան՝ «Կանանց Զարգացողական Միութեան» կողմից. ժողովը սարքողը նա է։

Դասախօսութեանս նիւթն է. «Կանանց Հարցը եւ Հայ Կնոջ Պարտականութիւնը ներկայ օրերի մէջ»։

Ընդհանուր մտքերն են. Հայ Կինը, Հայ Օրիորդը հասարակական, ազգային պարտականութիւն ունի կատարելիք եւ դրան կարող է հասնել գոյութիւն ունեցող Քաղաքական Կուսակցութիւնների միջոցով. նրանց՝ իր աշխատանքի օժանդակութիւնը բերելով։

Հայ Օրիորդը իր հօրը տանը մէջ, Հայ Կինը իր ամուսնու յարկի տակ, Հայ Կինը ազգային կեանքի մէջ. այս շրջաններում նա ինչ պարտականութիւններ եւ իրաւունքներ ունի եւ պիտի ունենայ։—

Դասախօսութիւնը լրանալուց յետոյ՝ շատ իմաստալից հարցեր մէջտեղ եկան ներկայ օրիորդների եւ տիկինների կողմից, ինչոր ցոյց էր տալիս, որ Հայ կինը որոշ կերպով ըմբռնել էր իրականութիւնը եւ շատ յետ չէր մնացել աւելի բախտաւոր եւ յառաջադէմ ու լաւ պայմանների մէջ գտնուող՝ ուրիշ երկրների կանանցից։

Խօսք առնող՝ խօսողները ո՛չ միայն լաւ հայերէնով էին արտայայտւում. այլեւ եւրոպական ձեւեր էին գործածում։

Այդ ահագին բազմութեան մէջ մի կին, մի օրիորդ չը կար, որ գէթ նախնական կրթութիւն ստացած չը լինէր. կէսից աւելին միջնակարգ դպրոցների ընթացաւարտներ էին։

Իսկ նրանց արտայայտած հետաքրքրութի՛ւնը. ուզում էին քրքրել, մանրազննին կերպով հասկանալ կանանց դրութիւնը, նրանց հասարակական, ընտանեկան դիրքը Անգլիայում, Ֆրանսիայում, Ամերիկայում։

Մի քանիսը իրենց գաղափարների լուսաբանութեան համար՝ Շէյքսպիրից մէջբերումներ արեցին։

Իգական սեռի կրթութիւնը Մարզուանի մէջ՝ ցանկալի

բարձրութեան վրայ էր հասած:

Ամէնքն էլ համեստ հայուհիներ էին. մայրաքաղաքների նորոյթամոլներ, սեթեւեթ ձեւեր ներկայացնողներ չը տեսնուեցան: Այստեղ հայուհին իր ազգային մաքուր վարք ու բարքով մեծացած՝ եւրոպականացած Հայ կինն էր, քաղաքակրթութեան ծաղիկների հիւթը ծծած, սնած եւ ոչ թէ նրա թոյնը:

Տիկին Թրէյսին կատարեալ իրաւունք ունէր՝ Հայ կնոջ հասցէին ներբողներ կարդալու:

ՆԱՀԱՏԱԿԻ ՀԱՅՐԸ.— Միասին, ընկեր Խաչատուր Ադամեանի հետ՝ գնում ենք Զէնդիւճեանին. նահատակի հայրը դեռ կենդանի է:

Բակի դռնից հաղիւ ներս մտած՝ ընկեր Ադամեանը մատնանիշում է պարտէզը՝ կռուի վայրը, ուր մեր նահատակները դիւցազնական գրոհ են տուած:

Բարձրանում ենք վեր. Յարութիւն աղան ինքն է դուռը բաց անում: Յառաջանում է այդ նահապետը՝ գլուխս իր գիրկն է առնում, համբուրում՝ լալիս:

Սա հայր է, եւ իր միակ որդին կորցրել է Հայ Յեղափոխութեան, Հայ Ազգի Ազատագրութեան, Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան համար:

Իր ալեւոր գլուխը, ցամքած՝ դողդոջուն ձեռքերը, կրակը մարած աչքերը էլ ինչե՞ր չեն տեսել՝ այս աշխարհիս վրայ:

Այդ հայրը ականատես է եղել իր որդու մղած օրհասական կռուին. նա գրկել՝ համբուրել է գնդակների տարափի տակ ընկած իր որդու դիակը. լսել է նրա վերջին հառաչանքը, վրէժի ձայնի վերջին ալիքը. նա փաթաթուել է իր որդու դիակին, թոյլ չի տուել որ դուրս քաշեն. արիւնաթաթաւ ընկել է՝ մատերը կտրտուել են՝ եւ ապա իր սիրելու մարմինը իր գրկից խլել, առել, տարել են.......:

Հիմայ՝ մէն մինակ. իր զառամութեան օրերի մէջ՝ տխուր ականատեսն է այն վայրերի, ուր իր երջանիկ օրերն էին գլորուել. եւ հիմայ այլեւս ո՛չինչ, ո՛չինչ չունի իրեն կապող կեանքի հետ:

Յարութիւն աղա՛ն. նա ինչե՞ր, ի՞նչ տանջանքներ չի քաշել Բէքիր փաշայի ձեռքից: Բանտերի խորշերի մէջ՝ էլ ի՞նչ չարչարանքներ չի կրել, եւ տոկացել:

Հիմայ՝ այդ հինաւուրց կաղնին՝ դարձել է կմախք. հաղիւ

հազ ոտքերն է շարժում։

Նա այլեւս չի ուզում խօսել. բերանը չի բացւում. ուզում է լսել, լսել, եւ հառաչանքներ արձակել։

— Հայ Ազգը, Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը չեն մոռանալ, Յարութիւն աղա. նրանք քեզանով կը հպարտանան, որ դու, որպէս պատուական մի հայր, պարտաճանաչ մի հայր՝ քո որդիդ զոհեցիր Հայ ազատագրութեան համար։

— Յարութիւն աղան լսեց. բան չասաց. ձեռքերը երկինք բարձրացրեց՝ լացաւ, ասաց. «Երանի՛ թէ ես էլ մեռած լինէի»։

Նա չէր անզգայացել. բայց այլեւս անտարբեր էր դէպի կեանքը. իր կեանքի թելը մաշուած՝ կտրուելու վրայ էր, սիրտը ջեռուցանող ո՛չինչ կար։

Թողեցի այդ չնաշխարհիկ Հայ ծերունուն՝ իր ցաւերի երազների մէջ։

Բայց նրա սպիտակահեր գլուխը, անժպիտ կերպարանքը, մարած աչքերը միշտ աչքիս առաջ պատկերացած, կեցած են։

ՄԱՏՆԻՉԸ.— Տա՛ր ինձ Լեւոնի եւ «Եօթնից» գերեզմանները տեսնելու։

— Այսօր չէ. ուրիշ օր. քանի որ անհանգիստ ես. պատասխանեց ընկեր Աղամեանը։

Բայց այդպիսի յապաղեցուցիչ պատասխան մի քանի անգամ էի առացել։

Պնդեցի։

Ճանապարհ ընկանք։

Գարնան օրեր են. ձիւնահալոց է. փողոցների դար ու վեր տեղերից փոքրիկ առուակները գլգլալով անցնում՝ հարթ տեղերում մանր ու խոշոր լճակներ են կազմում։

Անցորդները կամ ամրապինդ ոտքեր պիտի ունենան թռչելու՝ ջրերի, ցեխերի վրայից անցնելու, կամ դաւազանի վրայ պիտի յենուեն՝ եւ այնպէս միւս կողմն անցնեն։

Ցեխակոյտերը ամէն կողմ են։

Գնում ենք մի կերպ։

Հանդիպակաց կողմից՝ կորաքամակ մի ծերունի, դաւազանը ձեռքին՝ փորձեց ցեխ–առուակից անցնել. բայց մեզ տես–

նելիս՝ չփոթուեց, մէկ ոտքը տղմակոյտի մէջ դրեց եւ ձեռքը դէպի ճակատը տարաւ՝ մեզ բարեւելու։ Ցեխի մէջ կանգնած՝ ո՛չ առաջ էր կարողանում երթալ, ո՛չ յետ․ այլ պի՛շ պի՛շ, աչքերը թարթելով՝ մեզ էր նայում։

— Ընկեր Ադամեան, օգնի՛ր ծերուկին տղմակոյտից դուրս գալու․ հասի՛ր, ձեռքիցը բռնի՛ր, մե՛ղք է, օգնի՛ր, որ միւս կողմն անցնի։

— Քալէ՛, քալէ՛․ տեղն է։

— Ո՞վ է։

— Քալէ, ընկեր, քալէ՛․ յետոյ կասեմ։

Ծերուկը, որ աւելի մեզ էր նայում, քան տղմից դուրս գալու վրայ մտածում՝ վերջապէս ճիգ արաւ, ազատեց իրեն եւ կծոտ ոտքերը դցելով՝ շարունակեց յառաջ երթալ՝ մեր ճանապարհի հանդիպակաց կողմի ուղղութիւնը բռնելով։

Այդ ժամանակ ընկեր Միհրանը մեզ խօսքի բռնեց։

Ծերուկը առաջ անցաւ․ թքոքալով քայլեց․ բայց անդադար դառնում էր յետ՝ մեզ դիտում, մեզ նայում․․․

Գնաց մտաւ դիմացի ծառազարդ այգին։

Անցանք հեղեղատը․ քայլերնիս ուղղում ենք դէպի գերեզմանատուն։

Ընկեր Ադամեանը ասաց․ «Յե՛տ նայիր»։

Նայեցայ․ տեսայ՝ ծերուկը պարսպի յետեւից գլուխը վեր ու վայր բարձրացնելով, ցածրացնելով՝ գաղտագողի մեզ է նայում։

— Բայց ո՞վ է այդ ծերուկը, որ աւելի ուրուականի է նմանում, քան մարդկային էակի։

— «Նա մի պատմական մարդ է․ ասաց դառնութեամբ եւ ջղագրգռութեամբ ընկեր Ադամեանը, որ սովորական ժամանակ այնքա՛ն անդորր հոգի, չը յուզուող սիրտ ունէր․ որի բարկանալը չէի տեսել՝ մեր ժողովների ամենահրատապ խնդիրները վճռելիս անգամ․ մի՛շտ հանդարտ, բարի, պայծառ, ժպտուն դէմքով։

— Ի՞նչ պատմական մարդ, հարցնում եմ․

— «Շա՛տ մեծ․ նա յայտնի Քիրամիթճեանն է․ մեր ընկերներին մատնողը»։

— Դեռ՝այդ մարդը ո՞ղջ է։

— «Այո՛․ տեսնում էք, ողջ է․ բայց իրօք ո՞ղջ է, կենդանի՞

1·— Մարզուանի ժանտարմա կազ՝ ՄԷՀՄԷՏ ԷՖ։ 2·— Գոլճի պաշը ՍԷԼԱՄԷԹ ՊԷՅ։ 3·—Նշանաւոր՝ ՇՄԱԻՈՆ։ 4·— Փոլիս ԱՊՏԻ։ 5·— Փոլիս ԱՐԱՄ։ 6·— Ժանտարմա ԷՍԱՏ։ 7·— Ժանտ· ՆԷՖԷՐԻ ԱԼԻ։

է. էլ դրանից աւելի լաւ պատիժ կարո՞ղ էինք նրան տալ: Նա գուցէ օրհնէր տէրորի ձեռքը, որ կը գար՝ իրան կեանք-բեռից կազատէր: Բայց թո՛ղ ապրի, եւ տեսնի... Ա՛յն օրուանից ո՛չ ժամ կարող է գալ, ո՛չ էլ հասարակութեան մէջ երեւալ. նրա կեանքն է՝ կա՛մ տանը մէջ փակուել, մնալ. կա՛մ ծուռ ու մուռ ամայի փողոցներից անցնելով՝ իր այգին երթալ եւ մութը ընկնելիս՝ գաղտագողի տուն վերադառնալ: Նա մեր քաղաքի Կայէնն է՝ «երերեալ եւ տատանեալ»:

Անցանք հեղեղատը:

ԵՕԹԸ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ.— Հայոց գերեզմանատանն ենք. մի դարեւանդի վրայ:

Գարնանային սիւզը գամբարանների վրայից փոշին բարձրացնելով՝ բերում մեզ վրայ է սփռում: Այստեղ մեռելների թագաւորութիւնն է. մարդ կամայ ակամայ ընկճւում է եւ իրեն այդ ընդհանուր լռութեան մի տարրը տեսնում:

Շարունակում ենք քայլել. բարձրանում ենք վերեւ:

«Բարի» մուսուլմանը եթէ կենդանի «գեավուր»ին չի չարդում. նա մեռածին էլ չի պատւում. եւ դա ընդհանուր երեւոյթ է. առաջին պատեհութեամբ Հայ գերեզմանատների միջով ճանապարհ բանալ՝ «գեավուր»ի շիրիմները կոխկրտելով անցնել, դա «առաքինի» մուսուլմանի համար մի գովելի գործ է:

Ճանապարհը կարճ կտրելու համար՝ արեւելեան կողմից դէպի Մարզուան եկող-գնացող մուսուլմանները սովորութիւն են արել, իրենց բեռցուած անասուններով, անցնել Հայոց գերեզմանատան միջով. կոխկրտուելուց՝ բացուած է բաւական լայնեզր մի ճանապարհ: Ոտքերի տակ գնացած տեղերը՝ իրենց ամբողջ երկայնութեամբ ու լայնութեամբ հողադամբարաններ են, որ հազիւ նշմարւում են, իսկ վրայի քարերն էլ մի մի կողմ են նետուած՝ ուղին հարթ հաւասար դարձնելու նպատակով:

Կանգնում ենք գերեզմանատան վերի կողմը:

Հազիւ գետնից բարձրացած՝ խճաքարէ եօթը գծեր կան՝ իրարու միացրուած. ամբողջութիւնը մի տեսակ չուլունաձեւ մանեակ է կազմում:

Ընկեր Ադամեանը գլխարկը հանեց, յառաջ անցաւ, մատը պարզեց, գոչեց թախծալից. «Ահա՛ մեր եօթը նահատակների գերեզմանները. Լեւոնը սա է. Մխիթարը՝ սա. Միհրանը՝ սա. ....»: Ասաց, եւ երեսը շուռ տուեց՝ իր արտասուքները ինձ-

նից աննկատ դարձնելու համար:

Չոքեցի. երեսս դրեցի այդ քարէ գծերի վրայ, համբուրեցի՛, համբուրեցի՛, հեկեկացի, համբուրեցի՛ ու լացայ....:

Դրանք եօթը ծաղիկներ էին. դեռ հազիւ բացուած. շիրիմներ էլ չունէին:

Տեղը, վայրը սուրբ էր:

Հայ Յեղափոխութեան յառաջապահ զինուորների, նրա վարդակարմիր նահատակների նշխարները կային այդտեղ:

Սրանք թողել էին կեա՛նքը, գաղափարի՝ արդար Դատի, մի ժողովրդի իրաւունքների պաշտպանութեան համար:

Եօթը քարէ գծեր, ընկերներ, ո՛չ աւելին. ուրիշ բան չը կար:

Եւ քամին նորից սկսեց փչե՛լ, փոշի բարձրացնել...:

Թողեցինք մեր սրբավայրը:

Ընկեր Ադամեանը ասաց. «Չը վշտանաս, ընկեր, որ մեր նահատակների վրայ տապանաքարեր չենք դրել. դիտմամբ ենք այդպէս թողել: Քանի՛ քանի՛ անգամ կառավարութիւնը ցանկացել, կարգադրել է, որ նրանց ոսկորները գերեզմաններից դուրս հանուեն, ուրիշ՝ անծանօթ տեղ տարուեն. բայց այդ չի կարողացել, որովհետեւ տեղը քիչ գիտցող կայ. այդ առթիւ բանտարկութիւններ էլ եղան: Այն սեւ օրը, երբ բոլորս բանտի մէջն էինք. Բէքիր փաշան կանչում է քահանային եւ մի–երկու Հայ ծերունու ու նրանց հրամայում, որ մարմինները տանեն եւ մի փոսի մէջ նետեն: Շատ չանցած՝ այդ ծերունիները մեռան. վախճանուեցաւ և՛ թաղող քահանան. միայն մի քանի ընկերներ ենք, որ տեղը գիտենք. ամէն մի նահատակի քարեգծի մէջ տարբերող մի առանձին քար ենք զետեղել՝ որի բանալին միայն մեզ ծանօթ է»:

ՄԱՏՆԻՉԻ ՁԱԽԱԿԸ.— Երեկոյեան՝ ուշ ատեն տուն վերադարձանք. հազիւ ընթրիքը վերջացրած՝ ընկերուհի Ադամեանը եկաւ, յայտնեց՝ որ Քիրէմիտճեանի տղան տեսակցութիւն է խնդրում: Ընդունեցի:

Այսպէս պարզեց իր այցելութեան նպատակը.— «Ես եկած եմ ձեզանից մի շնորհ խնդրելու: Անցեալի մէջ հայրս մի յանցանք է գործել. բայց հիմայ հազար անգամ զղջացել է. խընդրում եմ՝ ներէ՛ք: Ես ձեր Կուսակցութեան 500 ոսկի կը տամ, միայն թէ եղածը մոռացութեան տրուի»:

— Ձեր հօր յանցանքի համար՝ դուք պատասխանատու չէ՛ք.

բայց նրան ներե՞լ,— երբե՛ք, երբե՛ք, դա անկարելի է. բայց ի՞նչ ասել՝ ներել: Ասենք թէ ձեր հայրը մատնութեան յանցանքը չի՞ գործել, որ նա մեր եօթը ընկերների մահուան պատճառը չի՞ եղել. ա՞յդ էք ուզում ձեր 500 ոսկով:

— «Ո՛չ. ասելս այն է, որ 500 ոսկի կը տամ՝ մեռնողների որբերին, ծնողներին բաժանելու. միայն թէ այս ծերութեան հասակի մէջ՝ հօրս մի բան չանէք. մե՛ղք է, ծերունի է, եղածը եղած է..... Աղաչում եմ, պաղատում եմ, ձեր ոտքը՝ ձեռքըն եմ համբուրում»:

Որդիակա՛ն սիրտ:

— Ցաւում էք ձեր մատնիչ հօր կեանքի մասին. չէք ուզում, որ նրա թելը կտրուի: Ձեր զգացմունքը որոշ է: Բայց զգո՞ւմ էք կատարուած յանցանքի ծանրութիւնը. բացի դրանից՝ ձեր այդ հայրն է պատճառը եղել, որ մի քանի Հայրեր զրկուել են իրենց որդիներից, որդիներ էլ՝ իրենց հայրերից: Պատմութեան մէջ չա՛տ տխուր անուն է թողել ձեր հայրը:

— «Այո՛. ընդունում եմ.... Բայց հայրս շատ է զղջացել եղած-կատարուածի վրայ»:

— Զէնդխնձեանը ձեր աչքի առաջն է... ձեր հայրն է նրան կենդանի կենդանի թաղել....

— «Ընդունում եմ. բայց աղերսանքս այն է, որ իր այս օրերի, այս տարիքի մէջ....»:

— Ներե՞լ, մոռանա՞լ.— երբե՛ք, երբե՛ք: Քանի որ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւն կայ, քանի որ Հայ Ազգ, Մարդկային լեզու կայ՝ մատնիչներին, դաւաճաններին չի ներուիլ, նրանց յանցանքը չի մոռացուիլ. նրանց արարքների յիշատակութիւնը դարէ ի դար, սերունդէ սերունդ, ազգէ ազգ կանցնի, կը մնայ՝ որպէս անէծքի, զզուանքի, զարշանքի առարկայ.... Եւ ձեր հայրը, նրա անունը այդ կերպ է, որ պիտի ապրի....: Նրա կեանքի նկարագրութիւնը, հոգու խորքերը, մտածմունքների հիւսուածքը, զգացմունքների հանդոյցները պէտք է, որ մերկացուեն եւ այդ կմախքը դրուի սերունդների առաջ՝ որպէս առարկայ զահանդի, սոսկումի, թուքի եւ մարդկային նախատինքի.....:

— «Աղաչում եմ, ոտքդ ընկած.... խնայեցէ՛ք»:

— Ձեզ ասացի, ո՛չ մի Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան, ո՛չ մի զինուոր իր դաշոյնը չի անարգիլ՝ Նրա արեան մէջը մխելով

.... *Նա որդի պէս պիտի սողայ, որդի պէս էլ պիտի սատակի*

..... *Այժմ դուք ազատ էք այստեղից հեռանալու:*

Մատնիչի որդին, ահագին հարստութեան տէր. բայց անարգ անուան ժառանգորդ, դուրս եկաւ, արտասուքը սրբելով:

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ.— Մայիս 24, չորեքշաբթի, ամբողջ օրը հիւանդ պառկեցայ:

Ընկերները, հասարակութիւնից շատերը գալիս՝ գնում են: Բժիշկները հանգստութիւն են թելադրում:

Այդ բոլորը շա՜տ լաւ:

Բայց Գործը գործ է պահանջում:

ԳԼՈՒԽ Զ.

ՍԻՄ-ՀԱՃԻ-ԳԻՒՂ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ.— Հինգշաբթի, 25 Մայիս. Թէև դեռ տկար, շատ թոյլ. բայց կուսակցական–հասարակական գործերի դրութիւնը ստիպում են գործերի ընթացքը արագացնել:

Ընկեր Ս. Մուրատը մնում է Մարզուան որոշուած գործերին վերջնական ձեւ տալու:

Ես մեկնում եմ Սիմ–Հաջի գիւղ:

Գնում եմ կառքով (եայլի) դարուփոսերի միջով:

Համընթաց է ինձ առանձին ձիով՝ շրջանային զինուորապետ՝ ընկեր Աղասի Աղայիկեանը:

Գարուն է. կենդանի բնութիւնը ամէն կողմ է. անցնում ենք դաշտերի եզերքով. ցորենի արտորայքը իրենց կանաչութեամբ հրապուրիչ տեսարան են ներկայացնում. շրջակայ բլուրները ծածկուած են բազմազան ծաղիկներով: Չորս կողմը տարածուած են սագերի երամներ, ոչխարների բազմաթիւ հօտեր:

Դեռ քաղաք–ււանին մէկ ժամ կար հասնելու. երբ 30 ձիաւորներ երեւեցան: Դրանք մեր ընկերներն էին. բոլորն էլ հագնուած Մինաս օղլու կազմած հրոսակախմբերի համազգեստներով, իրենց ատրճանակները, հրացանները, փամփշտակալները վրանին: Մեր պատմական հրոսակային խմբերն են որ կան՝ իրենց կարճ բաճկոններով, երկայնավիզ ոտնամաններով եւ գլխանոցներով:

Անկարելի եղաւ զսպել, արգիլել. բոլոր ընկերները ձիերից ցած իջան՝ եկան «աջս» առան. շատերը փաթաթուեցան եւ արտասուեցան:

Ընդհանուր ուրախութեան մէջ շարունակեցինք մեր ճանապարհը:

Դեռ գիւղաքաղաքին չը մօտեցած՝ զանգակները սկսեցին հնչեցնել մի առանձին ներդաշնակութեամբ:

Հայ, Յոյն, Թուրք՝ գիւղի մեծամասնութիւնը փողոցներն են լցուել:

Հայ դպրոցների աշակերտներն ու աշակերտուհիները երկշար կանգնած են գլխաւոր փողոցի մէջ՝ բոլորի ձեռքին էլ մի մի դրօշակ:

Կազմուեցաւ բազմամբոխ Թափօր. «Հնչակ»ը երգելով՝ դիմեցինք դէպի մեր Ակումբը, որ շատ շնորհալից կերպով կահաւորուած, զարդարուած էր:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— Մի կարճ բանախօսութեամբ շնորհակալութիւնս յայտնեցի ժողովրդին՝ իրենց ցոյց տուած համակրութեան համար մեր Կուսակցութեան հանդէպ: Խօսեցի նաեւ ժողովրդի բռնաբարուած իրաւունքների մասին, յորդորելով ստեղծագործական աշխատանքի մտնել եւ քաղաքական պայքարը ձեռքից բաց չը թողնել, մինչեւ որ կատարեալ երջանկութիւնը ապահովուի:

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏԻ ԵԿՈՂՆԵՐ.— Ընկեր Թաթարեանի տանն ենք: Ներկայ են Մասնաճիւղի Վարչութեան բոլոր անդամները:

Հետզհետէ առանձին բարի գալուստի են գալիս Հայ հասարակութեան բոլոր խաւերից:

Սիմ-Հաջի-Գիւղը բացառապէս՝ «Սօցիալ Դէմօկրատ Հընչակեան գիւղ» է:

Եկան ե՛ւ Յոյները. որոնցից շատերը սահուն կերպով հայերէն են խօսում: Յոյն գործաւորները բոլորն էլ՝ թէ հայր եւ թէ որդի մեր Մասնաճիւղի մէջն են մտած, և այդ մասին իրենց մասնաւոր ուրախութիւնն են յայտնում:

Մի քիչ յետոյ՝ բազմաթիւ Թուրքերով շրջապատուած՝ ներս մտաւ Մուստաֆա Նէճիպ բէյը, իր հետ ունենալով Թուրք քաղաքապետը եւ բժիշկը: Կ. Պոլսից յետոյ՝ գաւառի մէջ առաջին Թուրք բժիշկն էր, որ տեսնում էի:

Սովորական խօսակցութիւններից յետոյ՝ մեր այցելուները ցրուեցան:

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ.— Մասնաճիւղի Վարչութեան հետ մասնաւոր ժողով ունենալուց եւ պէտք եղած օրակարգը կազմելուց յետոյ՝ ընկերներին հրաւիրեցինք Անդամական ժողովի:

Քաղաքի գրեթէ ամբողջ Հայ հասարակութիւնը մեր ընկերներն են: Յոյն բոլոր խանութպանները, գործաւորները նոյնպէս՝ մեր Մասնաճիւղին են անդամակցել:

Մասնաճիւղի Վարչութեան զեկուցագրից երեւում է, որ ամենայն յաջողութեամբ իր ջանքերը պսակուել են՝ վերջ տալով երկար ժամանակներից ի վեր գիւղաքաղաքի մէջ բոյն դրած կրօնական այն երկպառակութիւններին, որ երկճեղքելով Լուսաւորչական եւ Բողոքական Հայերին՝ նրանց հասարակական գործունէութեան ջլատման մի մեծ պատճառն էր դարձել:

Եւ երկու կողմի ներկայութիւնը մեր Մասնաճիւղի մէջ՝ արդէն դրա հետեւանքն էր ու պատճառը միանգամայն:

Ընկերներին հաղորդուեցաւ շրջանային Պատգ. Ժողովի որոշումները. տրուեցան պէտք եղած հրահանգները՝ գործադրութեան համար. հաղորդուեցաւ նա՛եւ Տաճկաստանի Կեդրոնական Վարիչ Մարմնի մասնաւոր կարգադրութիւնները:

Ընկերների թիւը ահագին, որակը հիանալի է. այդտեղ կան տասնեակ տարիներ բանտերի մէջ մաշուած ընկերներ. Համիտի զինուորների հոգէառ մարտիկները այդտեղ են բաղմել՝ ուրախ, զուարթ, պարտականութիւն կատարողի գիտակցութեամբ: Աքսորավայրերից վերադարձող ընկերները ամենից աւելի ծիւրուած՝ վշտերի բեռան տակ կքած են:

Այդ գերագանցապէս Յեղափոխական մթնոլորտի մէջ՝ նորից ընկնում ենք մեր ապագայ, գալիք երազների մէջ. եւ առաջարկութիւնները մէկը միւսից աւելի ուժեղ թափով տեղալ են սկսում:

Չափազանց ուրախ եղայ, երբ ընկեր Սամուէլ Ֆէրմանեանը ներկայացրեց իր ստուար աշխատանքը՝ «ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԱՐԱՆ»–ին տուած հարցերին համեմատ:

Սիմ–Հաջի–Գիւղի եւ շրջակաների հողատիրութեան բոլոր ձեւերն ու եղանակները մանրազննին կերպով ուսումնասիրել, պատասխանել էր:

Ժողովը ցրուեցաւ՝ ամէնքն էլ վերակազդուրուած հոգւով, իրենց անելիքի գիտակցութեան հասկացողութեամբ:

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ.— Երեկոյեան պահուն՝ եկեղեցու զանգակները ղօղանջել սկսեցին. այր, կին, մեծ, փոքր՝ լցուեցան դպրոցի ընդարձակ դահլիճը: Առաջին

անդամն էր, որ կանայք ժողովի էին գալիս եւ նրանց հետ միասին մի դահլիճի մէջ հաւաքւում՝ հասարակական խնդիրների մասին լսելու համար:

Դասախօսութիւնը տեւեց աւելի քան երեք ժամ. պէրճաւորութեամբ քաղաքական, տնտեսական, ընկերային՝ բոլոր հրատապ խնդիրների մասին խօսել: Մասնաւորապէս ծանրացաւ «Սահմանադրութեան» բերած միակողմանի տրամադրութիւնների վրայ բացատրելով Թուրք ազգայնականութեան մղիչ գաղափարները՝ բաղկացուցիչ ազգերի և մասնաւորապէս Հայերի նկատմամբ:

Հողային Հարցի մասին շատ խելօք հարցեր տրուեցան ժողովրդի կողմից:—

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ.— Ուրբաթ, 26 Մայիս, երէկոյեան չոգնածութիւնից եւ մրսելուց՝ հիւանդութիւնս վերանորոգուեց. մինչեւ կէսօր ջերմով տառապեցայ. կամաց կամաց թեթեւանալով՝ կէսօրին ներկայ գտնուեցայ Հայ եւ Յոյն հասարակութեան պատրաստած ճաշկերոյթին:

Հացկերոյթի ժամանակ, բոլոր բաժակաճառերը դառնում էին Հայաստանի, Հայ Ազգի փրկութեան շուրջը:

Գաւառների մէջ Հայ հոգին անխզելի կերպով կապուած է Մայր Հայրենիքի հետ, ինչքան էլ որ ինքը նրանից հեռու եղած լինէր:

Յեղափոխական երգերը մեր ժողովրդին սթափեցնող, միշտ արթուն դրութեան մէջ պահող խթաններից մէկն են:

ԳՈՐԾԱՐՈՐՆԵՐԸ.— Ընկերներով միասին այցելում ենք «Խալըճը» գործավայրերը. որոնց թիւը հասնում է երեքի: Բոլոր գործարանատէրերն էլ Հայեր են. իրենց գործը առաջ են տանում բաւականին կլորիկ գումարով՝ առանց կառավարական որ եւ է նպաստի: Այդ բոլորը իրենք են ստեղծել, առաջ բերել՝ իրենց աշխատութեամբ եւ դրամագլխով:

Գործաւորների թիւը, երեքի մէջը միասին՝ հասնում է մօտ 300-ի. պահանջը շատ եղած ժամանակին՝ մանաւանդ ամրանը՝ այդ թիւը աւելանում, հասնում է 400-ի:

Աչքի ընկնողն այն է, որ գործատեղիների մէջ առողջապահական պայմանները գրեթէ բոլորովին բացակայում են:

Մէկ սենեակի մէջ լցուած են 15— 16 հոգի. հորերը խրար մօտ՝ սեղմուած, նեղ, խոնաւ. պատերը նոյն իսկ մամռոտած

են, հինցածները թաց թաց կախուած են պատերից:

Զանազան տեսակի երեսսրբիչները, անձեռոցիկները, ըս-փածանելիքները եւ բաղանիքի վերաբերեալ հագուստեղէն-ները բոլորը այստեղ են պատրաստւում. թէեւ այդ ամէնը շու-կայի մէջ յայտնի են Մարգուանի խաւլուներ անունով:

Գործուածքները ո՛չ միայն մաքուր են, դիմացկուն, այլեւ նրբութեան են հասնում եւ որակի տեսակէտով մեծ դիրք են գրաւել թէ շրջականներում եւ թէ շատ հեռաւոր վայրերում:

Գործաւորները նախկին կտաւագործ վարպետներն են, որ աւելի շահաւէտ են գտել իրենց կտաւի հինածը թողնել եւ գալ այդ նոր արդիւնաբերութեամբ զբաղուել:

Իրենց աշխատավարձերը գոհացուցիչ են. օրական ստա-նում են 15—20 ղուրուշ:

Գործարանատէրերը ասում են, որ իրենք է՛լ աւելի կա-րող էին ընդարձակել իրենց գործը, եթէ ընդհանուր ապահո-վութեան մասին կասկած չունենային:

Եւրոպական մրցումից երկիւղ չունէին, մատնանիշելով իրենց արտադրած ապրանքների դիմացկունութիւնը եւ ձեռ-աշխատանքի արժանութիւնը:

Բաւականին մեծ թւով փոքրիկ աշկերտներ կային:

Այս գիւղաքաղաքի մէջ էլ, մեզ ասում են, արհեստները ամբողջապէս կեդրոնացած են Հայերի ձեռքը: Յոյները փոքր խանութպաններ են: Մի քանի մեծ վաճառական Հայեր էլ կան, որոնք մասնաւոր արտածութեամբ են պարապում:

ԻՏՏԻՀԱՏԻ ԱԿՈՒՄԲԸ.— Անցնում ենք շուկայի դարշա-հոտութեանց միջից. աղբակոյտերը բոլոր փողոցների մէջ՝ փոքրիկ բլրակներ են կազմում: Տանեակ կենդանիների մե-ռոտիներից բուրած հոտը մարդու սիրտ է խառնում, քիթը պէտք է բռնել՝ մօտովը անցնելու համար: Բայց դա մօտակայ Թուրք մանրավաճառների համար ո՛չ անախորժ է թւում, ո՛չ էլ վատառողջ:

Շները դեռ այստեղ չեն հաւաքուել. փողոցների մէջ լիքն են, խումբ խումբ մի կողմից կրծում են մեռելոտիները, միւս կող-մից իրարու հետ գզվռտում. կաղկանձիւնը, ոռնումները, հա-չոցները՝ մեզ ասում են, որ արդար Թիւրքիայումն ենք:

Ակումբը մի խարխլած շէնք է. ունի մի քանի կիսաւեր սենեակներ, մէջին բաւականաչափ աթոռներ եւ բազմոցներ՝

օթոցներով ծածկուած։

Այդտեղ է մեր վաղածանօթ Մուստաֆա Նէճիպը, քաղաքագլուխը, բժիշկը, Իտտիհատական տեղական բոլոր ազդեցիկները։

Ինձ հետ են 5—6 հոգի մեր ընկերներից։

Հիւրասիրութիւնը կատարւում է Արեւելեան բոլոր երանգաւորումներով։

Քաղաքագլուխը ասում է, որ իրենք առաջ է՛լ աւելի մեծ ու փառաւոր շինութիւն ունէին Ակումբի համար. բայց անդամներից շատերը քաշուեցան եւ իրենք ստիպուեցան այստեղ գա՛լ խնայողութեան համար։

Մուստաֆա Նէճիպ ձեռքն առաւ, սկսեց ցոյց տալ աշակերտական խմբանկարներ. դրանք Իտտիհատի բացած վարժարանի փոքրահասակ աշակերտներն էին. մէջերնին կային տասը հոգու չափ Հայ տղաներ։ Բոլորի փէսի վրայ նկարուած են Իտտիհատի սպիտակ եւ կարմիր գոյները՝ երիզաձեւ մի կողքին. միւսին՝ մահիկ, տակին էլ մի եաթաղան։

«Բոլորին էլ դաստիարակում ենք մէկ հոգով, ասում է բացատրող խօսակիցս, սրանք ամէնքն էլ Օսմանցիներ են. երբ մէկ երեխայի հարցրէք՝ ի՞նչ էք. կասի՝ Օսմանցի»։

— Յոյն երեխաներ կա՞ն։

— «Ո՛չ. նրանք իրենց երեխաներին կա՛մ Հայոց դպրոցն են ուղարկում, կա՛մ աւելի լաւ են համարում թողնել փողոցներում թափառել, աշկերտներ տալ խանութպաններին եւ արհեստաւորների մօտ՝ քան մեր վարժարանը ուղարկել»։

Խօսակիցս մի առանձին հրճուանքով եւ գոհունութեամբ աւելացրեց. «Հայերը անվերապահ կերպով փարեցան «Սահմանադրութեան» եւ այս երկրի վերածնութեան գործին. մինչ Յոյները ազգայնամոլութեամբ առաջնորդուելով՝ ամէն տեղ մեզ դէմ թշնամական դիրք բռնեցին»։

— Այստեղ կառավարական դպրոցներ կա՞ն։

— «Կան. բայց աշակերտները շատ քիչ են։ Ուսուցիչներից մի քանիսը մեզ հակառակ դուրս եկան՝ վտարեցինք։ Մեր այս քաղաքի յետադիմութեան միակ պատճառը մեր միւֆթին է. նա սոսկալի մարդ է. ահագին ազդեցութիւն ունի. կուսակիցների շատ մեծ թիւ ունի. ոչ ոք կարող է նրա դէմ խօսել. ո՛չ միայն այստեղի գայմագամը պարտաւոր է նրան լսել եւ հետեւել. այլեւ Սեբաստիայի Վալին էլ. քանի՛ քանի՛ Վալի-

ներ ծեծել, ճանապարհ է դրել: Նրան դէմ երթալ չէ կարելի· ամբաւ՝ ընդարձակածաւալ կալուածներ ունի, և՝ ինչու՞ դրամ: Աչքիդ առաջ փռուած այս ամբողջ տարածութիւնները՝ բոլոր արտերը, այգիները, լեռներից այն կողմը տարածուող ծառաստանները, մարգագետինները, մշակուած-անմշակ հողերը՝ բոլորը այդ մարդունն են: Սերաստխալի դաշտին մէջ էլ մեծ տարածութեամբ հողեր ունի: Այս մարդը Անգլիական լորդ է: Մինակ այս չէ· նա կենդանի դրամատուն է· փաշխատութեամբ էլ է պարապում· շատ ծանր տոկոսներով դրամ է տալիս· իր պարտապանների հանդէպ ինքը թէ՛ դատաւոր է, թէ՛ դատախազ եւ թէ՛ գործադրող իշխանութիւն: Բոլոր իր կալուածները կիսուորութեամբ է աշխատցնել տալիս: Մեզ սաստիկ հակառակ է»:

— Մեր ընկերները ինձ ասացին, որ քաղաքի չուրջը եղող ընդարձակ՝ խոպան դաշտերը շատ դիւրութեամբ կարելի է ջահագործել, մշակելի արտեր դարձնել, երբ ջուր լինի· իսկ ջուրը այստեղից շատ մօտիկ է եւ գործը կարող է գլուխ գալ մի քանի հազար ոսկի գումարով, որի կէսը խոստանում են մեր ընկերները վճարել, միայն թէ մնացած կէսն էլ Թուրքերը վճարէին: Ձէ՞իք ուզիլ պէտք եղած գումարը մէջտեղ բերել եւ գործը սկսել առանց ազգային-խտրականութեան որ եւ է միտումի:

Այս առաջարկին՝ քաղաքապետը, բժիշկը դրեթէ միատեղ պատասխանեցին· «Այո՛· շատ լաւ կը լինի եւ շատ էլ օգտակար· գործը շատ դիւրին է· բայց ապահովութիւն չը կայ: Ամէնքիս սրտի մէջ երկիւղ կայ՝ թէ ո՞վ գիտէ, չի՞ կարող ռէակցիան նորից գալ եւ մեր ձեռնարկի արդիւնքը ոչնչացնել: Տեսնենք թէ այս երկիրը մեզ պիտի մնա՞յ· յետոյ մեր միֆթին կայ· ամենաչնչին պատրուակներ բռնելով՝ նա ամէն բան կը յափշտակէ եւ մեզ բոլորովին ձեռնունայն, դատարկ կը թողնի: Այս պայմաններիս մէջ մե՛ղք է մեր դրամին· պիտի սպասենք, մինչեւ որ բոլորովին ապահովուենք»:

— Մի՞թէ կասկած ունէք· դեռ բոլորովին ապահով չէ՞ք «Սահմանադրական» կարգերի յարատեւութեան մասին»:

Յառաջ նետուեց Մուստաֆա Նէճիպը· իր սեպհական խօսքերն են·

— «Յառաջիկային Պարլամենտական ընտրութիւններ պի-

տի լինեն: Ալբանացիները մի կողմ պիտի քաշեն եւ աշխատեն մեծ թուով Ալբանացի երեսփոխաններ ընտրել: Յոյները պիտի ջանան Յոյն երեսփոխանների թիւը շատացնել: Արաբները հիմակուանից կռիւ են անում իրենց թուի քիչութեան մասին. նրանք ամէն ճիգ պիտի թափեն, որ Արաբ երեսփոխանների թիւը այս անգամ կրկնապատիկը լինի: Հայերն էլ 20—25 երեսփոխան տալու միտք ունեն: Իրերի այս դրութեան մէջ՝ Օսմանեան ազգութիւն մէջտեղ չկայ: Երբ ամէն ցեղ, ամէն համայնք իր սեպհական երեսփոխանների թիւը պիտի ջանայ աւելացնել, էլ ո՞ւր կը մնայ Թրքութիւնը. նրա թիւը շատ պիտի իջնի եւ փոքրամասնութիւն կազմի. իսկ դա շատ մեծ վտանգ է. երբ բուն Թուրքերը Պարլամենտի մէջ էլ մեծամասնութիւնը կորցնեն: Իսկական վտանգը, անապահովութեան երկիւղը գըլխաւորապէս այդ կողմից է գալիս»:

— Բայց չէ՞ որ դեռ Ծերակոյտ կայ, ուր Թուրքերը ջախջախիչ մեծամասնութիւն ունեն. բացի դրանից՝ Սուլթանական վաւերացման հանգամանքն էլ մի ուրիշ ապահովութիւն է տալիս, որ ամէն բան բացառապէս Թուրքերի շահի տեսակէտից պիտի քայլի:

— «Հարկաւ, դրանք որոշ չափով ապահովութեան պայմաններ են. բայց խառնակութիւններ կարող են պատահել: Յոյն Պուչօյի բերանը էլ կարելի՞ է գոցել, երբ իր նման մի քանի տասնեակներ լինեն: Երբ Թուրքերին հակառակ մեծամասնութիւն կազմեն, օրէնքներ քուէարկեն և Ծերակոյտը չը հաստատի, Սուլթանը չը վաւերացնի՝ դրանից ահագին փոթորիկներ կը ծագեն, Թուրքերին հակառակորդ Պուչօները արար-աշխարհը իրարու կը խառնեն. անտեղի խռովութիւններ, իրարանցումներ, բախումներ կարող են տեղի ունենալ. Եւրոպան կը միջամտի, եւ նորից հազար անպատեհութիւններ կարող են յառաջանալ: Այնպէս որ հիմայ՝ մենք իրական վտանգի առաջ ենք կանգնած»:

— Այդպէ՞ս են խորհում ձեր բոլոր ընկերները. ինչո՞ւ այդ յուսահատութիւնը: Կարծեմ՝ մտադրութիւն ունիք «Սահմանադրութեան» մի քանի կէտերը փոխելու:

— «Այո՛. այնպէս պիտի անենք, որ Պարլամենտի մէջ միայն Թուրքերը մեծամասնութիւն կազմեն: Այս անգամ պիտի աշխատենք, որ պետական ամբողջ պաշտօնէութիւնը մեզ-

նից լինի»։

Վերջը՝ Մուստաֆան ասաց, որ ինքն էլ շուտով Ամասիա, Թոգաթ եւ Սեբաստիա պիտի երթայ։

Մնա՛ք բարեւ ասացինք. նոր տեղեկութիւններով գնուած։

Ճանապարհին ընկերները հարցրին. «Արդեօք այս մարդը ձեզ չի՞ հետապնդում»։

— Ի՞նչ փաստ։

— «Այն, որ նա Մարզուան է եկել, ծածուկ մնացել եւ իր ընկերներին ասել, որ ժողովների մէջ ձեր ասած-խօսածները գրի առնեն եւ իրեն բերեն»։

ՄԻԽՖՏԻՆ. — Մտածեցի անպատճառ միւֆտին էլ տեսնել։ Ընկեր Թաթարեանին խնդրեցի, որ այցետոմս տանի եւ միւֆտիին ներկայացնի ու ժամադրութիւն խնդրի։

Ընկերը վերադարձաւ. ասաց, որ սպասում է։

Արեւելեան պերճանքով զարդարուած մի դահլիճ ենք առաջնորդւում։ Միւֆտին նստած է իր թաւշեայ օթոցի վրան՝ ձեռքին մի խոշոր «համբիչ»։ Գլխին ունի մի ահագին սպիտակ փաթթոց։ Խօսում է ծանր՝ հատիկ հատիկ։ Կերպարանքից ուղղակի մոլեռանդութիւն է թափւում՝ աչքերը ուռած՝ կարմրած. յօնքերը թաւ, երկայն՝ սպիտակ մօրուքով։ Ճիշտ Էմիր»ի տեսք ունի։

— Քաղաքս գալով՝ պարտականութիւն համարեցի ձեզ էլ այցելել, ձեզ հետ էլ ծանօթանալ։

— «Շնորհակալ եմ, շա՛տ շնորհակալ» ասաց՝ ձեռքը ճակատին տանելով։ Շարունակեց. «Լսեցի որ եկել էք, չիտակը շա՛տ պիտի ցաւէի, եթէ առանց ինձ տեսնելու երթայիք, որովհետեւ ես Հայերին շատ եմ սիրում»։

— Այդ անկարելի էր, եւ ես իմ քաղաքավարական պարտականութեանս մէջ ինչո՞ւ պիտի թերանայի, քանի որ դուք այդքա՛ն սիրում էք մեր ժողովրդին։

— «Այո՛. Հայ ժողովրդին բան չունեմ ասելիք. նրանք շատ անվնաս մարդիկ են. իրենց համար աշխատում են։ Մեր մէջն է, որ անամօթներ են դուրս եկել եւ աշխատում են ամէն բանի տիրանալ։ Այս երկիրը, հիմայ, քանդողը, աւերողը նրանք են։

— Ինչո՞ւ այդպէս. չէ՞ որ նրանք «Սահմանադրութիւն»ը բերեցին, ժողովրդի լուսաւորութեան եւ յառաջդիմութեան

Համար Ակումբներ են բաց անում, դպրոցներ չինում:

Մխիթարին տեղից չարժուեց. բարկացած կերպարանք առաւ եւ ծանր կերպով ասաց.

«Թող գլուխներն ուտի իրենց Լուսաւորութիւնն էլ, Վարժարանն էլ, Ակումբն էլ: Նրանց Ակումբները ժողովրդին, մասնաւորապէս հարուստներին կեղեքելու համար են: Ես էլ այդ Ակումբին դրամ տուեցի. բայց տեսայ, որ վերջ չը կայ: Ի՞նչ են անում այդ Ակումբների մէջ. մի օր ժողովրդին հաւաքել՝ բարոյական, կրթիչ բան խօսե՞լ են: Հաւաքւում են այնտեղ՝ թուղթ են խաղում, ծխում, գինովանում, հարուստների ցուցակը կազմում՝ նրան-նրան կողոպտում: Ահա՛ մեր Մուստաֆա Նէճիպը, որի հօրն էլ եմ ճանաչում, պապին էլ: Անօթի՛, խե՛ղճ մարդիկ էին. ինքն էլ առաջ ամսական 1–2 ոսկի էր առնում. իսկ հիմա՞յ. կարո՞ղ ես հաշուել նրա ձիերի թիւը, հօտերի, ջոլիրների բազմութիւնը. ահագին տարածութեամբ արտեր, հողեր ձեռք բերեց. ո՞րտեղից այդ բոլորը: Մեր քաղաքապետը երէկ անօթութիւնից մեռնում էր. հիմայ չէնքով չընորհքով հարստութեան տէր է եղել, դրամ ունի. ո՞րտեղից դրանք: Էլ մեռա՛նք դրամ տալով. այսօր գինուորների համար է. վաղը՝ նաւատորմիղի. միւս օրը՝ նոր բացուած վարժարանների: Հազար ոսկուց աւելի հէնց այս տարի եմ տուել. ինձ նման էլ ուրիշները. ո՞ւր են գնում այս դրամները. տուող, խօսող, փնտռողը ո՞վ է»:

— Չէ՞ որ նոր զրահաւորներ են ապսպրել:

— «Բարի՛. բայց դրա համար Կառավարութիւնը առանձին բիւջէ ունի: Բացի դրանից՝ մեզանից առած դրամներով տասը նոր զրահաւոր կարելի էր գնել. ո՞ւր է. ժողովրդին կողոպտեցին, կողոպտեցին, արիւնը, ոսկորը ծծեցին դրանք: Ես դրանցից դեռ մէկին չը տեսայ, որ աղքատ էր, աղքատ էլ մնար. Իթթիհատական դառնալուն պէս՝ մեծ մեծ պաշտօններ են ձեռք բերում եւ կարճ ժամանակի մէջ հարստանում. դրանք ուղղակի կողոպուտի են դուրս եկել: Ես էլ ինչո՞ւ այդ մարդիկներին դրամ պիտի տամ»:

— *Այստեղ վարժարան են բաց արել. հարկաւ դրամի պէտք պիտի ունենան:*

— *«Ինչի՞ համար է այդ վարժարանը. կառավարութիւնը դպրոցներ ունի, բայց մէջը տղայ չը կայ: Ուզողը թող երթայ եւ կարդայ, ո՞վ է արգելողը»:*

— *Իրենց վարժարանը նոր մեթոտ ունի:*

— *«Այո՛. Հայերի եւ Յոյների անտէր տղաներին հաւաքում են, նրանց սովորեցնում են ասել, որ իրենք* Թուրք *են. դրա- նից ի՞նչ մեծ բան դուրս պիտի գայ: Այդ՛ բոլորը փողի փչելու, կողոպտելու համար են: Խելքը գլխին ո՞ր Հայը, ո՞ր Յոյնը իր տղան այդ վարժարանին կը վստահանայ...: Չէ՛,* դրանց *ա– րածը չափը անցաւ...»:*

— *Ձեր արտերը մեքենաներո՞վ են մշակւում:*

— *«Ո՛չ. մեքենաներ գործածելու սովորութիւն չունենք. ամէն ինչ կատարւում է* կիսուորութեան *եղանակով: Ուզողը հողերս կը վարի, կը ցանի, կը հնձի, կը կալսի՝ կէսն ինձ, կէսն իրեն՝ պետական կալուածահարկի բաժինը* կիսուորից *դուրս գալուց յետոյ: Այս բանի մէջ էլ Մուստաֆան եւ իր ըն- կերները միջամտել ուզեցին. եկան՝ ինձ ասացին, որ Հայե- րին չը տամ հողերս, ինչ պայմաններով էլ որ լինի, այլ մինակ Իսլամներին: Բայց ես ինչու այդպէս պիտի անէի. ո՛վ լաւ կը վարի, կը ցանի, աւելի օգուտ կը տայ՝ իմ գործս նրա հետ կը լինի: Այսքա՛ն երկար տարիներ Հայերը իմ հողերիցս օգտը- ւում են. ես դեռ նրանցից մի վատ բան չը տեսայ. ինչո՞ւ նը- րանց հող չը պիտի տամ՝ վարելու, ցանելու. թող նրանք էլ օգտուեն, ե՛ս էլ»:*

— *Երկրի ապահովութիւնը ի՞նչպէս է:*

— *«Ամէն ինչ* այդ *մարդկանց ձեռքին է. ես փաստեր ու- նեմ, որ այս շրջանիս մէջ երեւացող* աւազակների *խմբերը՝* նը- րանց *են կազմակերպել: Վերջապէս* այդ *մարդիկը այս երկիրը պիտի ուտեն, քանդեն, կործանեն. դրա համար էլ ես* նրանց *հակառակ եմ. գուցէ ձեզ էլ այդ մասին խօսած լինեն»:*

— *Ինչո՞ւ համար այդքա՛ն զէնք է մտնում այս կողմերը. քանի որ գիւղացիները շատ խեղճ են, աւելի լաւ չի՞ լինիլ այդ*

գրամներով երկրագործական գործիքներ եւ անասուններ գընել.....:

— «Բոլորը այդ անմօթների գործն է․ նրանք է, որ չարունա՛կ ժողովրդի պատարկաւորներին հաւաքում են՝ ասում են թէ զէնք առէք, պատրաստ կեցէք... Դուք չը գիտէք․ դրանք մեզ ուղղակի կողոպտեցին․ նրանց խաբեբայութեանը, ստախօսութեանը չափ ու սահման չը մնաց: Ամէն տեղ մեր գլխին ցաւ են․ այս երկրի գլխին դրանք փորձանք պիտի բերեն․ գլուխներնին ուտի իրենց «Սահմանադրութիւնն» էլ, «Պարլամենտն» էլ․ մենք նրանցից ի՞նչ օգուտ․ տեսանք, մէկ Համիտի տեղ հարիւրը դուրս եկաւ․ ի՞նչը փոխուեց»:

Մնա՛ք բարով ասացինք:

Մխիթարին հին կոճղի Թուրք էր․ պետութիւն, ազգ, օրէնք՝ դրանք նախ իրեն պիտի ծառայէին: Նրա համար լաւ մարդ էր նա, ո՛վ իրեն հնազանդում, օգուտ էր տալիս:

Իտտիհատականներին ատում էր․ որովհետեւ իրեն կողոպտում էին: Հայերից գոհ էր․ որովհետեւ իրեն շահ, օգուտ էին տալիս:

Բայց այն էլ կար, որ Իտտիհատականների հոգին, նրանց ո՛վ եւ ի՛նչ լինելը շատ լաւ ճանաչել, հասկացել էր:

ԱԽԱՆԻ ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ․— Ընկերներով միասին այցելում ենք դպրոցները․ երկսեռ աշակերտների թիւը հասնում է 250-ի․ 6 տարեկանից բարձր բոլոր տղաները եւ աղջիկները վարժարան են յաճախում․ փողոցերը մնացող տղայ չը կայ: Հզաբարձութիւնը ձրի հայթայթում է աղքատների դրենական պիտոյքները: Աղքատներից ամսաթոշակ չի առնում:

Ուսուցման մեթոդը ո՛չ բոլորովին նոր է, ո՛չ էլ հին․ խառն է խուճն դրութիւն ունի: Բայց շրջանի Թուրք դպրոցներից անհամեմատ աւելի բարձր է:

Աւանդուած առարկաների մէջ առաջին տեղն է տրուած Հայոց Պատմութեան եւ Լեզուին:

Ուսուցիչների աշխատանքը աւելի քան մեղուաջան էր․ բայց չնչին ռոճիկներով:

Տղայ, աղջիկ՝ դուարթ, բոլորն էլ ազգային, յեղափոխական ոգով լցուած:

Մեր Յեղափոխական բոլոր երգերը երգում են․ Նորագոյն կեանքից բաւականաչափ տեղեկութիւն ունեն։

Գոհ սրտով թողնում ենք Հայ մշակոյթի այդ վառարանը։

ՆՈՐԻՑ ԴԷՊԻ ՄԱՐԶՈՒԱՆ․— Նոյն երեկոյեան՝ մի քանի ընկերների ուղեկցութեամբ՝ վերադարձայ Մարզուան։

Կէս ճանապարհին, դեռ Մարզուան չը հասած, հակառակ կողմից գալիս էին երկու Նորընծայ քահանաներ։

Հայկական սովորութեան համեմատ՝ ժողովուրդը նրանց դիմաւորելու էր գնացել։

Նորընծաներից մէկը մեր ընկերակիցն էր։ Երկուսն էլ ձեռնադրուել էին Սեբաստիայում։

Նորընծայ Խորէնը գանգատի ձեւով պատմեց․ «Ինձ ձեռնադրող եպիսկոպոսը հարցրեց թէ ի՞նչ Կուսակցութիւններ կան ձեր քաղաքի մէջ։ Ես էլ պատասխանեցի, որ մեր ժողովուրդը ուրիշ Կուսակցութիւն չի ճանաչել, եւ չի էլ ճանաչում, բացի Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնից։ Եպիսկոպոսը այդ լսելով՝ մի քիչ խռոված կերպարանք առնելով, բացէ ի բաց ասաց, որ այլեւս այդ Կուսակցութեան ոյժ չը տամ։ Ես էլ կտրուկ կերպով ասացի, աւելի լաւ կը համարեմ քահանայ չը ձեռնադրուել, քան սիրածս Կուսակցութիւնը թողնել․ որովհետեւ երիտասարդութեանս առաջին տարիները այդ Կուսակցութեան Հրոսակային խմբերի մէջն եմ անցրել»։

Խորէնը, արդարեւ, Մինաս Օղլու Խմբային կռիւների մէջ մեծ դեր էր խաղացել։

Եւ Նորընծայ ընկերը «երջանիկ» էր իրեն համարում, որ առիթը ունեցաւ նորից իր ուխտը վերակրկնելու՝ այն ճանապարհի վրայ, որտեղից ինքը տարիներ շարունակ անցել, կռիւներ էր մղել Համիտական բռնապետութեան դէմ։

Խոսակցութիւնը լսող ժողովուրդը վրդովուեց․ ասելով, որ իրենք Սօցիալ Դէմօկրատ Հնչակեաններ են, այդպէս էլ կը մնան, եւ իրենց քահանան էլ ուրիշ բան լինել չէր կարող․․․։

Ուղեկցող ընկերներին եւ ժողովրդին մի քանի յորդորական խօսքեր ասելուց յետոյ, բաժանուեցանք իրարուց եւ սկըսեցինք բարձրանալ դէպի Մարզուան։

Երեկոյեան ցուրտ հովը սկսեց սաստիկ փչել. Մարգուան հասած՝ զգացի, որ վիճակս ծանր է:

Եկաւ բժիշկ Խոմիրեանը, պատուիրեց հանգստանալ եւ տուած դեղերը անպատճառ ընդունել. ինչ որ ինձ համար անկարելի էր, որովհետեւ չափազանց շատ դեղ ընդունելով՝ դէպատեցութեան հիւանդութիւնն էլ վրաս էր բարդուել եւ առածս տեղը փախում, չեռ էի տալիս:

Մայիս 27 եւ 28, շաբաթ եւ կիւրակէ, ունեցայ ծանր ժամեր:

ԳՂՆՋԱԳՈՐԾՆԵՐԸ.— Երկուշաբթի, 29 Մայիս, այցելում եմ Մարգուանի շուկան: Ջեռակերտ եւ մեքենական արհեստները բացառապէս Հայերի ձեռքն են կեդրոնացած: Փոքր-Ասիայի պէտքերը հոգացող գլխաւոր կեդրոնավայրերից մէկն էլ Մարգուանն է. մանաւանդ իր գեղեցիկ եւ դիմացկուն ձեռակերտներով:

Ընկեր Ազամեանը, աքսորավայրից Անգլիա եւ Ռուսաստան անցնելով, Հայերի յատուկ ընդունակութեամբ եւ ձեռներէցութեամբ՝ յաջողել է գաղտագողի գուլպայի մեքենաներ բերել Մանչեստրից եւ գուլպայագործութեան ճիւղին ահագին ծաւալ տուել Մարգուանի մէջ. շրջակայից բոլոր պէտքերին, այդ կողմից, բաւականութիւն տուողը նա է:

Ամենից հետաքրքիրը պղնձագործներն են: Պղնձագործութիւնը, որպէս արհեստ, բացառապէս Հայերի ձեռքին է. ընդարձակ շուկան բռնել են Հայերը. իրենց արտադրութիւնը շատ հեռաւոր տեղեր է հասնում. աւելի քան 500 հոգի այդ արհեստով են պարապում:

Արհեստակցական Միութիւններ չը կան. մեր ընկերները աշխատել են կազմել. բայց Կառավարութիւնը արգելք է եղել. ուստի աշխատանքի պայմանները անփոփոխ են:

Իւրաքանչիւր սեփհականատէր-վարպետ ունի իր խանութը, որը իր գլխին հաւաքած՝ աշխատեցնել է տալիս 5—15 աշկերտներ, իւրաքանչիւրին չնչին օրապահիկներ վճարելով:

Վարպետ, խալֆա, աշկերտ. միջնադարեան այդ դրութիւնը դեռ լրիւ գոյութիւն ունի:

Սեպհականատէր–վարպետ պղնձագործների մէջ բաւականին մեծ թւով ունեւորներ կային․ երբ հարցրի թէ ինչո՞ւ ամէն բան ձեռքով են կատարում եւ իրենց արհեստի վերաբերեալ մեքենաներ չեն բերել տալիս․ պատասխանեցին, որ իրենք մի քանի անգամ փորձել են այդ մեքենաները արտասահմանից բերելու, բայց կառավարութիւնը խստիւ արգիլել է, եւ նոյն իսկ թեթեւ մեքենաներ փախցնելով բերողներին էլ ծանր տուգանքների եւ պատժի էր ենթարկել։

Թուրք պետական՝ ազգայնական տնտեսական քաղաքականութիւնից ուրիշ մի բնորոշիչ տեղեկութիւն էլ տուեցին։

Մարզուանից հազիւ մէկ ժամ հեռու Կիւմիւշ–Հաջի–Գիւղ կայ․ 50—60 տուն Թուրք եւ 10—15 տուն էլ Հայ ազգաբնակչութեամբ։

Կիւմիւշ–Հաջի–Գիւղի պղնձահանքը անուանի է պղնձի մաքրութեամբը եւ լաւութեամբը։

Հայ պղնձագործները մի քանի անգամ Թուրք կառավարութեան են դիմել, խնդրագիր ներկայացրել, ամենալաւ պայմաններ առաջարկել, խնդրելով, որ իրենց թոյլտուութիւն տրուի այդ հանքը շահագործել։ Բայց Կառավարութիւնը միշտ էլ մերժել է։ Հարկաւ այն քաղաքականութեամբ, որ Հայերը միշտ դրանից պիտի օգտուէին։

Հանքի հում պղինձը, կողոպուտի ենթարկուելուց յետոյ, Կառավարութեան կարգադրութեամբ՝ ուղարկւում էր Մանչեսթր եւ պղնձի թիթեղները այնտեղից վերադարձւում էին Տաճկաստան։

Ու այդպիսով Հայ պղնձագործները ստիպուած էին տասնապատիկ սուղ վճարել, քան իրենք կարող էին այդ միեւնոյնը անել տեղին վրայ․ 5 ղուրուշի պղնձեայ թիթեղը իրենց վրայ նստում էր 70—80 ղուրուշ։

Հայերի ձեռնարկից ո՛չ միայն իրենք պիտի օգտուէին, այլեւ պետութեան գանձարանը։

Բայց Օսմանեան չնաշխարհիկ պետութեան տնտեսական քաղաքականութիւնը աւելի լաւ էր համարում ինքն իրեն քայքայել, ինքն իրեն վնաս տալ, քան թոյլատրել որ Հայերը շահագործէին եւ ազգային հարստութիւն դիզէին։

Ես ուրախութեամբ տեսայ, որ Հայ արհեստաւորների մէջ կային շատերը, որոնք պղինձը բովելու գործից շատ լաւ տեղեկութիւն ունէին եւ ամենայնիւ կարող, ընդունակ էին այդպիսի հանքեր ամենայն դիւրութեամբ շահագործելու, նորագոյն մեքենաներով բովելու եւ թափելու գործը կատարելու։

Մարգուանի պղնձագործ արհեստաւորները իրենք էլ խոստովանեցան, որ այդ արհեստի նրբութեան կողմից իրենք դեռ բաւականին յետ էին Թոքաթի (Եւդոկիա) Հայ արհեստաւորներից, որոնք այդ արհեստը արդէն իր կատարելագործութեանն էին հասցրել։

ԽՈՒԵՐԱՅԻ ՇՇՈՒԿ.— Մարգուան լուր հասաւ, որ Սամսոնի մէջ խուէրայով մեռողների մի քանի դէպքեր են պատահել։

Քաղաքը թրքեվար սկսեցին մաքրել։

Ընկերները աճապարեցրին դուրս գալ, ճանապարհը շարունակել, որ մի գուցէ այդտեղ էլ դէպքեր պատահեն և արգելքի տակ առնուենք, թոյլ չը տան մեկնելու։

Որոշեցինք թողնել Մարգուանը։

ԳԼՈՒԽ Է.

ԱՄԱՍԻԱ

ԴԷՊԻ ԱՄԱՍԻԱ.— Ցուրտ եւ անձրեւոտ օր է. ընկերներէ մեծ բազմութիւն մեզ ուղեկցում է մինչեւ քաղաքից հեռու տարածուած դաշտերը: Փոխադարձ հրաժեշտ ենք առնում եւ ընկեր Ս. Մուրատի հետ ճանապարհը շարունակում՝ դէպի Ամասիա:

Անցնում ենք տափարակ, մշակուած, դալարագեղ դաշտերից և մօտ կէս ժամից յետոյ՝ հասնում մեր առաջին կայանը:

ԶԱՐԽԱՓԱՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ.— Անձրեւի սաստկութիւնը, ցուրտը մեզ այլեւս թոյլ չի տալիս առաջ երթալ, կանգնում ենք Զարխափան Ս. Աստուածածնի հիւանոցը. Վանքի դարբասի առաջ: Վանքի միաբանութիւնը առաջ է գալիս. Հայկական Վանքերին յատուկ հիւրասիրութիւն են տալիս մեզ:

Վանքը ունի բաւականին ընդարձակ կալուածներ. վանքապատկան գիւղի բնակիչների վիճակը, համեմատաբար ուրիշ վայրերի, աւելի լաւ է: Գիւղացիները գոհ էին իրենց վիճակից եւ առանձին գանգատ չունէին:

Այցելեցինք Վանքի պարիսպների մէջ զետեղուած գիւղական դպրոցը. երկսեռ մանուկները ուրախ, զուարթ՝ Յեղափոխական երգեր երգեցին, իրենց յառաջադիմութեան եւ աշխատասիրութեան գրաւոր փաստակները մեզ ներկայացրին, որ շատ գոհ մնացինք: Երեւում էր, որ երիտասարդ ուսուցիչը աշխատել էր՝ Հայ ուսուցչին յատուկ ժրաջանութեամբ:

Այստեղ չը գտանք պարապ վանականներ. բոլորն էլ մի մի աշխատանք ունէին:

Վանահայրը մի առ մի ցոյց տուեց Վանքի հարստութիւնը, պատմեց իրենց գլխին եկած «փորձանքներ»ը՝ բռնապետութեան շրջանին:

Ուրախութեամբ էր, որ տեսանք վարուցանի նորագոյն գործիքներ, արուեստական կերպով հաւ թխսելու մեքենաներ էլ կային: Ընկեր Մուրատը, որ հաւաբուծութեան այդ ճիւղի մէջ մասնաւոր ձեռնհասութիւն ունէր, հաստատեց, որ այդ

բոլոր մեքենաները առաջին կարգի էին։

Վանքի ՄՇԱԿՆԵՐԸ յաղթանդամ, հսկայ մարդիկ էին. նրանք դիւրութեամբ թոյլ չը պիտի տային վանքապատկան հողերը եւ նախիրը շրջականերում վխտացող աւազակների ձեռքն անցնելու։

Օդը մի փոքր պարզուեց. անձրեւը դադար առաւ, ցուրտը մեղմեց. հրաժեշտ առնելով բարի վանականներից, մեր ճանապարհը շարունակեցինք դէպի Ամասիա։

Զարխափանի Ս. Աստուածածնի Վանքը որոշեալ դեր է կատարել Փոքր-Հայքի Հայ կեանքի մէջ՝ թէ հին եւ թէ նոր ժամանակներում. այդ մասին, առ այժմ, ծանրանալը մեր ծրագրից դուրս է։

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ.— Գնում ենք ընդարձակ, խոպան, սիզաւէտ դաշտերի միջով, լի ճախճախուտներով. կառքի անիւները հազիւ հազ թաւալում են տիղմի միջով։ Յաճախ ստիպւում ենք վայր իջնել. բայց վայր իջնել՝ ո՞ւր կանգնել. ուղղակի խրւում ենք ցեխերի մէջ։

Տիրող միակերպութիւնը խանգարողը միայն սագերի, բադերի, ճահճային թռչունների անվերջ երամներն են։

Բնութեան մատակարարած հարստութեան մէջ՝ անապատ Թիւրքիայի մի պատկերն է սա։

Այդ խոպան դաշտերը տասնեակ հազարաւոր մարդիկ կարող էին կերակրել. բնութիւնը ամէն ինչ տուել էր, որ նրա ծոցի մէջ ապրողները երջանիկ, անդորր կեանք վարէին։

Բայց դա Թիւրքիայի մի մասն էր։

Ճանապարհը հետզհետէ, իսկապէս, անտանելի է դառնում՝ կուտակուած ցեխերի եւ տղմալճակների պատճառով. վերջապէս տանում ենք մեր ճակատագիրը։

Անցնում ենք կաթսայաձեւ անհուն տարածութիւն ներկայացնող մի տափարակի միջով. ընդարձակ, բոլորշի հորիզոնը լեռնագագաթների վրայ է իջնում։

Տափաստանի ձախ կողմը բռնում է Սպիտակ Լեռը, իր սպիտակափառ գագաթով, երկարաձիգ շղթայի միջից վեր բարձրանալով՝ նա մի առանձին վեհութիւն է ներկայացնում։

Ալիքների նման տարածուող լեռնաշղթաները տեղ տեղ իրարու մօտենալով՝ մի ընդհանուր մանեակ են կազմում:

Մեր աջ կողմը տարածւում է երկայնանիստ Ջղալին· Թիկունքներիս կողմն է մնում Թաւշան-Դաղին:

Եւ այդ բոլորի տեսքը՝ տալիս են մի զմայլելի տեսարան:

Տեսնել այդ բոլորը եւ չը յուզուել՝ անկարելի է· դրանք այն վայրերն են, ուր մեր Քաջամարտիկ Հրոսակախմբերը տարիներով կռիւներ են մղել Համիտական բռնապետութեան դէմ:

Այդ վայրերում լեռ, ձոր, հովիտ չը կայ, որ իր առանձին պատմութիւնը չունենայ եւ մեր Հրոսակների զէնքի չխչատակները իր մէջ բովանդակած չը լինի:

Ամէն անցորդ մի մի պատմութիւն ունի այդ տեղերի նըկատմամբ՝ շատ հին օրերից սկսած:

Ընկեր Մուրատը ուրախ, զուարթ երգում է· կառապանը իր տեսած-լսածների պատմութիւնն է անում· ու մոռանում ենք մեր ճանապարհորդական տանջանքը:

Մեր ճանապարհորդական քառարանը չարունակելով՝ վերջապէս կանգ առանք ԹԱՐՍ գետակի ափին· ճաշեցինք, հանգստացանք, ու նորից խրուեցանք ցեխերի, աղմուտ ճահիճների մէջ· մեր «Եայլին», կառքը *աւելի բեռ էր մեզ համար, քան փոխադրութեան ծառայող միջոց:*

Դաշտը աստիճան առ աստիճան վայր է հակւում, նեղանում է, լեռնաշղթաները իրարու են մօտենում եւ 8 ժամից յետոյ մտնում ենք մի ձորակի մէջ՝ ապառաժուտ կողերով եզերուած:

Մեր գրաբառ լեզուի մէջ՝ «ֆերելով» *անցնել ոճը կայ· դա նկարագրական ոճ չէ այլեւս, այլ մի իրականութիւն· որովհետեւ մեր կառքը ապառաժուտները ուղղակի* ֆերելով, ֆերբթելով է *գլորւում.....:*

Մտնում ենք վերջապէս Ամասիայի պատմական ձորակը· հիանալի տեսարան է բացւում· մեր ձախ կողմը ընկած է Ամասիայի այնքա՜ն գովուած այգեստանը, որ իր ծաղիկ ծաղկուքով, իր դալարագեղ ծառաստաններով՝ մի ակնապարար համայնապատկեր է ներկայացնում· մարդ նայում է եւ չի կըշ-

ռանում :

Հայլու ձորակից դուրս եկած՝ տեսանք մարգագետնի վրայ նստած 50-ի չափ ընկերներ, որոնք մեզ տեսնելով ուրախութեան աղաղակ բարձրացրին եւ եղջերափողերով հեռաւոր ընկերներին իմաց տուեցին մեր ժամանումը:

Զորս կողմից՝ բլուրների կատարներից, այգիներից, ձորամիջից հաւաքուեցան աւելի քան 100 ընկերներ:

Միասին բարձրացանք լերան կողն ի վեր. հաւաքուեցանք մի մարգարտայեռ մարգագետնի մէջ ու կուշտ կուշտ վայելեցինք Ամասիայի այն գեղատեսիլ վայրերը, որ բնութեան ըսքանչելիքներն են համարւում:

Մեզ դիմաւորելու էին եկել՝ Ամասիայի Երեսփոխան՝ յայտնի Իսմայիլ փաշայի երկու մօտիկ ազգականները: (*)

(*) Ամասիայի երեսփոխան Իսմայիլ փաշայի հետ մենք մասնաւոր ծանօթութիւն ունէինք դեռ Պարիզում: Նա ամենաթունդ հակա-Համիտական էր. բայց միեւնոյն ժամանակ էլ՝ ատելով ատում էր Ահմէտ Ռիզային՝ իր թրքամոլութեան եւ այլամերժ մոլեռանդութեան համար: Իսմայիլ փաշան, վերջը, Իթիլաֆի սիւներից մէկը դարձաւ եւ ամէն ջանք թափեց Իտտիհատին գլորելու: «Իտտիհատը այս երկրի կործանարար ոգին պիտի լինի», — այդ էր իր սեւեռուն գաղափարը: Լինելով համարձակախօս եւ յանդուգն. նա մի քանի անգամ անձնական տեսակցութիւն ունեցաւ ներկայ «Էքիւզ» Սուլթանի հետ. ջանաց համոզել, որ Իտտիհատի թեւարկութիւնից ինքը անկախ դիրք բռնէր: «Մեր պետական հասկացողութեամբ, ասել էր փաշան Սուլթանին, դու այս երկրի մէջ բովանդակուած ժողովրդների հայրն ես: Իտտիհատը այս երկիրը պիտի կործանի, եթէ օր առաջ նրա դէմ դիրք չը բռնես՝ քո Սուլթանական իրաւունքների վրայ յենուած»:

— Ի՞նչ պատասխանեց, հարցրինք փաշային:

— «Էքիւզ, սիրելիս, էքիւզ. էքիւզի պէս մրթմրթաց եւ գնաց պառկեց...»:

Ներկայ պատերազմը սկսուելու առաջին օրերին՝ Իսմայիլ փաշային բանտարկեցին. չը գիտենք ի՛նչ եղաւ իր վախճանը:

Այստեղ էին նա՛եւ Իոտրհատի Ակումբի նախկին ատենապետը իր հինգ ընկերներով:

Փաղաքավարական, ընկերական սովորական մտքերի փոխանակութիւններից, մի փոքր հանգստանալուց եւ պտղանախաճաշիկ վայելելուց յետոյ՝ բոլորս միասին, ո՛ր կառքով, ո՛ր ձիով, շարժուեցանք դէպի քաղաք:

Դեռ կամուրջը չը հասած՝ Թափուեցան ուրիշ հարիւրաւոր ընկերներ էլ: Հայ, Թուրք հասարակութեան բազմութիւնը ահագին եղաւ, եւ այդ մեծազանգուած Թափորով, երգելով, ուրախութեան աղաղակներով՝ հասանք մեր հոյակապ Ակումբը, որ պերճօրէն կահաւորուած, դրօշազարդուած էր:

Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ինչո՞ւ էր կռիւ յայտարարել Համիտական բռնապետութեան դէմ. — այդ բնաբանը ընդլայնելուց յետոյ՝ շնորհակալութիւն յայտնեցինք մեզ դիմաւորող, մեզ ընդունող հասարակութեան:

Բազմութիւնը ցրուեց:

Մարզուանից մինչեւ Ամասիա մեր ճանապարհորդութիւնը տեւել էր 12 ժամ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ. — Ժողովրդի զանազան խաւերից այցելութիւններ ընդունեցինք. ամենքն էլ մի մի խօսք ունէին ասելիք մեր Կուսակցութեան անցեալ եւ ներկայ արարքների մասին. ամենքն էլ մի մի ցաւ էին պատմում իրենց կրած զանութիւններից:

Այցելութեան եկան ե՛ւ Հ. Յ. Դաշնակցութեան կողմից երկու հոգի: Սրանք աւելի Թթուած էին, չունէին իրենց Մարզուանի ընկերների սրտբացութիւնը. գլխաւոր պատճառն այն էր, որ շարունակական ընդհարումների մէջ էին գտնուել մեր ընկերների հետ՝ տեղական գիւղացական, հոգաբարձական, ազգային եւ Թաղապետական խնդիրների ընտրութիւնների պատճառով: Երեւում էր, որ նրանք մասնաւոր կապ ունէին տեղական յաջորդ Իբրանոսեան Վարդապետի հետ, որ Ամասիայի հասարակութեան գլխին փորձանք էր դարձել:

Բարի գալուստի եկան ե՛ւ տեղական վաճառականները, խանութպանները: Սրանք առաջին րոպէից տրտունջ յայտնե-

ցին Իտտիհատի դէմ, որ զանազան տեսակ ճուէրճերի պատըրուակի տակ՝ իրենց ուղղակի կողոպտում էր:

Այցելութեան եկաւ Ե՛ւ Քաջունի Վարդապետը. Իտալական դպրոցներում՝ բարձրագոյն կրթութիւն ստացող մի համակրելի անձնաւորութիւն:

ՎԱՐՉԱԿԱՆ ԵՒ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ.— Նոյն օրը երեկոյեան, ժամը 10–12, տեղի ունեցաւ մեր Վարչական և ապա Անդամական ժողովը:

Ընկերների թիւը հասնում էր 350-ի. բոլորն էլ կայտառ, աշխոյժ երիտասարդներ էին, գործելու բուռն ցանկութեամբ լցուած: Ինչոր է՛լ աւելի սրտապնդիչ եւ մխիթարական էր,— դա այն էր, որ բազմաթիւ Հին Կոճղ գործիչների կողքին կանգնած էին նորերը եւ այդպիսով կուսակցական-հասարակական գործերը յառաջ տանում:

Ընկերների մէջ կային մի քանի հոգի, որոնք Գերմանացի էին. իրենց մայրը Հայուհի լինելով՝ շատ գեղեցիկ հայերէն էին խօսում: Ընկեր Կարլը շատ մեծ ձեռնհասութեամբ բացատրում էր մեր Ծրագրի երրորդ մասը,— ինչոր ազգերի պատմա-անհատական գոյութեանն էր վերաբերում:

Ընկերներ՝ Մինաս Իփէքճեանը եւ Դօքտօր Թալիպեանը ո՛չինչ չէին խնայել՝ Մանանճիլը բարգաւաճ դրութեան հասցնելու եւ իր պարտականութեան բարձրութեան վրայ պահելու:

Այդ ամենը աւելի քան մխիթարական էր:

Կարգադրուեցան բոլոր Կուսակցամիջեան խնդիրները. քննութեան առնուեցան Փոքր-Հայքի Պատգամ. ժողովի որոշումները. գծուեցաւ Մանանճիլի անելիքը եւ իր յարաբերութիւնը ուրիշ Կուսակցութիւնների՝ մանաւորապէս Իտտի-հատի հանդէպ:

Ընկերները ուրախ տրամադրութեամբ մեկնեցան:

ՆՈՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.— Երեքշաբթի, 30 Մայիս. այցելութեան, աւելի ուղիղ կը լինէր ասել՝ գանգատի եկաւ Բողոքական Պատուելին: Վշտացած կերպով պատմեց թէ ինչ-

պէս հալածանքի, քարկոծումի են ենթարկւում Բողոքական երկսեռ մանուկները՝ Լուսաւորչական դպրոցականների կողմից. ասաց, որ ամեն տեսակ անարգանքի, ծեծի եւ թշնամանքի առարկայ են դառնում իրենց երեխաները փողոցների մէջ՝ յաճախ Թուրքերի առաջ:

Երեւոյթը ինքնին տգեղ էր:

— Չէ՞ք կարծում, Պատուելի, որ դրանք պատահական են եւ արդիւնք սոսկ երեխաների սովորական չարութիւնների:

— «Ո՛չ. դա մեր դէմ աւելի քան կազմակերպուած մի թշնամանք է. դրա ապացոյցն այն է, որ այդ երեւոյթը մնայուն է. օր չի պատահիլ, որ քարէ կռիւ, ծեծկռուք չը լինի: Մեր դպրոցի դուռը, պատուհանները շատ յաճախ քարկոծւում են: Միայն փոքրերը չէ՛, հասակաւոր երեխաներն էլ են այդ կռիւներին մասնակցում,— թէ, գլուխ ջարդուելը շատ սովորական է դարձել: Ինձ թւում է, որ դրդողները աւելի տեղական քահանաներն են, մասնաւորապէս յաջորդ Իբրանոսեան Վարդապետը, որ դէպի մեր համայնքը շատ մեծ ատելութեամբ է լցուած, առանց որ մենք ամենաթեթեւ պատճառ անգամ տուած լինէինք: Նա Թուրքերի հետ նստում-կանգնում, բարեկամութիւններ է անում, նրանց յաճախակի այցելութիւններ է տալիս. բայց մեր երեսն անգամ չի նայում. մեզ ատելով ատում է: Թէեւ մենք նրա հանդէպ ո՛չինչ չունենք, բացի յարգանքից»:

Մի քիչ յետոյ եկաւ Լուսաւորչական քահանան. հարցրի իրենց եւ Բողոքականների փոխադարձ յարաբերութեան մասին: Իր պատասխաններից երեւեց, որ արդարեւ, կրօնական սուր ատելութիւն կայ երկու կողմերի միջեւ. ինչոր աւելի քան ցաւալի էր:

Ջանացայ իմ կարողութեանս սահմանների մէջ միջոցներ ձեռք առնել, որպէսզի այդ տնաքանդ երեւոյթին վերջ դրուի արմատապէս:

Եւ դա կարելի էր անել միայն Կուսակցութիւնների միջոցով:

Իմ աշխատանքս այդ ուղղութեամբ պիտի լինէր:

Մասնաւոր տեսակցութեան եկաւ տեղական «Ապառաժ»

թերթի խմբագիրը. աշխույժ, եռանդուն, սակայն անփորձ մի երիտասարդ. իր թերթի համար յօդուածներ խնդրեց: Հասկացրի, որ մեր Կուսակցութեան ներքին կանոնագիրը ինձ թոյլ չէր տալիս բացի մեր կուսակցական թերթերից՝ ուրիշ որ եւ է թերթի մէջ երեւալու:

ՔՕՄԻՍԷՐ ԷՖԷՆԴԻՆ. — Այցելութեան եկաւ Ամասիայի յայտնի Քօմիսէրը, իր հետ ունենալով երկու Իտտիհատականներ եւ տասը հոգի զանազան կարգի Թուրքեր:

Այստեղ էլ Իտտիհատի Ակումբի նոր նախագահը սկսեց գանգատուել էշրաֆներից. ասում է. «Այս երկիրը կործանողը դրանք են: Ուզում են ժողովրդին իրենց ձեռքին խաղալիք դարձնել. կարգ ու կանոնի չեն հնազանդւում. նրանք մեր անհաշտ թշնամիներն են. թէեւ առաջ լաւ էին, այսպէս վատ չէին. առաջ շատ մեծ չափով մեզ օժանդակում էին. բայց հիմայ մի փարա անգամ մեզ չեն տալիս. — ո՛չ մեզ, ո՛չ էլ մեր բացած դպրոցին. մինակ իրենց հարստանալու մասին են մտածում»:

— Շրջակայ գիւղերի մէջ խումբեր, Մասնաճիւղեր ունի՞ք:

— «Ո՛չ. պատասխանում է տարէց Իտտիհատականը. փորձեցինք ունենալ. բայց չը յաջողեցանք. ընդհանրապէս գիւղացիները շատ չեն սիրում մեզ մօտենալ, մեզ անդամ գրուել»:

— Ինչո՞ւ:

— «Ասում են, որ իրենց մասին բնաւ հոգացողութիւն չենք անում. գանգատւում են հարկերի ծանրութիւնից, սակաւահողութիւնից. մենք էլ, իրաւ, մի բան չենք կարողանում անել, եւ արդէն ի՞նչ կարող ենք անել»:

— Գիւղատէր, կալուածատէր ընկերներ շատ ունի՞ք ձեր մէջ:

— «Այո՛. բաւականաչափ»:

Նախագահը, իր սուրճը խմելուց յետոյ, գանգատի թելը շարունակեց:

«Մեր այստեղի դպրոցների մէջ լաւ, պէտք եղած ուսու—

ցիչներ չունենք. եղածները նախա–«Սահմանադրական» մարդիկ են, որ իրենք իսկ հազիւ դժուարութեամբ են կարդում. նրանց տուած դասերը ի՜նչ պիտի լինեն. մէկը պէտք է, որ նրանց ձեռքից բռնէ եւ բան սովորեցնէ։ Իրաւ է, ամեն բան կառավարութիւնից չի կարելի պահանջել. բայց սկզբնական այս օրերիս մէջ՝ մէկը պէտք է, որ ուսուցիչների քայլերը ուղղէ. քանի որ իրենք էլ չը գիտեն թէ ի՛նչ պիտի անեն»։

— Ձեր Ակումբները չե՞ն հսկում եղած դպրոցների վրայ։

— «Այո՛. հսկում ենք. շատ անգամ միջամտում ենք. բայց ուսուցիչներ են լինում, որ մեզ չեն ուզում լսել. եթէ պաշտօնանկ ենք անում, տեղը ուրիշը չը կայ, որ բերենք՝։ Մենք ուզում ենք, որ բոլոր ուսուցիչներն էլ մեր Կուսակցական ծրագրի համեմատ վարուեն, որպէսզի ամեն ինչ «Սահմանադրական», «Օսմացիական» գոյն առնի»։

Ներկայ եղող 10 Թուրքերի խօսքերի եզրակացութիւնն էր. «Երեսփոխանները երբէք չեն արտայայտում երկրի իսկական ցաւերը. աւելի վէճերով եւ դատարկ կռիւներով են պարապում. ո՛չ երկրի կարիքները հասկացող կայ. ո՛չ էլ դարման անող։ Առաջ մի առանձին գուրգուրանք ունէինք այս «Սահմանադրութեան» վրայ. բայց յուսախաբ եղանք. որովհետեւ բան չը տեսանք. էլի նա է, ինչոր կար»։

— Շատե՞րն են ձեզ պէս մտածում։

— «Այո՛, գրեթէ բոլոր ժողովուրդը. ինչոր էինք՝ դարձեալ այն ենք։»

Հերթը հասաւ Քոմիսէր էֆէնդուն։

Սա պարթեւ հասակով, կոպիտ, անտաշ մի մարդ էր. իր ոյժը տալիս էր ծխախոտի եւ սուրճի։

Սա այն անձն է, որ բազմաթիւ ընդհարումներ է ունեցել մեր հրոսակախմբերի հետ. հալածել է Շմաւոնին, Լեւոնի համար մի քանի անգամ Մարզուան գնացել–եկել եւ վերջն էլ կռուի է բռնուել Մինաս Օղլու հետ։

Քոմիսէր էֆէնդին կոկորդային ձայնով ասաց. «Եկայ ձեզ բարի գալուստ մաղթելու. իմացայ, լաւ մարդ էք, երկրի համար աշխատող էք. եթէ բռնապետութեան շրջանին լինէր,

կամուրջը կը քանդէինք եւ չէինք թողնիլ, որ անցնէիք, քաղաք մանէիք»:

Եւ այդ բոլորը անելիս՝ Կոմիսէր էֆէնդին թէ՛ ծիծաղում էր, աչքերով անում, թէ՛ ծխում եւ թէ՛ գաւաթ-գաւաթ սուրճ խմում:

— Կոմիսէր էֆէնդի, այն ժամանակ ինչո՞ւ էիք Հնչակեաններին հալածում:

— «Ես ի՞նչ գիտեմ. մէկն ասում էր թէ նրանք այս երկիրը մեր ձեռքից պիտի առնեն եւ Մոսկոֆին տան. մի ուրիշը ասում էր, որ Հայ Սուլթան են ուզում բերել եւ Պոլսոյ մէջ նստեցնել...»:

— Պոլի՞ս, թէ՞ Հայաստան:

— Լաւ չեմ յիշում, մէկը Պոլիս էր ասում, միւսը՝ Վան. ամեն գլխից մի ձայն էր դուրս գալիս...»:

— Շմաւոնի հետ ի՞նչպէս կը քաշկռտուէիք...

— «Քաջ տղամարդ էր. բայց իմ տունս քանդեց. փախաւ եւ իմ բանտարկութեանս պատճառ դարձաւ»:

— Հնչակեաններից որի՞ն ես ամենից աւելի սիրել, ծիծաղելով հարցնում ենք:

— «Մինաս Օղլուն», քրքջալով պատասխանում է Կոմիսէր էֆէնդին եւ թեւքը պարզելով, լայնաչերտ սպիները ցոյց տուեց՝ աւելացնելով՝ «Սրանք էլ նրա անմոռաց պարգեւներն են»:

Հիւրերը մեզ թողեցին:

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ.— Մեր առաջին Հրապարակային ժողովը տեղի ունեցաւ, երեկոյեան, ժամը 8-ին, մեր Ակումբի մէջ. բազմութեան խռնումը ահագին էր. ունկնդիր Թուրքերի թիւն էլ քիչ չէր:

Նիւթն էր. «ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ եւ ՍՕՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ»:

Ի՞նչ է Սահմանադրութիւն. դասակարգերի փոխ-յարաբերութիւնների բնոյթը ի՞նչ հետեւանքներ են յառաջացնում. Սահմանադրութեան էութիւնը ինչո՞ւմն է կայանում. որո՞նք

են Միդհատեան «Սահմանադրութեան» թերութիւնները․ ի՞նչ ազգայնական միտումներ կան նրա մէջ բովանդակուած․ ի՞նչ է Իտտիհատի տեսաբանութիւնը, եւ այդ բոլորի հանդէպ ի՞նչ է Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան դաղափարաբանութիւնն ու դիրքը՝ մանաւորապէս Թուրքիոյ բաղկացուցիչ Ազգերի Ինքնորոշման իրաւունքի տեսակէտից։
— Այս էր ամփոփոյթը։

Մտքերի աւելի որոշ բացատրութեան համար՝ Թոյլտուութիւն եղաւ հարցեր առաջարկելու․ ինչոր եղաւ եւ մեծապէս նպաստեց շօշափուած խնդիրների բազմակողմանի լուսաբանութեանը։

Ժողովը տեւել էր երեք ժամ․ ժողովուրդը ցրուեց, ուրիշ ժողովների ակնկալութեամբ։

Երգեցիկ խումբը, այդ երեկոյ, անընդհատ ծափերի տարափի տակ՝ շատ հիանալի կերպով երգեց, նուագեց Յեղափոխական-ազգային գլխաւոր երգերը։

ՓՈԽ-ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ․— Չորեքշաբթի․ 31 Մայիս․ Իտտիհատի Ակումբը՝ փոխ-այցելութեան ենք գնում։

Անցնում ենք Իրիսի վրայ ձգուած բազմամեայ, կիսախարխուլ կամուրջից, մտնում գետեզրեայ մի մեծ շէնքի մէջ։ Բոլոր սենեակներն էլ շքեղ զարդարուած, կահաւորուած են․ դիրքը հովասուն։ Անդամներից շատերը Իրիսի վրայ նայող պատշգամբի վրայ նստած՝ սարբինջ էին խաղում, շատերը նարդիլէ քաշում, ծխում, Թղթախաղութեան գործով պարապում․․․։

Մեզ տեսնելիս՝ մեծ մասը հաւաքուեցան ընդունելութեան սրահը։

Սովորական բարեւանքներից յետոյ՝ սկսեցինք սենեակները ման գալ՝ ամէն ինչ տեսնելու համար։

Ակումբի զարդարանքի, տեղ-տեղ էլ պերճանքի հանդէպ կահաւորումի մասին խօսք լինել չէր կարող․ ամէն ինչ կարգին էր Արեւելեան ճաշակով։ Զով սենեակները եւ իր կեդրոնական դիրքը պատճառ էին դարձել, որ այստեղ միշտ էլ բազմութիւն լցուած լինէր։

Աչքիս ընկաւ գլխաւոր սենեակների պատերի վրայ փակցուած թղթեր՝ խոշոր տառերով գրուած:

Ընկեր Թալիպեանին խնդրեցի կարդալ եւ բացատրել:

Կարդաց. «Օրական հինգ անգամ նամազ անելը պարտադիր է. մեղանչողը գխտողութեան եւ ծանր պատժի պիտի ենթարկուի. օրինական բոլոր ծոմապահութիւնները անլուծելիօրէն պիտի պահուեն: Կրօնական ծիսակատարութիւնների մէջ թերացողները մեր Կուսակցութեան անդամները լինել չեն կարող: Ամեն մուսլիման պիտի աշխատի, որ Իսլամութեան Ս. դրօշը միշտ յաղթ ծածանի: Այս երկիրը Օսմանցիների երկիրն է, եւ ամեն ցեղ, լեզու՝ մենք Օսմանցի կը նկատենք. բացի Օսմանեան ազգութիւնից՝ ուրիշ ազգութիւն չը կայ: Մեր ցամաքային ու ծովային ուժերը մեր թեւերն են. ամէն հաւատարիմ Օսմանցի, իր Ազգի փառքն ու մեծութիւնը սիրող, թող ջանայ մեր նաւատորմիղը ուժեղացնել եւ բարձրից եկած կարգադրութիւնները կատարել: Օրուան խնդիրների առթիւ՝ բացատրութիւններ ուզելու եւ ըստ այնմ դիրք բռնելու համար՝ դիմել Ակումբիս Վարչութեան նախագահին: Թող Աստուծոյ օրհնութիւնը մեր ազգի եւ պետութեան վրայ լինի. ամէ՜ն»:

Կէս ժամի չափ նստելուց եւ Իտտիհատական չոլոքարթութիւնների բոլոր նրբութիւններն ու երանգաւորումները լսելուց յետոյ՝ վերադարձանք մեր Ակումբը:

Ճանապարհին ընկեր Հայկազուն Թալիպեանը պատմեց.

— «Երբ «Սահմանադրութիւն»ը եկաւ. առաջին օրերին՝ Հայերի մեծամասնութիւնը, ես էլ նրանց հետ միասին՝ բոլորս էլ Իտտիհատականներ դարձանք: Ամենքիս էլ համոզումն այն էր, որ «Սահմանադրութիւն»ը բերող Կուսակցութիւնը թէ՛ ընդհանուր երկրի եւ թէ՛ բոլոր ազգերի յառաջադիմութեան ու զարգացման համար պիտի աշխատի: Գինովցած էինք. Իտտիհատական Կուսակցութեան վրայ շատ մեծ համարում ունէինք. կարծում էինք, որ մի քանի ամիս չը քաշած՝ այս երկիրը մի Եւրոպա պիտի դառնար.— որովհետեւ խոստումները այդպէս էին:

«Ամենքս էլ անկեղծ կերպով աշխատում էինք. մեր քը-

սակների բերանը լայն բացեցինք.— բարոյական, նիւթական ամեն աջակցութիւն տուեցինք: Առաջ ո՛չ մի կասկած ունէինք դէպի մեր Իսլամ կուսակից-ընկերները եւ հայրենակիցները: Թուրք եւ Հայ՝ հաւասարապէս իրարու մօտեցան. արդարութեան, հաւասարութեան դարը եկած համարեցինք. ազատութիւն բառը բոլորիս բերանն էր: Մոռացանք անցեալի մեր բոլոր դառնութիւնները, բոլոր մեր զրկանքները, հալածանքները, մեր նահատակները, մեր մեռելները, մի կողմ դրեցինք նրանց բոլորի յիշատակները եւ ամենայն անկեղծութեամբ ձեռք մեկնեցինք մեր տիրողներին: Հայ Ազգը անկեղծ, չա՛փ անկեղծ կերպով փարեցաւ «Սահմանադրութեան» եւ Իտտիհատին՝ առաջին օրերում: Բայց այդ բոլորը հազիւ 2–3 ամիս քաշեց: Կամաց կամաց մեր մէջ պաղութիւն սկսեց, եւ դա չեշտուեց մանաւանդ այն օրից, երբ այստեղի Ակումբը սերտ յարաբերութեան մէջ մտաւ Կ. Պօլսոյ եւ Սալօնիկի Վարիչ Մարմինների հետ ու այնտեղերից յատուկ գործիչներ եկան այստեղ:

«Այսպէս սկսեցաւ. առաջին անգամ Հայ Իտտիհատականներին սկսեցին ժողովի չը կանչել. իրենք՝ «Իսլամները» միայն հաւաքւում եւ տնօրինում էին, ինչոր պէտք էր: Յետոյ մեզ հեռացրին Վարչական Ժողովի անդամակցութիւնից՝ զանազան պատրուակներով: Ես այդ ժամանակ Ակումբի Կեդրոնական Վարչութեան կարեւոր անդամներից մէկն էի: Մի օր պաշտօնական հրաման եկաւ մեզ Սալօնիկից, որ տեղական վարչութիւնները բացառապէս պիտի կազմել Իսլամներից, իսկ ոչ-Իսլամներին միայն համակիր անդամների դըրութեան մէջ պահել: Այդ օրուանից Ակումբին անդամակցող Հայերից շատերը իրաւացի կասկածներ յղանալով, տեսնելով որ իրենք լոկ դրամ տուող գործիքներ պիտի լինեն, առանց մասնակցելու կուսակցական գործերի մատակարարութեանը՝ թողեցին, հեռացան. շատերն էլ իրենց քսակների բերանը ներցրին. նախկին մէկ ոսկի տուող Հայը՝ հազիւ հինգ ղուրուշ ուզեց տալ՝ էն էլ բռնադատուած...:

«Այդ ժամանակները մեր նախագահն էր Հալիմ Էֆէնդին. երէկ քեզ դիմաւորողը. ինքը միամիտ Թուրք է՝ դրել.

կարդալ չը գիտէ. միայն թէ նիւթական շատ մեծ հարստութիւն ունի եւ, որպէս տոհմապետ, մեծ ազդեցութիւն ունի այս քաղաքիս մէջ՝ իր ազդեցիկ ազգականների պատճառով:

«Հալիմ էֆէնդին իմ բարեկամն էր: Ադանայի կոտորածի ժամանակ այստեղ հեռագիր եկաւ՝ Հալիմ էֆէնդուն ուղղուած՝ Սալոնիկից, որով հրահանգւում էր Հայերի վրայ յարձակուիլ եւ անել, ինչ որ կարող էին, ամեն ազատութիւն ունէին: Այդ բովանդակութեամբ հեռագիրներ ուրիշ էշրաֆների էլ հասան:

Թուրք խուժանը, մի զսպանակից դրդուածի պէս, հաւաքուեց շուկան, լցուեց փողոցների մէջ:

Ես եւ Հալիմ էֆէնդին հեռագիրը առանք, գնացինք մեր Միւթէսարրըֆ՝ Չերքէզ Բէքիր Սամի Բէյի մօտ, որ, իր առելով, Հայկական ծագում ունէր:

«Բէքիր Սամի բէյի հայրը, 1878-ի Ռուս-Թրքական պատերազմի մէջ՝ Ռուսական ժեներալի պաշտօն էր ունեցել:

«Որոշ էր. Միւթէսարրըֆը հայասէր էր. երբ հեռագիրը կարդաց, պայթեցաւ. ինձ ասաց, որ «Ինչքան Հայ երիտասարդներ կան՝ մէկտեղ հաւաքիր, զինի՛ր»: Զէնքեր էլ տուեց: Բոլորս զինուեցանք:

«Մի քիչ յետոյ՝ Բէքիր Սամին ինքը անձամբ, զօրականներով շրջապատուած՝ շուկայ իջաւ եւ հաւաքուած խուժանին բարձր ձայնով գոչեց. «Հայերի վրայ յարձակուելուց առաջ՝ նախ իմ գլխակիս վրայից պիտի անցնէք. եթէ համարձակուիք Հայերի վրայ յարձակում գործել՝ իմ բոլոր Չերքէզներին Թօղաթից բերել կը տամ եւ ձեզ բոլորիդ կը կոտորեմ»:

«Թուրքերը միամտաբար ասացին. չէ՞ որ դա կառավարութեան հրամանն էր եւ Կոմիտէն այդպէս էր կարգադրել: Մի քանի էշրաֆներ իրենց ծոցից հանեցին հեռագիրները եւ ցոյց տուեցին:

«Բէքիր Սամի բէյը մնաց անդրդուելի. երկու-երեք օր շուկան այդ կերպ շղթայի տակ առաւ եւ ստիպեց խուժանին ցրուել, առանց Հայերից մէկի քիթը արիւնելու»:

«Դրանից յետոյ Խարբերդի Կեդրոնական Վարչութիւնը

պաշտօնանկ արաւ Հալիմ էֆէնդուն, հակառակող էշրաֆներին էլ կուսակցական անդամակցութիւնից զրկեց»:

«Բէքիր Սամի պէկը մի օր ինձ ասաց, որ աւելի լաւ կանէք, եթէ Հայ Կուսակցութիւնների մէջ մտնէք եւ նրանց ույժ տաք: Ես ուրիշ ի՞նչ Կուսակցութիւն կարող էի ընտրել, քան Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, որ առաջին օրից իսկ՝ մեր քաղաքի մէջ հակա-Իտտիհատական դիրք էր սկսել բռնել, ինչոր, դժբախտաբար, ժամանակին մենք չը հասկացանք»:

— Բացի Միւթէսարրըֆ Բէքիր Սամի բէյից՝ Հայերի վրայ յարձակուելուն ուրիշ ո՞վ ընդդիմացաւ.

— «Գլխաւորապէս Իսմայիլ փաշայի ազգականները. որոնք այստեղ շատ մեծ ազդեցութիւն ունեն. որովհետեւ բազմանդամ գերդաստան են կազմում:

— Ո՞վ էր այդ ժամանակին՝ Իտտիհատականների այս շրջանի գործիչը:

— «Մուստաֆա Նէջիպ բէյը. առաջին օրից նա է. ինքը ուժեղ կամքի տէր, անդուլ՝ անդադար աշխատող, վազվզող երիտասարդ է. բայց ծայր աստիճանի ազգայնամոլ մի Թուրք. շողոքորթութեան արուեստը կատարելագործութեան է հասցրել. չափազանց էլ խորամանկ է: Նա երբէք իր իսկական միտքը, զգացմունքը չի արտայայտիլ. յաճախ իր մտածածին եւ զգացածին հակառակը կը խօսի՝ դիմացինին որսալու եւ ճանաչելու համար: Ամասիայի մէջ Թուրքերին գրգռող, մոլեռանդացնողը նա է. ինքը Սալօնիկի Կեդրոնական Վարչութեան աջ թեւն է. ամեն վստահութիւն ունին իր վրայ. հէնց դրա համար էլ՝ նա իր լիազօրական իրաւունքով ինչոր ուզում է՝ անում է:

— Որոշ փաստեր կա՞ն:

— «Այո՛. նոյն ինքն Հալիմ էֆէնդին: Մուստաֆան նրան խիստ անարգել էր, հետագրի բովանդակութիւնը դուրս հանած լինելուն համար: Երբ այդ մարդը այստեղ եկաւ եւ մեզ հետ սկսեց քաղցր վերաբերմունք ցոյց տալ, շատ Թուրքեր անգամ զզուեցան՝ իր այդ երկդիմի, դայթակղեցուցիչ ընթացքից: Մարդիկ իրար ձգելու արուեստը այդ մարդը կա-

տարելագործութեան է հասցրել. Մաքսավէլը նրանից դաս կարող է առնել»:

— Ձեզ ի՞նչ էր ասում:

— «Թէ՝ Հայ Կուսակցութիւնները ձեր ազգին շատ վնասակար եղան. անցեալ կոտորածների պատճառը նրանք են. այսուհետեւ բոլորդ միասին ոյժ պիտի տաք Հայրենիքի եւ Ազգի համար աշխատող միակ Կուսակցութեանը՝ Իտտիհատին. ամենքս էլ Օսմանցի պիտի համարուինք, չա՛տ չա՛տ կրօնքով իրարուց կարող ենք տարբերուիլ, բայց լեզուով, ազգութեամբ բոլորս էլ մէկ պէտք է լինենք»:

— Այստեղի Թուրքերը ի՞նչպէս են իրարու հետ:

— «Նրանք մի քանի տոհմերի, ցեղերի են բաժանուած, իրարու դէմ անհաշտ ատելութիւն ունեն: Հին դերդաստաններ են. պապենական քէն, ոխ անպակաս է իրենց մէջ: Պաշտօնի, ուտելու, կռուելու պատճառով՝ կռիւը անպակաս է: Բացի դրանից՝ քաղքենիակ Թուրքերը ընդհանրապէս թուլակազմ, փափկակեաց, վատասերած են, բոլորն էլ անձնատուր հեշտասէր եւ զրօսեցուցիչ կեանքի: Եթէ գործը միայն մեր քաղաքացիների Թուրքերին մնացած լինէր, մենք նրանցից վախեցողը չէինք, կարող էինք մեզ պարզերես դուրս բերել..»:

Բաւականին մօտեցել էինք մեր Ակումբին, երբ ընկեր Մինասը եկաւ, խօսքի խառնուեց:

Ընկեր Մինասը շարունակեց.

«Քաղաքիս Թուրք եւ Հայ հասարակութեան մի որոշ խաւի մէջ միտք յղացուեցաւ՝ գործագործութեան, մետաքսի եւ բրդեղէն գործուածքների մի գործարան հիմնել. քանի որ այստեղ թէ՛ բուրդը շատ աժան էր եւ թէ՛ ձեռքի աշխատանքը: Բոլորս էլ եռանդուն կերպով գործի սկսանք եւ բաւականին էլ առաջ գնացինք: Նպատակ կար ինձ Հէրէքէ ուղարկել՝ որպէսզի այնտեղ գտնուող պետական գործարանում պէտք եղած ուսումնասիրութիւնները անէի, վերադառնայի եւ գործարանը բանայինք: Դրամագլուխը ապահովուած էր: Նոյն իսկ ես ընդհանուր տեսուչ էի կարգուած, ընկերակցութեան կողմից, որպէս այդ գործից աւելի լաւ հասկացող եւ ձեռնհաս մէկը: Գործը սկսելու վրայ էինք, երբ Իտտիհատականները

իրենց թաթը պարզեցին եւ արգելք հանդիսացան: Նրանք շիտակէ շիտակ Թուրքերին ասել էին որ. «Մեր նպատակը պիտի լինի Հայերի ձեռքից արհեստները, վաճառականութիւնը, առուտուրը խլել եւ ո՛չ թէ նրանց միջոց տալ՝ տնտեսական նոր հաստատութիւններ ստեղծելու, երկրի ճարտարագործութեան մէջ գերակշիռ դեր ստանձնելու»: Այդպիսով բացէ ի բաց արգելք եղան. մեր ընկերակցութիւնը լուծուեց եւ գործը գլուխ չեկաւ. եւ դրա միակ պատճառը Իտտիհատն էր»:

— Իսկ եթէ գործը մինակ Թուրքերին մնա՞ր:

— «Այո՛. եթէ գործը մինակ Թուրքերին մնար, նրանց ո՛չ միայն արտօնութիւն էր տրւում. այլ ամէն տեսակի խրախուսանք, աջակցութիւն, նպաստ խոստացւում: Բայց քանի որ տնտեսական արդիւնագործական ձեռնարկների մէջ Թուրքերի անընդունակութիւնը, նրանց անձեռնհասութիւնը խօսք չի վեր առնում, եւ իրենք էլ գիտեն, որ մինակ իրենք չեն կարող լուրջ ու տեւական մի բան անել, ուստի չը համարձակեցան գործի մանել, եւ շուտով ամէն բան քայքայուեց»:

— Թող դուք Հայերդ մինակ աշխատէիք:

— «Աշխատեցի, ո՛չ մի ջանք չը խնայեցի. մի քանի ընկերներով եւ համաքաղաքացիներով միասին եկանք, որ գործը սկսենք, բայց անկարելի եղաւ. արգելքը զօրաւոր էր: Ես ինքս էլ, յետոյ, մինակ դիմումներ կատարեցի, բայց չեղաւ ու չեղաւ»:

— Ձեր մետաքսի գործարանը հրկիզելու փորձեր ե՞րբ եղան:

— «Ատանայի կոտորածի օրերը. երբ փորձեցին Թումայեանների ջրաղացներն այրել: Այդ ժամանակ, կարծէք, մի առանձին կարգախօս, ազդանշան, որոշում կար. երեւոյթները ամէնուրեք յառաջացան միաժամանակ: Դրանից յետոյ էլ մի քանի անգամ աշխատեցին իմ շէնքերս այրել. բայց շնորհիւ աչալուրջ հսկողութեան եւ պահպանութեան՝ մինչեւ ցարդ ազատ ենք մնացել»:

— Գործարանիդ մէջ Թուրք գործաւոր պահո՞ւմ ես:

— «Այո՛. մանաւանդ առաջ. բոլոր ազգերից անխտիր՝ գործաւորներ եւ գործաւորուհիներ ունիմ»:

— Ունի՞ս որոշ դիտողութիւններ:

— «Թրքուհիները Հայուհիների չափ ճարպիկ, դիմացկուն եւ մաքուր չեն. երկրորդական գործեր է արդէն իրենց տրւում: Մի գիծ էլ կայ.— Թրքուհիների կողմից գողութիւնը շատ սովորական է: Գողանում են բուրդ, թել, մանած, գործուածք. աչքդ միշտ վրայ պիտի պահես: Անցեալ օրեր մէկի տունը խուզարկութեան ենթարկեցի, ահագին քանակութեամբ մանած բռնեցի: Նոյն այդ գործաւորուհիներից մէկին էլ բռնեցի հրկիզելու գործի մէջ...»:

Հասանք մեր Ակումբը:

Բացի ընկերներից՝ բաւականին մեծ թւով ուրիշ հայրենակիցներ էին հաւաքուել, մի քանի յայտնի վաճառականների հետ: Խօսքը դարձաւ առօրեայ կեանքի մասին:

Եւ ահա թէ ինչ պատմեցին.

«Այս քաղաքի մսավաճառութիւնը, գրեթէ ամբողջապէս, Հայերի ձեռքին էր. շուկայի մէջ տիրապետողը մենք էինք: Եւ պէտք է ասել, որ շատ լաւ էլ վարւում էինք: Իտտիհատի վարիչները չը կարողացան այդ բանը տանել. մտածեցին այդ գործը մեր ձեռքից հանել եւ Թուրքերին անցնել: Նախ՝ նրանք քարոզեցին իրենց Ակումբի եւ Հրապարակային ժողովների մէջ՝ որ Թուրքերը Հայերից առեւտուր չանեն, եւ բացառապէս գնեն Թուրք մսավաճառներից: Ոմանք լսեցին. ոմանք՝ ո՛չ: Որովհետեւ մրցումի դուռ բացուած լինելով՝ մենք աւելի արժանացրինք եւ Թուրքերը ստիպուեցան, դարձեալ, մեզ մօտ գալ, մեր յաճախորդները լինել: Տեսնելով, որ այդ կերպ չը յաջողեցան. մի օր դրամատէր Թուրքերին հաւաքեցին իրեն յԱկումբը, նրանցից մսավաճառների մի ընկերակցութիւն կազմեցին, 3000 ոսկի դրամագլխով. որպէսզի մի անգամից արտադրութեան այդ ճիւղը իրենց ձեռքն անցնեն՝ ամբողջապէս: Թուրքերին, նորից, խստիւ պատուիրեցին, որ մեզանից առեւտուր չանեն. տեղական Իտտիհատական կառավարութիւնը որոշ կերպով միջամտեց, նա էլ կողմ հանդիսացաւ:

Թուրքերը սկսեցին գործել:

Սկզբում բաւականին յաջողութիւն գտան:

Մենք ընկանք ճգնաժամի մէջ· բայց ջանացինք դիմանալ: Վերջապէս՝ 4–5 ամիս քաշած-չը քաշած՝ Թուրքերը իրարու հետ կռուեցան, բաժնուեցան· դրած դրամներն էլ վրայ տուեցին»:

— Եւ այդ բոլորը դուք վերագրում էք Իտտիհատի՞ն:

— «Այո՛· բացառապէս նրան: Իրաւ է՝ Թուրքերի մէջ յաճախ, ազգայնական, այլամերժ ոգին երեւացել է շուկայի մէջ· նրանց քարոզուել է, որ Թուրքերից միայն առուտուր անեն եւ ո՛չ թէ գեավուրներից· բայց դրանք բոլորը պատահական բնաւորութիւն էին ունեցել: Այդպիսի երեւոյթների պատճառ տուողները լինում էին, գլխաւորապէս, տեղական շահագրգիռ Թուրք վաճառականները եւ կամ փոքրիկ խանութպանները: Դրանք պատահում էին եւ անհետեւանք էլ մարում, հանգչում էին: Գրգռուած կրքերը հանդարտելուց յետոյ՝ իրերը դարձեալ շարունակում էին իրենց նախկին ընթացքով յառաջ երթալու:

«Բայց, հիմայ, այդպէս չէ· Իտտիհատը այդ գործը կազմակերպել է, սիստեմի ենթարկել· հնարաւորութեան ամեն միջոց ձեռք է առնուել՝ մեզ շուկայից դուրս վտարելու: Վերջապէս՝ իրենց մնայուն քաղաքականութիւնն է մեզ տնտեսապէս էլ քայքայել, սեպհականազրկել եւ մեզ այն դրութեան հասցնել, որ այդ ճիւղի մէջ էլ բացարձակապէս Թուրքերից կախումն ունենանք; նրանց տնտեսական տիրապետութեանը ենթարկուենք: Արդէն Հայերին շուկայից դուրս նետելու քաղաքականութիւնը շատ հին է: Մեր օրերում, որպէս շարունակութիւն, ամենափուճ, դատարկ խնդիրներ յարուցանելով՝ Հայ վաճառականներին եւ խանութպաններին նեղում են, ծանր տուգանքի ենթարկում եւ գրեթէ բռնի՝ նրանց կալուածները գրաւում: Եթէ դիմանում ենք, դա մեր ընդունակութիւնների շնորհիւ եւ Թուրքերի անճարակութեան երեսից է: Որ Իտտիհատը աշխատում է տնտեսապէս մեզ կործանել, սպանել.— այդ մասին կասկած չունինք· ապացոյցները չեղջակոյտի կը հասնեն»:

— «Արհեստների մէջ ի՞նչպէս էք:

— «Նոյն բանն է: Վերջերս դրսից, դիտմամբ, մի քանի

Թուրք աշխատաւորներ բերեցին եւ իրենց յաջողութեան պայմաններ էլ տուեցին: Երեւոյթն այն է՝ որ ձիգ են թափում, աշխատում են»:

— Ի՞նչ էք կարծում. կը յաջողի՞ն:

— «Իրողութիւնն այն է, որ աշխատում են. իրենց օգնող կառավարութիւն ունեն. Թուրք ժողովրդի մոլեռանդութիւնը իրենց համար փոքրիկ նեցուկ չէ՛: Իսկ մենք մեր յոյսը դրած ենք միմիայն մեր ընդունակութիւններին, մեր ոյժերի վրայ»:

— Որոշ իրողութիւններ կա՞ն:

— «Շա՛տ. ի՛նչքան ուզէք: Մասնաւոր մարդիկ են կանգնեցնում քաղաքամուտքի առաջ, որոնք եկողներին, ծախու ապրանք բերողներին քարոզում, յորդորում են, որ Հայերին չը ծախեն, նրանցից առուտուր չանեն: Այդքանով չը բաւականանալով՝ գների մասին խառն ի խուռն, քմահաճոյքից բղխող տեղեկութիւններ են տալիս: Շուկայի մէջ էլ յատուկ մարդիկ են պահում, որոնք յաճախորդներին աչքով-յօնքով դուրս են կանչում եւ դաս տալիս: Սրանք ամենօրեայ իրողութիւններ են. դա է այն իրականութիւնը, որի մէջ ապրում, գործում ենք»:

— Ձեզ՝ ուրիշ ի՞նչ մասնաւոր վնասներ են տալիս:

— «Մեր այգիները մտնել, մառաղատունկերը, որթատունկերը կտրտել, փճացնել.— դրանք շատ սովորական են դարձել: Բռնապետութեան շրջանին՝ այսքան չէր»:

— Բոլո՞ր Թուրքերը այդպէս են:

— «Ո՛չ. մէջերնին միշտ բացառութիւններ կան. մանաւանդ նրանք, որ Իթթիհատին եւ նրա կառավարութեանը հակառակ են: Այդպիսիները շատ լաւ հասկանում են, որ մենք, որպէս հարեւաններ, տնտեսապէս իրարու այնպէս ենք կապուած, որ մէկի կործանումը չի կարող չազդել միւսի վրայ: Ուստի սրանք զգոյշ են եւ աշխատում են բարեկամական, դրացիական լաւ յարաբերութիւններ մշակել Հայերիս հետ:

— Քաղաքիս մէջ յետաշրջական երեւոյթներ նշմարու՞մ են:

— «Բացառութիւնները յարգելով. Թուրք ժողովրդի մէջ՝ որպէս զանգուած, որոշ կերպով յայտնի չի լինում թէ յա-

ռաջադիմականը, յեղափոխականը, «Սահմանադրական»ը ո՛րն է, հակա-յեղափոխականը, հակա-«սահմանադրական»ը ո՛րը: Այս ժողովուրդը ո՛չ ինքնուրոյն հասարակական կամք ունի, ո՛չ էլ սեպհական մտածմունք: Ամեն ինչ կախումն ունի պարագաներից եւ իրերի դասաւորութիւնից: Ժամանակ կարող է գալ, որ հակայեղափոխականը յեղափոխական կը դառնայ եւ՝ հակառակը: Տիրապետող որոշ գիծ չը կայ: Բայց մի բան շատ որոշ է. հակա-Իտտիհատականութիւնը շատ որոշ կերպով ծայր է առել եւ ուժեղ հոսանք դառնալու վրայ է»:

— Ի՞նչ է դրա պատճառը:

— «Ծայրահեղ կեդրոնացումը, աւարառութիւնը, դօշաքաղութիւնը, կողոպուտը՝ որ սաստիկ չափերի է հասնում: Հին տոհմերը առելով տառում են. որովհետեւ օրը ցերեկով կողոպտուեցան: Նորահաս, խելքը գլխին բաւականին երիտասարդներ էլ կան, որոնք նրանց այս այլամերժ ընթացքը սխալ են համարում: Ո՛ր Թուրքը, որ Իտտիհատական չէ՛, նա հալածւում է, եւ այդտեղից էլ այն է դուրս գալիս, որ Իտտիհատը չի կարողանում մեզ նկատմամբ իր յղացած ծրագիրը գործադրել ուզածին պէս. իր գործը իր դէմն է դառնում»:

Խօսակցութիւնը դարձաւ մեր ներքին ազգային կեանքին: Ասում եմ.

— Առաջին անգամն է, որ կրօնական անհամբերողութեան ոգի եմ տեսնում, այն էլ ձեր քաղաքի մէջ. ի՞նչ է դրա պատճառը. ինչո՞ւ չէք աշխատում այդ ցաւալի երեւոյթի արմատը վերցնել:

Ստացուած պատասխաններից երեւեց, որ դրա գլխաւոր պատճառը տեղական յաջորդն էր:

Առաջ բոլոր Հայերը, անխտիր, ընդունուելիս են եղել Հայ ազգային բոլոր հաստատութիւնների մէջ. Բողոքականն էլ, Լուսաւորչականն էլ՝ կողք կողքի նստած՝ որպէս իրաւազօր, հաւասար Հայ եղբայրներ՝ իրենց տեղական ազգային հաստատութիւնները առաջ են տարել շատ բարի նախանձախնդրութեամբ եւ մեծ եռանդով: Բայց Իբրանոսեան Վարդապետը իրերի այդ դրութիւնը չի կարողացել տանել. որով-

հետեւ ժողովականներից ոմանք, գլխաւորապէս Բողոքական ներկայացուցիչները՝ խստիւ քննադատութեան են ենթարկել իր վարչականութիւնը, ծայր աստիճանի թրքամոլութիւնը, իմա՛ Իտտիհատասիրութիւնը, եւ անօրինակ փառամոլական ձգտումները:

Դրա հետեւանքն այն է եղել, որ Վարդապետը սկսել է վարպետ կերպով Լուսաւորչականներին գրգռել Բողոքականների դէմ, համոզելով, որ մի Բողոքական իրաւունք չունի Լուսաւորչական կրօնականի գործերը քննադատելու, ուստի եւ յաջողել է, Լուսաւորչականների մոլեռանդութիւնը գրգռելով՝ Բողոքականներին դուրս ձգել տալ տեղական ազգային բոլոր հաստատութիւններից, պատճառաբանելով, որ այդ հաստատութիւնները պիտի վարեն, մատակարարեն միայն եւ միայն Լուսաւորչական Հայերը:

Առաջնորդը «բաժանեա՛, զի տիրեսցես»ի իր նպատակին կարողացել է հասնել՝ յենուելով իր ազգական՝ յայտնի Կրեսոս Հաջի Իբրանոսեանի վրայ, որ իր հարստութեան, վաճառականական ճիւղաւորումների համար՝ ահագին ազդեցութիւն ունի այդ շրջանների մէջ, եւ տեղական բոլոր Թուրք կառավարիչները իր անձնական բարեկամներն են նկատւում:

Ահա պատճառը, թէ ինչո՛ւ ներքին կռիւները անպակաս էին դարձել եւ Բողոքականներին դուրս էին վարել ազգային բոլոր հաստատութիւններից:

Եւ կրօնի պատճառով էր, որ մեր ընկեր Հայկազուն Թապիպեանը, Մինաս Իփէքճեանը դուրս էին մնացել տեղական հաստատութիւնների անդամակցութիւնից, ուր, սակայն, նրանք տարիներ առաջ գործել էին եւ օգտակար շատ գործեր կատարել:

Չը նայելով, որ Ամասիայի մէջ, որպէս Կուսակցութիւն, իրենց թուով բացարձակ տիրողները Սօցիալ Դէմօկրատ Հընչակեաններն էին· բայց ազգային հաստատութիւնների մէջ թոյլ դիրք ունէին· որովհետեւ մեր վարիչ ընկերներից շատերը Բողոքական էին:

Հ· Յ· Դաշնակցականները, որ թուով անհամեմատ քիչ էին եւ այնքա՛ն թոյլ, որ այդ օրերում հասարակ Ակումբ ան-

դամ չունէին և իրենց դասախօսութիւններն ու ժողովները Իտ–տիհատի Ակումբի մէջն էին սարքում.— Նրանք էլ՝ խօսք մէկ էին արել Վարդապետի հետ եւ Բողոքականներին ազգային հաստատութիւնների մէջ մտնելու իրաւունք չունենալու թէզն էին պաշտպանել: Ինչոր երկու Կուսակցութիւնների իրարու դէմ լարուելու մասնաւոր պատճառ էր տուել: Ամասիայի «Սօցիալիստ» Դաշնակցականները Թունդ Լուսաւորչականներ էին դարձել. հարկաւ այդ բոլորը Կուսակցական մրցակցութեան տեսակէտից. ինչոր տարօրինակ էր եւ ցաւալի թէ՛ իր էութեան եւ թէ՛ իր հետեւանքների մէջ:

Եւ այդ երեւոյթը տեղի էր ունենում այն ժամանակ, երբ Կիլիկիայի զանազան քաղաքներում, օրինակ Մարաշում, Բողոքականները եւ Լուսաւորչականները միանալով՝ մէկ դըրօշի սկզբունքն էին պաշտպանում բոլոր Հայերի համար հաւասարապէս, առանց կրօնական խտրութեան:

Դա կատարւում էր այն ժամանակ. երբ Կ. Պոլսոյ մէջ պահանջ էր դրւում, որ Հայ Ազգային ժողովի մէջ մտնեն, բացի Լուսաւորչականներից, այլեւ Բողոքականները, Կաթոլիկները:

Ամասիայի Դաշնակցական «Սօցիալիստները» մի քիչ չըրջուն կերպով էին հասկացել սօցիալիզմը, ու դրա համար էլ ոչնչով չէին տարբերւում «ծոմ պահող» եւ «պահք բռնող» Լուսաւորչականներից:

Ներկայ եղողները խօսք մէկ արեցին այդ անկանոնութիւնը վերացնելու եւ Հայ Ազգային բոլոր հաստատութիւնները հաւասարապէս մատչելի դարձնելու՝ Լուսաւորչականին էլ, Բողոքականին էլ, Կաթոլիկին էլ. կրօնական, յարանուանական խտրականութիւնը չէր, որ պիտի խօսէր, այլ ընդունակութիւնը, ձեռնհասութիւնը, ուղղամտութիւնը, գործունէութեան եռանդը:

Ուրախ եմ, որ այդպէս էլ եղաւ ժամանակի ընթացքում, եւ չարիքը մէջտեղից վերացաւ:

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ.— Դատախօսութեան նիւթն է՝ «ՆՈՐԱԳՈՅՆ ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ

ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐ»: Մեր Ակումբի ընդարձակ սրահը ծայրէ ի ծայր լցուած է. թատերաբեմը, յետեւի սենեակները ամբողջապէս խճողուած են ունկնդիրներով: Բաւականին մեծ թւով էլ Թուրքեր են եկել:

Հարկ տեսնուեցաւ դատախօսութիւնը միաժամանակ թարգմանել ե՛ւ Թուրքերէնի:

Այդ պաշտօնը յանձն առին ընկեր Հայկազուն Թապխեանը եւ տեղական Պատուելին. որոնք շատ յաջող կերպով իրենց պաշտօնը կատարեցին:

— Թիւրքիան համասեռ չէր, օտարասեռ տարրերից բաղկացած մի պետութիւն էր. նրա մէջը չը կար մի ազգութիւն. այլ կային չեչտուած ազգութիւններ՝ իրենց տարբեր մշակոյթներով եւ առանձնայատկութիւններով:

Պետական երկու ներքին քաղաքականութիւն կարող էր լինել. մէկը այդ բոլոր ազգութիւնները ջնջել եւ նրանցից մէկութիւն կազմել. ինչոր ուզում էր անել Իտտիհատը. միւսը՝ պետական այնպիսի կազմ յառաջ բերել, որ բոլոր ազգութիւններն էլ, հաւասարապէս, իրենց ազգային ուրոյն հաստատութիւնները ունենալով՝ կարողանային անկաշկանդ կերպով ապրել, զարգանալ, յառաջադիմել, եւ դա կարող էր լինել ԻՆՔՆԱՎԱՐԱԿԱՆ դրութեամբ. ինչոր Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Տաճկաստանի Ծրագրի Երրորդ մասի հասկացողութիւնն էր:— Սրանք էին շօշափուած խնդիրները:

Թուրքերը ուշադրութեամբ լսում, ծանօթագրութիւններ էին առնում:

Դատախօսութիւնը վերջանալուց յետոյ՝ Թուրքերից մէկը ուզեց գիտենալ թէ՝ Սապահէդդինի ապակեդրոնացման դրութիւնը ի՞նչ է. բաւականութիւն տրուեցաւ: Մի ուրիշը ցանկութիւն յայտնեց՝ Զուիցերիայի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգների պետական կազմը բացատրել: Մի փաթթոցաւոր տեղեկութիւն ուզեց սօցիալիստական վարդապետութիւնների եւ կուսակցութիւնների մասին:

Ներկայ Թուրքերը մասնաւոր գոհունակութիւն յայտնեցին, խնդրելով որ զանազան պետական կազմերի մասին խօսուէր գլխաւոր քաղաքների մէջ. որովհետեւ Թուրք ժողովուր-

դը այդ մասին որոշ գաղափար չունենալով՝ Կուսակցութիւն համանիշ է համարում երկպառակութեան եւ ապակեդրոնացումը՝ պետական քայքայումի, անջատման:

Մեր Ծրագրի Թուրքերէն թարգմանութիւնը իրենց բաշխուեցաւ:

Թուրք ունկնդիրները ձեռքի սեղմումներով՝ շնորհակալութիւն յայտնելով՝ դուրս գնացին:

Հայ ունկնդիրներից հետեւեալ հարցերը մէջտեղ եկան. սա տալիս ենք, որպէս փաստ, գիտնալու համար թէ Հայ ժողովրդի տրամադրութիւնն ու հասկացողութիւնները ի՞նչ էին՝ ինչոր վերաբերում էր առօրեայ կեանքին.

1.— Ի՞նչ է Իտտիհատի եւ Ահրարի տարբերութիւնը:

2.— Ներկայումս Հայը ի՞նչ դիրք պիտի բռնէ:

3.— Թիւրքիան իր արտաքին քաղաքականութեան մէջ, չէզո՞ք դիրք պիտի բռնէ, թէ՞ պիտի յարէ գոյութիւն ունեցող համախմբումներից մէկն ու մէկին:

4.— Պարլամենտի որոշումները մինչեւ ցարդ՝ ինչո՞ւ համար Կառավարութիւնը առկախ կը թողու եւ չի գործադրեր:

5.— Իտտիհատը ի՞նչ բանի կը ձգտէ. Նրա ազգայնական ծրագրի սկզբունքները որո՞նք են:

6.— Ինքնապաշտպանութեան համար ի՞նչ պիտի անել:

7.— Ի՞նչ դիրք պիտի բռնել Հայ Կուսակցութիւններին հանդէպ:

8.— Քանի որ մենք ամենքս էլ Հայ ենք՝ ի՞նչ են այս տեսակ-տեսակ Կուսակցութիւնները. ինչո՞ւ համար բոլորս էլ մէկ Կուսակցութիւն չը լինենք:

9.— Ի՞նչ անելու, ի՞նչ փաստ բերելու է, որ չէզոքները կուսակցական դառնան:

10.— Ի՞նչ դիրք բռնելու է դէպի մեր ազգային-տեղական հաստատութիւնները, դէպի Պատրիարքական առանձնաշընորհումները եւ Ազգային Ժողովը:

11.— Մեր Ազգային Սահմանադրութիւնը ի՞նչ է. ի՞նչ պակասութիւններ ունի:

12 — *Մեր ազգը յառաջադիմելու համար՝ ի՞նչ բաների պէտք ունի. պակաս ի՞նչ ունինք:*

13 — *Ի՞նչ է ձեր տեսութիւնը Հողային Խնդրի մասին:*

14 — *Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Ծրագրի բոլոր յօդուածները եւ տրամադրութիւնները ե՞րբ պիտի գործադրուեն, իրականանան:*

15 — *Հարուստը կարո՞ղ է անդամակցիլ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան:*

16 — *Քաղաքական եւ Վարչական Ինքնավարութիւնների տարբերութիւնը ի՞նչ է:*

17 — *Ի՞նչ է Սոցիալիզմը եւ ի՞նչպէս պիտի գայ նրա իրականացումը՝ կեանքի մէջ:*

18 — *Սոցիալ Դէմօկրատիայի եւ Սոցիալիստ Յեղափոխականութեան սկզբունքային եւ տակտիկական տարբերութիւնները որո՞նք են:*

19 — *Ի՞նչ է Մոնիզմը:*

Բաւականին ուշ՝ ժողովը փակուեցաւ. ունեցանք 30 *նոր ընկերներ:*

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱԽԱՔՈՅԹ — *Հետեւեալ օրը, Մայիս* 31*-ին, առանձին հրաւիրագրով, մեր Ակումբը հաւաքել տուեցի Ամասիայի մէջ աչքի ընկնող բոլոր Հայերին. նրանք, որոնք արդէն ծանօթ էին իրենց ազնիւ նկարագրով, հաստատակամութեամբ եւ հաւատարմութեամբ: Կանչուած էին երկու Քահանաներն էլ, Պատուելիի հետ միասին:*

Կար մի ընտիր, բանիմաց, ուշիմ եւ հասարակական ցաւերով հետաքրքրուող ընտրեալ բազմութիւն:

Օրակարգի առնուեցան հրատապ խնդիրները:

Հայ Ազգի կենսունակութեան մասին կասկած ունեցողները, ես կը ցանկանայի, որ այդ հաւաքոյթին ներկայ եղած լինէին:

Ո՛չ: Այս Ազգը պիտի ապրի:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԺՈՂՈՎ. ՄԵՐ «ՄԱՍՈՒՆՔ»Ը — *Սեբաստիայից, Եւդոկիայից հեռագիր հեռագրի վրայ եկաւ, որ աճապարենք:*

Ամասիան թողնելուց առաջ՝ նորից ընկերական ժողով ունեցանք։ Խօսեցինք մեզ հետաքրքրող մասնաւոր խնդիրների մասին. պէտք եղած տնօրինութիւնները կատարուեցան։

Եւ ապա կապոցի մէջ փաթաթած, սեղանի վրայ դրեցին մեր «ՄԱՍՈՒՆՔ»ը, ինչպէս որ սովոր են անելու ընկերները։

Այդ «ՄԱՍՈՒՆՔ»ը Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Ամասիայի Մասնաճիւղի «ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆԸ եւ ՀԱՇՈՒԵՏԵՏՐՆ» է։

Բացում ենք «ՄԱՍՈՒՆՔ»ը. թղթերի գոյնը բոլորովին դեղնել է. թերթերից շատերը փոշիացել են. բայց շատ տեղեր էլ դեռ որոշ կերպով կարդացւում են։

Մեր նահատակ ընկերների տուած որոշումները, իրենց ստորագրութիւնները անաղարտ կերպով մնում էին։ Մօտ 24 տարուայ պատմութիւն էր ինքը՝ այդ «ՄԱՍՈՒՆՔ»ը։

Մեր Յեղափոխական առաջին շրջանի թրթռուն հոգին «Մասունք»ի ծալքերի մէջ պահուած մնացել էր. եւ ընկերները ի՛նչ խանդավառութեամբ, ի՛նչ լաւատեսութեամբ Գործի ասպարէզն են մղուել։ Համակ երիտասարդական կորով, ոգեւորիչ շունչ է. կոյս հոգին է, որ խօսել է իր բոլոր պայծառութեամբը, իր ամբողջական մաքրութեամբը։

Իրենց առած եւ ծախսած գումարները այնքա՛ն մաքրութեամբ դրոշմուել էին, որ միայն անբիծ հոգին, մաքուր ձեռքը այդպէս կարող էր անել։ Եւ ի՛նչպիսի ահագին գործեր են կատարուած եղել՝ ամենաչնչին գումարներով։

Բայց դրանք բոլորը մեր պատմութեան նիւթն են։

Ընկերները սեղանի վրայ դրեցին ե՛ւ, տարիների ընթացքում պահուած, Յարութիւն Թումայեանի պատկերը։

Ո՞վ էր Յարութիւն Թումայեանը։

Նա մեր ազնիւ, եռանդուն, անվախ, յանդուգն գործիչներից մէկն է եղել. մասնակցել է Փոքր-Հայքի առաջին շրջանի բոլոր Պատգամաւորական ժողովներին։ Նա Յեղափոխական էր, երբ դեռ Շմաւոնը երկիր չէր մտել։

Թէեւ աւարտել էր Մարզուանի Ամերիկեան Կոլէժի Աստուածաբանական ճիւղը. բայց իր ի բնէ ըմբոստ հոգուն Աստուածաբանական գիտութիւնը չէր, որ կարող պիտի լինէր բաւականութիւն տալ. ուստի տարերային Յեղափոխական շարժման ուղին է բռնում, մինչեւ որ Շմաւոնը գալիս է եւ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՅԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՅԵԱՆ

ամեն ինչ Կուսակցական հիմունքների ու Ծրագրի վրայ դնում:

Ամասիայում Յարութիւնը ձերբակալւում է, բանտարկւում ստորերկրեայ մի խուցի մէջ. ածուխ են վառում եւ այդկերպ թունաւորելով՝ վերջ տալիս նրա բեղմնաւոր, յուզումնալից կեանքին:

Հազիւ 36–37 *տարեկան. նա մեր անդրանիկ նահատակներից մէկն է դառնում:*

Ժամանակ էր աճապարելու:

Որքան որ դեռ շատ գործեր կային կարգադրուելիք եւ ընկերներից դժուար էր բաժանուել. այնուամենայնիւ Գործի պահանջը ստիպում էր պատրաստուել, մեկնել:

Ընկերներից հրաժեշտ առանք:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ամասիան գտնըւում է Իրիս (Եէշիլ Ըրմաք) գետի վրայ: Պատմական այդ գետը քաղաքի միջից անցնելով՝ երկու մասի է բաժանում:

Քաղաքը տարածւում է Արեւմուտքից Արեւելք՝ սեղմուած, պարփակուած, բուսականութեամբ առատ՝ մի գեղազուարճ հովտի մէջ:

Աչքի ընկնող շէնքերը, եկեղեցիները, գլխաւոր թաղամասերը գտնւում են գետի հարաւային կողմը: Հիւսիսային կողմը գետեղուած են, գլխաւորապէս, կառավարական հաստատութիւնները:

Իրիսի վրայ ձգուած են քարաշէն եւ փայտաշէն մի քանի կամուրջներ: Պարտէզները, այգիները, բանջարանոցները փռուած են գետի երկու կողմերն էլ:

Իրիսի ափերի վրայ բազմաթիւ ջրաղացներ կան. դրանցից մի քանիսը Գերմանացիների սեփականութիւնն են: Վարարումի ժամանակ՝ գետը յաճախ մեծամեծ վնասներ է տալիս ազգաբնակչութեան:

Փողոցները, ընդհանրապէս, ծուռ ու մուռ են, անկանոն, նեղ, աղտոտ: Բացառութիւն է կազմում միայն լերան կողի վրայ գտնուող Սավայիտի թաղը, ուր եւ հաստատուած են գլխաւոր էշրաֆները՝ իրենց մեծակառոյց տներով:

Քաղաքի մէջ բազմաթիւ աղբիւրներ կան՝ վճիտ, բարեհամ:

Օդը շատ մաքուր, առողջարար է. շրջականների համար ամարանոց է ծառայում: Բուսականութեան կողմից՝ Փոքր-Հայքի մէջ մէկ հատիկն է:

Ընդհանուր ազգաբնակչութեան թիւը աւելի քան երեսուն եւ չորս հազար է: Հայերի թիւը հասնում է տասնեւվեց հազարից ո՛չ նուազ: Մօտ տասնեւերկու հազար Սիւննի Թուրքեր կան. վեց հազարի չափ էլ Շիաներ (Ղըզլըբաշ). Յոյներ շատ քիչ են:

Քաղաքի արհեստները, շուկան, վաճառականութիւնը, գլխաւորապէս, Հայերի ձեռքին են: Ոստայնանկութիւնը, նոյնպէս, բաւականին լաւ զարգացած է: Տեղական մետաքսագործութիւնը բացառապէս Հայերի ձեռքին է:

Երկրի արտադրութիւնն է ցորեն, կանեփ, աֆիոն, բամիա, խնձոր, տանձ, սերկեւիլ, սալոր, ծիրան, եւայլն:

Մօտ 3000 մանր արհեստաւորներ եւ գործաւորներ կան․ կիները, աղջիկներն էլ են գործում․ արտադրում են ամեն տեսակի պաստառներ՝ կարմիր, սպիտակ եւ կապոյտ գոյներով։

Հայ ժողովուրդը, ընդհանրապէս, ուսումնատենչ, փափկակեաց է՝ ուրախ, զուարթ, մեղմ բնաւորութեամբ։

ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ․— Պատմութեան մէջ Ամասիայի անունը 25 դարուց ի վեր ծանօթ է։ Ըստ աւանդութեան՝ քաղաքը հիմնադրել է Աղէքսանդր Մեծի հօրեղբայրը՝ Ամասիս։ Ամասիայի մէջն է ծնել յայտնի պատմաբան Ստրաբոնը։

Ամասիան գտնուելով մեր Երկրորդ Հայքի սահմանների մօտ, Տիգրան Մեծի քեռայր Միհրդատից գրաւուելով՝ Հայոցս Իշխանութեան տակ անցաւ։

Միհրդատը ընդարձակել է սկզբնական քաղաքը․ Իրիսի հիւսիսային կողմը գտնուող քարալեռնակի վրայ կառուցել է իր հրաշագեղ այն արքունիքը, որի մնացորդները մինչեւ ցարդ սքանչացում են պատճառում։ Այդտեղ կան նա՛եւ բազմաթիւ քարակոփ շիրիմներ, սանդխաձեւ ճանապարհներ եւ գանձատան համար ծառայող քարայրեր։ Պատմութիւնը ասում է՝ եղել է ժամանակ, երբ այդ բոլոր քարայրերը գանձերով են լցուել։

Միհրդատը այդ քաղաքին տիրեց՝ մինչեւ Պոմպէոսից պարտուիլը։

Հիւսիսային կողմից՝ «Միհրդատի Բերդը» իշխում է ամբողջ քաղաքի վրայ։ Բերդի չորս կողմերում գտնւում են՝ ջրամբարներ, գաղտուղիներ, կրկնակամար եւ քառակուսի դռներով փորուած քարայրեր։

Ս․ Յովհաննու Վանքից մէկ ժամ հեռու տարածւում է «Միհրդատի Ջրանցքը», որ ապառաժ լերան երեսին կռանահարուած մի լայն առու է՝ մարդաչափ բարձրութեամբ․ երկայնութիւնը կէս ժամից աւելի է տեւում։

Դարերի վկայ այդ հրաշագեղ ամրոցի տակը բնակութիւն են հաստատել Ռումէլիից եւ Կրետէից գաղթող՝ Թուրք «Մուհաճիրները» իրենց հիւղակներով, որ շրջանի աւազակային որջերն են համարւում։

ԵՒԴՈԿԻԱ

ԳԼՈՒԽ Ը.

ԴԷՊԻ ԵՒԴՈԿԻԱ. — Հինգշաբթի, Մայիս 19, Յունիս 1, ընկեր Մուրատի հետ միասին ճանապարհ ենք ընկնում դէպի Եւդոկիա (Թոգաթ):

Մեր աջ կողմն են փռուած Ամասիայի գիւթագեղ պարտէզները՝ Իրիսի երկայնութեամբ տարածուած. անցնում ենք Թիւրքիայի «ամենալաւ» ճանապարհից: «Կառուղու» քար ու քանդ վիճակը ընկեր Մուրատին ասել տուեց. «Եթէ սա է լաւ ճանապարհը՝ էլ վա՞տը որն է»: Տաժանելի զառիվայրից բարձրանալով, վերջապէս մտանք Ղազ-Օվա՝ ընդարձակ դաշտագետին՝ անհուն հորիզոնի մէջ պարփակուած:

Յիշատակելի ոչինչ գտանք. մինչեւ Ղազ-Օվայի, գրեթէ, մէջտեղը գտնուած Չերքէզ նորաշէն գիւղը, որ եթէ չենք սխալւում դեռ որոշ անուն չունէր. որովհետեւ ամեն մէկը մի մի անուն էր տալիս. կառապանը մեզ ասաց, որ աւելի յաճախ Պայրամլը անունով յայտնի է:

Կէսօրին, հազիւ կառքից վայր իջած, պանդոկի տէրը երբ իմացաւ ռուսերէն լեզուն գիտնալս՝ վազեց իր համագիւղացիներից չորս-հինգ հոգու հետն առնելով՝ մօտս եկան նամակները ձեռքներին:

Նամակները գրուած էին Կովկասից՝ իրենց ազգակիցների կողմից: Չերքէզ տառ չը լինելուն համար՝ նամակագիրները իրենց միտքը արտայայտել էին Չերքէզ լեզուով, բայց ռուսերէն տառերով:

Այդ նամակները աւելի քան հետաքրքիր էին. աղեխարշ բառերով նկարագրութիւն կար իրենց բաժանման. մանրամասնօրէն տեղեկութիւններ էին տըւում ողջ մնացող եւ մեռնող ազգականների ու հարեւանների մասին. ողբում էին այն օրը, որ իրենք չը լսելով՝ տուն ու տեղ թողեցին եւ Տաճկաստան գնացին. թելադրում էին իրենց յետ վերադառնալ՝ եթէ նեղութեան մէջ են եւ ապրել չեն կարողանում: Նամակներից երկուսի մէջ որոշ կերպով ասուած էր, որ իրենց հարեւան Հայերի հետ լաւ վարուեն:

— Մզկիթ ունի՞ք. հարցնում եմ:

— «Այո՛, հեռուն ցցուող բարձրութիւնը մեր մինարէնէն է· իսկ մօտը եղող շինութիւնն էլ՝ մեր մզկիթը· բայց մոլլա չունինք»:

— Ինչո՞ւ:

— «Թոգաթից Միւթէսարրֆը մեզ մի մոլլա ուղարկեց· չընդունեցինք, ճանապարհ դրեցինք»:

— Պատճա՞ռ:

— «Որքան որ կրօնակիցներ ենք· բայց մեր վարք ու բարքով, մեր սովորութիւններով, մեր ընտանեկան հասկացողութիւններով իրարուց շատ ու շատ տարբեր ենք: Առաջին պատեհութեամբ, տուն մտած՝ չը մտած, Թուրքը աչք է դնում մեր կանանց, մեր աղջիկներին· մենք էլ այդ տանել չենք կարողանում· ուստի միշտ աշխատում ենք Թուրքերից հեռու մնալ եւ նրանց հետ ընտանեկան կապ չունենալ· Թուրք մոլլա մեր տների մէջ չենք կարող ընդունել· չենք կարող մեր ձեռքով մեր ընտանեկան արժանապատուութիւնը եւ սրբութիւնը ոտքի տակ տանել...»:

— Դպրոց ունի՞ք:

— «Այո՛· մի փոքրիկ դպրոց էինք բաց արել եւ մեր լեզուով էինք սովորեցնում: Վերջերս կառավարութեան կողմից մարդիկ եկան՝ արգիլեցին· մենք չը համաձայնեցանք· մի փոքրիկ էլ ընդհարում ունեցանք, մեր մեծերից մի քանիսին էլ մէկ–երկու չարաթով բանտարկեցին...»:

— Կառավարութի՞ւնը այդ արաւ, թէ՞ Իտտիհատը:

— «Որոշ չենք գիտեր· եկան՝ ասացին, որ կառավարութեան կողմից է»:

— Դասագրքեր ունի՞ք:

— «Այո՛»:

— Ի՞նչ լեզուով:

— «Արաբերէն տառերով եւ մեր լեզուով· առաջ ուզեցինք ռուսերէն տառերով տպել տալ· բայց չը տուանք»:

— Բոլո՞րն էլ այդ ուղղութեան համակիր են:

— «Մեր մէջ բոլորն էլ ուզում են, որ դասագրքերը մեր լեզուով լինեն· բայց տառերի գործածութեան համար երկու հոսանք կայ· ոմանք ուզում են, որ արաբերէնը գործածենք, քանի որ մուսուլման ենք եւ Թրքահպատակ· ոմանք էլ այն կարծիքն են պաշտպանում, որ ռուսերէնն է՛լ աւելի լաւ է՝

հեշտ լինելուն համար, եւ բացի դրանից, այդպիսով աւելի լաւ միջոց ունեցած կը լինենք Կովկասի մեր հայրենակիցների հետ յարաբերութիւն պահելու: Այս վերջին հոսանքի պաշտպանները մեր այս երկրի զարգացած մտաւորականները եւ Կովկասի ազգակիցներն են»:

— Ես ձեզ խորհուրդ եմ տալիս՝ ձեր լեզուն պահել. ձեր երեխաները այդ լեզուով կրթել. եթէ կառավարութիւնը կամ Իտտիհատը արգելք կը հանդիսանայ՝ պայքարեցէք: Ձեր կրօնականներն էլ միշտ ձեր ազգից արեցէք, քան Թուրքերից. բարեկամական սերտ յարաբերութիւն պահեցէք ձեր շրջակայ Հայերի հետ. եւ ահա ձեզ տալիս եմ Ադարբազարի Ձերքէզ Ակումբի հասցէն, ուր ձեր է՛ն կարող մտաւորականները եւ ազդեցիկ անձերը կան. ամէն անգամ, դժուարութեանց բաղխելիս՝ նրանց դիմեցէք եւ հրահանգ խնդրեցէք: Ապա ունկընդիրներիս բացատրեցի Իտտիհատի ազգայնական ձգտումները:

Մարդիկ շնորհակալ մնացին, գոհ մեկնեցան:

Մեր միւս շրջանների պատմութիւնից է՛լ աւելի որոշ կերպով յայտնի կը լինի թէ՝ Ձերքէզների Ակումբներ բանալու, Իտտիհատի ձգտումների դէմ նրանց պայքարել մղելու գործի մէջ՝ մեր Կուսակցութիւնը ինչ մեծ դեր է խաղացել:

Մի փոքր հանգստանալուց յետոյ՝ կտրեցինք անցանք Ղաղ-Օվայի ընդարձակութիւնը, երեկոյեան մութին հասանք Ջէնդէլ-Խան: Անտանելի ցուրտ, անձրեւ, քամի:

Պանդոկապետին խնդրեցինք թէյ եւ տաք կերակուր. երկուսն էլ մէջտեղ եկան. բայց հաց *չը կար, ո՛չ մենք ունէինք, ո՛չ էլ պանդոկապետը: Խնդրեցինք երթալ մօտակայ պանդոկից բերել. գնացին՝ բայց ձեռնունայն յետ վերադարձան:*

Բանից դուրս եկաւ, որ Ջէնդէլ-Խանի մէջ երկու պանդոկ կայ. երկուսի պահողն էլ Հայ՝ մէկը Թոգաթցի, միւսը՝ Ամասիացի: Եւ որովհետեւ մենք Թոգաթցու պանդոկն էինք իջել, այն հիմունքով, որ մեր կառապանը թոգաթցի *էր եւ իր «հայրենասիրութիւնը» թոյլ չէր տալ Ամասիացու պանդոկը իջնելու. ուստի նոյն այդ հասկացողութեամբ եւ փաստով էլ՝ Ամասիացի պանդոկապետ Հայը իրեն իրաւունք էր համարում հաց չը տալ — թէեւ դրամով — Թոգաթցու պանդոկի մէջ իջնողներին: Այս սովորութիւնը իր զաւեշտով միասին, սա-*

ցին, որ շատ հին ժամանակներից է մնացել եւ դարձել է այլեւս սովորոյթ, օրէնք, որին պարտաւոր են ենթարկուել ամենքը: Ամասիացի պանդուխտները, բարեբախտաբար, զիջողութիւն արաւ, «այս անգամ բացառութիւն» կազմեց եւ իրենց «միջազգային օրէնքը» խախտեց. երբ իմացաւ մեր ո՛վ լինելը եւ մանաւանդ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեանի էլ իր «համակիր» լինելու հանգամանքը մի այլ փաստ ծառայեցրեց: Ընկեր Մուրատը, այս էլ ասենք, բաւականին յոգնել էր, այդ երկու «թշնամի»ներին խօսք հասկացնելու տեսակէտից. անդադար կրկնում էր. «Ա՛խպար, լեռան գլուխ, երկու Հայ, երկուսն էլ մրցումի, կռուի մէջ....»:

Ճանապարհ ընկանք Զէնգէլ-Խանից. անցնելով ահեղ ձորամիջից. դաշտ դուրս գալիս՝ հեռուից տեսանք, որ Եւդոկիայի կողմից կառքերը եւ ձիաւորները շարան-շարան գալիս են:

Ընկերների հետ ողջագուրուելուց, մի փոքր հանգստանալուց յետոյ, միասին մտանք Եւդոկիա՝ Յունիս 2-ին:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ. — Առաւօտեան, Յունիս 3-ին, Կուսակցական գործերի մասին պէտք եղած կարգադրութիւնները անելուց յետոյ՝ ընկեր Մուրատի հետ միասին այցելութեան ենք գնում Շաւարշ Վարդապետ Սահակեանին:

Արմաշական երիտասարդ, աշխոյժ Վարդապետ է. գործում է եռանդուն. մասնաւոր ուշադրութիւն է դարձրել թէ՛ Եւդոկիայի եւ թէ՛ շրջակայ գիւղերի դպրոցների վրայ: Որքան որ տակաւին անփորձ. այնուամենայնիւ ժողովրդի վստահութիւնը շատ կարճ ժամանակի մէջ կարողացել է գրաւել:

Քաղաքի մէջ բացառապէս Սօցիալ Դէմօկրատ Հնչակեաններն են. ամեն ինչ իրենց ձեռքին է: Շաւարշ Վարդապետը շատ էլ չի սիրում մեր ընկերների «տիրապետութիւնը», ուստի առաջին անգամ ջանք է անում մերոնց դէմ երթալ. բայց տեսնելով որ անկարող է ճեղք յառաջացնել, աւելի լաւ է համարում համակերպել եւ իր իրաւասութեան սահմանի մէջ գործել: Մեր ընկերներն էլ այդ գիտնալով հանդերձ՝ միշտ բարեկամ են մնում իրեն՝ դպրոցների յառաջդիմութեան համար իր թափած ճիգը տեսնելով:

«ԻՐԻՍ» .— Քաղաքի բոլոր մտաւորականները միատեղ գալով՝ «Իրիս» անունով տեղական թերթ են հրատարակում:

Լրացնո՞ւմ է նա իր վրայ դրուած յոյսը. կարողանո՞ւմ է ժամանակի պահանջները արտացոլացնել եւ ժողովրդին պէտք եղած ուղղութիւնը տալ:

Տեղական աղաների շուրջը դարձող «անգոյն» մտաւորականները ասում են՝ այո՛. իսկ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեանները պատասխանում՝ ո՛չ:

Այդ մասին բաւականին տարաձայնութիւններ են լինում. թերթը երեսի վրայ ձգուած՝ մնում է:

Անշուշտ. այդպիսի երկձղում բնական էր. այլապէս էլ չէր կարող լինել:

Մտաւորական կոչուած մի սերունդ կայ, որ տակաւին Հայ նորագոյն կեանքը չի կարողանում հասկանալ. նրա համար իրականութիւններ կան, որ գոյութիւն չունին եւ ինքը ապրում է օդի, անցած-գնացած կեանքի օրերի մէջ. ներկայ կեանքի պահանջները նա չի կարողանում հասկանալ: Երկչոտ, վէպերով սնուող, անգոյն բառերով ծամծմուած մտքեր արտայայտող, որպէսզի ո՛չ մէկը վիրաւորուի, ո՛չ մէկի շահը հարուածուի.— դա էր մեր ընկերների հակառակորդների դիրքն ու ոգին. շատից աւելի պահպանողականներ, որ սիրում էին թերթը դարձնել ռոմանսների, գրական անգոյն գրուածների մի հաւաքածու:

Մեր ընկերների պահանջը ա՛յլ է:— Նրանք ասում էին, որ ազգային, պետական, հողային, գործաւորական խնդիրներ կան. Հայ ժողովրդին շրջապատող ցեղեր կան, տնտեսական, քաղաքական խնդիրներ կան.— ահա՛ դրանցով է, որ թերթը իր սիւնակները պիտի լցնի եւ ո՛չ թէ անհամ վէպերով եւ այս ինչ ու այն ինչ աղայի հացէին չայլած գրութիւններով:

Որոշ է. մեր ընկերները տարբեր ոգւով են կրթուած, դաստիարակուած. նրանց հոգեկան պահանջները բոլորովին ա՛յլ է. մանաւանդ որ իրենց մէջ Յեղափոխական բովից անցնողներ շատ կան եւ բոլորն էլ լաւ մարզուած են մեր Կուսակցութեան գաղափարաբանութեան մէջ:

Սուր հակառակութիւնից յետոյ՝ որոշւում է, որ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեաններին թոյլատրուի արտայայտուե-

լու իրենց ուզածին պէս. այդպէս էլ տարաձայնութիւնները վերջ են գտնում եւ մեր ընկեր Տիգրանը բաւականին լաւ կերպով խմբագրում էր Թերթը, գաւառական թերթին յատուկ լուրջ բովանդակութիւն տալով։

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— Նոյն օրը, երեկոյեան, Ազգային Լսարանի մէջ տեղի ունեցաւ Առաջին Դասախօսութիւնը։ Գրեթէ Թոգաթի ամբողջ Հայ հասարակութիւնը ներկայ է. տեղ չը լինելու պատճառով, մեր ընկերները եւ համակիրները բոլորն էլ ոտքի՝ դուռը դռների առաջն են կանգնած։

Կանայք ժողովի չեն եկել։ Այստեղ էլ, ինչպէս եւ Ամասիա, դեռ սովորութիւն չէ եղած, որ կիները եւ տղամարդիկ միասին Հրապարակային ժողովի գան, միատեղ մի սրահի մէջ նստեն եւ դասախօսութիւն լսեն։

Հարսանիքներում, տօնական զանազան հանդէսներում՝ այր ու կին, տղայ ու աղջիկ միասին հաւաքւում, ուտում, խմում, պարում են,— դա ընդունուած սովորութիւն է. արգելուած չէ. դրա մէջ ո՛չ մի անպարկեշտութիւն կայ. իսկ նոյն այրն ու կինը, տղան ու աղջիկը երբ միատեղ Հրապարակային ժողովի նստին, դա «բարոյականութեան» դէմ եղած կը լինի։

— Լաւ, միջին մի ճանապարհ գտնենք. ասում եմ «կանանց ներկայութեան» թունդ հակառակորդներից մէկին՝ Ստեփան էֆէնդուն. թող տղամարդիկ առաջ նստին՝ իսկ կանայք յետեւի աթոռների վրայ։— Ո՛չ. այդ էլ կարելի չէ, պատասխանում է Ստեփան էֆէնդին. «յետ կը դառնան եւ կը նայեն»։ Ահա թէ ինչ փիլիսոփայութեամբ կանայք ներկայ չէին։ Ահա թէ ինչու հարկը ստիպում էր կանանց համար առանձին դասախօսութիւններ կարդալ։

Առաջին դասախօսութեան նիւթն է. «ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ ԵՒ ՆՐԱ ՆԵՐԿԱՅ ԴԻՐՔԸ»։

Մանրամասնօրէն բացատրւում են այն բոլոր պատճառները, որոնք Հայկական Հարցը յարուցին.— պատճառներ սակայն, որոնք Միդհատեան այս «Սահմանադրութեան» օրօք էլ տակաւին վերցուած չեն։ Եզրակացութիւն՝ Հայ ժողովուրդը իր գոյութիւնը պահելու՝ ամրապնդելու, ապահովե-

լու համար՝ Ազգերի Ինքնորոշման Իրաւունքը իրեն ղեկավարիչ նշանաբան պիտի անի եւ անդուլ անդադար գործի թէ՛ մշակութական եւ թէ՛ քաղաքական հողի վրայ:

Որպէս վերջաբան՝ ժողովրդին յորդոր է կարդացւում հեռու չը մնալ Կուսակցական կեանքից, կուսակցական կեանք ըմբռնել, վարել եւ այդպիսով մօտենալ հրատապ խնդիրների լուծմանը:

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— Կիւրակէ, Յունիս 4, կէսօրուան ժամը 10-ին. դարձեալ Հրապարակային Ժողով. այս անգամ էլ ասեղ ձգելու տեղ չը կայ: Կանայք նորից բացակայ են: Դժբախտաբար տեղ չը լինելու պատճառով, ժողովրդից շատերը յետ են դառնում:

Հայ Յեղափոխական շարժումները ո՞ր աստիճան ազդեցին «Երիտասարդ Թուրքեր»-ի վրայ. ի՞նչ եղաւ նրա ազդեցութիւնը Եւրոպայի վրայ. Բէվալի տեսակցութեան մէջ ի՞նչ խնդիրներ էին յարուցուած. Թուրք «զինուորական ապստամբութիւնը» ինչի՞ արդիւնք էր եւ ի՞նչ նպատակ ունէր: Ներկայ «Սահմանադրութիւնը» իսկակա՞ն Սահմանադրութիւն է. ի՞նչ է այդ «Սահմանադրութեան» էութիւնը, նրա յարաբերութիւնը դէպի բաղկացուցիչ Ազգութիւնները. ի՞նչ է Թուրք Ազգայնականութիւնը և նրա մարմնացնող Իտտիհատը. ի՞նչ է մեր եւ ի՞նչ պիտի լինի Հայ Ազգի դիրքը նրա հանդէպ.— այդ գաղափարներն էին, գլխաւորապէս, որ արտացոլացան ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ մէջ, որի նիւթն էր. «Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան դիրքը ներկայ խորհրդարանի հանդէպ»:

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ.— Նոյն երեկոյեան տեղի ունեցաւ նախ Վարչական եւ ապա Անդամական Ժողով: Ներկայ էին բոլոր ընկերները առանց բացառութեան:

Այդտեղ են քաղաքի մտաւորականների մեծամասնութիւնը, միջին դասակարգի մարդիկ, փոքրիկ խանութպաններ եւ արհեստաւորներ: Այդտեղ են, նաե՛ւ, իսկական բանւորներ՝ պրօլետարներ. այս վերջիններիս թիւը միայն հասնում է 400-ի:

Բայց մի տարր էլ կայ այդտեղ. այդտեղ են մեր հին Յե-

ղափոխական ընկերները, որոնք 15–16 տարի բանտերի մէջն են մաշուել: Այստեղ է մեր առաքինազարդ, համակ կրակ ու բոց, երկաթի նկարագրի տէր՝ ԿԱՐԱՊԵՏ ԿԷՕՎՃԵԱՆԸ, մի համոզուած, առաքեալի համբերատարութեամբ եւ ճշմարիտ նահատակի անձնուիրութեամբ, ուժեղ կամքի տէր՝ իսկական մի տղամարդ:

Կարապետը ամենասոսկալի տանջանքներ է քաշել, ծեծ է կերել բանտի մէջ. նրա մարմինը դաղել են, եղունգները պոկել, կողքերը կոտրտել, գլխիվայր կախել, պաղ ջրի, տաք ջրի մէջ թաղել, ընչացքները փետտել, տարիներով ծանր շղթաների տակ են պահել.— բայց, այդ ամեն ժամանակ, ո՛չ «ա՜խ» է քաշել, ո՛չ էլ «ո՜ւֆ» ասել. ձայն անգամ չի հանել. լալ, պոռալ, ճչալ, իր դահիճներին աղաչել, պաղատել, խնայել, խնդրել չի գիտցել. միշտ էլ անմռունչ կեցել է: Ստոյիկեանը կարող էր օրինակ առնել Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Ստոյիկեանից: Նա էլ այստեղ է՝ իր բոլոր ընկերների մասնաւոր գուրգուրանքի, պաշտամունքի այդ առարկան:

Իր բան ու գործը թողած, ամեն բան մոռացած, միայն իր գաղափարին անձնատուր եղած այդ տղամարդն է մեր առաջնորդը, կուսակցական ամեն բանի հասնողը, այս ու այն կողմը վազող–վազվզողը. նա ամեն ինչ է. ոչ գիշեր քուն ունի, ոչ ցերեկ. համակ աշխատանք, ջանասիրութիւն է. իր հոգին, իր ջիղերը ինքնին գործ են, եւ միշտ էլ բարի, հեզ, ընկերապաշտ:

Տեսնել այդ պատկերը եւ չը հիանալ՝ անկարելի է. նա մի սուրբ է, կենդանի նահատակ. իր Կուսակցութեան, Ազգի ցաւերը, իղձերը գերազանցապէս մարմնացնող մի «գերմարդ»:

Այստեղ է ե՛ւ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՊԻԿԵԱՆԸ. մի պարթեւահասակ տղամարդ. որքան որ մաշուած, բայց տեսնողը կարող է գուշակել թէ ի՛նչ է եղել նա՝ իր երիտասարդութեան առաջին տարիներին. երբ մի օր քաղաքի տների, այգիների, փողոցների մէջն է շրջում, իր Յեղափոխականի կեցուածքով, միւս օրը լեռները, ձորերը ոտքի առնում իր անվեհեր ընկերներով:

Յովհաննէսը 15 տարի Սինոպի բանտի մէջն է պահուել: Երբ պատմում, նկարագրում է Սինոպի բանտային կեանքը,

ուր ամեն տեղերից Սօցիալ Դէմօկրատ Հնչակեանններ են հաւաքուած՝ բերուած եղել,— անկարելի է չը փղձկալ, արտասուք բանել: Պատմելիս ինքն էլ է լալիս՝ լսողին էլ լացացընում, երբ տալիս է վերջին պատկերը մեր մեռնող նահատակների:

Պատմում է.— «Մի օր՝ բանտի Թուրքերից մի քանիսը որոշել էին փախչիլ. մենք տեղեկութիւն անգամ չունէինք. բայց մեր վրայ ձգեցին. երեքիս վար կանչեցին. սկսեցին խարազանել եւ ապա գելարանների մէջ պրկել. բայց տեսայ, որ արեան մէջ լողացող Վարդանն ու Սարգիսը յանկարծ «վա՜յ» կանչեցին եւ հոգինին փչեցին, ընկան գետին՝ աչքիս առաջ. ես ճիգ արեցի, ուզեցի մօտենալ, նրանց գլխակը գրկել եւ «ա՜խ» պոռացի. վերեւի ընկերները լսեցին, ուզեցին դուրս թափուել, օգնութեան գալ.... բայց բոլորն էլ հրացանազարկ եղան... Ես մնացի միայն....»:

Այդտեղ է «Փէհլիվանը»: Հերակլէսին նմանութիւն բերող մի կորիճ, «Թոգաթի Փօստան» զարկողը:

Այդտեղ է եւ Յարութիւն Սրապեանը. մէկը մեր անդրանիկ Յեղափոխականներից, որ Գում-Գաբուի անդրանիկ Ցոյցի մէջ նշանաւոր դեր է կատարել:

Պատմական դէմքեր շա՜տ....:

Հոգեկան մի զուարճութիւն, կատարեալ մխիթարութիւն էր տեսնելը թէ ի՛նչպէս մեր ընկերները բացատրում, հասկանում էին մեր Ծրագրի տնտեսական, քաղաքական, Սօցիալիստական մասերը: Եւրոպայի գործաւորները նրանցից շատ բան կարող էին սովորել: Գաղափար-ոյժը միայն կարող էր այդպիսի երկաթի կամքի տէր՝ տոկուն մարդիկ պատրաստել. դրանք բոլորն էլ անհատականութիւններ էին:

Նորից վերլուծման, վերաքննութեան է ենթարկում մեր Ծրագիրը, տակտիկան. տեղեկութիւններ է տրւում մեր նորագոյն կեանքի, նոր ժամանակի գործերի եւ արարքների մասին:

Տեղատարափի պէս հարցեր էին թափւում զանազան շըրջանների մեր կուսակցական գործունէութեան մասին:

Ամեն ինչ պարզ, որոշ եղաւ ընկերների համար:

Երեկոյեան ուշ՝ վերադարձանք ընկեր Տիգրան Թիմուրեանի տունը, ուր իջեւանած էինք:

ՓԷՀԼԻՎԱՆ
(Սարգիս Տամուրճեան)

Իսկական Յեղափոխական մի միջավայրի մէջ էինք. երբէք չը պիտի մոռանամ այն «Սասուն»ը, որ այդ երեկոյ երգեց ընկեր Մուրատը. ձայնի այդ ալիքները անմեռ կը մնան...:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՌԻՒ.— Թոդամի մէջ դասակարգային խտրականութիւնը իր զարգացման մէջն է: Աշխատանքի եւ Կապիտալի կռիւը, իր բոլոր ձեւերով, այդտեղ գոյութիւն ունի: Մեր Մասնաճիւղը իր Սօցիալիստական թեւերը լայն կերպով բաց է արել:

Տեղի են ունեցել Աշխատանքի եւ Կապիտալի բուռն ընդհարումներ. չորս հարիւր պրօլետարներ, բոլորն էլ Հայ գործաւորներ, մի առանձին Ակումբ են բացել՝ «ՍՕՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԱՆՈՒՈՐՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» անունով:

Քաղաքի կեդրոնավայրում գտնուող մեր առաջին Ակումբը աւելի ընթերցարանի, լսարանի համար էր. թէեւ շատ ընդարձակ. բայց ընկերների ամբողջութիւնը չէր կարողանում իր մէջ զետեղել: Բանուոր ընկերները կարիք են զգում յաճախ հաւաքուելու, խորհրդակցութիւններ կատարելու. ուստի պէտք է տեսնուում մի երկրորդ Ակումբի:

Բացւում է ցանկացուած այդ Երկրորդ Ակումբն էլ:

Բանուոր ընկերները ուզում են այդ երկրորդ Ակումբի պատշգամբի վրայից կախել մի առանձին ցուցանակ. գործատէրերը արգելք են լինում, այն առարկութեամբ, որ շուկային մօտիկ լինելով՝ բանուորները կարող էին այնտեղ ժողովներ սարքել եւ բոլոր գործաւորներին էլ գլխից հանել: Գործատէրերի մի քանի անգամ արած սպառնալիքները նշանակութիւն չեն ունենում: Հակառակ նրանց ամեն ազդարարութեան՝ ցուցանակը կախում են վրան խոշոր տառերով գրուած՝ ՍՕՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԱՆՈՒՈՐՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» վերտառութեամբ:

Գործատէր–աղաները վիրաւորուելուց աւելի՝ կատաղում են. դիմում են ուղղակի կառավարութեան: Կառավարութեան ներկայացուցիչն էլ իր բերանը քաղցրացնելուց յետոյ՝ ոստիկանական ույժի գլուխն անցած, գալիս՝ Ցուցանակը վար է

տանում եւ սպանում ծանր պատիժ տալու չը հնազանդուողներին: Ընկերները բողոքում են եւ իրաւունք պահանջում. այդ գործը արդէն կեդրոնական Վարիչ Մարմնի սեղանի վրայ էր:

Ընկերներին պատուիրեցի Ցուցանակը փոխել, կախել հետեւեալ վերտառութեամբ՝ «ՍՕՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԹՈԳԱԹԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԵՐԿՐՈՐԴ ԱԿՈՒՄԲ»:

Այդ նրա համար եղաւ, որ Թիւրքիայի մէջ Բանուորական Միութիւնների սկզբունքը որոշ կերպով չէր ընդունուած, օրէնքի կարգ չէր անցած. ուստի գործատէրերը այդ բաց օրէնքի տրամադրութիւնից էլ օգտւում էին եւ աշխատում թոյլ չը տալ, որ զուտ Բանուորական Միութիւններ կազմուեն, գիտնալով թէ դրա հետեւանքը ուր կարող է հասնել:

Իմ այս կարգադրութիւնս իմաց էր տրուած Միւթէսարըֆի տեղակալին:

ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՄՕՏ. — Հետս առնելով ընկեր Մուրատին եւ ընկեր Կարապետին՝ ուղղակի տեղակալին եմ գնում: Սա նախ՝ իր Թրքական բարեմաղթութիւնները եւ բարեւանքները արաւ, շատ ուրախ լինելով, որ գաւառ՝ այցելութեան եմ դուրս եկած՝ «ամէն բան աչքով տեսնելու եւ ականջով լսելու». ասաց, որ արդէն լսել էր Թոգաթ էլ պիտի գայի:

— Ո՞ւրտեղից էիք լսել:

— «Մուստաֆա Նէճիպից. նա երկու-երեք օր առաջ այստեղ էր. շատ տեղեկութիւններ տուեց ձեր եւ ձեր Կուսակցութեան մասին. մեկնեց դէպի Սեբաստիա»:

— Կուզէի տեղեկանալ թէ ինչո՞ւ մեր ընկերներին չի թոյլատրուել՝ իրենց Ակումբի վրայ առանձին Ցուցանակ ունենալ:

— «Ի՞նչ հարկաւոր է, որ մի տեղ մի Կուսակցութիւն երկու Ակումբ ունենայ. արդէն ձերոնք մէկը ունեն. հերիք չէ՞»:

— Ձեր Կուսակցութիւնը Կ. Պոլսոյ մէջ մի քանի Ակումբ ունի, ինչպէս եւ մենք. նոյն իսկ Սամսոնի մէջ ձերոնք երկու Ակումբ ունեն:

— «Բայց այստեղ տարբեր է»:

— Ի՞նչ է այդ տարբերութիւնը:

Մարդը մի քիչ խորհեց, գլուխը քերեց, ասաց. «Չը գիտեմ. Հայ երեւելիները եկան՝ ասացին, որ դրանից խռովութիւններ կարող են յառաջանալ, կռիւներ ծագիլ. ես էլ ժողովրդի անդորրութեան համար՝ արգիլեցի»:

— Բայց այդտեղ իրաւունքի խնդիր կայ, որ մեր Կուսակցութիւնը չի կարող անտարբեր մնալ. դուք ուրեմն նախարարական որոշման հակառա՞կ էք ուզում գնալ:

— «Ո՛չ. էֆէնդըմ, ո՛չ. քանի որ այդպէս է՝ թող կախեն, բան առող չի լինիլ»:

Ասացի, որ մեր կուսակցական իրաւունքի վրայ կեցած՝ հրահանգել էի, որ կախեն:

Անցանք ուրիշ նիւթի:

— Ձեր այստեղի Ակումբը ինչո՞ւ է փակուել, հարցնում եմ:

— «Լաւ չը գիտեմ. անդամներից շատերը հեռացան. Հայերը այլեւս դրամ չեն տալիս. էշրաֆները չեն նպաստում. մնացել էին մի քանի հոգի. նրանք էլ չը կարողացան վարձը վճարել. այդպիսով փակուեց: Մուստաֆա Նէճիպը շատ աշխատեց վերստին բանալ, բայց չը յաջողեցաւ»:

— Ի՞նչ է ձեր կարծիքը ժողովրդի անդորրութեան, ապահովութեան մասին. խռովութիւններ կարո՞ղ են ծագիլ:

— «Առ այժմս մի առանձին բան չը կայ: Մի քանի օր առաջ փողոցի մէջ մի դէրվիշ երեւեց, գզգզուած մազերով, շուկայի մէջ պտտելով՝ սկսեց իսլամներին գրգռել քրիստոնեաների դէմ. շուտով վրայ հասայ եւ քաղաքից հեռացրի»:

— Խուճապ եղա՞ւ:

— «Այո՛. բաւականաչափ իրարանցում էր տեղի ունեցել. որովհետեւ դէրվիշը յաջողել էր իր կողմը քաշել, իր գըլխին հաւաքել մի քանի Իսլամ անգործներ, թափառաշրջիկներ եւ տեղացի սրիկաներ...»:

— Նոյն այդ բանը նա արել էր ե՛ւ Ամասիայի մէջ. այնտեղ էլ գրգռութիւն էր տեղի ունեցել: Բայց ո՞րտեղացի, ո՞վ էր այդ դէրվիշը:

— «Ծիտակը չը գիտեմ. միայն թէ շուտով հեռացրի»:

— Ինչո՞վ բացատրել, որ այդպիսի երեւոյթ երկու անգամ տեղի է ունեցել այս շրջանում՝ այս կարճ ժամանակամիջոցի

մէջ:

— «Ամեն երկրի մէջ խռովութիւններ կարող են տեղի ունենալ. ամեն տեղ անկարգ մարդիկ կարող են գտնուիլ»:

— Բայց այս խռովութիւնները ա՛յլ բնաւորութիւն, ա՛յլ ստոյգ, ա՛յլ ձգտում ունեն: Այստեղ մի ազգ միւսի դէմ է գրգռւում. մի ազգի գոյութեան իրաւունքին է սպառնացւում:

— «Ի՞նչ կարող էի անել. ես Վալիին հեռագրեցի. նա էլ պատասխանեց, որ քաղաքի սահմաններից հեռացրու. ես էլ այնպէս արեցի»:

— Ուրեմն դուք չը ձերբակալեցիք նրան, մինչեւ որ Վալիից հրաման եկա՞ւ:

— «Այո՛. ուրիշ կերպ չէի կարող անել»:

Թուրք պաշտօնեան որքան որ խորամանկ է. նոյնքան էլ պարզ է. իր կեղծ ձեւերի, սեթեւեթանքների տակից շուտով կարելի է ճանաչել, հասկանալ նրա hոգին:

Զգեցինք՝ դուրս եկանք այն դժոխային վայրից, ուր տարիներ շարունակ բռնութիւնն էր դարբնուել եւ Հայի արտասուքը հեղեղի պէս թափուել: Կառավարչատնից հազիւ մի քանի քայլ հեռու էր այն բանտը, ուր հարիւրաւոր անմեղներ չարչարուել, հոգի էին տուել:

Որոշ էր. Թոգաթի մէջ էլ նո՛յն երկիւղը, նո՛յն անապահովութիւնն էր, ինչոր միւս տեղերում: Իրերը նոյն բնաւորութիւնն ունէին ամեն շրջաններում էլ:

ԳՈՐԾԱՏԷՐԵՐ ՈՒ ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐ. — Ո՛չ միայն մեր ընկերները, այլեւ hազմայի յայտնի վաճառական՝ Կարապետ աղա Գարօղլանեանն էլ մեզ բաւականին տեղեկութիւններ էր տուել գործաւորների եւ գործատէրերի փոխադարձ յարաբերութիւնների մասին: Ինքը բնականէն երգիծախօս, համարձակարան լինելով՝ թուել էր այն բոլոր չահագործումները, որ կատարւում են Թոգաթի մէջ: Հայ ոստիկան Նշանն էլ պատմել էր այն բոլոր յարաբերութիւնները, որ գործատէրերը մշակել էին տեղական կառավարութեան հետ:

Դասակարգային կռիւ, կառավարական միջամտութիւն՝ դրանք բնականոն ընթացք էին առել:

ՊՂՆՁԱԳՈՐԾՆԵՐԸ.— *Թոքաթի պղնձեղէնի արդիւնագործութիւնը գովական է ամբողջ Թիւրքիայի մէջ. արհեստը այստեղ արդէն նրբութեան է հասել. կաթսայեղէնները, խոհանոցի ամանեղէնները, կերակուրի ամեն տեսակ անօթները գեղարուեստական կատարելագործութիւն ունեն:*

Արտադրութեան այդ ճիւղը բացառապէս կեդրոնացած է Հայերի ձեռքին եւ նրանով զբաղուողները լաւ հարստութիւն են դիզել: Վերջերս միայն մէկ Յոյն էլ այդ ճիւղի մէջն էր մտել:

Կապիտալիստական արտադրութեան եղանակից անբաժան մրցումը այդտեղ էլ արդէն տուել էր իր արդիւնքը:

Պղնձեղէնի արտադրող՝ վաճառականները, որ առաջ 10–15 *հոգի էին. այժմ նրանց թիւը իջել՝ հասել է* 4–5 *հոգու:*

Կապիտալի կեդրոնացումը այստեղ շատ աւելի արագ է կատարուել:

Եւ այլապէս էլ չէր կարող լինել, քանի որ մրցման ասպարէզի մէջ են, բացի եւրոպական հեռաւոր արտադրողներից, նա՛եւ Մարզուանը, Սեբաստիան, Կեսարիան. որոնք պղնձագործութեան մի մի կեդրոնավայրեր են:

Կապիտալի այդպիսի կեդրոնացումը արտադրողներին մտածմունք է ներշնչել շուկայի տէրը դառնալով՝ ամեն ինչ իրենց տնօրինութեան տակ առնել, կանոնաւորել՝ նոյն իսկ գործաւորների խելքն ու միտքը, նրանց աշխատանքի ոյժի հետ միասին:

Այս ձգտումի մէջ մի քիչ ասիականութիւն *էլ է տեղի ունեցել: Գործատէրերը, մի օր, միատեղ հաւաքուելով՝ կանչել են իրենցից կախումն ունեցող «*կտրողներ*»ին եւ նրանց* հրամայել *ի՛նչ անել, ի՛նչ չանել, ի՛նչքան աշկերտ՝ օգնականներ, վարձուորներ պահել եւ ամեն մէկին ի՛նչքան աշխատավարձ տալ:*

Եւ այդ բոլոր հրամանները *եղել են ասիական կոպտութեամբ:*

Բոլոր աստիճանի աշխատաւորները չեն լսել, չեն ուզեցել իրենց եղած «բարձրագոյն հրամաններին» ենթարկուել. բողոքել են. իրենց միջից ներկայացուցիչներ են ընտրել, որ երթան եւ տէրերի *հետ խօսեն, նրանց ասեն, հասկացնեն, որ իրենց արած շահը արդէն չափազանց է. ուստի թող իրենց չը*

զրկէն, քանի որ ստացածնին արդէն «ոչինչ բան» է:

Տէրերը բարկացել են, սաստիկ բարկացել. ո՛չ միայն իրենց դիմող պատուիրակներին դուրս են վտարել, այլ նրանց օրինակելի պատիժ տալու համար, որ միւս անգամ անհնազանդութիւն չանեն, իրենց գործատեղիները, վաճառատները փակել են եւ բոլորին էլ գործից դուրս շպրտել՝ կարճ եւ կտրուկ կերպով:

Իրենց օրապահիկը լոկ աշխատանքով հայթայթող գործաւորները բացն են մնում:

Ի՞նչ պիտի անեն, մտածում են տէրերը, քանի որ նրանցից եւ ո՛չ մէկը խնայողութիւն ունի. բոլորն էլ օր դատող՝ օր ուտող մարդիկ են, «ձեռքից բերանը» ապրողներ:

Սկսւում է աշխատանքի ընդհատում. նա սուր կերպարանք է առնում:

Մեր Մասնաճիւղը ընկերներին օգնութեան է հասնում. ընդդիմադրութիւնը է՛լ աւելի սաստկանում, շարունակւում է. գործատէրերի մէջ տիրում է յուսախաբութիւն, սպասուած արագ անձնատուութիւնը չի գալիս: Մարդիկ սպասում էին աղաչանքի, պաղատանքի, ձեռքի, ոտքի համբուրէնքի. բայց այդ բոլոր նուաստացումների փոխարէն գալիս է իրաւունքի գիտակցութիւն եւ պայքարող գործաւորի ծառացում:

Ո՞վ է դրա պատճառը:

— Սօցիալ Դէմօկրատ Հնչակեանութիւնը: Այդ բոլորը անողը նրա Մասնաճիւղն է:

Տէրերը դիմում են տեղական կառավարութեան ներկայացուցչին, նրան կաշառք են խոստանում, որպէսզի օրէնքն էլ իրենց հետ միանալով՝ խիստ պատիժը մէջտեղ գայ՝ խրատ լինելու համար:

Կառավարութեան ներկայացուցիչը իր օրինամատեանները քրքրում է, տեսնում է, որ աշխատանքի վերաբերեալ խնդիրների համար օրէնսդրական որ եւ է տրամադրութիւն չը կայ: Բայց, այնուամենայնիւ, դա յուսահատեցուցիչ ո՛չինչ ունի իր մէջ, քանի որ Թիւրքիան քմահաճոյքների դասական մի երկիր է:

Միւթէսարըֆի տեղակալը կանչում է գործաւորներին եւ նրանց կէս սպառնալից ձայնով ասում, որ երթան՝ իրենց տէրերից ներողութիւն խնդրեն, նրանց հրամաններին հնազանդ-

դէն եւ գործի սկսեն. եթէ ո՛չ, քանի որ իրենք բան ու գործ չունեն՝ ինքը ստիպուած պիտի լինի իրենց դէմ կիրարկութեան դնել Օսմանեան Երեսփոխանական Ժողովի վերջին այն օրէնքը, ինչոր վերաբերում է Թափառաշրջիկներին եւ անգործներին:

Գործաւորները խնդրի էութիւնը բացատրելով, իրենց արդար իրաւունքները պաշտպանելով, կառավարութեան ներհուն ներկայացուցչի առաջն են դնում մեր Կուսակցութեան Տաճկաստանի Ծրագիրը, ասում են, որ իրենք այդ Կուսակցութեան անդամներն են, իսկ իրենց Ծրագիրը վաւերացուած է Բարձրագոյն Իշխանութեան կողմից, որի մէջ տնտեսական այդ բոլոր խնդիրները նախատեսնուած են: Արդ, առարկում են, իրենք գործում են իրենց Ծրագրի հիմունքների վրայ կեցած. մի բան, որ Կառավարութիւնը ինքը թոյլատրել է. հետեւապէս՝ ինքը իր Իշխանութեան դէմ զեղծում է գործում՝ ստեղծուած խնդրի մէջ այդ ոգւով եւ ուղղութեամբ միջամտելով, քանի որ փողոցների մէջ իրենք և ո՛չ մի անկարգութիւն են արել, ո՛չ էլ տէրերին որ եւ է խօսք ասել. այլ իրենց տները եւ Ակումբը քաշուած, նստած են:

Միւթէսարըֆի տեղակալը տեսնում է, որ Թիւրքիայի մէջ մի բան փոխուած կայ. «ամէլիա»ներն էլ մարդու պէս խօսում, դատում, իրաւունքներից են ճառում.... մարդը իր մօրթը կամաց կամաց հաւաքում է, երբ ճակատին զարկում է, որ իր վրայ բողոք պիտի տան....:

Թօգաթի մէջ իր գործաւորական իրաւունքների գիտակցութիւնը ունեցող մի գործաւորութիւն գտայ:

ԽՐԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ.— Մարդ ուղարկեցի, կանչել տուեցի տէրերին. եկան. հաւաքուեցան մեր Ակումբը՝ Կարապետ Կորկորեանը, Մահտեսի Կարապետ Սրնիճեանը, Օհաննէս Թօրոսեանը եւ Հաճի Եօվաննեան (Յօյն): Եկան ե՛ւ բանուոր ընկերների ներկայացուցիչները:

Հարց է տրւում իրենց արարքի եւ ուզածի մասին:

Տէրերը հէնց առաջին անգամից յայտնում են, որ իրենք զղջացել են իրենց արարքի վրայ. ասում են. «Մի բան էր, որ եղաւ». ուստի միջնորդութիւնս են խնդրում, որ «գան եւ շարունակեն առաջուայ պայմաններով»:

Որոշ է. այդ զղջումը չէր լինել, եթէ ընդդիմադրութիւնը

եղած չը լինէր: Աշխատանքը ամիսներից ի վեր դադարել էր: Շաբաթը մի քանի անգամ, երբեմն էլ ամեն օր՝ պղնձեղէն ապրանքների բեռներ պէտք էր ուղարկել դուրսը· պահանջը շատ մեծ էր: Եւ ահա Մարզուանը, Սեբաստիան սպառնում է խլել շուկան· մի քանի շաբաթ էլ, եւ իրենք եթէ ոչ շուկայից բոլորովին դուրս կը նետուեն, գէթ մեծամեծ չահեր կը կորցնեն: Այդ իրողութիւնն էր, ուրեմն, որ իրենց դրել էր զղջումի զգացմունքի մէջ, ասելով որ «արել էին մի բան, որ չէին ուզիլ անել· բայց եղածը եղել էր....»:

Խօսքը գործաւոր ընկերների ներկայացուցիչներինն է:

«Մեզանից 30–40 հոգի կտրողներ ենք: Մենք պղնձագործ վաճառականներից ապրանք՝ պատրաստի պղինձ ենք առնում, կտրում, ծեծում, պէտք եղած ձեւերը տալիս եւ այդպիսով պղնձի ամանեղէններ պատրաստում: Վաճառականներից պղինձ առնելուց յետոյ՝ մենք ենք վարձում մեր գործաւորները, կէս–վարպետները եւ աշկերտները, ու այդպիսով մեր գործը առաջ տանում: Մենք աշխատում ենք վաճառական՝ արտադրողների համար: Ամենքս էլ մեր խանութը ունենք, մեր ուզած թուով եւ պայմաններով գործաւոր ենք վարձում: Շինուած ապրանքը լրանալուց յետոյ՝ տալիս ենք վաճառական արտադրողներին եւ, ըստ պայմանի, մեզ հասնելիք դրամը ստանում: Մենք ներքին ազատութիւն ունենք մեր աշխատաւորները վարձելու եւ նրանց աշխատավարձ տալու»:

— Ի՞նչ է, հիմայ, ձեր գանգատը:

— «Մեր տէրերը՝ վաճառականները, հիմայ, մեզ շատ բարձր գնով են ապրանք տալիս. եթէ մէկ փոքր կաթսայի արտադրութիւնը իրենց վրայ արժում է, թիթեղ եւ աշխատանք միասին, 20 ղուրուշ, դրանով նրանք վաստակում են 40–50 ղուրուշ, կէս առ կէս աւելի, առանց որ եւ է գործ կատարած լինելու, լոկ իրենց դրամի շնորհիւ: Այդ զրկողութիւնը, այդ անարդարութիւնը տեսնելով հանդերձ մենք, դարձեալ, շարունակում էինք լուռ աշխատել. որովհետեւ հարկադրուած էինք, ապրուստի ուրիշ միջոց չունէինք: Վերջերս, սակայն, նրանք ժողով սարքեցին, խորհրդակցեցին եւ որոշեցին թէ իւրաքանչիւրիս ինչքան ապրանք տան. ո՛չ թէ առաջուան պէս մեր ուզած քանակութեամբ, այլ իրենց ցանկացած չափով: Այդպիսով նրանք չուզեցին մեզանից մի քանի հոգու ո՛չ մի ապ–

րանք տալ: Եւ յետոյ՝ մեզ ասացին թէ քանի՛ կէս-վարպետ, քանի՛ աշկերտ պիտի պահենք եւ նրանց ի՛նչքան աշխատավարձ վճարենք: Հաշուից երեւեց, որ այդ կարգադրութեան հետեւանքով, եթէ ընդունէինք, մեր արդէն պահած կէս-վարպետներից եւ աշկերտներից կէսէն աւելին դուրս պիտի մնար եւ անգործ: Իրենց թագուն միտքն է, որ կտրողների թիւը պակասցնեն, մեծ թուով անգործ կէս-վարպետներ եւ աշկերտներ ունենան շուկայի մէջ, որ այնուհետեւ համարձակ կերպով մեզ նորից ծանր պայմաններ առաջարկեն. եթէ չընդունենք՝ մեզ դուրս վտարեն, նորերին վարձեն, մեր տեղը անցնեն՝ ու նրանց հետ վարուեն այնպէս, ինչպէս որ իրենք են ցանկանում. այսինքն գերիի պէս աշխատցնել՝ ոչինչ աշխատավարձ տալով»:

— Մի հարց. կտրողների թիւը աւելանում է թէ՞ պակասում:

— «Պակասում. դեռ մի քանի տարի առաջ 50–60 հոգի էինք. հիմայ կէսն անգամ չի մնացել. երթալով է՛լ աւելի մեր թիւը քչանում է»:

Այստեղ, արդէն, երեւոյթը ինքնին բացայայտ էր. փոքր արտադրողները տեղի էին տալիս մեծերին. կապիտալը դէպի կեդրոնացում էր գնում. օրական կեանքը այդ բնականոն պատկերն էր ցոյց տալիս:

Խօսակցութեան այդ պահուն՝ ներս մտաւ Թոգաթում Խազմայի յայտնի վաճառական Գարօղլանեան Կարապետ աղան:

— Մօտաւորապէս ի՞նչքան վարձք կը դայ աշխատաւորներին. հարցնում եմ պղնձի վաճառականներից:

— «Վարպետներին՝ օրական 13–15. կէս-վարպետներին՝ 5–10. իսկ աշկերտներին՝ 60 փարայից մինչեւ 2 ղուրուշ»:

— Եթէ մի կաթսայ 100 ղուրուշ արժենայ, դուք՝ վաճառականներդ դրա միջից ի՞նչքան շահ ունիք:

Ոմանք ասացին 20 ղուրուշ. ոմանք՝ 25. մէկն էլ՝ 30:

Կարապետ աղան միջամտեց, ասաց. «Կէսից աւելին. որովհետեւ հեռու տեղեր ուղարկուած ապրանքների վրայ յաւելումներ են անում եւ այնպէս ծախել տալիս, որից իրենց աշխատաւորները բնաւ տեղեկութիւն չունեն»:

Պղնձի վաճառականները ձայն չը հանեցին:

Մեր ընկերները գլխով հաւանութեան նշան տուեցին։

— Ուրեմն ի՞նչ էք ուզում։

Մեր ընկերները ասացին, որ իրենք պատրաստ են նախկին պայմաններով աշխատելու․ պայմանով՝ որ չաշխատած օրերի՝ եթէ ոչ ամբողջ՝ գէթ կէս օրավարձերը տրուեն։

Վաճառականները այդ պայմանները ընդունեցին եւ աշխատանքը հետեւեալ օրը վերսկսեցաւ։

Եղածը դասակարգային կռիւ էր՝ իր բոլոր պարզութեան եւ կանոնաւորութեան մէջ։

Նախ քան ցրուիլը՝ մի քանի խօսք ուզեց ասել, բոլորի ներկայութեան, Կարապետ աղան, որ յարգուած մէկն էր թէ՛ գործաւորներից եւ թէ՛ վաճառականներից։ Կարապետ աղան Թոգաթի մէջ ճանչցուած էր որպէս համարձակախօս, ընդունակ, ձեռներէց ոգու տէր եւ վերին աստիճանի պարկեշտ, համեստ մի մարդ։

Իր խօսքերն են․— «Մեր վաճառականները եւ արտադրողները տակաւին արեւելեան սովորութեամբ եւ խելքով են ուզում իրենց գործերը վարել․ դրամ վաստակելու, շահ ունենալու համար՝ խաբել եւ գործաւորներից, աշխատաւորներից կտրել։ Մինչդեռ դա սխալ է։ Մի տարի առաջ՝ հրամանքիդ պատահեցայ Կ․ Պոլիս․ մեր գործերից, մեր վաճառականներից տեղեկութիւն հարցնելով՝ մեզ խորհուրդ տուեցիք ճանապարհորդել, չը կղզիանալ, չը լճանալ՝ մեր ունեցած շատ սահմանափակ շուկայի մէջ եւ աշխատել ուրիշ՝ աւելի ընդարձակ եւ նոր շուկաներ փնտռել, գտնել։ Այդ խորհուրդը խելքիս եկաւ․ մի քանի ոսկի ծախսեցի՝ գնացի Սալօնիկ եւ Մակեդոնիայի զանազան քաղաքները։ Տեսայ այնտեղերը ոչինչ, բոլորովին անարժէք, կոշտ ու կոպիտ եազմայ են ծախում։ Հարցրի թէ քանի՞ են ծախում․ պատասխանեցին որ սովորական գներն են 5, 8, 10 ղուրուշ։ Ասացի՝ եթէ Թոգաթի եազմայ լինի, քանի՞ կառնէք։ Նրանք այդ մասին տեղեկութիւն չունէին։ Հետս ունեցած նմոյշները ցոյց տուեցի․ մարդիկ զարմացան մեր արտադրած եազմայի նրբութեան եւ շատ ճաշակաւոր լինելուն վրայ։ Ասացին, որ մէկ երկ-վեցեակին պատրաստ են 100–120 ղուրուշ տալու։ Արդ, մէկ երկ-վեցեակը այստեղ մենք ծախում ենք 20–40 ղուրուշ եւ դարձեալ առատ շահ, վաստակ անում։ Ահա՛ նոր շուկայ, ուր բեռներով

ապրանք եմ ուղարկում եւ կէսից աւելին շահում ու դրա համար էլ իմ գործաւորներիս, ինձ հետ գործ արող առեւտրականներին շատ լաւ վճարում, օգուտ եմ տալիս: Մեր պղնձագործները փոխանակ ինձ պէս անելու, մտածում են թէ հարստութիւն կարող են ձեռք բերել միայն խաբելով, իրենց գործաւորներից 5–10 փարայ կտրելով...»:

Նկատողութիւնը շատ ճիշտ էր:

Այդ գործն էլ այդպէս վերջացաւ:

Գործաւոր ընկերները, որքան որ տեղական օրէնքը բացայայտ կերպով թոյլ չէր տալիս, այնուամենայնիւ, յատուկ Միութիւն կազմեցին, մեր Կուսակցութեան հովանաւորութեան եւ ղեկավարութեան տակ, որպէսզի միւս կարգի բոլոր աշխատաւորներին էլ իրենց մէջն առնելով՝ դասակարգային կռիւը յաջողութեամբ մղեն եւ թոյլ չը տան, որ իրենք ճըզմուեն:

ԵԱԶՄԱՃԻՆԵՐԸ.— Արդիւնաբերութեան այդ ճիւղն էլ, բացառապէս, Հայ արտադրող վաճառականների ձեռքին է: Ուզած քանակութեամբ հում նիւթ Եւրոպայից ներմուծելով՝ տալիս են վարպետ–ձեռնարկողներին եւ սրանք ցանկացած թւով գործաւորներ վարձելով՝ ապրանքը արտադրում են:

Իւրաքանչիւր վարպետ–ձեռնարկող ունի 30–40–50 մեծ ու փոքր գործաւորներ. սրանց ձեռքերի տակն է, սրանց աշխատանքովն է, որ ջնջիկի նման հում նիւթը դառնում է այն նրկարէն եազման, որ յայտնի է Թօգաթի եազմայ անունով, որ ամբողջ Թիւրքիայի մէջ իր մրցակիցը չունի՝ գեղեցկութեան եւ նրբութեան տեսակէտից:

Այդ ճիւղի մէջ աշխատող գործաւորները մասնաւոր գանգատ չունէին. բաւականին լաւ օրավարձ էին ստանում՝ իրենց ապրուստն ու ընտանիքը շատ ու քիչ ապահով կերպով հոգալու՝ պահելու չափ:

Դրա գլխաւոր պատճառներից մէկն այն էր, որ արդիւնաբերութեան այդ ճիւղի գլխաւոր արտադրող՝ վաճառականը՝ ինքը Կարապետ աղան էր, որ «խղճմտանք»ով էր վերաբերւում իր գործաւորների եւ իր հետ գործ ունեցող ձեռնարկող–վարպետների հետ: Միւս պատճառն էլ այն էր, որ գլխաւոր ձեռնարկող–վարպետները մեր ընկերներն էին, ինչպէս եւ մեր

ընկերներն էին բոլոր գործաւորները: Կուսակցական գաղափարաբանութիւնը չէր կարող չազդել երկու տարաբաժանումներ ունեցող ընկերների փոխադարձ յարաբերութեան վրայ: Վարպետ–ձեռնարկող ընկերները ամեն ջանք թափում էին՝ բառ կարելոյն լաւ վարձատրել իրենց գործաւոր ընկերներին, ինչքան որ շուկայի գինը թոյլ էր տալիս: Իսկ գործաւոր ընկերները զարմանալի մի անշահախնդրութեամբ էին տանում իրենց գործը. աշխատում էին որքան կարելի է մաքուր, գեղեցիկ եւ նկարչագեղ դարձնել իրենց տրուած ապխտակ ջնջիկի տրցակները: Ամեն գործաւոր, կարծես, մի մի նկարիչ եղած լինէր. ճիշդ արուեստագէտի աւիւնով էր, որ նրանք մօտենում էին իրենց գործին:

Գործաւորական այդ կեանքը պահանջում էր աւելի երկարաշունչ ուսումնասիրութիւն. դժբախտաբար ժամանակը մեզ պակասում էր:

ԹՈԳԱԹԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ. — Մայիս 27, Յունիս 5, այցելութիւն եմ տալիս Հայ երկսեռ դպրոցներին: Դպրոցի տնօրէնն է Յովհաննէս Գազանճեան. վերին աստիճանի համեստ, աշխատասէր, բայց եւ պահպանողական մի մարդ: Սիրուած է թէ՛ ժողովրդից եւ թէ՛ դպրոցական հասարակութիւնից:

Գլխաւոր ուսուցիչներն են՝ ընկեր Մեքենեան եւ ընկեր Պետրոս Պոնդացի. նորագոյն կրթութեան ռահվիրաները՝ դպրոցի մէջ՝ սրանք են: Օրիորդաց վարժարանի մէջ էլ աչքի ընկնող նոր ոյժերից մէկն է մեր ընկերուհի Արծրունին:

Որոշ է, երկու միտում կայ ուսուցիչների մէջ. ոմանք պահպանողական ոգի են ուզում մտցնել. ոմանք Յեղափոխական: Նժարը այս վերջին կողմն էր հակուած:

Դպրոցական երկսեռ հասարակութիւնը եւ ուսուցչութիւնը ընդարձակ դահլիճի մէջ հաւաքուելով՝ տեղեկութիւններ տուեցի նորագոյն կրթութեան սիստէմների մասին. ծանրացայ այն պարտականութեան վրայ, որ դրուած էր մեր ուսուցչական դասի վրայ: Աշակերտները ստացան պէտք եղած քաջալերանքը. այն ակնկալութեամբ, որ վաղուան յառաջադէմ կեանքի ներկայացուցիչները պիտի դառնային իրենք:

Եղան շատ գեղեցիկ արտասանութիւններ եւ երգեր:

Ուրախ եւ գոհ տպաւորութեամբ տուն դարձանք։

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ.— Մի կարգ կենսական խնդիրների կարգադրութեան համար՝ երկրորդ անգամ Անդամական ժողով ունեցանք......։

ԿԱՆԱՆՑ ԺՈՂՈՎԸ.— Չորեքշաբթի, Մայիս 25, Յունիս 7, նշանակուած է առանձին ժողով՝ յատկապէս Կանանց համար։ Թոգաթի Հայ կիների եւ Օրիորդների մի մեծ մասը այդտեղ է։ Ժողովի պատկերը աւելի քան խրախուսիչ է։ Հայ կինը երբէք անբաժան չի եղել Հայ ցաւերից. հետաքրքրութիւնը, նոր բան լսելը, գիտնալը բոլորի էլ բաժինն է։ Ասիայի այդ խորքի մէջ Հայ կինը ամենափոքր բաղդատութեան անգամ չի կարելի դնել՝ իր շրջապատող ա՛յլ ազգերի կանանց հետ։

Հաւաքուողների մէջ քիչ չէ թիւը այն Տիկինների, որոնք աւարտած են Մարզուանի Ամերիկեան Կոլլէժի եւ Հայ Բարձրագոյն վարժարանների ընթացքը։ Շատերը կան, որ ընթացիկ տեղեկութիւններ ունեն թէ՛ մեր Հին եւ Նոր գրականութիւնից, մեր լրագրութիւնից եւ թէ՛ Եւրոպականից։ Արտայայտւում, ասում, խօսում են մաքուր հայերէնով։

Կանայք իրենց հետ են բերել, նաեւ, իրենց երեխաներին, որոնցից շատերը գեղեցիկ արտասանութիւններ արեցին. մեր Յեղափոխական կեանքը այդ փոքրիկներին էլ ծանօթ էր։ Եղան եւ երգեցողութիւններ։

Տիկինների մէջ աչքի են ընկնում իրենց բազմակողմանի զարգացումով՝ Եսթեր Սարըեան. Ֆլօր Եսայեան. Սրբուհի Մեքենեան. Հայկանոյշ Անտոնեան. Վերոնէ Գարօղլանեան. Նեկտար Մալխասեան եւ Օրիորդ Լուսիա Մեքենեան։ Սրանք ոչնչով յետ չեն մնում Եւրոպական իրենց քոյրերից եւ սեռակիցներից՝ բոլորն էլ լայն զարգացման տէր են։

Դասախօսութիւնը, որ դարձաւ կանանց հարցի եւ Հայ կանանց պարտականութեան շուրջը, լրանալուց յետոյ՝ ուզեցի իրենց կարծիքները եւ տպաւորութիւնները լսել։

Անմիջապէս նիւթ դարձրին իրենց կրած դառնութիւնները, սրտի անձկութիւնը, համատարած երկիւղը։

Ասացին, գրեթէ միաբերան.— «Առաւօտը երբ մեր որ-

դինները, մեր ամուսինները չուկայ են իջնում, երկիւղը անմի-ջապէս մեզ պատում է, սրտներս թրթռում է. միշտ ականջնիս ձայնի է մնում, թէ արդեօք մի բան պատահե՞ց. մեր աչքը ջուր է կտրում, երբ մի փոքր ուշանում են: Փողոցներով անցած ժամանակնիս՝ Թուրքերի լամուկների եւ չափահասների կողմից վիրաւորական խօսքեր լսելը մեր առօրեայ վի-ճակն է. համբերում ենք, տանում. սպասելով որ մի օր վերջ առնի. բայց այդ վերջը չի գալիս. այս «Սահմանադրութիւ-նից» մենք բան չը շահեցանք, մեր վիճակը չը փոխուեցաւ. մեր փոխ–յարաբերութիւնները Թուրքերի հետ, դարձեալ, նոյնը մնաց, ինչոր առաջ էր»:

Դա հոգեկան մի վիճակ է, որ ենթական՝ Հայ կինը միայն գիտէ նրա ծանրութիւնը. եւ այդ՝ դարերի ընթացքում.....

Տխրութեան ալիքը դեռ չանցած՝ Տիկին Փլօրան հրաշալի մի բանախօսութիւն արաց. աւարտեց հետեւեալ վերջաբա-նով. «Քոյրերս, ապրե՛նք մեր ամուսինների կողքին, մեռ-նե՛նք մեր ամուսինների կողքին. Հայ կնոջ յատուկ հաւատա-րիմ կողակիցներ մնանք մինչեւ վերջ...»:

Հայ կինը իր կատարեալ մաքրութեանը մէջ էր այդտեղ:

Մի գիծ որ աչքի էր ընկնում. դա այն էր, որ Թոդաթի կիները մի փոքր երկչոտ ոգի ունէին. նրանք Մարզուանի Հայ կանանց յանդուգն, եռանդուն, առնականութեան հասնող չեչտը չունէին:

Թոդաթի մէջ հաստատուած Կաթոլիկաց վարժարանները այդտեղ էլ, բնականաբար, աշխատել էին իրենց յատուկ կըր-թական մեթոտով սերունդներ յառաջ բերել. իրենց հետեւող-ների եւ չը հետեւողների մէջ խորթութիւն, պաղութիւն, կըղ-զիացում յառաջացնել. բայց բնաւ չէին յաջողել: Միջավայրը մնացած էր Հայկական. որ եւ է խորթութիւն չը կար: Հայ կինը Հայ կին էր մնացել, ողամարդը՝ ողամարդ. անդրկեռ-նականութիւնը *Թոդաթի մէջ որոշ հող չէր գտել. չը նայելով իր թափած բազմամեայ ջանքերին:*

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ. — Երեկոյին երկու ընկերներով ընթրիքի ենք հրաւիրուած Շաւարշ Վարդապետի մօտ: Մեզ սեղանակից են՝ ի միջի այլոց՝ դպրոցի տնօրէն Յովհաննէս Գազանճեանը եւ ընկեր Ստեփան Հերեանը:

Շաւարշ Վարդապետը զգոյշ է. շատ չի բացւում. խօսակցութեան առարկայ եղող բոլոր խնդիրների մասին՝ համարեա թէ լռութիւն է պահում։ Տնօրէնը նոյնպէս. սա էլ կեանքի տառապանքներից անցած լինելով՝ քաղաքական խնդիրների մէջ շատ չի ուզում մտնել. միշտ վերապահ դիրք ունի։

Այդպէս չէ, սակայն, ընկեր Ստեփան Հերեանը. Թէեւ տարիքը առած մարդ, բանտերի չարչարանքներից անցած. բայց աներկիւղ, համարձակախօս է. ամէն գործի մէջ կը մտնի, ամէն բանի ձեռք կը զարկի. առանց նրան Թոգաթի մէջ ազգային, հասարակական գործ չի կատարուիլ. նա է առաջին դերը վեր առնողը բոլոր ճառերգութիւնների մէջ.. նա է բանախօսը, յորդորիչը, կազմակերպիչը. նա է արտայայտիչը, երբ ազգային, ընդհանուր գործ կայ։ Ինքը բարի, եռանդուն, իսկական Հայ է. եկեղեցի, դպրոց, որբախնամ, լսարան, թերթ, Յեղափոխական Կուսակցութիւն, յառաջադիմական հոսանք, պահպանողական հաստատութիւն.— այդ բոլորի մէջ նա մատ ունի. նա ամէն ինչ է, ամէն ուրեք է. բաւական է, որ Հայութիւնը շահի, օգտուի, առաջ երթայ։ Ազգային նախանձախնդրութիւնը իր մէջ ծայրայեղութեան է հասած։ Ստեփան էֆէնդին Սօցիալիստ էլ է. այն համոզումով, որ Հայ Ազգը նրանից օգուտ կարող է ունենալ. իր շրջագիծը Հայութիւնն է։ Կառավարութեան հանդէպ ո՛չ մէկը այնպէս աներկիւղ չի կռուիլ, որքան Ստեփան էֆէնդին. իր մտքի մէջ դրածը, իր տեսածը կասի, փոյթ չէ բանտ տանեն, աքսորեն, իրեն անձնական վնաս հասցնեն։ Եռանդի մի անշէջ հնոց է ուղղակի։

Քաղաքական ընդհանուր կացութեան մասին խօսք դառնալով՝ Ստեփան էֆէնդին բերանը բացաւ.

«Թուրքերի ներկայիս հետեւած քաղաքականութիւնը չի կարելի հասկանալ ո՛չ նրանց արտայայտած սկզբունքներից, ո՛չ էլ նրանց պաշտօնական ու անպաշտօն գործիչների ասած-խօսածներից. Իտտիհատական իշխանութիւններին էլ խօսք ուղղելով՝ ուղիղ բան չի կարելի հասկանալ։ Ուզո՞ւմ էք ճշմարիտը, եղածը, իսկականը հասկանալ. պէտք է մտնել Թուրք սրճարանները, Թուրք իսկական շրջանները, ուր խուժանը, հասարակ ժողովուրդը իրենց մեծերից, իրենց առաջնորդներից ասած-խօսած մտքերն է արտայայտում, բացատր-

րում՝ իր լսած, հասկացածին չափ: Կացութեան մեկնաբանութեան թելը միայն այդտեղ կարելի է գտնել: Թուրքերի իսկական մտածմունքների մէջ միայն այդտեղերում կարելի է թափանցել: Մէկ էլ մի ուրիշ միջոց կայ. ասող-խօսողների հակառակորդներին կրկնել եւ նրանցից լսել տակի աստարը:

«Մի սրճարանի մէջ, անցեալ օր, խօսակցութեան ընդհանուր նիւթն այն էր, որ այս տէրութիւնը փրկելու համար՝ արհեստ, վաճառականութիւն, ամեն բան Թուրքերի ձեռքը պիտի անցնէր: Այնտեղ նստող մի Թուրք սպայ չիփ-չիտակ ասաց. «Այս «Սահմանադրութիւն»ը մի միջոց է, մեր ազգութիւնը զօրեղացնելու. խնդիրը պիտի վերջանայ վերջ ի վերջոյ Հայերին Թուրքացնելով...»: Շատ յաճախ է պատահել, որ դիրք ունեցող Թուրքեր ինձ ասել են թէ՝ «Այլեւս ի՞նչ հարկաւոր է ձեր լեզուն պահել. ինչո՞ւ էք ուզում ի զուր տեղը ձեր զաւակների ուղեղը յոգնեցնել. քանի որ Օսմանցի էք, բոլորիդ լեզուն էլ այսուհետեւ պիտի լինի Թուրքերէնը. հայերէն լեզուն պահելով՝ միշտ խորթ պիտի մնաք»: Թուրքերի ազգայնական զգացումները յորդած լինելով՝ մենք գտնւում ենք կատարեալ անապահովութեան մէջ. այսօր կանք. վաղը չը կանք. ամեն ինչ անստուգութիւն է: Մեր դրութիւնը ճգնաժամային է մանաւանդ նրանով, որ այստեղի աւատապետները շատ ազդեցիկ են եւ հետեւողների ահագին բազմութիւն ունեն. Նրանք ինչ ասեն, «ժողովուրդ»ը կը հետեւի կուրօրէն:

Ստեփան էֆէնդու անդրդուելի համոզումն էր որ. «Հայը ամեն տեղ պիտի պատրաստուէր զօրեղ ինքնապաշտպանութեան եւ այս երեւութական խաղաղութիւնից չը խաբուէր»:

Ընկեր Աւետիս Խարեանը, որ շուկայի հոգեբանութեան հետ շատ լաւ ծանօթ էր, նոր օրինակներով հաստատեց Ստեփան էֆէնդու ասածները. աւելացրեց. «Հայ նոր սերունդը այլեւս արհեստի չի մտնում, չի ուզում սովորել, պարզապէս անապահովութեան երեսից. գաղթականութիւնը հետզհետէ նոր ծաւալ է առնում»:

Հայի ցաւը ամեն տեղ է:

Դեռ սեղանից չէինք վերկացել. երբ ժամկոչը զարհուրած ներս մտաւ՝ յայտնեց, որ խոլերան քաղաքի մէջ սկսել է ճարակել եւ արդէն երկու Թուրք ու մէկ Հայ մեռել են եւ շատ տներ էլ շղթայի տակ առնուել:

Տուն վերադարձանք:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ.— Թոգաթը՝ ժայռերի եւ լեռնալանջերի մէջ սեղմուած՝ տարածւում է Իրիսի կամ Թոսանլի–Սուի աւելի ձախ՝ քան աջ կողմը: Փոքր-Հայքի գլխաւոր քաղաքներից մէկն է եւ կարեւոր հանգրուան՝ Կ. Պօլսից դէպի Վերին Միջագետք տանող ճանապարհի:

Իրիսի հոսանքն ի վեր, 12 քիլօմէտր հեռու, երբեմն բարձրանում էր Պոնտական փառահեղ Կոմանան. տաճարի սրբատաշ քարերը դեռ տեսնւում են Իրիսի վրայ ձգուած Բիւզանդական կամրջի սիւների եւ կամարների մէջ:

Քաղաքը շրջապատող երկու սեպաձեւ քարաժայռերը իրենց մէջ բովանդակում են բիւրեղացած կրաքարեր. որոնք շինութեանց համար շատ գեղեցիկ նիւթ կարող են լինել: Շերտաքարերի ներքեւ տարածւում են մարմարիոնի լայնածաւալ խաւեր. այդ մարմարիոններից է, որ Թուրքերը իրենց գերեզմանոցների տապանաքարերն են պատրաստում:

Բիւզանդական գեղատեսիլ մի դղեակի աւերակները տակաւին նշմարւում են հիւսիսային քարաժայռի վրայ: Այդ քարաժայռի վրայ է, որ բացւում են բնական եւ արուեստական քարանձաւներ. որոնք, կարծւում է, ժամանակին դամբարաններ են եղել. գաւթի չէմքի վրայ կախուած սանդուխի բեկորները ցոյց են տալիս, որ նա ճանապարհ է եղել՝ ընդերկրեայ ներքին սրահակները երթալու:

Մարմարիոնի ապառաժներից արտացոլացած տաքութեան պատճառով է, որ ամառը հեղձուցիչ շոգ է անում: Քաղաքացիները հարկադրւում են՝ գարնան առաջին օրերից սկսած՝ այգիները երթալ եւ այնտեղ մնալ մինչեւ աշուն. ամեն տուն, գրեթէ, այգի ունի, ամարանոցային եւ յարմարաւոր տներով:

Ջրի կողմից Թոգաթը շատ առատ է. խմելու ջրերը բղխում են Բէկզատ կոչուած ակունքից: Ջուրը առանձին ջրմուղներով է բերւում, բաշխւում ազգաբնակչութեան: Ամեն տուն ջրի աղբերակ ունի: Փողոցներից ջուրը շարունակ վազում է:

Թոգաթցիների տները ընդհանրապէս փայտից, հում կամ թրծուած աղիւսից են շինուած. արտաքին տեսքով թէեւ ան–

չուք, բայց ներքուստ կահաւորուած են Արեւելեան պերճանքով: Թուրք մի քանի հարուստ, հին տոհմի աւատապետների տները ծաղկենկար տախտակներից են կառուցուած՝ բոլորովին Արեւելեան ոճով:

Շուկան շատ ճոխ է, ընդարձակ. խանութները այս ու այն կողմն են ցրուած:

Տեղի գլխաւոր արհեստներն են՝ պղնձագործութիւն, ոստայնանկութիւն, ներկարարութիւն, կտաւագործութիւն, եւայլն: 1500-ից աւելի աշխատաւորներ կան. Հայ, Թուրք խաղախորդների թիւը 500-ից անցնում է: Վեց հատ բրտարան կայ, ուր աշխատում են 300-ի չափ բրուտներ:

Ոստայնանկութիւնը, ներկարարութիւնը, քօղագործութիւնը, տպածոյագործութիւնը, պղնձագործութիւնը, մանաւորապէս, շատ մեծ ծաւալ ունին: Տորոն այլեւս չի գործածւում. գլխաւոր ներկերը բերւում են Գերմանիայից:

Շուկան եւ գլխաւոր արհեստները, ընդհանրապէս, Հայոց ձեռքին են:

Աչքի ընկնող հաստատութիւններից մէկն է Ղալխանէ (պղնձի հալոց). մեծ եւ Եւրոպական ոճով շինուած գործարան է. Կարան-Մադանից եւ շրջակայ սահմաններից դուրս բերուած պղինձները ուղղակի այստեղ են բերւում հալելու համար:

Հայերի թիւը հասնում է մօտ 15 հազարի: Յոյներ եւ Հրէաներ շատ քիչ են. սրանք կամ հայերէն են խօսում կամ թուրքերէն:

Հայերը բնակւում են առանձին թաղերի մէջ. ամեն տան առաջ պարտէզ կայ. ունին 7 եկեղեցի՝ ճոխ զգեստներով, արծաթի ու ոսկու զարդերով, անօթներով եւ հինգ վարժարան՝ հարուստ եկամուտներով:

Թօգաթցիները յայտնի են որպէս չարքաշ, աշխատասէր, նրբամիտ եւ ձեռներէց ոգու տէր մարդիկ:

ԽՈԼԵՐԱՅԻ ԱՌԹԻՒ.— Եթէ այս երկիրը խոլերայի մնայուն բոյն չի դառնում, Հնդկաստանի մի քանի տեղերի պէս, դրա գլխաւոր պատճառը իր մաքուր օդը, վազուն ջրերը եւ բնակութիւնների իրարուց հեռու լինելու հանգամանքն է:

Եթէ խնդիրը մնար գիւղերի, քաղաքների մաքրութեան,

խոլերան մշտական թխսումի մէջ պիտի լինէր. որովհետեւ խակական Թուրքը ծնում է կեղտի մէջ, մեծանում է կեղտի մէջ, մեռնում կեղտի մէջ. իր գերեզմանոցներն էլ կեղտանոց են: Այդ տպաւորութիւնն է ստանում ամեն ճանապարհորդ, երբ Թուրք գիւղի, քաղաքի միջով է անցնում, նրանց տները մտնում: Մի հարուստ, ունեւոր տուն, հակառակ իր ունեցած բոլոր յարմարութիւններին, որ կարող էր մաքրութեան տիպար հանդիսանալ, դարձեալ կեղտի մէջ է լողում:

Թոդաթը մի ջրառատ քաղաք է, օդի հոսանքների ենթակայ. Հայոց թաղերը, տները՝ եթէ ոչ օրինակելի՝ գէթ կարելի է ասել, որ շատ մաքուր են: Հայ տնարար ու ժրաջան կնոջ սովորութիւն է արել տան քարերն անգամ լուանալ:

Իսկ մի քիչ հեռու՝ Թուրքերի տներում եւ թաղերում՝ փողոցներից սկսած մինչեւ բակերը, տան ներսը, ուղղակի զարշահոտութիւն է, որ բուրում է. կեղտերի կոյտերը դռների առաջն են լցուած: Անձրեւ պիտի գայ, որ առուակ կազմած ջրերից փողոցները մաքրուեն՝ յաճախ տղմի ճահիճներ ձեւացնելով: Թուրքը եթէ իր տունը մաքրում է, աւելածոն ուղղակի բակը կամ տան դռան առաջն է թափում, ինչ էլ որ լինի:

Դրա համար է, որ խոլերան Թուրք տներից ծագեց, ծաւալ առաւ եւ ամեն կողմ արագ ճարակել սկսեց:

Բոլոր ունեւորները իրենց այգեստանները փոխադրուեցան. շատերը մօտիկ գիւղերը անցան: Բժիշկ՝ շատ քիչ. եղածներն էլ ո՛չ մի ձեռնհասութեան տէր: Երկու հատ դեղարան կայ. այն էլ Հայերի ձեռքին:

ՕՐԷՆՔԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ. — Թիւրքիան լաւ ճանաչելու համար՝ գաւառները դուրս պիտի գալ, խուլ անկիւնները մըտնել. իր իսկական գոյնը այնտեղ է: Թոդաթի եկեղեցին ունի տներ. Թուրքի մէկը իր կամքով մտել՝ նստել է, կարծես թէ իր սեպհականութիւնը եղած լինէր: Տեղի է ունենում դատավարութիւն: Հայերը շահում են. բայց Թուրքը դարձեալ դուրս չի գալիս. այժմ գործադրող իշխանութիւնն է, որ չի ուզում, յետաձգում է. կաշառք է տրւում. նորից իրերի նոյն դրութիւնը, որովհետեւ խնդիրը Իսլամի եւ Գեավուրի միջեւ է. իսկ մի Իսլամ պետութեան ներկայացուցիչ ուրիշ դիրք չէր կարող բռնել......:

Սա Թրքական արդարադատութեան մի նմոյշն էր:

ՄԵԿՆՈՒՄ.— Մայիս 26, Յունիս 8, վաղ առաւօտեան Միւթէսարըֆի տեղակալը՝ Հայ ոստիկան Նշանի հետ՝ լուր էր ուղարկել, որ քաղաքից շուտ դուրս գամ, եթէ միշտ մնալու միտք չունիմ, որովհետեւ քաղաքի երթեւեկութիւնը չըրջակաների հետ պիտի դադրէր: Աճապարեցինք մեկնել:

Ճանապարհին անցանք Իթթիհատի տեղական Ակումբի մօտով: Շէնքը փակուած էր: Խօջա Սաբրիի ազգականներից մէկին հանդիպեցանք, որ ամենախիստ բառերով սկսեց քըննադատել «յաւիտենապէս չամչցող Իթթիհատին...»:

Ճանապարհւում ենք դէպի Սեբաստիա. մեզ հետ է նաեւ ընկեր Միհրան Զուգասըզեանը:

Ողջերթի եկող հասարակութեան եւ ընկերներին մի քանի խրախուսական խօսքեր ասելուց յետոյ՝ իրարուց բաժանուեցինք:

ԴԷՊԻ ՍԵԲԱՍՏԻԱ

ԳԼՈՒԽ Թ.

ԱՐՏՕՎԱ. — Հազար մտածմունքների մէջ թաղուած՝ թողնում ենք Թոքաթը: Անցնում ենք ծառազարդ վայրերից, բարձրանում զառիվայրը եւ 3 ժամից յետոյ մտնում Արտօվա (Արթիգապատ, Արթիօվա). ընդարձակ՝ հարթ, հաւասար մի դաշտ, վրան հինգ Հայ գիւղեր ցրուած:

Այստեղ ամեն ինչ այլեւս փոխուած է, ուրիշ կերպարանք ունի:

ՉԻՖԼԻԿ ԳԻՒՂԸ. — Մտնում ենք Չիֆլիկ գիւղը. ընկեր Մուրատը ցոյց է տալիս հեռւում գտնուող այն եկեղեցին, ուր 1895—1896-ին, Հայերին լցրել, «վառել» էին: Եկեղեցին վերաշինուած է. Հայ գիւղացիները շուրջը հաւաքուած՝ նըստած են, մի քանիսն էլ խարխլած պատերը ծեփելու համար՝ շաղախ են պատրաստում:

Իսկական Հայկական միջավայր է:

Այստեղ, արդէն, ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐ են, այն մտքով եւ ոգւով, որով պատմութիւնը բացատրել, հասկացրել է: Սամսոնից, ծովեզրեայ ա'յլ քաղաքներից ստացուած տպաւորութիւններս այլեւս չքանում են. պատմութեան կերտուածքը, իր բոլոր կողմերով, մէջտեղ է գալիս:

Հայ գիւղացիները՝ կայտառ, չարքաշ, դիմացկուն, իր նահապետական կենցաղով՝ անմիջապէս աչքի է ընկնում: Ճկուն, փափախամիտ, խորամանկ, ամեն հովերից տատանուող Հայերի տիպեր այստեղ չես գտնիլ. ամենքն էլ պարզամիտ, անկեղծ, անյողդողդ կամքի տէր՝ հաւատարիմ իրենց պապենական սովորութիւններին եւ օրէնքներին:

Սա Հայկական ովկիանոսի այն վերջին ալիքը, Հայ ընդհանուր շղթայի այն վերջին օղակն է, որ սկզբնաւորում է Սիւնիքից, Այրարատից, Վասպուրականից, Տուրուբերանից եւ ամեն տեղ իր տեղական գունաւորումները տալով՝ կազմում է մի ընդհանուր օրգանիզմ, պատմական մի որոշ անհատակա-

նութիւն՝ իր ընդհանուր բնաւորութեան յայտնի գծերով, արտայայտիչ որոշ յատկանիշերով։ Հայութեան այդ վերջին ալիքը իր մաքրութեան, բարձրութեան, վեհութեան մէջն է։ Մի կատարեալ հոգեպարար տեսարան։

ՍՕՑԻԱԼ ԴԻՄՕԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ՄԱՐՏԻԿԸ.— Կաուքը հազիւ խանը մտած-չը մտած՝ դէպի մեզ է վազում, գալիս ընկ. Խորէնը. ուրախութիւնից ինչ անելը չգիտէ։ Դանիէլ Զավուշի, Զէյլօի ընկերակից-զինակիցը, Փոքր-Հայքի մեր շարժումներին ամենագործօն մասնակցութիւն բերողը. դեռ առոյգ երիտասարդ է, հազիւ 48 տարեկան. իր կորովից ոչինչ չունի կորցրած. նոյն անվախը, նոյն կայծակն է, ինչպէս որ երեւացել է մեր պատմութեան մասնակի շարժումների օրերին։ Խորէնը, ծնած Սեբաստիա, թէեւ հիմայ ամուսնացած, զաւակների տէր է. բայց դարձեալ Կուսակցութեան իդէալականութեամբն է տարուած։ Տալիս է իր տպաւորութիւնները, պատմում է իր տեսած-լսածները. խոր ա՛խ է քաշում, երկիւղ է կրում, որ «Թուրքերը դարձեալ մեզ պիտի խաբեն». ուստի հարց է դնում թէ՝ լեռները բարձրանալու օրերը նորից պիտի գա՞ն......։

Հայ գիւղացիները բոլորակ կազմած՝ լսում են մեզ օրուան խնդիրների նկատմամբ. ամենքն էլ մտախոհութեան մէջ՝ ծանր, լուրջ, կերպարանք ունին եւ հաւատքով լցուած դէպի «Հայի ապագան»։

Բայց պէտք է աճապարել։

ԶԱՄԼԸ-ԲԷԼԸ.— Զիֆլիկից բաւականաչափ հեռանալով՝ բարձրանում ենք հռչակաւոր Զամլը-Բէլի բազմոլոր կածանները. որքան վեր ենք ելնում, օդը այնքան մաքուր, երկինքը ջինջ է դառնում, բայց եւ սաստիկ ցուրտը մեզ նեղել է սկսում։

Ընկ. Մուրատը սկսել է իր ծննդավայրի հոտը առնել. ընկել է հոգեկան մի ալեկոծ վիճակի մէջ. իր կերպարանքը թէ՛ տխրութիւն, թէ՛ ուրախութիւն է արտացոլացնում. հոգւոյ երկու լարերն էլ միաժամանակ թրթռում են։ Ու երգում է իր մանկութեան ժամանակից սովորած Քէօռ-Օղլու երգը. որի բերդը ժամանակին գրուած է եղել այդ լերան գագաթի վրայ.

ԽՈՐԷՆ ԿԻՒՐԻՆԵԱՆ

հեռքերը տակաւին նշմարւում են: Մուրատը երգում է մելամաղձոտ, ուժեղ, հնչուն ձայնով. աչքերին թէեւ արտասուք չը կայ. բայց որոշ է՝ հոգին լալիս է. որքան աշխատում է իրեն պահել՝ անկարելի է լինում. կուրծքի ելեւէջը, երգի ոլորակները ամեն ինչ յայտնում են......:

— Մուրա՛տ, բախտաւոր չե՞ս. դու պիտի տեսնես ծննդավայրդ, այն բոլոր տեղերը, ուր մանկութեանդ օրերն են գլորուել. դու նորից պիտի խմես Խորոխոնքի անմահական աղբիւրների ջրերը, երգես ձեր պուրակների, անտառների մէջ. բարեկամներիդ, ազգականներիդ, ընկերակիցներիդ ողջագուրանքը վայելես... Ես էլ ի՜նչ չէի տալ, եթէ քու տեղդ լինէի...

Մուրատը է՛լ աւելի տխրեց. ասաց.

— «Ի՞նչ ունիմ, որ ի՞նչ տեսնեմ. ո՛չ հայր է մնացել, ո՛չ մայր. գուցէ տեսնեմ մեր տան աւերակները.... Այո՛, մի քանի ազգականներիս պիտի տեսնեմ. բայց խաղակից ընկերներիս, բարեկամներիս շատ շատերի էլ գերեզմանները պիտի գրկեմ. այժմս է՛լ աւելի մարմնացած պիտի տեսնեմ այն բոլոր ցաւերը, որոնք ստիպեցին այս ճանապարհը բռնել, որ դեռ մեզ մի որոշ հանգրուանի չի հասցրել, ու տակաւին գընում ենք......:

ՋԱՄԼԸ-ԲԷԼԻ ԽԱՆԸ.— Գիշեր է. իջել ենք Ջամլը-Բէլի խանը, որ գտնւում է ուղղակի լերան գագաթի վրայ. ցուրտը անտանելի է. ույժ է տրւում վառարանի կրակին. բայց անօգուտ... խանի տէրը Ջերքէզ է. առաջին անգամ մեզ մօտենում, բարեկամանում է:

Զարմանալի բան. այս մարդիկը, որոնց հայրերը փախել են Ռուսաստանից, եկել «ասպնջականութիւն» են գտել «Իսլամ» մի երկրում. բայց Ռուսաստանի անունը լսելիս՝ մի տեսակ քաղցր յիշատակներ է զարթնում իրենց մէջ: Պանդոկապետը խօսում է մի առանձին համակրութեամբ:

Իմ Կովկասցի լինելս նրան ո՛չ միայն բերկրառիթ հանգամանք եղաւ հարցերի տեղատարափ թափելու՝ Կովկասի մէջ եղող իր հայրենակիցների, այլեւ Տաճկաստանի այն շրջանների Ջերքէզների մասին, որոնց հետ ծանօթութիւն ունէի:

Ընկեր Միհրան Զուգասըգեանը օրինակներով բացատրում է Իտտիհատական կառավարութեան ձուլման քաղաքա-

կանութիւնը՝ Ջերքէզների վերաբերմամբ։ Պանդուկապետը ինքն էլ զգում է, որ իրենք իրենց «սպասած»ը չը գտան «այս երկրում»։

ԶԱՊԹԻԷՆԵՐԸ.— Խանից ոչ հեռու, լերան գագաթին, մի փոքրիկ տնակի մէջ 4–5 Զապթիէ կայ. սրանք սուրհանդակի փոխադրութեան եւ երկրի պահպանութեան համար են։ Եկել են մեզ տեսակցութեան։ Հարցնում եմ.

— Երկրի ապահովութիւնը ի՞նչպէս է։

— «Հիմայ աւելի վատ է. գողութեան, աւազակութեան դէպքեր շատ են պատահում»։

— Ի՞նչ մի առանձին պատճառ կայ.

— «Սահմանադրութիւն»ից յետոյ՝ ամբաստանեալներին դատարան են հրաւիրում կոչնագրերով. այն գողերը, որ գիտեն թէ իրենց դէմ ապացոյցներ կան եւ կարող են դատապարտուիլ, երբ դատարան դուրս գան.— առաջին կոչին չեն պատասխանում. երկրորդին փախչում, լեռներն են բարձրանում՝ իրենց գործունէութիւնը է՛լ աւելի ազատ եւ անսանձ կերպով յառաջ տանելու համար. այս կողմերը այդպիսիներ շատ կան. մասնաւոր անհանգստութիւնը սրանցից է գալիս»։

— Առաջ ի՞նչպէս էր։

— «Մեզ հրաման դուրս կը գար՝ առաջին անգամից կերթայինք, կը ձերբակալէինք, կը բերէինք՝ եթէ տանը լինէին. եթէ փախած լինէին՝ իսկոյն հետապնդումի, խուզարկութեան դուրս կը գայինք»։

— Ի՞նչ բաներ են աւելի գողցւում։

— «Կով, եզ, ձի, էշ, ջորի, ոչխար . . . գին ունեցող ամեն բան»։

— Ո՞ւր են ծախում։

— «Գողօններով առուտուր անող յատուկ մարդիկ կան, նրանց են տալիս, եւ կամ քշում, տանում են հեռաւոր շրջաններ»։

— Ովքե՞ր են ենթակայ այդ գողութիւններին։

— «Բնականաբար Հայերը»։

— Ինչո՞ւ «բնականաբար»։

— «Որովհետեւ Իսլամը Իսլամից շատ չի գողանալ, եթէ մասնաւորապէս ստիպուած չը լինի. նրանք գիտեն, որ բացի

պահպանութիւնից՝ դատարան կայ, կարող են պատժուել։ Հայերից գողնալը աւելի դիւրին է։ Հայերը շատ սովորութիւն չունեն դատարան երթալ, կաշխատին գործը միշտ անուշութեամբ վերջացնել․ ինչ էլ որ լինի՝ գողերի ձեռքին մի բան կը մնայ, եթէ բոլորովին մարսել չը կարողանան։ Հայերը խեղճ են»։

— Այդ գողերը, ընդհանրապէս, ո՞ր ազգութիւններից են։

— «Չերքէզներ, Ղզըլ-Բաշներ, Թուրքեր…»։

— Հայ գողեր կա՞ն։

— «Ո՛չ․ այս «Սահմանադրութիւն»ից առաջ մինակ Հայ Էշխիաներ կային»։

— Այսինքն՝ Հայ Յեղափոխականնե՞ր, «Հինչակնե՞ր»։

— «Այո՛․ հիմայ դրանցից ո՛չ մէկը մնացել է»։

— Ձեր ապրուստը ի՞նչպէս է։

— «Հիմայ լաւ է․ ռոճիկներս ամեն ամսու կստանանք․ եթէ այսպէս երթայ՝ վատ չի լինիլ…»։

— Գոհացուցի՞չ է ձեր ստացածը։

— «Ո՛չ․ շատ քիչ․ շատ դժուար ենք ապրում․ մանաւանդ մեզանից նրանք, որոնք բազմանդամ ընտանիքի տէր են․ խոստացել են աւելացնել…»։

— Դուք որ միշտ գիւղացիների հետ էք շփւում․ ի՞նչ էք կարծում, այս «Սահմանադրութիւն»ից հասարակութիւնը գո՞հ է։

— «Ծառերը անտարբեր են՝ այն պարզ պատճառով, որ նրանց դրութիւնը դարձեալ նոյնն է․ ի՛նչ մի առանձին փոփոխութիւն է եղած։ Այս «Սահմանադրութիւն»ից միայն Հայերը մի քիչ օգտուեցան․ նրանք հիմայ ազատ կերպով կարողանում են գիւղից գիւղ, քաղաքից քաղաք երթալ և իրենց վաճառքները ծախել, առուտուր անել։ Եւ հէնց դա էլ դժգոհութիւն է պատճառում հին մի կարգ Թուրքերի, որոնք առաջ օգտւում էին՝ ընկերակիցներ, միջնորդներ հանդիսանալով»։

— Դժգոհ Թուրքեր չը կա՞ն։

— «Թուրքերը աւելի դժգոհ են նրա համար, որ այս «Սահմանադրութիւն»ից յետոյ հարկերը է՛լ աւելի ծանրացան։ Առաջ ամեն տան ճանապարհների շինութեան համար 10—12 ղուրուշ կը տար, հիմայ 16—17 է տալիս»։

— Հողերի նեղութիւն ունի՞ այս կողմի ազգաբնակչութիւնը:

— «Հայերը՝ այո՛. իսկ Թուրքերը՝ ո՛չ»:

Կէս գիշերը անցել էր. մեր այցելուները մեկնեցան:

ԴԷՊԻ ԵՆԻ-ԽԱՆ. — Ուրբաթ, Մայիս 27, Յունիս 9. որպէսզի կարողանանք շուտ տեղ հասնել. առաւօտեան շատ վաղ ճանապարհ ընկանք: Իջնում ենք դարվար, մտնում տափարակ դաշտավայր, անցնում նորաբոյս ցորենի դաշտերի միջով. ծաղիկ, ծաղկունք կանաչութիւն համատարած է. կոյս բնութիւնն է, որ շնչում ենք:

Կէսօրուայ մօտերը հասանք Ենի-Խան. Թրքաբնակ եւ Հայաբնակ մի խառն աւան:

Քիչ կանգ առնելուց յետոյ՝ շարունակում ենք մեր ճանապարհը:

Ճանապարհի եզրը գտնուող արտերի մէջ լցուած են աղցան քաղող Հայ հարսներ, աղջիկներ, փոքրիկ երեխաներ՝ շղպիկ-ները ձեռքներին: Ամեն մէկի գոգնոցը աղցանով լիքն է: Այրարատեան նահանգի իրենց սեռակիցներից սրանք ոչնչով չեն տարբերւում, բացի իրենց տարազից. ամեն ինչ Հայկական է: Խօսեցնում ենք աղջիկներին, փոքրիկ երեխաներին, — Հայկական նոյն ամօթխածութիւնը, նոյն պարկեշտութիւնը:

— Աղջի, կաքաւ կա՞յ այս կողմերը, հարցնում է ընկեր Միհրանը:

— «Այո՛, քեռի, կայ, շա՛տ կայ». խմբովին պատասխանում են և մատով ցոյց տալիս թէ ո՛ր կողմը աւելի շատ կայ:

— Ձեզնէ ո՞վ կարող է մի երգ ասել:

Իրարու երես նայեցին, մէկը միւսին քաշեց առաջ, եւ փոքրիկներից մէկը ասաց, որ ինքը ամենից լաւը գիտէ:

— Երգի՛ր:

Սկսեցին «Մեր Հայրենիք»-ը, այնքա՛ն անուշ, սրտագեղ, որ հոգին ինքնին թրթռում էր:

Բնութիւնը, շրջանակը, տարբերը, անցեալի եւ ներկայի յիշատակները մի ամբողջութիւն էին կազմում:

Հայաստանն էր, որ ծծում էինք իր բոլոր գունաւորումներով:

Շարունակում ենք մեր ճանապարհը:

Անձրեւից գոյացած առուակներից, կազմուած նորա–

նոր խոխումներից շատ դժուարութեամբ է «կառք»ը անցնում․ ամեն անգամ իջնում՝ կողքերից կախւում ենք, որ առանց շըր-ջուելու մի կողմից միւսը անցնի։

Ճանապարհին պատահում ենք մի Թուրքի․ մարդը քարեր է բերում, խիճեր հաւաքում, հող կրում՝ առուակները, ճակ-ները, քանդուած տեղերը լցնում, փլած տեղերը վերանորո-գում, աշխատում է պակասութիւնները ուղղել, ուղին հարթ, հաւասար դարձնել։ Երեւում է, որ խեղճ բանուորը ինքն էլ չը գիտէ թէ ո՛ր մէկը անի․ յոգնել է, քրտինքի մէջ թաղուել, բարկացած երեւոյթ առել։

— Հարցնում ենք․ պիտի կարողանա՞ս այս ճանապարհը շինել․ կը յաջողի՞ս....։

Մարդը մեր հարցի շեշտը տեսնելով՝ ծիծաղով պատաս-խանեց․ «Այս շինուելու ճանապա՞րհ է․ մէն մենակ եմ․ մի կողմից շինում եմ, միւս կողմից՝ քանդւում․ դեռ չը շինած՝ քանդւում է....»։

Ճիշտ որ դա Թիւրքիան է․ նրա իրական պատկերը, մարմ-նացումը։ Շինի՛ր՝ ինչքան կուզես․ նա քանդւում է, եւ պիտի քանդուի....

ԱՍՏՂ-ԳԵՏԱԿ․— Կէսօրին հասնում ենք «Եըլդըզ»-գետա-կին․ որ սովորաբար կոչուելիս է եղել «Եըլդըզ»։ Սուլթան Համիդը յատուկ հրամանագրով «Եըլդըզ» բառը արգիլել է․ հրամայել է, որ «Եըլդըզ-Սու» ասեն։ Պատմում են առաս-պելներ՝ այդ գետակի անուանակոչութեան առթիւ՝ Համիդին տրուած տեղեկագրերի մասին։ Դրա համար «Եըլդըզ» բառը վախենալով էին արտասանում։

Գետակի ափին դրուած խանը, ուր իջնում ենք, գտնւում է մի ընդարձակ դաշտի մէջ․ ցորենի արտերը բարձրացել, կա-նաչութեան ծով են ներկայացնում։

Մի քիչ հեռու՝ երեւում է մի բարձրաբերձ լեռ։ Սեբաս-տացի Հայ պանդոկապետը կամացուկ ականջիս ասում է, թէ աւանդաբար ինքը լսել է, որ այնտեղ են թաղուած Միհրդատի գանձերը․ մօտը գտնուող միւս Հայերն էլ հաստատում են․ պատմում են թէ ինչպէս մի քանի անգամ փոքրիկ պեղումներ անելով՝ հին դրամներ եւ զարդեր են գտել։

Շրջապատւում ենք բաւականին մեծ թւով Թուրք գիւ-ղացիներով․ ամենքն էլ մի առանձին հետաքրքրութեամբ

Ստամբոլի անցքերից տեղեկութիւններ են ուզում:

Հարցնում եմ. «Մէշրութիէթ»ից գո՞հ էք:

— «Մէշրութիէթ»ը ի՞նչ անենք. ինչների՞ս է պէտք. մենք «Շէրիաթ» կուզենք. «Շէրիաթ»–ով է, որ մենք մեր գործը կարող ենք տեսնել. «Ինգիլիզ»ի «Մէշրութիէթ»ը մեզ պէտք չէ»:

Մեր զարմանքին ի պատասխան՝ մօտս գտնուող բաւականին խելահաս մի զաբթիէ հետեւեալ բացատրութիւնը տուեց. «Այս մարդիկը «Շէրիաթ» են ուզում. որովհետեւ իրենց դատարանական գործերը այդ կերպով աւելի արագ են կարգադըրւում. մինչդեռ հիմակուան դրութեամբ՝ դատը ձգձգւում է եւ վկաներ շատ են կանչւում: Հարուստներն էլ միշտ վկաներին կաշառում են եւ խեղճերը դատը կորցնում. այնպէս որ շատ անգամ մեղաւորը արդար է դուրս գալիս եւ՝ հակառակը»:

— «Շատ ճիշտ խօսեցիր». ասացին Թուրք գիւղացիները:

— «Մէկն էլ կայ», ծիծաղելով վրայ բերեց զաբթիէն, «Շէրիաթ»ով Իսլամները արտօնեալ դիրք ունին, քան Քրիստոնեաները. իրենց ուզածը կանեն....»:

— «Հարկաւ», պոռացին Թուրքերը. «Այս պետութիւնը մերը չէ՞. մենք մեր օրէնքով պիտի երթանք...»:

Թողեցինք մեր խօսակիցներին:

Բարձրացանք «Աստղ–Գետակ»–ի զառիվերը: Բլրակներով զոգաւորուած տարափոսիկներից դուրս գալու վրայ էինք, երբ նշմարեցինք ձիաւորների բազմութիւնը. ընկերներն էին, որ դրօշակները ձեռքներին, երգելով, դէպի մեզ էին գալիս՝ դիմաւորելու: Ձիաւորների թիւը 150–ից անցնում էր: Իջնում ենք. կանգնում. ողջագուրւում: Ապա միատեղ շարունակում մեր ճանապարհը. ձիաւորների թիւը երթալով՝ աւելանում է. հասնում ենք Սեբաստիայի յայտնի «Ուռեստան»ը. այստեղ է, որ Սեբաստացին իր հիւրերին կը դիմաւորէ, կիջեցնէ հանգըստանալու՝ սովորաբար:

Քաշւում ենք «Ուռեստան»–ը. ուրախութիւնը, աղաղակը սահման չունի... Ընկեր Բալուցեանը ասում է. «Ախր Հայաստանումն ենք է՛լի...»:

Ամեն ինչ Հայկական է. ճշմարիտ որ Հայաստանումն ենք: Նստում ենք. վայելում ընկերների բերած «Հայաստանի նախաճաշիկ»*ը: Երկու ընկեր կարդում են իրենց նախապէս պատ–*

բացուած Ուղերձը: Երգերը իրարու են յաջորդում անընդհատ:

Պատմական այնքան դէմքեր կան, որ համբոյրները յաճախ արտասուքով են շաղախում....
Ընկերական ոգին իր ամենավառ աստիճանի մէջն է:

Դրանք անմոռանալի վայրկեաններ են. գործիչին նոր կեանք, խանդ, հոգի, կորով պարգեւող...:

Վերջացրինք. այժմ ճանապարհւում ենք դէպի քաղաք, որ շատ հեռու չէ:

Ձիաւորները շարւում են. մեր «Կառք»ը ամենից առաջ են դնում, շրջապատում: Բայց ո՞ր ձիաւորը ամենից առաջ պիտի ընկնի. ո՞ր «եայլ»ին. մէկ չէ, տասը չէ. ահագին շարան... Շարժւում ենք թէ չէ, սկսւում է մրցումը: Մի կառապանի համար ամօթ է յետ մնալը. դա պարտութեան նշան է. այդ է սովորութիւնը, արմատացած հասկացողութիւնը. ուստի քաջը ամենից առաջ պիտի ընկնի. նոյնը եւ ձիաւորների համար: Սկսւում է մի խօլ արշաւանք, երգախառն գոռիւն–գոչիւն. փոշու ամպեր են բարձրանում եւ արշաւը չի դադարում, հետզհետէ սաստկանում է:

Մօտեցանք քաղաքի եզրին. դաշտի մէջ փռուած Սեբաստիան երեւում է: Դեռ քառորդ ժամ պէտք էր քաղաքը մտնելու, երբ ճանապարհի եզրի վրայ գտնւող գեղազուարճ Հովանոցից (Քէօշկ) դէպի մեզ եկան մի քանի Թուրք Պատգամաւորներ եւ Հովանոցի մէջ եղողների կողմից խնդրեցին իջնել, իրենց պատուել, մի բաժակ սուրճ առնել: Երեւում էր. Հովանոցի պատշգամբների վրայ բաւականին մեծ բազմութիւն էր լցուած, Թրքական խայտաբղէտ զգեստներով:

Իջանք. ընկերներ Մուրատի, Զաւգաւըրդեանի, Գաբիկեանի հետ միասին բարձրացանք դէպի Հովանոցը: Սանդուխների առաջին աստիճանի վրայ կանգնած սպասում էին՝ Եւրոպական հանդերձներ կրող՝ մի քանի հոգի. բարեւեցինք. վեր ելանք: Այդտեղ են Սեբաստիայի Թուրք հասարակութեան կրօնական, աշխարհական բոլոր երեւելիները, պետական եւ զինուորական պաշտօնեաներով միասին: Իտտիհատական պարագլուխները աչքի են ընկնում՝ իրենց կապած փողպատներով. կարգադրութիւններ անողը, տեղեր ցոյց տուողը, հիւրամեծարական խօսքեր ասողը նրանք են:

Արեւելեան սովորութեան համեմատ՝ փոխադարձ ծա–

նօթութիւններ է տրւում․ բարեւանքների է՛ն նուրբ փոխանակութիւններն են կատարւում, ո՛չ մի կասկած չեն ուզում թողնել, որ իրենք երկրի տէրն են եւ հիւրասիրում են «Երկրի ազատութեան համար կռուող» մի հիւրի․․․ Թուրքերին չը ճանաչողը՝ պիտի կարծէր, որ դրանք հրեշտակներ են՝ մարդկային կերպարանքով․․․ Եւ խեղճ Եւրոպացիները որքա՛ն խաբուել են Թրքական այդ արտաքին մեծարանքներից, որոնց տակը, սակայն, նենգութեամբ եւ թոյնով է լցուած։

Այդտեղ է յայտնի Էշրաֆ Նուրի-Բէյը, որ 1896-ին Սեբաստիոյ կոտորածն էր կազմակերպել․ նա այդ կողմերը ամեն ինչ է։ Արիւնոտ աչքեր, բարակ, երկայն հասակ, ցանցառ մօրուք, այտերը դուրս ընկած՝ դեղնած գոյնով։ «Սամբուլ»ի ամենաշողոքորթ յարգանքի ձեւերն է, որ թափում է․ աւելի ճառում է, քան խօսում։

Այդտեղ է նաեւ Շէյխ Սէյֆէտտինը, իր ահագին փաթթոցով․ նրա մէկ խօսքը երկու չէ՝ Սեբաստիոյ շրջանի բոլոր մեծ ու փոքր Մահմէդականների համար։ Իսկական Թուրք է․ հաստ, կարճահասակ, թարթիչները երկայն, յօնքերը թաւ, աչքի սպիտակուցները կարմիր երակներով ծածկուած․ մարմնացած ճիւք է․ անգթութեան, մոլեռանդութեան բոլոր նշանները իր վրայ են։

Բազմութեան մէջ պատւոյ տեղ ունին Իտտիհատականները․ իրենց երկու Ակումբների Վարչութեան անդամները այդտեղ են։ Կան բաւականին թուով կալուածատէրեր, մի քանի սպաներ եւ պետական ծառայողներ։ Փաթթոցաւորներից մէկը մօտենում է եւ ասում, որ ինքը Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան է․․․․։

— «Վերջապէս, արիք-չարիք այս երկրի մէջ «Սահմանադրութիւն» բերեցիք․ լա՛ւ արեցիք․ պատճառը դուք եղաք․ առաջին անգամ «Հինչակ»ները սկսեցին․ լա՛ւ արեցին․ ձեր խօսքը քալեցրիք․ աղէ՛կ եղաւ․ Աստուած բարին անէ․․․ բարի՛ եկաք, մեր աչքի, մեր գլխի վրայ․ հիմայ երջանիկ ենք․ Հայ, Թուրք չը կայ․ բոլորս էլ մէկ Հայրենիքի զաւակ՝ ՕՍՄԱՆՑԻՆԵՐ ենք․ Թիւրիմացութիւնները վերջացան։․․»․ ասում է Շէյխ Սէյֆէտտինը։

Դեռ պատասխանս չառած՝ այս անգամ Նուրի-Բէյն է, որ բերանը բացեց։ Նախ սկսեց մեծաշուինդ ածականներ տալ

Էնվէրին, Նիազիին, Թալաթին եւ, մանաւանդ, Մուստաֆա Նէճիպին, «Հայրենիքի այդ անձնուէր զաւակներին»· նրանք էին, որ «արիւն թափեցին, Հայերին էլ ազատեցին, Թուրքերին էլ, եւ բոլորին եղբայրացրին· Աստուած ձեզ բոլորիդ էլ երկար կեանք, արեւշատութիւն տայ...»· ու Թրքական փառաբանութիւններ «Հինչակ»ների հասցէին:

Խօսքս Շէյխին դարձնելով ասացի·— Ես էլ կարծում եմ, որ շատ գոհ պիտի լինիք ներկայ «Սահմանադրութիւն»ից· դժգոհելու որ եւ է առիթ ունի՞ք:

— «Չէ՛, երբէ՛ք, շատ գոհ ենք· հիմայ մենք էլ Եւրոպացիների պէս Պարլամենտ ունինք· ամբողջ ազգը մէկ եղաւ· էլ Եւրոպացիները չեն կարող մեր գործերին խառնուել· մենք մեր տանը տէրը եղանք: Աստուած շատ երկար կեանք տայ մեր «Սուրբ Կուսակցութեան եւ ձեզ նման բոլոր անձնուէրներին»:

— Այս «Սահմանադրութիւն»ը ապահովութիւն բերե՞ց· Դուք այստեղ ապահո՞վ էք: Ես Ստամբոլից այստեղ եկայ՝ առանց նեղութեան:

— «Այո՛, շա՛տ ապահով· հիմայ Հայերի հետ եղբօր պէս կապրենք· Թող կուրանայ Համիտի աչքը, որ մեզի իբարու չը տար, չը կռուացնէր· մենք ի՞նչ ունէինք բաժանելու· հիմայ ամենքս էլ մէկ ենք:

— Հարկաւ՝ Պարլամենտից էլ գոհ էք:

— «Ինչո՞ւ չէ· քանի որ երկրի մեծամեծները ամենքը միատեղ են եկել եւ միասին մտածում, խորհում Տէրութեան յառաջադիմութեան համար՝ մենք ինչո՞ւ գոհ եւ շնորհակալ չը պիտի լինենք· մենք միշտ հնազանդ ենք...»:

— Ասում էք թէ Հայերի հետ եղբայր էք· արդեօք Սուլթան Համիտի բռնութեան ժամանակ՝ այս տեղերն էլ Հայերի գոյքերը, հողերը յափշտակող, գրաւող եղա՞ւ: Եթէ եղած է, վերադարձրե՞լ են, քանի որ եղբայրութիւն, հաւասարութիւն, արդարութիւն կայ հիմայ:

— «Միայն մի քանի «Մուհաճիր» վատ ընթացքի մէջ գտնուեցան մեր հարեւան Հայերի դէմ· մի քիչ այդ Ջերքէզները նեղութիւն տուեցին· բայց շուտով առաջը առանք: Ստամբուլէն երբ հրաման գայ՝ բոլոր Հայերի հողերը պիտի առնենք եւ յետ տանք...»:

Եւ այս ասողը Նուրի-Բէյը ինքն էր․ Տաճկական, Արեւելեան տմարդութեան այդ մարմնացեալ տիպը․ ինքն էր, որ ջարդերն էր կազմակերպել, շրջակայ Չերքէզներին էր հրաւիրել կողոպուտի եւ նրանց բոլորին հրահանգել էր գրաւել, յափշտակել՝ ինչ կարող էին։ Դեռ Հայերից յափըշտակուած գոյքերը իր տանն էին․ իր բարեկամներն էին, որ հողերի բռնագրաւումներ էին արել ամենից շատ։ Եւ հիմայ, ո՛վ Թրքական բարք ու վարք, անմեղ հրեշտակ էր ձեւանում, առաջին կարգի մարդասէր։ Կեղծաւորութիւնը, շողոքորթութիւնը, նենգամտութիւնը, խարդախութիւնը իր մէջ մարմնացած էր։

Դժուարանում էի պժգանքս բռնել։

— «Լսած ենք, որ Ստամբոլի մէջ փախստական շատ Ռուսներ են եկել, ճի՞շտ է»․ հարցնում է մի Իտտիհատական՝ մի առանձին հրճուանքով՝ նենգամտութեամբ շաղախուած։

— Այո՛․ շատ կան, մի քանի հարիւր հոգի․ Վրացիներ էլ կան։

Տիրեց ընդհանուր ուրախութիւն․ իրարու երես նայեցան, մէկ մէկու աչքով արեցին․ փսփսացին, ակնարկներ փոխանակեցին։

Դա Արեւելեան ժողովրդների, մանաւանդ Թուրքերի սովորական լեզուներից մէկն է՝ մտքի հաղորդակցութիւն պահելու։

Զգացմունքների, մտածմունքների համանմանութիւնը ամենքին միանման տողորել էր։

— «Քանի որ կարգը եկել է․ մեր Կառավարութիւնը ինչո՞ւ նրանց չի գործածում, միջոց չի տալիս, չի ուղարկում, որ իրենց երկրի մեծամեծներին կոտորեն, օդը հանեն, որ այդ Տէրութիւնը կործանուի, քայքայուի, կտոր կտոր լինի, հոտն ու նմոյշը չը մնայ աշխարհի վրայ»․— հարցընում է կարմրած աչքերով մի Իտտիհատական, որ ջղային լինելուց աւելի՝ ջղագար էր երեւում։

— Բայց Օսմանեան Պետութիւնը հիմայ՝ Ռուսաստանին բարեկամ է, և չա՛տ մօտիկ. չէ՞ որ «Թանին»ը մի շարք յօդուածներով, դեռ նորերս, սկսեց ցոյց տալ, որ Թիւրքիայի շահը պահանջում է Ռուսաստանի հետ միշտ բարեկամ մնալ, նրա հետ դաշնադրութիւն կնքել: Քանի որ կառավարութիւնը այդպիսի քաղաքականութիւն ունի, ինչո՞ւ, ուրեմն, ոչ-բարեկամական այդպիսի ձեռնարկների պատճառ դառնայ:

Նուրի–Բէյը երկու ձեռքերը աջ ու ձախ պարզեց, որ ուրիշները բերան չը բանան. խօսքը ինքն առաւ.— «Թանին»–ի ասածը բնաւ սրանց չէր. նա ուզում է Ռուսներին անուշի կապել, քնացնել, մինչեւ որ ժամանակը գայ: Ռուսը մեր ժառանգական թշնամին է, մենք ի՞նչպէս կարող ենք նրա հետ բարեկամ լինել, դաշնադրութիւն կնքել. մեր Պետութիւնը փլցնողը, մեզ այսօրին հասցնողը նա է եղել»:

— «Թանին»–ի գրածը անհատական կարծիք էր. ոչ մէկը իրեն համակարծիք եղաւ: Օսմանի Տունի մտքովն անգամ չի կարող անցնել Ռուսիայի հետ բարեկամութիւն անել: Մենք Ռուսիայի թշնամի պետութիւնների հետ համաձայնութիւն պիտի կայացնենք, որ այդ երկիրը կործանենք. մինչեւ որ Ռուսիան չը քայքայուի, չը կործանուի, մենք խաղաղութիւն, ապահովութիւն չենք կարող գտնել». ասաց քաղաքապետութեան առաջին դրագիրը, որ Թուրք կարմիր ազգայնականի համբաւ ունի:

— Արդէն Ռուսիայի մէջ այլեւս ոյժ չի մնացել, յարեց ուրիշ Իտտիհատական, մի առանձին ամբարհաւաճութեամբ, եթէ մենք մի քիչ էլ ոյժ հաւաքենք, մեր զինուորականութիւնը, նաւատորմիղը ուժեղացնենք՝ մենք մինակ կարող կը լինենք այս անգամ մի լաւ դաս տալ: Էլ ի՛նչ շահ այն պետութիւնից, որի հպատակները փախչում, մեր երկիրն են գալիս՝ ազատութիւն վայելելու համար: Երբ Ռուսները այդպէս են. անդին էլ ի՞նչ կայ. մնում են Հայերը եւ Թաթարները, որոնք մեր բարեկամներն են: Հայերը այնտեղ ամենից աւելի ճնշուած են. իրենց կրօնին անգամ դիպչում են. մինչդեռ մեր երկրում ապահով են եւ ամեն ազատութիւն վայելում են: Կովկասի Հայերը այդ չե՞ն տեսնում»:

— Բայց կարծո՞ւմ էք թէ Թաթարները ձեզ հետ կը լինեն․ դա աւելի քան կասկածելի է․ որովհետեւ իմ դիտածովս եւ տեսածովս՝ Թաթարները Ռուսներին աւելի են համակրում քան Պարսիկներին։

— «Ինչպէս չէ՛, բացագանչեց Շէյխ-Սէյֆէտտինը․ Պարսիկը տարբեր, Օսմանցին տարբեր։ Ամեն ժամանակ Չերքէզները գալիս, մեզ լուր են բերում, ասում են, որ Թաթարները առաջին նշանին են սպասում․ մեր զօրքերը սահմանին հասած-չը հասած՝ նրանք ոտքի պիտի ելնեն…»։

Խոտիհատականները գլխով հաւանութեան նշաններ արեցին, մի քանի անգամ՝ «Հարկաւ», «Այդպէս է» ձայնեցին մի առանձին ոգեւորութեամբ։

Բաւականին ժամանակ անցել էր․ մթնոլորտը դարձել էր հեղձուցիչ․ տեղից վեր կացայ, ասացի, որ դեռ առիթ պիտի ունենամ իրենց հետ տեսնուելու եւ երկար խօսակցութիւններ անելու։

Երբ բոլորը ոտքի ելած՝ փոխադարձ մնա՛ք բարեւի արարողութիւններն էին տեղի ունենում․ Շէյխ Սէյֆէտտինը դարձաւ Մուրատին, ասաց․ «էֆէնդի, երեւում է, որ ձեր ծննդութիւնը մեր երկրիցն է․ Սերաստացու կը նմանիս․ մեր ջուրն ես խմել, ինչո՞ւ ես Մոսկովի գլխարկ դրել․ հիմայ բոլորս էլ Օսմանցիներ ենք․ ՓԷՍ պիտի դնենք, «չապղայ»ի տակը մոսկոֆ կայ…»։

Բոլորս էլ խնդացինք․ ի հարկէ ամեն մէկը իր տեսակէտով։

Սանդուխներից վար իջնելիս՝ մեզ ընկերացող Խոտիհատականներից մէկը ասում է․ «Ռուս նիհիլիստները ինչո՞ւ այս կողմերը չեն գալիս․ արդեօք նրանց լաւ նայո՞ւմ են․ Ռուս դեսպանը ռանձգութիւններ չի՞ անում՝ ձերբակալել տալու»։

Մի քիչ սառը ջուր է լցւում իրենց վրայ, երբ լսում են որ փախստականները իրենց կարծած նիհիլիստները չեն, այլ Սօցիալիստներ, որոնք իրենց ենթադրած զարկող, թափող, կործանող մարդիկը լինելուց շա՛տ հեռու են։

— «Ա՛խ, մի կործանուէ՛ր, փշրուէ՛ր, կոտո՛ր կոտո՛ր

լինէր, հետքը չը մնար այդ «բարբարոս պետութեան»․ բացականչում է մի ուրիշը։

Հեռացանք։

— «Մուստաֆա Նէճիպը լաւ պատրաստութիւն է տեսել․ լաւ կազմակերպել, էլ փափուկ բարձ չը մնաց, որ գլխատակը չը դնէին, քնացնելու համար»․ խնդալով ասաց ընկեր Մուրատը։

— Բայց հէնց այդ փափուկ բարձերն են, որ իմ մէջ աւելի մեծ կասկածներ են ներշնչում․․․։

Ժողովրդի այդ ահագին բազմութեամբ միատեղ քաղաք մտնելը՝ ցոյցից աւելի մի բան պիտի ենթադրէր․ ուստի խնդրեցի ընկերներին եւ բազմութեան, որ առանձին խումբերով ցրուեն, երթան եւ մեր ընթերցարանի մէջ հաւաքուեն։ Այդպէս էլ եղաւ։

Բազմութեան հոսանքը ճեղքելով՝ հասանք մեր «ԱՐՇԱԼՈՅՍ» ընդարձակ Ընթերցարան-Ակումբը, որ քաղաքի ամենաբանուկ փողոցների մէջտեղն էր գտնւում։

Ներսը, դուրսը լցուած է ահագին բազմութիւն։

Պատշգամբի վրայից շնորհակալութիւն յայտնելով մեր Կուսակցութեան հանդէպ ցոյց տուած այդ զգացմունքների համար, յայտարարեցի, որ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը մինչեւ վերջ ժողովրդի կողքին պիտի կանգնի, մինչեւ որ նրա արդար իրաւունքներն ու պահանջները իրականութիւն դառնեն, մարմնանան։

Առանձնացանք մեզ համար պերճօրէն կահաւորուած սենեակները։

Ժողովրդից, ընկերներից խումբ խումբ նորից մտնում են՝ բարի գալուստ մաղթելու։

Այսպէս տեւեց, մինչեւ մութը ընկաւ։

Շատ ուշ՝ ընկերները ցրուեցան։

Մեր Ընթերցարան-Ակումբը բաղկանում էր 4 մեծ սենեակներից եւ մի ընդարձակ սրահից։ Սրահի վերի կողմը բռնել էր բեմը՝ թատերական ներկայացումների յարմարցուած։ Սենեակների եւ սրահի պատերը զարդարուած էին

մեր նահատակ ընկերների եւ մարտիկների մեծ նկարներով. աչքի են ընկնում մանաւորապէս հրոսակային խմբերի խըմբանկարները: Ամեն ինչ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեանութիւն է բուրում:

Դա էլ մեր օթեւանն էր:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.— Շաբաթ, Մայիս 28, Յունիս 10: Հասարակութեան ամեն խաւերից այցելուներ են գալիս. ամենքը մի մի բան ունին ասելիք օրուան խնդիրների եւ երկրի անապահով կացութեան մասին:

Ընդհանուր տպաւորութիւնն է, որ մեծամասնութիւնը ընկճուած տրամադրութիւն ունի. բոլորն էլ կասկած են յայտնում դէպի Իտտիհատը: Իրենց գլխաւոր փաստն այն է, որ քաղաքի եւ գաւառի մէջ եղող բոլոր հայակերճերը Իտտիհատական պարագլուխներ են դարձել...:

ԱՌԱՋԻՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ.— «Սահմանադրութեան» առաջին օրերին՝ մեր ընկերների թիւը հասնում էր 1500-ի: Ճանապարհները բացուելուն պատճառով՝ շատերը սկսել էին արտասահման դուրս գալ. բաւականաչափ էլ ցըրուել էին շրջակայ գիւղերը՝ մանաւորապէս արհեստաւորները, որոնք սովորութիւն ունին գարնան եւ ամռան եղանակներին ուրիշ կողմեր երթալ եւ այնտեղերը բանեցնել իրենց արհեստները.

Ներկայ եղող ընկերների թիւը 600-ից անցնում է: Բոլորն էլ կայտառ, քաջալանջ, բարձրահասակ երիտասարդներ են:

Երեւում է, կուսակցական կրթութիւնը դեռ պէտք եղած կերպով ամենքին հաւասարապէս չի տոգորել, մանաւանդ նորեկներին:

Որոշւում է շարունակական դասախօսութիւններ կազմակերպել առանձին ընկերների համար. իսկ հասարակութեան համար Հրապարակային ժողովներ:

Ժողովի գլխաւոր զբաղումներից մէկն է դառնում ինքնապաշտպանութեան խնդիրը:

Ընկերների մէջ աչքի ընկնող մտաւորականներն են՝ Յակոբ

Բալուցեան, Տիգրան Շիրինեան, Միհրան Զուգասըզեան, Կարապետ Գաբրիկեան, Միհրան Ղօնչագիւլեան, Մանուկ Բիւրքճեան, Թորոս Տիւչիւկեան, Յակոբ Հացագործեան, Թադէոս Աֆարեան, Պետրոս Մերկերեան, Ղազարոս Ղազարեան, Մահտեսի Գրիգոր Ղարամանուկեան, եւայլն, եւլն. — բոլորն էլ պատմական դէմքեր. եւ մեր Կուսակցութեան՝ Փոքր-Հայքի շարժումների մէջ որոշ դեր խաղացողներ:

Այդտեղ է եւ Մարզուանի մեր դերասան՝ ընկեր Անդրանիկ Զկամեանը:

Միլֆրտի մեր Մասնաճիւղի անդամներից, երկիր վերադարձող՝ ընկեր Փափազեանը եւ ընկեր Սեննքերիմը նոյնպէս այդտեղ են:

Մեր գրառումները վերջացնելուց յետոյ՝ ընկերները ցրւում են՝ իւրաքանչիւրը իր առանձնած պարտականութիւնը կատարելու խոստումով:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ. — *Իր խոհուն եւ լուրջ դէմքով՝ աչքի ընկնող ընկերներից մէկն է՝* ՅԱԿՈԲ ԲԱԼՈՒՑԵԱՆ: *Երկար տարիների փորձուած՝ ներհուն ուսուցիչ է: Սեբաստիայի բոլոր շրջաններում ունի իր աշակերտները՝ բոլորն էլ* Յեղափոխական *ոգով կրթուած: Մեր հին Մատենագրութեան հետ շատ լաւ ծանօթ է. աշխարհաբառի է վերածել Ագաթանգեղոսը՝ մի խորագնին յառաջաբանով: Որպէս ուսուցիչ՝ օրինակելի է, անխոնջ, ջանասէր. հմուտ հայկաբան եւ տաղաչափ. ունի բաւականին թուով գրուածներ, որոնց մէջ յայտնի տեղ են բռնում Հայկական տաղաչափութեան տեսութիւնը եւ մի քանի դասագրքեր: Ընկեր Բալուցեանը, ի թիւս այլ տեղերի, ուսուցիչ է եղած՝ Հերէք, Նիքսար, Զիլէ, Սեբաստիա, եւայլն, եւայլն: Մեր Յեղափոխական-Կուսակցական կեանքի առաջին ռահվիրաներիցն է:*

Ընկեր Բալուցեանը, նաեւ, Սեբաստիայի Երեսփոխանական ժողովի ատենապետն է:

Ընկեր ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲՐԻԿԵԱՆԸ *ճգնազգեաց, մաքուր մի մարդ է. Սպինոզայի արժանաւոր աշակերտ, մի տեսակ Փարամազ: Կեանքը ուսումնասիրութեան, աշխատանքի համար միջոց է նկատել. ուստի անդուլ անդադար աշխատել է՝ երկար տարիների ընթացքում: Ինքը Սեբաստիայի մեր Մասնաճիւղի հիմնադիրներից մէկն է. իր անմիջական օգնութեամբն են*

1.– Ս. Սապահ-Գիւլեան	5.– Կարապետ Գաշիկեան	9.– Մահտեսի Մանուկ Գրիգոր Ղարամանուկեան
2.– Տիգրան Շիրինեան	6.– Յակոբ Հացագործեան	10.– Պօղոս Պասմաճեան
3.– Յակոբ Բալուցեան	7.– Թորոս Տիւճիւկեան	11.– Միհրան Ղօնչագիւլեան
4.– Անդրանիկ Չկամեան	8.– Մահտեսի Մանուկ Քիւրքճեան	

Սեբաստիոյ Մասնաճիւղի Վարչութեան Անդամները, 1911-ին։

կազմուել ե՛ւ շրջակայ գիւղերի մեր Մասնաճիւղերը՝ դեռ հին՝ առաջին օրերից սկսած: Սեբաստիայի գաւառաբարբառը ուսումնասիրողներից առաջինն է. ահագին ծանօթութիւն ունի այդ մասին. գրաւոր ամեն տեղեկութիւններ հաւաքած՝ կազմած է. Հայաստանի մէջ գտնուած բոլոր ծաղիկները մանրամասնօրէն ուսումնասիրել է գիտական մեթոտով. Իզմիրլեան առաջին մրցանակն էլ շահած: Նրա ծաղկերանութիւնը պատիւ կարող է բերել Եւրոպական գրականութեան, իսկ Հայոցս մէջ նմանը չը կայ, եզակի է, իր նախընթացը չունի: Սեբաստիայի ուսուցիչների մէջ ամենից յարգուած, ժողովրդական, սիրուած դէմքն է:

Բայց ընկեր Գարիկեանը է՛լ աւելի մեծ տեղ ունի բռնած մեր Նորագոյն կեանքի մէջ՝ իր Յեղափոխական գործունէութեամբ. ո՛չ մի շարժում տեղի չի ունեցել առանց նրա ուղղակի մասնակցութեանը: Ձերբակալուել, երկար տարիներ բանտերի մէջն է պահուել՝ ամեն տեսակ խոշտանգումների ենթարկուելով. սակայն միշտ գաղտնապահ, բերանից մի խօսք անգամ դուրս չի թողել:

Երբ երկար տարիներ բանտը մնալուց յետոյ՝ ներման հրաման է գալիս, բանտապետը Համիտի հրովարտակը կարդալուց յետոյ՝ ասում է. «Հիմայ գնացէ՛ք, աղօթող եղէք Վեհափառի արեւշատութեան համար. ձեզ կեանք է շնորհում նա, որի դէմ դուք դաւադրեցիք. միշտ յիշեցէք, որ այսուհետեւ ձեր կեանքը Նորին Վեհափառութեանն էք պարտական՝ ինչքան որ ապրիք...»:

Ընկեր Գարիկեանը անկարող լինելով իր բարկութիւնը զսպել, պատասխանում է, որ ինքը այդպիսի մի շան համար երբէք չի աղօթիլ ու սկսում է բարձրաձայն յիշոցներ՝ Համիտի հասցէին... Ընկերոջը նորից բանտն են վերադարձնում եւ նորանոր չարչարանքների մատնում:

Մի ամբողջ, կենդանի գրականութիւն է ընկեր Գարիկեանը. մեր բոլոր դիւանաթղթերը, մեր արխիւը իր ամբողջութեամբ իր մօտն է՝ պահել է մասունքի նման, հակառակ ամեն տանջանքների եւ խուզարկութիւնների:

Շմաւոնի, Լեւոնի, նահատակուող, մեռնող բոլոր ընկերների շունչը, ոգին այդ թղթերի կոյտերի մէջն են՝ հին կնիքներն անգամ: Դեղնած, փոշիացած թղթերը նորերով է փակ-

ցրրել եւ վրան արտագր-՜լ՝ այլեւս բնագրի մէջ չը կարդացուելիքները: Նոյնութեամբ պահուած է, ձեռագիր, Ներքին Կանոնագիրը: Մեր Հրոսակային խմբերի ամբողջական պատմութիւնը թղթերի այդ դէզի մէջն է, որ ուսն առել՝ ընթերցարան էր բերել:

Ամենից հետաքրքրականն է Շմաւոնի ձեռքով գրուած, Հարց ու պատասխանի ձեւով գրուած հետեւեալ տողերը:

— Ի՞նչ է Հայկական Դատի էութիւնը:

— Սուրբ եւ Նուիրական:

— Ինչո՞ւ համար:

— Որովհետեւ Հայ Ազգի ազատութիւն, Հայաստանի անկախութիւն կայ:

— Ո՞վ է մեր Դատին արգելքը. ո՞վ է մեր սուրբ եւ նուիրական իրաւունքը ոտնակոխողը:

— Թուրք բռնապետութիւնը:

— Ի՞նչ պիտի անել ազատուելու համար:

— Յեղափոխութիւն:

— Ոյժ ունե՞նք:

— Այո՛:

— Ո՞ւր է այդ ոյժը:

— Մեր ժողովրդի մէջ:

— Մենք Յեղափոխականներս մեծամասնութիւն ենք թէ՞ փոքրամասնութիւն:

— Հիմայ փոքրամասնութիւն ենք. բայց երբ մեր ընդգրրկած գաղափարները պրօպագանդա անենք, ժողովրդին զարթեցնենք, գիտակցութեան բերենք, կազմակերպենք. այն ժամանակ մենք մեծամասնութիւն կը կազմենք:

— Ի՞նչպէս Յեղափոխութիւն պիտի անենք:

— Նախ փոքր շարժումներով, Հրոսակային խմբերի գործունէութեամբ, մատնիչներին, դաւաճաններին տերրորի ենթարկելով. յետոյ՝ երբ Յեղափոխական գաղափարը կը տարածուի, բոլոր ժողովուրդը կը կազմակերպուի, կը զինուի եւ երբ յարմար առիթ կը ներկայանայ, այն ժամանակ Ընդհանուր Ապստամբութիւն:

Տակտիկական բոլոր խնդիրները, Հրոսակային խմբերի անելիքները, Յեղափոխականների վերաբերմունքը դէպի Թուրք պետութիւնը եւ Թուրք ու օտար ժողովուրդները՝ բոլորն էլ

հարց ու պատասխանի ձեւով ժողովրդականացուած էր: Ինչոր շատ մեծ դիւրութիւն էր տուել պրօպագանդայի՝ այդ օրերի մեր ժողովրդի մտաւոր պատրաստութիւնը աչքի առաջ ունենալով:

Այդ բոլոր գրութիւնները քառորդ դարուց աւելի հնութիւն ունէին:

Այսպիսով, ընկեր Գաբիկեանը ներկայանում էր մեր Կուսակցութեան այդ շրջանի աւանդապահը, կուսակցական հոգին:

Ընկեր ՏԻԳՐԱՆ ՇԻՐԻՆԵԱՆԸ խորագէտ, նրբամիտ քաղաքագէտի մի տիպ է. հէնց դրա համար էլ յաճախ «Սեբաստիոյ Բիսմարկ» անունն են տալիս իրեն: Ազգային եւ կառավարութեան հետ ունեցած «յարաբերական» բոլոր խնդիրները նրա ձեռքովն են կատարւում եւ իր գրչի տակից դուրս գալիս: Մի բան գրելուց, մի գործի սկսելուց առաջ՝ ժամերով կը խորհի, կը կշռի, կը վերլուծի, հետեւանքի, գալիքի մէջ կը թափանցի եւ ապա կսկսի: Վերջին աստիճանի անվրդով, հանդարտ, մեղմ, փափուկ բնաւորութեան տէր է: Ժողովուրդը իր յատկութիւնների պատճառով՝ անսահման վստահութիւն ունի իր կորովամտութեան վրայ. ամենքն էլ համոզուած են, որ Տիգրանը սկսած գործի տակից դուրս կը գայ: Ամեն ոք պատկառանք ունի իր հանդէպ: Իր այդ յատկութիւններին միացրած է անշահախնդրութիւն. իր տեղը եթէ ուրիշները լինէին, կարող էին ամեն անսուրբ միջոցներով դրամ, հարստութիւն դիզել. բայց Տիգրանը այդ ձգտումից շատ հեռու է. ձեռքը բաց, զոհող կուսակցական է. հաւատարիմ՝ հասարակական բոլոր գործերի մէջ:

Սեբաստիայի եւ իր շրջանի մեր Մասնաճիւղերի թելադրող, հրահանգող ոգին է. ծայր աստիճան սիրուած իր ընկերներից: Այնքան բազմակողմանի տեղեկութիւններ ունի, որ կարծէք թէ կենդանի հանրագիտակ է. եւ այդ բոլորը ձեռք է բերել անձնական աշխատութեամբ:

Քաղաքական ժողովի, գրեթէ, մշտական քարտուղարն է եւ ազգային բոլոր գործերի մէջ մասնաւոր ձեռնհասութիւն ու հեղինակութիւն ունեցողի համբաւ է վայելում:

Ընկեր ԹՈՐՈՍ ՏԻՒՇԻԿԵԱՆԸ երկար տարիների կուսակ-

ցական աշխատող է․ կեանքի բոլոր դժուարութիւններից անցել է․ այնքան չար ու բարի է տեսել, որ կատարեալ յոռետես է դարձել․ բնաւ չի հաւատում, ո՛չ «Սահմանադրութեան», ո՛չ էլ Թուրքերի խօսքերին ու նրանց տուած խոստումներին․ իր նշանաբանն է զգուշութի՛ւն, չը խաբուե՛լ։ Միայն մի բանի է հաւատում․— Ինքնապաշտպանութեան, կազմակերպութեան, մինչեւ որ անջատուենք, զատուենք․ հաւատացած է, որ Թուրքերի հետ խառն՝ մի պետութեան մէջ չենք կարող ապրել։ Հարիւրաւոր օրինակներ է բերում անցեալ եւ ներկայ օրերից, իր մտածմունքները արդարացնելու համար։ Ընկեր Տիւշիւկեանը ջերմ հաւատացեալ է, իսկական Հայ․ իր ուշքն ու միտքը Հայ Ազգի փրկութիւնը, Հայաստանի ազատութիւնն է։

Վերջերս Կովկասից մի քանի իմաստակներ գալով՝ այնպէս էին քարոզել, հասկացրել, որ Սօցիալիզմը ջնջում է թէ Հայրենիքի եւ թէ Ազգութեան գաղափարը։ Դա իր սրտին դիպել էր․ ուզում էր լաւծները ճշտել։

Մի օր մօտս եղող բոլոր ընկերներին խնդրեց բացակայել, ասելով որ առանձին խօսք ունի։

Երկուսս մենակ ենք։ Ընկերը լաւ զննելուց յետոյ, որ դրան ճեղքերից մեզ լսող չի լինիլ․ մի առանձին աղաչական ձեւ առնելով՝ ձեռքս բռնեց եւ անթարթ կերպով աչքերիս նայելով՝ ասաց․

— «Երդուի՛ր, որ ինձ ճիշդը, ուղիղը պիտի ասես, առանց թաքցնելու»։

— Խօսք եմ տալիս՝ յանուն ինչի եւ որի, որ կուզես։

— «Յանուն Հայաստանի»։

— Այո՛․ յանուն Հայաստանի, քեզ կասեմ ա՛յն, ինչոր ճշմարիտ է։

— «Մենք Սօցիալի՞ստ ենք»։

— Հարկաւ։

— «Սօցիալիզմը չի՞ ջնջում Ազգութիւն եւ Հայրենիք»։

— Երբէք։

— «Ուրեմն մեզ համար Հայաստան կա՞յ»։

— Անշուշտ։

— «Այս «Սահմանադրութեան» գալովը մենք Հայաստանի

Ինքնավարութեան, Անկախութեան խնդիրը թողե՞լ ենք»:

— Երբէք. Ծրագրի երրորդ մասի մէջ Ինքնորոշման իրաւունք կայ. դրանից բղխում է Ինքնավարութիւն էլ, Անկախութիւն էլ. բայց դրանից՝ մեր պրօպագանդան արդէն այդ ոգով եւ ուղղութեամբ է գնում:

— «Է՛լ հաւատացի. այսուհետեւ հակառակը խօսողի բերանը պիտի պատռեմ. քու խօսքդ էր միայն ինձ պէտք»:

Ընկեր Տիւչիւկեանը բարի, առաքինի, հայրենի աւանդութիւններով մեծացած Հայ էր. հակառակ իր արտաքին մեղմութեան՝ փոթորկուող բնաւորութիւն ունէր. թրքատեաց էր այս բառի բովանդակ նշանակութեամբ: Որպէս կրակոտ, զոհող, անձնուէր Յեղափոխական, իր ունեցածից ոչինչ չէր խնայել «Հայաստանը Թուրքերի ձեռքից ազատելու համար». նրա այդ հաւատքն էր, որ խախտել էին այն իմաստակները, որոնք ժողովրդի այդ կոյս խաւերի մէջ մտնելով՝ իրենց առաջին գործն էին արել, մեր Կուսակցութեան դէմ պայքար մղելու միտումից դրդուած, ասել թէ Սօցիալիստ եղողի համար ո՛չ Հայաստան կայ, ո՛չ էլ ազգութիւն:

Ընկեր ՅԱԿՈԲ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆԸ հաւատարիմ, ձեռներէց, անվախ գործակիցն է եղել ընկեր Արամ Աչգպաշեանի: Խարբերդի մեր նահատակների՝ Յակոբի եւ Յարէթի հետ միասին են ուրուագծել նրանց ձեռնարկները: Փոքր-Հայքի մեր Յեղափոխական բոլոր շարժումների մէջ գործօն դեր է ունեցել. ինքը կենդանի մի պատմութիւն է: Կեանքը ոչնչով չի կարողացել իր եռանդը մաշել. դարձեալ նոյն անձնազոհը, նոյն իդէալիստ մարտիկը. մեր ամենալաւ կռուող ուժերից մէկն է. ընկերները եւ ամբողջ շրջանը անսահման յարգանք եւ վստահութիւն ունին իր հանդէպ: Նորեկ ընկերներին ոգեւորող, կուսակցական աւանդութիւնների մէջ պահող մեր ուժերից մէկն է:

Դեռ ժողովրդի մէջ թարմ է ընկեր Հայագործեանի Դիվրիկի լեռներում 40—50 Քիւրտերի պարտութեան մատնելը, իր մի բուռն քաջերով, մեր զէնքերի փոխադրութեան ժամանակ: Դիվրիկի շրջանի ահն ու սարսափը եղող՝ «Վասակ» Հայրանեանի տերրորը ինքն է եղել:

Մահտեսի ԳՐԻԳՈՐ ՂԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆԸ մեր ամենահետաքրքիր ընկերներից մէկն է. թէեւ տարիքը առած, ծերու-

թեան ալիքների մէջ թաղուած․ բայց իր կորովը, աշխուժութիւնը դեռ տեղն է․ յառաջացած այդ հասակի մէջ՝ արագաշարժ, թեթեւոտն, ճապուկ երիտասարդի տպաւորութիւն է թողնում: Կուսակցական գործ չը կայ, որ Մահտեսի Գրիգորի մատը մէջը չը լինի․ բոլոր ընկերները ակնածանօք լսում են իր հայրական թելադրանքները եւ խորհուրդները: Հայ Նահապետի բոլոր յատկանիշներն ունի իր վրայ: Կրնճիտը ճակատին՝ այդ ոսկրոտ մարդն է, որ առաջին անգամ «ՀՆՉԱԿ»-ը մտցրել, ցրուել է Սեբաստիայի շրջանը․ ինքը սկզբնաւորել, ինքն էլ կազմակերպել է մեր գրականութեան փոխադրութեան ամենավտանգաւոր գործը: Մեր շատ գործիչներին, մարտիկներին տանող-բերողը, տեղից տեղ փոխադրողը, ճանապարհ ցոյց տուող, առաջնորդ Մենտորը, դարձեալ, ինքն է եղել: Գլխովը այնքա՜ն անցքեր են անցել, այնքան պատմութիւններ ունի ասելիք, որ լսողը ո՛չ կը կշտանայ, ո՛չ էլ կը ձանձրանայ: Իր խօսակցութեան ոճն էլ զուարթ է, փորձառու մարդու տեսութիւններով, կատակաբանութիւններով համեմուած:

— Մահտեսի, սաս՛ տեսնեմ, Համիտից չէ՞իր վախենում․ չէ՞ որ քեզ կարող էին բռնել:

— «Ես այնպիսի սատանայութիւն էի խորհել, որ Համիտը չէ՝ նրա պապն էլ գար, չէր կարող բռնել: Քանի՛ քանի՛ անգամ մատնուել եմ․ բայց միշտ էլ ազատուել, վրաս բան չեն կարողացել բռնել, ապացուցանել»:

— «ՀՆՉԱԿ»-ի փոխադրութիւնը ի՞նչպէս սկսեցիր:

— «Սամսոն էի․ մեր Նազարէթ աղան, մի օր, կանչեց ասաց․ քեզ մի գաղտնիք ունիմ ասելիք, ոչ ոքի չը պիտի ասես, բերանիցդ մի բառ անգամ չը պիտի դուրս գայ, եթէ կաշիդ էլ քերթեն: Խօսք տալի՞ս ես: Հարցրի թէ ի՞նչ գաղտնիք է․ ասաց որ Հայի և Հայաստանի ազատութեան հետ գործ ունի: Ես էլ ասացի․ քանի որ Հայի և Հայաստանի ազատութեան գործ է, կախաղան էլ բարձրացնեն, կտոր կտոր էլ անեն՝ մէկին բան չեմ ասիլ, եւ երդուեցայ: Խնդիրը յայտնեց․ ուրախութեամբ յանձն առայ: Ես արաբա ունէի․ Սեբաստիայից հուկիթ կառնէի, Սամսոն կը տանէի՝ ծախելու: Գնացի՝ արաբայիս բոլոր տախտակները, բոլոր փայտերը ծակեցի, մէջը փորեցի, տեղ բաց արի․ վերադարձայ՝ «ՀՆՉԱԿ»ները տեղաւորեցի: Յետոյ

1 2

1 — Յարութիւն Մինասեան Սեբաստացի
2 — Մահտեսի Ղարամանուկեան

արաբաս զանազան տեսակ ապրանքներով լցրի, բեռս բարձայ, ճանապարհ ընկայ: Տեսնողը ի՞նչ իմանար, որ տախտակների մէջ «ՀՆՉԱԿ» կար: Երբ Մարզուան հասայ, մի կապոց նրանց ձգեցի. նոյնպէս Ամասիա, Թոքաթ: Հասայ մեր Սեբաստիա: Եկան ընկեր Գաբրիկեանը եւ ընկեր Միհրան Զուգասըզեանը. ասացին քեզ մօտ ապրանք կայ՝ տո՛ւր: Ասացի. ես ձեզ ապրանք չեմ բերել, այլ Հայի եւ Հայաստանի համար ազատութիւն ուզող՝ Յեղափոխական թերթ՝ «ՀՆՉԱԿ» անունով: Ուզեցին որ տամ. ես էլ ասացի, որ առաջ մի կարդացէք՝ լսեմ, տեսնեմ թէ ի՞նչպէս է Հային ազատութիւն ուզում: Կարդացին. սիրտս, հոգիս վառուեց: Ասացի, որ եթէ բռնուեմ, մեռնեմ էլ՝ հոգս չէ. արքայութիւն երթալու կարճ ճանապարհը «ՀՆՉԱԿ»-ը կարդալ, տարածելն է: Էլ նրանից յետոյ՝ ամեն ամիս գնում՝ գալիս էի, «ՀՆՉԱԿ»-ը բերում, իրենց տեղերը ցրւում: Հէ՛, քանի՜ քանի՜ անգամ մատնուել, արաբաս տակն ու վրայ են արել. բայց բան չեն կարողացել գտնել»:

Յեղափոխական գաղափարի ժողովրդական հասկացողութիւնը իր սրբութեան մէջն էր: Ժողովրդի մի զաւակ ուրիշ կերպ չէր կարող մտածել, արտայայտուել. նա իր ըմբռնումին համաձայն էր, որ պէտք է բացատրէր Յեղափոխական Գործի սրբութիւնը:

«Արքայութիւն երթալու ճանապարհ». սա մի հրաշալի արտայայտութիւն է, բնորոշիչ ամեն տեսակէտով: Յեղափոխական գործի համար մեռնելը համանիշ է «արքայութիւն երթալուն», — այսինքն անմահանալուն: Դա մեր պապերից մնացած՝ քաջ, Հայրենիքի ազատութեան համար զոհուող Հայի աւանդական հոգին է: Գաղափարի այդ ոյժն է, որ յառաջացնում է անձնուրացութիւն, անյողդողդ, երկաթի կամք՝ ժողովրդական խաւերի մէջ:

Հէնց դրա համար էլ ընկերները պատւոյ տեղը Մահտեսի Գրիգորին էին տուել. նրան էին կարգել մեր առաջնորդը, մեր վրայ հսկող, խնամք տանողը. այդ էր եղած իր «խնդիրքը» ընդունելութեան պատրաստութիւնը տեսած միջոցին:

Զարմանալի էլ յիշողութիւն ունէր. «ՀՆՉԱԿ»-ի մէջ, տարիների ընթացքում, ի՛նչ էր գրուել, այդ բոլորը գիտէր, միտքն էր պահել:

Հայ ծերունու տոկնքնող ոգին իր մէջ մարմնացած՝ արտացոլացնում էր․ դրա համար էլ անխառն սէր ու յարգանք էր վայելում բոլոր ընկերների կողմից։

Մահտեսի Գրիգորը հասարակական նշանակութիւն ունեցող ուրիշ մի բան էլ էր արել։ Անգլիան աշխատում էր Հայերի համար․ լսել էր։ Մայիս 11-ի Ծրագրի գործադրութեան առթիւ՝ բանագնացութիւնների օրերն էին (1895—1896)։ *Մահտեսին մտածում է Անգլիոյ Թագուհի Վիկտորիային Հայերի երախտապարտութիւնը յայտնել։ Պատուիրում է իր երկու շնորհալի դուստրերին՝ Աննային եւ Մարիամին գործել է տալիս՝ ազնիւ մետաքսեայ մի հրաշալի գորգ, նուրբ, ճաշակաւոր, ծաղկեզարդ՝ վրան Անգլիական զինանշանը։ Գորգը Կ․ Պոլսոյ Անգլիական դեսպան Օ՚Կօնօրի միջոցով՝ պարգեւ է ուղարկում Վիկտորիային՝ երախտագիտական մի վերտառութեամբ։ Ժամանակին Անգլիական եւ Ֆրանսիական թերթերը այդ մասին երկար յօդուածներ հրատարակեցին՝ գորգի նկարագրութիւնը տալով։ Մահտեսին դեռ իր մօտն է պահում Օ՚Կօնօրի շնորհակալութեան նամակը՝ Վիկտորիա Թագուհու անունից։ Ես տեսայ այդ գեղեցիկ գորգի միայն գծագրութիւնը։*

Ահա այս էր Մահտեսի Գրիգորը։

Սեբաստիայի շրջանի հասարակական ոյժերից եւ մեր Կուսակցութեան ամենագործօն անդամներից մէկն է, սկզբէն ի վեր, ընկեր ՄԻՀՐԱՆ ՋՈՒԳԱՍԸԶԵԱՆԸ՝ աւարտած Սեբաստիայի Մայր Վարժարանը, ընթացաւարտ Խարբերդի Կոլէժից՝ երկար տարիներ ուսուցչութեան եւ դպրոցական տեսչութեան պաշտօն վարած։ Ժիրայրի հետ աշխատակցած՝ ուսուցչութիւն է արած ե՛ւ Տիվրիկի մէջ։ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան կուչին առաջին արձագանգ տուողներից եւ շրջանի ու Սեբաստիայի մեր Մասնաճիւղերի հիմնադիրներից մէկն է եղած։ Մասնակի մեր շարժումներին մասնակցելով՝ 1895-*ի կոտորածից վերջ կախաղանի է դատապարտուած՝ Սեբաստիոյ Ս․ Նշանի յայտնի ընդդիմադրութիւնը կազմակերպող պարագլուխներից մէկը նկատուելով։ Երկար տարիներ բանտերի, զնդանների մէջ մաշուելուց յետոյ՝ զանազան* միջնորդութիւնների *եւ կաշառքի ոյժով մի կերպ բանտից ազատւում է, անլուր չարչարանքներ քաշե-*

ՄԻՀՐԱՆ ՋՈՒԳԱՍԸՋԵԱՆ ԵՒ ԻՐ ԸՆՏԱՆԻՔԸ



լուց յետոյ: Հակառակ իրեն տրուած ամենախիստ տանջանքներին՝ ո՛չ մի խոստովանութիւն արած է. ո՛չ մի բառ բերանից փախցրած:

Բանտի զնտանի մէջ մի քանի տետրակներ ունի գրած, այդ ժամանակուայ բոլոր անցքերը բովանդակող: Ամերիկա գալուց եւ վերադառնալուց յետոյ՝ դարձեալ աննկուն կորովով իր կուսակցական-հասարակական գործունէութիւնը շարունակած է: Ունի մի քանի բանաստեղծական եւ բեմական գրութիւններ՝ որոնք շրջանի մէջ յաճախ ցուցադրուել, կարդացուել են: Սեբաստիայի շրջանի մէջ Թատրոնի սկզբնաւորողը եւ զարգացնողը ինքն է եղած: Ազգային բոլոր հաստատութիւններին գործօն մասնակցութիւն է բերած: Իր հոգեբանական գծերն են՝ բացարձակ անկեղծութիւն, անվեհերութիւն, պայքարող, աններող ոգի: Մաթեմաթիկական գիտութիւնների մէջ՝ կատարեալ տաղանդ է: Հասարակութեան մէջ խնդիրները լաւ կշռադատող, լուրջ խորհող մարդի համբաւ ունի:

«Սահմանադրութիւն»ից յետոյ Իտտիհատականների դէմ առաջին պայքար ստեղծող եւ առաջ տանողը՝ բեմերի վրայից՝ ինքն է եղած: Նոյն իսկ հակա-Իտտիհատական Թուրքեր առաջ քաշելու մէջ՝ ինքը ահագին բաժին ունի:

«Նոր-Աշխարհ»-ի ծնունդի, զարգացման մէջ առանձին աշխատութիւն ունի. եղած է նրա կորովամիտ, հեռատես թղթակիցը: Թուրքերի հոգեբանութեան լաւ ծանօթ, նրանց ձեռք առած չողոքորթական ընդերկրեայ արարքները միշտ իրենց չափի մէջն է դրած: Հէնց դրա համար էլ՝ ընկեր Տիգրանի հետ միացած՝ հասարակական բոլոր գործերի վրայ իրենց դրոշմն էին դրած:

Սօցիալիստական գրականութիւնը լաւ ուսումնասիրած՝ մեր այդ շրջանի տեսաբանն է նկատուած, ընկեր Գագիկ Օզանեանի հետ միասին:

Թուրքերի հետ տեսակցութեան պարագային, առաջուց յայտնած ցանկութեանս համաձայն, այնքան վարպետ կերպով խօսք էր քաշում նրանց բերանից, որ զարմանքից ծիծաղս բռնել չէի կարողանում. այնքան արել էր, որ մի Թուրք փաթթցուորի Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան էր դարձրել, մկրտել եւ ինձ էլ ներկայացրեց որպէս ամենաթունդ հակա-Իտտիհատական, որ Մուստաֆա Նէջիպի խարդաւանքների եւ

ձեռնարկների մեծ մասը ջուրն էր ձգել: Մեր վաթթոցաւոր Ալի էֆէնդու մեզ տուած իրական ծառայութիւնները ընկեր Զուգասըզեանի նրբամտութեան ենք պարտական:

Ընկերներ Ղազարոս Ղազարեան, Ղօնչագիւլեան, Թադէոս Ափարեան, Պետրոս Մերկերեան՝ հասարակութեան մէջ մասնաւոր դիրք գրաւող՝ մեր լաւ ընկերներիցն են, Կուսակցութեանս համար երկար տարիների աշխատողներ:

Այսպէս, Սեբաստիայի ֆիզիքական, մտաւորական, հասարակական, ընկերային ոյժ ներկայացնող բոլոր անհատները մեր Մասնաճիւղի մէջն էին կեդրոնացել. հէնց դրա համար էլ մեր Մասնաճիւղը տեղական շրջանի Իտտիհատական կառավարութեան աչքի փուշն էր դարձել: Բայց դա արգելք չէր եղած, որ մեր ընկերները վհատութեան որ եւ է նշոյլ ցոյց տային. նրանք գործում էին րոպէի պահանջին համեմատ՝ իրենց պարտականութեան գիտակցութեամբ զինուած:

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — Մայիս 30, Յունիս 12, Երեքշաբթի: Բաւականին մեծ թուով Կովտեցիներ եւ Խանձարցիներ են լցուել մեր Ակումբը. բոլորն էլ եկել են գանգատի: Պատմում են իրենց այրող ցաւերից, իրենց մէջ գոյութիւն ունեցող ներքին խռովութիւններից:

Արդէն գիւղական երկպառակութիւնները, կռիւները մեր ներքին սրտմաշուկ ցաւերից մէկն է: Ընդհարումները որքան որ հետեւանք են նիւթական՝ տնտեսական շահերի, հողային եւ այլ խնդիրների. նոյնքան էլ դրանք հետեւանք են խմիչքի եւ բարոյագիտական այն խաթարող հանկացողութիւնների, որ օտարութիւնից վերադարձողները մտցնում են գիւղական նահապետական կեանքի մէջ:

Որքան որ Սեբաստիայի շրջանում ընտանեկան եւ հասարակական տիրող կարգ ու կանոնը նահապետական կեանքն է. այնուամենայնիւ որոշ նշաններից երեւում է, որ նա սկսում է քայքայուիլ, լուծուիլ: Զարգացման շրջանը իր բնութեամբ անցողական լինելով՝ ներքին խռովութիւններն էլ անպակաս են լինում:

Ընդհանուր առմամբ Սեբաստացիները համարձակախօս են. տոհական կեցուածքով՝ դիւրաբորբոք բնաւորութիւն ունեն. խօսքը ճակատին կասեն. անտեղիտալի նկարագրի տէր են:

Երբ այդպիսի գծերով օժտուած անհատականութիւններ իրարու հետ փոքրիկ թիւրիմացութիւնների մէջ են գտնւում, հետեւանքը պարզ է, որ կռիւ, աններդաշնակութիւն կը լինի. մանաւանդ որ զիջողութիւն անելու հակամիտութիւնը բոլորովին պակասում է:

Գիւղացիների գանգատներից ուրիշ բան էլ էր երեւում: Երկար ժամանակ իրենց ծննդավայրից բացակայելուց յետոյ՝ վերջերս մի կարգ «Յեղափոխականներ» վերադարձել են եւ սկսել են մի առանձին յոխորտ ընթացք բռնել դէպի իրենց համագիւղացիները, ամենակոպիտ վարմունք ունենալով նրանց հետ՝ ընտանեկան մի կարգ խնդիրների առթիւ: Դեռ այդ բաւական չէ. նրանցից ոմանք միացել են տեղական Իտտիհատական կառավարութեան և Թուրք գիւղացիների հետ ու միասին սկսել են ճնշել, զրկել Հայերին, Թոյլերից հողային յափշտակութիւններ անելով:

Գիւղացիները գանգատւում են նաեւ իրենց հողի սակաւութեան մասին. ասում են, որ իրենց վարելահողերը, արօտավայրերը մի յամառ հետեւողականութեամբ յափշտակւում, տրւում են իրենց հարեւան Թուրք գիւղացիներին եւ այդ մասին իրենց արած գանգատներին ո՛չ լսող կայ, ո՛չ էլ որ եւ է հետեւանք տուող:

Գանգատւում են ե՛ւ հարկային գրութիւնից. այդ մասին եղած անհաւասարութիւնը ուղղակի ըմբոստացուցիչ է: Պատմում են. «Միեւնոյն տարածութեան հողի համար՝ Հայը տալիս է 26 ղուրուշ. իսկ Թուրքը՝ 3. թէեւ այս վերջինիս հողը է՛լ աւելի բերրի է: «Սահմանադրութիւն»ից յետոյ մեր հողերը աւելի են յափշտակւում, քան առաջ»:

Եւ այդ բոլորը զուտ իրողութիւններ էին:

Եկած են ահագին խմբով ե՛ւ Դաւրացիներ՝ մեզ իրենց գիւղը տանելու. փաստում են, որ պէտք է աճապարել, որովհետեւ երկու օրից յետոյ բոլոր տղամարդիկ պիտի ցրուին՝ իրենց ջրաղացներն երթան:

Պատգամաւորութեան մէջ է գտնւում եւ մեր յայտնի ընկեր Տիգրան Տէրտէրեանը, Բաղդիկի եւ Բագարի ընկերը:

Հետաքրքիր կեանք ունի Տիգրանը: Շմաւոնի առաջին «աշակերտ»ներիցն է. քաջ, կորիճ մի տղամարդ: Ձերբակալուել, բանտն է տարուել, որպէս Յեղափոխական. բանտապահը



ՏԻԳՐԱՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ

անկարող լինելով բանտի մէջ պահելու, որովհետեւ ո՛չ մի գլխաւոր ուզել է պահպանութիւն անել, ուստի իր օձիքն ազատելու ուրիշ հնար չի գտել, եթէ ո՛չ թոյլ տալ, որ բանտից փախչի՝ տուն երթայ: Այդպէս էլ ազատուած է:

Սեբաստիայի շրջանի շարժումների մէջ Տիգրանը իր մասնաւոր տեղն ունի:

Մեր այդ օրուան գրառումներին վերջ տալով՝ մեկնում ենք Դաւրա:

ԴԱՒՐԱ. — Ճանապարհ ենք ընկնում դէպի Դաւրա. հետս են ընկերներ՝ Ս. Մուրատ, Միհրան Զուգասարգեան եւ Արամ:

Նախ հանդիպում ենք Ս. Նշանի Վանքը: Հալկէի մեր Դաւիթ աղայի յանձնարարութիւնը յիշում եմ: Ընկերներին պատմում եմ Դաւիթ–Աղայի խնդիրքը. ընկեր Զուգասարգեանը գնում՝ մոմավաճառից մի զոյգ մոմ է առնում Դաւիթ–Աղայի անունով եւ նրա անունով էլ կպցնում Տաճարի գաւթում գտնուող մի մեծ Պատկերի առաջ:

Ս. Նշանը Հայկական հնաւուրց Վանքերից մէկն է, հաստահիմն պարիսպներով շրջապատուած, մի ընդարձակ դաշտագետնի վրայ:

Տաճարի դրան եւ պատերի վրայ՝ մատաղից գոյացած արեան հետքեր կան: Խորանի ձախ կողմը՝ Հայոց Թագաւոր Սենեքերիմի եւ իր Թագուհու վերնասենեակը դեռ անվթար կերպով պահւում է. արքայական ընտանիքը այնտեղից է իր կրօնական պարտականութիւնները կատարել եւ ժամերգութեան մասնակցել: Երեւում է, որ դա Հայ Թագաւորների համար ընդհանուր սովորութիւն է եղել. որովհետեւ Հեթում Թագաւորն էլ է ունեցել իր առանձին վերնասենեակը Երուսաղէմի Ս. Յակովբայ Վանքի՝ դարձեալ Խորանի ձախ կողմը:

Վանքի զանազան մասերը այցելելուց յետոյ՝ մեր ճանապարհը շարունակում ենք դէպի Դաւրա:

Դաւրան գտնւում է Սեբաստիայի հիւսիս արեւմտեան կողմը, մօտ կէս ժամ հեռաւորութեամբ, բլրակներով եզերուած՝ մի կաթսայաձեւ տարածութեան վրայ: Ջրառատ, ծառաստան մի տեղ է:

Դեռ գիւղին չը մօտեցած՝ դիմաւորողների ահագին բազ-

մութիւն դէպի մեզ է գալիս: Դպրոցի երկսեռ մանուկները՝ դրօշակներ ձեռքներին՝ քաղցրաձայն երգում են «Հեռաւոր Երկիր»-ը եւ բոլորս միասին՝ բազմամբոխ թափորով գիւղն ենք մտնում: Առաջնորդւում ենք գետեզր՝ ծառազարդ մի վայր, ուր ճոխ սեղան է պատրաստուած: Այստեղ են գիւղի քահանան, «իշխանները» եւ գիւղի համարեա աչքի ընկնող բոլոր տղամարդիկ: Ուրախութեամբ սեղանի բաժակաճառեր են արտասանւում:

Հայաստանցին ամեն տեղ Հայաստանցի է. նոյն իսկ ուրախութեան այդ սեղանի վրայ մեր հասարակական ցաւերն են, որ գլորւում են: Բոլորի նիւթն է «Ազգի, Հայրենիքի ազատութիւն»:

Սեղանը վերջանալուց յետոյ՝ գիւղի զանազան կողմերը պտոյտի ենք դուրս գալիս:

Գիւղի մասին ծանօթութիւններ են տալիս. ասում են, որ Դաւրա անունը ծագել է Սենեքերիմի որդի Դաւթի անունից: Երբ Սենեքերիմ Արծրունին Սեբաստիա է փոխադրուել, Դա-ւառու անունով այդ վայրը իր որդի Դաւթին ամարանոց է տուել եւ գիւղն էլ իր անունով կոչուել է Դաւրա կամ Դաւթայ-Գիւղ: Գիւղի հարաւային կողմը տարածւող բլրաշարքի վըրայ գտնուող փլատակների հետքերը՝ ասում են որ Դաւթի ամարանոց-պալատն է եղել: Ժողովուրդը պինդ կերպով դրան հաւատում է. իրենց համար էլ ասում են, որ յառաջացել են Դաւթի ցեղից, այնպէս որ բոլոր Դաւրացիները իրենց «արքայազուն» են համարում:

Մտնում ենք «Գործարան»ը:

ԴԱՒՐԱՅԻ ԳՈՐԳԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ.— «Տարք» ընկերութիւնը, որի կեդրոնատեղին Իզմիր է, այստեղ էլ ունի իր գորգի գործարանը: Այցելում ենք գործարանը: Մարդ շուարում է, անկարող լինում հաւատալու, որ կապիտալիստական շահագործումը այդքա՜ն խստամբեր, տմարդի, անգութ կարող է լինել: Եւ դրանք «Հայ» կապիտալիստներ են: Այդպիսի մի չարաշահութիւն հազիւ թէ Աֆրիկայի խորքերում գոյութիւն ունենայ, էն էլ գրուածներին հաւատալով: Բայց Աֆրիկային-ները դարձեալ մեղմ են այստեղինի հետ համեմատելով: Եւ

այդ գործարանի տէրերը «Հայեր» են, Իզմիրի մէջ նստող, հարիւր հազարաւոր ոսկիներ դիզող Հայեր՝ առանց որ եւ է մաս դիպցնելու հարստութեան այդ արտադրութեանը:

«Մեր մէջ դասակարգային կռիւ չը կայ. մենք կապիտալիստներ չունենք. Հայ կապիտալիստը իր ազգի զաւակների հետ անգութ չի լինիլ, նրանց չի կեղեքիլ....»: Հայ յետադիմական կեանքի ներկայացուցիչները եւ Հայ կապիտալիստների տիտղոսաւոր պաշտպանները այստեղ պիտի լինէին՝ իրենց աչքերով տեսնելու, ականջներովը լսելու թէ կապիտալիստական անգթութիւնը, կապիտալիստական կեղեքումը, անարդարութիւնը մինչեւ ո՛ւր կարող է հասնիլ:

Գործարան ասուած մի քանի վերին աստիճանի անմաքուր, վատառողջ, խոնաւ սենեակների պատերի երկայնութեամբ դրուած տախտակների վրայ՝ հինածների առաջ նստած են 100 հոգու չափ փոքրիկ աղջիկներ՝ 6–7 տարեկան, նիհար, դեղնած, թօշնած. որոնց վրայ մանկական զուարթութեան նշան անգամ չը կայ. ուղղակի կրակ է վառւում մարդու գլխի այդ երեխաներին տեսնելիս: Մազերնին գզգզուած, ցնցոտիների մէջ, ոտաբոբիկ, բուրդից գոյացած փոշու մառախուղի մէջ նստած: Եւ նրանք մէջքները ծռած՝ այստեղ պիտի աշխատեն ոչ նուազ քան 16–17 ժամ: Դա աշխատանքի ժամերն են: Դրա մէջ չեն մտնում հանգստեան՝ նախաճաշի մի քանի վայրկեանները: Եւ ի՞նչ են ստանում նրանք. ո՛չ աւելի քան 20 փարայ: Առաւօտեան լուսադէմին, դեռ հազիւ մութը փարատած՝ նրանք «գործարան» են մտնում եւ այնտեղ մնում մինչեւ ուշ երեկոյ:

Ձմեռը նրանց կեանքը է՛լ աւելի անտանելի է. յաճախ գիշերը տուն վերադառնալ չեն կարողանում՝ թափուած ձիւնի եւ բուքի պատճառով: Բայց չը կարծէք թէ իրենց «աւուրչէք» 20 փարան «արդարութեամբ» են ստանում: Երբէ՛ք. երբէ՛ք: Շատ ժամանակ նրանց ասում են, հաշիւը տեսնելիս, որ տուած թելին համապատասխան գործ չի արտադրուել. ուստի ամենափոքր պատրուակներ բռնելով՝ նրանց «աւուրչէք»ից կտրում, իջեցնում են: Որբ, «անտէր» երեխաները մանաւանդ՝ ամենից աւելի են շահագործումի ենթարկւում: Բայց վրդովեցուցիչ մի ուրիշ հանգամանք էլ կայ: Հարկահաւաքը եկել

է · վաշխառուն դուռն է կոտրել · հօրը դրամ պէտք է ։ Հայրը դիմում է գործարանատիրոջ · սա, որպէս բարեգործութիւն, ճարահատ հօրը մէկ ոսկի կանխավճար է տալիս, եւ բարեբարուած հօր 6–7 տարեկան երեխան մի ամբողջ տարի պիտի աշխատի, որ փոխառու հօր այդ դրամը վճարուած համարուի ։ Այդ դրութեան մէջ գտնուող 15 փոքրիկ գերի աղջիկներ ցոյց տուեցին մեզ ։

12–17 տարեկան աղջիկներ էլ շատ կան · փոշելից այդ միջավայրում նրանք էլ օրական գործում են 16–17 ժամ · եւ ի՞նչ ստանում, ոչ աւելի քան 1–1½ ղուրուղ ։

Խեղճ երեխաները հինգ հազար հանգոյց պիտի զարկեն (առաջ 6000 է եղել), որ ստանան 1 ղուրուշ · իսկ 6–7 տարեկան աղջիկը հազիւ երկու օրուանը այդ 5000 հանգոյցը զարկել կարողանայ ։ Փոքրիկ, վտիտ, գունատ այդ երեխաները շատ յաճախ նիրհում են հինածի առաջ նստած՝ գործած ժամանակնին ։

Գործարանի վերակացուն մեր ընկերն է · ամսական ստանում է 150 ղուրուշ · խօսում է ցածր, ականջիս փսփսալով ասում է, որ իրեն պատուիրել են ո՛չ մի մարդու տեղեկութիւն տալ գործարանային կեանքի եւ աշխատանքի պայմանների մասին ։ «Եթէ իմացուի, ընկերը կամաց ձայնով ասում է, ինձ անպատճառ կարտաքսեն» ։

«Շարք» ընկերութիւնը տարին, միջին հաշուով, Դաւրացիներին, որպէս աշխատավարձ, 350 ոսկի տալով՝ տասնեակ հազար ոսկիներ է, որ շահում է այդ խեղճ երեխաների եւ պառաւ կանանց աշխատանքի արդիւնքից ։ Բայց այդ խնդրի վըրայից առ այժմս անցնում ենք ։

ԴԱՒՐԱՑԻՆԵՐԸ · — Եթէ պատմութիւնը եւ տարածութիւնը չը լինէր, Դաւրացիներին համեմատութեան դնելով Շատախցիների հետ՝ ամենայն դիւրութեամբ կարելի էր ցոյց տալ, որ միեւնոյն կոճղի, միեւնոյն ընտանիքի զաւակներն են ։ Բարձրահասակ, թիկնեղ, հաստաբազուկ, ջղուտ տղամարդիկ են · իրենց գծագրութիւնը բոլորովին Հայկական է, — մեծ՝ սեւ աչքեր, քթեղ, թաւ յօնքեր, կուրծքը լայն ։ Նիստ ու կաց, խօ–

սակցութեան ձեւ՝ ամեն ինչ նախապետական է: Յանդուգն, խիզախ բնաւորութիւն ունին:

Դաւրացիները իրարու կուռ կպած, համերաշխ կերպով ապրում են: Ընդհանրապէս շատ չեն սիրում «քաղաքացի»ների հետ յարաբերիլ: Եթէ մի Դաւրացու Հայ կամ Թուրք, օտար՝ ոչ-Դաւրացի մէկը դիպչելու լինի, բոլորը կը միանան նրա դէմ, թէկուզ այդ օտարը լինէր մի ուրիշ Դաւրացու շատ մօտիկ բարեկամը, ծանօթը: Մի Դաւրացու դէմ խօսող, ելնողը՝ բոլոր Դաւրացիների դէմ ելնել ասել է: Գիւղական համերաշխական ոգին իրենց մէջ ամուր կերպով զարգացած է. իրարու բռնել, պաշտպանել, օգնութեան հասնել գիտեն: Պատմական աւանդութիւններով եւ սովորութիւններով ծնուած՝ սնուած մարդիկ են, ուշիմ, խելօք, չարքաշ: Կրօնասէր են այս բառի իսկական իմաստով. որպէս ջերմեռանդ Հայ քրիստոնեայ՝ իրենց մէջ պահք լուծող չի գտնուիլ. կրօնական բոլոր ծէսերը, Մաշտոցի տուած բոլոր կանոնները նոյնութեամբ կը կատարեն. քահանայի խօսքը իրենց համար ամեն ինչ է:

Դաւրացիների գլխաւոր զբաղմունքն է ջրաղացպանութիւն: Միայն ձմեռն է, որ գիւղ կը վերադառնան. մինչեւ ջրերի սառչելը տղամարդկանց մեծամասնութիւնը կը ցրուեն, կերթան հեռաւոր տեղեր՝ իրենց խնամքին յանձնուած ջրաղացների մէջ աշխատելու, որպէս ջրաղացպան: Եւ այդ ջրաղացները յաճախ գտնւում են խոր ձորերի մէջ, ամայի վայրերում, ուր բնութեան արհաւիրքները անպակաս են՝ աւազակների չարաճակական յարձակումների հետ միասին: Եւ այդպիսի տեղերում միայն Դաւրացիներն են, որ կարող են գլուխ պահել, գործ տեսնել: Հայ, Թուրք, Չերքէզ՝ ո՛վ ջրաղաց ունի Սեբաստիայի եւ այլ հեռաւոր տեղերում, բոլորն էլ Դաւրացի ջրաղացպանի կը տան, որովհետեւ թէ քաջ են եւ թէ լաւ վարպետ: Սա այդ շրջանում ընդհանուր սովորութիւն է դարձել, մի տեսակ գիւղական աշխատանքի բաժանում:

Դաւրացին հազիւ իր տանը կը մնայ 2–3 ամիս. մնացած ամբողջ ժամանակը նա պանդխտում է:

Եւ այդ ժամանակ գիւղում մնում են միայն ծերունիները, կանայք եւ երեխաներ: Բայց Դաւրացի ծերունին քաղաքա-

ցու կորիճից էլ շատ ուժեղ, կայտառ եւ արագաշարժ է: Մանուկները ուղղակի մի մի կորիւններ են՝ աչքաբաց, թեթեւոտն, սրամիտ, համարձակ: Իսկ կանայք եւ աղջկունք՝ նահապետական կեանքից անբաժան՝ տնային գործերով են պարապում: Դաւրացին սովորութիւն չի արել Կ. Պոլիս, Կովկաս եւ կամ այլ հեռաւոր երկիրներ գաղթելու՝ ապրուստ ճարելու համար. իր բոլոր պէտքերը ինքը տեղին վրայ է հոգում:

«Քաղաքացի»ները, որ աւելի ճկուն, վարպետ, շուկայի լեզուից լաւ հասկացողներ են, գիտեն անուշի կապել եւ արժան կերպով տանել Դաւրացու տնային արտադրութիւնները, նրա իւղն ու պանիրը, բրդէ գործուածները. բայց դրա փոխարէն էլ յաճախ «կուտեն»: Եւ «քաղաքացին» շատ լաւ գիտէ թէ ինչ ասել է Դաւրացիի ձեռքից «ուտելը». ուստի միշտ զգուշութիւն կը բանեցնեն «Դաւրացու հետ չընկնիլ» եւ գործը, վէճը քաղցրութեամբ կարգադրել, վերջացնել: Այդ վարուելակերպը սովորութեան կարգն է անցել եւ առօրեայ կեանքի փորձառութիւնից բղխող մի իմաստութիւն:

Երբ ընդհանուր յարձակում լինի, ինքնապաշտպանութեան, կռուի գործ գալու լինի, Դաւրացին իրար կապող մի նշանաբան ունի. « Տղա՛ք, դրէ՛ք». այսինքն՝ զարկեցէ՛ք: Այդ ազդանշանը բոլորին ծանօթ է. նոյն իսկ Թուրքերը, Չերքէզները գիտեն թէ ի՛նչ ասել է Դաւրացու «Դրէ՛ք»-ը:

Երբ 1896-ին, շրջականերից Մահմեդական ահագին թուով խուժան է թափուել հարաւ-արեւմտեան կողմից. չեն համարձակուել գիւղին մօտենալ իսկ, վախենալով որ տղամարդիկ գիւղում պահուած կը լինեն, եւ այդ խուժանին շատ հեռուները փախցնողները եղած են Դաւրացի կանայք, երեխաներ եւ ծերունիներ:

Դաւրացիները տիպար Հայաստանցիներ են. Հայ նկարագրով, Հայ բնութեամբ, Հայ հոգեբանութեամբ:

Պատմում են խնդալով. մի օր Սեբաստացի քաղաքացուն մէկը սաստիկ ծեծ է կերել Դաւրացուց. գնացել գանգատուել է Կուսակալին. իր գլխի եկածը պատմելուց յետոյ՝ եզրակացրել է. «Ձերդ Վսեմութիւն, Դաւրացի Հայը Թուրքից էլ գէշ

է, չա՛տ գէչ. հետերնին ո՛չ խօսել կարելի է, ո՛չ էլ հակաճառել»։

Դաւրացիները ամբողջութեամբ, մեծից մինչեւ փոքրը՝ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեաններ են։ Կուսակցական անուան նախանձախնդրութիւնը իր ծայր սահմանին են հասցրել։ Կուսակցութիւնը, կուսակցական միջավայրը իրենց համար ամեն ինչ է։ Հէնց դրա համար էլ Դաւրացիները մեր Կուսակցութեան պատմութեան մէջ առանձին տեղ ունեն գրաւած։

ՎԵՐԱԴԱՐՁ. — Օրուան հրատապ խնդիրների եւ ինքնապաշտպանութեան մասին երկար բացատրութիւններ եւ յորդորներ տալուց յետոյ՝ պատրաստւում ենք յետ դառնալ դէպի Սերաստիա։

Անցնում ենք Դաւրայի գետեզրով, այցելութիւն տալիս Դաւիթեան վարժարանին եւ ապա ճանապարհ ընկնում։

Գիւղի ամբողջ ժողովուրդը՝ մեծ, փոքր, այր, կին փողոցներն են լցուած՝ ողջերթի։ Հարիւրաւոր կանայք իրենց ծծկեր երեխաները գիրկները նստեցրած՝ օդի մէջ վեր վայր են թռցնում, խաղցնում «Հնչա՛կ», «Հնչա՛կ» աղաղակելով։

«Մեր Հայրենիք»-ի գոռ ալիքների ներքոյ՝ վերջին անգամ մնա՛ս բարեւ ենք ասում Մայրագոմ լեռնաշղթային, որ իր ստորոտի վրայ պահել, մեծացրել է Հայի մի այդպիսի պատուական սերունդ։

Դաւրա երթալ եւ իրենց Ս. Սարգիս եկեղեցին չը մտնել՝ չի կարելի. դա սովորութիւն է եղած։ Ս. Սարգիսը այն վայրն է, ուր իրենց կեանքի ուրախ եւ տխուր օրերը արձանագրուել են. ուստի 250 տնից բաղկացած այդ գիւղը ո՛չինչ չի խնայել իր այդ եկեղեցին զարդարելու եւ հոյակապ դարձնելու։

Անցնում ենք դաշտերի միջով. ուղղւում ենք դէպի Անապատ։

Մեր ձախ կողմն են այն բոլոր փապարներն ու ծերպերը, որոնք ապաստանարան են ծառայել տանջուող, հալածուող Հայութեան։ Այդ խոր քարանձաւներից է, որ մեր հրոսակային խմբերը ահեղ ընդդիմադրութիւն են ցոյց տուել Համիտի զինուորներին. մեր քաջամարտիկ ընկերները այդ տեղերն է, որ իրենց ժողովատեղին դարձնելով՝ շրջանի գործունէու-

թեան յատակագիծն են կազմել: Դրանք բոլորը Սօցիալ Դէ-մօկրատ Հնչակեան վայրեր են, սո՜ւրբ վայրեր:

Ընկեր Լեւոն Արծրունին քարայրերի ներքնամասերի նը-կարագրութիւնը անելով՝ պատմում է այն բոլոր անցքերը, որ իրենց գլխով անցել են այդ մթին ժայռասենեակներում:

Իսկ աջ կողմերնիս ընկած է մի խորին ձոր, որի միւս կողմի վրայ փռուած են փլատակները, բեկորները այն հինաւուրց շէնքերի, որ ժողովրդին յայտնի է Դաւթայ Բերդ, Դաւթայ ամարանոց անունով:

Միջավայրը եւ պատմական ազդակները ուրիշ կերպ չէին կարող անել, եթէ ո՛չ Դաւրացուն Դաւրացի դարձնել:

ԼԵՒՈՆ ԱՐԾՐՈՒՆԻ (Աղա)

ՈՐԲԱՆՈՑԸ.— Ջիաւոր ուղեկիցների հետ միասին գնում ենք դէպի «Անապատ», Որբանոցը: Իրենց ուսուցիչներով եւ

վերատեսչով միայն 100-ի չափ որբ-դպրոցականներ դիմաւորում են՝ դրօշակներ ձեռքներին: Մտնում ենք Որբանոցը: Բոլոր նշանները ցոյց են տալիս, որ հայրական խնամք է տարւում իրենց վրայ: Աշակերտները ուրախ՝ զուարթ են. ուսման մէջ բաւականին յառաջադէմ. բոլորն էլ «Յեղափոխական» ոգւով կրթուած, դաստիարակուած պատանիներ են՝ աշխոյժ, եռանդով լի:

Եւ այդ բոլորը պարտական ենք իրենց անձնուէր ուսուցիչներին եւ մանաւորապէս Որբանոցի պարտաճանաչ եւ իր պաշտօնի բարձրութեան վրայ կանգնած՝ մեր ընկեր Միհրան Իսպիրեանին, որ ոչինչ չէր խնայել իր հոգածութեան յանձնուած դպրոցը բարձր մակարդակի վրայ դնելու:

Որբանոցը ունի բաւականին ճոխ գրադարան. ո՛չ միայն մեր դասական բոլոր մատենագիրները դարակների մէջ դասաւորուած, պատշաճաւոր տեղ են գրաւած. այլեւ մեր Նորագոյն եւ Յեղափոխական Գրականութեան մէջ յայտնի եղող բոլոր գրողների երկերը եւ արտադրութիւնները: Թերթերի հաւաքածուներն էլ իրենց որոշեալ տեղն ունէին:

Մեր հին եւ նորագոյն կեանքի փուլերից ոչինչ ծածուկ չէր մնացել այդ պատանիներից:

Մէջերնին մի քանի հոգի էլ բաւականին սահուն կերպով Ֆրանսերէն կարդում, հասկանում էին:

«Անապատ»ի մէջ՝ դա Հայ մշակոյթի մի բեղմնաւոր կղզեակ էր:

Հազար ու մի տպաւորութիւններով լցուած՝ երեկոյեան վերադառնում ենք քաղաք՝ Սեբաստիա:

ՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԵՒ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ.— Չորեքշաբթի, Յունիս 1|14: Կէսօրին մեր Ընթերցարանի մէջ նշանակուած է Համակրական ժողով: Խուռն բազմութիւն կայ. նիւթը եղաւ «ՔԱՂԱՔԱԿԱՆ եւ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ»:

Համակրական ժողովից յետոյ՝ ունեցանք Անդամական ժողով. ներկայ էին բոլոր ընկերները: Դասախօսութեան առարկան եղաւ «ՍՕՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏ եւ ՍՕՑԻԱԼԻՍՏ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ»:

ՉԵՐՔԷՉ ՄԷՀՄԷՏԸ. — Այդ օրը այցելութեան էր եկած Չերքէզ Մէհմէտը, որ մեր ընկերներին լաւ ծանօթ էր եւ հայասէրի համբաւ ունէր շրջանի մէջ։ Ինքը բնիկ Կովկասցի էր՝ Տաճկաստան գաղթած 1878-ի Ռուս-Թրքական պատերազմից յետոյ։ Մէհմէտ աղան մանրամասն տեղեկութիւններ է տալիս Ազիզիէի Չերքէզների մասին, ասում է, որ այդ շրջանում իրենք ամեն ինչ են, Թուրք կառավարութիւնը եւ ո՛չ մի ազդեցութիւն ունի։ Պատմում է թէ ինչպէս 1896-ին կառավարութիւնը յատուկ հրաւէր կարդաց իրենց, որ դուրս գան եւ շրջակայ Հայ գիւղերի վրայ ասպատակեն. սակայն իրենք արհամարհանքով այդ հրաւէրը մերժեցին։ Ասում է նաեւ, որ Իտտիհատական կառավարութիւնը մի քանի անգամ յատուկ գործիչներ ուղարկեց, որ իրենց կազմակերպի, սակայն իրենք ականջ չը կախեցին եւ եկողներին դուրս վարեցին։ Տալիս է իրողութիւններ թէ ինչպէս Թուրքերը յաճախ փորձեցին իրենց ապազգայնացնել. բայց ամեն ջանք ի զուր անցաւ։ «Թուրքերը կարծում էին, յարեց Մէհմէտը, որ մենք այս երկիրը գալուն, տեղաւորուելուն պէս, անմիջապէս Թուրք կը դառնանք. սակայն իրենց հաշիւների մէջ սխալուեցան։ Մենք ո՛չ միայն մեր լեզուն եւ սովորութիւնները պահեցինք, այլ վճռել ենք ամեն գնով էլ պահել եւ զարգացնել. դրա համար էլ Կովկասից՝ Ռուս գիմնազիոններից աւարտած Չերքէզ ուսուցիչներ ենք բերել տուել, որոնք դպրոցներ բանալով՝ մեր երեխաներին կրթում, մեծացնում են Չերքէզ ոգով»։

— Ի՞նչպէս են ձեր ապրուստի պայմանները։

— «Շատ լաւ. Պարսկաստանի վրայով շարունակական յարաբերութեան մէջ ենք Կովկասի մեր ցեղակիցների հետ. այնտեղից ապրանք, տաւար ենք բերում եւ այս կողմերը ծախում. դրանից շատ մեծ վաստակ ենք ձեռք բերում»։

— Գնացող-եկողները Քիւրտ աւազակների չե՞ն պատահում։

— «Ինչպէս չէ. դա յաճախ է պատահում. բայց մեր զէնքը երբէք վայր չենք դնում. միշտ զինուած ենք. նոյն իսկ մեր տները նստած ժամանակ։ Մեր սպաննած Քիւրտ աւազակներից շատերը եղել են կառավարական պաշտօնեաների գործիքները։ Անօթի պաշտօնեաները յատուկ աւազակախըմ-

բեր են պահում եւ նրանց կողոպուտից իրենց համար առատ բաժին հանում»:

— Հայերի վրայ ի՞նչ գաղափար ունիք:

— «Նրանք բարի, աշխատասէր մարդիկ են. բայց միայն մի պակասութիւն ունին.— չեն զինւում. զէնք չունին: Հայերը աւելի նախընտրում են դրամ աւելցնել, զարդեղէն, տան կահ-կարասիք գնել, քան զէնք առնել: Եթէ այստեղի Հայերն էլ Կովկասի Հայերի պէս զինուած լինէին. էլ ինչո՞ւ նեղութիւն պիտի քաշէին այն էշխիաների ձեռքից, որոնք հըրացանի առաջին պայթիւնը լսելիս փախչում են»:

— Բայց չէ՞ որ կառավարութիւնը արգիլել է Հայերին զէնք ունենալ:

— «Բանի՛ փարա կարժենայ կառավարութեան արգելքը. ես միշտ էլ Հայերին ասել եմ, որ պատրաստ եմ իրենց զէնք հայթայթել՝ ուզածնուն չափ. բայց լսող, ցանկացող չէ եղել. միայն վերջերս է, որ շատ ու քիչ զէնքի գնումներ են անում: Թիւրքիայում առանց զէնքի ապրել չի կարելի. այստեղ ո՛չ օրէնք կայ, ո՛չ էլ կառավարութիւն. զէնք ունեցա՛ր, քեզանից կը քաշուեն, կակնածեն. չունեցա՛ր՝ գլխիդ կը զարկեն»:

— Մէհմէտ աղայ, ասում, վկայում են, որ շատ հայասէր ես. այդ ի՞նչպէս է եղած:

— «Ուղիղն ասեմ, իմ նախնիքս Հայ են եղած. մեր տան մէջ այդ աւանդութիւնը կայ: Չը գիտեմ թէ ինչպէս բացատրեմ. Հայ տեսնելիս արիւնս սկսում է եռ գալ. երբ Հայերի մէջ եմ մտնում՝ սրտի մի առանձին հանգստութիւն եմ զգում»:

— Այս ի՞նչպէս բացատրել այն երեւոյթը, Մէհմէտ աղայ, որ 1896-ին Հայերի գիւղերի վրայ արշաւող խուժանի մէջ բաւականին մեծ թուով Չերքէզներ էլ են եղած. նոյն իսկ Դաւրայի վրայ խուժող՝ սպաննուողներից մէկը Չերքէզ է եղել:

— «Շատ ճիշտ է. բայց դրանք այն Չերքէզներն են, որ Թուրքերի եւ Թուրք կառավարութեան անմիջական ազդեցութեան տակն են գտնւում. այդպէս են այն Չերքէզ գիւղերը, որոնք Թուրք Մոլլաներ ունին. այդպէս են այն Չերքէզները, որոնք Թուրք գիւղերի մէջ՝ խառն բնակութիւն ունին: Չեր-

քէզ այն գիւղերը, որոնք Թուրքերի ազդեցութիւնից հեռու են, նրանցից եւ ո՛չ մէկը Հայի դիպել է. մէկ հողի անգամ չի գտնուել»:

— Ինչո՞ւ համար Թուրքը, մասնաւորապէս Թուրք կառավարութիւնը Հայերին չի սիրում, ասում է. այդ ի՞նչպէս էք հասկացել:

— «Թուրքերը մի բերան ասում են, որ Հայերը միտք ունին այս երկիրը մեր ձեռքից խլել եւ Հայի թագաւորութիւն առաջ բերել: Յետոյ Հայերը ունեւոր են, հարուստ են. Թուրքի աչքը Հայի ձեռքին է: Ամեն անօթի Թուրք կը մտածի թէ ինչ մի բան լինի, որ Հայերին կողոպտեն եւ իրենք հարստանան»:

— Մէհմէտ աղայ, Հայ Յեղափոխականների մասին ի՞նչ են մտածում Թուրքերը:

— «Շա՛տ են վախենում, շա՛տ: Հայ Յեղափոխականի անունից անգամ սարսափում են. եթէ բոլոր Հայերը Յեղափոխականների պէս լինէին՝ Թուրքի թուքը բերանին կը չորանար. ձայն չէր հանիլ: Բայց Հայ Յեղափոխականներն էլ քիչ են, շա՛տ քիչ...»:

— Հայ Յեղափոխականի պատահե՞լ ես, Մէհմէտ աղայ:

— «Ձեր ընկեր Փէհլիվանին. Թոգաթի փոստան գարկող այն առիւծ մարդուն ես չարաթներով տանս եմ պահել եւ նրա համար միշտ փամփուշտներ հասցրել. ա՛յ տղամարդ, ա՛յ կորիճ»:

— Մեր Կուսակցութեան հանդէպ ինչո՞ւ համակրութիւն ունիք:

— «Հէնց նրա համար, որ դուք Իտտիհատին հակառակ էք. նրա դէմ կռւում էք. երբ իմ չսիրածիս դուք էլ չէք սիրում, ասել է թէ բարեկամներ ենք»:

— Մէհմէտ աղայ, ես էլ ձեզ հէնց նրա համար շատ պիտի սիրեմ, որովհետեւ Իտտիհատին ատող էք. ասացի եւ բաժանուեցանք իրարուց:

ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՈԳԻՆ, ԽՈՒԺԱՆԱԿԱՆ ԱՐԱՐՔ. — Յունիս 2,– 15, Հինգշաբթի: Թուրք ազգայնական մոլեռանդական ոգին շատ մեծ չափով զարգացած, ծաւալ է առած Սեբաստիոյ քաղաքի եւ շրջակաների մէջ: Ամենափոքր առի–

թը ներկայանալիս՝ այդ ազգայնական, մոլեռանդական ոգին հրապարակ է գալիս գործքով, խուժանական արարքի ձեւի տակ, որ միշտ էլ կազմակերպուած է լինում՝ որոշեալ նպատակների հասնելու համար:

Իտտիհատը թէ՛ Թուրք ժողովրդին եւ թէ՛ Հայերին միաժամանակ ուզում էր հասկացնել, որ «Սահմանադրութիւն»ը իրենց կարծած Սահմանադրութիւնը չէր. ուստի Թուրքերին միշտ ձեռքի տակից խրախուսում, յորդորում էր այնպիսի արարքների մէջ մտնել, որով իրենք հասկացնել տային Հայերին թէ դեռ տիրողի և բայեայի փոխ-յարաբերութիւններ կան:

Այդ երեւոյթը, որպէս կազմակերպուած գործունէութեան արդիւնք, երեւում էր ամեն տեղ:

Սեբաստիայում էլ այսպէս երեւան եկաւ:

Վաղ առաւօտեան ընկերները եկան պատմեցին, որ թըրքական խուժանային գործեր են տեղի ունեցել, երէկ գիշեր, գրեթէ գլխաւոր այն փողոցների մէջ, որոնք տանում են դէպի Հայոց թաղերը:

Թուրք «սրիկաները», խումբ խումբ բաժանուած, սպասելիս են եղել զանազան խուլ անկիւններում եւ սրճարաններում. երբ տեսել են որ մի քիչ ուշ ժամանակ Հայեր են երեւացել փողոցների մէջ՝ իրենց տները վերադառնալու նպատակով, յարձակուել են նրանց բոլորի վրայ եւ դանակով, դաշոյնով վիրաւորելով՝ փողոցի մէջ ձգել, փախել են: Եղածները առանձնացած եղելութիւններ չէին, այլ նոյն եղելութիւնները պատահած էին մի քանի տեղ:

Թուրք ազգայնական այդ մասնակի շարժումը առանձին իրարանցում էր յառաջ բերել Հայ ազգաբնակչութեան մէջ:

Մի քիչ անցած՝ Հայ հասարակութեան բոլոր խաւերից մարդիկ եկան՝ խորհելու թէ ինչ կարող ենք անել:

Բոլոր ներկաները, առանց բացառութեան, այդ քայլը նախերգանք էին համարում աւելի ծանր գալիքների. բոլորն էլ համոզուած էին, որ դա կատարւում է որոշ յատակագծի համաձայն. որովհետեւ յարձակւող խումբերի մէջ տեսնուել, ճանաչուել էին Թուրք ծանօթ դէմքեր էլ, որոնք որոշեալ տը-րամադրութիւնների արտայայտիչներ են նկատուած ամեն ժամանակ:

— Տեղական կառավարութեան պաշտօնապէս այդ եղե-

լութիւնները հաղորդուեցա՞ն․ հարց եմ դնում ։

— Երբե՛ք, ասացին ներկաները, եւ բնաւ էլ հարկ չենք տեսնում հաղորդելու․ որովհետեւ քաջ գիտենք, որ կառավարութիւնը կտրուկ ոչինչ չի անիլ, եթէ իր սեպհական պաշտօնեաները արդէն մատ չունեն այդ բոլորի մէջ ։ Թրքական պետական ընդհանուր քաղաքականութիւնն է՝ Մահմէտականի բռունցքը միշտ զգալի դարձնել Քրիստոնէի գլխին ։ Բացի դրանից, եթէ կառավարութեան դիմենք աղերսագրերով, աւելացրին մեր ընկերները, այն կարծիքը պիտի գոյացուի, որ վախը, սարսափը մեզ տիրել է, եւ այդ կազմակերպուած «աբրեկայական խումբերը» է՛լ աւելի երես պիտի առնեն, յանդուգն դառնան ։ Հետեւաբար միակ միջոցն է ինքնապաշտպանութեան կազմակերպութիւն ։

Երկար խորհրդակցութիւնից յետոյ՝ որոշուեց գիշերապահ ինքնապաշտպան խումբեր կազմել, բոլորն էլ լաւ զինուած, որոնք պիտի գործէին ընկեր Ս․ Մուրատի հրահանգների եւ տուած յատակագծի համաձայն ։

Այդպէս էլ եղաւ․ միւս օրը՝ հազիւ մութը ընկած՝ Հայ ինքնապաշտպան բոլոր խումբերը, զանազան կողմեր ցրուած, իրենց դերի մէջն էին ։ Այդպէս էլ եղաւ եւ յաջորդ օրերը ։ Գործը դադար չը պիտի առնէր, մինչեւ որ կեանքը խաղաղութեան եւ ապահովութեան մէջ մտնէր ։

ԴՊՐՈՑՆԵՐԸ ․— Ընկեր Միհրան Զուգասըրդեանի հետ միասին այցելում ենք դպրոցները ։

Աղջկանց վարժարանը, մի ընդարձակ շէնք, կառուցուած է «Սեւ Հողեր»-ի վրայ ։

Պատմական վերյիշումը արդէն սրտաճմլիկ է ։

Մտնում ենք նախ Մանկապարտէզը․ ամեն ինչ կարգին է․ հոգեկան զմայլանքի մէջ ենք․ «Ֆրէօբելեան խաղերից» սկսած մինչեւ մանկապարտիզային կրթութեան վերաբերեալ բոլոր ուսումները, նորագոյն մեթոդներով, աւանդւում են ։ Փոքրիկները ուրախ, զուարթ՝ ծաղկալից մի պարտէզի խնկական ճնճղուկներ են ։

Բարձրանում ենք բարձր դասարանները․ չափահաս աղջիկներ շատ կան․ հայերէն խօսում են շատ լաւ ։ Հայ պատմութիւնից առատ տեղեկութիւն ունեն ։ Իրենց մէջ միայն

պակասում է համարձակախօսութիւնը․ Հայ աղջկայ ամաչկոտութիւնը դեռ իր կնիքը պահում է։

Բոլոր դասարանները այցելելուց, երեխայոց յորդորականներ կարդալուց եւ ժրաջան վարժուհիներին շնորհակալութիւն յայտնելուց յետոյ՝ անցնում ենք Տղայոց Վարժարանը։

Տղայոց դպրոցը է՛լ աւելի ընդարձակ է․ աշակերտների ահագին բազմութիւն լցրել են բոլոր դասարանները։

Միջնակարգ դպրոցների կրթութիւնը համապատշաճ կերպով աւանդւում է՝ կարող ուսուցիչների ձեռքով։

Դպրոցի մէջ տիրող ոգին ուղղակի զմայլելի է։

Մեր համակրելի բանաստեղծ Վարուժանը գրատախտակի առաջ է կանչում 14 տարեկան մի պատանու, որ գեղեցիկ առոգանութեամբ կարդում է Ֆրանսուա Կոպպէից եւ թարգմանում, ապա պատմում։ Տեսանք այդ պատանու հայերէն լեզուով գրուած շարադրութիւնները․ ամեն ինչ ցոյց էր տալիս որ ապագայ մի բանաստեղծ-վիպասան պիտի ունենայինք։

Բոլոր աշակերտների շարադրութիւնները խորին տպաւորութիւն էին թողնում ո՛չ միայն լաւ հայերէն շարադրուած լինելուն համար, այլեւ Ազատութեան, Իրաւունքների գաղափարները համարձակ կերպով պաշտպանելուն։

Դպրոցը Հայոց Դպրոց է․ սա արդէն ամեն բան ասում է, երբ մէկը գիտէ թէ ինչ ասել է Հայոց Դպրոց։

Ուսուցիչը մեր դպրոցների մէջ վարձկան չէ․ Նա աշխատում է, կուրծք մաշում աւելի գաղափարից դրդուած։ Հայ ուսուցիչը իդէալիստ է այս բառի իսկական նշանակութեամբ։

Հայ ուսուցիչը շատ անգամ տանը մէջ անօթի զաւակ է թողել, դպրոցի շէմքից ոտք կոխելուց, դասարան մտնելուց յետոյ՝ մոռացել է իր ընտանեկան ցաւերը եւ աշխատանքի է սկսել․ դա է Նրա հոգուն բաւարարութիւն տուել։

«Տո՛ւր ինձ Հայ ուսուցիչներ եւ տասը տարի չանցած ամբողջ Կովկասը կը ռուսացնեմ», ասել էր Եանովսկին, Ցարի այդ հաւատարիմ պաշտօնեան, որ ռուսականացման իր թափից վայր էր իջել, յուսահատուել, երկար աշխատանք թափելուց յետոյ եւ իր պարտութիւնն էր խոստովանել ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԻՑ։

Եւ Սեբաստիայի Հայոց Դպրոցների ուսուցիչներն ու ուսուցչուհիները այդ տեսակներից էին։ Նրանք բոլորն էլ իրենց կոչման բարձրութեան վրայ էին։

Բայց ի՞նչ վարձատրութիւն էին ստանում այդ ուսուցիչները,— մեծամասնութիւնը ամսական 2–3 ոսկի· միայն Վարուժանն էր, որ 5 ոսկի էր ստանում:

Իսկապէս այդ ռոճիկները ստանո՞ւմ էին.— ո՛չ:

Անցել էր 6–7 ամիս եւ սակայն ուսուցիչները ռոճիկ չէին ստացել, ապրում էին պարտքով:

Եւ նրանք այդ դրութեան մէջ աշխատել, հոգի էին մաշեցրել:

Հայ ուսուցիչները ե՞րբ է, որ կենդանի մարտիրոսներ չեն եղել:

Իրերի այդ դրութիւնը իսկապէս ողբալի էր:

Վերադառնում ենք տուն· կեանքի, պատմութեան հակադրութիւնների մարմնացումը մեր աչքի առաջ փռուած տեսնելով:

«Սեւ Հողեր» պատրաստող ողին ինքն է, որ անդարձ կերպով կորաւ, չքացաւ Պատմութեան Թատերաբեմից. մինչդեռ Հայ մանուկների, Հայ նահատակների արիւնով ուռճացած հողի վրայ՝ Հայկական այդ մշակոյթի կոթողն էր արձանացած, որ միաժամանակ յայտարար նշանն է Լուսոյ յաղթութեանը Խաւարի դէմ:

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՇՈՒԿԱՆ.— Երկու օր, Ուրբաթ եւ Շաբաթ (Յունիս 3|14—4|17), նուիրում եմ շուկայի ուսումնասիրութեան: Կարճ խօսելով՝ այստեղ էլ շուկան Հայոց ձեռքին է. տիրապետութիւնը կատարեալ՝ մանաւանդ արհեստների մէջ:

Տնտեսական արտադրութեան, փոխանակութեան գործը ղեկավարողը Հայն է:

Պղնձագործութիւնը այստեղ թէեւ Թոքաթի նրբութեանը չի հասնում· բայց դարձեալ ահագին զարգացում ունի:

Դանակագործութիւնը, ոսկերչութիւնը Հայերի մենաշնորհն է· կեանքը ինքն է այդ բերել:

Տիրողը մանր արտադրութեան եղանակն է:

Շուկայի գլխաւոր մսագործները Հայեր են· իսկ նպարավաճառները՝ Թուրքեր:

Շուկայի այդ տիրապետութիւնը սակայն ասել չէ, որ երկրի հարստութիւնը կեդրոնացած է Հայերի ձեռքին.— ո՛չ: Այդ հարստութիւնը գտնւում է Թուրք Բէկերի եւ կալուածա-

տէրերի մօտ: Աւատապետութիւնը այս շրջանում դեռ իր կատարեալ տիրապետութեան մէջն է:

Բացի դրանից, ամենահրատապ խնդիրը՝ ունեցածը պահել կարողանալն է. այդ ապահովութիւնն է, որ պակասում է Հայերին:

Ընկեր Կարապետ Տէր-Ղազարեանը հետեւեալ արդարացի դիտողութիւնն է անում. «Մենք շատ ուրախ կը լինենք, եթէ մեր վաստակածի կէսը մեր ձեռքը մնայ: Մենք ամենայն ուրախութեամբ պայման կը կնքենք Թուրքերի եւ կառավարական շրջանների հետ, որ մեր աշխատանքի կէսը իրենց լինի, պայմանով որ միւս կէսն էլ մեր ձեռքը մնալու ապահովութիւնը տան: Մինչդեռ հէնց այդ ապահովութիւնն է, որ չը կայ: Մեր աշխատածի հազիւ թէ քառորդը մեզ մօտ է մնում. յափշտակւում, կողոպտւում ենք ամեն ձեւի տակ:

«Մեր տեղական սովորութեան համեմատ՝ ստիպւում ենք վարկով ապրանք տալ Թուրք գիւղացիներին՝ կալոցին առնելու պայմանով: Բայց դրա կէսն էլ մեր ձեռքը չի գալիս: Եթէ վարկով էլ չը տանք, առեւտուր չենք կարող անել: Կառավարութեան երթալ, գանգատուելը եւ ո՛չ մի նշանակութիւն ունի. որովհետեւ դատարանական ծախքերը, ժամանակի վատնումը՝ դրանք մեզ աւելի սուղի են նստում, քան պահանջի ստացումը: Ուստի զրկւում, լռում ենք, գիտնալով որ ուրիշ կերպ չի կարող լինել: Եւ այդ բոլորը նրա համար, որ Հայ ենք. ուրիշ ոչինչ: Դեռ մի օր չեղաւ, որ մեր գանգատը արդար լուծում առնար: Այդ կողմից մեր հարեւան Յոյները է՛լ աւելի բախտաւոր են. նրանք այդ տեսակէտով մի տեսակ արտօնեալ դրութիւն ունեն. նրանց մի փարան անգամ չի կորչիլ»:

Շուկայի մէջ առաջնակարգ դիրք ունեցող վաճառական Շահինեանը ասում է. «Երբ Թուրք աղաների եւ Բէկերի գլուխը մի քիչ տաքանայ, խանութս կը գան եւ բերաննին կը բանան, սրտների մէջ եղածը դուրս կը թափեն: Իրենց առաջին խօսքը կը լինի.— «Դուք Հայերդ իսկապէս մեր ստրուկներն էք: Մենք ձեզ առել, գրաւել ենք Պարսիկներից, Սելջուկներից: Ձեր իւրաքանչիւրի գլուխը հիմայ հազիւ թէ մէկ Մէճիտ արժենայ: «Սահմանադրութիւն»ը չի կարող ձեզ ազատել մեր ճանկերից: Դուք մեր ապրանքն էք. ձեզ հետ պիտի վարուենք մեր պէտքին համեմատ...»:

«Այս բոլորից յետոյ, երբ առնենք թէ մեր գլխին միշտ կարկտաբեր ամպ կայ, այլեւս հասկանալի կը լինի մեր հոգեկան վիճակը», յարեց վաճառականը:

Այո՛. այստեղ էլ ընդհանուր անապահովութեան հոգը կապարի պէս ծանրացած էր բոլորի սրտի վրայ. այդ պայմաններում ձեռներէցութեան ոգին այլեւս չէր կարող գործել: Երբ անձնական ազատութիւնը պակասում է, երբ վաղուան կեանքի անապահովութեան ուրուականը միշտ ծածանւում է աչքի առաջ. մարդ ինչքան էլ յանդուգն ոգի ունենայ, դարձեալ իր ձեռքերը, ոտքերը կաշկանդուած կզգայ:

Հայերն էին միայն, որ այդ կացութիւնը տանում էին եւ այդ վիճակի մէջ գործում, արտադրում էին այն, ինչոր մի ուրիշ ազգ դժուար թէ կարող լինէր անելու:

Ահա թէ ինչու Թուրքը սարսափում է Հայի ազատութիւնից. նա ինքը շատ լաւ համոզուած է, որ Հայի կենսունակութեան առաջ ինքը միշտ պիտի փխրուի: Այն օրը, որ Հայը ազատութիւն ունեցաւ իր ընդունակութիւնները անկաշկանդ կերպով երեւան բերելու.— այն օրուանից արդէն Թուրքը ասպարէզից պիտի հեռանայ:

Բայց Հայը ապրեցաւ ու պիտի ապրի էլ՝ հակառակ ամեն արգելքների:

«ՇԱՐՔ» («ԱՐԵՒԵԼԵԱՆ») ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ. — Գորգավաճառութիւնը Իզմիրի մէջ, ինչպէս Կ. Պոլսում եւ Թուրքիոյ ա՛յլ քաղաքներում, Հայ վաճառականների ձեռքին է: Իզմիրի Հայ հարուստ վաճառականները՝ բաժնետիրական ընկերակցութիւն կազմելով՝ գորգագործութեան գործարաններ էին բացել թէ՛ քաղաքի, թէ՛ Դաւրայի եւ թէ՛ այլ քաղաքների ու աւանների մէջ:

Բուրդը շատ արժան. ձեռնաշխատանքը է՛լ աւելի արժան. Կապիտալը ճուտեր է որ հանում էր:

Մարդը մարդի գայլն է. Կապիտալը ազգ, Հայրենիք չի ճանաչիլ. նա մի անյագ վամպիռ է, որ յագենալ չը գիտէ.— այդ գաղափարները օդի մէջ չեն. նրանք իրականացած, կեանքի պատկերն են դարձած եւ ուղղի առաջ դրուած: Բաւական է միայն եղածը դիտել, վերլուծել, հասկանալ եւ արդար, իրերին համապատասխան գնահատութիւն անել:

Տեղւոյն վրայ թէեւ զարմանալի, բայց իր էութեան մէջ ոչ բացառիկ երեւոյթ. — «Շարք» ընկերութեան գործարանից մի քիչ այն կողմը՝ գորգագործ մի Ցոյնի գործարան էլ կայ. չենք ասում թէ այդ գործարանի մէջ կապիտալիստական ճրղջիկը իր թեւերը լայն բացած չէր, — ո՛չ. շահագործումը այնտեղ էլ իր տիրապետութեան մէջն էր: Բայց խրողութիւնն այն էր, որ մարդկային, կապիտալիստական «անգթութիւնը» այստեղ այնքան լայն չափերով չէր գործում, որքան որ «Շարք» ընկերութեան մէջ: Ցոյնի շահագործման պայմանները մի քիչ «մարդավայել» էին:

Գործաւորները առաջին օրից արդէն զանգատի էին եկել. ասում էին որ իրենց օրավարձերը լրիւ չեն տրւում. խուրաքանչիւրից ամսական 5–6 ղուրուշ դրամ են կտրում, հիւանդութեան եւ գործարանից դուրս երթալու պարագային իրենց վերադարձնելու պատրւակով:

Ընկերներով միասին այցելում ենք «Գործարան»ը:

Ընդհանուր վերատեսուչը մի Կեսարացի Հայ է, լաւ հագնուած, կոտրտուքներով խօսող: Ծայր աստիճանի ամբարտաւան բնաւորութիւն ունի, եսամոլ, ինքնահաւան: Մարդը ինքը անմիջական յարաբերութիւն պահելիս չի եղել գործաւորների հետ. այլ նրանց հետ միշտ խօսել է իր ստորադաս պաշտօնեաների միջոցով: Գործաւորներին տեսնելը, նրանց հետ խօսելը իր արժանապատւութեանը դէմ է համարել: Ուստի գործաւորների մասին խօսած ժամանակին՝ ա՛յնքան արհամարական ոճ է գործածում, այնքան քմծիծաղով խօսում, որ մարդ կարծում է թէ գործաւորները այդ մարդի աչքին ճանճից աւելի արժէք չեն ունեցել:

Բայց այդ բոլոր արհամարհանքի, թափած այդ բոլոր ծեծեքանքի մէջ երեւում է, որ ինքը «չտես», անտաշ մարդին մէկն է, որ փողը ամեն բան է համարում եւ նրա տիրապետող, ունեցողին էլ՝ ամենակալ:

Առաջին վայրկեանից վանողական իր բնաւորութիւնը աչքի է զարկում:

Սխալ չէին ասել, ուրեմն, գործաւորները մի քանի օր առաջ իրենց արած գանգատի ընթացքում:

Վերատեսուչը գործաւորներին տեսլիս է եղել, իր պաշտօնեաների բերանով որ. «Գործաւորները անխօս մեքենա-

ներ են․ Նրանք պիտի աշխատեն անխօս մեքենայի նման․ Նրանք ո՛չ սեպհական կամք պիտի ունենան, ո՛չ էլ զգացմունք։ Գործաւորը իր սեպհական բանականութիւնը պիտի թողնի գործարանի շէմքին․ երբ ներս մտնի՝ նա պիտի նստի, կանգնի, շարժուի, գործի այնպէս, ինչպէս որ նրան կը հրամայեն։ Գործաւորը մարդկային կերպարանքով մի անասուն է․ վերահըսկիչները նրանց հետ պիտի վարուեն որպէս պարզ անասուններին»։

Գործաւորին մէկը ասաց, որ երբ վերատեսուչը առիթ է ունեցել գործատեղին մտնել եւ պէտք է եղել որ եւ է գործաւորի դիտողութիւն անել, միշտ ասել է․ «Ծօ՛ հայվան, ծօ՛ աւանակ…»։

Նոյն այդ ընթացքը մարդը ունեցել է եւ աղջիկների, կանանց հետ․ նրանց գլխից էլ Սախական հայհոյանքը պակաս չի եղել։

Հէնց դրա համար է, որ գործաւորներն էլ իրենց կողմից ջանացել են նրա աչքին չերեւալ, որպէսզի նախատինքներից հեռու մնան։

Փակագծի մէջ ասենք, Իզմիր մենք հանդիպեցանք (1909) մի հարուստ Հայի, որ արդէն մեռած, գնացած լինելուն համար իր անունը չենք ուզում յիշել։ Այդ մարդը խօսք չէր գըտնում Սօցիալիզմը վնասակար համարելուց, ա՛յնքան որ հակառակ էր․ իր գլխաւոր փաստերից մէկն էլ այն էր, որ Սօցիալիզմը ընտանեկան կեանքը կը քայքայի, բազմակնութիւն յառաջ կը բերի։

Արդեօք խի՞ստ եղած կը լինինք, երբ ասենք թէ այդ Հայ բուրժուան առաջ «Տարք» ընկերութեան այստեղի վերատեսուչ է եղել եւ քաղաքից հեռացուած էր մատաղահաս մի քանի աղջիկների հանդէպ անբարոյականութիւն գործած լինելուն համար… Ու դրա համար էլ Սեբաստացին նախատինքով է, որ վերյիշում է այդ մարդու անունը։

Փակագիծը փակելուց յետոյ ասենք, որ մեր առաջ կանգնող՝ շողոքորթական բոլոր լարերով շարժուող վերատեսուչը, իր բառերը գործածելով, մի կատարեալ «Ոսկեզօծ էշ» է։

Վերատեսուչը մեր առաջը ընկած՝ նախ ցոյց է տալիս մըթերանոցները, այն բոլոր շտեմարանները, ուր լցուած, ամ-

բարուած են գործուած գորգերը եւ կապերտները։ Մի քանի խոշոր սենեակների մէջ 10–300 ոսկու արժողութեամբ գորգեր կան։

«Շարք»ը իր գորգերի մեծ մասը արտահանում է Եւրոպա։ Յաճախ Եւրոպայից ապսպրանք են ստանում՝ տեսակները եւ չափերը որոշող՝ ըստ այնմ էլ գործում, ուղարկում են։

Գորգերի մէջ նկարչական նորութիւն կայ. եթէ Պարսկաստանի անուանի գորգերի նրբութեանը դեռ չի հասել, պակաս էլ չէ. Թէեւ վերատեսուչը ուզում է հաւատացնել, որ իրենցը է՛լ աւելի նուրբ եւ ճաշակաւոր է։

Գործասենեակները, այստեղ էլ, հակաառողջապահական նոյն պայմաններն են ներկայացնում, ինչոր Դուրայում։ Գործաւորները իրարու վրայ խճողուած, լցուած են։ Մանաւանդ «նկարչութեան» սենեակում։

Օրավարձերը այստեղ էլ նոյն չնչին սակը ունին, ինչոր այնտեղ։

Աշխատանքի ժամերը առաջ 18–ն է եղել ·բայց իջել էր 15–16–ի։

Այստեղ էլ 6–7 տարեկան եւ չափահաս աղջիկներ շատ կան. ինչպէս եւ պառաւ կանայք ու հարսներ։

Այստեղ կապիտալիստական աշխարհի բարոյագիտական փիլիսոփայութիւնից մի տարօրինակ բացատրութիւն լսեցի. երբ վերատեսչին դիտողութիւն արեցինք աշխատանքի ժամերի չափազանց երկար լինելուն, մանաւանդ փոքրիկ երեխաների համար. կապիտալիզմի ներկայացուցիչը հետեւեալ տարօրինակ և միանգամայն բնորոշիչ պատասխանը տուեց. «Աւելի լաւ որ գործարանի մէջ կը մնան՝ կաշխատին. եթէ ազատ ձգենք, տուն երթան, ի՞նչ պիտի անեն. փողոցները դուրս պիտի գան եւ անբարոյականութիւն սովորեն»։

Գործաւորների եւ գործաւորուհիների դառնագին վիճակի մասին յետոյ։

Հայ կապիտալիստները, պարզ է, ճարտարագործութեան մասին իրական կապիտալիստական գաղափար չունեն. իրենց ունեցածը աւելի վաշխառուական է. այդ ոգին է որ թագաւորում է իրենց մէջ։

Յոգնած ուղեղով, շատ ծանր տպաւորութիւններով էր, որ տուն վերադարձանք, երբ տեսանք մեր Ընթերցարանի մէջ

կանգնած՝ մեր վերադարձին սպասող, գիւղից նոր եկած՝ ընկեր Բարսեղ Դարբինեանը: Ընկերոջ գալը մեզ համար մի տօն եղաւ:

ԸՆԿԵՐ ԲԱՐՍԵՂ ԴԱՐԲԻՆԵԱՆ.— Դարբինեան գերդաստանը ամբողջ Սեբաստիայի շրջանին յայտնի է: Այդ նահապետական տնից միշտ անպակաս են եղած քաջ, կորիճ տղամարդիկ: Ո՛չ միայն այդ գերդաստանի մէն մի անդամը յայտնի է իր կորճութեամբ, այլեւ իր նահապետական հիւրասիրութեամբ. ուստի մարդ չը կայ, որ Դարբինեաններին չը ճանաչի, նրանց հետ գործ ունեցած չը լինի:

Ընկեր Բարսեղը այդ մեծ եւ բազմանդամ ընտանիքի զաւակներից մէկն է:

Ծնած Թողորակ գիւղում, 1877–ին, մանկութիւնից ի վեր նա իր վրայ է գրաւել գիւղի ուշադրութիւնը իր անվեհերութեանը պատճառով. տղայ հասակից ի վեր՝ նա զէնքի հետ է խաղացել, զէնքով էլ մեծացել: Իր հայրը՝ Պապէյ եւ մայրը Երան ո՛չ միայն նրա այդ հակումները չեն կաշկանդել. ընդհակառակը է՛լ աւելի խրախուսել են: Ձի հեծնելը եւ զէնք բանեցնելը իր ամենասիրելի զբաղմունքն է եղել դեռ առաջին օրերից: Յայտնի է եղել որպէս ամենալաւ նշանառու և անվախ:

Իր հայրը՝ Պապէյը եւ հօրեղբայրը՝ Յակոբը «սարերի արիւծ» անունն ունէին: Բարսեղը տակաւին 14–15 տարեկան հասակին ցոյց էր տուել, որ հօր արժանաւոր զաւակն էր: Հէնց այդ պատճառով Բարսեղը չափազանց սիրում էր թէ իր հօրից եւ թէ հօրեղբօրից, որոնք ամեն միջոց նրան տուել էին, իր զինուորական հակումները զարգացնելու:

Սեբաստիայի ամբողջ շրջանը գիտէ թէ ինչպէս 1896–ին, Հայկական կոտորածների ժամանակ, երբ 150–200 Թուրք, Քիւրտ՝ Դարբինեանենց ագարակը պաշարում են՝ տունը կողոպտելու եւ տնեցիներին սպաննելու. Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան այդ ընտանիքի անդամներիցն էր եղել Յակոբը, որ կորճի պէս դիմադրել, 3–4–ի գլուխը գետին էր փռել, շատերին վիրաւորել եւ ողջ մնացողներին կորագլուխ փախցրել:

Բարսեղը հազիւ աչքերը բացած՝ ցանկութիւն է յղանում 1892–ի Յուլիսին, երթալ Դանիէլ Զավուշի հրոսակային խմբին միանալ: Ներկայանում է խմբին, իր փափագն է յայտնում,



ԲԱՐՍԵՂ ԴԱՐԲԻՆԵԱՆ

բայց չի ընդունւում, այն պատճառաբանութեամբ, որ ինքը տակաւին քաղաքական մի գործ կատարած չէ, որպէսզի վըստահութիւն ներշնչէ, որ հրոսակային խմբի վերաբերեալ ներքին կանոնագրութեան տրամադրութիւնները կարող է իրագործել:

Բարսեղը տուն է վերադառնում. առիթը շուտով ներկայանում է: Թոդորակցի Թուրքին մէկը քաջի համբաւ է հանած լինում՝ անզէն Հայերին կողոպտելուն, վիրաւորելուն եւ սպաննելուն համար: Շրջանի Հայութեան գլխին փորձանք է համարւում: Բարսեղը առաջին անգամ իր զէնքի ոյժը նրա վրայ է փորձում, վայր գլորում եւ շրջանի ընդհանուր օրհնանքին արժանանում:

Նոյն տարուայ Օգոստոսին, դեռ Դանիէլ Զավուշի խումբին չը միացած, Սեբաստիայի շրջանը առանձին իրարանցումի մէջ է մնում. որովհետեւ օրը ցերեկին մի քանի Չերքէզ մի Հայ աղջիկ են փախցնում՝ նրան անպատուելուց յետոյ:

Բարսեղը միացած Զարացի ընկեր Իգնատիոս Պալիկեանի եւ Եփրեմ Շիրինեանի հետ՝ Թոդորակից ոչ շատ հեռու՝ մի անտառախիտ վայրում սպասում են: Լուսինը հազիւ ծագած, երբ Հայ աղջիկը անպատուող Չերքէզների ձիանց սմբակների դոփիւնները լսելի են լինում. ընկերները ամէն մէկը մի քարի տակ են մնում. եւ Բարսեղի հրացանի առաջին պայթիւնից Չերքէզը ձիուց թաւալգլոր վայր է ընկնում. միւսները վիրաւորուած՝ փախչում են:

Կառավարութիւնը շատ փնտռեց. բայց սպանիչների ո՛վ լինելը չը կարողացաւ իմանալ՝ մինչեւ այսօր:

Զարացի «Թուրք սրիկաները» Հայ ազգաբնակչութիւնը դըրել էին ահ ու սարսափի մէջ՝ մանաւանդ գիշեր ժամանակները:

Բարսեղը ընկերների հետ միանալով՝ խմբային յարձակումներ է գործում այդ «սրիկաների» վրայ. նրանցից մի քանիսին վիրաւորում, ծակամուտ է անում. այնպէս որ այդ «սրիկաները» այլեւս չէին համարձակւում փողոց դուրս գալ՝ մութը ընկնելիս:

Բարսեղը դրա համար էլ օրհնանքներ ստացաւ:

Դրանից յետոյ է, որ Բարսեղը գնում, ընդունւում, միանում է Դանիէլ Զավուշի խմբին եւ խմբի աչքի ընկնող ոյժերից մէկն է դառնում:

Շապին-Գարահիսարի մէջ, մատնութեամբ, բռնուելուց եւ երկու ու կէս տարի բանտ նստելուց յետոյ, երբ զանազան ազդեցութիւնների պատճառով ազատուեց. ընկեր Դարբինեանը պարապ չը մնաց. նոյն եռանդով իր գործունէութիւնը շարունակեց:

Այդ ժամանակուայ ներքին կանոնագրի տրամադրութեանց համաձայն՝ նա որոշուեց տերրորապետ՝ Սեբաստիոյ շրջանի համար:

Իրեն խորհրդակից ունենալով ընկեր Մկրտիչ Սիմոնեանին՝ Բարսեղը այդ ժամանակները թէ ինքը անձամբ եւ թէ իր ձեռքի տակը եղող տերրորիստների միջոցով՝ հասարակական նշանակութիւն ունեցող մի քանի կարեւոր տերրորներ կատարեց:

1896-ի, Զատկի Աւագ շաբթուն մէջ, Զորեքշաբթի, երեկոյեան ժամը 6½-ին ժամանակները, Սեբաստիայի մէջ ահագին իրարանցում առաջ բերող տերրորական մի գործ կատարուեց: Քաղաքի պատիժը համարուող Ահմէտ աղան գնդակահար՝ արեան մէջ էր լողում. ոչ ոք չը գիտէր թէ ո՛վ էր նրա հեղինակը: Հայերը միայն իրենց սիրտը թեթեւցած էին զգում:

Տերրորական այդ գործը, որի կատարողը, ով լինելը բնաւ չը գիտցուեցաւ, հակառակ կառավարական այնքա՜ն հետապնդումներին, ընկեր Բարսեղի անվրէպ գնդակի արդիւնքն էր:

Յայտնի Հարէչ լեռան մօտերը՝ կառավարութեան գործիք եղող, Հայ գիւղացիներին անասելի նեղութիւններ եւ տառապանքներ ենթարկող Զերքէզ Արտուլլայի գլխակը վայր գըլորողները եղել էին ընկերներ՝ Բարսեղը, Դիվրիկցի Ակոբ Ասլանեանը եւ Խորիկը:

Ամբողջ Սեբաստիայի շրջանը տակն ու վրայ անող Սայիդի կեանքին վերջ տուողը եւ այդ «դահիճ»ից Հայութիւնը ազատողը եղած էին ընկերներ՝ Բարսեղ, Տիգրան Սանդուրեան եւ Առաքել Սանդուրեան: Դաշոյնի հարուածը սրտին մխողը Բարսեղն էր, իսկ գլխին տապարով զարկողը՝ Տիգրանը:

Կառավարութիւնը շատ փնտռեց. բայց որ եւ է հետք գտնել Ասլանեանը եւ Խորիկը:

Սեբաստիայի շրջանի տերրորական բոլոր գործերը Բարսեղն է կազմակերպել:

Բացի դրանցից, Համիտական բռնապետութեան ժամանակ՝

շրջանային մեր կազմակերպական գործը ընկեր Բարսեղի գործունէութեան մէջ մեծ տեղ է բռնել:

«Սահմանադրութիւն»ից յետոյ ընկեր Բարսեղը նոյն եռանդով եւ կորովով նուիրուել էր մեր կուսակցական գործին. ու դրա համար էլ բոլոր ընկերների, ինչպէս եւ շրջանի Հայութեան, անկեղծ համակրութիւնը ու յարգանքն էր վայելում:

«ԿՈՐԾԱՆՈՒԱԾՆԵՐԸ». — Յունիս 5|18: «Սահմանադրութեան» առաջին տարիներին, երբ Թիւրքիան դեռ գտնւում էր իր քաօսային սկզբնական դրութեան մէջ եւ տակաւին Իտտիհատը իր ազգայնական արգելիչ ցանցերով չէր կարողացել սեղմել Հայի սիրտն ու հոգին. գրականութիւնը, մասնաւորապէս Մամուլն ու Թատերգութիւնը կարողացան լայն թռիչք առնել բոլոր հայաշատ վայրերում: Ամեն տեղ իր տեղական դերասանական խումբերն ունէր, որոնք շատ յաջող ներկայացումներ էին տալիս եւ հասարակական կեանք, ոգեւորութիւն առաջ բերում:

Սեբաստիան էլ այդ հոսանքից հեռու չէր մնացել. նա էլ ունեցել էր իր առանձին խումբը, որ նպատակ էր արել ժողովրդական ներկայացումներ սարքել: Հոսանքը վարող, առաջ տանողներն էին մեր ընկերները:

Այդ օրը պիտի ներկայացուէր Շիրվանզադէի «ԿՈՐԾԱՆՈՒԱԾՆԵՐԸ»:

Հեղինակը որքան որ իր հասարակական գործունէութեան առաջին տարիներում Կովկասեան մեր շարքերի մէջ լինելով, Յեղափոխական կեանք էր ունեցել եւ այդ պատճառով էլ դատուել, աքսորուել էր Կովկասի մեր մի շարք ընկերների հետ. այնուամենայնիւ անկարող էր եղած խորապէս թափանցել, հասկանալ Մարքսիզմի վարդապետութիւնը եւ Հայ Յեղափոխական Շարժումների ոգին: Հայ Յեղափոխականը, Տաճկահայ կեանքի մէջ գործող Մարքսիստը նրան անծանօթ էր մնացել. ուստի դրանից էլ յառաջացել էր «Կործանուածներ»-ի մէջ գծագրած իր տիպերի անգունութիւնը եւ անճշտութիւնը:

«Կործանուածներ»ի մէջ անիշխանականութիւնը եւ Մարքսեան Սօցիալիզմը իրարու հետ խառնուած, շփոթուած են: Հայ Յեղափոխական վարիչները ներկայացւում են որպէս անձեր, որոնք իրենց գործունէութեան դաշտից եւ Հայ ժողովրդի

իսկական ցուցերից տեղեկութիւն չունեն: Հերվէիզմը — առնելով Հերվէի այն մտքերը, որ նա արտայայտել էր իր յայտնի գրքի՝ Leur Patrie-ի մէջ — նա պատկերացրել էր որպէս գաղափարաբանութիւն Հայ Սօցիալ Դէմօկրատի, որ ո՛չ Ազգ է ճանաչում, ո՛չ էլ Հայրենիք, այլ ուզում է Հայութիւնը, մանաւանդ Տաճկա-Հայութիւնը կլանել տալ Ռուսական պրոլետարական ովկիանոսի մէջ:

Աչքի առաջ ունենալով, որ մի այդպիսի գրուածք նորազարթ մեր ժողովրդին կարող է սխալ ուղղութեան առաջնորդել. ուստի հարկ եղաւ, որ ներկայացումը սկսուելուց առաջ տայի Հայ Յեղափոխութեան համառօտ պատմութիւնը, նրա շարժիչ ույժերը եւ Սօցիալիզմը այնպէս, ինչպէս որ է, և նա ինչ տեղ է գրաւում մեր Յեղափոխական գործունէութեան մէջ, ու այդտեղից անցնել «Կործանուածներ»ի բովանդակութեանը եւ նրա գլխաւոր հերոսների քննադատութեանը:

Ժողովրդի անհագին բազմութիւն կար. Ազգային Լսարանը ասեղ ձգելու տեղ չը կար: Երգիչ խումբն էլ իր արժանաւոր դերի մէջն էր:

Խաղը անցաւ շատ յաջող. ո՛չ թէ Սեբաստիայի համար. այլ նա կարող էր յաջող համարուել Կովկասեան որ եւ է յառաջադէմ բեմի համար էլ:

Ընկեր Զկամեանը ցոյց տուեց, որ ինքը դերասանի իսկական տաղանդ ունի:

Ընկեր Դանիէլեանը շատ գեղեցիկ կերպով պատկերացրեց Հայ ազգայնական ուսուցչի հոգւոյ բոլոր թրթռումները եւ նրա անապահով վիճակը:

Խաղը այնքան յաջող անցաւ, որ ժողովուրդը խնդրեց նորից կրկնել եւ մի առանձին ներկայացում էլ կանանց համար տալ:

Ուրախ տպաւորութեամբ տուն վերադարձանք, մէկ էլ ականատես լինելով այն թաքուն գանձին, որ մեր ազգի հոգւոյ խորքերում պահուած էր:

Հայկական արտաքոյ կարգի ընդունակութիւնը, որ մեր թշնամիներին ահաբեկում է, հէնց իր այդ գերազանցող գծերի պատճառով է:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՒԱՔՈՅԹ․— Քանի որ ընկեր Բարսեղ Դարբինեանն էլ եկել էր եւ ամեն կողմից լուրեր էին հասնում ընդհանուր անապահովութիւն ցոյց տուող, հարկ տեսնուեցաւ ժողովրդական ընդհանուր հաւաքոյթ սարքել եւ հասարակական կեանքի վերաբերեալ գլխաւոր խնդիրների մասին բացատրուել:

Հրաւիրուած էին Սեբաստիայի մէջ աչքի ընկնող եւ ազգային գործերի մէջ միջամխուող, որոշ բնաւորութեան տէր եղող բոլոր հայրենակիցները, տեղական քահանաներն էլ միասին:

Անցնում ենք անապահովութեան խնդրին․ ի՞նչ պէտք է անել:

Պարզւում է հետեւեալ տխուր իրականութիւնը:

«Ջէզոք»ների փաստաբան արտայայտիչները չխի-չխտակ ասում են․— «Մեզ համար եւ ո՛չ մի տեսակ ինքնապաշտպանութիւն է պէտք․ նա աւելի վնասակար է, քան օգտակար․ մենք անընդունակ ենք, չենք կարող ինքնապաշտպանուիլ․ եթէ ինքնապաշտպանութեան դիմենք, հետեւանքը է՛լ աւելի ծանր կը լինի․ ուստի աչքներս խփենք, մեր բախտին մեզ յանձնենք, թողնենք լինի, ինչոր պիտի լինի․ արդէն մեր ճակատագիրը այդպէս է»:

«Ջէզոք»ների մտայնութեան մի ուրիշ թարգման ասաց․— «Եթէ բռնարարութիւններ, յափշտակութիւններ են տեղի ունենում․ դրանք պատճառ չեն կարող լինել, որ մենք զէնքի պատրաստութիւն տեսնենք, մեր ոյժով դրանց վերջ տանք․ ամեն ինչ օրինական սահմանի մէջ պիտի թողնել․ ո՛չ մի ընդդիմադրութիւն պիտի անել, ո՛չ մի պատրաստութիւն․ եթէ կառավարութիւնը մեզ չի օգնիլ, մենք մեզ չենք կարող օգնել»:

Այս արտայայտութիւնները ռայեական տրամադրութիւններ էին, որ դեռ իրենց արմատը հաստատուն էին պահել մեր «Ջէզոք»ներից շատերի, մանաւանդ Հաջի Աղայական դասի մէջ:

Ինչ ասել կուզի, որ Յեղափոխական մասը բողոքուեց, ընդմիջումներ, բացագանչութիւններ արաց, հեգնանքներ թափեց․ բայց դրանք անկարող եղան համառակաշի «Ջէզոք»ներին խախտել իրենց համոզմունքներից:

Հակառակ այդ անուղղայ «Ջէզոք»ների պատճառաբանութիւններին, հաւաքոյթը կամք յայտնեց զինուել, ապահովութեան պայմանները ինքնապաշտպանութեան մէջ որոնել եւ ոյժ

տալ Կուսակցական Կազմակերպական գործին, քանի որ դա նրանց գործունէութեան մի գլխաւոր մասն էր կազմում :

Ցանկութիւն յայտնուեց, նաեւ, որ ընկեր Ս. Մուրատը եւ ընկեր Բարսեղ Դարբինեանը առանձին միասին ստանձնեն՝ շրջակայ գիւղերը երթան եւ ժողովրդին ինքնապաշտպանութեան պատրաստեն :

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆ.— Սեբաստիայի թէ քաղաքի եւ թէ շրջակայ գիւղերի մէջ կեանքի տիրապետութեան եղանակը նահապետականն է :

Շատ տներ կան, ուր միատեղ, մի յարկի, մի տան մէջ լցուած, ապրում են միասին՝ պապ, որդիներ, իրենց աղջիկներով, հարսներով՝ թոռնիկ-ծոռնիկներով : Եւ այդ ասել է 3–4 սերունդի ներկայացուցիչ : Մէկը ամենքի՝ ամէնքը մէկի.— այդ է տնային իրերի կացութիւնը : Անհատական սեպհականատիրութիւն այդ նահապետական օջախի մէջ չը կայ. ամեն ինչ ընտանիքի անդամների բաժինն է : Պապը, հայրը, մեծ մայրը տան կառավարիչ իշխանութիւններն են, ամեն ինչ տնօրինող, ամեն աշխատանք բաժանող :

Եւ դա էլ նպաստում է իրենց գոյութեան ամրապնդութեանը : Պապի, հօր կենդանութեան ժամանակ՝ եղբայրը եղբօրից բաժանուելու եւ առանձին տուն-ընտանիք կազմելու սովորութիւնը դեռ ամեն տեղ ընդհանրացած չէ. տիրողը նահապետականն է :

Շատ տներում կանանց աշխատանքը միայն չի սահմանափակւում տնային գործուածքներով. նրանք մասնակցում են ե՛ւ դաշտային աշխատանքներին :

Կիները դեռ երեսները ծածկում են, այրերի հետ միատեղ սեղան նստելու սովորութիւն չունեն : Հարսը սկեսուրի եւ կեսրարի մօտ բերան չի բանար և ո՛չ էլ իր տագրերի հետ կը խօսի :

Կանայք առանձին սեղան են նստում. դարձեալ միատեղ՝ սկեսրոջ նախագահութեամբ :

Արանց սեղան նստելիս՝ կանայք, գլխաւորապէս հարսներն ու աղջիկները դուրսը պիտի սպասեն՝ ձեռքները կուրծքի վրայ դրած, մանաւանդ երբ հիւր ունենան :

Դեռ բուն սեղանը չը բացուած՝ Սեբաստացիները սովորութիւն ունեն մի տեսակ նախասեղան ունենալ, ուր զանազան

թեթեւ ուտելիքներով, խմիչքներով ախորժակը բանալու նախապատրաստութիւն է կատարում: Դրանից յետոյ է, որ սեղանը բացւում է եւ ամենքը միատեղ հաւաքւում, կարգով նստում են սեղանի չուրջը: Շատ տեղերում դեռ մէկ ամանից ուտելու սովորութիւնը տիրապետում է:

Սեբաստացիները ընդհանրապէս կերակուրների բազմատեսակութիւն ունին: Շատ էլ հիւրասէր են. հիւրը իրենց համար շատ սիրելի է եւ ոչինչ չեն խնայիլ նրան մեծարելու, պատուելու համար:

Սեբաստացիները՝ սեղանի վրայ նստած՝ մի սովորութիւն ունեն, որի ինչ լինելը հասկանալու համար՝ խօսքը տալիս ենք մեր հանգուցեալ գործիչ՝ Վահէ Արծրունուն:

«... Հրաւիրուած ենք մեր ընկերներից մէկի տունը. երկար ճանապարհորդութիւնից նոր վերադարձած՝ սաստիկ անօթի ենք: Առաջին անգամ մի մեծ ամանի մէջ լցրած՝ բերեցին, սեղանի վրայ դրեցին մսի ջուր. սեղանի չորս կողմը նստողներս, հացը մէջը փրթեցինք, դգալը քաշեցինք եւ սկսանք ախորժակով ուտել: Դեռ ամանը կէս չէինք արել՝ երբ տանտէր ընկերը պոռաց. «Աղջի, պանիրը բե՛ր»:

Որովհետեւ մեր կողմերում պանիրը կերակուրներից ամենից յետոյ են բերում, որպէս մարսողական, ուստի կարծելով թէ այլեւս բան չը կայ, սա պատուական ապուրը նախավերջինն է, ուստի ես և իմ ընկերս, մասնաւորապէս, դգալներս արագացրինք ու աշխատեցինք որքան կարելի է շուտ փորերնիս լցնել. մինչդեռ մեր միւս սեղանակիցները ո՛չ միայն մեզ նման արագ չէին ուտում, այլ «պանիրը բեր»ը լսելուց յետոյ՝ դադար առան:

Երբ նորից կրկնուեց՝ «Աղջի պանիրը բեր». տեսանք որ հարսը մի մեծ սկուտեղի վրայ դրած՝ բերեց, սեղանի վրայ դրեց ախորժակ տուող մի խմորեղէն: Սկսանք ուտել, եւ լաւ ուտել: Դեռ մի քանի պատառ կերած–չը կերած, հիւրընկալ ընկերը դարձեալ կանչեց. «Աղջի պանիրը բե՛ր»: Չուզելով այդ անուշաբոյր եւ իւղաթաթախ խմորեղէնից զրկուել՝ սկսեցինք պատառները արագ արագ մեր կոկորդից վայր իջեցնել՝ ես եւ ընկերս. մինչդեռ միւսները հազիւ մէկ թէ երկու պատառ կերան:

Մէկ էլ տեսանք, որ տան մեծ աղջիկներից մէկը սեղանի

վրայ դրեց խորոված դառ, փորը համեմներով լցուած: Սիր-
տըս թրթռալ սկսեց, բայց փորս արդէն լցուել էր· զղջացի թէ
ինչու առաջիններից այդքան շատ կերայ: Նորից ոյժ տուե-
ցինք· չուզեցինք այդ դառնուկի համ ու հոտից մեզ զրկել· սկը-
սանք ուտել, բայց տեղ չը կար... Նորից փորձեցինք, մի քիչ
էլ առաջ գնացինք...

«Աղջի, պանիրը բե՛ր»:

— Այս անգամ մի ուրիշ սկուտեղի վրայ եկան կարմրած
հաւերը:

«Աղջի պանիրը բե՛ր»:

— Սեղանի վրայ դրուեցան տոլմաները:

«Աղջի պանիրը բե՛ր»:

— Ապա եկան նոր անուշեղէններ, պտտուական մածուն,
սերալից պանիրը....:

Բայց մենք էլ դադրած էինք սեղանին մասնակցելուց,
որովհետեւ տեղ չը կար... Ու զղջացինք, շա՜տ զղջացինք ա-
ռաջին եկածներին ոյժ տալերնուս համար:

Այնպէս որ, ընկերներ, երբ Սեբաստիա երթաք, գիտցէք
որ ամենից լաւ կերակուրները յետոյ են բերում, ուստի առա-
ջիններից քիչ կերէք, ախորժակ պահեցէք յետոյ եկողներին եւ
«պանիրը բեր»ը կը նշանակի կերակուրը փոխիր, նորը բեր»:

Սեբաստացին իր ամբողջութեանը մէջ, շատ քիչ բացառու-
թեամբ, դեռ նահապետական ազնիւ, հիւրասէր, սեպհական
կամք, բնաւորութիւն ունեցող Հայն է:

Ընտանեկան բարոյականութիւնը իրենց մէջ անաղարտ է:

Աշխարհակալութիւնը Հայի հոգին դեռ չի կարողացել
խաթարել, մանաւանդ նրա ընտանեկան կեանքին վերաբերեալ
սովորութիւնների ու հասկացողութիւնների մէջ:

Երբ ընկեր Ղօնչագիւլեանենց տանն էինք· դեռ սեղանի
նախապատրաստական արարողութեան մէջն էինք, ընկերը
հարցրեց·

— «Կովկասում պանիրը ե՞րբ կը բերեն»:

— Ամենից առաջ, որպէս ախորժակը բացող:

— «Եւրոպա՞ էլ այդպէս է»:

— Ո՛չ· այնտեղ ամենից յետոյ կը տան, որպէս մարսո-
ղական:

— «Մենք էլ պանիրը ամենից վերջը կը տանք»:

— *Ճիշտ է, այդ գիտեմ · գիտեմ թէ ձեզանում ինչ ասել է* «պանիրը բեր», *ու պատմեցի հանգուցեալ ընկերոջ գրածը։*

Այսպէս, նորից իմ մէջ վերահաստատուեց այն համոզումը, որ Հայի դիմացկունութիւնը, նրա ամեն փոթորիկների դիմադրելու մեծ գաղտնիքներից մէկն էլ ընտանիքի կազմակերպութիւնը եւ այդ մասին իր ունեցած հասկացողութիւնն է։

Երբ ընտանեկան բջիջը առողջ է · ազգը առողջ էլ կը լինի։

Դա հոգին է, եւ արտաքին քայքայիչ ձեռքը մինչեւ այնտեղ շատ դժուարութեամբ կարող է հասնել։

ԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՒԱՔՈՒՄՆԵՐԸ · — 13|26 *Յունիս · երկուշաբթի։ Հասարակութեան զանազան խաւերից եկան՝ յայտնեցին, որ Թուրքերը գիշերները խումբ խումբ գալիս, հաւաքւում են զանազան էշրաֆների տները և երկար խորհրդակցութիւններ անում, մտքերի փոխանակութիւններ կատարում։ Տրւում էին զանազան տեսակ բացատրութիւններ։ Հայերը այդ չարագուշակ մի նշան էին համարում · թէեւ հրապարակի վրայ մասնաւոր ո՛չինչ կար, թշնամական ո՛չ մի արտայայտութիւն, ո՛չ մի ցոյց։*

Մասնաւոր մարդիկ այս ու այն կողմ ուղարկելով, որոշեալ տեղեկութիւն ձեռք բերեցինք, որ Թուրքերի այդ գումարումները կապ ունէին Իտտիհատի հետ։ Այդ ժամանակները հակա-Իտտիհատական հոսանքը սկսել էր սաղմնաւորուել · մասնաւորապէս դա բղխում էր Թուրք այն պաշտօնեաներից եւ ազդեցիկ անձնաւորութիւններից, որոնց Իտտիհատական կառավարութիւնը պաշտօնազրկել էր եւ իրենց նախկին դիրքից վայր բերել, Իտտիհատական ցանկին մէջ մտնել չուզելու համար։

ՂՈՒՄՐԻԿԵԱՆԸ · — *Այսօր այցելութեան է եկած՝ Կովկասից նոր վերադարձած յայտնի գործիչ Ղումրիկեանը։ Նա մասնաւոր անուն ունի · մանաւանդ մեր Յեղափոխական հին սերունդի մէջ · նորերին անծանօթ է մնացել։ Ունի պատկառելի կեցուածք, խօսակցութեան գրաւիչ եղանակ։ Մեր Տարերային Շարժումների սկզբնական օրերում, երբ ո՛չ քաղաքական որոշ ծրագիր կար հրապարակի վրայ, ո՛չ էլ մարմնացած որոշ ձգտումներ եւ ամեն ինչ խառն ի խուռն էր, ազգա-*

յին ամեն բաղձանք արտայայտում էր միայն դժգոհութեամբ, բողոքով եւ ամեն ոք դարման էր խորհում՝ ազգին օգնել, Հայրենիքին փրկութիւն բերել էր ուզում իր գիտցածին եւ հասկացածին համեմատ.— Ղումրիկեանը այդ շրջանին ծանօթ է եղել, որպէս մի գործիչ, որ տուն-տեղ թողած զանազան կողմեր է ընկած մի բան անելու մտադրութեամբ: Իր գլխին հաւաքելով մի խումբ դժգոհ երիտասարդներ, Խրիմեան Հայրիկի եւ Ներսէս Վարժապետեանի գաղափարներից մղուած, գնացել է Բաղէշի կողմերը, այն տեղերը աշխատել է հայրենասիրական պրօպագանդա անել, ինքնապաշտպան խմբեր կազմակերպել. այդ նպատակով բաւականին ժամանակ լեռներն է մնացել, որպէս փախստական ասպատակ եւ ապա ուղղակի անցել է Կովկաս, այնտեղից պէտք եղած օգնութիւնը ստանալու եւ յետոյ երկիր վերադառնալու, գործելու դիտումով:

Երեսուն ամբողջ տարիներ Կովկասի զանազան կողմերը մնալուց, կեանք անցկացնելուց յետոյ, խորին ծերութեան հասած՝ իր ծննդավայրն էր վերադարձել՝ մէկ էլ տեսնելու այն տեղերը, ուր իր մանկութեան եւ երիտասարդութեան առաջին տարիներն էին անցել:

Իր խօսակցութեան մէջ խիստ դառնութիւն, ցաւ կայ Կովկասի երիտասարդութեան եւ գործիչների հանդէպ. ասում է, որ նրանք ղեկավարում են մի գործ, որից իրենք տեղեկութիւն չունեն. պատմում է զանազան դէպքեր, տալիս է անձնաւորութիւնների անուններ, որոնք հեռուն նստած գործում, խօսում են Տաճկա-Հայի եւ Տաճկաստանի անունով, առանց այդ երկիրը եւ ժողովուրդը պէտք եղած կերպով ուսումնասիրած եւ նրա կեանքի պարագաները ճանաչած լինելու: «Տաճկա-Հայ ժողովուրդը, նրան շրջապատող պայմանները մինչեւ այսօր էլ ոչ միայն Կովկասի Հայերին, այլ շատ գործիչների էլ անծանօթ են», եզրակացնում է մեր այցելուն:

Ընդունում ենք, որ իր ասածների մէջ ճշմարտութեան, արդար դատողութեան մի որոշ չափ կայ. բայց ամեն բան մի ջրով չը պէտք էր լուանալ:

Հարցնում ենք թէ ինքը ի՞նչ առաջարկ էր արած հասարակական, մանաւորապէս Հայկական Դատով զբաղուող Կովկասեան երիտասարդութեան, որ չէր ընդունել եւ իրեն բաւականութիւն չէր տուել:

— «Կովկասցիները ինձ առաջարկեցին նորից երկիր վերադառնալ, գործել, առանց նախապէս իմ դրած պայմաններին բաւականութիւն տալու»:

— Կարելի՞ է հասկանալ թէ ի՞նչ էին այդ պայմանները:

— «Ես առաջարկեցի, որ իմ տրամադրութեանս տակ նախապէս դնեն տասը, քսան հազար րուբլի, որպէսզի Քիւրտ բէկերի համար զանազան նուէրներ գնեմ, պատրաստեմ եւ իմ ծանօթ անձնաւորութեանց հետ Դերսիմ ուղարկեմ, այնտեղի ազդեցիկներին հասկացնելով, որ այս բոլորը ձեզ ուղարկուած է Ղումրիկեանի կողմից, որ մօտերս այս կողմերը պիտի գայ: Այդ նախապատրաստական քայլը անելուց եւ Քիւրտ բոլոր բէկերի բերանը առաջուց ճաղցրացնելուց յետոյ, ես մի քանի լաւ զինուած երիտասարդներ հետս առնելով, դրամական եւ զէնքի ամեն պաշար ունենալով, Դերսիմ պիտի մտնէի, տեղական Քիւրտ ցեղապետների գլուխն անցնէի եւ ապստամբութիւն յառաջ բերէի: Բայց դրանք չընդունուեցան, անգործնական համարուեցան:

— Ենթադրենք մի րոպէ, որ ձեր պայմանները ընդունուած լինէին եւ դուք էլ Դերսիմ անցած, այդ ապստամբութիւնը ո՞ր ազգի անունով պիտի լինէր եւ ինչո՞ւ, ի՞նչ նպատակների հասնելու համար:

— «Դրանով Թուրք կառավարութեան դէմ կռուած կը լինէինք» ասաց, բայց ինքն էլ դժգոհ մնաց իր պատասխանից:

Ղումրիկեանին յիշեցնում եմ, որ համանման առաջարկ ինքը բերել էր Էնգէլիի մեր ընկերների միջոցով՝ Բագուի «Բանուոր» մեր Մասնաճիւղին:

Մեր «Բանուոր» Մասնաճիւղը, որ այդ ժամանակ դերակրչիռ ոյժ ունէր Կովկասի մէջ՝ յարաբերութեան մտաւ Կեդրոնական Վարչութեան հետ, Լօնդօն, որպէսզի Ղումրիկեանը, որպէս լիազօր ներկայացուցիչ՝ երկիր ուղարկուի կազմակերպութիւններ յառաջացնելու եւ ընդհանուր ապստամբութեան ծրագրի այն մասերը նախապատրաստելու, գործադրելու, ինչոր հնարաւոր էր եւ նախատեսնուած էր ներքին ծրագրի մէջ, որպէս սկզբնական անհրաժեշտութիւն:

Մասնաճիւղի միջոցով, Կեդրոնական Վարչութիւնը իր պայմանները եւ ինչ եղանակով գործի սկսելը ուզեց գիտնալ·

միանգամայն գնելով մեր այն յատակագիծը, որին ինքը պիտի հետեւէր իրականացնելու համար:

Ղումրիկեանը գործ կատարելու համար նախապէս ուզեց՝ անմիջական կերպով իր տրամադրութեան տակ դնել քսան հազար ռուբլի, որպէսզի այդ պայմանով երկիր մտնէր՝ ազդեցիկ թէ՛ Թուրքերին, թէ՛ Քիւրտերին եւ թէ՛ Հայերին կաշառէր եւ ապա Կեդրոնական Վարչութիւնը լրացնէր իր բոլոր այն պահանջները, որ ինքը կը ներկայացնէր եւ որոնց մասին այժմեանից խօսել չէր ուզում, քանի որ չը գիտէր թէ նրանց քանակը եւ ընդարձակութիւնը մինչեւ ուր պիտի հասնէր:

Կեդրոնական Վարչութիւնը, ինչ ասել կուզի, այդ պայմանները չընդունեց, առաջարկեց իր հետ վեր առնել մի քանի գործիչ-պրոպագանդիստ ընկերներ, պէտք եղած քանակութեամբ դրամ, եւ միատեղ երկիր մտնել ու անել այն՝ ինչոր Կեդրոնական Վարչութիւնը կը հրահանգէր:

Ղումրիկեանը այդ պայմանը չէր ընդունել եւ մեր յարաբերութիւնները խզուել էին:

Դրանից յետոյ նա ապրելիս է եղել Կովկաս՝ որպէս սովորական անհատ, առանց որ եւ է քաղաքական Կուսակցութեան անդամակցելու եւ նրան ոյժ տալու, թէեւ ինքը մասնաւոր համակրութիւն ունէր դէպի մեր Կուսակցութիւնը:

Կովկասի մէջ, ընկերների գրածից երեւում էր, որ լաւ համբաւ ունէր, որպէս անկեղծ հայրենասէր:

Ղումրիկեանը պատկանում էր մեր այն սերնդին, որ այլեւս չէր կարող ներկան հասկանալ. այդ սերունդին մինչեւ վերջ անծանօթ մնաց Հայկական Յեղափոխութիւնը: Նրանցից շատերը բացասական դիրքի մէջ մտան՝ իրենց անտեղի քննադատութիւններով, երբ Շարժումները սկսուեցան:

Մարդիկ կաշառելով, երկրի ազդեցիկներ ձեռք առնելով. դրանով ժողովրդական Յեղափոխութիւն չի լինիլ: Թէեւ դա համոզումն էր ո՛չ միա՛յն Ղումրիկեանի, այլեւ նրա նման շատ շատերի, որոնք «գործիչ», «բանիմաց» տիտղոսներն ունէին չահած:

Չենք ասում, որ Կովկասի երիտասարդութիւնը ազատ է քննադատութիւնից եւ նա իր պարտականութիւնը կատարեց. բայց ի՞նչ արաւ Կ. Պոլսոյ երիտասարդութիւնը, որի մէջ հարիւրաւոր համալսարանականներ կային. դրանցից ո՞ր մէկը իր

անձնական զբաղմունքը թողեց եւ երկիր մտաւ գործելու :

Ի մի բան, Կովկասի երիտասարդութեան է՛լ աւելի լաւ ծանօթ էր Տաճկա-Հայ ժողովրդի դրութիւնը, Հայրենիքի կացութիւնը, քան Կ. Պոլսոյ այն երիտասարդներին, հրապարակախօսներին, ազգային գործիչներին, որոնք հազարներով բնանակիր Հայաստանցիներ ունէին իրենց քթին տակ եւ որոնց հետ յարաբերութեան մէջ մտնելը իրենց անձնական՝ վեհաշուքային արժանապատուութեանը դէմ էին համարում : Իսկ թէ երկրի ցաւերից, Տաճկա-Հայ Դատից՝ Կ. Պոլսոյ երիտասարդութիւնը, իր գործիչները մինչեւ վերջը կոյր մնացին. դա էլ իրողութիւն էր :

— Թէեւ ծերացած էք եւ տարիքնիդ առած՝ արդեօք գործելու տրամադրութիւն ունի՞ք, հարցնում եմ :

— «Այլեւս բան չեմ կարող անել. ժամանակս անցել է. եթէ չը մեռայ, սիրելիներիս, բարեկամներիս տեսնել, վայելելուց յետոյ՝ նորից միտք ունիմ Կովկաս վերադառնալ. այստեղի կեանքը այլեւս ես չեմ կարող տանել», պատասխանեց խօսակիցս :

Յորդորեցինք իրեն, որ իր խօսակցութեան պարագային՝ ժողովրդի չէզոք մասին տալ, խօսի, որ զէնք առնեն, ինքնապաշտպանութեան պատրաստուին, քանի որ իր խօսքը արժէք կարող էր ունենալ, որովհետեւ Սեբաստիայի մէջ հին գործիչի անաղարտ անուն ունէր :

Այսպէս, շատ գոհ մնացինք, որ առիթը ունեցանք երկրի մէջ տեսնելու մեր Տարերային Շարժումների լաւ ներկայացուցիչներից մէկին :

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ. — 14|27 Յունիս. Երեքշաբթի : Բաղէշի շրջանում երկար ժամանակ գործող՝ Դաշնակցական գործիչ-զինուորներից Կայծակ Առաքելը իր հետ ունենալով մի քանի ուսուցիչներ եւ տեղական Դաշնակցականներից մի քանի հոգի՝ եկել առաջարկում են, որ մեր եւ իրենց մէջ համագործակցութիւն կնքուի. քանի որ ընդհանուր անապահովութիւն կայ :

Ներկայ են եւ մեր Մասնաճիւղի Վարչութեան անդամները :

Առաջարկը շատ խելօք, նպատակայարմար եւ ժամանակի անհրաժեշտութեան համապատասխան էր :

Մեր ընկերները շատ դառն գանգատներ արեցին, ասելով որ Դաշնակցական ընկերները շատ են կլանուել Իտտիհատով, որ այդ Կուսակցութեան տեղական Մասնաճիւղի հետ իրենք շատ սերտ յարաբերութիւն են պահում եւ հէնց դա գլխաւոր պատճառներից մէկն է, որ իրենց մէջ յաճախ սուր ընդհարումներ են տեղի ունենում:

Դաշնակցականները իրենք էլ խոստովանեցան իրենց մեծերի գործած սխալը եւ անկշիռ քայլը՝ համագործակցական առանձին դաշինք կնքելով Իտտիհատի հետ, ինչոր բնաւ չէր համապատասխանում Հայ իրականութեան· բայց իրենք ցանկանում էին միայն զուտ տեղական նշանակութիւն ունեցող խնդիրների մասին առանձին համաձայնութեան գալ մեր Մասնաճիւղի հետ:

Երկար խորհրդակցութիւնից յետոյ, որոշուեց պաշտօնական համաձայնաթուղթ չը կնքել, քանի որ Դաշնակցական տեղական մարմինը մի այդպիսի իրաւասութիւն չունէր եւ եթէ կնքէր էլ անարժէք կարող էր լինել, երբ իրենց ղեկավարիչ ընկերների ցանկութեան հակառակ եղած լինէր· ուստի ընդհանուր հասկացողութիւն եղաւ, որ Դաշնակցականները, որքան հնարաւոր է, խոյս տան տեղական Իտտիհատականների հետ յարաբերութիւն պահելուց եւ երկու Հայ Կուսակցութիւնները միասին ձեռք-ձեռքի տան զինուելու եւ ինքնապաշտպանութեան գործին, մէկը միւսին օգնելով իր միջոցներով, առանց, նաեւ, մէկ մէկու պրօպագանդային որ և է խոչնդոտ լինելու:

Այդ հասկացողութեամբ էլ ժողովականները ցրուեցան:

Ցաւալի էր, շա՜տ ցաւալի, որ դեռ Մուստաֆա Նէջիպի հոգին չէր հասկացուել: Նա ամեն կերպ աշխատել էր Դաշնակցականներին գրգռել մեր ընկերների դէմ եւ երկու Կուսակցութիւնների միջեւ լայն անջրպետ էր ստեղծել:

Բայց ժամանակի յառաջացրած խնդիրները եկան այդ թիւրիմացութիւններին վերջ տալու եւ երկուսին իրարու մօտեցնելու, քանի որ երկուսի էլ անմիջական ցաւը նոյնն էր, ընդհանուր սլաքը երկուսի էլ կուրծքին էր ուղղուած:

ՂԱՋ-ՄԱՂԱՐԱ ԳԻՒՂԻ ՔԱՀԱՆԱՆ.— Եկած է Ղաջ-Մաղարա գիւղի քահանան, պատմում է իրենց գիւղական ցաւե-

րից, ասում է, որ իրենք բոլորովին անապահով են շրջակայ այլազգիներից · ուստի խնդրում է, որ գործիչ ուղարկուի իրենց գիւղը կազմակերպելու եւ իրենց զէնք հայթայթելու:

Քահանայի առաջարկը ընդունուեցաւ · որոշուեց, որ իրենց ցանկութեան լրումն տալու համար սպասեն ընկեր Ս · Մուրատին եւ ընկեր Բարսեղին, որոնք պաշտօն պիտի ունենային բոլոր գիւղերը այցելելու եւ կազմակերպելու՝ ինքնապաշտպանութեան պատրաստութիւններ տեսնելու նպատակով:

ԿԱՍԿԱԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ · — 15|28 Յունիս, Չորեքշաբթի · Թուրք բէկերից մէկի տանը ծառայող մի Հայ ստոյգ լուր էր բերել, որ Թուրքերի համախմբումները արդարեւ հակա-Իտտիհատական հոսանքի արդիւնք էին:

Բացի դրանից՝ տեղեկութիւն առեց, որ վերջերս Կովկասից բաւականին թուով Թուրք երիտասարդներ են Տաճկաստան եկել եւ պատմում են այն մեծ խանդավառութիւնը, որ Կովկասի Թաթարների մէջ տիրել է Թիւրքիայի օրէցօր զօրեղացումը տեսնելով: Եկւորների ընդհանուր յորդորն է եղել շուտով յարձակուել Ռուսիայի վրայ, քանի որ նա իր ոյժերը բոլորովին կազդուրած չէ Ճապոնական հարուածից:

Թուրքերից մէկը՝ Հայ ծառայի պարզելով՝ ասելիս է եղել, «Մենք այս երկիրը արիւնով ենք տիրել, արիւնով էլ պիտի պահենք եւ միշտ պատրաստ պիտի լինենք արիւն թափել»:

Բայց մի քիչ յետոյ աւելի սոսկալի իրականութիւն պարզուեց, ինչոր է՛լ աւելի ապացուցեց Իտտիհատական հոգու դըժոխային սեւութիւնը:

Հայոց բոլոր փողոցների մէջ Թուրքերը թունաւորուած շաքարեղէններ էին թափել: Հայ երեխաները չը գիտնալով, հաւաքել կերել էին · երկու հոգի մեռել էին, եւ մի քանի հոգի էլ անկողին ընկել:

Բարեբախտաբար շուտ էր իմացուած · բժիշկները աճապարեցին օգնութեան հասնել եւ փողոցները անմիջապէս մարդիկ հանուեցան, որ հաւաքեն եւ տնեցիներին զգուշացնեն իրենց երեխաներին պատուիրելու, որ այսուհետեւ փողոցների մէջ թափուած որ եւ է ուտելու բան չը վերցնեն:

Այդպիսի հրէշային ոճիրներ գործելու ընդունակ՝ միայն Թուրք ազգայնականութիւնը կարող էր հանդիսանալ:

ԸՆԿԵՐՆԵՐ Ս. ՄՈՒՐԱՏԻ ԵՒ ԲԱՐՍԵՂԻ ՄԵԿՆՈՒՄԸ. — Ընկեր Ս. Մուրատը եւ ընկեր Բարսեղ Դարբինեանը միասին մեկնեցան շրջակայ գիւղերը կազմակերպելու եւ ինքնապաշտպանութեան վերաբերեալ պէտք եղած միջոցները ստեղծելու՝ այդ մասին մշակուած ծրագրին համաձայն:

Այսպիսով մնացի մինակ:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ. — 15—28 եւ 16—29: Սեբաստիայի մէջ էլ դեռ սովորութիւն չը կար, որ այր ու կին, տղայ ու աղջիկ միասին դասախօսութիւնների, հրապարակային ժողովների եւ թատերական ներկայացումների ներկայ լինէին: Որքան որ մեր գործիչները առանձին ջանք էին թափած այդ նախապաշարումը վերացնելու, անկարելի էր եղել:

Տեսնելով որ ուրիշ հնարաւորութիւն չը կայ, յորդոր, քարոզ կարդալը իր անմիջական արդիւնքը չը պիտի կարողանար տալ. ուստի լաւ համարուեց, տեղական այդ սովորութեանը ենթարկուելով, կանանց համար առանձին դասախօսութիւն կարդալ:

Դրա համար էլ երկու օր վրայ ու վրայ՝ մեր Մասնաճիւղը հրապարակային դասախօսական ժողով սարքեց բացառապէս կանանց եւ աղջկանց համար:

Այդ դասախօսութիւնների մէջ պատմուեցաւ Հայկական Խնդիրը, Հայ Յեղափոխութիւնը. առուեցաւ որ կանայք էլ ինչ պարտականութիւն ունին եւ ինչ կարող են անել: Թելադրուեցաւ, որ իրենք էլ կազմակերպուեն և հետեւեն Սոց. Դէմ. Հնչակեան այն մի քանի Տիկինների եւ Օրիորդների օրինակին, որոնք միատեղ գալով՝ առանձին կարդանոց-արհեստանոց էին բացել եւ չքաւոր աղջիկներին հաւաքելով՝ նրանց կար ու ձեւ, կարի մեքենայի վրայ աշխատել էին սովորեցնում եւ այդպիսով միջոց տալիս, որ աղքատ ընտանիքները դիւրութիւն ունենան իրենց օրապահիկը հայթայթելու:

Իրենց գաղափար տրուեցաւ Հայ կեանքի մէջ գործող կանանց մասին եւ այն ընդհանուր շարժման վերաբերեալ, որ ընդգրկում է Կանանց Հարցը:

Դասախօսութիւնը լրանալուց յետոյ՝ առուեցաւ որ իրենց

մանաւորապէս հետաքրքրող եւ լաւ չը հասկացուած խնդիրների մասին հարց տալ՝ առանց ամաչելու:

Տեսնելով տեղական ամօթխածութեան հասկացողութիւնը, որ թոյլ չի տալիս բերան բանալու եւ շատերը տեղերից չէին շարժւում, թէեւ իրարու հետ ունեցած փսփսոցից երեւում էր որ ասելիքներ ունին.— յայտարարեցի, որ իրենց ասելիքները գրաւոր ներկայացնեն:

Այդպէս էլ եղաւ. բաւականին հետաքրքիր հարցեր մէջտեղ եկան. շատերը մաքուր եւ անսխալ հայերէն էին գրել:

Հարցերից մի քանիսին պատասխանելուց յետոյ՝ Օրիորդներից մէկը, որ սովորոյթքի կաշկանդումից իրեն մի քիչ արձակուած ուզեց տեսնել՝ մատը բարձրացրեց եւ խօսք ուզեց:

Օրիորդը, սահուն հայերէնով, սկսեց փաստել, որ Հայ Օրիորդները եւ կիները արդէն տնային շատ աշխատանք ունին, չեն կարող կազմակերպուելով՝ մեծ գործ կատարել. «Բացի դըրանից, աւելացրեց Օրիորդը, եթէ մենք կազմակերպուենք, գործենք, ազգի վիճակի վրայ խորհինք, էլ ե՞րբ մեր հոգու փրկութեան համար պիտի աշխատինք»:

Եւ այս ասողը հազիւ 15–16 տարեկան մի աղջիկ էր, որ վրայից ուղղակի անմեղութիւն էր թափւում:

Գրուած թերթիկներով մի քանի հոգի հարց էին տուել. «Իրաւունք ունի՞ն հայրը եւ մայրը աղջկան նշանելու, ամուսնութեան տալու, առանց նրա կամքը նախապէս հարցնելու»:

«Սկեսուրի եւ հարսի փոխադարձ յարաբերութիւնը ի՞նչ պիտի լինի», մէկը հարցնում էր:

Մի թերթիկի վրայ ճիշտ այն դիտողութիւնն էր եղել, ինչոր Ատաբազարի եւ Իզմիրի Օրիորդներից եւ Տիկիններից ասել էի. «— Ձեր ասածները շատ ճիշտ են. բոլորն էլ կընդունինք. կանայք մինակ չը պիտի պարփակուէին իրենց խոհանոցի մէջ. նրանք էլ ընկերային, հասարակական կեանքին պիտի մասնակցեն. բայց դա նախ պէտք է հասկացնել մեր ամուսիններին, հայրերին եւ եղբայրներին. արգելքը նրանք են»:

Եւ դա շատ ճիշտ էր: Այդ երեւոյթը ընդհանուր էր այն բոլոր տեղերում, ուր մի առանձին ձգտում կար Հայ կինը, Հայ Օրիորդը հարէմական դրութեան մէջ պահելու:

Հետզհետէ լեզուները բացուելով, հարցերի տեղատարափ էր, որ սկսեցին թափել:

Իրենց խոստացայ, որ կանանց եւ Օրիորդաց ազատութեան մասին առանձին խօսելիքներ կունենամ տղամարդկանց· միայն, աւելացրի, որ ձեր մասին ամենից առաջ դուք ինքներդ պիտի խորհէք, ուսումի կազմակերպութեան մէջ պիտի մտնէք, գործէք որոշեալ ծրագրով եւ ուղղութեամբ:

Արդիւնքը այդպէս էլ եղաւ· բաւականին ստուար թուով Տիկիններ եւ Օրիորդներ եկան՝ միացան մեր Կանանց Մասնաճիւղին:

ԹՈՒՐՔ ԽՕՋԱՆԵՐԸ·— 21 Յունիս····· ընկեր Միհրան Զուգասարդեանը եկաւ՝ յայտնեց, որ մի քանի Թուրք Խօջաներ տեսութեան են գալիս՝ աւելացնելով, «Հարկաւոր է զգոյշ խօսակցութիւն ունենալ»:

Ներս մտան հինգ Խօջաներ· երեսներից ուղղակի մոլեռանդութիւն է կաթում: Սկսեցին դուրս թափել Թրքական շողոքորթութեան բոլոր երանգաւորումները:

Ասում են· «Չափէն աւելի ուրախ ենք, որ մեր քաղաքն էք եկել եւ մեր Հայ հայրենակիցների միտքը բացում, լուսաւորում էք»:

Անցան ուրիշ լարի· «Մեր քաղաքի մէջ եղած Հայերը շատ լաւ, բարի մարդիկ են· շատ մեծ յառաջադիմութիւն են անում, մեր պետութեան շատ օգտակար են»:

Ուրիշ նիւթ առան· «Այս «Սահմանադրութիւնը» մեզ շատ օգտակար եղաւ· իրարու մօտեցանք, տեսանք որ բոլորս էլ մի երկրի զաւակ, մէկ ջրի եւ հողի եղբայրներ, հայրենակիցներ ենք»:

Խօսում էին· իրենց հրամցուած ծխախոտը առա՛տ առա՛տ քաշում· արտաքին երեւոյթը շատ լաւ էր· բայց ամեն նշան ցոյց էր տալիս, որ լեզուների տակը մի բան կայ:

Վերջը Խօջաներից մէկը կէս ժպտուն հարցրեց· «Հինչակ էֆէնտի, կուզէինք ստոյգը գիտնալ· իրա՞ւ է, որ ձեր Կուսակցութիւնը պահանջում է, որ ձեր Պատրիարքն էլ նախարարաց Խորհրդի մէջ մտնի եւ մեր Շէյխ-Իւլ-Իսլամի կողքին նստի»:

Ուղղակի զարմացած մնացի. տեսայ որ բոլորն էլ չուխ-ները կարածների պէս՝ աչքները վրաս տնկած՝ պատասխանիս են սպասում :

— Այդ ձեզի ո՞վ ասաց, Խօջա էֆէնտի, կարելի՞ է գիտնալ :

— «Էնպէս, լսել ենք» :

Հարցը ինձ համար պարզուեց. այդպիսի մի յայտարարութիւն արածը պիտի լինէր Մուստաֆա Նէջիպը՝ Թուրք մոլեռանդութիւնը մեր Կուսակցութեան դէմ գրգռելու համար : Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցու մէջ մեր Հրապարակային ժողովի ընթացքում, ուր 5–6 հազար բազմութիւն կար, մենք ասել էինք, որ Թիւրքիան եթէ ուզում էր նորագունանալ՝ իր Նախարարական Խորհրդի մէջ Կրօնական որ եւ է ներկայացուցիչ չը պիտի պահէր :

Ասածները այդտեղից էր ծագում ասել եւ Թրքական զունուորում ասացել :

Այդպիսի մի հարց, իրաւ է, Կ. Պոլսոյ Յոյն մամուլի մէջ երեւան էր եկած. բայց մեր գործիչներից եւ ո՛չ մէկը այդպիսի մի խնդիր յարուցած էր :

Դժուար չեղաւ այդ զրպարտութիւնը հերքել, Խօջաներին տալով մեր ծրագիրը :

Հաւատացրի, որ այդպիսի մի գաղափար ո՛չ մեր Կուսակցութիւնը պաշտպանել է և ո՛չ էլ կը պաշտպանի : Իրաւ է, յարեցի, մենք Հայ Պատրիարքի «առանձնաշնորհումները» պաշտպանում էինք՝ որպէս Հայ Ազգային տարրական իրաւունքներ. բայց երբէք պահանջ չէինք կարող դնել, որ մեր Պատրիարքը Նախարարական Խորհրդի մէջ Շէյխ-Իւլ-Իսլամի կողքին նստէր եւ այնտեղից վարէր մեր կրօնական-հասարակական գործերը :

Մոլեռանդութիւն բուրող այդ հիւրերից բաժանուեցանք վերջապէս :

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ — 22 Յունիս. Թոքաթցի մեր ընկեր Մանուէլեանը՝ իր ընկերակից Հայ զինուորներից մի քանիսին հետն առած՝ մեր Ընթերցարանն է եկել իրենց սպառնացած վտանգի մասին խօսելու :

Պատմածից հետեւեալն է երեւում :

Հայ զինուորներին ամեն կողմերից բերել՝ հաւաքել են Սեբաստիա : Տեղական զինուորական հրամանատարը տես-

նելով, որ 500-ից աւելի Հայեր զօրանոցի մէջն են, իսկ բուն Թուրքերի թիւը 60–70-ից չի անցնում. խորհելով որ Հայ զինուորները կարող են ապստամբութիւններ յարուցանել, ցոյցեր սարքել՝ Հայաստանի մէջ այդ ժամանակները անպակաս եղող բարբարոսութիւնների առթիւ. որոշում է Հայ բոլոր զինուորներին ապազինել, զէնքերը ձեռքներից առնելով՝ մըթերանոցների մէջ դնել եւ բանալին էլ Թուրք տասնապետներին ու հասարակ զինուորներին տալ. իսկ Թուրք զինուորները ո՛չ միայն չեն զինաթափւում, այլ նրանց հրաման է տրւում կրակ բանալ Հայերի վրայ, երբ անհանդստութեան մի փոքր նշան տեսնեն:

Հայ զինուորները հաւաստիացնում են, որ իրենց եւ Թուրք զինուորների յարաբերութիւնները այնքան լարուած են, որ ամեն րոպէ կարող է բաղխում տեղի ունենալ:

Պատմում են նաև թէ ինչպէս Թուրք Չավուշները իրենց ստիպելիս են եղել յայտարարելու, որ իրենք ո՛չ թէ Հայ են, այլ Օսմանցի. ինչոր սուր վիճաբանութիւնների եւ կռիւների դուռ է բացել:

Գանգատւում են թէ ինչպէս կոշտ ու կոպիտ՝ զինուորական վարժութեան մէջ իրենցից շատ ստոր եղող Թուրք զինուորներին, ազգայնական խտրականութիւնից մղուած, իրենց վրայ մեծ են կարգում, տասնապետների, յիսնապետների աստիճան տալով. մինչդեռ իրենք բնաւ աստիճանի բարձրացում չեն ստանում՝ հակառակ իրենց ընդունակութիւններին: Իսկ Թուրք մեծերը սովորութիւն են արած եղել՝ Հայ զինուորներին պարտաւորեցնել իրենց կեղտոտ շորերը լուանալու եւ զօրանոցի մէջ եղած ամենածանր գործերը կատարելու: Այդ հանգամանքն էլ պակաս չի նպաստել ներքին վէճերին եւ կռիւներին:

Բացի դրանից՝ ամենաչնչին խնդիրների համար Հայ զինուորներին սաստիկ պատիժներ են տրւում, իսկ Թուրքերին՝ ո՛չ. նրանք մի տեսակ արտօնեալ վիճակ են ունեցել:

Հայ զինուորներին ուրիշ խորհուրդ չէր կարելի տալ, եթէ ո՛չ ներքին կազմակերպութիւն ունենալ, Հայ դրականութեան հետեւիլ, զանազան օրինական ճանապարհներով բողոք բարձրացնել՝ իրենց դրութիւնը թեթեւացնելու. Կուսակցութեանց կեդրոններին եւ Հայ Ազգային Իշխանու-

թեան գրել․ իսկ իրենք սեպհական միջոցներ ձեռք առնեն, որ ընդհարման պարագային զէնք ունենան։

Ընկեր Մանուէլեանը չափազանց ճարպիկ, վարպետ էր․ նա չէր, որ տակը պիտի մնար ներկայացած պարագային։

Բաւականաչափ գրքոյկներ իրենց հետ առնելով՝ զօրանոց վերադարձան։

ՍԱՅԼԱՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ ԵՒ ԲԱՂԴԱԴԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ․

— Սեբաստեան ունի իր մասնայատուկ նուագահանդէսը։ Մեր Ընթերցարանը քաղաքի այն մասի մէջն է գտնւում, ուրտեղից գիւղացիները իրենց բեռնատար սայլերով վայր պիտի իջնեն՝ չուկայ երթալու՝ իրենց բերքերը ծախելու համար։

Դեռ վաղ-առաւօտեան՝ հազիւ ծէգը տուած՝ հարիւրաւոր երկանիւ, քառանիւ սայլեր՝ իրարու յետեւից շարան-շարան ընկած գլորւում, յառաջանում են։ Ամեն սայլ իր յատուկ «ճզրտալը» ունի եւ անիւների այդ «ճզրտու»կից կազմւում է մի կատարեալ նուագահանդէս, մի տեսակ ամբողջական սիմֆօնիա․ սխալ չի լինիլ եթէ ասենք՝ դա մի նուագահանդէս է, որի գործիքները սայլերն են․ իսկ լարերը՝ անիւները․․․․․։

Սովորութիւն է, առաւօտները, փողոցի այդ մասի վրայ կանգնել եւ լսել այդ «ճզըլտուկ»ը, որ գիւղական մի հրապուրիչ պատկերի զգացմունք է ներշնչում։

Հազիւ սայլերի շարանը վերջացած՝ յանկարծ լսուեց տարօրինակ մի աղմուկ․ գոռիւն-գոչիւնը չորս կողմը բռնեց, կարծէք՝ քաղաքը կրակ ընկած, փախչող-փախչողի է։ Ճանապարհի վրայ գտնուող ամեն մարդ աշխատում է մի ապահով անկիւն գտնել՝ պատսպարուելու համար։

Երեւեցան 10–15 սուրհանդակ կառքեր, որոնց վարիչները անդադար գլուխը կորցրածի պէս պոռում, կանչում էին «Ճանապա՛րհ», «Յե՛տ կեցէք», «Դո՛ւրս կանգնեցէք», «Հեռացէ՛ք»։ «Սուրհանդակների» այդ շարանների առջեւից եւ յետեւից ձիավարում են չորս ձիաւոր զաֆթիաներ, որոնց ձիերը Դոն Քիչոտի ձիերից ոչնչով չեն տարբերւում թէ արագաշարժութեան եւ թէ նիհարութեան տեսակէտից։

Եւ երբ Թիւրքիայի մէջ յաճախ «փօստա» է զարկւում, «փօստայի կառքերից» կորուստներ են տեղի ունենում, թըղ-

թատրական ո՛չ մի ապահովութիւն կայ․ դա բնաւ զարմանալի չէ, երբ տեսնուի թէ ինչ անհոգութեամբ «կառքերը» բեռնաւորուած թղթերը՝ կտրտուած, մաշուած տոպրակների մէջ են նետուած եւ յանձնուած այնպիսի մարդոց, որոնք ամէն բոպէ կարող են գողերին գողակից լինել եւ նրանց հետ միասին աւարել իրենց խնամքին յանձնուած իրեղէնները:

Մեռնելիք Թիւրքիայի իրական մէկ պատկերն էլ դա էր:

«ԴԵՐՎԻՇ ԲԱԲԱՆ» — 23 Յունիս: Բարձրանում է մի սոսկալի աղմուկ․ ժողովրդի խռնումը ահագին է․ մարդկանց մի ծով բազմութիւն․ բոլորն էլ մի գլուխ աղաղակում են՝ որքան ձայն ունին:

Այդ ամբոխի առաջը ընկած է մի «Դերվիշ», զգեցուած՝ երկայն մազերով, կերպարանքից ուղղակի թոյն է թափւում, բերանից փրփուրը ծորում է, ձեռքին ունի մի հաստ մահակ՝ ծայրին երկաթ հագցրած․ միշտ ծա՛նր ծա՛նր քայլեր է արձակում, օրօրւում, մերթ ոստոստում, մերթ թռչկոտում․ յանկարծ ձեռքի փայտը գետին զարկելով՝ կանգ է առնում եւ սկսում կատաղած շունչով «երգել»․ երբ «երգ»ի վերջին տողին է հասնում՝ այդ ահագին բազմութիւնը սկսում է յանկերգը կրկնել՝ իր կողմից էլ փրփուր թափելով․ իսկ հարիւրաւոր Թուրք լամուկներ՝ ձեռքներին Թրքական դրօշ՝ միաբերան ճչում են՝ «Փատիշահըմ չօք եաշա՛»:

Ուշադրութեամբ լսելով՝ ընկերները ասացին, որ երգուածների ամբողջութիւնը իսլամութեան փառաբանութիւնն էր՝ «գեավուրութեան» դէմ ուղղուած:

Սա այլեւս Թրքական իսկական մշակոյթն էր:

Այստեղի՞ց էր, որ պիտի յուսացուէր բարեկարգեալ, նորագունացած, եւրոպականացած Թիւրքիա:

Գաղափարը ինքնին անուրջների մէջ միայն կարող էր սաւառնել՝ այդ բիրտ, անհանդուրժելի իրականութեան առաջ:

Ահա՛ այսպիսի դէպքերում է, որ փրփրած ամբոխը յարձակւում է «Քրիստոնէից» վրայ եւ արիւն-քրտինքով ձեռք բերած վաստակը մի քանի րոպէի մէջ ոչնչացնում՝ ըստ երեւոյթին անպատասխանատու, բայց պատասխանատու անձերի կողմից․ որովհետեւ այդ բոլորը կատարւում է կառա—

վարչութեան աչքի առաջ. իսկ Թրքական կառավարութիւն կը նշանակէր Թրքական իշխանութիւն, որ վայրագութիւն, ասիականութիւն, անմշակութականութիւն է իր ձեւի, էութեան եւ արտայայտութեան մէջ:

Եւ սրանք, Եւրոպական մշակոյթով տոգորուած, նրա յառաջադէմ հանդիսացող՝ Հայ ժողովրդի տէրերն էին:

Պարզ էր հակադրութիւնը. այդտեղ երկու ծայրեր էին, որ դէմ դէմի էին կեցած. նրանք միասին լինել չէին կարող, նրանցից մէկը պիտի լինէր:

Թուրք իշխանութիւնը, Թուրք ասիականութիւնը պատմութեան հասանքը այդ կէտին էր հասցրել եւ այնտեղ էլ կանգ առել. անջատականութիւնը անհրաժեշտութեան կարգն էր անցել:

Երբ Հայ ժողովուրդը շարունակական սարսափի մէջ է. դա իր մնայուն պատճառը ունի:

«Դերվիշական» այսպիսի իշխանութիւններ առօրեայ դէպքեր են, որ կատարւում, տեղի են ունենում: Դա գլոր-ւող կեանքն ինքն է:

Երբ Թուրք «կրաւորական» ժողովուրդը յանկարծ «դի-ւահարի» պէս ցնցւում է, արիւնը գլուխը տալիս.— դա՝ իր սրտի, հոգու, կեանքի բոլոր պայմանների մէջ՝ լուլի լցուած, տարածուած, ձեւաւորուած է:

Հայ Յեղափոխութիւնը մի քանի անհատականների գործ չէ. այլ ա՛յն իրական կեանքի, որի մէջ Հայը ապրում էր: Յեղափոխական Շարժումները Հայի համար լինել չը-լինելու կենսական Գործ էին դարձել: Հայ Յեղափոխութիւնը Հայ կեանքը ինքն էր, իր բոլոր տուիքներով:

ԳՈՐԾԱՒՈՐԸ.— 27 Յունիս.— «Շարք» ընկերութեան Սեբաստիայի մանածիւղի «Գործարան»ի մէջ աշխատող գործաւորների դրութիւնը ուղղակի անտանելի էր:

Գործաւոր՝ այր թէ կին, աղայ թէ աղջիկ, մի քանի անգամ գանգատի եկան. բացատրեցին այն անխիղճ շահագործումը, որին իրենք ենթակայ էին:

Հազիւ ծանր հիւանդութեան անկողնից նոր վեր կացած՝ ընկերների հետ միասին վերատեսչին՝ Զաքարիա «աղայ»ին գնացինք՝ համոզելու, որ «իր» գործաւորների աշ-

խատանքի ժամերը մի քիչ կրճատի եւ վարձաքները աւելացընի : Խօսեցինք : Ինքն էլ ընդունեց, որ աշխատանքի ժամերը երկար էին, աշխատավարձերը՝ քիչ. բայց խոստացաւ անմիջապէս գրել Իզմիր՝ Տնօրէն Խորհրդին եւ այնտեղից հրահանգի, համաձայնութեան սպասել. «Ես ինքս՝ իմ գըլխու ո՛չ մի բան կարող եմ անել», եզրակացրեց :

Դա հարկաւ կապիտալիստական մի խաղ էր :

Պարզ եղաւ, որ այդ մարդը ոչինչ էլ չը պիտի անէր, եթէ դեռ աւելի չը խստացնէր :

Եկաւ Կիրակին. գործաւորների զանազան բաժանմունքների ներկայացուցիչները Ակումբ եկան, յայտնեցին, որ իրենք որոշել են գործադուլ անել, եւ իմ խորհուրդս էին ուզում ունենալ :

— Բոլոր գործաւորներդ կազմակերպուա՞ծ էք. Գործաւորական Միութիւն ունի՞ք :

— «Ո՛չ, ո՛չ մի կազմակերպութիւն ունինք» :

— Ընդհանուր գանձարան ունի՞ք, որպէսզի գէթ մի քանի օր կարողանաք դիմանալ :

— «Ո՛չ, պահեստի ո՛չ մի դրամ» :

— Ուրեմն ի՞նչ յոյս ունիք յաղթութիւն տանելու և ստիպելու, որ ձեր պայմանները գործարանատէրը ընդունի :

— «Մենք երբ չը գործենք, նա ստիպուած պիտի լինի մեզ կանչել. գործարանատէրը իր գործը չի կարող դադարեցնել» :

— Բոլորդ իրարու համամի՞տ էք, միաբա՞ն :

— «Ո՛չ բոլորը, մեծամասնութիւնը մեր կողմն է» :

— Ամեն մէկդ ձեր ապրուստը քանի՞ օրով կարող էք հոգալ. պահած շատ ու քիչ դրամ ունի՞ք :

— «Բնա՛ւ. կերթանք ճանապարհները քար կը կոտրենք, նպարավաճառների մօտ կը մտնենք, ուրիշ գործ կը գտնենք :

— Բայց ձեզ քար կոտրելու գործ կը տա՞ն. ո՞րն է այդ ճանապարհը : Նախապէս նպարավաճառներին տեսել, տեղ ապահովե՞լ էք, որ ձեր ընտանիքը անմիջական քաղցից ազատ մնայ.

— «Ո՛չ» :

— Գործադուլ անել ուզող Հայ գիշերապահներդ քանի՞ հոգի էք :

— «Մօտաւորապէս քսան» :

— Ձեր գործը արհե՞ստ է։

— «Ո՛չ․ ամեն մարդ գիշերապահութիւն կարող է անել եւ հինածների փայտերը բարձրացնել, տեղը դնել, երբ գործուածը լրանայ»։

— Ձի՞ կարող գործարանատէրը ձեր տեղը ուրիշ Հայ կամ Թուրք կանչել․ որոնք ձեր գործը կարող կը լինեին անել, առանց ձեր պէտքն զգացուելու։

— «Կարող է»։

— Գորգագործ Հայ աղջիկներին կարո՞ղ են Թուրք աղջիկներ եւ կանայք փոխարինել։

— «Կարող են եւ շատ կան»։

— Գծագրիչ–նկարիչներն էլ ձեզ հետ համաձա՞յն են։

— «Ոչ բոլորեքեան, միայն մի մասը»։

— Վերջնական ձեւ տուած գծագրութիւնները եւ նկարները անմիջապէս գործաւորուհիների՞ն են տրւում, որպէս նըմոյշ՝ աշխատելու։

— «Ո՛չ․ նկարները ամբարւում են․ գծագրուածներից միայն մի չնչին մասն է առօրեայ կարիքին գործածւում»։

— Ասել է թէ գործարանատէրը, . նկարիչ–գծագրիչների բացակայութեան, նրանց չը գործելու պարագային, դեռ նըկարների ահագին տրցակներ ունի իր գզրոցների մէջ։

— «Այո՛․ տարիների համար»։

— Այդ պայմանների ներքոյ՝ ի՞նչպէս էք ուզում գործադուլ անել, երբ ձեր տեղը անմիջապէս ուրիշ գործաւորներով կարող է լցնել․ երբ դուք ո՛չ պահեստի, ո՛չ դիմանալու դրամ ունիք, ո՛չ էլ կազմակերպուած էք։

— «Ասում են, որ Ամերիկայից հեռագրով մեզ համար իսկոյն 200–300 ոսկի կը գայ, երբ գործադուլի սկսինք»։

— Նախ թող դրամը գայ, ձեզ ապահով զգացէք, եւ յետոյ սկսեցէք։

— «Մինչեւ որ չսկսինք՝ չը պիտի գայ»։

— Իմ խորհուրդս է, քանի որ կազմակերպուած չէք, գործաւորական դրամարկղ չունիք, առ այժմս գործէք, մինչեւ որ բաղձալի կազմակերպութիւն յառաջ բերէք, պատրաստութիւն տեսնէք եւ ապա գործադուլ յայտարարէք։ Ձեր գործադուլը յետաձգեցէք, պատրաստեցէք եւ նպաստաւոր առաջին վայրկեանին՝ գործի սկսեցէք․ հիմայ դուք անպատրաստ էք,

տանում կը տաք եւ գործարանատէրը չէ, որ ձեզ կը խղճայ, որովհետեւ Հայ է: Գործարանատէրը միայն շահ, յաւելեալ արժէք կը ճանաչի. ազգութիւնը, կրօնը նրա համար նշանակութիւն չունի. դրանք պարփակւում են իր շահի շրջափակի մէջ:

Գործաւորների հոգին այնքան դառնացել էր, որ իմ նախազգուշացումներիս չանսալով՝ գործադուլ էին յայտարարել: Զաքարիա «աղան» իր գործը առաջուայ պէս շարունակում էր, որպէս թէ ոչինչ պատահած չը լինէր:

Ընկեր Բալուլեանը, որ մեր բոլոր խօսակցութեան ներկայ էր, ասաց. «— Հեռուից քայլերը փոխելուց անգամ յայտնի է թէ գնացող աղջիկը «գործարանի աղջիկ» է թէ՞ տանու: «Գործարանի աղջկայ» մէջքը միշտ ծռուած է լինում, դէպի առաջ հակուած, նա կորաքամակ է. գլուխը՝ շատ նստելուց՝ ուռած. ուստի քայլերը արձակած ժամանակ՝ միշտ օրօրւում է աջ ու ձախ: Բնութիւնը ոչինչ չի խնայել Սեբաստացուն առողջ սեռնելու համար. բայց «գործարանի» ապականուած օդի, տամկութեան եւ փոշու պատճառով՝ թոքախտը սոսկալի ճարակ է անում: «Գործարանի» մէջ գործող ո՛չ մի գործաւորուհի, ո՛չ մի տղամարդ կայ, որ թոքախտից բռնուած չը լինի: «Գործարանի» աղջիկները չունին Սեբաստացու տանու աղջկայ վառվռուն, հրացայտ աչքերը. նա՝ թօշնած, դեղնած, ոսկրացած այտերի հետ՝ խամրած աչքեր ունի: Ուրիշ ի՞նչ արդիւնք կարելի էր սպասել, երբ մի մատղահաս աղջիկ օրական պարտաւորուած է 16–17 ժամ անընդհատ աշխատելու՝ նստած, մէջքը ծռած: Եթէ Իզմիրի Հայ վաճառականներին, «մեր գործարանատէրերին» հարցնես, նրանք կասեն որ իրենց արածը մի «բարիf» է. «բարեգործական», «հայասիրական» նպատակով է, որ այդ «Գործարանը» բացել են, չքաւորներին ապրելու միջոց տալու համար. բայց իրականութեան մէջ այդ «Հայ գործարանի» մէջ մարդկային շահագործումը անլուր եւ ամենաանխիղճ չափերի է հասնում: «Գործարանատէրերը» շատ լաւ գիտեն մեր տնտեսական նեղ կացութիւնը. ուստի օգտւում են վամպիրի անյագութեամբ. ծծում եւ կմախք են դարձնում բոլոր նրանց, որոնք իրենց «բարեբարեալներն» են նկատում: Այս քաղաքիս մէջ գորգի վաճառական-գործարանա-

տէր մի Յոյն էլ կայ. չենք ասում, որ նա չի շահագործում,— ո՛չ. նա էլ իր դերի մէջն է. բայց նա «մերոնց» հետ համեմատելով՝ «մարդասէր», «խղճի տէր» կարող ենք համարել. որովհետև «Հայ Գործարանի» մէջ 1–2 դուրուշ ստացող գործաւորուհին՝ այնտեղ ստանում է 3–4 դուրուշ եւ օրական 12 ժամից աւելի չի աշխատցնում, թէև արտադրոյթը համարժէք լինէր: Մի քանի անգամ Քաղաքական ժողովը եւ Սեբաստիայի հասարակութիւնը թէ՛ գրաւոր եւ թէ՛ բերանացի բողոքել է եղած անօրինութեանց դէմ. բայց ո՛չ մի հետեւանք չի ունեցել: Ես էլ անվերածելի համոզում ունիմ, որ կապիտալիստը կապիտալիստ է, նրա համար ազգութիւն, խիղճ, կրօն, մարդասիրութիւն իր շահերի շրջանակի մէջն է»:

«Շարք» ընկերութեան Գործարանների համար բուրդ գընողը՝ մեր ընկեր Տիգրանն էր: Նա թուանշաններով ցոյց տուեց, որ միջին մեծութեամբ, հասարակ մի գորգ, կարպետ գործելու համար՝ նախնական նիւթը եւ ձեռքի աշխատանքը հազիւ գործարանատիրոջ կարժենայ ո՛չ աւելի քան 1 ոսկի. այն ինչ նա նոյն այդ գորգը, կարպետը վաճառում, նրանից շահում է ո՛չ նուազ քան 15–20 ոսկի: Դեռ թողնենք Եւրոպայից յատուկ յանձնարարուած այն գորգերը, որոնց արժէքը 50–300 ոսկու էր հասնում:

«Հայասիրութիւնը», «բարերարութիւնը», «կրօնը», ուրեմն, պատեաններ էին՝ կապիտալիստական՝ շահագործական ոգին պահելու, թագցնելու համար:

Երբ 1 ոսկի ծախսող Հայ կապիտալիստը 15–20 ոսկի է շահում եւ «բարերար», «մարդասէր», «ազգասէր» անունն է վաստակում. պէտք է ընդունել, ուրեմն, որ աշխարհիս բոլոր կապիտալիստները մի մի «բարերարներ» են: Սակայն իրականութիւնը ասում է, որ նրանք ո՛չ թէ «բարերարներ», «մարդասէրներ» են, այլ մարդը շահագործողներ. եւ Հայ կապիտալիստը, եթէ ոչ կրկնապատիկ աւելին, նա նոյնքան շահագործող է, որքան որ միւս կապիտալիստները:

Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔԸ.— Յունիս 28. ընկեր Միհրան Զուգարդեանի եւ Մանանձիգի Վարչութեան բոլոր անդամների հետ միասին գնում ենք Ս. Նշանի Վանքը այցելութեան:

Առաջին անգամ հանդիպում ենք Գործադուլաւորներին,

որոնք Վանքի սենեակներից մէկի մէջ հաւաքուած՝ Խորհըրդակցում են ի՛նչպէս անել՝ իրենց անել դրութիւնից դուրս գալու համար: Շատերը իրենց տանը ունէին կին, երեխայ, որոնք հաց էին ուզում: Շատերն էլ ծերացած, աշխատանքի անընդունակ դարձած՝ հայր, մայր, փոքրիկ եղբայրներ, քոյրեր ունէին. մնացել էին ուրիշի ձեռքին նայող: Տեսարանը ինքնին աղեկտուր էր: Մի փոքր խորհրդակցութիւնից յետոյ, որոշուեց, որ մեր Մասնաճիւղի Վարչութիւնը անմիջական օգնութեան հասնի չափազանց կարիք ունեցողներին, ի հարկին ժողովրդական հանգանակութիւն բանալով. եւ միւս կողմից Քաղաքական Ժողովը մէջտեղ ձգել՝ Զաքարիա «աղային» համոզելու, որ գործադուլաւորներին նորից իր գործարանի մէջն առնի: Այդ միսիան յանձն առան ընկեր Զաւգասարգեանը եւ ընկեր Շիրինեանը:

Այցելեցինք Վանքի զանազան մասերը:

Ս. Նշանի Վանքը նոյնն է, ինչոր Հայոց բոլոր Վանքերը: Միջնադարեան այդ հաստատութիւնները ժամանակավրէպ դառնալով՝ բոլորովին շեղուել են իրենց սկզբնական նպատակներից եւ ծառայում են անհատներ պահելու, կերակրելու ի վնաս Հայ համայնքին:

Վանքը ունի ընդարձակ, արգասաբեր դաշտեր, յուրթի արօտավայրեր, ջրարբի գետիններ. բայց ո՞վ է հոգացողը, ո՞վ խնամողը, ո՞վ արդիւնաբերողը: Ամեն ինչ անտէր–անտիրական՝ երեսի վրայ է թողնուած:

Վանական սեպհականութիւն նկատուող ընդարձակ կալուածները մնացել են անմշակ, ցանուած արտերն էլ անհոգութիւնից խանձուած. թէեւ դրանք կարող էին, եթէ խնամատար ձեռքերում գտնուէին, հազարաւոր ոսկի եկամուտ բերել:

Աշխարները, մեղրի փեթակները, ինչպէս սովոր են ասել Հայոց Վանքերի անտեսութեան նկատմամբ, ուտող–ուտողի է,— ո՛վ զօրաւոր է, ո՛վ օրւան մարդն է, ձեռքին իշխանութիւն ունի. դրանք նրա սեպհականութիւնն են. վայելողը նա է՝ անհաշիւ, անպատասխանատու կերպով:

Վանական այդ կալուածներից ստացուած եկամուտներով է, որ առաջ դպրոցները պահուելիս են եղել. բայց այդ աղբիւրն էլ էին ցամաքեցրել, եւ դրա համար էլ խեղճ ու-

սուցիչները եւ ուսուցչուհիները 7–8 ամիս ռոճիկ երես չէին տեսել եւ ապրում էին պարտքով:

Վանական Վարչութիւն էր կազմուել, որի առաջին նպատակն էր եղել այդ աղբիւրից ապահովել Առաջնորդի ռոճիկը. եւ արդարեւ ապահովուած էր, թէեւ դրանից տուժում էին դպրոցները: Բայց հարցնո՛ղ, փնտռողը ո՞վ էր. չէ՞ որ իրաւունքը զօրաւորինն է: Մեր «աղաների» համար նախ Վանք, Ժամ, Պատարագ եւ ապա դպրոց:

Անկարելի է Ս. Նշան Վանքը այցելել, առանց դողալու. մարդու միջով հպարտութեան մի սարսուռ է անցնում, երբ տեսնում է, որ առաջդ տարածւում է Հողդարը, այն վայրը, որ ծնել է Աբբայ Մխիթարին, այդ իրական Մեծ Մարդին, որի անունը մեր մշակոյթի, մեր վերածնութեան, մեր պատմութեան մէջ միշտ ոսկի տառերով գրուած կը մնայ եւ կողակաւորուի Ներսէսների, Մեսրոպների, Շնորհալիների անուան հետ: Հողդարը մի նուիրական անուն է մեզ համար եւ կը մնայ էլ, որքան որ Հայութիւն կայ:

Այդ Մեծ Մարդու ոգին էր, որ մեզ դրեց սարսուռի մէջ:

Հայի ընդունակութիւնը, ձեռներէցութիւնը, աշխատասիրութիւնը, իդէալական ոգին շատ քիչերը կան, որ այնքան ամուր եւ տեւական հիմքերի վրայ են դրել, որքան Մխիթարը. եւ դրա համար էլ նրա անունը սերունդէ սերունդ երկիւղածութեամբ, հպարտութեամբ է, որ կը յիշուի. եւ պէտք է որ յիշուի, որպէս մի մեծ օրինակ, անձեռագործ փառահեղ մի արձան:

ՎԵՐՋԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ. — 29 Յունիս: Լսարանի մէջ բազմութիւնը ահագին է: Դասախօսութեան նիւթն է՝ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐ»: Նորից պատմում, վերակրկնում է Հայ Յեղափոխութեան պատմութիւնը, նրա ծնուցիչ պատճառները, նպատակը: Շեշտում է Իտտիհատի ի՛նչ լինելը եւ ի՛նչ նպատակ ունենալը ու ժողովրդին ասում է՝ ամեն բանից առաջ ինքնապաշտպանութեան պատրաստուիլ, Իտտիհատին չը հաւատալ, կազմակերպուիլ...:

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ. — Այստեղ աւելորդ չենք համարում տալ Սեբաստիայի շրջանի մարդահամարի համեմատական

աշխատանքը այնպէս, ինչպէս որ մասամբ Թուրք կառավարութեան մատեաններից, մասամբ էլ Ազգային տոմարներից եւ ծխական աղբիւրներից՝ քաղել, դասաւորել էր Առաջնորդարանը:

Մարդահամարը որքան որ տարրական է եւ բնաւ չի համապատասխանում իսկական վիճակագրութեան պահանջներին — այնուամենայնիւ դա հետաքրքրութիւնից զուրկ չէ եւ մօտաւոր գաղափար կարող է տալ ազգաբնակութեան թուական յարաբերութեան մասին:

Մեր Յիշատակների Երրորդ Մասի մէջ այդ մասին պիտի անդրադառնանք:

Իսկ մինչ այդ՝ այժմեանից յիշենք, որ Թուրք Կառավարութիւնը, ներքին մասնաւոր քաղաքականութեամբ, պետական ամեն հնարաւորութիւն ձեռք էր առել այստեղ էլ, ինչպէս միւս բոլոր շրջաններում, Հայերի թիւը անհամեմատ կերպով նուազ ցոյց տալու:

Այս շրջանն էլ կտրատել, այնպիսի բաժանումների էր ենթարկել, որ Հայերը միշտ փոքրամասնութիւն կազմէին, իսկ Մահմէտականները՝ մեծամասնութիւն:

Այստեղ էլ, կառավարութեան հասկացողութեամբ, Բողոքական եւ Կաթոլիկ Հայերը Հայ չէին համարուել. մինչդեռ վաչկատուն, թափառաշրջիկ Քրդերը, տեղից–տեղ փոխադրուող Չերքէզները երկու–երեք անգամ էին համրուել՝ պարզապէս Միսլիմանութիւնը առաւելագոյն թիւ ներկայացնելու նպատակով. իսկ Միսլիմանութիւն համանիշ է նկատուել Թրքութեան:

Սա, արդէն, Թուրք Ազգայնականութեան աւելի քան կէս դարու անփոփոխ քաղաքականութիւնն է եղել:

Եւ այդ բոլորը պետական այն խեղճ հասկացողութեամբ, որ Հայկական մասնաւոր բարեկարգութիւններ տեղի չունենան եւ Ասիայի մէջ էլ չը կրկնուեն պատմական այն երեւոյթները, որոնք տեղի էին ունեցել Բալքաններում:

Հայերի թիւը փոքրամասնութիւն ցոյց տալ՝ Մահմէտականներինը՝ մեծամասնութիւն. որպէսզի անշարժութիւնը շարունակուի եւ Թուրքը Թուրք մնայ:

Պատմութեան օրէնքները չեն, որ այդպիսի քմածին արբանագրութիւններ չեն խորտակում:

ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ ՍԵԲԱՍՏԻՈՅ ՇՐՋԱՆԱԿԻ

Տիվրիկի կիւրճոյ Սեբաստիոյ · Վիճակ

Գաւառակներ	Գաւառակներ (Գաղա)	Գիւղախումբ	Գիւղեր	ՔՐԻՍՏՈՆԵԱՅ Հայ	Յոյն	Ընդհ.	ԻՍԼԱՄՆԵՐ Թուրք	Քիւրտ	Չերքէզ	Ընդհ.	Համագ.
1	Կեդր. Գազա	4	104	68.550	275	68.825	52.500			52.500	121.325
2	Եէնի-խան	4	142	6890	475	7365	6.250	145	876	7.271	14.636
3	Գոչ-Հիսար	4	175	22.650		22.650	19.890	2800	364	23.054	45.704
4	Զարա	5	259	25.930	5145	31.075	22.450	9600	490	32.540	63.615
5	Պիւնեան	4	91	11.830	1275	13.105	10.848			10.848	23.953
6	Ազիզիէ	6	218	3580		3580	2.647	2100	2216	6.963	10.543
7	Կիւրին	3	54	26.820		26.820	25.801	1960	726	28.487	55.307
8	Գանկալ	5	132	18.250		18.250	16.885	1744	922	19.551	37.801
9	Տարէնտէ	3	46	9650		9650	8.669	968		9.637	19.327
10	Շէհր-Գըշլա	4	136	38.090		38.090	28.756		990	29.746	67.836
11	Տիվրիկ	6	129	23.150		23.150	22.640	300		22.940	46.090
		48	1486	255.430	7170	262.600	217.336	19617	6584	243.537	506.137

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՍԵԲԱՍՏԻՈՅ ՇՐՋԱՆԱԿԻ

Բ․— Ազգութեան տեսակէտէ

Թուրքեր	Սիւննի	126,896	217,336
	Ալեվի	90,440	
Քիւրտեր	Ալեվի	12,180	19,617
	Սիւննի	7,437	
Չերքէզներ			6,584
Յոյներ			7,170
Հայեր	Լուսաւոր․	249,201	255,430
	Բողոքական	3,423	
	Կաթոլիկ	2,806	
			506,137

Ա․— Կրօնի տեսակէտէ

Սիւննիներ	Թուրք	126,896	140,917
	Քիւրտ	7,437	
	Չերքէզ	6,584	
Ալեվիներ	Թուրք	90,440	102,620
	Քիւրտ	12,480	
Քրիստոնեայ	Հայ	225,430	262,600
	Յոյն	7,170	
			506,137

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ.— Սեբաստիան (Սըվազ) պահել է իր հին անունը: Սակայն այսօրուան քաղաքը հնի տեղը բռնած չէ: Այն քաղաքը, ուր Միհրդատը իր հոյակապ պալատն էր կառուցել, ներկայ քաղաքից ութը քիլօմէտր հեռու՝ Արեւելք է գտնւում, դէպի Ալիս գետը, այնտեղ՝ ուր որ այսօր Գարբազ գիւղն է:

Այժմեան քաղաքը Ալիս գետից երկու քիլօմէտր հեռու է գտնւում, մօտաւորապէս տասը հազար քիլօմէտր շրջագծով:

Բուսականութեան կողմից Սեբաստիան շատ աղքատ է. բուսական գլխաւոր հարստութիւնը կազմում են լայնատերեւ ուռենիները, բարտիները եւ կաղամախի ծառերը:

Հողը բերրի, արգաւանդ է. դրա համար էլ Սեբաստիան, իրաւամբ, նկատուել է հացահատիկների շտեմարան:

Հին Կապադովկիայի այդ մասը՝ բացի լայնատարած հովիտներից՝ հրապուրիչ ո՛չինչ ունի. հեռւում փռւող լերանց շղթաներն են, որ ակնապարար տեսարան են ներկայացնում:

Ընդարձակ դաշտի մէջ՝ Սեբաստիան մի տեսակ ճնշող, տխուր տպաւորութիւն է թողնում. մռայլ ամպերը միշտ կախ՝ միստիքականութեան զգացում է, որ դիտողի մէջ արթնցնում են:

Դէպի Եւդոկիա տանող ճանապարհին՝ Ալիս գետի վրայ, Հռովմէական տիրապետութեան ժամանակից մնացած՝ մի կամուրջ կայ, որ հիմայ «Էյրի-Քէօփրու» («Ծուռ Կամուրջ») անունն ունի:

Տեղացի Հայերի մէջ շրջող աւանդութեան համեմատ, «Ծուռ Կամուրջ»ը շինել է տուել Հայոց Սենեքերիմ Թագաւորի աղջիկը, կոփածոյ քարերից եւ տասնուերկու աչքից: Գետի ուժգին հոսանքից չը վնասուելու համար՝ ճարտարապետը դիտմամբ ծուռ շինած լինելով, անունն էլ մնացել է «Ծուռ Կամուրջ»:

Սեբաստիան անտանելի ձմեռ ունի — ցո՛ւրտ, բո՛ւք,

բորա՞ն · ամառն էլ սաստիկ տաք է անում · Հէնց դրա համար տենդը, թոխատայը անպակաս է ։

Ջուրը, միւս տեղերի հետ համեմատելով, շատ առատ է · առուակները ամեն կողմից խշխշալով գիւղերն են մտնում եւ ապա աւելցածը գալիս՝ գետը թափւում ։

Նորագոյն մի պետութեան մէջ՝ Սեբաստիան կարող էր գլուխ դառնալ · մէջի բնակիչներն էլ բարգաւաճ, երջանիկ ։
Բայց քանի որ Թիւրքիան էր, այնտեղ էլ թշուառութիւնը, խեղճութիւնը, զուլումը միայն իր գլուխը պիտի բարձրացնէր ։

ՎԵՐՋԻՆ ՕՐԸ. — Յունիս 30 · Մարզուանից, Ամասիայից, Եւդոկիայից անցնելով, խոլերան Սամսոնից հասել էր Սեբաստիա ։ Մէկ շաբաթից ի վեր օրական 5–10 հոգի մեռնում էին, գլխաւորապէս Թուրք թաղերում ։ Որքան որ տեղական Թուրք ազգաբնակչութիւնը ծածկել ուզեց, այնուամենայնիւ հիւանդութիւնը տարածուեց եւ մտաւ Հայոց թաղերը ։ Այդ օրը 38 հոգի մեռած էին · իրարանցումը տիրել էր ժողովրդի մէջ ։

Եւ դա զարմանալի էլ չէր · աչքի առաջ ունենալով Թուրքերի թաղերի ծայրահեղ կեղտոտութիւնը ։ Սեբաստիայի մէջ փողոցները սալայատակուած չեն · փողոցները մաքրելու էլ սովորութիւն չը կայ · այդ պարտականութիւնը թողնուած է անձրեւին, ձիւնին եւ քամուն · · · · ։ Չը նայելով որ ամառ էր՝ Թուրքերի թաղերի փողոցներից՝ մի կողմից միւսը անցնելու համար՝ հարկաւոր էր կամ շեղ ճանապարհ բռնել եւ կամ մի կողմից միւսը ցատկել՝ ցեխի կոյտերի եւ լճացած տիղմերի պատճառով · · · · · ։

Որքան որ դեռ կիսատ գործեր կային, ընկերները պարտաւորեցին դուրս գալ ։

Բայց ո՞ւր երթալ, ո՞ր ուղղութիւնը բռնել ։

Տիգրանակերտից թէ՛ Գործադիր Յանձնախումբը եւ թէ՛ ընկեր Կարապետ Զրաճեանը երեք հեռագիր էին տուել, մէկը

հարիւր բանից, պահանջ գրել, որ անպատճառ այնտեղ երթամ։ Խարբերդի Գործադիր Յանձնախումբը, հեռագրով եւ նամակով, նոյն պահանջն էր դրել։ Զարայի, Տիվրիկի Մասնաճիւղերն էլ հեռագրեր էին թափել, յատուկ մարդ էին ուղարկել, նախ իրենց այցելելու.....։

Ընկերները լուր բերեցին, որ ճանապարհները կտրուել են եւ միայն մէկ բաց ճանապարհ կայ՝ կէս ժամուայ համար, այն է Ծար-Դշլայի ուղղութիւնը. եւ պէտք էր աճապարել, որովհետեւ բժշկական մասնախումբը արդէն մեկնել էր Ծար-Դշլա, որպէսզի քարանտինայի շղթայ կազմեն....։

Օգտուելով ունեցած ժամանակից՝ ընդարձակ նամակ թողեցի ընկեր Ս. Մուրատին եւ ընկեր Բարսեղին. հեռագրեցի Տիգրանակերտ, Խարբերդ, որ եթէ հնարաւորութիւն ունենամ, Կիւրինի կամ Կեսարիայի վրայով՝ կաշխատեմ գալ։

Հինգ «Եայլի», մի քանի ձիաւոր ընկերներ՝ Ընթերցարանի առաջ սպասում էին։

Սրտի մեծ ցաւով էր, որ բաժանւում էի այն վայրից, ուր տակաւին անելիք շատ բան ունէի։ Ոչինչ այնքան տխուր, որքան այն յիշատակը, որ պարտականութիւնը լիովին չի կատարւում։

Մտայ «Եայլին». մօտս են նստած ընկերներ՝ Բալուցեանը, Տիւչիւկեանը. երկուսն էլ արտասուք են թափում։

Յետեւի «Եայլի»ի մէջ տեղ են բռնած ընկերներ՝ Գրիգոր Ղարամանուկեանը, Տիգրան Արքէլեանը, Միհրան Զուգաարգեանը, որոնք երգո՛ւմ ու երգո՛ւմ են....։

Անցանք Ալիսը՝ «Ծուռ Կամուրջ»-ի վրայով. մօտիկ պահապանը ցոյց տուեց կէս ժամ առաջ խոլերայից շունչահար մեռնող սուրհանդակի հողակոյտը։

Ալիսի միւս կողմն ենք. ջուրը պղտոր է՝ մեր սրտերի պէս։ Ընկերները սեղանը բացեցին, վերջին անգամ միասին ճաշ ուտելու. Բայց ո՛չ ախորժակ կար, ո՛չ էլ բերան էր բացւում.... Զը գիտեմ թէ ինչո՛ւ։ Ընկեր Բալուցեանը մինչեւ վերջ լացաւ ու լացաւ....։

Ընկեր Աբէլեանը շատ աշխատեց կատակներ անել, բայց չեղաւ ու չեղաւ· տեղին չը գնաց· ամեն ինչ տխրութեան մշուշով պատած մնաց:

Կամուրջի պահապանը նշան արեց, որ ընկերները վերադառնան, քանի որ տրուած ժամանակը լրացաւ:

Համբուրուեցանք:

Բաժանուեցանք:

Ընկեր Կարապետ Տէր-Ղազարեանը հետս առած՝ բռնեցի Ծար-Ղշլայի ճանապարհը:

ԳԼՈՒԽ Ժ.

ԵՆԻ ԱՓԱՐՏԻ

ԲՆԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ.— Բարձրանում ենք Ալխի գեղանխա հովիտն ի վեր. մացառուտ լեռնադագաթները մեր աչքից այլեւս ծածկում են Սերաստախն: Գնում ենք «Եայլի»-ով. բայց ճանապարհ չը կայ. նորից իսկական Թիւրքիայի մէջն ենք. մարդկային ձեռք չի դիպած՝ ճանապարհներ չինելու. ուրտեղ մի շաւիղ երեւում է՝ կառապանը այն կողմից էլ քշում է. բայց դահավէժները, անձրեւներից գոյացած խորխորատները անպակաս են. ուստի «կառքը» մի կողմ թողած՝ ոյժ ենք տալիս մեր ոտքերին ու ձորէ-ձոր, հովտէ-հովիտ անցնում:

Գնում ենք ժամերով՝ ամեն ինչ ամայի. մարդկային բընակութիւն չը կայ. մի քանի ձորահովիտների մէջ գիւղական բեռցուած սայլեր են չարէ ի չար ինկած՝ սայլապաններն էլ մի կողմ նստած՝ հաց են ուտում, անասուններն էլ դանադան կողմեր ցրուած՝ արածում են:

Սրանցից է, որ տեղեկանում ենք թէ ո՛ր կողմը եւ ի՛նչ ուղղութեամբ պէտք է երթալ:

Իջանք դաշտ. հերկուած արտեր են, ջրերով լցուած. կանգ առանք. ճանապարհ չը կայ: Անցնող սայլապանին մէկը մատով ցոյց տուեց թէ ո՛ր կողմից պէտք էր երթալ. գընացինք եւ թաղուեցանք հերկերի մարգի մէջ. ո՛չ յետ ենք կարողանում դառնալ եւ ո՛չ էլ առաջ գնալ. մնացինք տեղին վրայ: Ընկեր Կարապետը տեսնելով ուրիշ ճար չը կայ. վազեց՝ գնաց հեռուից անցնող սայլապաններին օգնութեան կանչեց. եզները լծեցին եւ մեր «կառքը» ցեխից հանեցին. ո՛չ մեր վրայ էր հոգի մնացել, ո՛չ էլ «մեր ձիերի»...

Տեսնելով ուրիշ հնարաւորութիւն չը կայ, նորից ոյժ տուեցինք մեր ոտքերին, եւ այսպէս 12 ժամ քայլելուց յետոյ՝ ե–

բեկոյեան հասանք Ենի-Ափարտի Թուրք գիւղը։

Այն տարածութիւնը, որ երկու ժամուան մէջ կարելի էր կտրել, անցնել, մենք 12 ժամ էինք դրել։ Եւ այս «քնական ճանապարհների» համար է, որ գիւղացին 16–17 ղուրուշ հարկ է տալիս։

ԵՆԻ-ԱՓԱՐՏԻ. — Սա Թրքական մի փոքրիկ գիւղ է, 35 տնից բաղկացած. խանչին Սեբաստացի Հայ է. խան տուածն էլ մի մեծ ախոռ է՝ ձիերով, եզներով, սայլերով լեցուն. մէջն էլ երկու հոգի ծանր հիւանդ՝ պառկած են շաբաթներից ի վեր... խանչի Հայը մի փոքրիկ խրճիթ ունի, որի մէջ ապրում է ինքը, կինը եւ երկու փոքրիկ զաւակները։ Ջուր է բերում, լուացւում, շորերնիս ցամաքեցնում ենք։ Բայց ո՞ւր հանգստանալ...։

Մի փոքր անցնելուց յետոյ՝ եկաւ Ղասըմ-Բէկը, գիւղի իշխանը եւ առաջարկեց իր հիւրը լինել։ Ընդունեցինք։

Ղասըմ-Բէկը մեզ առաջնորդեց իր տունը։ Այդ տունը գետնափոր մի բաւիղ էր. ոլոր-մոլոր՝ մութ նրբանցքներից անցնելով՝ մտանք Օդան։ Կրակ վառեցին. մեզ համար թէյ պատրաստեցին...։

Բիչ անց՝ Օդան լցուեցան գիւղի տարիքոտ բոլոր Թուրքերը եւ սկսեցին իրենց ցաւերից պատմել։

— Հարցնում եմ. ձեր շրջանի Երեսփոխանը ո՞վ է։

— «Ի՞նչ Երեսփոխան»։

— Չէ՞ որ Պարլամենտ կայ Կ. Պոլիս եւ դուք էլ Երեսփոխան էք տուել։

— «Մենք տեղեկութիւն չունինք»։

— Ձեր գիւղը քուէ չը տուե՞ց։

— «Ո՛չ. չը գիտենք»։

Հաջի Մուստաֆան խնդիրը փակեց, ասելով որ այդպիսի բաներ միայն իրենց գիւղի աղան կը կարգադրի, իրենք չեն խառնուիլ...։

Շարունակեցին.

«Մեր զանգատը գլխաւորապէս այն է, որ կառավարութիւնը զօրերի զօրակից է. նա զօրեր, աւազակներ է պահում

... մենք ոչխարից, ղաւարից, ցորենից եղանք, կը գողնան ու կը գողնան»:

— Ինչո՞ւ համար իշխանութիւններին գանգատ չէք տալիս:

— «Ո՛չ մեր ձայնը լսող կայ. ո՛չ էլ դատ-դատաստան անող. փորձել ենք, եւ մեզ ծեծելով դուրս են քշել. մեր խօսքին կարեւորութիւն տուող չը կայ: Մի օր բոլոր գիւղացիներով, մեր կիները, երեխաները հետները առած՝ թափուեցանք, Միւթէսարրֆի ոտքն ընկանք, աղաչեցինք, պաղատեցինք, լացանք. մեզ ասաց. «Ի՞նչ անեմ, գողը բռնեցէ՛ք բերեցէք, որ ես էլ արժանաւոր պատիժը տամ»: Բայց մենք ի՞նչպէս կարող ենք զինուած գողերին, աւազակներին բռնել: Մի օր էլ մեր հովիւները եկան՝ ասացին, որ մեր գողցուած ոչխարների եւ անասունների տեղը գտել են, գողերից երկուսին էլ բռնել: Գնացինք Միւթէսարրֆի մօտ: Կառավարութիւնը նրանց կանչեց, կաշառք առաւ, ազատ արձակեց, մեզ էլ յանդիմանեց ասելով որ. «Սխալ էք տեսել. նրանք անմեղ մարդիկ են, ճանապարհին գնալու ժամանակ էք բռնել. դուք ձեր անասունները անտէր էք թողել եւ զանազան կողմեր են ցրուել....»:

— Ձեզ աւելի ո՞վ է նեղութիւն տալիս:

— «Ղարսեցիները, Ղարսի կողմից եկող Մուհաճիրները եւ Չերքէզները»:

— Կուզէ՞ք, որ ձեր վիճակի մասին խօսեմ, երբ Շար-Դըշլա հասնեմ:

— «Ո՛չ, ո՛չ. մեր ապան կիմանայ եւ մեզ է՛լ աւելի կը նեղի. մեզանից խօսք է առել, որ այլեւս կառավարութեան առաջ գանգատի դուրս չը գանք, ինչ էլ որ պատահելու լինի. միայն իրեն է, որ ամէն բան պիտի ասենք: Մենք կուզենք միայն, որ Ստամբոլ, «Մեծ Կառավարութեան» խօսիս. նա եթէ իմանայ, մի բան կանի. մեզ չի թողնիլ այս նեղութեան մէջ»:

Միամի՛տ գիւղացիներ:

— Ձեր շրջականները Հայեր կա՞ն:

— «Ո՛չ․ մինակ Ղարսեցիներ եւ Ջերքէզներ կան․ միակ Հայը, որ մեր մէջ կայ, խանչի Կիրակոս-աղան է, չա՛ռ աղրի, մեր նամակները կը գրի, մեր հիւանդներին նա է, որ կը բժշկի, մենք էլ ամեն կերպ իր մասին հոգացողութիւն կանենք»:

Մեզ հիւրասիրող Ղասըմ-Բէկը գիւղի ամենից տարէց մարդն էր․ մի քիչ յետոյ, իրենց սովորութեան համեմատ, աշխատանքից վերադարձող բոլոր գիւղացիները լցուեցան Օդան եւ Ղասըմ-Բէկի առաջնորդութեամբ նամազի կանգնեցան: Ղասըմ-Բէկը ասում՝ միւսները կրկնում էին․․․:

Նամազը վերջացնելուց յետոյ՝ գիւղացիները հետաքրքրութեամբ լսեցին այն բոլորը, ինչոր վերաբերում էր սեպհականատիրութեան եւ մարդկային իրաւունքներին:

Ուշ առեն պառկեցանք՝ նախապէս խօսք տալով Հաջի Մուստաֆային, որ առաւօտեան «իրեն էլ կը յարգենք՝ մի բաժակ սուրճ առնելով»:

Վաղ առաւօտեան վեր կացանք, «իջանք» Հաջի-Մուստաֆայի «տունը»․ տուն չէ, այլ մի խղիկ․ իր հիւրասիրութիւնը վայելելուց յետոյ՝ մտանք մի քանի «տուներ» էլ: Ո՛չ միայն պաշարեղէնի որ եւ է հետք չը կար այդ «տների» մէջ, այլ մեծ ու փոքր երեխաները կամ կիսամերկ էին, կամ ցնցոտիների մէջ․․․․:

Եւ սրանք տարին տասներկու ամիս քրտինք թափող, դժոխային աշխատանք կատարող Գիւղացիներ էին․․․․:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՇԱՐ–ՂՇԼԱ

ԴԷՊԻ ՇԱՐ–ՂՇԼԱ.— Յունիս 31. շրջապատուած Ենի–Ափարեցի մեր հիւրասիրողներով, գիւղից միասին խօսելով դուրս եկանք. շնորհակալութիւն յայտնելով՝ բաժնուեցանք:
Մտանք մի տափարակ դաշտ. մարդ, մարդաբնակութիւն չը կայ. որպէս բուսականութիւն՝ միայն «շորան» *խոտերն են, ուրիշ ոչինչ:*

Անցնում ենք այդ անհուն տափաստանից. միայն մի քանի ձիաւորների հանդիպեցանք, որոնք «թիւթիւն» փախցնող «ղաչաղներ» էին......:

Կէսօրին մօտ հասանք Շար–Ղշլա:

Դեռ «քարանթինան» *հաստատուած, պաշտօնապէս յայտարարուած չէր. Հայ բժիշկը ասաց, որ մի–երկու ժամից յետոյ իր միւս Հայ պաշտօնակիցները եւ կառավարութեան պաշտօնեաները պիտի գան եւ պաշտօնական գործողութիւնը կատարեն ու ամեն կողմ հեռագիր տան՝ ճանապարհ փակուած լինելու համար:*

Հազիւ շուկան մտած՝ առաջ վազեց մի հայրենակից՝ Կարապետեան, որին տարիներ առաջ Չիկագօ էի տեսել:

Շուկայի հայրենակիցները թափուեցան եւ առաջնորդեցին մի տուն, որ շէնքով–շնորհքով կահաւորուած էր:

Կազմուեցաւ Հայկական շրջան. *սկսեցինք խօսել մեր այրող ցաւերից:*

ՇԱՐ-ՂՇԼԱ. — Տափարակ դաշտի մէջ փռուած ասիական մի քաղաք է սա՝ պաշտօնապէս․ բայց իրօք աւանից ոչնչով չի տարբերւում։ Աչքի են ընկնում բազմաթիւ մինարէները և Բէկերի–կալուածատէրերի հոյակապ տները՝ տաճները պարտէզներով։ Փողոցները վերին աստիճանի անմաքուր․ սալայատակի նշոյլ անգամ չը կայ․ ամառ է․ բայց փողոցները ցեխով լցուած են․ սատկած կենդանիների դիակ ամեն «փողոցի» մէջ կայ․ փոշին ուղղակի անտանելի է․ «քաղաքը» ճիշտ Թիւրքական պատկեր է տալիս․ շների վոհմակները դեռ փողոցների միակ վերակացուներն են․ կատուներն էլ պակաս թիւ չեն կազմում։ Մսագործների խանութների առաջ ամեն վոհմակ իր տեղն ունի։

Շար-Ղշլայի Թուրքերը այս շրջանի ամենից շատ մոլեռանդներն են։ Հայը դեռ այստեղ գեավուր է, այս բառի դասական նշանակութեամբ։

Հայատեցութիւնը իր ծայրագոյն աստիճանի մէջն է։

Շրջանի կողոպտող, աւարող, գողեր պահող, ժողովրդի արիւնը ծծող բոլոր Բէկերը, Աղաները՝ էշրաֆները այստեղ են հաստատուած և լայն կեանք վարում․ երկրի տէրը իսկապէս իրենք են․ կառավարութիւն, վարչութիւն՝ ամեն ինչ իրենց ձեռքին է․ ամեն բան կարգադրող, տնօրինողը իրենք են։

Շար-Ղշլան Թուրք ազգայնութեամբ հինգլի է․ բոլորն էլ թունդ Իթթիհատականներ են։ Քաղաքական, կրօնական մոլեռանդութիւն իրարու ձեռք տուած՝ անարգել կերպով քայլում են։

Թուրք էշրաֆները, պատմում են մեր հայրենակիցները, որքան էլ որ իրարու հետ կռուած՝ ընկած լինեն․ այնուամենայնիւ նրանք իրարու հետ միացած են՝ Հայերի դէմ․ այդ նկատմամբ բոլորի էլ խօսքը մէկ է։ Իսկ Թուրք գիւղացիների ծառանալը իրենց Բէկերի, Աղաների, էշրաֆների դէմ, դա ո՛չ միայն բնաւ տեղի ունեցած չէ․ այլ մեր հայրենակիցները դա ցնորք, չը լինելիք մի բան են համարում։ Ընդհակառակը՝ նոյն ճնշուող, նոյն հարստահարուող Թուրք գիւղացիները և հասարակ ժողովուրդը իրենց «մեծամեծների» մի մասի նշանին են սպասում, որ Հայերի վրայ խուժեն և

իրենց տրուած հրահանգները ամենայն չափազանցութեամբ կատարեն:

Շուկայի մէջ Հայերին հայհոյելը, նրանց երեսին ամեն տեսակ ածական տալը, «գեավուր» կանչելը դատական սովորութեան համեմատ է գնում:

Հայերի համար դատ. արդարութիւն տուած բանը գոյութիւն չունի. ինչքան էլ որ իրաւունքի տէր լինին: Ամեն դատ, արդարութիւն կաշառքով է կշռւում. Հայերից թէ կաշառք կառնեն եւ թէ դատերնին չեն տեսնիլ:

Պատմում են. «Իտտիհատական Երեսփոխաններից մէկը այստեղ եկաւ, հրապարակային ժողով սարքեց, մզկիթների մէջ խօսեց. իր ասած-քարոզածների բոլորի էլ նիւթն էր, որ Հայերը այս երկրից պիտի վերցուին. նրանք կամ պիտի պարտաւորուին մահմէդականութիւն ընդունել, որպէսզի իրենց Օսմանցիութեան հաւատանք եւ կամ պիտի վերցուին:

Շար-Ղշլայի Իտտիհատականների Կլիւբն է, որ ամեն ինչի ուղղութիւն է տալիս. ամեն ինչ նրա ձեռքին է:

Դժբախտութիւնն այն է, որ այստեղ էլ դաւաճան Հայի մասը կայ: Թուրք ազգայնականութեան բացարձակ վըստահութիւնը գրաւող, Թուրք էշրաֆութեան, կառավարութեան առաջին նեցուկ՝ սրանցից մէկն է հանդիսանում Էհմալեան չքոտի Հայը: Այդ մարդը այս շրջանի հոգէառ հրեշտակն է, մասնաւորապէս Հայերի նկատմամբ: Ո՛չ մի անմաքուր գործ չը կայ, որ այս դաւաճանի ձեռքից չանցնի: Կեդրոնական կառավարութեան կողմից Շար-Ղշլա պաշտօնեաներ երբ ուղարկուեն, ընդհանուր բանաձեն է՝ նրանց յանձնարարել Էհմալեանին եւ նրա խորհրդով շարժուել: Այդ մարդը, մասնաւորապէս Հայերի, մուխն է մարել. էլ չէ մընացած «անօրէնութիւններ» որ չի արել: Շրջանի Թուրքերը արդէն գազան, մնացածն էլ Էհմալեանն է լրացրել:

Այս անարգ մարդն է, որ մեր ընկերներին մատնել, կախաղան էր հանել տուել եւ դրա համար էլ Համիդի առանձին պատիւներին արժանացել:

Չը նայելով այդ աննպաստ պայմաններին. Հայի ձեռներէց ոգին, նրա տոկունութիւնը, աշխատասիրութիւնը դարձեալ իր դերը խաղացել էր:

Շուկան, բառի բովանդակ նշանակութեամբ՝ Հայերի

ձեռքին էր․ բոլոր խանութները՝ մեծ ու փոքր՝ Հայերինն էին․ առեւտրական կեանքը՝ իր ամբողջութեամբ՝ Հայերի ձեռքին էր կեդրոնացած, Թուրքերը թէ քաղաքի եւ թէ շրջականների մէջ միայն ապառողներ էին։ Քաղաքի մէջ մի հատ Թուրք արհեստաւոր չը կար․ ամեն կարգի արհեստները Հայերի ձեռքի մէջն էր գտնւում։ Թուրքերը միայն բանջարավաճառներ, մսավաճառներ, քաղցրաւենիք ծախողներ էին։ Բոլոր դեղագործները Հայեր էին, ինչպէս եւ քաղաքի մէջ հաստատուած բժիշկները։

Ազգային տեսակէտով, սակայն, Հայերի դրութիւնը աւելի քան ողբալի էր։

Կիլիկիայի եւ Մեծ-Հայքի մէջտեղերում գտնուելով՝ այդ շրջանը Հայ Ազգային Իշխանութիւնների կողմից նկատուել է մի տեսակ ծայրագաւառ։ Ո՛չ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն է ուզել այդ շրջանի ազգային գործերը վարել, ո՛չ էլ Կ․ Պոլսոյ Պատրիարքութիւնը․ մնացել էր անտէր-անտիրական՝ ժողովուրդը իր բախտին յանձնուած։ Քանի՛ քանի անգամ դիմումներ է եղել շրջանի Հայ ժողովրդի կողմից․ բայց ո՛չ մի տեղից պատասխան չի ստացուել, մէկը միւսի վրայ ձգելով՝ հարցը փակել է։

Ուստի ժողովուրդը ինչ կարողացել է, ինքն է արել իր ոյժի եւ կարողութեան սահմանների մէջ։

Դպրոցներ շատ քիչ կան․ եղածներն էլ անգոհացուցիչ վիճակի մէջ․ ձեռնհաս ուսուցիչներ չեն ուզեցել գալ՝ տեղական Մահմէդական մոլեռանդութեան պատճառով։

Եւ այդ՝ տասնեակ տարիներ շարունակ․ աւելի քան 30 հազար Հայ ազգաբնակչութիւն այդ ողբալի կացութիւնն է ունեցել։

Թէնոսի Նահիէի մէջ՝ Փաշա-Գիւղ, Փարթ-Գիւղ, Ղազ-Մաղարա, Խան-Փարազ, Գուրտ-Ղայա, բոլորն էլ զուտ հայաբնակ գիւղեր են, իւրաքանչիւրը 2–300 տնից բաղկացած։ Դրանք բոլորն էլ Ազգային Իշխանութեանց կողմից երեսի վրայ են ձգուած եղել։

Նոյն դրութիւնն է տեղի ունեցել Տար-Ղշլայի գիւղախմբի մէջ՝ Շէհիր-Ղշլա, Եափալթուն, Գայաբունար, Թափան գիւղերի համար։ Սրանք խառն ազգաբնակչութիւն

ունեցող գիւղեր են. ամեն գիւղի մէջ Հայերի տների թիւը 100–200–ից պակաս չի եղել:

Շրջանի Հայերը, ընդհանրապէս, բազմածին են. պանդըխտելու սովորութիւն շատ քիչ են ունեցել. միշտ ապրել են տեղին վրայ: Որքան որ թրքախօսութիւնը տարածուած է, Հայ լեզուն գարձեալ տիրապետում է: Ընտանեկան յարկի տակ հայերէն խօսիլը իրենց սովորութիւնն է եղել:

Հայ ազգարնակչութիւնը, ամեն տեղ էլ, պինդ փարած է իր պապենական սովորութիւններին:

Միայն Տար-Ղշլայի մէջ մշտարնակ երեք հարիւր տուն Հայ կայ. եկուոր արհեստաւորների եւ խանութպանների թիւը 75–ի էր հասնում:

Զարմանալի մի տարօրինակութիւն. որքան որ Մահմէդական մոլեռանդութիւնը աշխատել է Հայերին շարունակական արհաւիրքի մէջ պահել. այնուամենայնիւ մաքուր Հայութիւն կար, իր սովորական անվեհերութեամբ եւ արհամարհանքով լցուած դէպի տիրապետողը:

Հայրենակիցները ուզեցին ժողով սարքել. մի քանի րոպէի մէջ՝ Հայերը լցուեցան մեր տան սրահի մէջ:

Օրուան կացութիւնը եւ պահանջը պարզուեցաւ:

Տար-Ղշլայի հայրենակիցները շատ մեծ դժուարութիւն չը քաշեցին հասկանալու, որ այդ նեղ օրերի մէջ անմիջական միակ կարիքը որ կար. դա Բաղաքական Կուսակցութիւններին ույժ տալ, կազմակերպուելն էր. ուստի կազմուեցաւ 60 հոգուց բաղկացած մի Մասնաճիւղ, որ յարաբերութեան մէջ դրուեցաւ Փոքր-Հայքի Շրջանի Գործադիր Յանձնախմբի եւ Տաճկաստանի Կեդր. Վարիչ Մարմնի հետ:

Մի քանի այցելուի անմոռաց եւ քաղցր ժամեր անցնելուց յետոյ՝ պատրաստուեցանք մեկնիլ դէպի Կէմէրէկ:

Հայրենակիցները ասացին, որ ճանապարհները շատ վատ են. ուզեցին մեզ հետ մէկը ընկերացնել, որպէսզի «հանգիստ» տեղ հասնինք: Շնորհակալութիւն յայտնելով, չուզելով իրենց առօրեայ գործերից հանել, ասացինք, որ միսակ մենք կարող ենք երթալ, բաւական է որ կառապանին պէտք եղած ցուցումները տան:

Սրտի ցաւով բաժնուեցանք մեր այդ «անտէր-անտիրա-

կան» հայրենակիցներից եւ մեր ճանապարհը շարունակեցինք։

Շար–Ղշլայից մինչեւ Կէմէրէկ ճանապարհը է՛լ աւելի անտանելի էր. երեկոյեան մթին՝ «կառքի» ձիերը գործադուլ յայտարարեցին, ո՛չ առաջ ուզեցին երթալ, ո՛չ էլ յետ. մնացին տեղին վրայ։

Կառապանին ձգեցինք կառքի մօտ. երկու ընկերներով քայլեցինք. դեռ մէկ ժամ կար Կէմէրէկ հասնելու, երբ պատահեցանք երկու ձիաւոր հայրենակիցների։

Հայրենակիցներից մէկը գնաց օգնելու, որ կառքը բերեն. իսկ միւսը մի քիչ մեզ ընկերանալուց յետոյ՝ ձին քշեց դէպի Կէմէրէկ մեր ընկերներին իմաց տալու։

Կէս գիշերին մօտ էր, որ հասանք Կէմէրէկ՝ ընկեր Պետրոս Ծառուկեանի տունը։

Ջարդուած, փշրուած էինք. հարսները ջուր բերեցին, ոտքներս աղի ջրով լուացին. մի փոքր հանգստացանք. ընկերները, հարեւանները լցուեցան եւ տաք խօսակցութիւնը սկսուեց։

5105
0001195
12010
ՀՀ Ազգային գրադարան
NL0001195